



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

11



Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վ. ՂԼԵՉՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Վերահրատարակություն



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2017

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես դասագիրք ավագ դպրոցի 11-րդ դասարանի հումանիտար հոսքի համար

ՀՏԴ 373.167.1:930.9(075)
ԳՄԴ 63.3(0) ց72
Հ 422

Խմբագիրներ՝	Արամ Քոսյան. պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Արամ Նազարյան. պատմագիտության թեկնածու
Հեղինակներ՝	Գագիկ Հարությունյան. պատմագիտության թեկնածու, դոցենտ (Մաս 1. Բաժիններ Ա–Գ) Վալերի Ղլեյյան. պատմագիտության թեկնածու, դոցենտ (Մաս 2. Բաժին Ա. Գլուխներ 1–4, Բաժին Բ. Գլուխ 5. § 4, Գլուխ 6. Բաժին Գ. Գլուխ 7. §§ 3, 4, Գլուխ 8. Բաժին Դ) Ռուբեն Սաֆրաստյան. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (Մաս 2. Բաժին Բ. Գլուխ 5. §§ 1–3, Բաժին Գ. Գլուխ 7. §§ 1, 2)
Մեթոդական մասի հեղինակ՝	Արմինե Սարգսյան. պատմաբան, մանկավարժ
Քարտեզագիր՝	Գրիգոր Բեգլարյան

ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: 11-րդ դասարան: Հումանիտար հոսքի
Հ 422 **դասագիրք:** Վերահրատարակություն / Գ. Հարությունյան, Վ. Ղլեյյան, Ռ. Սաֆրաստյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2017.— 256 էջ:

ՀՏԴ 373.167.1:930.9(075)
ԳՄԴ 63.3(0) ց72

ISBN 978–99941–1–788–8

© Հարությունյան Գ., Ղլեյյան Վ., Սաֆրաստյան Ռ., 2017 թ.
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2017 թ.
© ԴՏՀՏԵՀ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	6
--------------------	---

ՄԱՍ 1. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԲԱԺԻՆ Ա. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎ ՐՈՊԱՑՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ԴԱՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԸ ԵՎ ՐՈՊԱՑՈՒՄ	10
§ 1. ԽԱԶԱԿԻՐՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ	10
§ 2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ	15
§ 3. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ	20
§ 4. ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՆ	25
§ 5. ՊԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI-XV ԴԱՐԵՐՈՒՄ	29
§ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՐՈՊԱՑՈՒՄ XI-XV ԴԱՐԵՐՈՒՄ	32
§ 7. ԴԱՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ	36
§ 8. ՎԱՂ ՎԵՐԱԾՆԵՆԴԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԻՏԱԼԻԱՑՈՒՄ	40
§ 9. ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ	44
§ 10. ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ IX-XV ԴԱՐԵՐՈՒՄ	47
§ 11. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԻԱՑՈՒՄ	51

ԲԱԺԻՆ Բ. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋՆԱԴԱՐԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ	59
§ 1. ՀԻՆԴՈՒՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ	59
§ 2. ՉԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ	64
§ 3. ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ	68
§ 4. ԻՍԼԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ	72
§ 5. ՔՈՉՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	75
§ 6. ՄԻՆՉԿՈՂՈՒՄՔՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ	80
§ 7. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԻՍՊԱՆԱՅԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	84

ԲԱԺԻՆ Գ. ԵՎ ՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ	87
§ 1-2. ՆՈՐ ԵՎ ՐՈՊԱՑԻ ԾՆՈՒՆԴԸ	87
§ 3. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՐՈՊԱՑԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ	94

ՄԱՍ 2. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ
ԲԱԺԻՆ Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ
(XVII ԴԱՐԻՑ XX ԴԱՐԻ ՍԿԻՋԲ)

ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍԿՋԲԻՆ.....	99
§ 1. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ.....	99
§ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ.....	104
ԳԼՈՒԽ 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	108
§ 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ.....	108
§ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՈՒ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	112
§ 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	116
ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ.....	120
§ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.....	120
§ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.....	123
§ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒՂԻՆ.....	127
§ 4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒՂԻՆ.....	131
§ 5. ԳԵՐՄԱՆԻԱ ՄԱՍՆԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻԱՎՈՐՈՒՄ.....	135
§ 6. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՆ՝ ԱՌԱՋԱՆԱՀԱՏՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆ..	138
§ 7. ԻՏԱԼԻԱ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	141
§ 8. ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ.....	145
§ 9. ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ	149
ԳԼՈՒԽ 4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՈՒՂԻՆ .	153
§ 1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ	153
§ 2. ԱՄՆ-Ը XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ: ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ.....	157
§ 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ.....	161
§ 4. ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ.....	165
ԲԱԺԻՆ Բ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	
ԳԼՈՒԽ 5. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ	169
§ 1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԻՋԲԸ	169
§ 2. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ	174
§ 3. ԻՐԱՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ	178
§ 4. ՉԻՆԱՍՏԱՆԸ, ՃԱՊՈՆԻԱՆ ԵՎ ԱՐԳԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ	182
ԳԼՈՒԽ 6. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	185
§ 1. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ.....	185
§ 2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ.....	188

**ԲԱԺԻՆ Գ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ:
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ**

ԳԼՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....	192
§ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՁԵՎ ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՎԱՐՏԸ	192
§ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1814–1860–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.....	196
§ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ	200
§ 4. ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	204
 ԳԼՈՒԽ 8. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ (1914–1918 ԹՎԱԿԱՆՆԵՐ)	208
§ 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ	208
§ 2. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ..	212
§ 3. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ.....	215
§ 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ.....	219
§ 5. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ.....	223

ԲԱԺԻՆ Դ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 9. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ	227
§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....	227
§ 2. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ	232
§ 3. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐՈՒՄ	236
§ 4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.....	241
§ 5. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՌՈՄԱՆՏԻՋՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.....	245
§ 6. ՌԵԱԼԻՋՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐՈՒՄ: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ	249
 ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	254

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ սովորողների համար նախատեսված սույն դասագիրքն ընդգրկում է համաշխարհային պատմության զարգացած միջնադարից մինչև նոր դարերի ավարտն ընկած ժամանակաշրջանը:

Միջնադարյան քաղաքակրթությունը:

Վաղ միջնադարի ընթացքում ավարտվեց ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Եվրոպայում հիմնականում հստակեցվեցին պետությունների սահմանները, ստեղծվեցին պայմաններ տնտեսության կայունացման և կառավարման համակարգի ամրապնդման համար: Եվրոպական խոշոր պետությունների հետագա հզորացումը հանգեցրեց նրանց քաղաքական և տնտեսական շահերի ծավալմանը իրենց սահմաններից դուրս, ինչը դրսևորվեց խաչակրաց արշավանքներում:

Ջարգացած միջնադարում Եվրոպայի քաղաքական զարգացման կարևոր առանձնահատկություններից է կենտրոնացված պետությունների կազմավորումը: Ստեղծվեցին դասային միապետություններ (Անգլիա, Ֆրանսիա) թագավորական բացարձակ իշխանության պայմաններում: Բնակչությունը բաժանվեց երկու հակադիր խմբերի՝ ազնվականություն ու հոգևորականություն (արտոնյալ խավեր) և գյուղացիություն ու քաղաքային բնակչություն (աշխատավոր զանգվածներ): Հաջորդ կարևոր առանձնահատկությունը ազգային պետությունների ձևավորումն էր:

Կայուն քաղաքական սահմանները նպաստեցին միննույն պետությունում ապրող ժողովուրդների միաձուլմանը, լեզվի միասնականացմանը:

Ազգային պետությունների քաղաքական-տնտեսական հետագա զարգացումը չէր կարող չանդրադառնալ պետության և կաթոլիկ եկեղեցու փոխհարաբերությունների վրա: XVI դարում եվրոպական մի շարք պետություններում ծավալվում է ռեֆորմացիոն շարժումը: Դա պայքար էր հանուն կաթոլիկ եկեղեցու կառուցում հիմնավոր վերափոխումների (Գերմանիա, Շվեյցարիա, Ֆրանսիա): Իսկ Անգլիայում այն ընթացավ արմատական եղանակով: Անգլիական եկեղեցու առաջնորդ հայտարարվեց թագավորը. բարձրաստիճան հոգևորականներին այսուհետև պետք է նշանակեր պառլամենտը:

Միջնադարյան քաղաքակրթության ավարտը Եվրոպայում նշանավորվեց Երեսնամյա պատերազմով (1618–1648) և դրա արդյունքներն ամփոփած Վեստֆալյան հաշտությամբ:

Արդյունաբերական հասարակությունը: Եվրոպան թևակոխեց պատմության զարգացման նոր ժամանակաշրջան, որը որակապես նոր փուլ էր: Դա, այսպես կոչված, արդյունաբերական հասարակության ժամանակաշրջանն է, որը ստորաբաժանվում է հետևյալ ենթափուլերի.

1. XVII դարից մինչև XIX դարի կեսեր — արդյունաբերական արտադրության սկզբնավորում և զարգացում: Ձեռքի

աշխատանքն աստիճանաբար իր տեղը զիջում է մեքենայական արտադրությանը: Հասարակության մեջ առաջատար սոցիալական խմբեր են դառնում ձեռներեցներն ու բանվորները: Ձևավորվում է միասնական ազգային շուկան, հայտնվում են խոշոր քաղաքներ, որոնք վերածվում են արդյունաբերական կենտրոնների:

2. XIX դարի կեսերից մինչև XX դարի սկիզբ — արդյունաբերական հասարակության ձևավորման ավարտ: Արտադրության աննախադեպ ընդլայնում, գիտության և տեխնիկայի դերի անշեղ զարգացում, համաշխարհային միասնական շուկայի ձևավորում, բնակչության կենսամակարդակի աճ:

Նոր ժամանակներում եվրոպական առաջատար տերությունների տնտեսական և քաղաքական վերելքը հանգեցրեց գաղութային նվաճումների, որոնց արդյունքում ձևավորվեց գաղութային համակարգը:

Նոր դարերի պատմությունն ավարտվում է Առաջին աշխարհամարտով, որն արդյունաբերական հասարակության ճգնաժամի հետևանք էր:

XVIII–XIX դարերի արդյունաբերական հեղափոխությունը նոր էջ քայցեց պատմության մեջ: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում սկսվեց արդյունաբերական հասարակության ձևավորումը: Իսկ XX դարի սկզբներին սկսվեց արդյունաբերական դարաշրջանի նոր փուլը, որին բնորոշ էր փոփոխությունների արագացումը:

Ձևավորվեց միասնական համաշխարհային տնտեսությունը: Արդյունաբերական երկրները միջազգային փոխանակման մեջ ներքաշեցին ողջ աշխարհը, երկրագնդի հեռավոր անկյունները դար-

ձան համաշխարհային առևտրի համակարգի մասը: Կապիտալի համար գնալով ավելի նեղ էին դառնում ազգային-պետական սահմանները: Հետևաբար, դարի սկզբներին աննախադեպ չափեր ընդունեցին կապիտալի արտահանումը և բնակչության զանգվածային տեղաշարժերը: Անձն առանց դժվարությունների թողնում էր իր երկիրը և հաստատվում նոր վայրում:

Այսպիսով՝ աշխարհը եռուլեռի մեջ էր. ապրանքների, կապիտալի և մարդկանց տեղաշարժը համաշխարհային բնույթ ընդունեց:

Հասարակական կյանքում տեղ գտան էական փոփոխություններ: Ընդլայնվում էին կանանց իրավունքները: Դա ոչ միայն իրավական (կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ընտրություններին մասնակցողների շրջանակի ընդլայնում) խնդիր էր, այլև տնտեսական:

Հասարակական-քաղաքական կյանքում աճում էր կուսակցությունների դերը: XIX դարում դրանք ավելի շուտ քաղաքական քննարկումների ակումբներ էին կամ ընտրություններում առանձին անձանց աջակցելու նպատակով ստեղծված ժամանակավոր կազմակերպություններ: Սակայն XIX դարի վերջին և XX դարի սկզբին կուսակցությունները վերածվեցին կայուն կազմակերպությունների՝ կոմիտեների և բաժանմունքների ցանցով: Ձևավորվում է կուսակցական ապարատը՝ կուսակցության դրամարկդից վճարվող աշխատակիցների խավը: Քաղաքականությունը դառնում է մասնագիտություն: Կուսակցությունները խոշոր տպաբանակով սկսում են հրատարակել թերթեր, ամսագրեր՝ քարոզելով իրենց հայացքները և ձևավորելով հասարակական կարծիք: Գերմանացի սոցիալ-դեմոկրատները

հրատարակում էին 49 անուն օրաթերթ, իսկ իտալացի սոցիալիստները՝ մոտ 200 հանդես:

Արդյունաբերական հասարակության բնորոշող իրողություններից մեկը կուսակցությունների և կուսակցական պայքարի գաղափարայնացումն էր: Կուսակցությունները ոչ միայն ձգտում էին մշակելու պահի օրակարգի հետ կապված նեղ ծրագրեր, այլև ներկայացնում էին իրենց աշխարհայացքային սկզբունքները, համաշխարհային զարգացման հեռանկարները:

Կուսակցական պայքարն ընթանում էր հիմնականում պահպանողականության, լիբերալիզմի, սոցիալիզմի և մարքսիստական գաղափարախոսությունների ուղղությամբ: Կրոնն ու ազգայնականությունը նույնպես առանձին կուսակցությունների քաղաքական-գաղափարախոսական հիմքն էին: Ազգայնական, բողոքական, կաթոլիկական կազմակերպությունները ձգտում էին հիմնականում դեպի պահպանողական կամ ազատական կուսակցությունները, սակայն երբեմն հետաքրքրություն էին ցուցաբերում նաև սոցիալիստների նկատմամբ: Սոցիալիստական կազմակերպությունների ազդեցության ընդլայնմանը և սոցիալիստական ու մարքսիստական գաղափարների տարածմանը զուգահեռ սկսեց փոխվել քաղաքական պայքարի հիմնական սահմանագիծը: Այն ժամանակին անցնում էր պահպանողականներ-ազատականներ, միապետականներ-հանրապետականներ բաժանարար գծի երկայնքով: Սակայն ավելի ուշ պահպանողականների և ազատականների միջև քաղաքական պայքարն աստիճանաբար հետ էր մղվում, քանզի իրագործվում էին ազատա-

կան գաղափարները, և զարգանում էր խորհրդարանական ժողովրդավարությունը:

XX դարի սկզբներից իր դիրքերն է ամրապնդում մարքսիզմը: Մարքսիստները և սոցիալիստական ու աշխատավորական կուսակցությունները, ի շահ աշխատավոր դասակարգի, անում էին ամեն ինչ, որպեսզի հասարակության մեջ քաղաքական պայքարն ընթանար բուրժուական-սոցիալիստական կուսակցություններ և կապիտալիզմ-սոցիալիզմ բաժանարար գծի երկայնքով:

Միջազգային հարաբերությունների զարգացումը: Միջազգային հարաբերությունների համակարգում աշխարհակարգերի հաստատման և փոփոխման մի քանի փուլեր եղան: Առաջինը Վեստֆալյան համակարգն էր, որին բնորոշ էին միմյանց մրցակից ու հաճախակի փոփոխվող քաղաքական դաշինքները: Սա իր հերթին ապահովում էր ուժերի հավասարակշռության միջազգային համակարգի գոյությունը: Համակարգը գոյատևեց մոտ 150 տարի՝ ընդհուպ մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և նապոլեոնյան պատերազմները:

Նապոլեոնյան պատերազմների ավարտին գումարված 1815 թ. Վիեննայի համաժողովը ծնունդ տվեց միջազգային հարաբերությունների նոր աշխարհակարգին: Այս համակարգն անվանեցին Վիեննայի կամ «Հնգյակի» համակարգ, քանի որ դրանում ծանրակշիռ դեր էին խաղում հինգ պետություններ՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Պրուսիան և Ավստրիան: Հետագայում «մեծերի ակումբի» անդամ դարձան Օսմանյան կայսրությունը, Ավստրո-Հունգարիան (Ավստրիայի փոխարեն),

Գերմանիան (Պրուսիայի փոխարեն), Իտալիան, իսկ ավելի ուշ՝ Ճապոնիան և ԱՄՆ-ը: Հետագա զարգացում ստացավ միջազգային իրավունքը:

Այդ համակարգը գոյատևեց մոտ 100 տարի՝ հանգեցնելով երկու հակադիր դաշինքների՝ Անտանտի և Եռյակ միության ստեղծմանը: Տերությունները գտնում էին, որ թեև պատերազմներն անխուսափելի են, սակայն դրանք պետք է կրեն սահմանափակ բնույթ՝ շարունակվելով մինչև ուժերի հավասարակշռության վերականգնումը:

Սակայն Առաջին աշխարհամարտի հարուցած հիմնական խնդիրն այն էր, որ պատերազմն ընթացավ մի այնպիսի ուղիով և այնքան երկարատև, որ ավելի շուտ ոչնչացրեց, քան պահպանեց գործող համակարգը: Փլուզվեցին ուժերի հավասարակշռության համակարգի գործունեությունն ապահովող տերությունները: Ի հայտ եկան համակարգից դուրս գտնվող երկրներ: Համաշխարհային քաղաքակրթությունը մուտք գործեց պատմության նորագույն շրջան:

ՄԱՍ 1

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԲԱԺԻՆ Ա

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ԴԱՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

§ 1. ԽԱՉԱԿՐԱԿՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Խաչակրաց արշավանքների պատճառները: Արևմտանվրուպական ավատատերերի, քաղաքացիների և գյուղացիների ռազմական արշավանքները Միջերկրական ծովի արևելյան ափերը գրավելու նպատակով հայտնի են *խաչակրաց արշավանքներ* անունով: Դրանք իրագործվում էին կրոնական պատերազմների քողի տակ, քանի որ եվրոպացիները Արևելք էին մեկնում իբր Տիրոջ գերեզմանը մուսուլմաններից ազատագրելու և այստեղ ապրող հեթանոսներին քրիստոնեացնելու համար: Սակայն իրականում խաչակրաց արշավանքներն ունեին այլ խորքային պատճառներ:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումն Արևմտյան Եվրոպայում վերափոխում էր ավատատերերի դասակարգի սոցիալական կառուցվածքը: Հողի հետ միասին հարստության չափանիշ էր դառնում նաև փողը: Ավատատերերն աշխատում էին ավելացնել իրենց եկամուտները և ավելի լավ ապրել:

Արևմտյան Եվրոպայում գործում էր *մայրրաստի* (ավագության) համակարգը, երբ հողը և պաշտոնն անցնում էին ավագ որդուն: Ավատատերերի կրտսեր որդի-

ներն իրենք պետք է լուծեին իրենց գոյության միջոցներ ձեռք բերելու խնդիրը: Հողին և գյուղացիներին տիրելու համար ավատատերերի միջև անընդհատ տեղի էին ունենում պատերազմներ: Այդ ժամանակ Արևմտյան Եվրոպայում տարածվել էր, որ Արևելքն իսկական հարստության աղբյուր է: Հարստության տիրանալու ձգտումը թափանցեց Արևմտյան Եվրոպայի հասարակության բոլոր շերտերը:

Խաչակրաց արշավանքների կազմակերպման գործում մեծ դեր խաղաց հռոմեակաթուրքական եկեղեցին: Նրա գործադրած ջանքերի շնորհիվ էր, որ արշավանքներին տրվեց կրոնական պատերազմների բնույթ: Եկեղեցին հավատացյալներին հորդորում էր գրավել Երուսաղեմը և ազատագրել Տիրոջ գերեզմանը: Խաչակրաց արշավանքների միջոցով պապականությունը աշխատում էր իրեն ենթարկել բյուզանդական եկեղեցին և կաթոլիկությունը տարածել Արևելքում:

Պապականության այս ձգտումներին նպաստեց այն, որ այդ ժամանակ ծանր իրավիճակում գտնվող Բյուզանդիան օգնություն խնդրեց Արևմտյան Եվրոպայից:

1055 թ. թյուրք-սելջուկները գրավեցին Բաղդադը: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում նրանք ծանր պարտության մատնեցին բյուզանդացիներին և գրավեցին Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի մի մասը: Բալկանյան թերակղզի ներթափանցած պեչենեգները սպառնում էին Կոստանդնուպոլիսին: Ալեքսիոս I Կոմնենոս կայսրը օգնության համար դիմեց **Ուրբանոս II պապին**: Կլերմոն քաղաքում 1095 թ. հրավիրված եկեղեցական ժողովում պապը հավատացյալներին կոչ արեց մեկնելու Արևելք: Սկսվեց խաչակրաց առաջին արշավանքը:

Խաչակրաց առաջին արշավանքը (1096-1099 թթ.): Ուրբանոս II պապի կոչին առաջինն արձագանքեցին գյուղացիները: 1096 թ. գարնանը Արևմտյան Եվրոպայի տարբեր շրջաններում հավաքվեցին շուրջ հիսուն հազար գյուղացիներ և շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս: Մայրաքաղաքը սանձարձակ գյուղացիներից փրկելու համար Ալեքսիոս I կայսրը կարգադրեց նրանց անցկացնել Բոսֆորի մյուս ափը՝ Փոքր Ասիա: Այստեղ թյուրք-սելջուկներն առաջին իսկ ձակատամարտում պարտության մատնեցին խաչակիր գյուղացիներին:

1096 թ. աշնանը Ֆրանսիայից, Գերմանիայից և Իտալիայից տարբեր ճանապարհներով Արևելք շարժվեցին ասպետները: Շուտով նրանք հասան Կոստանդնուպոլիս: Ալեքսիոս I-ը որոշեց խաչակիրների ռազմական ուժերն օգտագործել թյուրք-սելջուկների և արաբների դեմ պայքարելու համար: Կայսրը կարողացավ հասնել նրան, որ խաչակիրների առաջնորդներն իրեն ճանաչեցին որպես սենյոր և վասալական երդում տվեցին: Նրանք պարտավորվեցին կայսրությանը վերադարձնել այն հողերը, որոնք գրավել

էին թյուրք-սելջուկները: Իր հերթին կայսրը համաձայնեց մասնակցել խաչակրաց արշավանքին և նրանց օգնել պարենամթերքով:

Խաչակիրներն անցան Փոքր Ասիա, և սկսվեց նրանց դժվար երթը դեպի Սուրբ երկիր: 1097 թ. հուլիսին խաչակիրները Փոքր Ասիայում պարտության մատնեցին սելջուկներին: 1098 թ. նրանք գրավեցին Եդեսիան և Անտիոքը, իսկ 1099 թ.՝ Երուսաղեմը:

Խաչակիրները գրաված տարածքներում ստեղծեցին իրենց պետությունը՝ **Երուսաղեմի թագավորությունը**: Առաջին թագավոր ընտրվեց **Գոթֆրիդ Բուլյոնցին**, որը կրում էր **Տիրոջ զերեկմանի պահապան** տիտղոսը: Խաչակրաց պետությունը կազմված էր Երուսաղեմի թագավորությունից, **Եդեսիայի կոմսությունից**, **Անտիոքի դքսությունից** և **Տրիպոլիի կոմսությունից**: Պետության տարածքը բաժանված էր բարոնությունների, որոնք կառավարում էին բարոնները: Բարոնությունները բաժանված էին ավատների, որոնք զինվորական ծառայության դիմաց տրվում էին ասպետներին: Բարոնները և թագավորի մյուս վասալները մտնում էին թագավորական խորհրդի կազմի մեջ: Թագավորական խորհուրդը կամ «Բարձր ատյանը» խաչակրաց պետության բարձրագույն օրենսդիր և դատական մարմինն էր:

Խաչակրաց պետությունը թույլ և անկայուն քաղաքական կազմավորում էր: Պետության արևելյան սահմանը, որը ձգվում էր շուրջ 1200 կմ, միշտ ենթարկվում էր մուսուլմանների հարձակումներին: Հարավից Երուսաղեմի թագավորությանը սպառնում էր Եգիպտոսը, իսկ հյուսիսից՝ Իկոնիայի սուլթանությունը:

Խաչակրաց տիրույթները պաշտպանելու և Արևելքում կաթոլիկություն տարածելու նպատակով պապականությունն այստեղ հիմնեց նոր եպիսկոպոսություններ և ստեղծեց նոր տիպի՝ **հոգևոր-ասպետական միաբանություններ**: Խաչակրաց պետության տարածքում ստեղծվեցին 14 եպիսկոպոսություններ, որոնք ենթարկվում էին Երուսաղեմի կաթոլիկ պատրիարքին: Պապականության հովանու ներքո ստեղծվեց երեք հոգևոր-ասպետական միաբանություն՝ Հիվանդահանամների, Տաճարականների և Տևտոնական:

Խաչակրաց հետագա արշավանքները: Արևելքում խաչակիրների հաջողությունները ժամանակավոր էին: XII դ. սկզբին մուսուլմանական իշխանությունները սկսեցին համախմբվել ընդդեմ խաչակիրների: Մոսուլի **աթաթնկ** (կառավարիչ) **Ջանգին** կոչ արեց մուսուլմաններին դուրս գալու սրբազան պատերազմի: 1144 թ. նա գրավեց Եդեսիա քաղաքը: Այս առիթով կազմակերպվեց երկրորդ խաչակրաց արշավանքը (1147–1149 թթ.), որը գլխավորում էին Ֆրանսիայի թագավոր **Լյուդովիկոս VII-ը** և Գերմանիայի կայսր **Կոնրադ III-ը**: Արշավանքը հաջողություն չունեցավ: Գերմանացիները Փոքր Ասիայում ծանր պարտություն կրեցին սելջուկներից: Ֆրանսիացիները փորձեցին գրավել Դամասկոսը, սակայն չկարողացան և վերադարձան:

Խաչակիրների դրությունը հատկապես ծանրացավ XII դ. երկրորդ կեսին, երբ սկսեց հզորանալ Եգիպտոսը: Ծագումով քուրդ զորավար **Սալադինը** (Սալահ ադ Դին) դարձավ Եգիպտոսի սուլթան ու գրավեց Ասորիքի և Միջագետքի մի մասը: 1187 թ. **Խաթթին գյուղի** մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա պարտության



Ռիչարդ I-ի արձանը Լոնդոնում

մատնեց խաչակիրներին: Այնուհետև Սալադինը գրավեց Ակրան, Բեյրութը, ինչպես նաև Երուսաղեմը: Սուրբ քաղաքի կորուստը ծանր տպավորություն թողեց Եվրոպայում, և պապը հանդես եկավ նոր արշավանքի կոչով: Նյութական միջոցներ հավաքելու համար մտցվեց նոր հարկ, որը ստացավ **սալադինյան տասանորդ** անվանումը:

Խաչակրաց **երրորդ** արշավանքին (1189–1192 թթ.) մասնակցում էին ասպետական երեք բանակներ, որոնց ղեկավարում էին Անգլիայի թագավոր **Ռիչարդ I Առյուծաձիգը**, Ֆրանսիայի թագավոր **Ֆիլիպ II Օգոստոսը** և Գերմանիայի կայսր **Ֆրիդրիխ I Բարբարոսան**: Փոքր Ասիայով շարժվող գերմանացի խաչակիրները սկզբում որոշ հաջողությունների հասան: Նրանք գրավեցին Իկոնիա քաղաքը, սակայն վերադարձան այն բանից հետո, երբ կայսրը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում: Անգլիացիները և ֆրանսիացիներն արշավանքի դուրս եկան գերմանացիներից մեկ տարի հետո: Նրանք Միջերկրական ծովով շարժվեցին Ասորիք: Ճանապարհին Ռիչարդ I-ը գրավեց

Կիպրոս կղզին: Այստեղ ստեղծվեց ևս մեկ խաչակրաց պետություն՝ **Կիպրոսի թագավորությունը**: Ափ իջնելով Ասորիքում՝ խաչակիրները պաշարեցին և գրավեցին Ակրա քաղաքը, որը դարձավ Երուսաղեմի թագավորության մայրաքաղաքը: Շուտով ֆրանսիացիները վերադարձան, քանի որ սրվել էին անգլո-ֆրանսիական հարաբերությունները: Ռիչարդ I-ը ստիպված եղավ Սալադինի հետ հաշտության պայմանագիր կնքել: Վաճառականներին և ուխտավորներին թույլատրվեց երեք տարի այցելել Երուսաղեմ:

Խաչակրաց երրորդ արշավանքից հետո պարզ դարձավ, որ խաչակրաց տիրոջների ճակատագիրն արդեն կախված է Եգիպտոսից: Այդ պատճառով **Ինկեռտիս III պապը** (1198–1216) դեպի Եգիպտոս խաչակրաց արշավանք կազմակերպելու կոչ արեց: Խաչակիրները որոշեցին հավաքվել Վենետիկում և այնտեղից ծովով շարժվել Եգիպտոս: Վենետիկի կառավարիչ **Էնրիկո Դանդոլոն** խաչակիրներին Եգիպտոս հասցնելու համար պահանջեց 85 հազար մարկ արծաթ (մոտ 20 տոննա արծաթ): Սակայն խաչակիրներն այդքան գումար չունեին: Վենետիկի կառավարիչը նրանց առաջարկեց չվճարված գումարի փոխարեն գրավել Դալմաթիայի ափին գտնվող Ջադար նավահանգիստը, որը Վենետիկի առևտրական մրցակիցն էր: Սկսվեց խաչակրաց **չորրորդ** արշավանքը (1202–1204 թթ.): 1202 թ. խաչակիրները գրավեցին և ավերեցին Ջադար քաղաքը: Այնուհետև վենետիկցիները կարողացան համոզել արշավանքի առաջնորդներին շարժվել դեպի Կոստանդնուպոլիս: Արշավանքն սկսվեց այն պատրվակով, որ խաչակիրները պետք է վերականգնեին տապալված Իսահակ II Անգելոսի իշխանությունը, որի որդին օգնության խնդրանքով դիմել էր պապին: **1204 թ. սպրիլին** խաչակիրները գրավեցին **Կոստանդնուպոլիսը**: Բյուզանդիայից խլված տարածքների վրա ստեղծվեց խաչակրաց պետություն՝ **Լատինական կայսրությունը**: Բյուզանդիայի փոքրասիական տիրույթներում հույներն ստեղծեցին Նիկեայի և Տրապիզոնի կայսրությունները: Բյուզանդական կայսրությունը ժամանակավորապես դադարեց գոյություն ունենալուց:

Հետագայում կազմակերպվեցին ևս չորս խաչակրաց արշավանքներ, սակայն դրանք արդյունք չստվեցին: **1291 թ.** խաչակիրները կորցրին Ակրան՝ իրենց վերջին հենակետն Արևելքում: Դեպի Սուրբ Երկիր խաչակրաց արշավանքների դարաշրջանն ավարտվեց:

Խաչակրաց արշավանքների հետևանքները: Խաչակրաց արշավանքները չհասան իրենց անմիջական նպատակներին, որոնց համար կազմակերպվել էին: Նրանք դարձան տասնյակ հազարավոր մարդկանց մահվան պատճառ ոչ միայն Արևելքում, այլև Արևմուտքում: Արշավանքների ընթացքում ավերվեցին և կործանվեցին բազմաթիվ մշակութային արժեքներ, պալատներ, գրադարաններ: Ամենից շատ տուժեց Կոստանդնուպոլիսը: Սակայն խաչակրաց արշավանքները որոշակի ազդեցություն ունեցան Արևելք-Արևմուտք փոխհարաբերությունների վրա: Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ապրանքափոխանակության ծավալները: Արևմտյան Եվրոպայից Արևելք սկսեցին արտահանել որոշ ապրանքներ, մասնավորապես մահուդ, որը խթանում էր արհեստագործության զարգացումը:

Ապրելով Արևելքում՝ եվրոպացիներին հայտնի դարձան հողագործական նոր մշակաբույսեր, որոնց մի մասը՝ ձմերուկ,

ծիրան, բրինձ, կիտրոն, սկսեցին աճեցնել Եվրոպայում:

Խաչակրաց արշավանքները նպաստեցին Ֆրանսիայում և Անգլիայում կենտրոնաձիգ թագավորական իշխանության ստեղծմանը, քանի որ արշավանքներին հիմնականում մասնակցում էին ռազմատենչ ասպետները և ինքնուրույնության ձգտող խոշոր ավատատերերը:

Խաչակրաց արշավանքների ընթացքում թուլացան Բյուզանդիայի և արաբական աշխարհի առևտրականների դիրքերը միջերկրածովյան առևտրում: Դրա փոխարեն բարձրացավ Վենետիկի և Զենովայի առևտրական դերը:

Խաչակրաց արշավանքների արդյունքում խորացան նաև Արևելք–Արևմուտք հակասությունները: Ի պատասխան խաչակրության՝ մուսուլմանական աշխարհում ձևավորվեց Սրբազան պատերազմի գաղափարախոսությունը:

Կոստանդնուպոլսի գրավումը ավելի խորացրեց բյուզանդական և հռոմեական թուրիկական եկեղեցիների միջև գոյություն ունեցող հակասությունները:

Ընդհանուր առմամբ՝ խաչակրաց արշավանքները նպաստեցին Արևմտյան Եվրոպայի տնտեսության և մշակույթի զարգացմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին խաչակրաց արշավանքների նախադրյալները: Ի՞նչ դեր խաղաց շարժման կազմակերպման գործում կաթոլիկ եկեղեցին: Վերհիշե՛ք, թե ով էր այդ ժամանակ Հռոմի պապը, և երբ սկսվեց շարժումը:
2. Ի՞նչով ավարտվեց գյուղացիական արշավանքը: Նկարագրե՛ք խաչակրաց առաջին արշավանքի ընթացքը: Ի՞նչ կառուցվածք ուներ Արևելքում խաչակիրների ստեղծած պետությունը: Ի՞նչ տիտղոս էր կրում Գոթֆրիդ Բուլյոնցին:
3. Ի՞նչ նպատակով Արևելքում հիմնվեցին հոգևոր–ասպետական միաբանությունները: Թվարկե՛ք դրանք:
4. Ներկայացրե՛ք խաչակրաց հաջորդ արշավանքները և դրանց արդյունքները: Ի՞նչով խաչակիրները Եգիպտոս արշավելու փոխարեն 1204 թ. գրավեցին Կոստանդնուպոլիսը:
5. Ե՞րբ ավարտվեց խաչակրաց արշավանքների դարաշրջանը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ խաչակրաց շարժումը Արևմուտքի և Արևելքի համար. ներկայացրե՛ք դրական և բացասական հետևանքները:

§ 2. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Գյուղատնտեսությունը: Արևմտանվորպական երկրներում տնտեսության գլխավոր ճյուղը շարունակում էր մնալ գյուղատնտեսությունը: Այս շրջանում լայնորեն տարածվեց խոպան հողերի ու անտառների մաքրումը, որոնց հաշվին ընդարձակվում էին մշակելի հողատա-

րածքները: Նոր հողերում հաստատված գյուղացիները հարկերը սովորաբար վճարում էին դրամով: Աշխատանքի արտադրողականությունն աճում էր գյուղացիական տնտեսություններում, քանի որ իր հողաբաժնում գյուղացին ավելի լավ էր աշխատում, քան ավատատիրոջ հողում:

Ավատատերը սովորաբար հողի մի մասն էր բաժանում գյուղացիներին: Չբաժանված մասը կոչվում էր **տերունական հող**: Գյուղացին իր տիրոջից ստացած հողի դիմաց պարտավոր էր մշակել նաև տերունական հողը: Սակայն դրանից ավելի քիչ բերք էր ստացվում, քանի որ գյուղացին այն չէր մշակում այնպիսի ջանասիրությամբ և խնամքով, ինչպես իր հողը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ավատատերը ժառանգական հողակալության սկզբունքով տերունական հողերը ևս սկսում է բաժանել գյուղացիներին: Ստացած հողի դիմաց գյուղացին պարտավոր էր ավատատիրոջը հարկ վճարել բնամթերքով կամ դրամով: Երկու դեպքում էլ գյուղացին շահագրգռված էր հողը լավ մշակել, քանի որ բերքի մի մասն ինքն էր տնօրինում:

Այդ ժամանակ հողագործության մեջ լայնորեն տարածվեցին եռադաշտային համակարգը և հացահատիկային մշակարույսերի լավագույն տեսակները:

Միջնադարյան քաղաքը: Վաղ միջնադարում Արևմտյան Եվրոպայում հռոմեական կայսրության շրջանից պահպանվել էին մի շարք քաղաքներ: Սակայն դրանք ոչ թե տնտեսական, այլ քաղաքական և եկեղեցական կենտրոններ էին:

X–XI դդ. Արևմտյան Եվրոպայի տնտեսական կյանքում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ, որոնք նախադրյալներ հանդիսացան քաղաքների առաջացման և զարգացման համար: Արհեստագործության զարգացումը աստիճանաբար տանում էր դեպի դրա առանձնացում գյուղատնտեսությունից: Բանի որ հնարավոր չէր միաժամանակ զբաղվել և՛ երկրագործությամբ, և՛ արհեստագործությամբ, արհեստավորը հաստատվում էր քաղաքում,

որտեղ կենտրոնանում էին նաև առևտրականները:

VIII–IX դդ. Արևմտյան Եվրոպայում արհեստի և առևտրի քաղաք–կենտրոններ էին առաջացել Հյուսիսային Իտալիայում (Վենետիկ, Ջենովա, Ֆլորենցիա) և Հարավային Ֆրանսիայում (Մարսել, Թուլուզ): Այդ քաղաքներն իրենց չափերով շատ փոքր էին: Սովորաբար այնտեղ բնակվում էր 1–5 հազար մարդ:

Մինչև XV դարը մեծ էին համարվում 20–30 հազար բնակիչներ ունեցող քաղաքները: Այդ ժամանակ միայն մի քանի քաղաք (Միլան, Փարիզ, Կոստանդնուպոլիս, Կորդովա) ուներ 80–100 հազար բնակչություն:

Քաղաքի բնակչությունը հիմնականում զբաղվում էր արտադրությամբ և փոխանակային առևտրով: Քաղաքներում ձևավորվում է վաճառականների հատուկ խավ, որը զբաղվում էր ներքին և արտաքին առևտրով: Համալսարանների և այլ տիպի կրթական կենտրոնների առաջացումից հետո ձևավորվում է նաև մտավորականների խավ:

Քաղաքը ավելի հաճախ առաջանում էր ավատատիրոջ հողի վրա, ուստի պարտավոր էր ենթարկվել նրան: Հողատերն իր ձեռքում էր կենտրոնացնում քաղաքի կառավարումը: Ավելի շատ եկամուտներ ստանալու ավատատիրոջ ձգտումը հանդիպում էր քաղաքացիների դիմադրությանը: Ժամանակի ընթացքում քաղաքներն իրենց առջև նպատակ դրին՝ հասնելու քաղաքային ինքնավարության: Քաղաքացիների և ավատատիրոջ միջև պայքարի ընթացքում ձևավորվում է քաղաքային ինքնավարությունը:

Ինքնակառավարվող քաղաքն ուներ սեփական դատարան, աշխարհազոր և ֆինանսներ: Ինքնավարություն ստանա-

լուց հետո քաղաքը պարտավորվում էր ամեն տարի ոչ մեծ գումար վճարել ավատատիրոջը և նրա վարած պատերազմի ժամանակ ռազմաջոկատ տրամադրել:

Արհեստագործությունը և առևտուրը:

Դասական միջնադարում փոփոխություններ կատարվեցին նաև արհեստագործության ոլորտում:

Արհեստագործության բնորոշ առանձնահատկությունը նրա համքարային կազմակերպումն էր: **Համքարություններն** առաջացան որպես մանր ապրանք արտադրողների կազմակերպություններ՝ իրենց արտադրությունը, եկամուտները ավատատերերից և քաղաք եկած նոր արհեստավորների մրցակցությունից պաշտպանելու համար: Համքարության գլխավոր խնդիրը արտադրության և վաճառքի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր:

Համքարությունը խստորեն հետևում էր, որ յուրաքանչյուր վարպետ արտադրի այն քանակի և այնպիսի որակի արտադրանք, ինչպիսին որոշված է նրա համար: Սա արվում էր այն նպատակով, որ մրցակցություն չառաջանար, և ոչ մի արհեստավոր դուրս չնկղեր արտադրությունից:

XI–XV դդ. եվրոպական առևտուրը առավելապես կենտրոնացած էր երկու շրջաններում: Դրանցից մեկը Միջերկրական ծովն էր, որն իրար էր կապում ոչ միայն միջերկրածովյան երկրները, այլև Արևմտյան Եվրոպան Արևելքի հետ: Սկզբում Արևելք–Արևմուտք առևտրում գլխավոր դերը պատկանում էր արաբական և բյուզանդական վաճառականներին, իսկ խաչակրաց արշավանքների շրջանից՝ Վենետիկի, Ջենովայի, Մարսելի առևտրականներին:

Եվրոպական առևտրի մյուս շրջանն ընդգրկում էր Բալթիկ և Հյուսիսային ծո-

վերը: Առևտրականները ևս, ինչպես արհեստավորները, միավորվում էին հատուկ կազմակերպությունների մեջ: Դրանք կոչվում էին **գիլդիաներ**: Երբեմն միավորվում էին նաև տարբեր քաղաքների առևտրականները: Այսպես առաջացավ **Հանզան**, որը միավորում էր գերմանական և արևմտասլավոնական քաղաքների վաճառականներին:

Ավատատիրական հասարակության երեք դասերը: Միջնադարի մտածողների համոզմամբ՝ հասարակությունը բաղկացած է երեք դասերից: Առաջին դասը (նրանք, ովքեր աղոթում են) կազմում էին հոգևորականները, երկրորդը (նրանք, ովքեր կոչվում են)՝ ավատատերերը, երրորդը (նրանք, ովքեր աշխատում են)՝ գյուղացիները և քաղաքացիները, այսինքն՝ նյութական բարիքներ ստեղծողները:

XI դ. Արևմտյան Եվրոպայում ավատատերերի դասակարգը առանձնացել էր հասարակության մյուս դասերից և դարձել էր արտոնյալ փակ խումբ, որին պատկանելը որոշվում էր միայն ծնունդով: Հողի սեփականության իրավունքը պատկանում էր միայն նրանց, ուստի գործում էր «առանց սենյորի հող չկա» սկզբունքը: Համայնքի հողատարածքների սեփականության իրավունքը ևս պատկանում էր ավատատիրոջը: Հողի դիմաց գյուղացին հարկեր էր վճարում:

Ավատատիրական դասի ձևավորմանը զուգահեռ ավարտուն տեսք ստացավ ավատատիրական աստիճանակարգությունը: Հողային սեփականության վրա էր հիմնված նաև ավատատերերի քաղաքական իշխանությունը: Քաղաքական աստիճանակարգության մեջ նրանց զբաղեցրած աստիճանը կախված էր հողի չափից և կարգավիճակից:

Հոգևորականությունը առաջին դաս կոչվելու իր իրավունքը բացատրում էր նրանով, որ իրենք են միջնորդները Աստծո և մարդու միջև: Նրանք քարոզում էին, որ եկեղեցին Աստծո պատվիրանների միակ կրողն է, ուստի կարող է թողություն տալ մարդկանց մեղքերին և նրանց արժանացնել հավիտենական փրկության: Եկեղեցին ևս խոշոր հողատեր էր: Եկեղեցու կարիքները բավարարելու համար պետությունը նրան հանձնեց հսկայական հողատիրույթներ: Առանձին անձինք ևս հոգու փրկության և մեղքերի թողության համար եկեղեցուն հողեր էին նվիրում:

Արևմտյան Եվրոպայի բոլոր բնակիչները պարտավոր էին եկեղեցուն հարկ վճարել, որը կոչվում էր տասանորդ՝ բերքի մեկ տասներորդ մասը: Վաղ միջնադարում եկեղեցուն պատկանում էր մշակովի հողատարածքների մեկ երրորդը, և եկեղեցին դարձավ հոգևոր ավատատեր: Հոգևոր ավատատերերը ներառվեցին ավատատիրական աստիճանակարգության մեջ: Նրանք ևս ունեին իրենց վասալները:

Քաղաքների, արհեստի և առևտրի զարգացումը, քաղաքների պայքարը սենյորների դեմ հիմք դարձան քաղաքային դասի ձևավորման համար: Նոր դասի հիմնական տնտեսական զբաղմունքները արհեստն ու առևտուրն էին: Քաղաքային դասն ուներ մի շարք արտոնություններ, մասնավորապես՝ անձնական ազատություն, մասնակցություն քաղաքի կառավարմանը: Նրանց դատում էին միայն քաղաքային դատարանում:

Գույքային և սոցիալական անհավասարություն կար նաև քաղաքային դասի ներսում: Աստիճանաբար ձևավորվում էր հարուստների խավը, որի անդամ-

ներին XIV–XV դդ. սկսեցին անվանել *բյուրգերներ*:

Դասային միապետության ստաջանայն: Ավատատիրական հասարակության հիմնական դասերի ձևավորումից հետո թագավորը ստիպված էր երկիրը կառավարել նրանց հետ: Այսպես ձևավորվեց նոր տիպի պետություն՝ *դասային միապետություն*: XI դարից սկսած՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում թագավորները ձեռնամուխ եղան կենտրոնացված ուժեղ իշխանության ստեղծմանը: Միապետը ձգտում էր ամբողջ իշխանությունը կենտրոնացնելու իր ձեռքում, սակայն դրա համար չունեի անհրաժեշտ նյութական միջոցներ: Դրանք հասարակությունից ստանալու համար նա ստիպված էր պետության կառավարման մեջ ներգրավել հասարակության ներկայացուցիչներին: Այդպես ձևավորվեցին իշխանության նոր մարմիններ՝ խորհրդարանները:

XIII դ. *Անգլիան* ընթանում էր պետության կենտրոնացման ուղիով, որը տեղի ունեցավ քաղաքացիական պատերազմի միջոցով:

Քաղաքական պայքարն սկսվեց Հովհան Անհողինից (1199–1216): Նա բռնազրավում էր իրեն ոչ ցանկալի բարոնների հողերը, ձերբակալում և մահապատժի էր ենթարկում նրանց: Թագավորի հանդեպ դժգոհությունն ավելի մեծացավ, երբ նա պարտվեց ֆրանսիացիների դեմ պատերազմում և հրաժարվեց Ֆրանսիայում գտնվող իր տարածքների մեծ մասից: Հովհան Անհողինը հակամարտության մեջ մտավ նաև Ինոկենտիոս III պապի հետ և պարտություն կրեց: Նա ստիպված էր իրեն ճանաչել պապի վասալը և պարտավորվեց ամեն տարի պապական գանձարան մուծել 1000 արծաթե մարկ: Սա

խորացրեց դժգոհությունը, որը վերածվեց ապստամբության:

1215 թ. ապստամբները մտան Լոնդոն և թագավորին ներկայացրին իրենց պահանջները՝ *Ազատությունների մեծ խարտիստե*: Արքան ստորագրեց խարտիան: Սա միջնադարյան Անգլիայի սահմանադրությունն էր: Թագավորը պարտավորվում էր վասալներից չվերցնել սահմանված հարկից ավելին, չխառնվել քարձրաստիճան հոգևորականների ընտրություններին: Խարտիայի կատարումը հսկելու համար ստեղծվեց 25 քարոններից կազմված խորհուրդ:

Սակայն Հովհան Անհողինի որդին՝ Հենրիխ III–ը, չափահաս դառնալով, հրաժարվեց խարտիայի պահանջները կատարելուց: Անգլիայում սկսվեց քաղաքացիական պատերազմի նոր փուլ: Ապստամբների առաջնորդ *Միսնոն դը Մոնֆորդը* Լոնդոնում **1265 թ.** հրավիրեց ժողով, որին, բացի քարոններից, մասնակցում էին նաև յուրաքանչյուր կոմսությունից երկու ասպետ և յուրաքանչյուր խոշոր քաղաքից երկու քաղաքացի: Այս ներկայացուցչական ժողովն էլ ստացավ *խորհրդարան* անվանումը: Չնայած ապստամբությունը պարտություն կրեց, իսկ Մոնֆորդը սպանվեց, խորհրդարանը շարունակեց իր գոյությունը:

Խորհրդարանը բաղկացած էր երկու պալատից՝ Վերին (Լորդերի) և Ստորին (Համայնքների): Առաջինում նիստեր էին անում քարոնները և հոգևորականները, իսկ երկրորդում՝ ասպետներն ու քաղաքացիները:

Ֆրանսիայում թագավորական իշխանության ուժեղացման հետևանքով պայքար սկսվեց արքունիքի և պապականության միջև: *Ֆիլիպ IV Գեղեցիկը* (1285–1314) սահմանափակեց եկեղեցու

դատական և գույքային իրավունքները: Դա առաջացրեց Բոնիֆացիոս VIII պապի դժգոհությունը: Ֆիլիպ IV–ը արգելեց նաև Ֆրանսիայից ոսկու և արծաթի արտահանումը պապական արքունիք: Հակասություններն ավելի խորացան, երբ պապը հայտարարեց, որ աշխարհիկ իշխանությունը պետք է ենթարկվի հոգևոր իշխանությանը: Ֆրանսիական հասարակության աջակցությունը ստանալու համար Ֆիլիպ IV–ը **1302 թ.** հրավիրեց *գլխավոր շտատներ*, որտեղ ներկայացվում էին երեք դասեր (շտատներ)՝ հոգևորականներ, ազնվականներ, քաղաքացիներ:

Գլխավոր շտատների առաջացումով Ֆրանսիայում ավարտվեց պետության նոր տիպի՝ *դասային միապետության* կազմավորումը:

Ֆրանսիայում առաջացած դասային միապետությունն ուներ մի շարք առանձնահատկություններ: Գլխավոր շտատներում երեք դասերը նիստերն անցկացնում էին առանձին–առանձին, և նրանցից յուրաքանչյուրը կազմում էր առանձին պալատ: Առաջին պալատը կազմում էին քարձրաստիճան հոգևորականները, երկրորդը՝ միջին ու մանր ավատատերերը: Դուքսերը և կոմսերը սովորաբար շտատների նիստերին չէին մասնակցում: Երրորդ պալատն ընդգրկում էր քաղաքային դասի ներկայացուցիչներին: Յուրաքանչյուր պալատ ուներ մեկ ձայն: Օրենք ընդունելու համար անհրաժեշտ էր, որ երեք ձայներից երկուսը կողմ քվեարկեին:

Դասային միապետություն առաջացավ նաև *Սրբազան հռոմեական կայսրությունում*, սակայն ներկայացուցչական մարմնի՝ ռայխստագի դերը շատ թույլ էր: Սկզբում դրան մասնակցում էին միայն իշխանները, XIII դարից՝ նաև քաղաքի ներկայացուցիչները, իսկ XIV դարից՝ մանր

ու միջին հողատերերը: Դասային ներկայացուցչական միապետություն առաջա-

ցավ նաև *Իսպանիայում*: Ներկայացուցչական մարմինը կոչվում էր *կորտեսներ*:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն էր ավատատիրական հասարակությունում տնտեսության գլխավոր ձյուղը: Նշե՛ք դրա զարգացման առանձնահատկությունները:
2. Միջնադարյան քաղաքների առաջացման ինչ նախադրյալներ կարող եք նշել: Ո՞ր վայրերում էին դրանք ձևավորվում: Թվարկե՛ք ժամանակի նշանավոր, ինչպես նաև մեծ քաղաքները: Սոցիալական ո՞ր խավերն էին կազմում քաղաքային բնակչությունը: Քաղաքների ինքնավարությունն ինչպե՞ս էր ձևավորվում:
3. Պարզաբանե՛ք միջնադարյան քաղաքային արհեստների բնորոշ կողմերը: Ո՞րն էր համքարության գլխավոր խնդիրը:
4. Եվրոպական երկրների առևտուրը ո՞ր շրջաններում էր կենտրոնացած XI–XV դարերում: Արևելք–Արևմուտք առևտրում ո՞ւմ անցավ առաջնային դերը: Ի՞նչ է գիլդիան:
5. Ըստ միջնադարի մտածողների՝ ինչ դասերից էր կազմված հասարակությունը: Բացատրե՛ք «առանց սենյորի հող չկա» սկզբունքի բովանդակությունը:
6. Ինչպե՞ս էին հիմնավորում հոգևորականներն առաջին դաս կոչվելու իրենց իրավունքը: Ե՞րբ ձևավորվեց քաղաքային դասը, և որո՞նք էին այդ դասի ներկայացուցիչների հիմնական գրադմունքները:
7. Ինչպե՞ս ձևավորվեց դասային միապետությունը: Ինչո՞ւ թագավորը հասարակության ներկայացուցիչներին ներգրավեց պետական կառավարման համակարգում:
8. Անգլիայում ե՞րբ ընդունվեց Ազատությունների մեծ խարտիան, և ինչ էր այն սահմանում: Ո՞ւմ նախաձեռնությամբ և ե՞րբ գումարվեց Անգլիայի խորհրդարանը: Ո՞վ և ե՞րբ հրավիրեց գլխավոր շտատները: Ներկայացրե՛ք ֆրանսիական դասային միապետության առանձնահատկությունները:

§ 3. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Ֆրանսիայի միավորման սկիզբը: Ֆրանսիան որպես պետություն առաջացավ 843 թ. Վերդենի դաշնագրի հիման վրա, որով ֆրանկական տերությունը բաժանվեց Լյուդովիկոս Բարեպաշտի որդիների միջև: 987 թ. Կարոլինգյան արքայատանը փոխարինեց *Կապետինգյան հարստությունը*: Այս շրջանում ֆրանսիական թագավորների իշխանությունը մեծ չէր: Նրանց պատկանում էին միայն Փարիզը և Օդևանն իրենց շրջակայքով: Թա-

գավորի իրական իշխանությունը տարածվում էր միայն իր տիրույթում՝ *դոմենում*:

XII դ. ֆրանսիական թագավորները ձեռնամուխ եղան իրենց իշխանության ամրապնդմանը և երկրի միավորմանը: Այդ պայքարում Ֆրանսիայի թագավորները երկարատև հակամարտության մեջ մտան նաև Անգլիայի հետ: **1066 թ.** Ֆրանսիայի արևմուտքում գտնվող Նորմանդիայի դուքս *Վիլիելմը* նվաճեց Անգլիան և դարձավ թագավոր: Նորմանդիան միացվեց Անգլիային: **1154 թ.** Ֆրանսիայի ավա-

տասերերից մեկը՝ Անժուի կոմս **Տենրիխ Պաննուսգենենտը**, դարձավ Անգլիայի թագավոր: Նա ամուսնացավ Էլենորա Աբվիտանացու հետ, և Աբվիտանիայի դքսությունը նա անցավ Անգլիային: Այսպիսով, Ֆրանսիայի տարածքի կեսից ավելին պատկանում էր Անգլիային:

Ֆիլիպ II Օգոստոսը (1180–1223) կարողացավ գրավել Նորմանդիան: Նրա կառավարման օրոք թագավորական դոմենն ընդարձակվեց մոտ չորս անգամ: Շուտով Ֆրանսիական թագավորները ձեռնամուխ եղան նաև երկրի հարավային շրջանների նվաճմանը:

Իսկ **1229 թ.** արթիզոյան հերետիկոսների շարժումը ճնշելու նպատակով կազմակերպված խաչակրաց արշավանքի ընթացքում Ֆրանսիան գրավեց **Թուրքի կոմսությունը** Միջերկրական ծովի առափնյա շրջաններում: Սակայն Աբվիտանիան դեռևս մնում էր Անգլիայի կազմում:

Կառավարման համակարգը: Ֆրանսիայի միավորմանը զուգընթաց զարգանում էր նաև պետության կառավարման համակարգը: Թագավորական դոմենի ընդարձակումը պահանջում էր ստեղծել կառավարման համապետական մարմիններ և միասնական օրենսդրություն: Այդպիսի մարմիններ էին **թագավորական խորհուրդը** (կառավարման բարձրագույն մարմին), **Փարիզի պատրանենտը** (բարձրագույն դատարան) և **հաշվային պարստը** (բարձրագույն ֆինանսական մարմին):

Նախկինում պաշտոնի դիմաց հող էին ստանում, իսկ այժմ այդ կարգը փոխվեց: Պաշտոն ստանում էին հատուկ կրթություն ստացած մարդիկ, ովքեր ոչ թե հող, այլ աշխատավարձ էին ստանում:

Նախկին դքսությունների և կոմսությունների փոխարեն ստեղծվեցին վարչական նոր միավորներ: Սրանց կառավարիչներն իրենց ձեռքում կենտրոնացրին վարչական, ռազմական և դատական իշխանությունը: Պետությունն արդեն չէր համարվում թագավորի անձնական սեփականություն, որը կարելի էր քաժանել ժառանգներին:

Կառավարման քնագավառում կարևոր բարեփոխումներ անցկացրեց **Լյուդովիկոս IX-ը** (1226–1270): Նա ընդունեց հատուկ օրենք, ըստ որի՝ թագավորական դոմենում արգելվում էին դատական մենամարտերը: Ավատատիրական դատարանում հաճախ վիճող կողմերին առաջարկում էին վեճերը լուծել մենամարտի միջոցով: Այժմ վիճահարույց գործը տեղափոխվում էր թագավորական դատարան, որը դարձավ պետության բարձրագույն դատական ատյանը: Լյուդովիկոս IX-ը նաև արգելեց ավատատերերի միջև պատերազմները թագավորական դոմենում:

Թագավորական դոմենում մտցվեց միասնական դրամական համակարգ: Թագավորական դրամն ամբողջ երկրում պետք է կիրառվեր տեղական դրամներին զուգահեռ:

Ֆրանսիայի միավորման ավարտը: Հարյուրամյա պատերազմից հետո Ֆրանսիան կրկին ձեռնամուխ եղավ երկրի միավորմանը, ինչին ընդդիմանում էին Բուրգունդիայի և Բրետանի դուքսերը: Բուրգունդիայի դուքս **Կարլոս Խիզախը** Ֆրանսիայի արևելքում ստեղծեց **Մեծ Լոթարինգիա** պետությունը, որը ձգվում էր Հյուսիսային ծովից մինչև Միջերկրական ծով: Սկզբում Ֆրանսիայի թագավորը անհաջողության մատնվեց, սակայն **1477 թ. Նանսիի ճակատամարտում** հաղ-



Հենրիխ II Պրանտագենետ

թեց Կարլոս Խիզախին: Բուրգունդիայի դքսությունը միացվեց Ֆրանսիային: Շուտով Ֆրանսիային միացվեց նաև Միջերկրական ծովի ափին գտնվող խոշոր նավահանգիստ Մարսելը: Աննա Բրետանացու և Կարլոս VIII-ի ամուսնության շնորհիվ 1491 թ. Ֆրանսիային միացվեց նաև Բրետանի դքսությունը: Այդպիսով՝ Ֆրանսիայի քաղաքական միավորումը հիմնականում ավարտվեց:

XV դ., Ֆրանսիայի միավորմանը զուգահեռ, տեղի էր ունենում նոր տիպի պետության՝ *բացարձակ միապետության* ձևավորումը: Գլխավոր շտապներ այլևս չէին հրավիրվում: Ռազմական բարեփոխումների շնորհիվ ստեղծվեց մշտական բանակ: Թագավորը հրաժարվեց վասալներից՝ հավաքագրված զորաջոկատներից: Բանակի ծախսերը հոգալու համար մտցվեց ռազմական հարկ, որը վճարում էին բոլոր բնակիչները: Հարկային բարեփոխումների շնորհիվ գանձարանը դրամական մեծ միջոցներ էր ստանում: Մշտական բանակ և ֆինանսական հսկայական միջոցներ ունեցող թագավորն այլևս կա-

րիք չունեի հասարակությունից խնդրելու ռազմական և ֆինանսական օգնություն:

Ֆրանսիան XVI դ. դարձավ Արևմտյան Եվրոպայի խոշորագույն կենտրոնացված պետություններից մեկը:

Անգլիայի միավորման սկիզբը:
Հենրիխ II Պրանտագենետ: V դարում Բրիտանիայում հաստատված անգլոսաքսոնական ցեղերի ստեղծած թագավորությունները 829 թ. միավորվեցին մեկ պետության մեջ: Անգլիայի հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ նորմանական նվաճումը: Արդեն ասվել է, որ **1066 թ. Նորմանդիայի դուքս Վիլիելմը** նվաճեց Անգլիան և իրեն հռչակեց Անգլիայի թագավոր (1066–1087): Նա ստացավ **Նվաճող** մականունը:

Անգլիայում թագավորական իշխանության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցավ **1086 թ.** անցկացված համաանգլիական հողային ցուցակագրումը: Ցուցակագրումը երկու նպատակ ուներ. թագավորը ցանկանում էր պարզել իր վասալներին պատկանող հողատարածքների չափերը, որպեսզի ձգարտեր հարկերի և ծառայությունների չափերը:

Անգլիայի նվաճմանը զուգահեռ, եկվորներն սկսեցին բռնագրավել անգլոսաքսոնական խոշոր հողատերերի հողերը: Հողը բաժանվում էր աստիճանաբար, ուստի նորմանական բարոնների հողատարածքները ցրված էին տարբեր կոմսություններում: Այդ պատճառով Անգլիայում տարածքային խոշոր իշխանություններ չստեղծվեցին, ինչպես Գերմանիայում և Ֆրանսիայում: Վիլիելմը ծառայություն էր պահանջում ոչ միայն իր անմիջական վասալներից՝ բարոններից, այլև սրանց վասալներից:

Թագավորական իշխանության ամրապնդման համար Վիլիելմն անցկաց-

րեց նաև մի շարք բարեփոխումներ: Երկիրը բաժանվեց կոմսությունների, որոնք կառավարելու համար թագավորը նշանակում էր կառավարիչ՝ *շերիֆ*: Նա էր տնօրինում կոմսության վարչական և դատական գործերը, հավաքում էր հարկերը:

1135 թ. նորմանական արքայատունը դադարեց գոյություն ունենալուց: Գահի համար տարբեր խմբավորումների միջև պայքարը տևեց 20 տարի: Ի վերջո 1154 թ. թագավոր ընտրվեց ֆրանսիացի ազնվական՝ Անժուի կոմս *Հենրիխ II Պլանտագենեանը* (1154–1189): Անգլիական թագավորության կազմի մեջ մտան Անժուի կոմսերին պատկանող տարածքները: Հենրիխն ամուսնացել էր Էլեոնորա Աբվիտանացու հետ, ուստի Աբվիտանիայի դքսությունը ևս անցավ Անգլիային: Այսպես Անգլիան դարձավ Պլանտագենեանների տերություն, որը հաճախ անվանում էին Անժուի կայսրություն:

Պետության կենտրոնացման համար Հենրիխ II-ն անցկացրեց բարեփոխումներ: Զգտելով ընդդայնելու թագավորական դատարանների իրավունքները՝ նա կատարեց դատական բարեփոխում: Յուրաքանչյուր ազատ մարդ, որոշակի գումար վճարելով, կարող էր իր դատական գործը ավատատիրական դատարանից տեղափոխել թագավորական դատարան: Այստեղ գործը քննվում էր երդվյալ ասենակալների ներկայությամբ:

Հենրիխ II-ը կատարեց նաև ռազմական բարեփոխում: Թագավորի օգտին վասալների ռազմական ծառայության ժամկետը կրճատվեց: Մնացած ժամկետի համար վասալը պարտավոր էր վճարել հատուկ հարկ: Այսպես թուլանում էր թագավորի կախումը բարոններից և մյուս վասալներից:

Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմը: Անգլիայի քաղաքական զարգացման վրա մեծ ազդեցություն թողեց Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմը (1455–1485): Անգլիայի տնտեսական զարգացման արդյունքում հողատերերը բաժանվեցին երկու խմբի՝ «հին» և «նոր» ազնվականության: Առաջինի մեջ մտնում էին այն հողատերերը, որոնք տնտեսությունը սովորաբար վարում էին հին եղանակով: Հողատերն իր հողը բաժանում էր երկու մասի՝ *տերունական* և *գյուղացիական*: Տերունական հողը ավատատերը չէր բաժանում գյուղացիներին, այլ մշակում էր նրանց աշխատանքով:

«Նոր» ազնվականությունը, որը հիմնականում կազմված էր մանր ու միջին հողատերերից, տնտեսությունը կազմակերպում էր վարձու աշխատանքի միջոցով: Նրանք ոչ թե հողը բաժանում էին գյուղացիներին, այլ հետ էին վերցնում հողերը և դրանք մշակում վարձու աշխատողների միջոցով, որն ավելի եկամտաբեր էր: Նրանք գնում էին աղքատացած «հին» ազնվականների և գյուղացիների հողերն ու վարձակալության տալիս:

«Հին» և «նոր» ազնվականության միջև ստեղծված հակասությունները վերածվեցին երկարատև պատերազմի, որի համար առիթ ծառայեցին Լանքաստերների և Յորքերի տոհմերի դինաստիական վեճերը: 1455 թ. երկու տոհմերի միջև պատերազմ սկսվեց, որն էլ ստացավ *Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմ* անվանումը: Լանքաստերների գինանշանին պատկերված էր կարմիր, իսկ Յորքերի գինանշանին՝ սպիտակ վարդ: Առաջիններին պաշտպանում էին «հին» ազնվականները, իսկ Յորքերին՝ «նոր» ազնվականները և քաղաքացիների մի մասը: Ի վերջո

Էդուարդ Յորքցին 1461 թ. գրավեց Լոնդոնը և իրեն հռչակեց թագավոր:

Էդուարդ IV-ը սկսեց հովանավորել առևտուրը և արդյունաբերությունը: Նա օրենք ընդունեց, ըստ որի՝ արգելվում էր բրդի արժեքավոր տեսակների արտահանումը, որպեսզի Անգլիայում զարգանա մահուդագործությունը: Նա չէր վստահում խորհրդարանին և երկիրը կառավարում էր իրեն նվիրված մարդկանց միջոցով: Նրա մահից հետո սկսվեց գահակալական պայքար, որի արդյունքում թագավոր հռչակվեց Հենրիխ VII-ը, որը հիմք դրեց *Թյուդորների արքայատանը (1485-1603)*: Նա շարունակեց կենտրոնացված պետություն ստեղծելու քաղաքականությունը:

XV դ. վերջին Անգլիայում կային բոլոր նախադրյալները բացարձակ միապետություն ստեղծելու համար: Անգլիան XVI դար մուտք գործեց որպես զարգացած տնտեսություն և մշակույթ ունեցող երկիր: Այդ ժամանակ Անգլիայում շարունակվում էր անգլիական ժողովրդի ձևավորումը: Լոնդոնի բարբառի հիման վրա սկսեց ձևավորվել անգլերենը, որը հարստանում էր ֆրանսերենի և լատիներենի բառապաշարով: Արդեն XIV դ. անգլերենը դարձել էր խոսակցական և գրական լեզու: 1362 թ. սկսած՝ անգլերենով էին տարվում խորհրդարանական վիճաբանությունները և դատական քննարկումները: *Ջոն Ռիկկիֆի* նախաձեռնությամբ Աստվածաշունչը թարգմանվեց անգլերեն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշեք, թե Կարլոս Մեծի տերության որ տարածքների վրա ձևավորվեց Ֆրանսիան: Երբ հաստատվեց Կապետինգների արքայատոհմը: Երբ թագավորները ձեռնամուխ եղան իրենց իշխանության ամրապնդմանը և ինչո՞ւ: Ի՞նչ դեր խաղաց այս գործընթացում ֆրանս-անգլիական հակամարտությունը:
2. Գծապատկերի միջոցով ներկայացրեք XIII դ. վերջի պետական կառավարման համակարգը Ֆրանսիայում: Ովքե՞ր էին աջակցում պետության կենտրոնացմանն ուղղված թագավորի քաղաքականությանը:
3. Ներկայացրեք Ֆրանսիայի միավորման գործընթացի ավարտական փուլը: Ի՞նչ տիպի պետություն ձևավորվեց Ֆրանսիայում XV-XVI դարերում: Ո՞րն էր նրա հզորության հիմքը:
4. Ի՞նչ ուղիով էր ձևավորվում ավատատիրական հասարակությունն Անգլիայում: Ի՞նչ նպատակով 1086 թ. անցկացվեց համաանգլիական հողային ցուցակագրումը: Ի՞նչո՞ւ Անգլիայում տարածքային խոշոր իշխանություններ չստեղծվեցին:
5. Երբ և ո՞վ հաստատեց ֆրանսիական նոր արքայատոհմ Անգլիայում: Ներկայացրեք Հենրիխ II-ի բարեփոխումների արդյունքները:
6. Մեկնաբանեք Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմի պատճառները: Պարզաբանեք այդ պատերազմի ազդեցությունը Անգլիայի քաղաքական զարգացման վրա: Որո՞նք էին բացարձակ միապետության ստեղծման նախադրյալներն Անգլիայում:

§ 4. ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՆ

Գերմանական կայսրերի արտաքին քաղաքականությունը: Սրբազան հռոմեական կայսրության արտաքին քաղաքականության մեջ գերիշխում էին երկու ուղղություններ: Առաջինը՝ Իտալիայի նվաճումը, երկրորդը՝ Տիրոջ գերեզմանի ազատագրումը: **Շտաուֆենների** արքայատոհմի կայսրերն իրենց համարում էին քրիստոնյա աշխարհի առաջնորդներ և փորձում էին ստեղծել համաքրիստոնեական Հռոմեական կայսրություն:

Իտալիան այս շրջանում քաղաքականապես մասնատված էր: Հյուսիսային Իտալիայում ձևավորվել էին մի շարք քաղաք-պետություններ՝ Միլան, Ֆլորենցիա, Ջենովա, Վենետիկ: Միջին Իտալիայի մեծ մասը մտնում էր պապական պետության՝ Պապական մարզ, կազմի մեջ: Այստեղ առաջացել էր պապերի աշխարհիկ պետությունը (Սուրբ Պետրոսի կալվածք)՝ Հռոմ մայրաքաղաքով: Հարավային Իտալիայի մի մասը և Սիցիլիա կղզին նվաճել էին նորմանները և այնտեղ հիմնել Սիցիլիական թագավորությունը:

Իտալիան նվաճելու քաղաքականությունը շարունակեց նաև **Ֆրիդրիխ I Բարբարուսան** (1152–1190): Սրբազան հռոմեական կայսրության կենտրոնացման և կայսերական իշխանության ամրապնդման համար նա որոշեց գրավել Իտալիան:

Սկզբում նա որոշ հաջողությունների հասավ: **1154 թ.** կայսրը ձեռնարկեց իր առաջին արշավանքը, հասավ Հռոմ, և պապը նրան թագադրեց կայսերական թագով: Դրանից հետո կայսրը Հյուսիսային Իտալիայի քաղաքներին պարտադրեց որոշում ընդունել, ըստ որի՝ այդ քաղաքները պետք է կառավարեին կայսեր նշանակած կուսակալները: Սակայն քաղաքներն ապստամբեցին և ստեղծե-

ցին Լոմբարդական լիգան, որի մեջ մտան 22 քաղաքներ: Լիգան ղեկավարում էր Ալեքսանդր III պապը: **1176 թ. Լենյանոյի** մոտ գերմանական ասպետները ծանր պարտություն կրեցին: Ֆրիդրիխ I-ը ստիպված էր պապի և Լիգայի հետ պայմանագրեր կնքել, ըստ որի՝ քաղաքների ինքնավարությունը վերականգնվեց:

Ֆրիդրիխ I-ի քաղաքականությունը շարունակեց նրա որդի Հենրիխ VI-ը: Նա ամուսնացել էր սիցիլիական թագավորության ժառանգորդուհու հետ և դարձել էր Սիցիլիայի թագավոր: Մեկ պետության մեջ միավորելով կայսրությունը և Սիցիլիական թագավորությունը՝ նա փորձում էր իրեն ենթարկել նաև Բյուզանդիան, Սուրբ Երկիրը և ստեղծել համաքրիստոնեական կայսրություն: Սակայն խաչակրաց արշավանք կազմակերպելու ժամանակ նա անսպասելի մահացավ: Նրա որդի Ֆրիդրիխը Ինոկենտիոս III պապի ջանքերով 1212 թ. ընտրվեց Գերմանիայի թագավոր: Ութ տարի անց նա դարձավ կայսր: Ֆրիդրիխ II Բարբարուսան անհաջող փորձ կատարեց գրավելու Հյուսիսային և Միջին Իտալիան: Նրա մահից հետո Սիցիլիան գրավեցին ֆրանսիացիները: Սիցիլիական թագավորությունը տրոհվեց, իսկ կղզին միացվեց Պիրենեյան թերակղզու պետություններից Արագոնին:

Սրբազան հռոմեական կայսրությունում Շտաուֆենների տան կայսրերի կառավարումը (1138–1254) համընկավ խաչակրության ծավալման ժամանակաշրջանի հետ: Խաչակրաց արշավանքներին մասնակցելը կայսրերի արտաքին քաղաքականության մյուս կարևոր բնագավառն էր: Կոնրադ III-ը խաչակրաց երկրորդ արշավանքի ղեկավարներից էր, Ֆրիդրիխ I-ը՝ երրորդ արշավանքի



Կարլոս IV

ատաջնորդներից: Միայն մահը խանգարեց Հենրիխ VI-ին դառնալու խաչակիր: Խաչակրաց վեցերորդ արշավանքը (1228–1229) գլխավորում էր Ֆրիդրիխ II-ը: Հասնելով Սուրբ Երկիր՝ նա պայմանագիր կնքեց Եգիպտոսի սուլթանի հետ, ըստ որի՝ Երուսաղեմն անցավ քրիստոնյաներին, սակայն մի քանի տարի անց մուսուլմանները նորից գրավեցին քաղաքը:

Կարլոս IV-ի «Ռսկե բուլլան»: XIII դ. երկրորդ կեսից Սրբազան հռոմեական կայսրությունն սկսեց տրոհվել: Նրա կազմի մեջ մտնում էին պետություններ, որոնք փաստացի անկախ էին՝ Չեխական թագավորությունը, Տոսկանան և Հյուսիսային Իտալիան: 1291 թ. առաջացավ ևս մեկ անկախ պետություն՝ **Շվեյցարական միությունը:**

Գերմանիայում քաղաքական մասնատվածության հետ միասին թուլացել էր թագավորական իշխանությունը: Գերմանական կայսրերն այդպես էլ չկարողացան հասնել երկրում թագավորական իշխանության ժառանգականության սկզբունքի հաստատմանը: Եթե թագավոր-

ական իշխանությունն անցնում էր հորից որդուն, ապա դրա համար անհրաժեշտ էր տարածքային իշխանների համաձայնությունը, որը ստանալու համար ամեն անգամ նրանց գիջումներ էին անում:

Կազմավորվող տարածքային իշխանությունները փոխարինում էին նախկին ցեղային դքսություններին: Գերմանիայում առաջացան մոտ հարյուր տարածքային իշխանություններ, որոնցից ութսունը հոգևոր իշխանություններ էին: Ավատատիրական աստիճանակարգությունում տարածքային իշխանները զբաղեցրին ցեղային դուքսերի տեղը և թագավորի անմիջական վասալներն էին: Նրանց սկսեցին անվանել **կայսերական իշխաններ:** Նրանք ձեռք բերեցին դրամ հատելու, հարկեր հավաքելու, քաղաքներ հիմնելու իրավասություն:

Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը իրավաբանորեն ամրապնդվեց Կարլոս IV կայսեր (1346–1378) հրատարակած **«Ռսկե բուլլայով»** (1356 թ.): Դրանով հաստատվեց գերմանական թագավորների ընտրության կարգը: Թագավորին պետք է ընտրեր յոթ իշխաններից բաղկացած խորհուրդը: Դրանցից երեքը հոգևոր իշխաններ էին, իսկ չորսը՝ աշխարհիկ: Բուլլան օրինականացրեց իշխանների անկախությունն իրենց տարածքներում: Քաղաքներին արգելվում էր միություններ կազմել: Բուլլան՝ որպես կայսրության քաղաքական կյանքը կարգավորող փաստաթուղթ, ուժի մեջ մնաց մինչև 1806 թ., երբ կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց:

Գերմանիայի քաղաքական մասնատվածությունն իր ազդեցությունը թողեց դասային ներկայացուցչական մարմնի՝ **ռայխստագի** ձևավորման և գործունեության վրա: Ռայխստագը կայսեր կողմից

հրավիրվող ժողով էր, սակայն օրենքներ ընդունելու իրավունք չուներ. այն խորհրդակցական իրավունքներով օժտված մարմին էր:

Ռեկոնկիստա: Իսպանիայի միավորումը: 711–714 թթ. արաբները գրավեցին համարյա ողջ Իսպանիան: Մինչև 755 թ. Իսպանիան մտնում էր Դամասկոսի խալիֆայության կազմի մեջ, իսկ 929 թ. այն դարձավ անկախ պետություն, որը սովորաբար անվանում էին **Ալ-Անդալուսիա:** 801 թ. Կարլոս Մեծն արաբներից խլեց Բարսելոնա քաղաքը, որտեղ հիմնադրեց **Իսպանական մարկան** (սահմանամերձ ամրացված մարզ):

Ռեկոնկիստան Պիրենեյան թերակղզու բնակիչների կողմից Իսպանիան արաբներից ազատագրելու շարժումն էր: Այն առավելապես իրականացնում էին Կաստիլիան, Արագոնը և Պորտուգալիան: Ռեկոնկիստայում մեծ էր նաև պապականության և եկեղեցու դերը: Պապականությունը հաճախ խաչակրաց արշավանքներ էր կազմակերպում դեպի Իսպանիա:

Ռեկոնկիստայի ընթացքում կազմավորվեցին քաղաքներ, որոնք ամենից առաջ պաշտպանական ամրոցներ էին: Դրանք միաժամանակ հենակետեր էին դեպի հարավ կազմակերպվող արշավանքների համար: Այդպիսի քաղաքների բնակիչները պետք է զինվորական ծառայություն կատարեին և մասնակցեին կազմակերպվող արշավանքներին: Սակայն Ռեկոնկիստայի հիմնական ռազմական ուժն ասպետությունն էր:

Իսպանացիներն առաջին խոշոր հաղթանակը տարան 1085 թ., երբ գրավեցին **Տոլեդոն՝** Արևմտագոթական թագավորության նախկին մայրաքաղաքը: Ռեկոնկիստայի հաջողություններն արաբներին



Կորդովայի մզկիթը արաբական մշակույթի ազդեցության ապացույցն է

ստիպում էին դիմելու Հյուսիսային Աֆրիկայում ապրող բերբերների օգնությանը:

Իսպանացիների միացյալ ուժերը 1212 թ. պարտության մատնեցին բերբերներին, ապա գրավեցին Կորդովան, Սևիլիան, Վալենսիան և դուրս եկան Ատլանտյան օվկիանոսի ափերը: Արաբների ձեռքին մնաց միայն հարավում գտնվող Գրանադայի էմիրությունը: Ռեկոնկիստան հիմնականում ավարտվեց XIII դ.:

Ռեկոնկիստային զուգահեռ Իսպանիայի երեք խոշոր թագավորություններում՝ Կաստիլիայում, Արագոնում և Պորտուգալիայում, ձևավորվում էին դասային միապետություններ: Թագավորական իշխանությունը սահմանափակված էր դասերի ներկայացուցիչների ժողովներով՝ **կորտեսներով:** Կորտեսներում դասերը նիստեր էին անում առանձին–առանձին: Պիրենեյան թերակղզու բոլոր երկրներում դասային ներկայացուցիչների ժողովներն ավելի շատ էին սահմանափակում թագավորի իշխանությունը, քան Եվրոպայի մյուս երկրների ժողովները: Արաբների դեմ մղվող երկարատև պայքարում թագավորները հենվում էին քաղաքների և

ավատատերերի վրա, ուստի ստիպված էին նրանց լայն արտոնություններ տալ: Թագավորական հատուկ հրովարտակով քաղաքներն ստանում էին քաղաքային խորհրդի անդամներ ընտրելու և քաղաքային դատարան ունենալու իրավունք: Ազատագրված տարածքների մի մասը թագավորը հանձնում էր եկեղեցուն և ազնվականներին:

Ռեկոնկիստայի ավարտին երեք թագավորություններում էլ ձեռնամուխ եղան կենտրոնացված պետությունների ստեղծմանը: Արագոնի և Կաստիլիայի թագավորները խոշոր հողատերերին զրկում էին դրամ հատելու, հարկեր հավաքելու և մասնավոր պատերազմներ վարելու իրավունքներից: Այս պայքարում թագավորին մեծ օգնություն ցույց տվեցին հատկապես քաղաքները: Խոշոր հողատերերի դեմ պայքարելու համար Կաստիլիայի քաղաքները միմյանց հետ դաշինք կնքեցին:

Թագավորական իշխանության ամրապնդման նպատակով Կաստիլիան և Արագոնը միավորվեցին: 1479 թ. Արագոնի թագավոր Ֆերդինանդի և Կաստիլիայի թագուհի Իզաբելլայի ամուսնությամբ նրանք միավորվեցին: Պիրենեյան թերակղզում մնաց երկու քրիստոնյա պետություն՝ *Իսպանիան* և *Պորտուգալիան*:

Ռեկոնկիստան իրականացվում էր որպես քրիստոնեության պայքար իսլամի դեմ: Այդ էր պատճառը, որ Իսպանիայում ապրող արաբների (մավրեր) և քրիստոնյա հերետիկոսների դեմ պայքարելու համար 1481 թ. այստեղ հիմնադրվեց հատուկ եկեղեցական դատարան՝ *ինկվիզիցիա*: Այն գլխավորում էր *Տորկվեմադան*: Հազարավոր մարդիկ դատապարտվեցին և խարույկի վրա այրվեցին: Ամրապնդելով իրենց դիրքերը երկրի ներսում՝ իսպանական թագավորները ձեռնամուխ եղան երկրի տարածքային ընդարձակմանը: Երկարատև պաշարումից հետո՝ **1492 թ.** նրանք գրավեցին Գրանադան: Ամբողջ Պիրենեյան թերակղզին, բացառությամբ Պորտուգալիայի, միավորվեց Իսպանիայի կազմում:

Ֆերդինանդի և Իզաբելլայի կառավարման ժամանակ Իսպանիայում սկսվեց բացարձակ միապետության ձևավորումը: Խոշոր ավատատերերը կորցրին իրենց իրավունքները և վերածվեցին պալատական պաշտոնյաների: Կորտեսները ևս դանդաղորեն կորցնում էին իրենց նշանակությունը և հազվադեպ էին հրավիրվում: Իսպանիան XVI դ. թևակոխեց որպես Ռեկոնկիստան ավարտած և ուժեղ թագավորական իշխանություն ունեցող պետություն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

- Որո՞նք էին գերմանական կայսրերի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Ինչպիսի՞ն էր Իտալիայի քաղաքական վիճակը XII դարում: Ներկայացրե՞ք Ֆրիդրիխ I Բարբարոսայի «իտալական» քաղաքականության արդյունքները: Ինչո՞վ ավարտվեց գերմանական կայսրերի՝ Իտալիան նվաճելու ծրագիրը: Յո՞ւյց տվեք գերմանական կայսրերի դերակատարությունը խաչակրաց շարժման մեջ:
- Ո՞րն էր Սրբազան հռոմեական կայսրության տրոհման գլխավոր պատճառը: Նրա կազմում ո՞ր պետություններն էին փաստացի անկախ կարգավիճակում:

3. Պարզաբանե՛ք Գերմանիայի քաղաքական մասնատվածության պատճառները: Ի՞նչ է «Ոսկե բուլլան», ո՞վ և ե՞րբ ընդունեց այն ու ի՞նչ նպատակով: Ի՞նչ տարբերություն կար ռայխստագի և գլխավոր շտատների միջև:

4. Արաքները ե՞րբ նվաճեցին Իսպանիան: Ի՞նչ է Ռեկոնկիստան, ե՞րբ այն սկսվեց ու որ-քա՞ն տևեց: Ո՞ր պետություններն էին գլխավորում արաքների դեմ ուղղված ազատագրական պայքարը: Ներկայացրե՛ք Իսպանիայի երեք խոշոր թագավորությունների պետական կառավարման համակարգը: Ի՞նչ նպատակով և ե՞րբ ստեղծվեց ինկվիզիցիան Իսպանիայում: Ո՞ւմ կառավարման շրջանում Իսպանիայում սկսեց ձևավորվել բացարձակ միապետությունը:

§ 5. ՊԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI–XV ԴԱՐԵՐՈՒՄ

Աստծո փոխանորդը երկրի վրա: XI դ. Արևմտյան Եվրոպայում կաթոլիկ եկեղեցին զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը: Այստեղ մեծ էր 1059 թ. Լաթերանի (Հռոմ) եկեղեցական ժողովի դերը, որը պապերի ընտրության նոր կարգ սահմանեց: Այսուհետև պապի ընտրությունը կատարում էր իրենց կոչումը պապից ստացած եկեղեցու բարձր աստիճանավորների՝ *կարդինալների* կողմից: Կայսրը դասվում էր «ժողովրդի» շարքին: Սրանով կայսրերը, որոնք առաջ իրենք էին նշանակում պապերին, հեռացվեցին ընտրություններին մասնակցելուց:

Պապականության դիրքերի ամրապնդման գործում մեծ դեր խաղաց Գրիգորիոս VII պապը (1073–1085): Նա և հաջորդները մշակեցին մի ծրագիր, ըստ որի՝ փորձում էին Արևմտյան Եվրոպայում ստեղծել միապետություն պապի գլխավորությամբ: Այդ պետությունը պետք է կազմված լիներ առանձին թագավորություններից: Սրանով պապերը փորձում էին հակադրվել գերմանական կայսրերի քրիստոնեական կայսրություն ստեղծելու ծրագրին:

Պապականության ծրագիրը շարադրված է «Պապի դիկտատը» փաստաթղթում: Այստեղ նշված է, որ պապականությունն ունի ոչ միայն բարձրագույն

հոգևոր, այլև աշխարհիկ իշխանություն: Բոլոր աշխարհիկ միապետները պարտավոր են ծառայել երկրի վրա Աստծո փոխանորդին՝ Հռոմի պապին: Նա Կոստանդիանոս Մեծ կայսրից ստացել էր Արևմուտքում աշխարհիկ իշխանության իրավասություն: Գրիգորիոս VII–ը ձեռնամուխ եղավ այս ծրագրի իրագործմանը: Նա պայքար սկսեց գերմանական կայսր Հենրիխ IV–ի դեմ: Նրան վասալային երդում տվեցին Հարավային Իտալիայի նորմանական դուքսերը: Նույնը կատարեց նաև Անգլիայի թագավոր Վիլհելմ Նվաճողը:

Իր ազդեցությունն ուժեղացնելու համար պապականությունն սկսեց օգտագործել Ռեկոնկիստան և խաչակրաց արշավանքները: Պապը հանդես եկավ որպես խաչակրաց արշավանքների կազմակերպիչ, որը բարձրացրեց նրա հեղինակությունը: Նա ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Ռեկոնկիստայի կազմակերպման հարցում՝ նրան տալով «քրիստոնեական աշխարհը մուսուլմաններից փրկելու» կրոնական պատերազմի բնույթ:

Իր դիրքերն ամրապնդելու համար պապականությունը նորից սկսեց հրավիրել տիեզերական ժողովներ, որոնք IX դ. հետո չէին հրավիրվել: Ի տարբերություն նախկինում հրավիրված տիեզերական



Ֆիլիպ IV

ժողովների՝ նոր ժամանակների ժողովներին մասնակցում էին միայն կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչները: Ժողովի որոշումները պարտադիր էին, և Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներից ժամանած հոգևորականները դրանք իրագործում էին իրենց երկրներում՝ նպաստելով պապականության դիրքերի ամրապնդմանը:

Պապականությունն աշխատում էր մշակել նաև միջազգային բնույթի իրավական նորմեր, որոնց կատարման հսկողությունը դրվում էր եկեղեցու վրա, քանի որ պապական արքունիքը ներկայանում էր որպես Արևմտյան Եվրոպայի բարձրագույն դատական ատյան: Այդ նորմերից էին «աստվածային զինադադարը», «աստվածային խաղաղությունը»:

Պապականության ազդեցության բարձրացման գործում զգալի դեր խաղաց եկեղեցու տնտեսական հզորությունը: Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներն ամեն տարի եկեղեցական հողատիրությունից և տասանորդից հսկայական գումարներ էին ուղարկում պապական զանձարան: Այս ամենի արդյունքում XIII դ. պապականությունը հասավ իր հզորու-

թյան գագաթնակետին: Այն կապված էր Ինոկենտիոս III պապի (1198–1216) գործունեության հետ: Պապը կարողացավ հասնել այն քանին, որ Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասը պապական կուրիան ճանաչեց որպես բարձրագույն դատական ատյան:

Պապի գլխավորությամբ Արևմտյան Եվրոպայում միապետություն ստեղծելու քաղաքականությունը շարունակեց Բոնիֆացիոս VIII պապը (1294–1303): Նրա կարծիքով՝ փրկության միակ պայմանը պապին հնազանդվելն էր: Նա գտնում էր, որ աշխարհիկ միապետների իրավունքները տրվում են պապի կողմից: Սակայն պապի գլխավորությամբ միապետություն ստեղծելու ծրագիրն անիրագործելի էր: Արևմտյան Եվրոպայի երկրների միջև տարբերություններն այնքան խորն էին, որ կրոնի միասնությունը բավարար չէր նման պետություն ստեղծելու համար:

«Ավինյոնի գերությունը» և պապականության անկումը: Պապականությունը, որը երկար ժամանակ հաջողությամբ պայքարում էր գերմանական կայսրերի դեմ, XIII դ. վերջին բախվեց նոր ուժի՝ կենտրոնացված ազգային պետության գաղափարին: Առաջինը Ֆրանսիան էր: Հակասություններ առաջացան Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV-ի և Բոնիֆացիոս VIII պապի միջև այն պատճառով, որ թագավորն առանց նրա համաձայնության եկեղեցուց հարկեր պահանջեց: Սրանով Ֆիլիպ IV-ը փորձում էր ցույց տալ, որ ֆրանսիական եկեղեցին համարվում է թագավորության անբաժան մաս, և ինքը պետք է որոշեր նրա կախվածությունը պապական աթոռից: Բոնիֆացիոս VIII պապը պատրաստվում էր Ֆիլիպ IV-ին հեռացնել եկեղեցուց, սակայն այդ ժամանակ նրա նստավայր թափանցեցին

Ֆրանսիական թագավորի գործակալները և նրան նվաստացումների ենթարկեցին: Չկարողանալով տանել վիրավորանքը՝ պապը մահացավ:

1303 թ. սկսվում է պապականության անկման դարաշրջանը: Նոր պապ ընտրված Ֆրանսիացի եպիսկոպոսը պապական նստավայրը տեղափոխեց Ֆրանսիայի հարավում գտնվող Ավինյոն քաղաք: Այսպես սկսվեց պապերի «Ավինյոնի գերությունը» (1309–1378):

Ձգտելով ամբողջովին թուլացնելու պապականության դիրքերը՝ Ֆիլիպ IV–ը դատական գործ սկսեց տաճարականների միաբանության դեմ և նրանց մեղադրեց հերետիկոսության մեջ: Ֆիլիպ IV–ը հասավ նրան, որ միաբանությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Պապականության անկումը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում ձևավորվում էին ազգային կենտրոնացված պետություններ: Պապականությունից անկախ՝ ուժեղ աշխարհիկ իշխանությամբ օժտված պետության գաղափարը XIV դ. հիմնավորեցին *Մ. Պաղոսացին, Ժ. Ժաղենը, Դանթեն:*

Պապականության անկմանը նպաստեց նաև «*մեծ հերձվածքը*»՝ եկեղեցու բաժանումը: **1378 թ.** Գրիգորիոս XI պապը պապական աթոռը տեղափոխեց Հռոմ: Նրա մահվանից հետո ընտրվեցին երկու պապ՝ մեկը՝ Ավինյոնում, մյուսը՝ Հռոմում: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր ապացուցել, որ ինքն է օրինական պապ: Կաթոլիկ եկեղեցին բաժանվեց երկու մասի: «*Մեծ հերձվածին*» վերջ տալու համար **1409 թ.** Պիզայում հրավիրվեց եկեղեցական ժողով, որտեղ երկու պապերն էլ գահընկեց արվեցին, և ընտրվեց նոր պապ: Սակայն գահընկեց արված պապերը չձա-

նաչեցին նոր պապին, և եկեղեցու բաժանումն ավելի խորացավ, քանի որ այժմ կար երեք պապ:

Ժողովական շարժումը: Կաթոլիկ եկեղեցու ներսում ստեղծված իրավիճակի արդյունքում ձևավորվեց *ժողովական շարժումը:* Նրա կողմնակիցների համոզմամբ՝ պապը չէր կարող լինել եկեղեցու ղեկավար: Այդպիսին կարող էր լինել միայն տիեզերական ժողովը: Այստեղից էլ՝ շարժման անունը: Ժողովականների ներկայացուցիչներն աշխատում էին բարեփոխումներ անցկացնել եկեղեցում և բարձրացնել նրա հեղինակությունը: Նրանց վերջապես հաջողվեց Կոնստանցում հրավիրել տիեզերական ժողով (1414–1418), որտեղ որոշում ընդունվեց, որ պապը պետք է ենթարկվի ժողովի որոշումներին, իսկ տիեզերական ժողովները պետք է հրավիրվեն կանոնավոր:

«Մեծ հերձվածքը» վերացվեց **1449 թ. Լոզանի ժողովում**, որտեղ ընտրվեց մեկ պապ: Ժողովական շարժումը պարտություն կրեց, քանի որ պապի միանձնյա իշխանությունը վերականգնվեց: Սակայն շարժման գաղափարներն Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում օգտագործվեցին պապականությունից անկախ եկեղեցիներ ստեղծելու համար: **1439 թ.** Ֆրանսիայի թագավոր Կարլոս VII–ն ընդունեց «Բուրժի արագմատիկ սանկցիան», ըստ որի՝ սահմանվում էր ֆրանսիական եկեղեցու անկախությունը: Ֆրանսիական եկեղեցին առաջնորդվելու էր ոչ թե պապի ընդունած որոշումներով, ինչպես առաջ, այլ տիեզերական ժողովի կանոններով: Բարձրաստիճան հոգևորականներին պաշտոնների նշանակում էր թագավորը: Այսպիսի որոշումներ սկսեցին ընդունել նաև Անգլիայում:

«Մեծ հերձվածից» հետո պապականությունն ստիպված էր հրաժարվել համընդհանրական իշխանության հավակնություններից, քանի որ չկարողացավ վերականգնել իր նախկին իշխանությունը Անգլիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի եկեղեցիների նկատմամբ:

Պապականության դիրքերի թուլացմանը Եվրոպայում զգալիորեն նպաստեցին նաև XII–XIII դդ. տարբեր երկրներում ծավալված հերետիկոսական

շարժումները: Հռոմի պապերից անկախ ազգային եկեղեցի ստեղծելու գաղափարներն Անգլիայում, Չեխիայում և այլուր ծանր հարված հասցրին պապականության հեղինակությանը:

Պապականության հրաժարվելը եկեղեցում բարեփոխումներ կատարելուց դժգոհություն էր առաջացնում և բարենպաստ պայմաններ ստեղծում Ռեֆորմացիայի գաղափարների տարածման համար:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և ո՞ր եկեղեցական ժողովը սահմանեց պապերի ընտրության նոր կարգը: Ովքեր մշակեցին պապական միապետություն ստեղծելու ծրագիրը: Դրանով ո՞ւմ էին հակադրվում պապերը: Ի՞նչ միջոցների էր դիմում պապականությունն իր ազդեցությունն ուժեղացնելու համար:
2. Ինչո՞վ էին տարբերվում մինչև IX դ. հրավիրված տիեզերական ժողովները դրանից հետո հրավիրվածներից: Երբ և ինչի՞ շնորհիվ պապականությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Ինչո՞ւ հնարավոր չէր Արևմտյան Եվրոպայում պապի գլխավորությամբ միապետության ստեղծումը:
3. Ազգային պետություններից ո՞րն առաջինը հակադրվեց պապականությանը: Ինչի՞ց սկսվեց այդ հակասությունը: Որքանի՞ տևեց «Ալիենյոնի գերությունը»: Ինչո՞վ էր պայմանավորված պապականության անկումը: Ո՞ր իրադարձությունն առավել խորացրեց պապականության թուլացումը:
4. Ինչո՞ւ գումարվեց Կոնստանցի տիեզերական ժողովը, ի՞նչ որոշում կայացրեց այն: Հաղթե՞ց արդյոք ժողովական շարժումը: Բացատրե՞ք՝ ինչու: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Ֆրանսիայի թագավոր Կարլոս VII–ն ընդունեց «Բուրժի պրագմատիկ սանկցիան»: Ի՞նչ էր այն սահմանում:

§ 6. ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XI–XV ԴԱՐԵՐՈՒՄ

Միջազգային հարաբերությունները XI–XIV դդ.: Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո ստեղծված բարբարոսական թագավորությունները կործանվում էին նույն արագությամբ, ինչ արագությամբ որ ստեղծվում էին: Նրանց միջև միջպետական կայուն հարաբերություններ չձևավորվեցին: Եվրոպան ապրում էր քաղաքական մասնատվածության

դարաշրջանում, երբ պետությունների հարաբերությունները սովորաբար կարգավորվում էին պատերազմի օգնությամբ:

XI դ. Արևմտյան Եվրոպայում սկսվեց քաղաքական մասնատվածության հաղթահարման և կենտրոնացված պետությունների կազմավորման գործընթացը: Մասնատվածության հաղթահարումը սովորաբար կատարվում էր երկու ճանա-

պարհով: Մի դեպքում աշխատում էին մեկ պետության մեջ միավորել նույն լեզվով խոսող և նույն մշակույթն ունեցող բնակչությանը: Մյուս դեպքում աշխատում էին ստեղծել կայսերական տիպի բազմազգ պետություններ: Սովորաբար այդպես էին վարվում գերմանական կայսրերը և Հռոմի պապերը: Պլանտագենետների կառավարման ժամանակ կայսերական պետություն ստեղծելու փորձեր արեցին նաև Անգլիայում: Պետությունների ձևավորումն ուղեկցվում էր բախումներով և պատերազմներով: Այսպես իր տարածքները միավորելու համար Ֆրանսիան բախվեց Անգլիայի հետ և ստիպված էր երկարատև պատերազմի մեջ մտնել նրա հետ: Իտալիան նվաճելու համար Ֆրիդրիխ I-ը պատերազմ սկսեց Հյուսիսային Իտալիայի քաղաքների դեմ:

Միջպետական հարաբերություններում որոշակի դեր սկսեց խաղալ նաև քաղաքական դաշինքների կնքումը: Ֆրիդրիխ I-ի դեմ պատերազմի ժամանակ Հյուսիսային Իտալիայի քաղաքները միմյանց հետ դաշինք կնքեցին և ստեղծեցին Լոմբարդական լիգան:

Միջպետական հարաբերություններում պակաս կարևոր դեր չէին խաղում դինաստիական ամուսնությունները: Ֆրիդրիխ I-ի որդի Հենրիխ VI-ը ամուսնացավ սիցիլիական գահի ժառանգորդուհու՝ Կոնստանցիայի հետ և դարձավ Սիցիլիայի թագավոր: Ֆրանսիական թագավոր Կարլոս VIII-ի և Աննա Բրետանացու ամուսնության հետևանքով Բրետանը միացվեց Ֆրանսիային, իսկ Ֆերդինանդի և Իզաբելլայի ամուսնությամբ միավորվեց Իսպանիան:

Եվրոպայում միջպետական հարաբերությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցան նաև

տնտեսական կապերը: Արտաքին առևտրի ընդլայնումը տարբեր երկրների միջև ստեղծում էր կայուն տնտեսական կապեր: Սակայն առևտրական մրցակցությունը հաճախ վերածվում էր պատերազմի:

XI-XIII դդ. Եվրոպայի տարբեր երկրների միջև հաստատվում էին ավելի ամուր և մշտական քաղաքական, տնտեսական և մշակութային կապեր: Դրանք թեև երբեմն խախտվում էին, սակայն արագ վերականգնվում էին: Այդ ժամանակ Եվրոպայում սկսում են ձևավորվել միջպետական հարաբերությունների որոշակի նորմեր, որոնց միջոցով փորձում էին կարգավորել երկրների միջև առկա հակասությունները:

XI-XIII դդ. առաջանում են միջազգային իրավունքի առանձին նորմեր, մասնավորապես՝ ծովային իրավունքի, պատերազմի իրավունքի: Քանի որ միջազգային իրավունքի համընդհանուր նորմեր չկային, ապա միջպետական հարաբերություններում առաջացած խնդիրների լուծումը վերապահվում էր պապական արքունիքին: Այդ պատճառով այս ժամանակաշրջանում պապականությունը դարձել էր Արևմտյան Եվրոպայի միջազգային հարաբերությունների կենտրոն:

XI-XIII դդ. ընդլայնվում և կանոնավորվում էին փոխհարաբերությունները Արևելքի և Արևմուտքի միջև, որոնց հատուկ էին ոչ միայն հակասությունները, այլև տնտեսական և մշակութային կապերը: Այդ ժամանակ զգալիորեն աճեց ապրանքափոխանակությունն Արևմտյան Եվրոպայի և Արևելքի երկրների միջև: Արևելքի երկրներին մոտիկից ծանոթանալու և առևտրական հարաբերություններ հաստատելու համար եվրոպացի ճանապարհորդները (Պլանո Կարպինի, Մարկո Պոլո) ուղևորվում էին Արևելք:



Կրեմլի ձակատանարտը

Եվրոպայի միջալեռական հարաբերությունների վրա մեծ ազդեցություն էին ունենում նաև Արևելքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները: Թյուրք-սելջուկների նվաճումները Փոքր Ասիայում դարձան խաչակրաց առաջին արշավանքի կազմակերպման պատճառներից մեկը: Մոնղոլ-թաթարական արշավանքները ստիպեցին պապականությանը քայլեր ձեռնարկել հակամոնղոլական դաշինք ստեղծելու համար:

Արևելք-Արևմուտք փոխհարաբերությունների վրա մեծ ազդեցություն թողեցին թուրքական նվաճումները: Արևմտյան Եվրոպայում սկսեցին հնչել խաչակրաց արշավանքներ կազմակերպելու կոչեր: Թուրքերի դեմ պայքարելու համար պապի նախաձեռնությամբ 1344 թ. ստեղծվեց Սրբազան լիգա, որի մեջ մտան Կիպրոսը, Վենետիկը, Ջենովան: 1396 թ. թուրքերի դեմ կազմակերպվեց խաչակրաց արշավանք, որին մասնակցում էին Գերմանիան, Ֆրանսիան, Հունգարիան և այլ երկրներ: Սակայն խաչակիրները ծանր պարտություն կրեցին: Թուրքական տիրապետության հաստատումը Բալկանյան

թերակղզում և Արևելամիջերկրածովյան ավազանում փոխեց միջազգային հարաբերությունների բնույթը:

Հարյուրամյա պատերազմը: XIV դ. 30-ական թվականներին Անգլիայի և Ֆրանսիայի միջև սկսվեց երկարատև պատերազմ, որը հայտնի է **Հարյուրամյա պատերազմ** (1337–1453) անունով: Դրա հիմնական պատճառը Ֆրանսիայի հարավ-արևմուտքի համար մղվող պայքարն էր: Այստեղ գտնվող՝ Գիեն մարզը (նախկին Աբվիտանիա դքսության արևմտյան մասը) տնտեսապես կապված էր Անգլիայի հետ: Գիենից Անգլիա էին արտահանում գինի, պողպատ, ներկեր, ներմուծում բուրդ: Այն շարունակում էր մնալ Անգլիայի կազմում, սակայն անգլիացիների իշխանությունն այստեղ ձևական էր: Ֆրանսիայի միավորման համար անհրաժեշտ էր գրավել Գիենը:

Անգլո-ֆրանսիական հակամարտությունը կապված էր նաև Ֆլանդրիայի հետ: Ֆրանսիան ձգտում էր գրավել Ֆլանդրիայի հարուստ քաղաքները:

Պատերազմն սկսվեց և շարունակվեց այն պատճառով, որ Անգլիայում իշխող Պլանտագեններները հավակնում էին Ֆրանսիայի գահին: 1328 թ. մահացավ Ֆիլիպ IV-ի վերջին որդին: Անգլիայի թագավոր Էդուարդ III-ը, որը մայրական գծով Ֆիլիպ IV-ի թոռն էր, որոշեց դառնալ Ֆրանսիայի թագավոր և միավորել երկու երկրները: Ֆրանսիայում, հիմք ընդունելով իրավական այն նորմը, որը բացառում էր թագավորական իշխանության անցումը իգական գծով ներկայացուցչին, գահը հանձնեցին Կապետինգների կողմնային ճյուղի ներկայացուցիչ Ֆիլիպ VI Վալուային: Այդ ժամանակ Էդուարդը որոշեց իր իրավունքներին հասնել զենքի ուժով: Հա-

կասությունները վերածվեցին եվրոպական մասշտաբի պատերազմի, որի մեջ դաշնակցային կապերով ներքաշվեցին Արևմտյան Եվրոպայի շատ երկրներ, ինչպես նաև պապականությունը: Շոտլանդիան և պապականությունը պաշտպանում էին Ֆրանսիային, իսկ Գերմանիան և Ֆլանդրիան՝ Անգլիային:

Պատերազմն սկսվեց 1337 թ.: Ավելի լավ նախապատրաստված անգլիացիները հաղթանակ տարան Ալեյսի ծովային ճակատամարտում (1340), իսկ 1346 թ.՝ ցամաքում՝ Կրեսիի մոտ: Սա նրանց հնարավորություն տվեց գրավելու Կալե նավահանգիստը: Անգլիացիները գրավեցին նաև Աբվիտանիան, և նրանց առաջնադասումը կանգնեցնելու ֆրանսիացիների փորձերն անհաջողությամբ ավարտվեցին: 1356 թ. Պուատիեի ճակատամարտում ֆրանսիացիները ծանր պարտություն կրեցին: Գերի ընկավ Հովհան Բարի թագավորը:

1360 թ. Անգլիայի և Ֆրանսիայի միջև գինադադար կնքվեց: Անգլիան հրաժարվեց ֆրանսիական գահի նկատմամբ ունեցած հավակնություններից, իսկ Ֆրանսիան Անգլիային զիջեց Կալե նավահանգիստը և Լուարա գետից հարավ ընկած հողերը: 1415 թ. անգլիացիները վերսկսեցին պատերազմը և Ագենկորի մոտ պարտության մատնեցին ֆրանսիացիներին ու պարտադրեցին ծանր պայմաններով հաշտության պայմանագիր կնքել: Ֆրանսիայի կառավարիչ էր դառնում Անգլիայի թագավոր Հենրիխ V-ը: Այնուհետև ֆրանսիական գահը պետք է անցներ անգլիական թագավորի (որն ամուսնացած էր ֆրանսիական արքայադստեր հետ)՝ Հենրիխ V-ի որդուն, որն այդ ժամանակ դեռևս մեկ տարեկան չկար: Արքայազն Կարլոսը փախավ Փա-



Ժաննա դ'Արկը Օռլեանի պաշարման ժամանակ

րիզից և իրեն հոչակեց թագավոր՝ Կարլոս VII (1422–1461) անունով:

Փորձելով վերջնականապես ծնկի բերել Ֆրանսիային՝ անգլիացիները ձեռնամուխ եղան լավ ամրացված Օռլեանի գրավմանը: Օռլեանի պարիսպների տակ որոշվում էր Ֆրանսիայի ճակատագիրը: Ֆրանսիայի համար այս ծանր պահին իրադարձությունների հետագա զարգացումը կտրուկ փոխվեց՝ կապված *Ժաննա դ'Արկի* անվան հետ:

Ֆրանսիայի ողբերգական վիճակը և մեծ սերը հայրենիքի նկատմամբ Ժաննայի մեջ արթնացրել էին այն հավատը, որ ինքը պետք է փրկի Ֆրանսիան: Ժաննան կարողացավ հանդիպել Կարլոս VII-ի հետ: Թագավորը նրան նշանակեց ասպետական ջոկատի հրամանատար: Ժամանելով Օռլեան՝ նա անցավ վճռական գործողությունների և սկսեց մեկը մյուսի հետևից գրավել անգլիական ամրությունները:

1429 թ. անգլիացիները վերացրին Օռլեանի պաշարումը: Այնուհետև Ժաննան թագավորի հետ ուղևորվեց Ռեյմս քաղաք, որտեղ ավանդաբար թագադրվում

էին ֆրանսիական թագավորները: Ռեյմսի տաճարում Կարլոս VII–ը թագադրվեց որպես Ֆրանսիայի թագավոր: Ժաննայի փառքն ու աճող հեղինակությունն անհանգստացնում էր թագավորի մերձավորներին, և վերջիններս ձգտում էին ազատվել նրանից: 1430 թ. Կոմայենի մոտ տեղի ունեցած ընդհարման ժամանակ բուրգունդացիները Ժաննային գերի վերցրին և վաճառեցին անգլիացիներին, որոնք էլ նրան մահապատժի ենթարկեցին որպես հերետիկոսուհու:

Սակայն դրանից հետո անգլիացիները մեկը մյուսի հետևից կորցրին նվաճված տարածքները, բացի Կալե նավահանգստից: 1453 թ. Անգլիան և Ֆրանսիան հաշտության պայմանագիր կնքեցին, և Հարյուրամյա պատերազմն ավարտվեց: Անգլիացիների ձեռքին մնաց միայն Կալե նավահանգիստը: Նրանք հրաժարվեցին ֆրանսիական գահի նկատմամբ ունեցած հավակնություններից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ փոփոխություններ տեղի ունեցան Արևմտյան Եվրոպայում XI դարում: Ներկայացրե՞ք Եվրոպայում մասնատվածության հաղթահարման ուղիները:
2. Ինչպե՞ս էին կարգավորվում միջպետական հարաբերությունները Եվրոպայում: Ձեր կարծիքով՝ ինչ դեր էր խաղում միջպետական հարաբերությունների ձևավորման գործում տնտեսական գործոնը:
3. Եվրոպայում երբ սկսեցին ձևավորվել միջազգային իրավունքի նորմեր: Ինչո՞վ էր դա պայմանավորված: Ո՞ր իրադարձություններն ազդեցին Արևելք–Արևմուտք փոխհարաբերությունների վրա: Ինչպե՞ս էին փորձում կարգավորել այդ հարաբերություններն Արևմուտքում:
4. Երբ է սկսվել Հարյուրամյա պատերազմը: Ո՞րն էր դրա պատճառը: Ինչը առիթ հանդիսացավ այդ պատերազմի համար: Ինչպե՞ս էին ծավալվում ռազմական գործողությունները պատերազմի սկզբում: Ո՞ւմ անվան հետ է կապված իրադարձությունների հետագա զարգացումը հոգուտ ֆրանսիացիների: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Կարլոս VII–ը ոչինչ չձեռնարկեց Ժաննային փրկելու համար: Ինչո՞վ ավարտվեց Հարյուրամյա պատերազմը:

§ 7. ԴԱՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կրթական համակարգը: XI դ. Արևմտյան Եվրոպայում սկսվում են կրթական համակարգի կատարելագործումը և վերելքը: Դպրոցները բաժանվում են երեք աստիճանի՝ ծխական (գյուղական), տաճարային (քաղաքի տաճարներին կից) և վանական: Այս բոլոր դպրոցները պատկանում էին եկեղեցուն, որը որոշում էր

նրանց կրթական ծրագրերը և դասավանդվող առարկաների ցանկը:

Քաղաքների առաջացման, քաղաքային բնակչության աճի, արհեստի և առևտրի զարգացման հետ կապված՝ առաջանում էին քաղաքային մասնավոր, համբարային և գիլդիական դպրոցներ: Դրանք եկեղեցու իրավասությունից դուրս էին, ուստի իրենք էին որոշում դա-

սավանդվող առարկաների ծրագրերը և ցանկերը:

XII–XIII դդ. Արևմտյան Եվրոպայում սկսվեց տնտեսական և մշակութային կյանքի վերելքը: Արևելքի, մասնավորապես արաբական և բյուզանդական մշակույթների հետ ծանոթությունը փոփոխություններ առաջացրեց նաև կրթության բնագավառում: Տաճարային դպրոցները վերածվում էին համաքաղաքային դպրոցների, ապա՝ համալսարանների:

Միջնադարյան հասարակությունը կորպորատիվ հասարակություն էր, այսինքն՝ հասարակության յուրաքանչյուր անդամ պատկանում էր որևէ կազմակերպության և ապրում էր դրա համար սահմանված նորմերով: Համալսարանը մտավոր աշխատանքով զբաղվող մարդկանց՝ դասախոսների, ուսանողների կորպորացիա էր:

XIII դ. համալսարաններ բացվեցին Բոլոնիայում, Փարիզում, Օքսֆորդում: Արդեն XIV դ. Եվրոպայում կար շուրջ 60 համալսարան: Համալսարանն ուներ իրավական, տնտեսական և վարչական ինքնավարություն, որը հատուկ հրովարտակով նրան էր շնորհում թագավորը կամ պապը:

Համալսարանը բաժանված էր ֆակուլտետների: «Կրտսեր» ֆակուլտետում, որտեղ սովորելը պարտադիր էր բոլոր ուսանողների համար, ուսումնասիրում էին «յոթ ազատ արվեստները»: Ապա գալիս էին «ավագ» ֆակուլտետները՝ իրավաբանական, բժշկական, աստվածաբանական:

Համալսարանների առաջացումն արագացրեց Արևմտյան Եվրոպայում աշխարհիկ մտավոր խավի ձևավորումը: Մինչ այդ մտավոր խավ համարվում էր միայն հոգևորականությունը:

Պատմական ափանդոյթը: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան ունի իր աշխարհընկալումը բնության, ժամանակի, տարածության, ինչպես նաև հասարակության մասին: Դասական միջնադարի մշակույթում կարևոր դեր էին խաղում նաև պատմության վերաբերյալ պատկերացումները: Պատմությունը դեռևս գիտություն չէր, ուստի տարբեր ժամերի պատմական աշխատությունները՝ ժամանակագրություններ, տարեգրություններ, թագավորների և սրբերի վարքեր գրելը, քանահավաքների սիրելի զբաղմունքն էին: Սա գալիս էր նրանից, որ քրիստոնեությունը մեծ տեղ էր տալիս պատմությանը և գտնում էր, որ Աստվածաշնչում տեղ գտած իրադարձությունները պատմական հիմքեր ունեն: Միջնադարի ժամանակագիրները և տարեգիրները, որոնք իրենց աշխատությունները սկսում էին արարչագործությունից և հասցնում մինչև իրենց ապրած ժամանակաշրջանը, փորձում էին հասարակության պատմության տարբեր դարաշրջաններ համադրել իրար հետ: Ընդունված էր համարել, որ հասարակության պատմությունը մեկ ամբողջություն է, որն ունի սկիզբ (արարչագործություն) և ավարտ (Ահեղ դատաստան): Այդ պատճառով նրանք փորձում էին անցյալը բերել իրենց ժամանակաշրջանի պատմության մեջ: Այսպես՝ Ալեքսանդր Մակեդոնացին ներկայացվում էր որպես միջնադարի ապետ, Դավիթ թագավորը ներկայանում էր Ֆրիդրիխ II-ի կերպարի մեջ, իսկ Արթուր թագավորը՝ որպես ավատատեր, որը միշտ շրջապատված էր իր վասալներով:

Մինչև XII դ. տարեգրությունները հիմնականում գրում էին եկեղեցականները և այնտեղ սովորաբար ներառում էին տեղական նշանակության դեպքեր և իրադարձություններ: XIII դ. ժամա-

նակագրություններ են սկսում շարադրել նաև աշխարհիկ մարդիկ, որոնց մի մասն իրենց աշխատությունները գրում էր ազգային լեզվով: Ի տարբերություն եկեղեցական հեղինակների, որոնք արձանագրում էին միայն իրադարձությունը՝ սրանք փորձում էին տալ նաև տեղի ունեցածի բացատրությունը:

Մեծ թվով ժամանակագրություններ հրատարակ եկան՝ կապված խաչակրաց արշավանքների հետ: Դրանց մեջ առավել աչքի է ընկնում խաչակրաց առաջին արշավանքին նվիրված ժամանակագրությունը, որի հեղինակն էր վանահայր Գ. Նոժանացին: «Կոստանդնուպոլսի գրավումը» աշխատության հեղինակը արշավանքի առաջնորդներից Ժ. Վիլլարդունեն էր, իսկ «Կոստանդնուպոլսի գրավումը» ժամանակագրության հեղինակը արշավանքի մասնակից Ռոբեր դը Կլարին էր:

XIII դ. սկսում են հրատարակ գալ միավորված ժամանակագրություններ, այսինքն՝ միևնույն իրադարձության վերաբերյալ տարբեր հեղինակների գրառումները հավաքում էին մի ժամանակագրության մեջ: Այսպես ստեղծվեց Ֆրանսիական մեծ ժամանակագրությունը, որն ընդգրկում էր Ֆրանսիայի պատմությունը մինչև XV դ. և Սենտ Օլբանի ժամանակագրությունը Անգլիայում:

XIII դ. երկրորդ կեսից հրատարակ է գալիս պատմության շարադրման նոր ժանր՝ պատմական հուշագրությունը: Դրանց մեջ առավել կարևոր է Լյուդովիկոս XI-ի խորհրդական Ֆիլիպ դը Կոմմենի «Հուշագրությունը»:

Սքոլաստիկա: XI–XIII դդ. տաճարային դպրոցներում և համալսարաններում ձևավորվում է սքոլաստիկան: Այդ անունն առաջացել է հունարեն սքոլև՝

«դպրոց» բառից: Սքոլաստիկան կրոնական փիլիսոփայություն էր, որը դասավանդում էին համալսարանում:

Վաղ միջնադարի մտածողները գտնում էին, որ հավատը և բանականությունն անհամատեղելի են, ուստի Աստծո գոյությունն անհնարին է բանականությամբ հասկանալ, պետք է հավատալ նրա գոյությանը:

XI–XII դդ. աճում է հետաքրքրությունը անտիկ գիտությունների նկատմամբ: Գիտնականներին արդեն չէին բավարարում միայն Սուրբ Գրքից բերված փաստարկները: Նրանք փորձում են փիլիսոփայության օգնությամբ հասկանալ, թե ով է Աստված, ինչու է ստեղծել աշխարհը և մարդուն: Այս հարցերը նրանք աշխատում էին բացատրել ոչ միայն հավատի, այլև բանականության միջոցով:

XII դ. հայտնի սքոլաստ փիլիսոփան **Պետրոս Աբելյարն** էր: Նա գտնում էր, որ հավատի հետ կապված խնդիրները հասկանալու համար անհրաժեշտ է դիմել նաև բանականությանը: Հարկավոր է հասկանալ, որպեսզի հավատալ: Նրա հակառակորդները գտնում էին, որ անհրաժեշտ է հավատալ, այլ ոչ թե քննարկել, քանի որ բանականությունն անգոր է իմանալու աստվածային գաղտնիքները: Աբելյարը գտնում էր, որ աշխարհիկ գիտություններն օգտակար են ճշգրիտ գիտելիքներ ձեռք բերելու համար: Նրա հակառակորդ Բերնար Կլերվոսցու կարծիքով՝ Քրիստոսի նկատմամբ հավատը և սերը, այլ ոչ թե գիտելիքը կարող են մարդուն օգնել ձիշտ ապրելու համար: Աբելյարի և Բերնարի երկխոսությունը վկայում էր սքոլաստիկայում ձևավորված երկու ուղղությունների՝ **նացիոնալիզմի և միստիցիզմի** մասին: Առաջին ուղղության կողմնակիցները գտնում էին, որ մտածողությունն առաջին

հերթին պետք է հենվի բանականության վրա, իսկ միստիկները պնդում էին, որ մտածողությունը պիտի բխի հավատից:

Աբելյարի գաղափարները եկեղեցու համար վտանգավոր էին, ուստի նրա հայացքները դատապարտվեցին, իսկ ինքը կյանքն ավարտեց վանքում: Աբելյարի գաղափարները լայն տարածում գտան, այդ պատճառով եկեղեցին որոշեց դրանց մի մասը ներառել աստվածաբանության մեջ: Այս խնդիրը լուծեց XIII դ. ականավոր սբոլաստ **Թովմա Արվինացին** իր «Աստվածաբանության հանրագումար» աշխատության մեջ: Այստեղ նա հավաքել էր միջնադարում կուտակված բոլոր գիտելիքներն աշխարհի, Աստծո և մարդու մասին: Նա չմերժեց բանականության ճանապարհով ձեռք բերված գիտելիքների ճշմարտությունը, սակայն գտնում էր, որ դրանք երկրորդական գիտելիքներ են և պետք է ծառայեն հավատին: Այսպես նա փորձում էր հավատի և բանականության միջև ներդաշնակություն հաստատել:

Ճշմարիտ գիտելիքի ձեռքբերման այլ ճանապարհ առաջարկեց Արվինացու ժամանակակից, անգլիացի պրոֆեսոր **Ռոջեր Բեկոնը**, որը դասավանդում էր Փարիզի և Օքսֆորդի համալսարաններում: Նրա կարծիքով՝ ճշմարտությունը գտնելու համար հավատը և բանականությունը բավարար չեն, անհրաժեշտ է դրան հասնել նաև փորձի միջոցով: Իր ամբողջ գիտական կյանքը նա անցկացրեց քիմիական նյութեր ուսումնասիրելով և ֆիզիկայի բնագավառում փորձեր կատարելով: Նա Եվրոպայում առաջինը կազմեց վառողի քաղադրագիրը, բացատրեց ծիածանը որպես անձրևի կաթիլներում արևի ճառագայթների բեկման երևույթ: Բեկոնի աշխատությունները բանադրվեցին, իսկ

ինքը տասնչորս տարի անցկացրեց բանտում:

Նոր ուղղություն մշակույթում: Քաղաքների և քաղաքային բնակչության առաջացմանը զուգահեռ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում սկսեց ձևավորվել քաղաքային մշակույթը: Քաղաքներում բացվում էին աշխարհիկ դպրոցներ, որոնք խախտում էին եկեղեցու դարավոր մենաշնորհը կրթության կազմակերպման բնագավառում: Ձևավորված աշխարհիկ մտավոր խավը ձգտում էր մշակույթը դուրս բերելու եկեղեցու վերահսկողությունից: Նրանք աշխատում էին ստեղծել կրթական նոր համակարգ, որը հիմնված լիներ աշխարհիկ գիտությունների, այլ ոչ թե աստվածաբանության վրա: Նոր ուղղության խնդիրն էր ձևավորել բազմակողմանի զարգացած մարդ, որն ունակ էր հաճույք ստանալու բնությունից, արվեստից և մարդկային փոփոխարարություններից: Նրան պետք է խորթ լիներ եկեղեցու քարոզած ճգնակեցությունը, որը պահանջում էր հրաժարվել երկրային կյանքի հաճույքներից հանուն անորշիրիմյան կյանքի:

Մշակույթում նոր ուղղության ականավոր ներկայացուցիչներից մեկը Ֆլորենցիայի բանաստեղծ և քաղաքական գործիչ **Դանթե Ալիգիերին** (1265–1321) էր: Նա միջնադարի վերջին և միաժամանակ նոր դարաշրջանի առաջին բանաստեղծն էր: Դանթեի ստեղծագործությունների թագն ու պսակը «Աստվածային կատակերգություն» պոեմն է: Նրանում տեղ են գտել բնությունը, հասարակությունը և մարդը: Դանթեն նկարագրում է անորշիրիմյան կյանքը. դժոխքը՝ մեղավորների համար, դրախտը՝ անմեղների, քավարանը՝ նրանց, ում համար Աստված դեռևս վճիռ չէր կայացրել: Չնայած պոեմի թե-

ման կրոնական բովանդակություն ունի, սակայն Դանթեն ներկայացնում է մարդկային հրապուրանքները, վշտերը, տանջանքները, գղջումը:

Մշակույթում նոր ուղղության ներկայացուցիչներից էր նաև անգլիացի գրող **Ջ. Չոսերը** (1340–1400): Անգլերենով գրված նրա «Քենթրբերիական պատմ-

վածքները» նովելների ժողովածուն աչքի է ընկնում իրականության ճշմարտացի պատկերներով: Նա ծաղրում է հոգևորականների ազահությունը և տգիտությունը, ազնվականների սնապարծությունը և փառամոլությունը:

Նոր ուղղությունը հիմք դարձավ Վերածննդի մշակույթի համար:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կրթության ինչ համակարգ էր գործում Եվրոպայում՝ սկսած XI դարից: Բացի եկեղեցուն պատկանող դպրոցներից, էլ ինչ դպրոցներ էին գործում Եվրոպայում:
2. Ինչը նպաստեց XII–XIII դարերում Եվրոպայի տնտեսական և մշակութային կյանքի վերելքին: Նշե՞ք միջնադարյան Եվրոպայի նշանավոր համալսարանները: Ներկայացրե՞ք դրանց կառուցվածքը:
3. Ո՞ր գիտությունն էր առավել կարևորվում դասական միջնադարում՝ չնայած այն քանին, որ դեռ չէր ձևավորվել որպես գիտություն: Պատմական բնույթի աշխատություններից ո՞ր տիպն էր տարածված՝ սկսած XII դարից: Նշե՞ք դրանցից առավել աչքի ընկնողները:
4. Ինչ է սքոլաստիկան, երբ է այն սկսել ձևավորվել: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ XI–XII դարերում աճեց հետաքրքրությունը անտիկ գիտությունների նկատմամբ: Ինչ ուղղություններ ձևավորվեցին սքոլաստիկայում: Ովքե՞ր էին դրանց հիմնադիրները, և ինչ էին պնդում նրանք:
5. Ո՞րն էր մշակույթի նոր ուղղության խնդիրը: Նշե՞ք այդ ուղղության ականավոր ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունները:

§ 8. ՎԱՂ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Վաղ Վերածննդի մշակույթի առաջացման նախադրյալները: Վերածննդի մշակույթը Եվրոպայում ընդգրկում է 1340–ական թվականներից մինչև XVII դ. սկիզբը: Ամենից առաջ այն ձևավորվել է Իտալիայում: Դրա առաջին փուլը կոչվել է **Վաղ Վերածնունդ** (XIV–XV դդ.):

Նոր մշակույթի առաջացումը կապված էր քաղաքների և ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետ: Հյուսիսային և Միջին Իտալիայում ավելի վաղ, քան Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում, առաջացան քաղաք-

ներ, որոնք դարձան արհեստի, առևտրի և մշակույթի կենտրոններ: Քաղաքների հարուստ առևտրականների և արհեստավորների խավն իր հարստության մի մասը ծախսում էր շքեղ պալատներ, շենքեր կառուցելու, երեխաներին կրթության տալու համար: Անհրաժեշտ էին ճարտարապետներ, ինժեներներ, նկարիչներ, ուսուցիչներ: Իտալական քաղաք-պետությունները հմուտ դիվանագետների կարիք ունեին: Նրանք պետք է կարողանային պաշտպանել պետության շահերը և հաջողությամբ լուծել արտաքին քաղաքակա-

նության հետ կապված խնդիրները: Նոր ձևավորվող առևտրաարհեստավորական խավը գործարար մարդկանց կարիք ուներ, որոնք պետք է վարեին նրա տնտեսական գործերը:

Վերածննդի մշակույթի գործիչներն իրենց կարևոր խնդիրն էին համարում մոռացված անտիկ մշակույթի վերականգնումը: Այստեղից էլ առաջացել է *վերածնունդ* հասկացությունը: Նոր մշակույթի ներկայացուցիչները խոնարհվում էին անտիկ մշակույթի առջև և այն համարում մշակույթի «ոսկեդար», երբ ծաղկում էին գիտությունը և արվեստը: Նրանց կարծիքով՝ հետո եկան բարբարոսները և իրենց հետ բերեցին տգիտություն: Ժամանակն էր վերականգնելու մոռացության տրված անտիկ մշակույթը և այն միավորելու քրիստոնեական մշակույթի հետ:

Վերածննդի գործիչներն ուսումնասիրում էին լատիներենը և հունարենը, հավաքում էին անտիկ մշակույթի նմուշներ և դրանք օրինակ դարձնում իրենց ստեղծագործությունների համար: Սակայն Վերածննդի մշակույթն ուներ միջնադարյան արմատներ՝ քաղաքային, ասպետական և ժողովրդական մշակույթի աշխարհիկ ավանդույթները:

Նոր մշակույթի ծրագիրը: Մինչև Վերածննդի մշակույթի երևան գալը միջնադարի մտածողները հիմնականում գրում էին Աստծո մասին, ուստի իրենց խնդիրն էին համարում Աստծո գործունեության պարզաբանումը և ճանաչումը: Վերածննդի գործիչներն ուսումնասիրում էին ոչ միայն Սուրբ Գիրքը, այլև անտիկ հեղինակներին, որոնց ուշադրության կենտրոնում հիմնականում մարդն էր: Այդ ազդեցության տակ Վերածննդի գիտնականները սկսեցին հետաքրքրություն դրսևորել մարդու և նրա երկրային

կյանքի նկատմամբ: Իրենց հիմնական նպատակը նրանք համարում էին մարդուն ճանաչելը: Այստեղից էլ՝ այդ մշակույթի մյուս անվանումը՝ *հումանիզմ*: Առաջին հումանիստը համարվում է իտալացի բանաստեղծ *Ֆրանչեսկո Պետրարկան* (1304–1374): Նա քննադատում էր սքոլաստիկան, քանի որ, նրա կարծիքով, այնտեղ բավարար ուշադրություն չէին դարձնում մարդուն: Դրան հակառակ՝ նա բարձր էր գնահատում բանասիրությունը, ճարտասանությունը և պոեզիան, քանզի նրանց ուշադրության կենտրոնում մարդն է: Պետրարկան առաջինն էր, ում պոեզիան ամբողջովին նվիրված էր մարդուն:

Պետրարկայի գաղափարները շարունակեցին *Ջովաննի Բոկասչոն* և *Կոլյուչո Սպյուսատին*: Բոկասչոյի (1313–1375) ստեղծագործություններից առավել ուշագրավը «Դեկամերոնն» է: Դրանում տեղ գտած նովելները հետաքրքրաշարժ փոքրիկ պատմվածքներ են, որոնց թեմաները վերցված են կյանքից: Նրա կարծիքով՝ մարդկային արժանապատվությունը պայմանավորված է ոչ թե ծնունդով, այլ բարոյական կատարելությամբ և փառավոր գործերով:

Սպյուսատին (1331–1406) մշակեց հումանիստար առարկաների նոր համակարգ, որը ներառում էր բանասիրություն, ճարտասանություն, պոետիկա, պատմություն, մանկավարժություն, բարոյագիտություն: Նրա կարծիքով՝ այս առարկաները կարևոր դեր են խաղում բարձր բարոյականության և բազմակողմանի գիտելիքներ ունեցող նոր մարդու ձևավորման համար: Նա հիմնավորեց այս առարկաներից յուրաքանչյուրի, մասնավորապես պատմության նշանակությունը դաստիարակության գործում:



Ջոտտո. «Մեզերի երկրպագումը մանուկ Քրիստոսին», Ֆլորենցիա, 1305 թ.

XV դ. հումանիզմը վերածվեց մշակութային շարժման, քանի որ հումանիստներն իրենց գաղափարները տարածում էին հասարակության տարբեր խավերում: Համալսարանները հրավիրում էին հումանիստներին՝ դասախոսություններ կարդալու: Քանի որ հումանիստների հետաքրքրությունների կենտրոնում մարդն էր, ապա նրանք ուշադրություն էին դարձնում ոչ միայն մարդու կրթության, այլև հասարակական կյանքի վրա: Այսպես՝ հումանիստ *Լեոնարդո Բրունին* մշակեց մարդու քաղաքացիական իրավունքների, մասնավորապես՝ ընտրելու և ընտրվելու, օրենքի առջև բոլորի հավասարության, արդարության՝ իբրև քաղաքական նորմի համակարգը:

Վաղ Վերածննդի արվեստը: Վաղ Վերածննդի մշակույթում ծաղկում ապրեց նաև արվեստը՝ նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը: Հարուստ քաղաքացիների համար կառուցում էին նրբաճաշակ, հարմարավետ պալատներ ու դղյակներ: Ճարտարապետները նկեղեցական շինությունները



Բոտիչելլի. «Գարուն» (դրվագ), 1485–1487 թթ.

նախագծում և կառուցում էին աշխարհիկ ոճով: Դրանք արդեն նման չէին ռոմանական կամ գոթական ոճով կառուցված եկեղեցիներին, այլ շքեղ պալատներ էին հանդիսավոր արարողություններ կատարելու համար: Իտալիայի ճարտարապետները նախագծում և կառուցում էին նոր տիպի շենքեր՝ քաղաքային պալատներ (պալացցո) և ամառանոցներ (վիլլա):

Վաղ Վերածննդի նշանավոր ճարտարապետը *Ֆիլիպո Բրունելեսկին* էր (1377–1446): Նա ճշգրիտ մաթեմատիկական և երկրաչափական հաշվարկների հիման վրա լուծեց Ֆլորենցիայի Մայր տաճարի գմբեթի կառուցման շինարարության հետ կապված բարդ խնդիրները, անտիկ ճարտարապետության ոճը համադրեց ռոմանական և գոթական ճարտարապետության հետ և ստեղծեց նոր ոճ: Նրա նախագծերով կառուցվել են ոչ միայն պալատներ, տաճարներ, այլև պաշտպանական ամրություններ: Նա ղեկավարել է Պո գետի վրա կառուցվող ամբարտակի շինարարությունը: Վերածննդի ճարտարապետությունը պահանջում

էր մաթեմատիկական, երկրաչափական խոր գիտելիքներ, ուստի այդ գիտություններն սկսեցին արագորեն զարգանալ:

Վերածննդի գեղանկարչության հիմնադիրը *Ջոտտոն* է (1266–1337): Իր նկարներում նա վառ գույներով պատկերում է մարդկանց՝ իրենց ուրախություններով ու վշտերով: Նրա նկարներում պարզ երևում են մարդկանց դիմագծերը, կեցվածքը և դեմքի արտահայտությունը: Նկարչության բնագավառում Ջոտտոյի շարունակողը եղավ *Թոմասո Մազաչչոն* (1401–1428): Իր նախորդի պես նա ևս հիմնականում նկարում էր կրոնական թեմաներով, քայց Սուրբ Գրքից վերցված կերպարներին տեղափոխում էր իր ժամանակի իտալական քաղաքների փողոցները և հրապարակները:

Վաղ Վերածննդի նկարչության ամենակարևոր ձեռքբերումը հեռանկարի կանոնի հայտնագործումն էր, որն իսկական հեղաշրջում առաջացրեց նկարչության բնագավառում: Սա հնարավորություն տվեց կտավի վրա ճիշտ և համամասնորեն ներկայացնելու եռաչափ տարածությունը:

Վաղ Վերածննդի ամենամեծ նկարիչը *Սանդրո Բոտիչելլին* էր (1445–1510): Նրա հայտնի նկարներից են «Գարունը» և «Վեներայի ծնունդը»: Նկարների թեման վերցված է անտիկ առասպելաբանությունից, սակայն կերպարներն օժտված են իրական, մարդկային դիմագծերով և դիտողին գերում են իրենց նրբությամբ ու քնքշությամբ:

Վաղ Վերածննդի ամենանշանավոր քանդակագործն էր *Դոնաթելլոն* (1386–1466): Նրան են պատկանում դիմանկարային բնույթի մի շարք քանդակներ: Դիմանկարային քանդակի երևան գալու շնորհիվ քանդակագործությունն առանձնացավ ճարտարապետությունից: Այժմ քանդակները տեղադրում էին ոչ միայն տաճարների և պալատների պատերին ու տանիքներին, այլև հրապարակներում: Դոնաթելլոյի աշխատանքներից առանձնապես աչքի են ընկնում Դավթի և Մարիա Մագթաղինացու արձանները:

Քաղաքական մասնատվածության մեջ գտնվող Իտալիային Վաղ Վերածննդի մշակույթը չօգնեց վերամիավորվելու, սակայն զգալի դեր խաղաց ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Տոսկանայի բարբառի հիման վրա առաջացավ իտալերեն գրական լեզուն, երևան եկան մշակույթի որոշ նմանություններ երկրի տարբեր մարզերում: Քաղաքականապես մասնատված, ներքին ընդհարումներից և օտարերկրյա ներխուժումներից ծվատված Իտալիայում Վաղ Վերածննդի մշակույթի հիման վրա սկսեց զարգանալ ազգային միասնության գիտակցությունը: Այն իր շուրջը համախմբեց շատ հումանիստների, որոնք Իտալիայի փրկությունը տեսնում էին միավորման մեջ: Սակայն այդ ժամանակ չկային երկիրը միավորող ուժեր, ուստի Իտալիան դեռ երկար ժամանակ մնաց մասնատված:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկում Վերածննդի մշակույթը Եվրոպայում: Որտեղ է այն ձևավորվել: Ինչի՞ հետ է կապված Վերածննդի մշակույթի առաջացումը: Ինչո՞ւ մշակույթի ծաղկման այդ դարաշրջանը կոչվեց Վերածնունդ:

2. Վերածննդի շրջանի հեղինակները ո՞րն էին համարում իրենց նպատակը: Ո՞վ էր առաջին հումանիստը: Ի՞նչ էին կարևորում հումանիստները: Նշե՛ք մի քանի հումանիստների և նրանց ստեղծագործությունները:
3. Ի՞նչ ազդեցություն ունեցավ Վերածնունդը Ճարտարապետության զարգացման վրա: Ճարտարապետության հետ կապված ո՞ր գիտություններն սկսեցին արագորեն զարգանալ:
4. Ո՞վ է Վերածննդի գեղանկարչության հիմնադիրը: Ո՞րն է Վաղ Վերածննդի նկարչության ամենակարևոր ձեռքբերումը: Նշե՛ք Վաղ Վերածննդի ամենանշանավոր գործիչներին և նրանց ստեղծագործությունները: Ո՞ր բարբառի հիման վրա առաջացավ իտալական գրական լեզուն:

Տ 9. ԲՅՈՒՀԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Չորրորդ խաչակրաց արշավանքը և Բյուզանդիան: Բյուզանդական կայսրության վերելքի վերջին շրջանը կապված էր Կոմնինոսների կառավարման հետ (1081–1185): Նրանք կարողացան վերադարձնել Բյուզանդիայից խլված տարածքների մեծ մասը և վերականգնել կայսրության նախկին հզորությունը: Սակայն սա տևեց մոտ մեկ դար: Կայսրության դրությունը նորից սկսեց վատանալ: Հունգարները գրավեցին Դալմաթիան: Իրենց անկախությունը վերականգնեցին սերբերը և բուլղարները: Խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ Անգլիայի թագավոր Ռիչարդը գրավեց Կիպրոս կղզին, որտեղ առաջացավ խաչակրաց ինքնուրույն պետություն՝ Կիպրոսի թագավորությունը:

Ներքին պայքարից թուլացած Բյուզանդիան դարձավ խաչակրաց չորրորդ արշավանքի զոհ: 1204 թ. գրավելով Կոստանդնուպոլիսը՝ խաչակիրներն ստեղծեցին իրենց պետությունը՝ Լատինական կայսրությունը (1204–1261): Այն կոչվում էր լատինական, որովհետև այստեղ հաստատված կաթոլիկ եկեղեցում ժամերգությունը կատարվում էր միայն լատիներեն: Սակայն խաչակիրներին չհաջողվեց գրավել Բյուզանդական կայսրության ողջ տարածքը: Նրանց կողմից չգրավված տա-

րածքների վրա առաջացան հունական պետություններ. Փոքր Ասիայի հյուսիսարևմուտքում՝ Նիկեայի կայսրությունը, Սև ծովի հարավային ափին՝ Տրապիզոնի կայսրությունը, իսկ Բալկանյան թերակղզու հարավարևմուտքում՝ Էպիրոսը: Սրանցից յուրաքանչյուրն իրեն հռչակեց Բյուզանդական կայսրության իրավահաջորդ և պայքար սկսեց նրա վերականգնման համար: Լատինական կայսրության կայսր ընտրվեց Բալդուին Ֆլանդրիացին, իսկ կաթոլիկ պատրիարք դարձավ Թոմազո Մորոզինին: Բյուզանդական եկեղեցին պետք է ընդուներ հռոմեակաթոլիկական եկեղեցու գերիշխանությունը:

Լատինական կայսրությունը քաղկացած էր մի շարք իշխանություններից, որոնք միայն անվանապես էին ընդունում կայսեր իշխանությունը: Բյուզանդացիները չհամակերպվեցին այս իրավիճակի հետ և սկսեցին պայքարել անկախության վերականգնման համար: 1261 թ. նիկեական կայսր Միքայել VIII Պալեոլոգոսին հաջողվեց գրավել Կոստանդնուպոլիսը և վերականգնել Բյուզանդական կայսրությունը: Սակայն նրա կազմի մեջ չմտան Տրապիզոնի կայսրությունն ու Էպիրոսը: Ծանր էր նաև Բյուզանդիայի արտաքին

քաղաքական իրավիճակը: Վենետիկը և Միցիլիան հակաբյուզանդական դաշինք կնքեցին: Բալկանյան թերակղզու հյուսիսում Բյուզանդիան անընդհատ բախվում էր սերբերի և բուլղարների հետ:

Թուրքական նվաճումները Բալկաններում: XIV դ. վերջին և XV դ. սկզբին Բյուզանդիան սկսեց անկում ապրել: Ժողովրդական ապստամբությունները, գահակալական կոիվները թուլացրին կենտրոնական իշխանությունը և բանակը, ուստի կայսրությունը չկարողացավ դիմագրավել թուրք-օսմաններին, որոնք դարձել էին նրա ամենավտանգավոր թշնամիները: 1331 թ. թուրքերը գրավեցին Նիկեա քաղաքը և ավարտեցին կայսրության փոքրասիական տարածքների նվաճումը: 1352 թ. թուրքերն անցան Դարդանեղը և հաստատվեցին նեղուցի եվրոպական ափին: Ճանապարհը դեպի Բալկանյան թերակղզու խորքերը բաց էր: Սերբիայի թագավոր Ստեփան Դուչանը հասկացավ թուրքական վտանգի էությունը և բանակցություններ սկսեց Հռոմի պապի հետ: Նա նույնիսկ համաձայնվեց, որ սերբական եկեղեցին միավորվի կաթոլիկ եկեղեցու հետ, եթե պապը խաչակրաց արշավանք կազմակերպի թուրքերի դեմ: Սակայն բանակցություններն ավարտվեցին անարդյունք:

Շուտով թուրքերը գրավեցին Ադրիանուպոլիսը և այն դարձրին իրենց պետության մայրաքաղաքը: Թուլացած ու տրոհված Սերբիան և Բուլղարիան չկարողացան կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: **1389 թ. Կոսովոյի դաշտում** տեղի ունեցած ճակատամարտում սերբերը ծանր պարտություն կրեցին: Այս հաղթանակի շնորհիվ թուրքերը գրավեցին Բալկանյան թերակղզու արևելյան և հարավարևմտյան մասերը: Շուտով թուրքե-

րը նվաճեցին նաև Բուլղարական թագավորությունը:

Թուրքական նվաճումների արդյունքում Բյուզանդիան կորցրեց իր տարածքների մեծ մասը: Նա ստիպված էր ձանաչել իր վասալական կախվածությունը թուրքերից, ամեն տարի նրանց հարկ վճարել և արշավանքների ժամանակ սուլթանին զորք տրամադրել:

1396 թ. թուրքերի դեմ կազմակերպված խաչակրաց արշավանքն ավարտվեց խաչակիրների ծանր պարտությամբ: Բյուզանդական կայսրը օգնության համար մեկնեց Արևմտյան Եվրոպա: Նրան ջերմ ընդունելություն ցույց տվին Միլանում, Հռոմում, Փարիզում, Լոնդոնում, սակայն իրական օգնություն չստացվեց: Օգտվելով սրանից՝ թուրքերը որոշեցին գրավել Կոստանդնուպոլիսը: Բյուզանդիայի կործանումը կես դարով հետաձգվեց այն պատճառով, որ 1402 թ. Անկարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը ծանր պարտություն կրեցին Լենկ Թեմուրի զորքերից:

Գաղափարաքաղաքական սրայաբար Բյուզանդիայում: Կայսրության համար ստեղծված ծանր պայմաններում էլ բյուզանդական կառավարող վերնախավը չկարողացավ միավորել ուժերն ընդդեմ թուրքական վտանգի: Բյուզանդական հասարակության մեջ ձևավորվեցին երեք տարաբնույթ հոսանքներ՝ լատինական, ուղղափառ, թուրքամետ: Լատինասերները, որոնք արտահայտում էին Արևմտյան Եվրոպայի հետ տնտեսական ու քաղաքական կապեր ունեցող կառավարող վերնախավի շահերը, գտնում էին, որ կայսրությունը կարելի է պահպանել Արևմուտքից օգնություն ստանալու միջոցով: Օգնության դիմաց բյուզանդական եկեղեցին պետք է միավորվեր կաթոլիկ

եկեղեցու հետ: Եկեղեցիների միավորման առաջին փորձը կատարվել էր դեռևս 1274 թ. Լիոնի եկեղեցական ժողովում, սակայն անհաջողությամբ էր ավարտվել: Բյուզանդական և հռոմեակաթուղիկական եկեղեցիների միավորման հաջորդ փորձը կատարվեց 1439 թ. Ֆերրարա–Ֆլորենցիայի ժողովում: Բյուզանդական կողմից համաձայնագրի ստորագրմանը մասնակցեցին կայսրը և Կոստանդնուպոլսի պատրիարքը: Համաձայնագրի ստորագրումից հետո թուրքերի դեմ կազմակերպվեց նոր խաչակրաց արշավանք: Սակայն **1444 թ.** թուրքերը **Վստնայի** մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին խաչակիրներին: Երկու եկեղեցիների միավորումը Բյուզանդիայում այդպես էլ չընդունեցին:

Ուղղափառ հոսանքը, որն ամենաազդեցիկն էր քյուզանդական հասարակության մեջ, չունր որոշակի քաղաքական ծրագիր և չկարողացավ կազմակերպել ու ղեկավարել հայրենասիրական շարժումը:

Թուրքամետ հոսանքը փորձում էր կայսրությունը պահպանել թուրքերին զիջումներ անելու ճանապարհով:

Բյուզանդիայի անկումը: 1452 թ. ամռանը թուրքերը նախապատրաստվեցին Կոստանդնուպոլսի գրավմանը: Նրանք մայրաքաղաքը շրջափակեցին և ծովից, և ցամաքից: Սուլթան Մեհմեդ II-ը Կոստանդնուպոլսի պարիսպների տակ հավաքեց շուրջ 200 հազար զինվոր: Թուրքական բանակն ուներ այն ժամանակվա համար առաջնակարգ հրետանի: Մայրաքաղաքի մեկ պաշտպանին ընկնում էր շուրջ 20 պաշարող: Չնայած մայրաքաղաքի բնակչության ցույց տված հերոսական դիմադրությանը՝ թուրքերը **1453 թ. մայիսի 29-ին** գրավեցին Կոստանդնուպոլիսը և երեք օր կողոպտեցին այն: Վերջին կայսր

Կոստանդին XI Պալեոլոգոսը սպանվեց ճակատամարտում: Կոստանդնուպոլսի անկումով Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց: Կոստանդնուպոլիսը դարձավ Օսմանյան կայսրության մայրաքաղաք (հետագայում այն վերանվանվեց Ստամբուլ): Այնուհետև թուրքերը ձեռնամուխ եղան նախկին կայսրության մյուս տարածքների նվաճմանը: Նրանք գրավեցին Պելոպոնեսը, իսկ 1461 թ.՝ Տրապիզոնի կայսրությունը:

Բյուզանդիայի անկումը պայմանավորված էր ոչ միայն արտաքին, այլև ներքին պատճառներով: Ամենածանր հարվածը նրան հասցրեց խաչակրաց չորրորդ արշավանքը: Վենետիկը, Սրբազան հռոմեական կայսրությունը, պապականությունը, խաչակիրներին ուղարկելով Կոստանդնուպոլիս, այնպիսի հարված հասցրին կայսրությանը, որ նա ժամանակավորապես դադարեց գոյություն ունենալուց, իսկ վերականգնումից հետո այլևս ուշքի չեկավ:

XIII դ. կայսրությունն անընդհատ պատերազմների մեջ էր և Արևելքում, և Արևմուտքում: Սակայն Բյուզանդիայի կործանման գլխավոր պատճառը քաղաքների, արհեստի և առևտրի անկումն էր, որոնք զգալի չափով կապված էին ինչպես թուրքական նվաճումների, որոնք տիրել էին ասիական առևտրական ճանապարհներին, այնպես էլ օտարերկրյա վաճառականների վարած քաղաքականության հետ: Նրանց տրված առևտրական արտոնությունների և մենաշնորհների արդյունքում քյուզանդական առևտուրն անկում ապրեց: Կայսրության կործանմանը նպաստեց նաև պապականության և արևմտաեվրոպական երկրների վարած քաղաքականությունը, որոնք Բյուզանդիային միայնակ թողեցին թուրքական վտանգի դեմ:



Դելակրուա. «Խաչակիրների մուտքը Կոստանդնուպոլիս», Լուվր, 1841 թ.

Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու մյուս երկրների նվաճումը թուրքերի կողմից բացասական հետևանքներ ունեցավ այստեղ բնակվող ժողովուրդների ճակատագրի համար: Նրանց տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումը երկար ժամանակով կասեցվեց:

Թուրքական տիրապետության հաստատումը Բալկաններում սպառնալիք ստեղծեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար: Պապականությունը և Արևմտյան Եվրոպան պետք է հատուցեին Բյուզանդիայի նկատմամբ իրենց վարած քաղաքականության համար: Օսմանյան Թուրքիայի ձեռքն ընկան առևտրական կարևորագույն ճանապարհները, որը մեծ հարված հասցրեց Արևելքի հետ Արևմտյան Եվրոպայի առևտրին:

Թուրքական տիրապետության հաստատումը Բալկաններում սպառնալիք ստեղծեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար: Պապականությունը և Արևմտյան Եվրոպան պետք է հատուցեին Բյուզանդիայի նկատմամբ իրենց վարած քաղաքականության համար: Օսմանյան Թուրքիայի ձեռքն ընկան առևտրական կարևորագույն ճանապարհները, որը մեծ հարված հասցրեց Արևելքի հետ Արևմտյան Եվրոպայի առևտրին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր հարստության հետ էր կապված Բյուզանդական կայսրության վերելքի վերջին շրջանը: Խաչակրաց ղր արշավանքը առավել ծանր հարված հասցրեց Բյուզանդիային: Ինչո՞ւ էր խաչակիրների՝ Բյուզանդիայում ստեղծած պետություններից մեկը կոչվում Լատինական կայսրություն: Բացի դրանից, ուրիշ ի՞նչ պետություններ ստեղծվեցին կայսրության տարածքում:
2. Ինչո՞ւ Բյուզանդիան չկարողացավ դիմագրավել թուրք օսմաններին: Երբ թուրքերը հաստատվեցին Դարդանեյի ափին: Ինչ հետևանք ունեցավ Կոստվոյի ճակատամարտը Եվրոպայի համար: Ինչը խանգարեց թուրքերին 1402 թ. գրավելու Կոստանդնուպոլիսը:
3. Ինչ հոսանքներ ձևավորվեցին Բյուզանդական հասարակության մեջ: Ներկայացրե՞ք նրանցից յուրաքանչյուրի ծրագրերը:
4. Երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը: Ներկայացրե՞ք Բյուզանդիայի անկման պատճառները: Որո՞նք էին Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու օսմանյան նվաճման հետևանքները:

§ 10. ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՑԹԸ IX-XV ԴԱՐԵՐՈՒՄ

«Մակեդոնական» և «Կոմնիենույան» վերածնունդները: Հետիուստինիանոսյան դարաշրջանի Բյուզանդիայի սոցի-

ալ-քաղաքական անկումն անդրադարձավ նաև մշակույթի վրա, որը տևեց երկու դար՝ VII-VIII դդ.: Բյուզանդական մշա-

կույթը IX դարից նորից վերելք ապրեց, որը շարունակվեց մինչև խաչակրաց չորրորդ արշավանքը:

IX–XIII դդ. մշակութային վերելքը հայտնի է «Մակեդոնական» և «Կոմնի-նոյան» վերածնունդներ անուններով: Երկու արքայատոների կայսրերն էլ մեծ ուշադրություն էին դարձնում կրթական գործի կազմակերպմանը և հովանավորում էին մշակույթի զարգացումը:

Այս ժամանակ կայսրության կրթական կյանքի կենտրոնը դառնում է Կոստանդնուպոլիսը: Այստեղ IX դ. բացվում է Մադնավարի բարձրագույն դպրոցը, որտեղ աստվածաբանության հետ մեկտեղ դասավանդում էին աշխարհիկ գիտություններ: Կրթական գործի կազմակերպման բնագավառում մեծ դեր խաղաց պատրիարք Փոտիոսը: Նա գտնում էր, որ կրթության նպատակը ոչ միայն աստվածաբանական, այլև աշխարհիկ գիտելիքներն են, ուստի անհրաժեշտ էր կրթական համակարգի մեջ ներառել նաև անտիկ գիտությունները: 1045 թ. Կոստանդնուպոլսում բացվեց համալսարան, որն ուներ երկու ֆակուլտետ՝ իրավաբանական և փիլիսոփայական: Մայրաքաղաքում բացվեց նաև «Պատրիարքական ակադեմիա», որտեղ պատրաստում էին բարձրաստիճանի հոգևորականներ:

Առավել բարձր զարգացում ապրեցին բնական գիտությունները, մասնավորապես՝ մեխանիկան, մաթեմատիկան, քիմիան: IX դ. Բյուզանդիայում սկսում են կիրառել հնդկական թվերը արաբական գրությամբ: IX դարում է ստեղծագործել նշանավոր գիտնական *Լևոն Մարտանտիկոսը*: Նրան մեծ համբավ բերեց լուսային հեռագրի հայտնագործումը: Դրա միջոցով ընդամենը մի քանի ժամ հետո մայրաքաղաքում իմանում էին արևելյան

սահմաններում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Նա առաջին անգամ տառանիշերն օգտագործեց որպես պայմանական նշաններ:

Կոստանդին VII Ծիրանածին կայսեր օրոք Բյուզանդիայում փորձ արվեց հավաքելու տարբեր գիտությունների բնագավառներում գոյություն ունեցող գիտելիքները՝ սկսած անտիկ ժամանակաշրջանից: Ստեղծվեցին մոտ հիսուն հանրագիտարանային բնույթի գրքեր, որոնք վերաբերում էին գյուղատնտեսությանը, բժշկությանը և ռազմական գործին:

IX–XIII դդ. մեծ վերելք էր ապրում նաև բյուզանդական գրականությունը: Պատրիարք Փոտիոսը, անտիկ հեղինակների 280 աշխատություններից հանելով քաղվածքներ, կազմեց ժողովածու, որը կոչվում է «Բազմաթիվ գրքերի նկարագրություն»: Անտիկ գրողների կորած շատ աշխատություններ մեզ են հասել այս քաղվածքների շնորհիվ: Եկեղեցական գրականությունից բացի, պալատական շրջաններում մեծ տարածում են գտնում արձակ և չափածո սիրերգությունները, որոնց թեմաները սովորաբար ոչ թե Ատովածաշնչում տեղ գտած պատումներն էին, այլ վերցվում էին անտիկ պատմությունից և առասպելներից:

Արաբների դեմ մղված պայքարում բյուզանդացիների հերոսական սխրագործությունների մասին ժողովրդի հյուսած երգերի հիման վրա ստեղծվեց *Դիզենիս Ակրիտասին* նվիրված էպոսը: Դրանում փառաբանվում են բյուզանդական ռազմիկի սխրագործություններն արաբների դեմ մղվող պայքարում և նրա սերը հիասքանչ Եվդոկիայի նկատմամբ:

Զարգանում է նաև առակագրությունը: Առակներում ծաղրում էին հասարակու-

թյան մեջ տեղ գտած արատավոր երևույթները և բարքերը:

Այս ժամանակաշրջանի բյուզանդական մշակույթում բարձր զարգացման հասավ **պատմագրությունը**: Պատմական տեղեկություններ են պահպանվել Կոստանդին III Ծիրանածին կայսեր «Պետության կառավարման մասին», «Թեմերի մասին» աշխատություններում: Վերջին ստեղծագործության մեջ պատմաաշխարհագրական տվյալներ կան նաև կայսրության սահմանամերձ տարածքներում ապրող ժողովուրդների մասին:

Բյուզանդական պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչներից էր **Միքայել Փսելլոսը** (XI դ.): Նրա ժամանակագրությունն ընդգրկում է 976–1077 թթ. ընկած ժամանակաշրջանի Բյուզանդիայի պատմությունը: Նա մանրամասն շարադրում է այս ժամանակաշրջանի բյուզանդական կայսրերի գործունեությունը, քաջասական զծերով ներկայացնում նրանց, ովքեր անկարող էին կառավարելու երկիրը: «Կոմնինոսյան» վերածննդի պատմագրության մեջ աչքի ընկնող տեղ է գրադեցնում **Աննա Կոմնինոսի** «Ալեքսիադա» երկը: Աննան Ալեքսիոս I Կոմնինոս կայսեր դուստրն էր, և «Ալեքսիադա» աշխատությունը կայսեր կենսագրությունն է: Աշխատության մեջ առանձնապես մանրամասն շարադրված են խաչակրաց առաջին արշավանքը և նորմանների դեմ Ալեքսիոս I-ի մղած պատերազմները: «Ալեքսիադա» աշխատությունը շարունակեց **Նիկիտա Հոնիատոսը**, որի պատմությունն ընդգրկում է 1118–1206 թթ. իրադարձությունները: Հեղինակն առավել մանրամասն շարադրել է 1204 թ. ողբերգական դեպքերը, երբ խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը:

Բյուզանդական պատմագրության մեջ իր գոյությունը պահպանեց նաև ժամանակագրությունը՝ որպես պատմության շարադրման ժանր: Ժամանակագրության հեղինակը սովորաբար տարեթվերի տակ հավաքում էր ամենաբազմազան, հաճախ առասպելական դեպքեր և իրադարձություններ, սակայն դրանում ևս կան պատմական հարուստ տվյալներ:

Ուշ բյուզանդական մշակույթը: 1204 թ.՝ կայսրության տրոհումից հետո, բյուզանդական մշակույթը նորից անկում ապրեց: Կայսրության տարածքում առաջացած պետություններում մշակույթը զարգանում էր մեկուսի: Բյուզանդական մշակույթի զարգացման կենտրոնը դարձավ Նիկեական կայսրությունը: Սրա հիման վրա էլ կայսրության վերականգնումից հետո սկսվեց մշակութային նոր վերելք, որը հայտնի է «Պալեոլոգոսների վերածնունդ» անվանումով:

Լատինական կայսրությունը միջնորդի դեր կատարեց անտիկ և բյուզանդական հեղինակների աշխատությունները Արևմուտք տեղափոխելու համար:

Այդ ժամանակ բյուզանդական մշակույթում մեծ զարգացում ապրեց փիլիսոփայությունը: Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի՝ Բյուզանդիայում միշտ կենսունակ էր անտիկ փիլիսոփայական ավանդույթը: Արևմտաեվրոպական սքոլաստիկական առավելապես հենվում էր Արիստոտելի փիլիսոփայության վրա, իսկ բյուզանդական փիլիսոփաներն օգտվում էին անտիկ փիլիսոփայության բոլոր ուսմունքներից: Բյուզանդական փիլիսոփայության մեջ քննարկվող կարևորագույն խնդիրը, ինչպես և սքոլաստիկայում, հավատի և բանականության փոխհարաբերության հարցն էր:

Ճանաչողության մեջ հավատի առաջնայնության կարևորությունը պաշտպանում էր **Գեորգի Պարանյան** (1297–1359): Նրա կարծիքով՝ մարդը ճանաչողության կարող է հասնել աղոթքի ժամանակ մտքի ճառագման ճանապարհով: Նրա ուսմունքի դեմ հանդես եկավ վանական **Վարդհանը** (XIII–XIV դդ.): Նա պաշտպանում էր հավատի նկատմամբ բանականության առաջնայնության գաղափարը և գտնում էր, որ ճշմարիտ գիտելիք կարելի է ձեռք բերել միայն բանականության միջոցով: Հավատի և բանականության առաջնայնության գիտական վեճին խառնվեցին նույնիսկ կայսրության կառավարող շրջանները: Նրանց ցանքերով հրավիրվեց եկեղեցական ժողով, որտեղ դատապարտեցին Վարդհանի գաղափարները, իսկ Գեորգի Պալամայի ուսմունքը հռչակվեց միակ ճիշտը և ուղղափառ (օրթոդոքս):

XIV–XV դդ. բյուզանդական մշակույթում սկսում է ձևավորվել մի նոր ուղղություն, որը նման էր արևմտաեվրոպական հումանիզմին: Հետաքրքրությունը մարդու երկրային կյանքի նկատմամբ այդ ժամանակաշրջանի մշակույթի բնորոշ գիծն էր: Այդ ժամանակ բյուզանդական գեղանկարչությունն ապրում է իր վերելքի վերջին ժամանակահատվածը: Բյուզանդական նկարիչները փորձում էին դուրս գալ եկեղեցական արվեստի սահմանած կանոնների շրջանակներից և աշխատում էին պատկերել ոչ թե վերացական կերպարներ, այլ կենդանի մարդուն՝ իր ուրախություններով ու վշտերով: Այդ ժամանակաշրջանի արվեստի ամենանշանավոր գործերը Կոստանդնուպոլսի մոտ գտնվող Խորա վանքի որմնանկարներն ու խճանկարներն են: Սակայն XIV–XV դդ. բյու-

զանդական արվեստն այդպես էլ մնաց եկեղեցական արվեստի շրջանակներում և չհասցրեց բարձրանալ իտալական Վերածննդի արվեստի աստիճանին:

XII–XV դդ. որոշակի զարգացում ապրեց նաև բյուզանդական պատմագրությունը: Խաչակրաց չորրորդ արշավանքից հետո, երբ կայսրության տարածքում առաջացել էին մի շարք պետություններ, ժամանակագրության մեջ ձևավորվեց մի նոր ուղղություն՝ տեղական ժամանակագրություն: Այնտեղ հավաքում էին առանձին պետության, հաճախ էլ՝ առանձին քաղաքին վերաբերող դեպքեր և իրադարձություններ:

XIV դ. բյուզանդական պատմագրության մեջ ձևավորվում է մի նոր ուղղություն՝ պատմական հուշագրությունը, որի նշանավոր ներկայացուցիչներից է **Տովհան VI Կանտակուզինոս** կայսրը, որն իր «Պատմությունը» շարադրել էր գահից հրաժարվելուց հետո և փառաբանում էր իր անձն ու գործունեությունը: Իսկ իրականում գահի համար մղվող պայքարում նա դաշնակցել էր թուրքերի հետ, որը քաղաքացիական երկարատև պատերազմի պատճառ դարձավ: Բյուզանդական պատմագրության վերջին ներկայացուցիչը **Դուկասն** էր, որն իր «Պատմության» մեջ շարադրել է Բյուզանդական կայսրության վերջին օրերի պատմությունը:

Բյուզանդական մշակույթը ժառանգեցին հույները և այն դարձրին իրենց էթնիկական մշակույթը:

Բյուզանդական մշակույթի ավանդները շարունակեցին ոչ միայն ուղղափառ (Բուլղարիա, Սերբիա, Ռուսիա), այլև Եվրոպայի կաթոլիկ որոշ երկրներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ անուններով է հայտնի IX–XIII դդ. մշակութային վերելքը Բյուզանդիայում: Այդ ժամանակաշրջանում ի՞նչ բարձրագույն դպրոցներ են բացվել Բյուզանդիայում: Ո՞ր գիտությունները հասան առավել բարձր զարգացման: Գրականության ո՞ր ճյուղերն էին զարգանում այդ շրջանում: Նշե՞ք այդ շրջանի պատմագրական ստեղծագործություններ և դրանց հեղինակներին:
2. Գիտության ո՞ր ճյուղը զարգացում ապրեց «Պալեոլոգոսների վերածննդի» շրջանում: Ի՞նչ խնդիր էին քննարկում քյուզանդական փիլիսոփաները: Ի՞նչ նմանություն ուներ քյուզանդական XIV–XV դդ. մշակույթը Վերածննդի մշակույթի հետ:
3. Պատմագրության մեջ ի՞նչ նոր ուղղություն ձևավորվեց: Ներկայացրե՞ք ուշքյուզանդական շրջանի հեղինակներին և նրանց աշխատությունները (*լրացուցիչ տեղեկատվության համար օգտվեք համագանցից*):

§ 11. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԴՌՈՒՄԻԱՅՈՒՄ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Գերմանացիների գրադեցրած տարածքներից Արևելք՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, ապրում էին սլավոնական ցեղեր: Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանում սլավոնները տեղաշարժվեցին դեպի հարավ և արևմուտք: VI դ. նրանք արդեն գրադեցնում էին Լաբա (Էլբա) գետից մինչև Դնեպր գետը և Բալթիկ ծովից մինչև Սև ծովն ընկած տարածքները: Հետագայում սլավոնների մի մասը շարժվեց Դնեպրից դեպի արևելք, իսկ մի քանի ցեղեր հաստատվեցին Բալկանյան թերակղզում: Տեղաշարժերի և նոր տարածքներում բնակվելու արդյունքում սլավոնները բաժանվեցին երեք մեծ խմբերի՝ արևմտյան, հարավային և արևելյան: Վերջիններս բնակվում էին Արևելյան Եվրոպայի լայնարձակ տափաստաններում և բաժանված էին բազմաթիվ ցեղերի՝ կրիվիչներ, վյատիչներ, պոլյաններ, դրևլյաններ, իլմեններ:

Սլավոններն ապրում էին նստակյաց կյանքով, զբաղվում երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստագործությամբ: Սոցիալական միջավայրի

կազմակերպման հիմնական միավորը համայնքն (*վեթլ*) էր: Այն միավորում էր ինչպես ազգակցական կապեր ունեցող, այնպես էլ ոչազգակից մարդկանց: Համայնքին պատկանող հողի ընդհանուր սեփականատերը համայնքն էր, որը պարբերաբար մշակելի հողերի և արոտավայրերի մի մասը բաժանում էր գյուղացիների միջև: Տունը, տնամերձ հողամասը և որոշ քանակի մշակելի հողեր ու արոտավայրեր մասնավոր սեփականության իրավունքով պատկանում էին գյուղացուն:

Ավատատիրական հարաբերությունների զարգացման սկզբնական փուլում համայնականները ենթարկվում էին պետությանը և հարկեր էին վճարում: Իշխանն իր դրուժինիկների հետ շրջում էր իրեն ենթակա տարածքներում և հավաքում հարկերը: Հարկահավաքման այս ձևը կոչվում էր *սոլյուդիկե*: Իշխանը սովորաբար ծառայության դիմաց որպես վճար որևէ տարածքում հարկահավաքման իրավունքը հանձնում էր իր մոտ ծառայող մարդկանց:

Ավատատիրական հարաբերությունների զարգացման հաջորդ փուլում ձևավորվում են մասնավոր հողատիրույթներ (*վոսչինա*): Դրանք առաջանում էին տարբեր ձանապարհներով: Նախ հարստացած համայնականները գնում էին աղքատ գյուղացիների հողերը և մասնավոր սեփականության իրավունքով իրենց ձեռքում էին կենտրոնացնում հսկայական հողատարածքներ:

Աղքատացած գյուղացիներն իրենց գոյությունը պահպանելու համար ստիպված էին տարբեր պայմաններով մշակել խոշոր հողատերերի հողերը: Մասնավոր հողատիրության առաջացման մյուս ձանապարհն այն էր, երբ որևէ անձի հող էր տրամադրվում ռազմական ծառայության դիմաց: Սա նման էր Արևմտյան Եվրոպայում ձևավորված բենեֆիցիումին: Հողատերերը սովորաբար հողը բաժանում էին երկու մասի՝ տերունական և գյուղացիական: Վերջինս բաժանվում էր մանր հողակտորների և հանձնվում գյուղացիներին, որի դիմաց նրանք պարտավոր էին հարկեր վճարել: Տերունական հողը առանձին մասերի չէր բաժանվում: Հող ստացած գյուղացիների մի մասը հարկերի փոխարեն պարտավոր էր շաբաթական 2-3 օր աշխատել հողատիրոջ մոտ:

Կիևյան Ռուսիայի կազմավորումը:

Մինչև IX դ. կեսերը արևելյան սլավոններն ապրում էին տոհմացեղային կարգով. նրանց մոտ դեռևս պետություն չէր ձևավորվել: Նրանք բնակվում էին առանձին ցեղերով: Յեղի կառավարման հիմնական մարմիններն էին՝ ժողովրդական ժողովը (*վեչե*), ավագների խորհուրդը և ռազմական առաջնորդը (իշխան):

Վեչեն բննարկում էր ցեղի կառավարման հետ կապված բոլոր կարևորագույն

խնդիրները: Վեչին մասնակցում էին գենքի ունակ բոլոր տղամարդիկ:

Ավագների խորհուրդը, որը բաղկացած էր ցեղի տարեց տղամարդկանցից, օժտված էր դատական իրավունքներով: Գրավոր օրենսդրության բացակայության պայմաններում ավագների խորհուրդը սովորության իրավունքի հիման վրա կարգավորում էր ցեղի ներսում կատարված իրավախախտումները:

Յեղի գլուխ կանգնած էր իշխանը, որի պաշտոնը սկզբում ընտրովի էր, իսկ հետագայում դարձավ ժառանգական:

Արևելյան սլավոնների հետագա տարանակեցման և ցեղային միությունների առաջացման հետևանքով կառավարման այս մարմիններն այլևս ի վիճակի չէին իրագործելու իրենց համար սահմանված գործառույթները: Յեղային միությունը ներառում էր հսկայական տարածքներ և մի քանի հարյուր հազար մարդ, որի պատճառով վեչե հրավիրելը դառնում էր անհնարին: Կարևոր հարցեր բննարկելու համար ցեղային միության առաջնորդը հրավիրում էր ժողով, որին մասնակցում էին իր անձնական դրուժինան և առանձին ցեղերի առաջնորդներ: Այստեղ ընդունված որոշումները պարտադիր էին ցեղային միության համար: Ավագների խորհուրդը դառնում է ցեղային միության առաջնորդին կից խորհրդակցական մարմին: Այսպես ռազմական առաջնորդն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը և դարձավ պետության ղեկավար:

Արդեն IX դ. կեսերին մի քանի տասնյակ արևելյան սլավոնական ցեղերի միավորումը մեկ ցեղային միության մեջ ավարտվեց, և նրանք ստեղծեցին իրենց պետությունը, որը մայրաքաղաքի անունով կոչվեց *Կիևյան Ռուսիա*: Պետության կազմավորումն ավարտվեց 882 թ., երբ իշխան *Օլեգը* (882-912) միավորեց Կին և Նով-

գորող քաղաքները: Նորաստեղծ պետության սահմանները հարավում հասնում էին մինչև Սև, իսկ հյուսիսում՝ Բայթիկ ծով: Հետագայում պետության սահմաններն ավելի ընդարձակվեցին: Նրա տարածքը կազմում էր շուրջ 1 մլն 100 հազ. քառակուսի կիլոմետր, իսկ բնակչությունը՝ 4,5 մլն մարդ: Կիևյան Ռուսիան տարբեր ցեղերից կազմված ավատատիրական պետություն էր, որի գլուխ կանգնած էր Կիևի մեծ իշխանը: Իրեն ենթակա տարածքները նա կառավարում էր իր նշանակած մարդկանց կամ ցեղային իշխանների միջոցով: Կառավարման տեղական մշտական մարմինների բացակայության պայմաններում մեծ իշխանի իշխանությունը խիստ թույլ էր:

Ավատատիրական պետության առաջացման, ռուս ժողովրդի կազմավորման պայմաններում բազմաստվածությունը, ցեղային սովորույթները այլևս չէին համապատասխանում հասարակական-քաղաքական կյանքի վերափոխված պայմաններին: Մյուս կողմից՝ Ռուսիայի հարևաններից յուրաքանչյուրը՝ վոլգյան բուլղարները, որոնք ընդունել էին իսլամ, խազարները՝ հրեականություն, կաթոլիկ Արևմուտքը և ուղղափառ Բյուզանդիան իրենց ազդեցությունը Ռուսիայում տարածելու համար աշխատում էին այստեղ հաստատել իրենց դավանանքը:

988 թ. մեծ իշխան **Վլադիմիրը** (980–1015) ուղղափառ քրիստոնեությունը հռչակեց Ռուսիայի պետական կրոն: Նա ամուսնացավ բյուզանդական կայսր Վասիլ (Բարսեղ) II–ի քրոջ՝ Աննայի հետ: Ծուտով քրիստոնեությունը տարածվեց ողջ Ռուսիայում: Ռուսական եկեղեցու գլուխ կանգնած էր **միտրոպոլիտը**, որը ենթարկվում էր Կոստանդնուպոլսի պատրիարքին: Սա հնարավորություն տվեց

ծանոթանալու և օգտագործելու բյուզանդական հարուստ մշակույթը:

Քրիստոնեությունն արգելեց հեթանոսական որոշ սովորույթներ ու նորմեր, ուստի պետության և քրիստոնեության հետագա ամրապնդման համար անհրաժեշտ էր գրավոր միասնական օրենսդրություն: Այս խնդիրը լուծեց մեծ իշխան **Յարոսլավ Իմաստունը** (1019–1054), որն ստեղծեց ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը՝ «Ռուսկայա պրավդան»:

Հին Ռուսիան, որպես միասնական պետություն, չկարողացավ երկար գոյատևել: Օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից՝ նախկին ցեղային իշխաններն այլևս չէին ենթարկվում Կիևի մեծ իշխանին և ինքնուրույն էին կառավարում իրենց պատկանող տարածքները: Արդեն XII դարում կային շուրջ 15, իսկ XIII դարում՝ 50 այսպիսի անկախ իշխանություններ: Այսպիսի իշխանությունը կոչվում էր երկիր, իսկ նրա կազմի մեջ մտնող մանր իշխանությունները՝ **վոյստուներ**: Ռուսիայի տարածքում ստեղծվել էին Կիևյան, Վլադիմիր–Սուզդալյան, Գալիչ–Վոլինյան ինքնուրույն խոշոր իշխանությունները և Մեծ Նովգորոդի հանրապետությունը: Մասնատված և երկպառակչական երկարատև պատերազմներից թուլացած Ռուսիան չկարողացավ դիմադրել մոնղոլներին: 1237–1241 թթ. Չինգիզ խանի թոռ Բաթու խանը նվաճեց Ռուսիայի մեծ մասը, և այստեղ հաստատվեց մոնղոլ–թաթարական տիրապետություն: Այն հաճախ անվանում են Ռսկե Հորդայի տիրապետություն, քանի որ մոնղոլական տերության արևմտյան մասը կոչվում էր **Ռսկե Հորդա**: Ռուսական իշխանություններն անմիջականորեն չէին մտնում Հորդայի կազմի մեջ, բայց հարկեր էին վճարում և ճանաչում իրենց վասալական կախվա-

ծությունը: Իրենց տարածքները կառավարելու համար իշխանները Ոսկե Հորդայի խաներից հատուկ հրովարտակ էին ստանում, որը կոչվում էր **յառլիկ**:

XIII դ. Հյուսիսարևմտյան Ռուսիայի համար մեծ վտանգ էին ներկայացնում գերմանացի խաչակիրները և Շվեդիան: 1240 թ. շվեդներն ափ իջան Նևայի գետաբերանում և ձեռնամուխ եղան ռուսական հողերի նվաճմանը: Սակայն **Մեծ Նովգորոդի իշխան Ալեքսանդրը** փոքրաթիվ զորքով Նևայի ափին կարողացավ պարտության մատնել շվեդներին: Այս հաղթանակի համար Ալեքսանդրը անվանվեց **Նևսկի**: 1242 թ. գերմանացի ասպետների և Ալեքսանդր Նևսկու զորքի միջև տեղի ունեցավ վճռական ճակատամարտ սառցակալած Չուդ լճի վրա: Խաչակիրները ծանր պարտություն կրեցին և երկար ժամանակ չէին հանդգնում ռուսական հողերի նկատմամբ ոտնձգություններ կատարել:

Մոնղոլական տիրապետության հաստատումից հետո ռուսական իշխանությունները տարրեր ձակատագրեր ունեցան: Կիևյան Ռուսիայի արևմտյան շրջանները մտան Լիտվական մեծ իշխանության և Լեհաստանի կազմի մեջ: Այս տարածքներում սկսեցին ձևավորվել բելառուս և ուկրաինացի ժողովուրդները: Ռուսական պետականությունը պահպանվեց միայն Հյուսիսարևելյան Ռուսիայում: Կիևի փոխարեն «համառուսական» մայրաքաղաք դարձավ **Վլադիմիրը**:

Ռուսական միասնական պետության ստաջացումը: XIV դ. սկզբին Ռուսիայի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի կենտրոնը դարձավ **Մոսկվայի իշխանությունը**: Ոսկե Հորդայի խաները մեծ իշխանի պաշտոնն սկսեցին շնորհել Մոսկվայի իշխաններին, որոնք



Ալեքսանդր Նևսկու արձանը Սանկտ Պետերբուրգում ստացան նաև ամբողջ Ռուսիայի տարածքում հարկեր հավաքելու իրավունքը: Օգտվելով դրանից՝ Մոսկվայի իշխանները ընդարձակեցին իշխանության տարածքները և ամրապնդեցին իրենց իշխանությունը: Նրանք սկսեցին գլխավորել ռուսական հողերի միավորման և միասնական պետություն ստեղծելու գործընթացը:

Դրանում մեծ դեր խաղաց Մոսկվայի իշխան **Դմիտրին** (1359–1389): Նրա գլխավորությամբ ռուսական զորքերը **1380 թ.** Դոն գետի ափին՝ **Կոսիկովոյի դաշտում**, տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին մոնղոլներին: Սա բարձրացրեց Մոսկվայի իշխանության հեղինակությունը և արագացրեց նրա շուրջ ռուսական հողերի միավորման գործընթացը: Մոսկվայի իշխանությանը միացվեց Յարոսլավլը, Ռոստովը, Մեծ Նովգորոդը, Տվերը: Այդ պատճառով մեծ իշխանի փոխարեն **Իվան III-ն** (1462–1505) սկսեց իրեն անվանել «Համայն Ռուսիո տիրակալ»: **1480 թ.** վերջնականապես տապալվեց նաև Ոսկե Հորդայի տիրապետությունը, և Ռուսիան

դարձավ Եվրոպայի խոշոր պետություններից մեկը: Նրան սկսեցին անվանել **Ռուսաստան**:

Երկրի քաղաքական միավորմանը զուգահեռ տեղի էր ունենում կենտրոնացված դասային միապետության կազմավորումը: Այդ ժամանակ ավարտվել էր ավատատիրական հասարակության երեք հիմնական դասերի՝ ավատատերերի (բոյարներ), հոգևորականների, քաղաքացիների, ձևավորումը: Մեծ իշխանին կից գործող բոյարական դուման խորհրդակցական մարմին էր, որի անդամները խոշոր հողատերերն էին, և այլևս ի վիճակի չէր զբաղվելու ընդարձակ պետության կառավարմամբ: Ռուսաստանում դասային-ներկայացուցչական միապետության ստեղծումը կապված է **Իվան IV Ահեղի** գործունեության հետ:

1547 թ. 17-ամյա Իվանը թագադրվեց և ընդունեց *ցար* տիտղոսը: 1549 թ. նա Մոսկվայում հրավիրեց դասային ներկայացուցիչների առաջին՝ **Երկրային ժողովը**: Նրա աշխատանքներին մասնակցում էին խոշոր հողատերերը՝ բոյարները, պետական ծառայության մեջ գտնվող ազնվականները, բարձրաստիճան հոգևորականները և քաղաքների ներկայացուցիչները: Առաջին Երկրային ժողովը քննարկեց նոր դատաստանագիրք ստեղծելու հարցը: Այն ընդունվեց 1550 թ.:

Պետության կառավարումը ուժեղացնելու համար Իվան IV-ը ստեղծեց կառավարման կենտրոնական համապետական մարմիններ՝ **պրիկազներ**: Դրանց թիվը հասնում էր շուրջ 20-ի, որոնցից յուրաքանչյուրը զբաղվում էր որոշակի գործերով: Այսպես՝ Մեծ պրիկազը զբաղվում էր երկրի ֆինանսներով, ղեկավարական պրիկազը՝ արտաքին քաղաքականությամբ:

Իվան IV-ն անցկացրեց նաև ռազմական բարեփոխում: Մտցվեց զինվորական ծառայության նոր կարգ՝ ըստ ծագման և ըստ հավաքագրման: Առաջին դեպքում բանակ էին զորակոչվում ավատատերերի 15 տարին լրացած որդիները, իսկ երկրորդ դեպքում՝ քաղաքացիների և գյուղացիների որդիները:

Ընդարձակվեցին Ռուսաստանի սահմանները: Իվան Ահեղը Ռուսաստանին միացրեց Կազանը (1552), Աստրախանը (1556) և Արևմտյան Սիբիրը: Նրա օրոք Բալթիկ ծովի ափերը նվաճելու համար Ռուսաստանը պատերազմ սկսեց, որը հայտնի է **Լիվոնյան պատերազմ** (1558–1583) անունով, սակայն պարտություն կրեց և կարողացավ պահպանել միայն Նևայի գետաբերանը:

Պետության կենտրոնացման և հեղինակության բարձրացման համար կարևոր նշանակություն ունեցավ միտրոպոլիտության փոխարեն պատրիարքության հիմնադրումը (1589), որով ռուսական եկեղեցին անկախացավ և այլևս չէր ենթարկվում Կոստանդնուպոլսի պատրիարքին:

XVI դ. վերջին և XVII դ. սկզբին Ռուսաստանը ենթարկվեց մի շարք փորձությունների: Այդ ժամանակաշրջանը (1598–1613) հայտնի է **խառնակ ժամանակաշրջան** անունով, քանի որ Իվան IV-ի որդի Ֆյոդորի մահից հետո Ռուսաստանում սկսվեցին գահակալական կռիվներ և ներքին խռովություններ: Դրանց միջամտում էին Լեհաստանը և Շվեդիան, որոնք զորքեր մտցրին Ռուսաստան: Լեհերը գրավեցին Մոսկվան, իսկ շվեդները՝ Նովգորոդը: Ռուսաստանի անկախության կորստի սպառնալիքը ոտքի հանեց հայրենասիրական ուժերին: Նրանք **Կ. Մինինի** և **Դ. Պոժարսկու** գլխավորու-



Ս. Սոփիայի տաճարը Կիևում

թյամբ ապստամբություն բարձրացրին և ազատագրեցին Մոսկվան:

1613 թ. հրավիրվեց Երկրային ժողով, որին մասնակցում էին բոյարներ, հոգևորականներ, ազնվականներ և 50 քաղաքներից ընտրված 700 քաղաքացիներ: Ցար ընտրվեց պատրիարք Ֆիլարետի 16-ամյա որդի *Միխայիլ Ռոմանովը* (1613–1645): Այսպես Ռուսաստանում հաստատվեց Ռոմանովների արքայատոհմը, որը երկիրը կառավարեց մինչև 1917 թ.:

Ռուսական մշակույթը: Կիևյան Ռուսիայի կազմավորումից և քրիստոնեության ընդունումից հետո սկսեց ձևավորվել և զարգանալ միջնադարյան ռուսական մշակույթը: Քրիստոնեությունը ոչ միայն միավորեց նախկին ցեղային մշակույթները, այլև հնարավորություն ստեղծեց, որ ռուսները ծանոթանան և օգտագործեն բյուզանդական ու արևմտաեվրոպական քրիստոնեական մշակույթը: Դեռևս IX դ. կեսերին Կոստանդին (Կիրիլ) և Մեթոդիոս եղբայրները ստեղծեցին սլավոնական այբուբենը, որը X դ. սկսում են օգտագործել նաև Հին Ռուսիայում:



Ռուբլով. «Համարձում», Մոսկվա, 1408 թ.

Քրիստոնեության տարածմանը զուգահեռ հիմնադրվում են վանքեր, որոնք դառնում են մշակույթի կենտրոններ: Այստեղ բացվում են դպրոցներ, ձեռագրատներ և մատենադարաններ: Յարուսլավ Իմաստունի օրոք Նովգորոդում բացվեց դպրոց, որտեղ սովորում էին ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհականների երեխաներ: Կիևյան–Պեչորյան վանքի դպրոցը պատրաստում էր ապագա պետական գործիչներ և զինվորականներ: Այստեղ դասավանդում էին փիլիսոփայություն, ճարտասանություն, մաթեմատիկա, քերականություն:

Արևելյան սլավոնների միավորումը մեկ պետության մեջ բարձրացրեց նրանց էթնիկական գիտակցությունը: Այդ ժամանակ էլ հրապարակ եկավ առաջին գրավոր պատմությունը՝ *Նեստորի «Անցյալ տարիների պատմությունը»* տարեգրությունը (1113 թ.): Այստեղ ըստ տարիների համառոտ կամ մանրամասն շարադրված են XI դ. երկրորդ կեսի — XII դ. սկզբի Կիևյան Ռուսիայի իրադարձությունները: Հին Ռուսիայի պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան «Ասք

Իգորի գնդի մասին» պատմական պոեմում: Այն նվիրված է Նովգորոդ–Սևերյան իշխան Իգորի՝ 1185 թ. ղվիչաղ ցեղերի (որոնք անընդհատ հարձակվում էին Հարավային Ռուսիայի վրա) դեմ ձեռնարկած անհաջող արշավանքին, նրա գերությանը և փախուստին: Այսպես ռուսական մշակույթի մեջ ձևավորվեց նրա կարևորագույն բնագավառներից մեկը՝ պատմագրությունը:

Կիևյան Ռուսիայի առաջացումը և քրիստոնեության ընդունումը հնարավորություն տվեցին ստեղծելու համապետական միասնական օրենսդրություն, որը պետք է փոխարիներ հեթանոսական սովորույթներին և նորմերին: Մեծ իշխան Յարոսլավ Իմաստունի հրամանով ստեղծվեց առաջին գրավոր օրենսդրությունը՝ «*Ռուսկայա պրավդան*»: Հետագայում, երբ առաջացավ միասնական ռուսական պետություն, ստեղծվեցին երկու նոր դատաստանագրքեր, որոնցից առաջինը կազմվեց Իվան III–ի օրոք, իսկ մյուսը՝ Իվան IV–ի օրոք:

Այդ ժամանակաշրջանում մեծ վերելք էին ապրում նաև ճարտարապետությունը և որմնանկարչությունը: Քրիստոնեության ընդունումից հետո Կիևյան Ռուսիայում սկսում են կառուցել մեծ թվով վանքեր և եկեղեցիներ: Պահպանվել են XI դ. կառուցված Ս. Սոֆիայի տաճարները Կիևում և Նովգորոդում ու Ս. Փրկչի տաճարը Չեռնիգովում: Տաճարների ներսի պատերը զարդարված են որմնանկարներով, որոնց հիմնական թեման վերցված է Սուրբ Գրքից:

Կիևյան Ռուսիայի տրոհումն առանձին ինքնուրույն իշխանությունների և մոնղոլ-թաթարական տիրապետության ծանր հետևանքները խոչընդոտեցին մշակույթի բնականոն զարգացումը, և այն սկսեց

անկում ապրել: Մշակույթային կյանքի նոր վերելքը սկսվեց XIV դ. և կապված էր Մոսկվայի իշխանության բարձրացման ու ռուսական հողերի միավորման հետ: Մշակույթի զարգացմանը նպաստում էին նաև ազգային ինքնագիտակցության աճը և օտարերկրյա տիրապետությունից ազատագրվելու ձգտումները: Պատահական չէ, որ հրապարակ է գալիս պատմական և գրական ստեղծագործությունների շարք՝ նվիրված Կուլիկովոյի ճակատամարտին և Ալեքսանդր Նևսկու կյանքին:

Ավատատիրական մասնատվածության ժամանակաշրջանում գերակշռում էր տեղական տարեգրությունը, երբ գրում էին առանձին իշխանության տարածքում տեղի ունեցած դեպքերը և իրադարձությունները: Միասնական պետության կազմավորմանը զուգահեռ նորից սկսեցին գրել տարեգրություններ, որտեղ գրանցում էին ամբողջ երկրի տարածքում տեղի ունեցող իրադարձությունները: Համառուսական տարեգրությունների առաջին ժողովածուն Տրոիցկի տարեգրությունն էր, որտեղ հավաքել էին մինչ այդ ստեղծված բոլոր տարեգրությունները:

XIV դ. վերջին և XV դ. մեծ վերելք ապրեց նաև ռուսական *կերպարվեստը*, որը կապված էր նշանավոր նկարիչներ *Ֆեոֆան Գրեկի* և *Անդրեյ Ռուբլյովի* ստեղծագործությունների հետ: Ազգությամբ հույն Ֆեոֆան Գրեկը (XIV–XV դդ.) Ռուսաստան բերեց բյուզանդական կերպարվեստի, մասնավորապես որմնանկարչության ավանդները և դրանց մեջ ներառելով ռուսական մշակույթին յուրահատուկ հատկանիշներ՝ ստեղծեց մի շարք բարձրարվեստ որմնանկարներ:

Բյուզանդական արվեստի ազդեցության տակ ռուսական կերպարվեստում մեծ զարգացում ապրեց սրբանկարչությունը:

նը (սրբապատկեր): Հարթեցված փայտի կտորի վրա պատկերում էին Աստվածաշնչից վերցված կերպարներ և խորհրդանիշներ: Կերպարվեստի այս ճյուղը ռուսական մշակույթի մեջ ձևավորվեց քրիստոնեության ընդունումից հետո, սակայն նրա

զարգացումը կապված էր XV դ. առաջին կեսին ստեղծագործող Անդրեյ Ռուբլյովի գործունեության հետ: Ռուսական մշակույթի ձևավորումն ու զարգացումը հիմք դարձան հաջորդ դարաշրջանի մշակութային կյանքի վերելքի համար:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր տարածքներում էին քնակվում սլավոնական ցեղերը: Ի՞նչ մեծ խմբերի էին քաժանվում սլավոնները: ԹՎարկե՞ք արևելասլավոնական ցեղերին: Նկարագրե՞ք նրանց հասարակական կազմակերպության ձևերը, կառավարման համակարգը:
2. Ներկայացրե՞ք արևելասլավոնական պետության առաջացման գործընթացը: Ե՞րբ է քրիստոնեությունը պետական կրոն հռչակվել Ռուսիայում: Ի՞նչով են նշանավորվել իշխաններ Վլադիմիրը և Յարոսլավ Իմաստունը:
3. Արտաքին ինչ ուժերի դեմ էր պայքարում Կիևյան Ռուսիան: Ի՞նչն մոնղոլներին հաջողվեց նվաճել Ռուսիայի մեծ մասը:
4. Որո՞նք էին Ռուսիայի միասնական պետության ստեղծման նախադրյալները: Ո՞ր իրադարձությունը նպաստեց Մոսկվայի իշխանության հեղինակության բարձրացմանը: Ներկայացրե՞ք ռուսական միասնական պետության ստեղծման և «խառնակ ժամանակաշրջանի» պատմությունը: Գնահատե՞ք Իվան Ահեղի գործունեությունը:
5. Որո՞նք էին ռուսական մշակույթի զարգացման պայմանները: ԹՎարկե՞ք ռուսական մշակույթի հիմնական ուղղությունները, գործիչներին, ստեղծագործությունները:

ԲԱԺԻՆ Բ

ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋՆԱԴԱՐԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

§ 1. ՀԻՆԴՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Հնդկաստանի քնակլիմայական պայմանները մեծ ազդեցություն են ունեցել սոցիալական միջավայրի կազմակերպման վրա: Բնակչության հիմնական զբաղմունքը նստակյաց երկրագործությունն էր, իսկ անասնապահությունը երկ-

րորդական դեր ուներ: Միջնադարի շեմին այստեղ ապրող ժողովուրդները զարգացման տարբեր աստիճանների վրա էին: Սոցիալական միջավայրի կազմակերպման հիմնական միավորը համայնքն էր: Այն բաղկացած էր նահապետական մեծ ընտանիքներից, որոնց մեջ մտնում էին

ծնողները և նրանց որդիները՝ իրենց ընտանիքներով:

Ք.հ. I–II դդ. երկրագործության մեջ որոշակի փոփոխություններ տեղի ունեցան: Սկսեցին օգտագործել երկաթե խփով արոր և այլ գյուղատնտեսական գործիքներ: Երկաթե գործիքների կիրառումը նպաստեց աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և համայնքի ներսում սոցիալական շերտավորման արագացմանը: Աղքատ գյուղացիները ստիպված էին լինում իրենց բաժին հողի մի մասը գրավ դնել կամ վաճառել: Այսպես համայնքի ներսում առաջանում էին խոշոր հողատերեր և հողագուրկ ու սակավահող գյուղացիներ:

Ավատատիրական հասարակությանը բնորոշ այս հարաբերությունները տարածվեցին նաև Հնդկաստանի այն շրջաններում, որտեղ նախկինում լայնորեն կիրառվում էր ստրկական աշխատանքը: Քանի որ ստրուկի աշխատանքը դառնում էր անարդյունավետ, ապա գնալով մեծ նշանակություն էր ստանում հողակտորը կիսրար վարձակալությամբ տալու համակարգը: Ավատատիրական հողատիրության առաջացման մյուս ճանապարհը հետևյալն էր: Թագավորը կամ խոշոր հողատերը պետական կամ զինվորական ծառայության դիմաց որպես աշխատավարձ հող էր տրամադրում: Սակայն ավատատիրական հողատիրությունը և նրա անբաժան մաս կազմող սոցիալ-քաղաքական աստիճանակարգությունը Հնդկաստանում նման չէին Արևմտյան Եվրոպայում ձևավորված համակարգին: Խոշոր հողատիրությունն այստեղ մեծ տարածում չգտավ, և հիմնականում գերակշռում էին միջին և մանր հողատերերը:

Գյուղատնտեսությունից բացի, Հնդկաստանի քնակչության մի մասն զբաղ-

վում էր արհեստագործությամբ և առևտրով: Բարձր զարգացման էին հասել ոսկերչությունը, զինագործությունը, ջուլհակությունը: Հնդկաստանն աշխույժ առևտուր էր անում հարևան և հեռավոր երկրների հետ: Այստեղից արտահանում էին համեմունքներ, թանկարժեք քարեր, գործվածքներ, անուշահոտ խեժեր: Հնդկաստանը առևտրական կապեր ուներ Իրանի, Կենտրոնական Ասիայի, Բյուզանդիայի հետ: Զարգացած էր նաև ծովային առևտուրը:

Քաղաքական միջախաչի կազմակերպումը, դասերը: Միջնադարում Հնդկաստանն այդպես էլ միասնական համահնդկական պետություն չդարձավ: Դա պայմանավորված էր նախ և առաջ նրանով, որ այստեղ ապրում էին բազմաթիվ ցեղեր, որոնք չմիավորվեցին մեկ էթնոսի մեջ: Հնդկաստանի տարբեր մարզերի միջև տնտեսական ամուր կապեր չստեղծվեցին: Այդ պատճառով այստեղ ձևավորվում էին քաղաքական տարբեր կենտրոններ, որոնք պայքարում էին առաջնության համար:

Նման քաղաքական կազմավորումներից էր **Գուպտաների տերությունը**, որն ստեղծվեց 320 թ. Հյուսիսային Հնդկաստանում: Նրա հիմնադիր **Չանդրագուպտա I-ը** (320–340) գեների ուժով նվաճեց հարևան իշխանությունները և ստեղծեց հզոր տերություն: Նա կրում էր **արքայից արքա** տիտղոսը: Այն իր գոյությունը պահպանեց մինչև VI դ. սկիզբը և կործանվեց քոչվոր հոն–հեփթաղների հարվածներից:

1206 թ. Կենտրոնական Ասիայից ներթափանցած ցեղերը Հյուսիսային Հնդկաստանում ստեղծեցին մուսուլմանական խոշոր պետություն, որը մայրաքաղաքի անունով կոչվում էր **Դելիի սուլթանություն**: Այն գոյատևեց մինչև 1526 թ.:



Մարգարտյա (Ջամին) մզկիթը Դեկհում

Իսլամը սուննի ուղղությամբ հռչակվեց պետական կրոն, իսկ պաշտոնական լեզուն դարձավ պարսկերենը: Իրենց տիրապետությունը ամրապնդելու համար Դեկիի սուլթանները հովանավորում էին իսլամի տարածումը: Բանակի հրամանատարական և քաղաքացիական կարևոր պաշտոնները տրվում էին միայն մուսուլմաններին: Դատական ամբողջ համակարգը տնօրինում էին մուսուլման հոգևորականները, և գործում էր մուսուլմանական իրավունքը՝ **շարիաթը**: Մուսուլմանական կրոնին պատկանելը տալիս էր արտոնություններ, մասնավորապես՝ հարկային, և հնդիկների մի մասն ընդունեց իսլամը: Փոփոխություններ կատարվեցին նաև հողային սեփականության ձևերի մեջ: Ի հաշիվ տեղական անհնազանդ ավատատերերի հողերի բռնագրավման՝ ընդարձակվեցին պետական հողերը: Սրանց մի մասը փոքր և խոշոր հողաբաժիններով տրվում էր պետական ծառայության ղիմաց: Հողի մասնավոր սեփականատերեր էին մզկիթները, տաճարները, պալատական ծառայողները, առանձին հողատերեր և առևտրականներ:

Դեկիի սուլթանության վերջին տարիներին սկսվեց եվրոպացիների ներթափանցումը Հնդկաստան: 1498 թ.

պորտուգալացիները Վասկո դա Գամայի առաջնորդությամբ ափ իջան Արևմտյան Հնդկաստանի Կալիկութ նավահանգստում: Շուտով նրանք գրավեցին Գոյա կղզին և այն դարձրին հենակետ Հնդկաստանը նվաճելու համար:

Միջնադարյան Հնդկաստանում ստեղծված վերջին հզոր պետությունը **Մեծ Մողոլի կայսրությունն** էր: Օգտվելով Դեկիի սուլթանության տրոհումից՝ Հնդկաստան արշավեց Բարուլի կառավարիչը՝ Լենկ Թեմուրի թոռ **Բարուրը**: 1526 թ. Փանիպատի ճակատամարտում նա պարտության մատնեց Դեկիի սուլթանության գորքերին և հիմնադրեց **Մեծ Մողոլի կայսրությունը**: Այն ներառում էր Հյուսիսային Հնդկաստանը, Աֆղանստանի մի մասը և որոշ տարածքներ Միջին ու Հարավային Հնդկաստանում:

Նորաստեղծ տերությունն իր հզորության գագաթնակետին հասավ փառիշահ **Աքբարի** կառավարման ժամանակ (1556–1605): Նա մայրաքաղաքը Դեկիից տեղափոխեց **Ագրա**: Պետության ամրապնդման համար Աքբարն անցկացրեց մի շարք բարեփոխումներ, որոնցից կարևորը հարկայինն էր: Հարկերի չափերը ճշտելու նպատակով անցկացվեց հողերի ցուցակագրում, որոշվեց հողի որակը և մշակվող

տարածքի չափերը: Բնամթերային հարկի փոխարեն մտցվեց դրամական հարկ:

Աքբարը 1589 թ. անցկացրեց կրոնական բարեփոխում: Միապետական իշխանությունն ամրապնդելու և կրոնական տարաձայնություններին վերջ տալու նպատակով նա փորձեց իսլամը և հինդուիզմը միացնել ու ստեղծել «աստվածային մեկ հավատք»: Սակայն նրա ստեղծած «աստվածային հավատքն» ընդունվեց միայն արքունիքում: Կրոնական բարեփոխման հետևանքը, սակայն, հետագայում *հինդուիստանական մշակույթի* ձևավորումն էր:

Աքբարն անցկացրեց նաև վարչական բարեփոխում: Տեղական կառավարումն ամրապնդելու համար նա երկիրը բաժանեց 15 մարզերի: Աքբարի մահից հետո Մեծ Մողոլի կայսրությունն սկսեց թուլանալ և անկում ապրել:

Միջնադարյան Հնդկաստանում ստեղծված երեք խոշոր պետությունների պետական կարգերը հիմնականում միանման էին: Պետության գլուխ կանգնած էր միապետը, որի իշխանությունը ժառանգական էր, փոխանցվում էր հորից որդուն: Միապետն ուներ օրենսդիր, ռազմական, ֆինանսական և դատական բարձրագույն իշխանություն: Նրան կից գոյություն ուներ արքունի խորհուրդ, որի մեջ մտնում էին աշխարհիկ խոշոր հողատերերը և բարձրաստիճան քրմերը: Վարչական, ռազմական և հարկային կառավարման գործը հեշտացնելու համար պետությունը բաժանված էր մարզերի, շրջանների և գյուղերի: Մարզերի կառավարիչ փոխարքաներին նշանակում էր միապետը՝ նրանց ընտրելով կառավարող արքայատան անդամներից: Շրջանները կառավարում էին տեղական ավատատիրական տոհմերի ներկայացուցիչները:

Միջնադարյան Հնդկաստանի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ հասարակությունը բաժանված էր թվով *չորս կաստաների* (դասեր): Կաստան մարդկանց միավորում էր ըստ զբաղմունքի տեսակի, որը գրավոր և սովորության զրկված ամրագրված էր որպես ժառանգական: Մի կաստայից մյուսին անցումը, ինչպես նաև ամուսնությունները տարբեր կաստաների միջև արգելված էին: Մարդու պատկանելությունը կաստային որոշվում էր ծնունդով և ցմահ էր:

Մշակույթը: Հնդկաստանում ողջ միջնադարի ընթացքում պահպանվեց հեթանոսական կրոնը՝ *հինդուիզմը*: Չնայած առաջացավ միաստվածային կրոն՝ բուդդայականություն, սակայն միասնական պետականության և մշակույթի բացակայության ու օտարերկրյա տիրապետության պայմաններում այն չդարձավ տիրապետող: Տիրապետողը հինդուիզմն էր, որը վերափոխվեց և հարմարեցվեց ավատատիրական հասարակության պայմաններին: Այն իր մեջ ներառում էր ամենատարբեր հավատալիքներ և սովորույթներ: Հինդուիզմի դիցարանը գլխավորում էին երեք գերագույն աստվածներ՝ Բրահման՝ աշխարհի արարիչը, Վիշնուն՝ աշխարհի պահապանը, և Շիվան՝ բնության ուժերը մարմնավորողը:

Միջնադարյան Հնդկաստանի մյուս կարևոր առանձնահատկությունը միասնական մշակույթի բացակայությունն էր: Հինդուիզմի, իսլամի, բուդդայականության առկայության, ինչպես նաև միասնական պետականության բացակայության պայմաններում ստեղծվեցին մշակութային մի քանի տիպեր՝ *հինդուիստանական և հինդուիստանական*:

Հնդկական մշակույթում առանձնահատուկ տեղ էր գրավում զեղարվեստական գրականությունը, որի հիմնական թեման առասպելներն ու ավանդույթներն էին: V դ. նշանավոր գրողներից էր **Կալիդասան**, որի ստեղծագործությունները նվիրված էին բնությանը և ժողովրդի կյանքին ու կենցաղին: Միջնադարյան Հնդկաստանի ամենանշանավոր բանաստեղծը, որն ապրում և ստեղծագործում էր Աքբարի արքունիքում, **Թուլսի Դասն** էր: Հնդկական էպոսի թեմաներով տասը գրքից բաղկացած նրա «Ռամայանա» պոեմն այնպիսի ժողովրդականություն էր վայելում, որ կարդում էին հանդիսավոր արարողությունների և տոնակատարությունների ժամանակ:

Զգալի զարգացում ապրեց նաև պատմագրությունը: Արքունական ժամանակագիրները գրի էին առնում իրենց ժամանակաշրջանի կարևոր դեպքերը և իրադարձությունները: Դրանց մեջ հատկապես աչքի է ընկնում **Աբուլ-Ֆազլի** «Աքբար Նամե» ժամանակագրությունը: Այստեղ, բացի իրադարձությունների նկարագրություններից, բերված են բնագիր փաստաթղթեր, ինչպես նաև տեղեկություններ հարկերի և աշխատավարձերի մասին:

Հնդկաստանի միջնադարյան մշակույթում մեծ վերելք էին ապրում հատկապես ճարտարապետությունը, քանդակագործությունը, կերպարվեստը: Գուպտաների արքայից արքաները, Դելիի սուլթանները, Մեծ Մողոլի շահերը և

բազմաթիվ արքայիկներ կառուցում էին տաճարներ, մզկիթներ, մզկիթ-դամբարաններ, պալատներ, ամրոցներ, քաղաքներ: Նշանավոր կառույցների ներսի պատերը, առաստաղները, հատակները զարդարված էին որմնանկարներով և խճանկարներով, իսկ դրսի պատերը՝ քանդակներով: Արևելքի ճարտարապետության գլուխգործոցը շահ **Ջահանի** (1627–1658) հրամանով Ագրայում կառուցված **Թաջ-Մահալ** մզկիթ-դամբարանն է՝ ի հիշատակ մահացած կնոջ: Շահ Ջահանի հրամանով կառուցված փառահեղ մյուս հուշարձանը **Դելիի մզկիթն** է: Այն նույնպես կառուցված է ճերմակ մարմարից, բայց կարմիր մինարեթներով: Այն հայտնի է **Մարգարոյա (Ջամին) մզկիթ** անունով: Մզկիթն ապշեցնում է ոչ միայն իր ճարտարապետական լուծումներով, այլև չափերով: Այն իր օժանդակ շինություններով կարող է ներսում տեղավորել մինչև հարյուր հազար մարդ:

Հնդկական մշակույթում լայն տարածում գտավ նաև մանրանկարչությունը: Կրոնական և առասպելական թեմաներից բացի, մանրանկարիչները պատկերում էին նաև տեսարաններ, որոնք վերցնում էին հնդկական բնությունից և կենցաղից: Աքբարի արքունիքում էին աշխատում և ստեղծագործում նշանավոր մանրանկարիչներ **Բաստփան և Դասփանսաթը**:

Մեծ Մողոլի տերության անկումը, եվրոպացիների ներթափանցումը և Հնդկաստանի գաղութացումը հանգեցրին հնդկական մշակույթի անկմանը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Հնդկաստանի սոցիալական միջավայրը: Ի՞նչ ձևերով էր հանդես գալիս հողի ավատատիրական սեփականությունը Հնդկաստանում:

2. Ինչո՞ւ միջնադարյան Հնդկաստանում միասնական պետություն չառաջացավ: Միջնադարում ի՞նչ տերություններ են ստեղծվել Հնդկաստանի տարածքում: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Աքբար փառիշահը:
3. Ի՞նչ կաստաներում էր ընդգրկված հնդկական հասարակությունը: Ինչպե՞ս էր որոշվում կաստայական պատկանելությունը:
4. Կրոնական ի՞նչ ուղղություններ էին տարածված Հնդկաստանում: Մշակութային ի՞նչ տիպեր ստեղծվեցին: Ինչո՞վ էր պայմանավորված մշակութային բազմազանությունը Հնդկաստանում: Համառոտ ներկայացրե՞ք հնդկական մշակույթի հիմնական ուղղությունները, գործիչներին, ստեղծագործությունները:

§ 2. ՉԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: II–III դարերում Չինաստանում սկսում են ձևավորվել ավատատիրական հարաբերություններ, և դանդաղորեն վերափոխվում են հասարակության սոցիալական կազմակերպման ձևերը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորման ժամանակ հողի սեփականության խնդրի շուրջ առաջացան երկու հակադիր ուղղություններ:

Նախկին խոշոր հողատերերը աշխատում էին իրենց պատկանող ամբողջ հողը դարձնել մասնավոր սեփականություն, իսկ պետությունը փորձում էր պահպանել հողի գերագույն սեփականության իրավունքը: Այս պայքարը միջնադարյան Չինաստանի սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկություններից մեկն է: Հողի նկատմամբ պետական սեփականության իրավունքը պահպանելու համար անցկացվեցին հողային բարեփոխումներ, որոնք ստացան **հավասար դաշտեր** անվանումը: Յուրաքանչյուր աշխատունակ տղամարդ պետք է ունենար 40 մու (մու՝ հողաքաժին, որը հավասար է 0,06 հեկտարի), իսկ կինը, եթե համարվում էր ընտանիքի գլխավոր՝ 20 մու հողաքաժին: Ժամանակի ընթացքում հողաքաժնի չափերը փոխվում էին:

Տղա երեխա ծնվելու պահից նրան հասնում էր սահմանված չափի հողաքաժին:

Հողաքաժինները և հարկերը պետությունը կարգավորում էր համայնքի միջոցով: Ամենափոքր համայնքը բաղկացած էր 5–10 գյուղացիական ընտանիքներից: Այսպիսի մի քանի համայնքներ միավորվում էին ավելի մեծ համայնքի մեջ:

Խոշոր հողատիրության աճը կանխելու նպատակով պետությունը սովորաբար սահմանափակում էր դրանց չափերը: Այսպես՝ խոշոր ավատատերը իրավունք ուներ ունենալու 10 000 մու հող, իսկ մանր ավատատերը՝ մինչև 500 մու: Այս հողերը համարվում էին ժառանգական:

Չինաստանի ավատատիրական հասարակությունը բաղկացած էր սոցիալական տարբեր խմբերից, սակայն բոլորն ունեին նույն պուզերենը՝ պետությունը, որն անձնավորված էր կայսերական իշխանության մեջ: Ավատատիրական դասակարգի ներսում սենյոր–վասալ սոցիալական աստիճանակարգությունը, ինչը կար Արևմտյան Եվրոպայում, գոյություն չուներ: Սոցիալական **բարձրագույն խումբը** կազմում էին տիտղոսավոր ավատատերերը, որոնք մասնավոր սեփականության իրավունքով տիրում էին համեմատաբար խոշոր հողատարածքների: Այդ ավատատերերը բաժանվում էին ինը

ենթախմբերի և սովորաբար պաշտոններ չէին զբաղեցնում: *Երկրորդ խումբը* ներառում էր պետական պաշտոններ զբաղեցնող ավատատերերին: Նրանք մասնավոր սեփականության իրավունքով տնօրինում էին փոքր հողաբաժինների, սակայն պաշտոնին համապատասխան եկամուտներ էին ստանում: Սրանք ևս բաժանվում էին ինը ենթախմբերի: Սոցիալական *երրորդ խումբը*, որ կոչվում էր «բարի ժողովուրդ», բաղկացած էր գյուղացիներից, արհեստավորներից և առևտրականներից: Վերջին խումբը՝ «էժանագին ժողովուրդ», ներառում էր ստրուկներին, օրավարձու աշխատողներին: Սրանք հարկեր չէին վճարում:

Քաղաքական միջախայրի կազմակերպումը: Չինաստանում, ինչպես և Հնդկաստանում, համաչինական պետություն չձևավորվեց: Երկրի բնակլիմայական պայմաններից կախված՝ չինական հասարակությունը զարգացման տարբեր աստիճանների վրա էր: Այդ բոլորի միավորումը մեկ պետության մեջ բարդ խնդիր էր: Մյուս կողմից՝ հյուսիսից Չինաստանն անընդհատ ենթարկվում էր քոչվորական ցեղերի հարձակումներին:

Չինաստանում ստեղծվեցին մի քանի պետական կազմավորումներ, որոնց երբեմն հաջողվում էր միավորել երկիրը, սակայն դրանց գոյությունը կարճատև էր:

II դ. վերջին և III դ. սկզբին Հան կայսրությունն անկում ապրեց: Առաջացան երեք անկախ թագավորություններ: Օգտվելով դրանից՝ Չինական պարսպից հյուսիս ապրող քոչվորներն սկսեցին արշավել Չինաստան: Նրանց մի մասը բնակություն հաստատեց երկրի հյուսիսում, որի պատճառով Չինաստանը բաժանվեց երկու մասի՝ Հյուսիսային և Հարավային: 581 թ. գորավար *Յանը* Չինաստանի հյու-

սիսում գահընկեց արեց կայսրին: Նոր պետությունը ստացավ *Սույ* անվանումը: 589 թ. նա իրեն ենթարկեց նաև երկրի հարավը և իրեն հռչակեց համաչինական կայսր: Իսկ 618 թ. Չինաստանում հաստատվեց *Տան* արքայատոհմը:

Սույ, Տան, ապա Սուն արքայատոհմերի կառավարման ժամանակաշրջանում Չինաստանում ձևավորվեց ավատատիրական միապետություն: Գերագույն իշխանությունը կայսեր ձեռքին էր, որն օժտված էր անսահմանափակ իրավունքներով և կրում էր «երկնքի որդի» տիտղոսը: Կայսրին կից գոյություն ուներ կայսերական խորհուրդ, որի մեջ մտնում էին նրա ազգականները և ազդեցիկ պաշտոնյաները:

Կայսրության գործադիր իշխանությունը կենտրոնացված էր արքունիքում: Ստեղծվել էին նաև բազմաթիվ գերատեսչություններ՝ հարկային, ծիսակատարությունների, ռազմական, դատական և այլն: Մայրաքաղաքում գոյություն ունեին պալատական վարչություններ կայսեր ընտանիքին, պալատական շինություններին, հարեմներին, գանձարանին սպասարկելու համար: Կար նաև վերահսկիչ տեսուչների պալատ, որը վերահսկում էր գործադիր իշխանության գործունեությունը: Պաշտոնի նշանակման գլխավոր սկզբունքը ոչ թե ծագումն էր, այլ քննություններ հանձնելը և գիտական աստիճան ստանալը: Կրթության բարձրագույն աստիճան և առաջին կարգի պաշտոն ստանալու համար թեկնածուն պարտավոր էր քննություն հանձնել արքունիքում:

Տան կայսրության օրոք երկիրը բաժանվեց տասը մարզերի: Յուրաքանչյուր մարզ ներառում էր մի քանի նահանգներ, իսկ վերջիններս՝ գավառներ: Վարչական ստորին աստիճանը համայնքն էր: Երկրի

կառավարումն իրականացնում էր շուրջ 25 հազար մարդ:

X–XIII դդ. Չինաստանում ապրում էր շուրջ 80–100 մլն մարդ:

Երկրի հետագա զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցան մոնղոլական արշավանքները և մոնղոլական տիրապետության հաստատումը: 1215 թ. մոնղոլները Չինգիզ խանի գլխավորությամբ գրավեցին Պեկին քաղաքը, սակայն Չինաստանի նվաճումը ձգձգվեց և շարունակվեց շուրջ 70 տարի: 1280 թ. Չինգիզ խանի թոռ *խուբիլայ Մեծ խանը* նվաճեց ողջ Չինաստանը և իրեն հռչակեց համաչինական կայսր: Նա մոնղոլական տերության մայրաքաղաքը տեղափոխեց Պեկին: Մոնղոլական արքայատոհմն ստացավ *Յուան* անվանումը: Մոնղոլները բնակչությանը բաժանեցին չորս խմբերի: Առաջին խմբի մեջ մտնում էին մոնղոլները, որոնք համարվում էին արտոնյալ բնակիչներ: Նրանց համար գոյություն ունեին առանձին օրենքներ և դատարաններ: Երկրորդ խմբի մեջ մտնում էին օտարերկրացիները (մուսուլմաններ և եվրոպացիներ): Երրորդը ներառում էր Հյուսիսային Չինաստանի, իսկ չորրորդ խումբը՝ Հարավային Չինաստանի բնակիչներին: Մոնղոլներն իրենց տիրապետությունը պահպանում էին զենքի ուժով: Յուրաքանչյուր քաղաքում կար մոնղոլական կայսրոս:

Մոնղոլական ծանր լծի և ազգային բռնաճնշումների հետևանքով Չինաստանում սկսվեց հակամոնղոլական շարժում, որը վերածվեց ապստամբության: Այն գլխավորում էր կրոնավոր *Չժու Յուանչժանը (Տայցու): 1368 թ.* ապստամբները գրավեցին Պեկինը: Չժու Յուանչժանն իրեն հռչակեց կայսր և դարձավ *Մին* կայսրության հիմնադիր: Նա բռնազրա-

վեց մոնղոլական ավատատերերի և իր հակառակորդների հողերն ու բաժանեց գյուղացիներին: Պաշտոնյաների գործունեությունը վերահսկելու համար նա ստեղծեց գաղտնի ոստիկանություն: Վերջինս շուրջ 100 հազար մարդու մեղադրեց կաշառակերության ու դավաճանության մեջ և մահապատժի ենթարկեց:

Մին կայսրության շրջանում դեպի Արևմուտք տանող առևտրական ճանապարհները մոնղոլական և քոչվորական այլ ցեղերի կրկնվող արշավանքների պատճառով վտանգավոր էին դարձել: Այդ ժամանակ չինացիները որոշեցին Արևմուտք հասնել Հնդկական օվկիանոսով: 1405–1430 թթ. չինական նավատորմը 7 նավարկություն կատարեց Հնդկական օվկիանոսով և հասավ Հյուսիսարևելյան Աֆրիկայի ափերը:

XVI դ. սկսվեց եվրոպացիների ներթափանցումը Չինաստան: Պորտուգալացիները գրավեցին հարավչինական *Մակաո* կղզին և այն հենակետ դարձրին Չինաստանը նվաճելու համար:

Մինների կառավարման վերջին շրջանում իրավիճակը խիստ լարվել էր: Հարկերի աճը և արքունիքի վիթխարի ծախսերը քայքայել էին երկիրը: Չինաստանը հայտնվել էր սոցիալական ճգնաժամի մեջ: Ծանր էր նաև արտաքին իրավիճակը: Երկար ժամանակ Չինաստանն անհաջող պատերազմներ էր մղում մոնղոլների, մանջուրների և ճապոնացիների դեմ: Երկրում սկսվեց գյուղացիական պատերազմ: Օգտվելով դրանից՝ մանջուրական ցեղերը գրավեցին Չինաստանը և 1644 թ. հիմնադրեցին *Ցին* արքայատոհմը, որը երկիրը կառավարեց մինչև 1912 թ.:

Մշակույթը: Միջնադարում Չինաստանում չձևավորվեց միասնական պետական կրոն, որն իր ազդեցությունը թողեց

չինական մշակույթի վրա: Իր դերը կորցնում էր նաև կոնֆուցիականությունը, սակայն այն որոշակի վերափոխումներ կրեց: Կորցնելով իր կրոնապաշտամունքային նշանակությունը՝ այն պահպանեց դիրքերը կրթության, ռազմական արվեստի և քաղաքական գաղափարախոսության բնագավառներում:

Չինաստանում լայնորեն տարածվեց բուդդայականությունը, որն այստեղ ներթափանցեց Հնդկաստանից: Այն արագորեն հարմարվեց նոր պայմաններին և իր մեջ ներառեց տեղական որոշ ծիսակատարություններ: Ջուտ չինական երևույթ էր դառնականությունը, որը, սակայն, լայն տարածում չգտավ:

Չինաստանում մեծ վերելք ապրեց կրթական համակարգը: Բացվեցին պետական և մասնավոր բազմաթիվ դպրոցներ: Մայրաքաղաքում բացվեց նաև ակադեմիա: XI դ. ակադեմիաներ հիմնվեցին նաև խոշոր քաղաքներում: Ակադեմիայում աշխատող գիտնականներն աշխատություններ էին գրում աշխարհագրության, կենսաբանության, բժշկության, պատմության, քիմիայի և աստղաբաշխության վերաբերյալ: Դեռևս VIII դ. արքունիքում սկսեցին թերթ հրատարակել, որտեղ տպագրում էին կայսեր հրամանները:

Չինաստանում բարձր զարգացման հասավ պատմագրությունը: Պետական պաշտոն ստանալու համար թեկնածուն քննություն էր հանձնում նաև պատմությունից: Քաղաքական գործիչները երկրի կառավարման վերաբերյալ իրենց տե-

սակետներն արտահայտելու համար սովորաբար դիմում էին անցյալին: Նշանավոր պատմագիրներից էր *Օույան Սյունը* (1007–1072): Հայտնի են նրա «Հինգ արքայատոհմերի նոր պատմություն» և «Տան արքայատոհմի նոր պատմություն» աշխատությունները: Մյուս նշանավոր պատմագիրը *Սինս Գուանն* էր (1019–1086): Նրա ղեկավարությամբ չինացի պատմաբաններն ստեղծեցին «Կառավարմանն օգնող մեծ հայելի» պատմական աշխատությունը, որի մեջ ժամանակագրական սկզբունքով շարադրված է Չինաստանի պատմությունը:

Կատարվեցին մի շարք գյուտեր, որոնք առաջինն էին մարդկության պատմության մեջ: Դրանցից ամենակարևորը *տպագրության* գյուտն էր (VIII դ.): Հիերոգլիֆները փորագրում էին տախտակի վրա, ապա թանաք էին քսում և մի թերթ թուղթ դնում տպագրելու համար: Այս եղանակով նրանք 21 տարվա ընթացքում տպագրեցին կոնֆուցիական փիլիսոփաների 130 հատոր աշխատություններ: Չինաստանում կատարված նշանավոր գյուտերից էին կողմնացույցը, լուցկին, հեծանիվի շարժական շղթան: Չինացիների կատարած մյուս կարևոր նվաճումը վառողի գյուտն էր, որի հիման վրա **1288 թ.** հնարեցին թնդանոթը: Մանջուրական տիրապետության և եվրոպական գաղութային համակարգի հաստատումից հետո չինական մշակույթը սկսեց անկում ապրել:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ են Չինաստանում ձևավորվել ավատատիրական հարաբերությունները: Ո՞րն էր միջնադարյան Չինաստանի սոցիալական միջավայրի կազմակերպման գլխավոր առանձնահատկությունը: Սոցիալական ինչ խմբերից էր բաղկացած չինական ավատատիրական հասարակությունը:

2. Որո՞նք էին Չինաստանի միավորմանը խոչընդոտող ներքին և արտաքին գործոնները: Թվարկե՛ք Չինաստանում գոյություն ունեցած կայսրությունները: Ի՞նչ հետևանքներ թողեց մոնղոլական տիրապետությունը: Ե՞րբ հիմնադրվեց Ցին կայսրությունը:
3. Չինաստանում որ կրոնական ուղղություններն էին տիրապետող:
4. Համառոտ ներկայացրե՛ք չինական մշակույթի զարգացման հիմնական ուղղությունները, գործիչներին, ստեղծագործությունները: Ի՞նչ կարևոր գյուտեր կատարվեցին միջնադարյան Չինաստանում:

§ 3. ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորման նախօրյակին ճապոնական հասարակությունը տոհմացեղային կարգերի քայքայման եզրին էր: Ավատատիրական հողային սեփականության ձևավորումը տեղի էր ունենում հողաբաժնային համակարգի պայմաններում: Ամբողջ հողը համարվում էր պետության սեփականությունը, որի ներկայացուցիչը կայսրն էր: Գյուղացիական ընտանիքն օգտագործման համար իր անդամների թվին համապատասխան վարելահող էր ստանում: Հողը տրվում էր վեց տարեկանից: Տղամարդուն հասնում էր երկու *տան* (մեկ տանը հավասար էր 0,12 հեկտարի), իսկ կնոջը՝ դրա 2/3 մասը: Երկրագործությամբ զբաղվող գյուղացիները ստացել էին «բարի ժողովուրդ» անունը: Գյուղացիական ընտանիքը պարտավոր էր հացահատիկի հարկ վճարել և տնայնագործական գործվածքներ հանձնել: Սրանցից բացի, գյուղացին պարտավոր էր տարվա ընթացքում 100 օր ձրի աշխատել պետության համար:

Տոհմացեղային ավագանու հարստացած անդամները նույնպես հողաբաժիններ էին ստանում, և դրանց չափը կախված էր զբաղեցրած պաշտոնից: Տիրոջավոր պաշտոնյայի հողաբաժինը շուրջ 40 անգամ ավելի էր, քան գյուղացու հողաբաժինը: Պաշտոնի համար հողա-

բաժին տրվում էր պաշտոնավարության ժամկետի ընթացքում, իսկ տիրոջի համար՝ ցմահ: Այսպես նախկին տոհմացեղային ավագանուց և արքունիքին մոտ կանգնած մարդկանցից ձևավորվում էր ավատատերերի դասակարգը:

Ճապոնիայում ավատատիրական տիպի հողատիրությունն առաջանում էր երկու ճանապարհով: Առաջին դեպքում կայսրը կամ առանձին խոշոր հողատերեր ծառայության դիմաց ցմահ օգտագործման կամ մասնավոր սեփականության իրավունքով հող էին տրամադրում: Մյուս դեպքում պետությունը թույլատրում էր, որ մասնավոր սեփականության իրավունքով մշակեն խոպան և լքյալ հողերը:

Ավատատիրական հողատիրության զարգացմանը զուգահեռ հողաբաժնային համակարգը քայքայվում էր: Ավատատերերն իրենց ստացած հողաբաժնի մի մասը վերածում էին ավատի, որը ժառանգաբար անցնում էր հորից որդուն: Սրա հիման վրա ավատատիրական դասի ներսում ձևավորվեցին երեք խմբեր՝ արքունի, նահանգական և գավառական:

Միջնադարյան Ճապոնիայի զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկը առանձին *նազմական դասի* կազմավորումն էր: Հողի և իշխանության համար հաճախ մղվող երկպառակցական պատերազմների ժամանակ խոշոր հողատերերն ստիպված էին պահել մշտական

զինված ուժեր, որը վերածվեց ռազմական փակ դասի և ստացավ *սամուրայներ* անունը: Ռազմական ծառայության դիմաց սամուրայը հողաթաժին էր ստանում: Սամուրայների շրջանում ձևավորվեցին զինվորական էթիկայի կանոններ, որոնց գլխավոր գաղափարը տիրոջ նկատմամբ հավատարմությունն էր: Սամուրայը պատրաստ էր կյանքը զոհելու հանուն տիրոջ: Սամուրայները մշակեցին նաև ինքնասպանության ազգային ձևը՝ *սեպպուկան* (խարակիրի), երբ տիրոջը անհավատարիմ լինելու համար կամ տիրոջ մահից հետո սամուրայն ինքնասպանություն էր գործում:

Քաղաքական կազմակերպման միջավայրը: Ճապոնական հասարակությունը բաղկացած էր արյունակցական կլաններից, որոնցից յուրաքանչյուրն իր գրադեցրած տարածքում անկախ էր: Կլանը բաղկացած էր առաջնորդից, քրմերից, ստորին վարչական պաշտոնյաներից և շարքային անդամներից: Կլանից դուրս գտնվում էին կիսազատները և ստրուկները, որոնք աշխատում էին կլանի համար: III դ. Ճապոնիայում սկսեցին ձևավորվել ցեղային միություններ, որոնցից *յամատո ցեղն* իրեն ենթարկեց Հոնայու կղզու բոլոր ցեղերին և ստեղծեց համացեղային խոշոր միություն: Հասարակության կլանային կառուցվածքն իր ազդեցությունը թողեց ձևավորվող ավատատիրական պետության վրա: Ձևավորվեց կլանային աստիճանակարգություն, երբ աստիճաններից յուրաքանչյուրի վրա գտնվող կլանն իր ձեռքում էր կենտրոնացնում իշխանության որևէ բնագավառ: Այսպես՝ կայսերական իշխանությունը մի կլանի ձեռքում էր, մեկ այլ կլան կառավարում էր քրմերին, մեկ ուրիշը՝ բանակը: Այս ամենի արդյունքում իրական իշխանություն

ընդ ոչ թե կայսեր, այլ ամենաուժեղ կլանի ձեռքում էր: Այսպես՝ 563–645 թթ. իրական իշխանությունը *Սոգու* կլանի ձեռքում էր, որն ընտրում էր կայսրին և կառավարում էր երկիրը:

Նորաստեղծ պետության կարևոր խնդիրն էր միավորել երկիրը և ստեղծել կառավարման միասնական համակարգ: Վերջին խնդրի լուծման համար **604 թ.** ընդունվեց օրենքների ժողովածու, որը պետք է կարգավորեր պետության իրավահարաբերությունները: Պետության հետագա ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցավ բուդդայականության ընդունումը որպես պետական կրոն:

645 թ. իշխանությունն անցավ *Սումերասգի* կլանի ձեռքը: Նույն թվականին տեղի ունեցավ իրադարձություն, որը հայտնի է «*Տայկասի հեղաշրջում*» անունով: Ուժեղ պետական իշխանության ստեղծման հետևանքով անցկացվեցին բարեփոխումներ: Երկրի կառավարման բարձրագույն մարմինը կայսրին կից գործող *Պետական խորհուրդն* էր: Երկիրը բաժանված էր նահանգների, իսկ սրանք էլ իրենց հերթին՝ գավառների: Տեղերում կառավարումն իրականացնում էին նահանգապետները, գավառապետները և գյուղի ավագները:

XII դ. իշխանության համար պայքարում հաղթանակ տարավ *Մինամոտո* կլանը, և կայսրը *Յոդիտուն Մինամոտոյին* տվեց *սյոգունի*՝ ռազմական առաջնորդի տիտղոս: Մինամոտոները երկիրը կառավարեցին մինչև 1335 թ.: Կառավարման այս ձևը ստացավ *սյոգունություն* անվանումը: Կայսերական իշխանությունը պահպանվում էր, սակայն երկիրը փաստացի կառավարում էին սյոգունները:

1274 թ. Խուբիլայ Մեծ խանը Ճապոնիան նվաճելու համար նավատորմ ուղար-

կեց, որոնք մոտեցան Կյուայու կղզուն, սակայն ուժեղ թայֆունը ստիպեց մոնղոլներին նահանջել: **1281 թ.** մոնղոլական 150-հազարանոց բանակն ափ իջավ Կյուայու կղզում: Հիսուն օր տևած մարտերից հետո մի ուժեղ թայֆուն խորտակեց մոնղոլների նավերի մի մասը, և նրանք կրկին նահանջեցին: Ճապոնացիները թայֆունը անվանեցին *կամիկաձե* (աստվածային քամի): Մոնղոլներին այդպես էլ չհաջողվեց գրավել Ճապոնիան:

Երկրորդ՝ *Ասիկագայի սյոգունությունն* առաջացավ 1335 թ.: Շուտով երկիրը բաժանվեց մի քանի ավատատիրական իշխանությունների, որոնց տիրակալներին անվանում էին թագավորներ: Պետության վերամիավորման նախաձեռնությամբ հանդես եկան Հոնայու կղզու բնակիչները: Օդա Նորունագան 1573 թ. տապալեց Ասիկագա կլանի վերջին սյոգունին և իրեն ենթարկեց Հոնայու կղզու խոշոր հողատերերին՝ *դաիմյոներին*: Բուդդայական վանքերի տնտեսական հզորությունը թուլացնելու նպատակով Նորունագան սկսեց հովանավորել քրիստոնեությունը: Այդ ժամանակ Ճապոնիայում կար շուրջ 150 հազար քրիստոնյա, 200 վանք և 5 դպրոց: Սակայն նրա հաջորդներն արգելեցին քրիստոնեության տարածումը, փակեցին վանքերը և սկսեցին հալածել քրիստոնյաներին: Օդայի հաջորդներից *Տոկուգավան 1603 թ.* իրեն հռչակեց սյոգուն, և Ճապոնիայում հաստատվեց Տոկուգավայի սյոգունությունը:

Տոկուգավայի սյոգունության շրջանում ավարտվեց հասարակության դասային կառուցվածքի ձևավորումը: Դրանք էին սամուրայները՝ միջին և մանր հողատերեր, գյուղացիները, առևտրականները և արհեստավորները: Խոշոր հողատերերը՝ դաիմյոները, որոնց թիվը հասնում էր

շուրջ 200-ի, սյոգունի հետ կազմում էին տիրապետող խավը: Տոկուգավայի սյոգունները հատուկ քաղաքականություն էին վարում օտարերկրացիների, մասնավորապես եվրոպացիների նկատմամբ: Վախենալով, որ քրիստոնեության հետագա տարածումը կխախտի հասարակության ներքին միասնությունը, **1612 թ.** այն օրենքից դուրս հայտարարվեց, և փակվեցին քրիստոնեական բոլոր վանքերը: Մահապատժի սպառնալիքի տակ ճապոնացիներին արգելվում էր թողնել երկիրը, ինչպես նաև նավեր կառուցել հեռավոր նավարկության համար: Արգելվեց նաև օտարերկրացիների մուտքը Ճապոնիա: Բացառություն արվեց միայն չինացիներին և հոլանդացիներին, սակայն պայմանով, որ նրանց նավերը կայանեն միայն Նագասակի նավահանգստում: Այսպես Ճապոնիան ինքնամեկուսացվեց արտաքին աշխարհից:

Մշակույթը: Ճապոնական կղզիներում, բացի տեղաբնիկներից, ապրում էին վերաբնակիչներ Չինաստանից, Կորեայից և Հարավարևելյան Ասիայից: Միջնադարում Ճապոնիան հաճախ ինքնամեկուսանում էր արտաքին աշխարհից: Այս ամենի արդյունքում Ճապոնիայում ձևավորվեց ազգային յուրօրինակ մշակույթ: Ճապոնական մշակույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցավ նրանց կրոնը՝ *սինտոիզմը*, ինչպես նաև բուդդայականությունը և կոնֆուցիականությունը: Սինտոիզմի հիմքում ընկած էին բնության ուժերի աստվածացումը և նախնիների պաշտամունքը: Հետագայում այն ներառեց դաոսականության, կոնֆուցիականության և բուդդայականության որոշ հատկանիշներ: Այն իր հետքը թողեց գեղարվեստական գրականության, առասպելաբանության և պատմագրության

գարգացման վրա: Բուդդայականությունը Ճապոնիա բերեցին չինացի և կորեացի վերաբնակիչները VI դարում: Արդեն 624 թ. Ճապոնիայում կար շուրջ 46 բուդդայական տաճար:

Ճապոնական մշակույթի գարգացման համար մեծ նշանակություն ունեցավ սեփական գրի՝ *հիրագանա* կոչվող հին-բուդդիստների ստեղծումը: Մինչ այդ պաշտոնական գրագրությունը չինարեն էր: Պետության ձևավորմանը զուգահեռ անհրաժեշտություն առաջացավ գրի առնելու երկրի պատմությունը: Տարեգրությունների առաջին երկու ժողովածուները ստեղծվեցին VIII դ.:

Միջնադարյան Ճապոնիայում մեծ գարգացում ապրեցին ճարտարապետությունը և քանդակագործությունը: Այստեղ մեծ էր չինական մշակույթի ազդեցությունը: Ճապոնական քաղաքները ևս կառուցում էին չինական քաղաքաշինության սկզբունքներով: Այս սկզբունքով **710 թ.** կառուցվեց առաջին մշտական մայրաքաղաք *Նասան*: Քաղաքի կենտրոնում պալատական թաղամասն էր, ուր գտնվում էին կայսերական պալատական շինությունները և հասարակական շենքերը: Պալատական թաղամասը և դրանից դուրս գտնվող հիմնական քաղաքն ամբողջովին պարսպապատված էին և ունեին մի քանի դարպասներ: Նարայում կային յոթ բուդդայական վանքեր, որոնց մեջ գլխավորը «*Օրենքի հաղթանակի*» տաճարն



Յակուչի-ջի բուդդայական տաճարը Նարայում

էր: Սա մեզ հայտնի փայտե տաճարային ճարտարապետության ամենահին հուշարձանն է: Բարձր գարգացման հասավ նաև քանդակագործությունը: Նշանավոր է մայրաքաղաք Նարայի վանքերից մեկում գտնվող Բուդդայի՝ բրոնզից ձուլված ոսկեգոծ արձանը: Արձանի բարձրությունը մոտ 16 մ է, իսկ պատվանդանինը՝ 7 մ:

Ճապոնական մշակույթում իր ուրույն տեղն ունի թատրոնը, մասնավորապես՝ *Կարուկի թատրոնը*: Սկզբում որպես դերասաններ խաղում էին միայն կանայք, իսկ հետագայում՝ նաև տղամարդիկ: Այն սկիզբ էր առել թափառաշրջիկ ասմունքողների, պարողների և երգողների կատարումներից: Կարուկին թատերական ներկայացում է, որը ներառում է երաժշտություն, պար, վառ հանդերձներ և դիմախաղ: Միջնադարում ճապոնացիներն ստեղծեցին բարձր գարգացած ազգային մշակույթ, որի հիման վրա ձևավորվեց ժամանակակից մշակույթը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս ընթացավ ավատատիրական հողային սեփականության ձևավորումը Ճապոնիայում: Ավատատիրական դասակարգի ներսում ի՞նչ դասեր ձևավորվեցին: Ովքե՞ր էին սամուրայները:
2. Ներկայացրե՞ք կառավարման կլանային համակարգի էությունը և առանձնահատկությունները: Ի՞նչ է սյոգունությունը: Ի՞նչ սյոգունություններ են կառավարել Ճապոնիան:

Երբ է հաստատվել Տոկուգավա սյոգունությունը: Ներքին և արտաքին ինչ քաղաքականություն էին վարում Տոկուգավայի սյոգունները: Ինչո՞ւ Ճապոնիան ինքնամեկուսացվեց:

3. Կրոնական ինչ ուղղություններ էին տարածված Ճապոնիայում: Մշակույթի ո՞ր ուղղություններն էին զարգացած: Գրային ինչ համակարգ էր կիրառվում:

4. Ձեր կարծիքով՝ ինչի՞ մասին է վկայում «Օրենքի հաղթանակի տաճարի» գոյությունը Նարայում: Թվարկե՞ք ճապոնական արվեստի ձեռքբերումները:

§ 4. ԻՍԼԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արաբական խալիֆայությունը: Արաբական թերակղզում ապրող արաբական ցեղերի քաղաքական և հոգևոր-մշակութային վերելքն սկսվեց VII դարում՝ կապված նոր կրոնի՝ իսլամի ստեղծման հետ:

Իսլամը միավորեց թերակղզու ցեղերին, և արդեն կարճ ժամանակ անց արաբները վերածվեցին հզոր ռազմաքաղաքական ուժի՝ լուրջ սպառնալիք դառնալով Բյուզանդիայի և Սասանյան Իրանի համար:

Միաստվածային կրոն և միասնական պետություն ստեղծելուց հետո արաբները ձեռնամուխ եղան տարածքային նվաճումների: Նրանք գրավեցին Պաղեստինը, Ասորիքը, Միջագետքը և Իրանը:

VII–VIII դդ. արաբները նվաճեցին նաև Այսրկովկասը, Եգիպտոսը, Թունիսը, Կենտրոնական Ասիան, Աֆղանստանը, Արևմտյան Հնդկաստանը, Հյուսիսարևմտյան Աֆրիկան: 711 թ. նրանք անցան Ջիբրալթար նեղուցը և նվաճեցին Իսպանիան: Անցնելով Պիրենեյան լեռները՝ արաբները ներխուժեցին Ֆրանկական պետություն, սակայն 732 թ. Պուատիեի ճակատամարտում կրած պարտությունը վերջ դրեց նրանց առաջխաղացմանը Եվրոպայում: Արաբները գրավեցին Սիցիլիա, Սարդինիա և Կրետե կղզիները: Արաբական նվաճումների արդյունքում առաջացավ միջնադարի ամենամեծ տե-

րություններից մեկը՝ **Արաբական խալիֆայությունը:**

Պետության գլուխ կանգնած էր խալիֆան՝ «Ալլահի առաքյալի տեղակալը»: Առաջին չորս ընտրովի խալիֆաներից հետո խալիֆայի իշխանությունը դարձավ ժառանգական: Այս սկզբունքով խալիֆայությունը կառավարեցին **Օմայան** (661–750) և **Աբբասայան** (750–1258) տոհմի խալիֆաները: 661 թ. Օմայանները մայրաքաղաքը տեղափոխեցին **Դամասկոս**: Իսկ 762 թ. մայրաքաղաք դարձավ Բաղդադը, որն ուներ 400 000 բնակչություն:

Խալիֆան միավորում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունը, այսինքն՝ համարվում էր բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդը և խալիֆայության աշխարհիկ կառավարիչը: Նա ուներ երկու տեղակալներ՝ **Մեծ վեզիրը**, որը զբաղվում էր քաղաքացիական գործերով, և **զլխավոր կադին**, որը ղեկավարում էր կրոնական, դատական և կրթական բնագավառները: Խալիֆայությունը բաժանված էր կուսակալությունների, որոնց սահմանները մշտական չէին: Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը, Փոքր Ասիայի արևելյան շրջանները և Միջագետքը միավորվեցին մեկ կուսակալության մեջ: Այս փոխարքայության ներսում ստեղծվել էր առանձին վարչական միավոր, որը կոչվեց **Արմինիա**: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը և Աղ-

վանքը: Փոխարքայությունը կառավարում էր փոխարքան (էմիր, կուսակալ), որը ենթարկվում էր միայն խալիֆային: Նա փոխարքայության գերագույն կառավարիչն էր և այստեղ տեղակայված զորքերի գլխավոր հրամանատարը:

Նվաճումներ կատարելու և հսկայածավալ տերությունը պահպանելու համար խալիֆայությունը մեծ ուշադրություն էր դարձնում ռազմական ուժերի կազմակերպմանը: Խալիֆայությունում երկար ժամանակ պահպանվում էր բանակում զորամասերի կազմակերպման ցեղային սկզբունքը:

Արաբները կատարելագործեցին փոստային ծառայությունը: Դամասկոսից և Բաղդադից դեպի Արևելք և Արևմուտք ձգվող խալիֆայության սահմաններում կառուցվեցին շուրջ 900 փոստակայաններ:

Խալիֆայությունում հողի գերագույն սեփականատերը պետությունն էր: Բոլոր հողերը պատկանում էին Ալլահին, իսկ նրա անունից դրանք տնօրինում էր խալիֆան: Խալիֆայության մուսուլման բնակչությունը վճարում էր տասանորդ հարկ (ուշր), իսկ ոչ մուսուլմանները՝ *խարաջ*, որը կազմում էր բերքի 1/3-ից մինչև 2/3-ը և գլխահարկ (ջիզիե), որը գանձվում էր դրամով:

Իրանի խրամացումը: 226 թ. Սասանյան տոհմի ներկայացուցիչ Արտաշիրը գահընկեց արեց պարթևական վերջին արքային և հիմնադրեց Սասանյանների արքայատոհմի իշխանությունը: Այդ ժամանակ Իրանում ձևավորվում էին ավատատիրական հարաբերություններ: Տնտեսության մեջ գերակշռում էր ազատ մարդկանց՝ գյուղական համայնականների աշխատանքը: Պետության ազատ բնակչությունը բաժանված էր չորս դասերի: Առաջին երեքը կազմում էին զին-

վորականները, հոգևորականները, պաշտոնյաները, իսկ չորրորդ դասի մեջ էին մտնում գյուղացիները, արհեստավորները և առևտրականները:

Տերության պաշտոնական կրոնը շարունակում էր մնալ զրադաշտականությունը, որը փորձում էին հարմարեցնել նոր ձևավորվող ավատատիրական հարաբերություններին: Այդ պատճառով զրադաշտականության ներսում առաջացան տարբեր հոսանքներ: Իրանում լայն տարածում գտավ նաև քրիստոնեությունը: Սկզբում դա տարածում էին քրիստոնյա քարոզիչները, իսկ III դ. Իրանի կառավարողները ապաստան էին տալիս Հռոմեական կայսրությունում հալածվող քրիստոնյաներին, որպեսզի դաշնակիցներ ձեռք բերեն ընդդեմ կայսրության: Իսկ երբ քրիստոնեությունը դարձավ Հռոմեական կայսրության պետական կրոն, Սասանյաններն սկսեցին հովանավորել և աջակցել *նեստորականներին* ու *միսթևականներին*:

Ավատատիրական հարաբերությունների ձևավորման ժամանակ Սասանյանների տերությունն սկսեց թուլանալ: Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար *Խոսրով I Անուշիրվանը* (531–578) բարեփոխումներ կատարեց, որոնք նպաստեցին պետության հետագա ամրապնդմանը և զարգացմանը: Նրա բարեփոխումներից ամենակարևորը հարկայինն էր, որով վերացվեցին բազմատեսակ հարկերը, և մտցվեցին երկու տեսակի հարկեր՝ հողահարկ և գլխահարկ: Նա նաև տարանջատեց ռազմական ու քաղաքացիական իշխանությունները: Այժմ պետության զինված ուժերը կենտրոնացված էին ոչ թե մեկ, այլ չորս մարդու ձեռքում, քանի որ ստեղծվել էին զինվորական չորս շրջաններ, որոնցից

յուրաքանչյուրն ուներ իր առանձին գորահրամանատարը: Երկրի կառավարումն արդյունավետ դարձնելու համար Խոսրով I-ն այն բաժանեց չորս մարզերի: Սակայն շուտով Սասանյան տերության բնականոն զարգացումն ընդհատվեց, քանզի Իրան ներխուժեցին արաբները: **637 թ. Քադիսիա** քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարսկական բանակը ծանր պարտություն կրեց արաբներից: Իսկ **642 թ. Նեհավենդ** քաղաքի մոտ կրած պարտությունը ճակատագրական եղավ Սասանյանների համար: Մինչև 651 թ. արաբները գրավեցին ողջ Իրանը, և Սասանյան պետությունը կործանվեց:

Արաբական տիրապետության շրջանում էլ սկսվեց իսլամի տարածումը, և շուտով Իրանի բնակչության գերակշռող մասն ընդունեց իսլամ՝ **շիա դաֆանսնաթուփ**: Արաբական տիրապետության անկումից հետո Իրանը հայտնվեց սելջուկների, ապա մոնղոլների տիրապետության տակ: Մոնղոլներից հետո Իրանի տարածքում ստեղծվեցին մի շարք պետություններ, որոնք տնտեսապես և քաղաքականապես իրար հետ չկապված անկայուն քաղաքական միավորներ էին:

XV դ. երկրորդ կեսին Ատրպատականի Արդաբիլ քաղաքում մեծ ազդեցություն ձեռք բերեց **Սեֆյանների տոհմը**: Նրանց հաջողվեց իրենց շուրջը համախմբել թյուրքական քոչվորական մի քանի ցեղերի: Վերջիններս 1502 թ. Սեֆյանների առաջնորդ **Իսմայիլի** գլխավորությամբ պարտության մատնեցին Ակ-Կոյունլուներին և գրավեցին Թավրիզ քաղաքը: Իսմայիլը հռչակվեց Իրանի շահնշահ՝ սկիզբ դնելով Սեֆյանների պետությանը (1502–1736): Սեֆյանները ձեռնամուխ եղան իրանական հողերի վերամիավորմանը և նոր շրջանների նվաճմանը: Ճահ

Իսմայիլը (1502–1524) գրավեց Արևմտյան Իրանը, Իրաքը, Խորասանը: Շուտով Այսրկովկասին և Միջագետքին տիրանալու համար Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև սկսվեց երկարատև պատերազմ:

Իսլամական մշակույթը: Դուրս գալով Արաբական թերակղզուց՝ արաբները հանդիպեցին ավելի զարգացած քաղաքակրթություն ունեցող ժողովուրդների, քայց նրանք չձուլվեցին տեղաբնակների հետ: Չնայած արաբներն իրենց զարգացման աստիճանով զիջում էին հպատակներին, սակայն կարողացան նրանց մի մասին փոխանցել իրենց կրոնը՝ իսլամը, լեզուն և որոշ սովորույթներ: Պահանջվեց ընդամենը երեք դար, որ ձևավորվի իսլամական քաղաքակրթությունը և հասնի իր զարգացման բարձրակետին: Իսլամական մշակույթի ստեղծմանը մասնակցում էին ոչ միայն արաբները, այլև ուրիշ ժողովուրդներ, մասնավորապես կարևոր դեր խաղացին պարսիկները: Իսլամական քաղաքակրթությունն իր մեջ ներառեց գրադաշտական, քրիստոնեաբլուզանդական և հինդու մշակույթների տարրեր:

Միջնադարյան իսլամական մշակույթը բաժանվում է երկու խոշոր փուլերի: Առաջինն ընդգրկում է **արաբկասարաքական** շրջանը (VII–X դդ.) և հայտնի է **Մուսուրմանական Վերածնունդ** անունով: Մշակույթի զարգացման կարևոր կենտրոններ դարձան Դամասկոսը, Բաղդադը, Ալեքսանդրիան: Այս շրջանում ծաղկում էր ապրում ոչ միայն հոգևոր մշակույթը՝ աստվածաբանություն, իրավունք, գրականություն, այլև նյութականը՝ արհեստագործություն, քաղաքաշինություն, նավագնացություն: Երկրորդն ընդգրկում է **արաբափապանական** շրջանը (X–XIII դդ.), երբ մշակույթային կյանքի կենտրոնը տեղափոխվեց

Արևմուտք: Մշակութային կյանքի կազմակերպման կարևոր կենտրոններ դարձան արաբական Իսպանիայի քաղաքները՝ Կորդովան, Տոլեդոն, Սևիլիան, Գրանադան: Խալիֆայության տարածքում գոյություն ունեին 400–500 քաղաքներ, որոնք տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոններ էին: Արաբներն ուսումնասիրում և թարգմանում էին անտիկ գիտնականների՝ Արիստոտելի, Հիպոկրատեսի, Պտղոմեոսի, Էվկլիդեսի ստեղծագործությունները: Դամասկոսը, Բաղդադը, Կորդովան, Կահիրեն հռչակված էին իրենց բարձրագույն դպրոցներով և գրադարաններով: Այստեղ Ղուրանի և մուսուլմանական աստվածաբանության հետ միասին ուսումնասիրում էին նաև աշխարհիկ գիտություններ: Բժշկագիտության բնագավառում մեծ հռչակ էր վայելում *Ալիցեննան* (Իբն Սինա)՝ «Կանոն բժշկագիտության» գրքով: Պատմագրու-

թյան բնագավառում աչքի ընկնող դեր խաղաց *Թարսիին* (X դ.), որը գրել է «Մարգարեների և թագավորների պատմություն» աշխատությունը՝ այն հասցնելով մինչև 915 թ.: Գեղարվեստական գրականության ասպարեզում մեծ տարածում գտավ «Հազար ու մի գիշեր» հեքիաթների ժողովածուն (XII դ.):

VIII դ. արաբները չինացիներից սովորեցին թղթի արտադրությունը, ապա՝ գրատպությունը: Նրանք հնդիկներից սովորեցին օգտագործել թվային համակարգը: Այստեղ նրանք ավելացրին «0» (զրո) նշանը, որը հնարավորություն տվեց ստանալու ցանկացած թվային մեծություն: Արաբների շնորհիվ հնդկական թվային համակարգը տարածվեց ամբողջ աշխարհում և ստացավ *արաբական* անվանումը: Իսլամական մշակույթը մեծ ազդեցություն թողեց համաաշխարհային մշակույթի զարգացման վրա:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ էին ապրում արաբական ցեղերը: Ինչ դեր և հետևանքներ ունեցավ իսլամը արաբների կյանքում: Ներկայացրե՞ք Արաբական խալիֆայության կազմավորման գործընթացը, կառավարման համակարգը և սոցիալական հարաբերությունները:
2. Ե՞րբ Իրանում հաստատվեցին ավատատիրական հարաբերություններ: Ինչ դասերի էր բաժանված ազատ բնակչությունը: Կրոնական ինչ ուղղություններ էին գերիշխող Իրանում: Ինչո՞ւ և ինչ բարեփոխումներ իրականացրեց Խոսրով I-ը: Ե՞րբ Իրանը նվաճվեց արաբների կողմից:
3. Ո՞ր մշակույթներին բնորոշ գծեր ներառեց իսլամական մշակույթը: Ինչ խոշոր փուլերի է բաժանվում միջնադարյան իսլամական մշակույթի պատմությունը: Թվարկե՞ք իսլամական մշակույթի կարևոր կենտրոնները: Ցոյց տվե՞ք այդ մշակույթի նվաճումները:

§ 5. ՔՈՉՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհանգիստ քոչվորները: Հոներ:
Հնագույն ժամանակներից Եվրասիական տափաստաններում՝ Բայկալ լճից մինչև Դոն գետն ընկած տարածքներում, ապրում էին քոչվոր անասնապահական տն-

տեսություն վարող ցեղեր, որոնք արոտավայրեր ձեռք բերելու համար անընդհատ տեղից տեղ էին շարժվում: Քոչվորների տեղաշարժերը մեծ ազդեցություն էին

թողնում Եվրոպայի և Ասիայի երկրների ճակատագրի վրա:

Միջնադարի նախօրյակին Եվրոպայի և Ասիայի հետագա ճակատագրի վրա առավել մեծ ազդեցություն ունեցան Բայկալ լճից մինչև Ուրալ գետն ընկած տարածքներում բնակվող թյուրքալեզու *հոների* տեղաշարժերը: Նրանց մի մասը կարողացավ հաստատվել Չինաստանում և Հնդկաստանում ու այնտեղ ստեղծել իրենց պետությունները: IV դ. 70–ական թվականներին մերձուրալյան տափաստաններում հաստատված հոները շարժվեցին դեպի Արևմուտք, որը դարձավ ժողովուրդների մեծ գաղթի պատճառներից մեկը: Նրանք ջախջախեցին մերձսևծովյան շրջանում հաստատված արևելյան գոթերին և **379 թ.** առաջին անգամ ընդհարվեցին հռոմեացիների հետ: Շուտով նրանք հաստատվեցին *Պանոնիայում* (ներկայիս՝ Հունգարիան) և ստեղծեցին իրենց պետությունը: Այն իր հզորության գագաթնակետին հասավ *Աթիլայի* կառավարման ժամանակ (434–453): Հոները **451 թ.** ներխուժեցին Գալլիա: Սակայն *Կատալաունի դաշտերում* տեղի ունեցած ճակատամարտում հռոմեացիները, որոնց օգնում էին ֆրանկները և բուրգունդները՝ հռոմեացի *Աեցիոսի* գլխավորությամբ, ծանր պարտության մատնեցին հոներին: Սա համարվում է համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից մեկը: Կատալաունի դաշտերում որոշվեց ոչ միայն Գալլիայի, այլև ողջ Եվրոպայի ճակատագիրը: **452 թ.** Աթիլան արշավանք ձեռնարկեց դեպի Իտալիա, գրավեց մի շարք քաղաքներ, սակայն հետ դարձավ: Աթիլայի մահից հետո հոների պետությունը տրոհվեց: Թուլացած հոները չկարողացան ճնշել հպատակ գերմանական ցե-

ղերի ապստամբությունները և հեռացան հյուսիսմերձսևծովյան շրջաններ: Հետագայում նրանք ձուլվեցին թյուրքական այլ ցեղերի հետ և դուրս եկան պատմության թատերաբեմից:

Թյուրք-սելջուկներ: Միջնադարյան Եվրոպայի և Ասիայի երկրների ու ժողովուրդների ճակատագրի վրա մեծ ազդեցություն թողեցին թյուրքալեզու քոչվորական ցեղերի տեղաշարժերը: Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանում առանձին թյուրքալեզու ցեղեր հայտնվեցին Փոքր Ասիայում և հաստատվեցին Սև ծովի հարավային շրջաններում: VII դ. վերջին թյուրքալեզու *բուղղարներն* անցան Դանուբ գետը և տարաբնակվեցին Բալկանյան թերակղզում: Սակայն նրանք ձուլվեցին տեղական սլավոնական բնակչության մեջ՝ պատմությանը հանձնելով միայն իրենց անվանումը:

Թյուրքալեզու ցեղերի ներթափանցումն Առաջավոր Ասիա մեծ չափերի հասավ XI դ.: 1020–ական թվականներին նեղվելով թյուրքական այլ ցեղերից՝ *օղուզ թուրքմենների* 4 հազար ընտանիքներ հայտնվեցին Հյուսիսային Իրանում: Նրանց թույլատրվեց բնակվել այստեղ և զինվորական ծառայություն կատարել: Հետագայում թյուրք-օղուզները Սելջուկյան տոհմից սերված առաջնորդների գլխավորությամբ ձեռնամուխ եղան Իրանի նվաճմանը:

1040–1050 թթ. նվաճելով ողջ Իրանը՝ նրանք շարժվեցին Արևմուտք և Հարավ: **1055 թ.** թյուրք-սելջուկները գրավեցին Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը: Խալիֆան նրանց առաջնորդ *Տուղրիկ բեկին* շնորհեց *Արևելքի և Արևմուտքի սուլթան* տիտղոսը: Այսպես ստեղծվեց Սելջուկների մեծ տերությունը: 1071 թ. Մանազկերտի ճակատամար-

տում նրանք ծանր պարտության մատնեցին Բյուզանդիային: Գրավելով Ադվանքը, Վրաստանը, Հայաստանը՝ նրանք ձեռնամուխ եղան Փոքր Ասիայի, Պաղեստինի և Ասորիքի նվաճմանը: Այդ ժամանակ նրանց թիվը հասնում էր շուրջ մեկ միլիոնի: Նվաճելով համարյա ամբողջ Փոքր Ասիան՝ սելջուկները **1075 թ.** այստեղ հիմնեցին իրենց պետությունը՝ **Իկոնիայի սուլթանությունը:**

Իկոնիայի սուլթանները սովորաբար կրում էին **Ռումի սուլթաններ** տիտղոսը, այսինքն՝ հավակնում էին յուրացնելու բյուզանդական կայսրերի իրավունքներն Արևելքի նկատմամբ: Հետագայում նրանց հաջողվեց իրենց մեջ ձուլել Փոքր Ասիայում ապրող տեղական բնակչությանը, մասնավորապես հույների և հայերի մի մասին: Այսպես ձևավորվեց նոր էթնոս, որը ստացավ **թուրք** անվանումը:

Իկոնիայի սուլթանությունում ձևավորվել էր հասարակության կազմակերպման յուրօրինակ համակարգ: Պետության կառավարման բնագավառում մեծ դեր էին խաղում պարսիկները, քանի որ քոչվոր թյուրքերը կառավարման փորձ չունեին: Հույները և հայերը հիմնականում զբաղվում էին նստակյաց երկրագործությամբ, արհեստներով և առևտրով: Թյուրք բնակչությունը երկար ժամանակ զբաղվում էր քոչվորական անասնապահությամբ, իսկ սահմանամերձ վայրերում ապրող ցեղերը վարում էին ռազմաքոչվորային կյանք: Ցեղի բոլոր անդամները, այդ թվում՝ կանայք, մշտապես զենք էին կրում հարևանների հարձակումներից պաշտպանվելու համար, իսկ հնարավորության դեպքում նոր տարածքներ էին գրավում: Մոնղոլական արշավանքներն այնպիսի ծանր հարված հասցրին Իկոնիայի սուլթանությանը, որ այն այլևս չկարողացավ ուշքի

գալ: Նրա փլատակների վրա հետագայում ստեղծվեց մեկ այլ թյուրքական պետություն՝ **Օսմանյան կայսրությունը:**

Մոնղոլական տերությունը: Կենտրոնական Ասիայի տափաստաններում հնագույն ժամանակներից բնակվում էին քոչվորական անասնապահությամբ զբաղվող մոնղոլական ցեղեր: Քաղաքական կազմակերպման առումով նրանք միասնական չէին և կազմել էին բազմաթիվ ցեղային միություններ: Մոնղոլներն զբաղեցնում էին լայնածավալ տարածքներ՝ Բայկալ լճից մինչև Ենիսեյ գետ և Հարավային Սիբիրից մինչև Չինական մեծ պարիսպ:

XI–XII դդ. մոնղոլական ցեղերի մոտ տոհմատիրական կարգերն սկսում են քայքայվել, և ձևավորվում են ավատատիրական հարաբերություններ: Մոնղոլական միասնական պետության առաջացումը կապված է **Թեմուչինի** (1162–1227) գործունեության հետ: Նա զենքի ուժով կարողացավ միավորել մոնղոլական տարբեր ցեղերի և ստեղծել մոնղոլական առաջին պետությունը: **1206 թ.** հրավիրվեց համամոնղոլական առաջին **կուրուլթայը** (համագումար), որին մասնակցում էին համարյա բոլոր ցեղերի ներկայացուցիչները: Թեմուչինը հռչակվեց համամոնղոլական տիրակալ՝ ստանալով **Չինգիզ խան** անունը: Նա ստեղծեց ուժեղ և կանոնավոր բանակ: Պետության ստորին ռազմավարչական միավորն ընտանիքների այն խումբն էր, որը կարող էր տրամադրել 10 զինվոր: Հաջորդն այն միավորներն էին, որոնք տրամադրում էին 100, ապա՝ 1000, հետո՝ 10 000 զինվոր: Սա հնարավորություն տվեց մոնղոլական բանակի զինվորների թիվը հասցնելու 95 հազարի և ձեռնամուխ լինելու լայնածավալ նվաճումների:

1215 թ. մոնղոլները գրավեցին Հյուսիսային Չինաստանը, իսկ **1221 թ.**՝ Կենտրոնական Ասիան: Չինգիզ խանի հաջորդները նվաճեցին Իրանը, Հայաստանը, Միջագետքը, Փոքր Ասիայի մեծ մասը: Գրավելով ռուսական հողերը՝ մոնղոլները շարժվեցին Լեհաստան և Հունգարիա: Նրանց առաջապահ ջոկատները հասան մինչև Ադրիատիկ ծովի ափերը: Սակայն մոնղոլական բանակներն արդեն ուժապառ էին եղել և հեռացան այս շրջաններից: **1258 թ.** նրանք գրավեցին Բաղդադը, և Արաբական խալիֆայությունը դադարեց գոյություն ունենալուց:

Մոնղոլական կայսրության տարածքը ձգվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծով: Տերության գլուխ կանգնած էր անսահմանափակ իշխանությամբ օժտված Մեծ խանը, որը սկզբում նստում էր *Կարակորում* քաղաքում, իսկ Խուրիլայը մայրաքաղաքը տեղափոխեց *Պեկին*: Կայսրությունը բաժանված էր հինգ *ուլուսների* (փոխարքայություն): Չորրորդ ուլուսի մեջ մտնում էին Իրանը, Իրաքը, Հայաստանը, Աղվանքը, Վրաստանը և Փոքր Ասիան: Մայրաքաղաքը Թավրիզն էր: Նվաճված երկրներում մոնղոլները սովորաբար կառավարումը թողնում էին տեղացիներին այն պայմանով, որ նրանք ձշգրտորեն կատարեն ռազմական և հարկային պարտավորությունները: Ձենքի ուժով ստեղծված մոնղոլական կայսրությունը, որի կազմի մեջ մտնում էին զարգացման տարրեր աստիճան ունեցող ժողովուրդներ, չէր կարող երկար գոյատևել, և արդեն XIII դ. վերջին այն տրոհվեց:

Օսմանյան կայսրությունը: Իկոնիայի սելջուկյան սուլթանության թուլացման շրջանում նրա տարածքում առաջացան մի քանի ինքնուրույն իշխանություններ: Նրանցից մեկը, որը Փոքր Ասիայի

արևմուտքում էր, հիմնադրեց *Օսման բեյը* (1299–1326): **1299 թ.** նա իրեն անկախ հայտարարեց սելջուկյան սուլթանից ու մոնղոլներից և ձեռնամուխ եղավ նոր տարածքների նվաճմանը: **1326 թ.** օսմանյան թուրքերը գրավեցին լավ ամրացված *Բրուսա* բերդաքաղաքը (ներկայիս Բուրսա) և այն դարձրին նորաստեղծ պետության մայրաքաղաքը: Արդեն XIV դ. առաջին կեսին թուրքերին հաջողվեց գրավել Փոքր Ասիայի կարևոր տնտեսական շրջանները: **1352 թ.** նրանք անցան Դարդանեյի նեղուցը և ձեռնամուխ եղան Բալկանյան թերակղզու նվաճմանը: *Մուրադ I-ը* (1359–1389), որն ընդունել էր սուլթանի տիտղոս, գրավեց Ադրիանուպոլիսը և այն դարձրեց մայրաքաղաք: Ինչպես գիտեք, 1389 թ. թուրքերը Կոստվոյի դաշտում ծանր պարտության մատնեցին սերբերին, իսկ **1393 թ.** գրավեցին Բուլղարիան:

Հետագա նվաճումներ կատարելու և հպատակ ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու համար XIV դ. անցկացվեցին ռազմական բարեփոխումներ: Ստեղծվեց ենիչերիների զորամաս, որտեղ զինվորներին հավաքագրում էին հպատակ ժողովուրդներից: Օսմանյան թուրքերը ծնողներից խլում էին առողջ և ամրակազմ տղաներին և երկար տարիներ նրանց ռազմական գործ էին սովորեցնում: Երբ լրանում էր նրանց 20 տարին, ուղարկում էին ծառայելու բանակում: Ենիչերիներն ընտանիք չունեին, ապրում էին զորանոցներում և կտրված էին արտաքին աշխարհից: Նրանց գոյության միակ միջոցը պատերազմն էր:

1396 թ. թուրքական բանակը Դանուբ գետից հարավ ծանր պարտության մատնեց հունգարացիներից, բուլղարներից և արևմտաեվրոպական ասպետներից հավաքագրված բանակին և գրավեց Սեր-

քիան ու Մակեդոնիան: **1453 թ.** նրանք գրավեցին Կոստանդնուպոլիսը, և Բյուզանդիան դադարեց գոյություն ունենալուց: **Մեհմեդ II** սուլթանը մայրաքաղաքը տեղափոխեց Կոստանդնուպոլիս: XVI դ. թուրքերը նվաճեցին Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը, Հյուսիսային Աֆրիկան, Բալկանյան թերակղզին, Ղրիմը:

Օսմանյան պետության գլուխ կանգնած էր բարձրագույն իշխանությամբ օժտված սուլթանը, որը համարվում էր «Աստծո ստվերը երկրի վրա»: Նրա անձն ու իշխանությունը սրբազան և անձեռնմխելի էին: Սուլթանից հետո առաջին դեմքը համարվում էր **Մեծ վեզիրը**, որը տնօրինում էր վարչաքաղաքական և ռազմական բնագավառները: Կարևոր հարցեր քննարկելու համար հրավիրում էին **Բարձրագույն խորհուրդ** (դիվան), որի բոլոր անդամներին նշանակում էր սուլթանը: Մեհմեդ II–ի օրոք ընդունվեց թուրքական պետության առաջին օրենսգիրքը՝ «**Կանուն-կանոն**», որը բաղկացած էր չորս մասերից և օրինականացնում էր ձևավորված ռազմավարական համակարգը: Ավատը տրվում էր ռազմական ծառայության դիմաց:



Մեհմեդ II

XVI դ. Օսմանյան տերությունը բաժանված էր 16 մարզերի (էյալեթ), որոնց գլուխ կանգնած էին **բեյլերբեյները**: Նրանց ձեռքում կենտրոնացված էր մարզի ողջ ռազմական և քաղաքացիական իշխանությունը: Էյալեթները բաղկացած էին **սանջակներից** (շրջան): Գոյություն ունեին 250 սանջակներ, որոնց կառավարիչները կոչվում էին **սանջակբեյեր**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր տարածքներում էին բնակվում քոչվոր ցեղերը, և ո՞րն էր նրանց հիմնական զբաղմունքը: Ովքեր էին հոները. նրբ և որտեղ ստեղծեցին իրենց պետությունը: Ի՞նչ ճակատագիր ունեցան հոները: Փորձե՞ք գնահատել նրանց դերը պատմության մեջ:
2. Որտեղ էին բնակվում թյուրքալեզու ցեղերը: Ներկայացրե՞ք Սելջուկյան տերության ստեղծման պատմությունը: Ե՞րբ է ստեղծվել Իկոնիայի սուլթանությունը: Ներկայացրե՞ք Իկոնիայի հասարակության կազմակերպման համակարգը:
3. Ի՞նչ տարածքներ էին զբաղեցնում մոնղոլական ցեղերը: Ե՞րբ և ո՞վ է ստեղծել մոնղոլական պետությունը: Ներկայացրե՞ք Մոնղոլական տերության տարածքը, վարչական կառուցվածքը և կառավարման համակարգը:
4. Ե՞րբ և ո՞վ է հիմնադրել Օսմանյան պետությունը: Ներկայացրե՞ք Օսմանյան պետության ընդարձակման գործընթացը: Ի՞նչպիսին էր Օսմանյան տերության կառավարման համակարգը:

§ 6. ՄԻՆԶԿՈՒՆՄԲՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ

Մայաներ: Երբ եվրոպացիները հայտնվեցին Ամերիկա աշխարհամասում, այստեղ ապրում էր շուրջ 15–20 մլն մարդ: Սկզբում եվրոպացիները կարծում էին, որ Ամերիկյան Հնդկաստանն է, և տեղաբնիկներին անվանեցին հնդկացիներ: Մինչև լուսնայան Ամերիկայում ապրող հնդկացիական ցեղերը զարգացման տարբեր աստիճանների վրա էին: Նրանց մի մասն ապրում էր նախնադարյան համայնական հասարակարգում և զբաղվում էր որսորդությամբ, ձկնորսությամբ և հավաքչությամբ: Մյուսները, մասնավորապես՝ *մայաները, ացտեկները, ինկերը*, նստակյաց հողագործներ էին և ստեղծել էին իրենց պետությունները: Նրանք մշակում էին եգիպտացորեն, լոբի, ծխախոտ, դդում, Կենտրոնական Ամերիկայում՝ կակաո, լոլիկ, իսկ Անդյան լեռներում՝ կարտոֆիլ: Տնային կենդանիներից պահում էին շներ և հնդկահավեր, իսկ ձիեր այստեղ բերեցին եվրոպացիները: Տեղաբնիկներին անձանոթ էին երկաթը, անիվը, բրուտի անիվը:



Մայաների աստծո կերպարով ազաթե դիմակ

Մայաները (Մեքսիկա) բնակվում էին Յուկատան թերակղզում: Նրանք բաղկացած էին մի քանի ցեղախմբերից, այդ պատճառով ստեղծեցին ոչ թե մեկ միասնական պետություն, այլ մի շարք քաղաք-պետություններ:

Մայաների քաղաքակրթությունն իր զարգացման բարձրակետին հասավ X–XVI դդ.: Սովորաբար քաղաքն իր շրջակա գյուղական համայնքների հետ միասին կազմում էր քաղաք-պետություն, որը կառավարում էր քուրմ–թագավորը: Բաղաքի կենտրոնում մայաները կառուցում էին բարձր բուրգ, որը շրջապատված էր լայնարձակ հրապարակով: Բուրգի զագաթին կառուցում էին տաճար: Երբ քաղաք-պետության կառավարիչ քուրմ–թագավորը տաճարում կրոնական արարողություն էր կատարում, ժողովուրդը հավաքվում էր հրապարակում:

Մայաների սոցիալական միջավայրի կազմակերպման հիմնական միավորը համայնքն էր, որը բաղկացած էր առանձին գյուղացիական ընտանիքներից: Համայնքը համարվում էր հողի կոլեկտիվ սեփականատեր և հողակտորները բաժանում էր գյուղացիական ընտանիքների միջև: Յուրաքանչյուր ընտանիք հողը մշակում և բերքը հավաքում էր ինքնուրույն: Սահմանված հարկերը վճարելուց հետո բերքի մնացած մասը տնօրինում էր ընտանիքը: Իսկ որսորդությանը, ձկնորսությանը և աղի արտադրությանը սովորաբար մասնակցում էին համայնքի բոլոր չափահաս անդամները, ուստի արդյունքը հետո բաժանվում էր ընտանիքների միջև: Մայաներն ընտանի կենդանիներ չէին պահում և անասնապահությամբ չէին զբաղվում: Միակ կենդանին, որ նրանք պահում էին, շունն էր, որի միսն օգտագոր-



Ացտեկների մայրաքաղաք Տենոչտիտլանը Մեխիկոյի հովտում

ծում էին որպես սննդամթերք: Միսը համարվում էր տոնական և ծիսակարգային ուտեստ: Կենդանական ծագում ունեցող սննդամթերք ձեռք էին բերում որսորդության և ձկնորսության ժամանակ:

Մայաների հասարակության մեջ գոյություն ունեւ սոցիալ-քաղաքական աստիճանակարգություն: Ամենավերին աստիճանին կանգնած էին քուրմ-թագավորը (նա օժտված էր գերագույն իշխանությամբ), զորահրամանատարները, քրմերը և նվաճված տարածքների կառավարիչները: Երկրորդ աստիճանը զբաղեցնում էին զինվորները: Հաջորդ աստիճանին կանգնած էին առևտրականները, արհեստավորները, գյուղացիները, որոնք հարկեր էին վճարում, բայց համարվում էին ազատ: Ստորին աստիճանը զբաղեցնում էին կախյալները և ստրուկները:

Մայաները մինչկոլումբոյան Ամերիկայում ապրող միակ ժողովուրդն էին, որ ունեին գիր (հիերոգլիֆային): Ուսումնասիրելով Երկրի պտույտը Արեգակի շուրջ՝ մայա աստղագետները և մաթեմատիկոսներն ստեղծեցին օրացույց, որը բաղկացած էր 365 օրից: Օրացույցն ուներ

18 ամիս, յուրաքանչյուր ամիս՝ 20 օր: Լրացուցիչ 5 օրերը համարվում էին վատ օրեր, ուստի մարդիկ աշխատում էին այդ օրերին ոչինչ չանել, նույնիսկ հաց չէին ուտում: Մյուս՝ 260 օրերից կազմված օրացույցը ստեղծվել էր գոշակությունների և կրոնական ծեսերի համար: Այս օրացույցը կարող էին կարդալ և մեկնաբանել միայն քրմերը, որոնք մեծ դեր էին խաղում մայաների հոգևոր կյանքի կազմակերպման գործում: Մայաների կրոնական պաշտամունքում որոշակի տեղ էր զբաղեցնում աստվածներին մարդկային զոհեր մատուցելը: Որպես զոհ ընտրում էին երիտասարդ, առողջ և գեղեցիկ մարդու:

Ացտեկներ: XII դ. ացտեկները հաստատվեցին Մեխիկոյի հովտում: **1325 թ.** նրանք կառուցեցին իրենց մայրաքաղաքը՝ **Տենոչտիտլանը:** Քաղաքն ուներ երեք քառակուսի կիլոմետր տարածք, իսկ բնակչության թիվը շուրջ 70 հազար էր: Քաղաքը բաժանված էր չորս մասերի, որոնք խորհրդանշում էին աշխարհի չորս կողմերը, և 20 փոքր թաղամասերից, որոնք խորհրդանշում էին ացտեկների



Մոնթեումա II

տոհմացնդային կառուցվածքը՝ 20 ցեղ, 20 տոհմ:

Գրավելով շրջակա տարածքները՝ XV դ. սկզբին ացտեկները ստեղծեցին իրենց պետությունը, որն իր հզորության գագաթնակետին հասավ *Մոնթեումա II-ի* գահակալման ժամանակ (1502–1520): Պետության եկամուտները ձշտելու և հարկերի հավաքումը կանոնավորելու համար նա օրենք ընդունեց, որով սահմանվում էին հարկերի և տուրքերի չափերը: Ացտեկների հիմնական զբաղմունքը նստակյաց երկրագործությունն էր: Նրանք սովորել էին ոռոգել մշակելի հողերը և չորացնել ձահիճները: Հիմնականում մշակում էին եգիպտացորեն, դդում, ծխախոտ, բամբակ, կակաո: Անասնապահությունը զարգացած չէր. միակ ընտանի կենդանին շունն էր, որի միսն օգտագործում էին: Սակայն նրանք պահում էին նաև ընտանի թռչուններ՝ հնդկահավեր, սագեր, բադեր: Ացտեկների մոտ բարձր զարգացման էր հասել արհեստագործությունը, մասնավորապես՝ ջուլհակությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը:

Ացտեկների հասարակության մեջ լայն տարածում ուներ ստրկությունը, ընդ որում՝ ստրուկներ ունեին ոչ միայն առանձին համայնքներ, այլև մասնավոր անձինք: Ստրուկների մեծ մասը ռազմագերիներ էին, սակայն ստրկացնում էին նաև պարտքերը չվերադարձնելու դիմաց, ինչպես նաև մարդիկ կարող էին իրենց և իրենց երեխաներին վաճառել ստրկության:

Պետության գլուխ կանգնած էր գերագույն իշխանությամբ օժտված թագավորը: Ացտեկների հասարակության մեջ ևս ձևավորվել էր սոցիալ-քաղաքական աստիճանակարգություն: Նրա ամենավերին աստիճանին կանգնած էին ազնվականները՝ թագավորի գլխավորությամբ: Քաղաքներում բնակվելու իրավունք ունեին միայն նրանք: Հաջորդ աստիճանը զբաղեցնում էին առևտրականները, արհեստավորները, գյուղացիները, որոնք բնակվում էին քաղաքների արվարձաններում և գյուղերում:

Ացտեկների ամենահարգի զբաղմունքը ռազմական ծառայությունն էր: Հպատակ ժողովուրդներին հնազանդ պահելու և նոր տարածքներ նվաճելու համար ացտեկները կարիք ունեին լավ վարժեցված կանոնավոր քանակի: Նրանք հավատում էին, որ պատերազմի ժամանակ զոհվածները գնում էին աստվածների հետ երկնքում ապրելու: Զինվորները միշտ կռվում էին եռանդով և արիությամբ, քանի որ որքան շատ սպանեին և գերի վերցնեին, այնքան բարձր կլինեին նրանց նկատմամբ հարգանքը հասարակության մեջ: Ացտեկների բանակը բաղկացած էր առանձին զորամասերից, որոնցից ամենահեղինակավորը արծվի զինվորները և հովազի զինվորներն էին: Առաջինների նշանը արծվի փետուրն էր, իսկ երկրորդ-

ներինը՝ հովագի մորթին: Նրանց կրոնական արարողությունների կարևոր մասն էին կազմում մարդկային զոհաբերությունները: Ացտեկները հավատում էին, որ իրենց Արև-աստվածն ամեն օր մայր մտնելուց հետո մահանում է և հարություն կառնի այն դեպքում, երբ նրան մարդկային զոհ մատուցվի: Այս նպատակով Արևի տաճարում մարդկային զոհաբերություն էին կատարում:

Ինկեր: Ինկերի պետությունը ժամանակակից Պերուի, Չիլիի և Բոլիվիայի լեռնային շրջաններում էր: **Ինկա** բառը այդ պետության արքայի տիտղոսն էր (նշանակում է «տեր»): XV դ. ինկերն սկսեցին լայնածավալ նվաճումներ կատարել, որի արդյունքում նրանց պետության տարածքը չորս անգամ մեծացավ, իսկ բնակչության թիվը հասավ շուրջ 6 միլիոնի: Պետության գլուխ կանգնած էր Բարձրագույն Ինկան, որին անվանում էին **Սապա Ինկա:** Այստեղից էլ պետությունը ստացավ **Ինկերի պետություն** անվանումը: Այն իր հզորության գագաթնակետին հասավ Սապա Ինկա **Պաչակուտի** կառավարման տարիներին (1438–1471): Այդ ժամանակ ինկերը կարողացան գրավել Կուսկոյի ամբողջ հովիտը և շրջակայքի մանր պետությունները:

Ինկերի կայսրության մայրաքաղաքը **Կուսկոն** էր, որն ուներ շուրջ 200 հազար բնակչություն: Այն համարվում էր կայսրության կրոնական և մշակութային կենտրոնը: Այստեղ էր գտնվում ինկերի գերագույն աստծու՝ Արևի տաճարը: Նրանց կրոնական կյանքում մեծ տեղ էին զբաղեցնում աստվածների համար կենդանիների և տարբեր մթերքների զոհաբերությունները: Ի տարբերություն մայաների և ացտեկների՝ նրանք միայն ձգնաժամային

(ջրհեղեղ, սով, համաճարակ) պահերին էին մարդկային զոհաբերություններ կատարում: Քրմապետի գործառույթները սովորաբար իրականացնում էր Սապա Ինկան:

Ինկերի պետության մեջ հասարակությունը բաղկացած էր ներփակ խմբերից՝ կաստաներից: Բոլոր ինկերը մտնում էին բարձրագույն կաստայի մեջ: Նրանք չէին աշխատում և հարկեր չէին վճարում: Պետությունը նրանց հողատարածքներ էր տրամադրում, ինչպես նաև ստրուկներ՝ դրանք մշակելու համար: Ինկերի մի մասը զբաղվում էր ռազմական ծառայությամբ, իսկ մյուսներն իրականացնում էին կառավարման և կրոնական-մշակութային գործառույթներ: Առանձին կաստայի մեջ էր մտնում նվաճված ցեղերի ավագանին: Դրանց պատկանող հողերը մշակում էին գյուղացի համայնականները: Նվաճված ցեղերի արհեստավորները և գյուղացիները կազմում էին առանձին կաստա: Նրանց ազատությունները սահմանափակված էին: Նրանք կարող էին տեղաշարժվել միայն կառավարության համաձայնությամբ: Կառավարությունն էր որոշում, թե նրանք երբ և ում հետ պետք է ամուսնանային, քանի որ ամուսնական զույգերին առանձին հողաբաժին էր հասնում:

Տնտեսության հիմքը հողագործությունն էր: Այստեղ մշակում էին շուրջ 40 տեսակի բույսեր, մասնավորապես կարտոֆիլ, դդում:

Հպատակ ցեղերին հնազանդության մեջ պահելու և նոր տարածքներ նվաճելու համար ինկերն ստեղծել էին կանոնավոր մարտունակ բանակ: Բանակ զորակոչելու համար սահմանվել էր հատուկ փորձաշրջան: Տղաների խմբին տանում էին ձյունապատ լեռան գագաթ և թողնում այնտեղ ինն օր առանց ուտելիքի, զենքի և

այլ միջոցների: Ժամկետը լրանալուց հետո նրանց հետ էին բերում, սակայն շատերն այդ փորձությանը չէին դիմանում

և մահանում էին: Կենդանի մնացածները քանակում ծառայում էին որպես առանձին ջոկատների հրամանատարներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ովքե՞ր էին հնդկացիները: Ինչո՞վ էին նրանք զբաղվում: Ինչ գիտե՞ք մայաների մասին: Ներկայացրե՞ք մայաների հասարակության սոցիալական կառուցվածքն ու զբաղմունքը: Ինչո՞վ էին մայաները տարբերվում մյուս հնդկացիներից:
2. Նկարագրե՞ք ացտեկների հասարակության սոցիալական կառուցվածքն ու զբաղմունքը: Ինչպիսի՞ն էր պետական կառավարման համակարգը:
3. Ովքե՞ր էին ինկերը, որտե՞ղ էին ապրում: Ներկայացրե՞ք ինկերի պետության կառուցվածքը: Համեմատե՞ք մինչկոլումբոսյան Ամերիկայի բնիկներին. նշե՞ք նրանց միջև եղած ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

§ 7. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԻՍՊԱՆԱՅԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Կոնկիստա: Կոլումբոսի կողմից Ամերիկայի հայտնագործումից և Կարիբյան ծովի կղզիներում ամրապնդվելուց հետո իսպանացիներն սկսեցին քայլ առ քայլ նվաճել Կենտրոնական և Հարավային Ամերիկան: Այդ գործընթացը ստացել է **կոնկիստա** (իսպ.՝ «նվաճում», այստեղից էլ՝ «կոնկիստադոր» — «նվաճող») անվանումը:

1519 թ. կոնկիստադոր Է. Կորտեսը, որն ուներ 550 զինվոր, 16 ձի և 14 հրանոթ, ափ իջավ Մեքսիկայի ծովեզերքին: Ացտեկներն առաջին անգամ էին տեսնում ոտքից գլուխ զրահավորված հեծյալ զինվորների: Նրանց թվում էր, որ հեծյալը և ձին մեկ ամբողջություն են կազմում, այսինքն՝ նրանք սովորական մահկանացուներ չեն, այլ աստվածներ են: Անսովոր էին նաև իսպանացիների առագաստանավերը: Ացտեկների վրա սարսափ էր ազդում հրազենը, իսկ երկաթին ինչպես նրանք, այնպես էլ Ամերիկայի մյուս ժողովուրդները ծանոթ չէին: Բացի այդ, ացտեկների առասպելաբանության մեջ շրջում էր հետևյալ պատմությունը. գլխավոր աստ-

վածներից մեկը՝ **Կեցակոատլը** (բառացի՝ «Փետրավոր օձ»), իբր ասել էր, թե ինքը կվերադառնա և հետ կվերցնի իր իսկ ստեղծած թագավորությունը: Ացտեկների կարծիքով՝ Կորտեսը հենց այդ աստվածն էր:

Ացտեկների տիրակալ **Մոնթեսուման** փորձեց թանկարժեք նվերներով սիրաշահել Կորտեսին՝ նրան ուղարկելով մեծ քանակությամբ ոսկի և արծաթ: Նա հուսով էր, որ Կորտեսը, վերցնելով նվերները, կհեռանար: Սակայն վերջինս իր գործով մնաց մայրաքաղաքում: Վեց ամիս անց իսպանացիներն սկսեցին զբաղվել քաղաքի թալանով և նույնիսկ սրբապղծել տաճարները: Բնակչությունն ապստամբեց և մեղադրեց Մոնթեսումային, որը դեռևս շարունակում էր հավատալ Կորտեսին: Հուզումների ժամանակ գազազած ամբոխը սպանեց արքային: Իսպանացիները վտարվեցին քաղաքից:

Սակայն որոշ ժամանակ անց Կորտեսը, դաշնակցելով ացտեկներին թշնամի ցեղերի հետ, վերադարձավ Տենչտիտ-

լան և 225 օր տևած պաշարումից հետո 1521 թ. գրավեց այն:

Մի քանի տարի անց սկսվեց Կենտրոնական և Հարավային Ամերիկայի նվաճումը: 1527–1533 թթ. մեկ ուրիշ կոնկիստադոր՝ *Ֆ. Պիսսարոն*, փոքր ջոկատով խարեությանը մտավ ինկերի մայրաքաղաք Կուսկո և ձերբակալեց նրանց վերջին կայսրին: Իսպանացիների ձեռքն ընկան արքայական պալատի և տաճարների գանձերը:

Նույն ժամանակներում իսպանացի կոնկիստադորները գրավեցին Մեքսիկայի հարավը՝ մայաների երկիրը, նաև ներկայիս Կոլումբիան և Չիլին:

Նվաճումներից տարիներ անց Կենտրոնական և Հարավային Ամերիկայում իսպանացիներն ստեղծեցին մի շարք փոխարքայություններ, որոնցից ամենախոշորները երկուսն էին՝ *Նոր Իսպանիա* (Մեքսիկա) և *Պերու*: Հետագայում Պերուից անջատվեց *Նոր Գրանադան* (ժամանակակից Պանամա, Կոլումբիա և Էկվադոր) և *Լա Պլատան* (Արգենտինա, Ուրուգվայ, Բոլիվիա և Պարագվայ): Փոխարքաները կառավարում էին գաղութները Իսպանիայի թագավորի անունից և անսահմանափակ իշխանություն ունեին: Փոխարքան անմիջականորեն ենթարկվում էր Մագրիդում արքայի կողմից ստեղծված՝ Հնդկաստանների հարցերով Գերագույն խորհրդին:

Հնդկացիները, վտարվելով բարեբեր հողերից, աստիճանաբար վերահաստատվեցին լեռնային շրջաններում և ապրում էին մեկուսացած: Նրանց կապը գաղութային վարչակազմի հետ սահմանափակվում էր հարկերի գանձմամբ և պարտադիր պարիակների կատարմամբ: Իսպանացիներն ի վիճակի չէին վերացնելու դարերով պահպանվող նրանց ավան-



Էրնան Կորտես

դական կենցաղը և սոցիալական կյանքի կազմակերպման ձևերը: Հնդկացիների կառավարումը հեշտացնելու նպատակով իսպանացիները թույլ տվեցին նրանց առաջնորդներին՝ *կասիկներին*, պահպանել իրենց դերը: Վերջիններս նույնիսկ իրավունք ստացան ձիով երթնելելու և սառը զենք կրելու, ինչն արգելված էր շարքային հնդկացիներին:

Իսպանական նվաճման հետևանքները: Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրների նվաճումը հարթ չէր ընթանում: Իսպանացիներին հաջողվեց գրավել ագտեկների և ինկերի մայրաքաղաքները և տիրանալ այնտեղ պահվող գանձերին: Սակայն որոշ ժամանակ անց տեղացիները պայքար սկսեցին իրենց անկախության համար: Այդ պայքարին մեծապես նպաստեցին հենց կոնկիստադորները, որոնք չէին թաքցնում գրավված երկրների նյութական արժեքները (թանկարժեք մետաղներ և քարեր) անհապաղ ձեռք բերելու իրենց ցանկությունը: Ողջ կոնկիստայի ընթացքում իսպանացիների շրջանում տարածված էին *Էլդորադոյի* մասին պատմությունները: Վերջինս մի

առասպելական վայր էր, որտեղ կային ոսկու և արծաթի անհամար պաշարներ:

Իսպանացիները ձեռնամուխ եղան նաև նվաճված ցեղերի դաժան շահագործմանը: Բնակավայրերի ողջ բնակչությունը բռնի կերպով քշվում էր հանքեր, որտեղ նրանք, չղիմանալով անասելի ծանր աշխատանքային պայմաններին, զանգվածաբար մահանում էին: Այդպես իսպառ վերացվեց Կարիբյան ծովի կղզիների բնակչությունը (Կուբա, Հաիթի և այլն): Զանգվածաբար ոչնչացվում էր նաև անհնազանդ ցեղերի ողջ բնակչությունը՝ մեծից փոքր: Հնդկացիների վրա սահմանվեցին ծանր հարկեր, որոնց վճարումն ուղացնելը առիթ էր դառնում պատժիչ արշավանքների և բնակավայրերի հիմնահատակ ավերման: Մեծ թվով մարդիկ ստրկության էին վաճառվում իսպանացիների նորաստեղծ պլանտացիաների տերերին:

Ոչ պակաս դաժանաբար էր վարվում կաթոլիկ եկեղեցին: Տեղացիների մեջ քրիստոնեության բռնի տարածման նպատակով հնդկացիների տաճարներն ավերվում էին, արգելվում էին նրանց կրոնական ծեսերը: Աստվածներին երկրպագելը համարվում էր ծանր հանցանք, որի համար մարդկանց մահապատժի էին ենթարկում:

Ժամանակակիցները Չիլին անվանում էին «իսպանացիների գերեզման»: Միայն կազմակերպված ռազմական ուժի և հրագենի, ինչպես նաև հնդկացիների տարբեր ցեղերի միջև եղած տարաձայնությունների շնորհիվ իսպանացիներին հաջողվեց ամրապնդել իրենց տիրապետությունը: Սակայն հնդկացիները կարողացան պահպանել իրենց ազգային արժեքների հիմնական մասը, ինչն այսօր էլ

ակնառու է: Նրանք ստիպված էին ընդունել քրիստոնեություն, սակայն դեռևս երկար ժամանակ շարունակում էին գաղտնի երկրպագել նախկին աստվածներին:

Հնդկացիները մեծ դժվարությամբ էին համակերպվում նոր իրավիճակին: Նորաստեղծ իսպանական քաղաքներից հեռու ընկած շրջանները, որտեղ ապրում էր հնդկացիների գերակշիռ մասը, երկար ժամանակ դուրս մնացին քաղաքակրթական գործընթացներից: Նրանք շարունակում էին ապրել իրենց նախկին կենցաղով և չէին տիրապետում իսպաներենին: Հնդկացիները չէին ներգրավվում նաև գաղութային վարչակազմի աշխատանքների մեջ:

Այսպիսով՝ Ամերիկայի նվաճումից հետո *դարեր շարունակ կողք կողքի գոյատևում էին երկու տրամագծորեն հակադիր, միմյանց խորթ քաղաքակրթություններ*: Հնդկացիների ներգրավումը գաղութների քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքին չափազանց դանդաղ էր ընթանում: Դա հետևողումբոյան Ամերիկայի պատմության կարևորագույն առանձնահատկությունն է:

Այնուամենայնիվ, կոնկիստային հաջորդող դարերի ընթացքում ժողովրդագրական իրավիճակը սկսեց որոշակիորեն փոփոխվել: Իսպանացիների և հնդկացիների միջև խառնամուսնությունների արդյունքում առաջ էր գալիս խառնածինների մի սովոր զանգված (մետիսներ), որոնց համար թե՛ գաղութատերերը, թե՛ տեղացիները հավասարապես հոգեհարազատ էին: Խառնամուսնություններ էին կատարվում իսպանացիների և նրանց կողմից Աֆրիկայից ներմուծված սևամորթների (մուլաթներ), ինչպես նաև հնդկացիների և սևամորթների միջև (սամբոներ):

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է կոնկիստան: Ո՞վ նվաճեց ացտեկների երկիրը: Նկարագրե՞ք ինկերի և մայաների երկրների նվաճման ընթացքը: Վարչական ինչ միավորներ ստեղծեցին իսպանացիները: Ներկայացրե՞ք փոխարքայությունների կառավարման համակարգը:
2. Ներկայացրե՞ք կոնկիստայի հետևանքները Կենտրոնական և Հարավային Ամերիկայի հնդկացիների համար: Ինչ միջոցներով էին իսպանացիները պահպանում իրենց տիրապետությունը: Հնդկացիների հակազդության պայքարի ինչ նշանավոր իրադարձություններ կարող եք նշել: Տնկյց տվե՞ք հետկոլումբոսյան Ամերիկայի քաղաքակրթական կարևորագույն առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ Գ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

§ 1-2. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքները: XV դ. կեսերից մինչև XVIII դ. կեսերը կատարված Աշխարհագրական մեծ հայտնագործությունները կարևոր նշանակություն ունեցան հասարակության հետագա զարգացման համար:

Մինչև Աշխարհագրական մեծ հայտնագործությունները Արևմուտք-Արևելք առևտրական ճանապարհներն անցնում էին Միջերկրական ծովով և Առաջավոր Ասիայով: Թուրքական նվաճումների հետևանքով այդ ճանապարհները փակվեցին: Արևելք տանող ծովային ճանապարհի հայտնագործությունից հետո առևտրական ուղիները Միջերկրական, Բալթիկ և Հյուսիսային ծովերից տեղափոխվեցին Ատլանտյան, Հնդկական և Խաղաղ օվկիանոսներ: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների ար-

դյունքում Եվրոպայի կապերն Ասիայի, Աֆրիկայի և նոր հայտնագործված Ամերիկայի հետ դարձան ոչ միայն մշտական, այլև բազմաբնույթ: Հայտնագործած երկրները յուրացնելու համար եվրոպացիները դրանք դարձնում էին իրենց գաղութները: Առաջին գաղութային կայսրությունները ստեղծեցին Պորտուգալիան և Իսպանիան: Ծուտով գաղութներ հիմնեցին նաև Հոլանդիան, Անգլիան և Ֆրանսիան: Գաղութներից Եվրոպա էին բերում գյուղատնտեսական մթերքներ, համեմունքներ, թանկարժեք իրեր: 1521–1660 թթ. Ամերիկայից Իսպանիա տեղափոխվեց 18 հազար տոննա արծաթ և 200 տոննա ոսկի: Գաղութների թալանի և տեղաբնիկների շահագործման արդյունքում Եվրոպայի առևտրականների ձեռքում մեծ քանակությամբ հարստություն կուտակվեց: Փոխվեցին եվրոպացիների

պատկերացումներն աշխարհի վերաբերյալ, որը հիմք դարձավ գիտության զարգացման համար:

Աշխարհագրական հայտնագործություններն ունեցան նաև բացասական հետևանքներ, քանի որ եվրոպացիները կործանեցին տեղական քաղաքակրթությունները և խախտեցին գաղութացված երկրների ու ժողովուրդների բնականոն զարգացումը:

Հայտնագործությունները մեծ նշանակություն ունեցան Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի ժողովուրդների համար: Եվրոպայի հետ կանոնավոր շփումները նպաստեցին տարբեր տարածաշրջանների միջև տնտեսական և մշակութային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը՝ հիմք դնելով միասնացման գործընթացներին:

Սոցիալ-քաղաքական միջավայրի վերակառուցումը: XVI դ. Եվրոպայի սոցիալական միջավայրի կազմակերպման հիմնական առանձնահատկությունն այն էր, որ տնտեսության մեջ հին և նոր ծնունդ առնող երևույթները գոյություն ունեին զուգահեռաբար: Աշխատանքի գործիքները, աշխատանքի կազմակերպման եղանակները և մարդկանց տեխնիկական գիտելիքները դեռևս պահպանում էին միջնադարյան հատկանիշները: Սակայն սա երկրագործական քաղաքակրթության վերջին փուլն էր: Հնի շրջանակներում ձևավորվում էին այն երևույթները, որոնք հիմք դարձան արդյունաբերական հեղաշրջման համար:

Նոր երևույթների առաջացումն ամենից առաջ կապված էր արտադրության կազմակերպման և ֆինանսավորման հետ: Արտադրության մեջ նոր տեխնիկայի օգտագործումը կատարվում էր հասարակության հետագա զարգացման հա-

մար կարևոր այնպիսի բնագավառներում, ինչպիսիք էին լեռնահանքային արդյունաբերությունը, մետաղագործությունը, նավաշինությունը, գրատպությունը, զինագործությունը: Այս ժամանակաշրջանում գյուղատնտեսությունը շարունակում էր մնալ տնտեսության առաջատար ճյուղը: Չնայած մի շարք տեխնիկական նորամուծությունների՝ գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ գերակշռում էր ձեռքի աշխատանքը: Ուստի տնտեսության հետագա զարգացման համար խիստ կարևոր էր ոչ միայն աշխատուժի առկայությունը, այլև աշխատողի մասնագիտական հմտությունները:

Չնայած XVI դ. երկրագործության մեջ եռադաշտային համակարգը դարձավ տիրապետող, և բերքատվությունը բարձրացավ, սակայն Եվրոպայի երկրների մի մասը, մասնավորապես Իսպանիան և Նիդերլանդները հարկադրված էին հացահատիկ ներմուծել: Սա ստիպում էր գտնել հողի մշակման ինտենսիվ եղանակներ, որպեսզի նույն հողատարածքից ավելի շատ բերք ստացվեր: Սրանց թվում էին գյուղատնտեսական գործիքների կատարելագործումը, հողի պարարտացումը և նոր սերմերի ներդրումը: Որպես պարարտանյութ հիմնականում օգտագործում էին գոմաղբը, որն իր հերթին խթանում էր անասնապահության զարգացումը:

XVI դ. արդյունաբերության մեջ ևս գերակշռում էր ձեռքի աշխատանքի վրա հիմնված արտադրությունը: Լայն սպառման առարկաները, մասնավորապես հագուստը, կոշիկը արտադրում էին անհատ արհեստավորները: Աշխատանքի արտադրողականության աճն այստեղ կապված էր աշխատանքի գործիքների կատարելագործման և աշխատանքի ճիշտ քաժանման հետ: Արդեն XVI դ. հաշվվում

էր շուրջ 100 արհեստ: Համքարությունը շարունակում էր մնալ որպես արհեստագործական արտադրության կազմակերպման ձև: Սակայն համքարության սահմանած կանոններն արտադրանքի տեսակի, չափի, որակի և քանակի վերաբերյալ խոչընդոտում էին արտադրության հետագա զարգացումը: Բացի այդ, անհատ արհեստավորներն արդեն չէին կարող բավարարել հասարակության աճող պահանջները:

Անհրաժեշտ էր կազմակերպել արտադրության նոր՝ ավելի արտադրողական եղանակ: Այսպիսի եղանակ դարձավ մանուֆակտուրան, որտեղ աշխատում էին վարձու բանվորներ և իրենց աշխատանքի դիմաց աշխատավարձ էին ստանում: Այստեղ ևս աշխատանքը հիմնականում ձեռքով էին կատարում և օգտագործում էին միայն այնպիսի պարզագույն մեխանիզմներ, ինչպիսիք էին ջրանիվը, ճահարակը, ջուլիակի հաստոցը: Մանուֆակտուրային արտադրություն կազմակերպելու համար անհրաժեշտ էին դրամական մեծ միջոցներ: Այդպիսիք կային առևտրականների ձեռքին, որ կոչվում էր **առևտրական կապիտալ**: Առևտրականները իրենց մոտ կուտակված կապիտալի մի մասը ներդրեցին գյուղատնտեսական ու մանուֆակտուրային արտադրություն կազմակերպելու մեջ: Սկզբում առաջանում էին լայն սպառման ապրանքներ արտադրող, իսկ հետագայում՝ մետաղամշակման, նավաշինական, լեռնաարդյունաբերական մանուֆակտուրաներ:

XV դ. վերջին և XVI դ. սկզբին Արևմտյան Եվրոպայի երկրների քաղաքական միջավայրի կազմակերպման և կառուցվածքի մեջ տեղի են ունենում որոշակի փոփոխություններ: Ֆրանսիայում, Անգլիայում և Իսպանիայում ավարտվում է քաղաքական միավորումը: Այն շրջան-

ներում, մասնավորապես Գերմանիայում և Իտալիայում, որտեղ քաղաքական մասնատվածությունը պահպանվում էր, ձևավորվում էին առանձին քաղաքական կենտրոններ: Սոցիալ-քաղաքական փոփոխությունների արդյունքում ձևավորվեց թագավորական իշխանության կազմակերպման նոր տիպ՝ **բացարձակ միապետություն**: Թագավորական իշխանությանը հաջողվեց ճնշել կենտրոնախույս խոշոր ավատատերերի դիմադրությունը և այն աստիճանի ուժեղանալ, որ պետության կառավարման համար շատ դեպքերում դասային ներկայացուցիչների ժողով չէր հրավիրվում: Հաստատվեց կառավարման այնպիսի համակարգ, երբ միապետի իշխանությունը ոչնչով չէր սահմանափակվում: Իշխանության նոր ձևի անհրաժեշտությունը և օրինականությունը հիմնավորում էին նրանով, որ թագավորական իշխանությունը աստվածային ծագում ունի, միապետին տրված աստվածային իրավունքներն անբաժանելի են, և չենթարկվել նրան նշանակում է չենթարկվել Աստծուն:

Բացարձակ միապետության առաջացման հիմնական պատճառը ազնվականների, հոգևորականների, քաղաքացիների դասերի ներսում տեղի ունեցած փոփոխություններն էին: Ազնվականությունը՝ որպես ռազմաքաղաքական և տնտեսական դաս, կորցրեց իր նշանակությունը: Այժմ նրանց մեծ մասի գոյատևման հիմնական միջոցը բարձր վարձատրվող պետական պաշտոններն էին, որոնց նշանակումը միապետի մենաշնորհն էր: Սա ստիպում էր նրանց համախմբվել թագավորի շուրջը: Հոգևորականների դերը պետության կառավարման գործում ևս փոխվեց: Կաթոլիկ եկեղեցու դիրքերի թուլացումը, եկեղեցու ենթար-

կումը պետությանը, Ռեֆորմացիայի հաղթանակը և ազգային եկեղեցիների ձևավորումը ստեղծել էին այնպիսի իրավիճակ, երբ հոգևորականների հետագա ճակատագիրը միապետի ձեռքում էր: Թագավորի հովանավորության կարիքն ամենից շատ զգում էր քաղաքային բնակչության վերնախավը՝ առևտրականները և արդյունաբերողները, ուստի նրանք ևս համախմբվեցին միապետի շուրջը: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ միապետը ձեռք բերեց անսահմանափակ իշխանություն: Իրական իշխանությունը միապետի գլխավորությամբ կենտրոնացավ մի խումբ մարդկանց ձեռքում, որոնցից էլ բաղկացած էր թագավորին կից *գաղտնի խորհուրդը*: Վերջինս զբաղվում էր պետության արտաքին քաղաքականությամբ, ֆինանսներով, բանակով, տնտեսությամբ: Խորհրդի հիման վրա էլ հետագայում ձևավորվեց *Նախարարների խորհուրդը* (կաթինետ):

Ռեֆորմացիա: XVI դ. եվրոպայում սկսվեց *Ռեֆորմացիա* անունը կրող շարժումը, որի նպատակն էր հռոմեակաթուլիական եկեղեցում բարեփոխումներ կատարելը: Այն ոչ միայն քննադատում էր եկեղեցու արատները, այլև պահանջում էր բարեփոխել եկեղեցին, պարզեցնել նրա կառուցվածքը, կրճատել հոգևորականների թիվը և եկեղեցին համապատասխանեցնել նոր պայմաններին: Ռեֆորմացիան սկսվեց *1517 թ. հոկտեմբերի 31-ին* Գերմանիայի Վիտենբերգ քաղաքում *Մարտին Լյութերի* 95 դրույթների հրապարակումով:

XVI դ. սկզբին Հյուսիսային Գերմանիայում ինդուլգենցիաների (մեղքերի թողության թղթեր) վաճառքը հանձնարարվեց Դոմինիկյան միաբանության վաճառականներին, որոնք, խախտելով

կամավորության սկզբունքը, ինդուլգենցիաները պարտադրանքով վաճառում էին հավատացյալներին: Մարտին Լյութերի 95 դրույթներն ուղղված էին հենց ինդուլգենցիաների վաճառքի դեմ: Նա գտնում էր, որ Հռոմի պապն իրավունք չունի հանցագործներին մեղքերի թողություն տալու, քանի որ մեղքը կարելի է քավել ոչ թե ինդուլգենցիա գնելով, այլ տանջանքների ճանապարհով: Նրա կարծիքով՝ պապն իրավունք չունի խառնվելու աշխարհիկ իշխանության գործերին, իսկ եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը: Ռեֆորմացիայի կողմնակիցները քրիստոնեական հավատքի միակ աղբյուրը ճանաչեցին Աստվածաշունչը, մինչդեռ կաթոլիկ եկեղեցին Սուրբ Գրքի հետ միաժամանակ որպես հավատքի աղբյուր ընդունում էր նաև տիեզերական ժողովների կանոնները և պապերի որոշումները: Նրանք մերժում էին փրկության գործում եկեղեցու՝ որպես միջնորդի դերը և համոզված էին, որ Աստվածաշնչում տեղ գտած բարոյական սկզբունքներին հետևող հավատացյալը ճշմարիտ հավատի և ոչ թե ինդուլգենցիայի օգնությամբ կարող է հասնել փրկության:

Գրատպության գյուտը և ազգային լեզուների ձևավորումը հնարավորություն տվեցին Աստվածաշունչը լատիներենից թարգմանելու ազգային լեզուներով, որպեսզի յուրաքանչյուր հավատացյալ ինքնուրույն ծանոթանա Սուրբ Գրքին: Շուտով Ռեֆորմացիան վերածվեց հասարակական լայն շարժման, քանզի նրան մասնակցում էին հասարակության բոլոր խավերը: Յուրաքանչյուր խավ, ինչպես նաև պետությունը փորձում էին տիրանալ եկեղեցու շարժական և անշարժ հարստություններին: *1521 թ.* Սրբազան հռոմեական կայսրության կայսր *Կարլոս V-ը*

Վորմա քաղաքում գումարեց ոայխստագ, որը Լյութերից պահանջեց հրաժարվել իր գաղափարներից, սակայն վերջինս մերժեց: Երբ Կարլոս V–ը հրամանագիր ստորագրեց Լյութերի քարոզած գաղափարներն արգելելու մասին, Ռեֆորմացիայի կողմնակից իշխանները և քաղաքացիները բողոքեցին դրա դեմ: Այստեղից էլ Ռեֆորմացիայի կողմնակիցներին սկսեցին անվանել **բողոքականներ**: Շուտով Լյութերի քարոզած գաղափարների հիման վրա նրանք ստեղծեցին իրենց եկեղեցին, որը տարբերվում էր կաթոլիկ եկեղեցուց: Այսպես Գերմանիայում առաջացավ բողոքական (լյութերական) եկեղեցի: Հաստատվեց «նմ իշխանությունը, նրա էլ՝ հավատը» սկզբունքը, այսինքն՝ տվյալ տարածքի իշխանն էր որոշում իր հպատակների հավատը:

Շուտով Ռեֆորմացիոն շարժումը ընդգրկեց գրեթե ողջ Արևմտյան Եվրոպան: Նրա երկրորդ խոշոր կենտրոնը դարձավ փոքրիկ Շվեյցարիան: Այստեղ շարժումը գլխավորում էր Ֆրանսիայից ժամանած **ժան Կալվինը**, որի ջանքերով բարեփոխումներ անցկացվեցին Ժնևի եկեղեցու, և ստեղծվեց բողոքական՝ **կալվինական եկեղեցին**:

1534 թ. Անգլիայի թագավոր **Հենրիխ VIII–ը** (1509–1547) ստորագրեց պառլամենտի ընդունած «Գերագահության մասին» ակտը, ըստ որի՝ փակվեցին բոլոր վանքերը, իսկ նրանց ամբողջ ունեցվածքը անցավ պետությանը: Եկեղեցու գլուխ կանգնեց թագավորը: Բարձրաստիճան հոգևորականներին պաշտոններում նշանակում էր պառլամենտը: Պետական գանձարանից նրանք աշխատավարձ էին ստանում: Այսպես ստեղծվեց **անգլիական (անգլիկան) բողոքական եկեղեցին**:

Ռեֆորմացիոն շարժումը սուր բնույթ ընդունեց Ֆրանսիայում և վերածվեց երկարատև քաղաքացիական կռիվների (Հուգենոտյան պատերազմներ): Ժան Կալվինի գաղափարները Շվեյցարիայից թափանցեցին Հարավային Ֆրանսիա: Կալվինականներին այստեղ անվանում էին **հուգենոտներ** (գերմաներեն՝ «համատեղ երդում տվածներ»): Հուգենոտյան շարժումը գլխավորում էր Նավարայի Բուրբոնների թագավորական տունը, որը ֆրանսիական Վալուաների կրտսեր տոհմից էր: **1562 թ.** կաթոլիկների և հուգենոտների միջև տեղի ունեցավ ընդհարում, որով Ֆրանսիայում սկսվեցին կրոնական պատերազմները (1562–1594): Դրանց բարձրակետը 1572 թ. օգոստոսի 24–ի գիշերն էր (Բարդուղիմեոսյան գիշեր): Այդ օրը Ռեֆորմացիոն շարժումը ձնչելու համար Փարիզում սպանեցին շուրջ 3 հազար հուգենոտների, այդ թվում՝ կանանց և երեխաների:

1594 թ. հուգենոտների առաջնորդ Հենրիխ Բուրբոնը ընդունեց կաթոլիկություն և դարձավ Ֆրանսիայի թագավոր՝ **Հենրիխ IV** անունով: Ֆրանսիայի ներքին միասնությունն ամրապնդելու համար նա **1598 թ.** հրապարակեց **Նանտի հոչակագիրը**, ըստ որի՝ կաթոլիկությունը հռչակվեց Ֆրանսիայի պետական կրոն: Հուգենոտները դավանանքի ազատություն ստացան Ֆրանսիայի բոլոր շրջաններում, բացի Փարիզից: Նրանց թույլատրվեց նաև զբաղեցնել պետական պաշտոններ: Հետագայում կարդինալ **Ռիշելյոն** (1624–1642) վերացրեց հուգենոտներին տրված բոլոր արտոնությունները:

Նիդերլանդական հեղափոխությունը: Նիդերլանդները XV դ. մտնում էին Բուրգունդական դքսության կազմի մեջ: 1477 թ., երբ սպանվեց Բուրգունդիայի



Ֆիլիպ II

դուքս Կարլոս Խիզախը, երկիրը ժառանգություն մնաց նրա դուստր Մարիային, որն ամուսնացավ Մաքսիմիլիանոս Հաբսբուրգի հետ: Վերջինս հետագայում դարձավ Սրբազան հռոմեական կայսրության կայսր, և Նիդերլանդները մտան կայսրության կազմի մեջ: Երբ Իսպանիայի թագավոր Կարլոս I-ն ընտրվեց նաև Սրբազան հռոմեական կայսրության կայսր, Նիդերլանդներն անցան Իսպանիային, որտեղ հետագայում թագավորեց Կարլոս I-ի որդին՝ Ֆիլիպ II-ը (1555–1598):

XVI դ. կեսերին Նիդերլանդները բաղկացած էին 17 գավառներից (պրովինցիաներից), որոնցից խոշորներն էին Հոլանդիան՝ հյուսիսում, և Ֆլանդրիան՝ հարավում: Այդ ժամանակ Նիդերլանդներում կար 300 քաղաք, 6500 գյուղ և շուրջ 3 մլն բնակչություն: Երկիրը կառավարում էին թագավորի նշանակած փոխարքան և պետական խորհուրդը: Կարևորագույն հարցեր քննարկելու համար հաճախ իրավիրում էին նաև գլխավոր շտատներ: Իսպանիան իր պետական եկամուտի շուրջ 40%-ը ստանում էր Նիդերլանդներից: Այդ ժամանակ այստեղ մեծ տարածում գտավ

Ռեֆորմացիան, մասնավորապես՝ կալվինական գաղափարները: Վախենալով, որ երկրում սկսված Ռեֆորմացիան կարող է վերածվել ազգային-ազատագրական պայքարի, կաթոլիկ միապետ Ֆիլիպ II-ի հրամանով այստեղ հիմնվեց ինկվիզիցիայի դատարան: Սակայն պայքարը շարունակվեց, և Ռեֆորմացիան վերաճեց ազգային-ազատագրական պատերազմի ու հեղափոխության:

1565 թ. պետական խորհրդի անդամներն ստեղծեցին «Ազնվականների միություն» կազմակերպությունը, որը մի շարք պահանջներ ներկայացրեց փոխարքային: Նրանք առաջարկում էին վերացնել որոշ հարկեր և մեղմացնել կալվինականների դեմ ուղղված օրենքները: Սակայն դրանք չկատարվեցին, և նիդերլանդցիները որոշեցին զենքի ուժով հասնել դրանց իրագործմանը:

Ապստամբությունը սկսվեց 1566 թ. պատկերամարտական շարժումով, քանի որ կալվինականները դեմ էին սրբապատկերների և սրբազան մասունքների պաշտամունքին: Պատկերամարտական շարժումն ընդգրկեց 12 գավառներ: Ավերվեցին 5500 վանքեր ու եկեղեցիներ, ոչնչացվեցին դրանց պատկանող բոլոր սրբապատկերները և մասունքները: Ապստամբության գլուխ կանգնեց **Վիլհելմ I Օրանցին**, որը, ժամանակին խույս տալով իսպանացիների հետապնդումներից, անցել էր Գերմանիա: Ջորքեր հավաքագրելով՝ նա վերադարձավ Նիդերլանդներ: Նրան հանձնվեցին գլխավոր հրամանատարությունը և գործադիր բարձրագույն իշխանությունը: Սակայն ապստամբների ներսում միասնություն չկար, և նրանք շուտով պառակտվեցին: Հարավային գավառները, որոնք տնտեսապես ամուր կապված էին Իսպանիայի

հետ, դադարեցրին պայքարը և մնացին Իսպանիայի կազմում (Իսպանական Նիդերլանդներ): Սրանց մի մասի հիմքի վրա հետագայում առաջացավ Բելգիա պետությունը: Իսպանացիների դեմ պայքարը շարունակելու համար հյուսիսի յոթ գավառները 1579 թ. կնքեցին *Ռաբիխտի միությունը*, որը հիմք դարձավ նոր պետության՝ *Միացյալ Գաւառների Հանրապետության* (Նիդերլանդներ, Հոլանդիա) առաջացման:

Իսպանիան փորձեց վերադարձնել անջատված գավառները, սակայն Հոլանդիային օգնության հասած Անգլիան զորքեր ուղարկեց: 1588 թ. Իսպանիան 134 նավերից բաղկացած «Անպարտելի Արմադա» կոչվող իր նավատորմն ուղարկեց Անգլիայի դեմ: Բայց անեղ փոթորիկը ոչնչացրեց նավերի մեծ մասը, իսկ անգլիական նավատորմը՝ մյուս մասը: Իսպանիա վերադարձավ միայն 43 նավ: Իսպանիան ստիպված էր **1609 թ.** Նիդերլանդներին ճանաչել որպես ինքնուրույն պետություն, իսկ **1648 թ.**, երբ ստորագրեց Երեսնամյա պատերազմի ավարտը վավերացնող *Վեստֆալյան հաշտությունը*, ստիպված էր վերջնականապես հրաժարվել Նիդերլանդներից: Որպես առավել զարգացած գավառ՝ նորաստեղծ հանրապետության գլուխ կանգնեց Հոլանդիան, ուստի պետությունը երբեմն անվանում են **Հոլանդիա**:

Երեսնամյա պատերազմը: Ռեֆորմացիայի ընթացքում գերմանական իշխանների մի մասն ընդունեց բողոքականություն: Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությամբ շահագրգռված էին եվրոպական մի շարք երկրներ, մասնավորապես Ֆրանսիան և Անգլիան: Իրենց իրավունքները պաշտպանելու և հակառեֆորմացիոն ուժերի

դեմ պայքարելու համար գերմանական բողոքական իշխանները միավորվեցին և 1608 թ. ստեղծեցին «Ավետարանական միություն» կազմակերպությունը: Իր հերթին կաթոլիկ իշխանները ևս միավորվեցին և 1609 թ. ստեղծեցին «Կաթոլիկական միություն» կազմակերպությունը: Սրանցից յուրաքանչյուրին հովանավորում և օգնություն էին ցույց տալիս եվրոպական տարբեր երկրներ, ուստի սրանց միջև տեղի ունեցող ռազմական գործողություններին մասնակցեցին նաև եվրոպական երկրները:

1618 թ. սկսվեց համաեվրոպական առաջին՝ Երեսնամյա պատերազմը: Պատերազմի առիթ եղան այդ ժամանակ Սրբազան հռոմեական կայսրության կազմում գտնվող Չեխիայում տեղի ունեցող իրադարձությունները: 1618 թ. բողոքականություն ընդունած չեխ իշխաններն ապստամբություն բարձրացրին իրենց իրավունքները պաշտպանելու համար: Շուտով պատերազմը դուրս եկավ Գերմանիայի սահմաններից և դարձավ համաեվրոպական: Գերմանական կաթոլիկ իշխաններին պաշտպանում էին Իսպանիան և պապականությունը, իսկ բողոքական իշխաններին (հակահաքսբուրգյան խմբավորում) օգնում էին Շվեդիան, Դանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Անգլիան:

Պատերազմն ավարտվեց Հաքսբուրգյան խմբավորման պարտությամբ: **1648 թ.** կնքվեց *Վեստֆալի հաշտության պայմանագիրը*: Շվեդիան ձեռք բերեց մի շարք տարածքներ և դարձավ Բայթյան տարածաշրջանի հզոր պետություն: Ֆրանսիան քիչ տարածքներ ստացավ, բայց վերածվեց Եվրոպայի ամենամեծ քաղաքական հեղինակություն ունեցող երկրի: Միջազգային ճանաչում ստացան

(որպես անկախ պետություններ) Շվեյցարական միությունը և Միացյալ Գավառների Հանրապետությունը (Նիդերլանդներ): Ամենից շատ պատերազմից տուժեց Գերմանիան, քանի որ Վեստֆալի պայմանա-

զիրը ճանաչեց նրա քաղաքական և դավանաբանական մասնատվածությունը: Տապալվեց Եվրոպայում «քրիստոնեական միասնական կայսրություն» ստեղծելու Հարսբուրգների վաղեմի ծրագիրը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՞ք Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դրական և բացասական հետևանքները: Ո՞ր պետությունները ստեղծեցին գաղութային կայսրություններ:
2. Նոր ժամանակների շեմին ի՞նչ փոփոխություններ կատարվեցին տնտեսության գլխավոր ճյուղերում: Աղյուսակի տեսքով ներկայացրե՞ք այդ փոփոխությունները: Նոր ժամանակների սկզբին կառուցվածքային ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Արևմտյան Եվրոպայի սոցիալ-քաղաքական միջավայրում: Որո՞նք էին դրանց պատճառները և հետևանքները:
3. Ո՞րն էր Ռեֆորմացիայի առաջացման գլխավոր պատճառը: Ի՞նչ էին քարոզում Ռեֆորմացիայի կողմնակիցները: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ռեֆորմացիան: Թվարկե՞ք բողոքական եկեղեցիները:
4. Նիդերլանդներն ինչպե՞ս էր դարձել իսպանական տիրույթ: Ի՞նչ վարչամիավորների էր այն բաժանված և ինչպե՞ս էր կառավարվում: Ներկայացրե՞ք հեղափոխության ընթացքն ու ավարտը Նիդերլանդներում:
5. Որո՞նք էին Երեսնամյա պատերազմի պատճառներն ու առիթը: Ներկայացրե՞ք Երեսնամյա պատերազմի արդյունքները:

§ 3. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Բարձր Վերածնունդը և Հյուսիսային Վերածնունդը: XVI դ. Արևմտյան Եվրոպայի մշակութային կյանքը վերելք էր ապրում: Իտալիայում այն հայտնի է **Բարձր Վերածնունդ**, իսկ Ալպերից հյուսիս ընկած երկրներում և Պիրենեյան թերակղզում՝ **Հյուսիսային Վերածնունդ** անվանումներով: Այդ դարաշրջանում հատկապես մեծ զարգացում ապրեցին գրականությունը և քաղաքական միտքը: Գրական երկերում և քաղաքագիտական բնույթի աշխատություններում տեղ էին գտնում ոչ միայն գեղարվեստական սյուժեներ, այլև քննարկվում էին պատմա-

կան, հասարակագիտական, սոցիալական բնույթի հիմնախնդիրներ:

Մարդկանց և ունեցվածքի հավասարության, սոցիալական արդարության գաղափարները տեղ են գտել իտալացի գրող **Թոմազո Կանյանդելլայի** (XVI–XVII դդ.) «Արևի քաղաքը» ուտոպիական ստեղծագործության մեջ: Արևի քաղաքում, որը հիշեցնում էր իտալական քաղաք-հանրապետությունը, չկար մասնավոր սեփականություն, և աշխատանքը պարտադիր էր բոլոր բնակիչների համար: Դաստիարակության և կրթության խնդիրն էր բացահայտել աճող սերնդի բոլոր ունակությունները, և դրանք ծառայեցնել հա-

սարակության շահերին: Արևի քաղաքի կառավարումը բանիմաց և իմաստուն մարդկանց ձեռքերում էր:

Պետության կառավարման ձևերին և Իտալիայի քաղաքական վերամիավորման խնդիրներին են նվիրված իտալացի հումանիստ *Նիկոլո Մաքիավելլո* (1469–1527) «Տիրակալը» և «Ֆլորենցիայի պատմությունը» աշխատությունները: Մաքիավելլո նպատակը միասնական ու անկախ Իտալիայի ստեղծումն էր: Նրա կարծիքով՝ այս նպատակին հասնելու համար չպետք է կանգ առնել բռնության, կեղծիքի և դաժանության առջև: «Նպատակն արդարացնում է միջոցները», — ասում էր Մաքիավելլին:

Այդ ժամանակ սկսեց ձևավորվել նաև միջազգային իրավունքը, որի հիմնադիրն է համարվում հոլանդացի գիտնական *Հուգո Գրոտիուսը* (1583–1645): Նրան մեծ փառք բերեց «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» աշխատությունը, որտեղ նա մշակեց միջազգային իրավունքի մի շարք նորմեր: Նրա կարծիքով պետությունների միջև բոլոր հակասությունները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով: Նա է «ազատ ծովի» գաղափարի հեղինակը, ըստ որի՝ բոլոր երկրների նավերն իրավունք ունեն անարգելու նավարկելու երկրագնդի բոլոր ծովերում:

Հյուսիսային Վերածննդի ականավոր գրողներից էին *Ֆրանսուա Ռաբլեն* (Ֆրանսիա), *Էրստվո Ռոտերդամցին* (Գերմանիա), *Միգել Սերվանտեսը* (Իսպանիա): Վերջինիս մեծ ճանաչում բերեց «Դոն Կիխոտ» ստեղծագործությունը: Այն հեղինակի ապրած ժամանակաշրջանի իսպանական հասարակության վերաբերյալ յուրօրինակ հանրագիտարան է:

Հյուսիսային Վերածննդի նշանավոր գործիչներից էր Անգլիայի վարչապետ

Թոմաս Մորը (1478–1535), որը հայտնի դարձավ իր «Ուտոպիա» ստեղծագործությամբ: Նա նկարագրում է *Ուտոպիա* անունով մի կղզի, որտեղ գոյություն ունեն պետություն: Այնտեղ բոլորը հագնվում և սնվում էին միատեսակ, իսկ աշխատանքը պարտադիր էր բոլորի համար, բացառությամբ երեխաների, ծերերի և կառավարողների: «Ուտոպիան» գրվել է այն ժամանակ, երբ Անգլիայում խորացել էր սոցիալական շերտավորումը: Ոչխարաբուծության հետագա զարգացման համար ազնվականները գյուղացիներին քշում էին հողերից: Այս կապակցությամբ Մորը ոչխարաբույծ հողատերերին ասել է. *«Ձեր ոչխարները խժոռում են մարդկանց»:*

Անհատի և հասարակության մեջ նրա իրավունքների, պարտականությունների և ազատությունների խնդիրներին անդրադարձել է անգլիացի հումանիստ, դրամատուրգ *Ուիլյամ Շեքսպիրը* (1564–1616): Նա ուժեղ և ազգային շահերն արտահայտող թագավորական իշխանության կողմնակից էր: Նրա փիլիսոփայական–քաղաքական և պատմական դրամաներում («Համլետ», «Օթելլո», «Հենրիխ V») քննարկված են մարդու բնության, հասարակության մեջ չարի, բարու, բարոյականության խնդիրները: Քանի որ հասարակության մեջ անարդարությունը և կեղծիքը շատ են, նա գտնում է, որ արժե մարդուն համարել արարչագործության պսակ: Մարդու ողբերգության աղբյուրը Շեքսպիրը փնտրում է նրա հոգու թուլության մեջ, որի դեպքում մարդն առաջնորդվում է ոչ թե քանականությամբ, այլ զգացմունքներով:

XVI–XVII դդ. Վերածննդի արվեստն Իտալիայում հասավ իր զարգացման բարձրակետին: Այդ դարաշրջանում են ապրել ու ստեղծագործել *Լեոնարդո դա*

Վինչին (1452–1519), **Միքելանջելո Բունտարոսին** (1475–1564) և **Ռաֆայել Սանտին** (1483–1520): Լեոնարդո դա Վինչին Բարձր Վերածննդի մեծագույն գործիչներից է: Իբրև հանձարեղ գեղանկարիչ՝ նա հայտնի է իր «Ջոկոնդա» («Մոնա Լիզա») նկարով և «Խորհրդավոր ընթրիքը» որմնանկարով, որոնք Վերածննդի կերպարվեստի բարձրագույն նվաճումներից են: Նա նաև նշանավոր գիտնական էր: Ստեղծել է թռչող սարքերի և ստորջրյա լողացող մեքենաների ուրվագծեր:

Մեծ հանձարի տեր էր նաև գեղանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Միքելանջելոն: Նրա արվեստում մարդու կերպարը ձեռք է բերում հերոսական և տիտանական գծեր: Խոշորագույն նկարիչ էր նաև Ռաֆայելը, որի բազմաթիվ «մադոնաները» (Տիրամայր) գովերգում են կնոջ գեղեցկությունն ու մայրական քնքշանքը: Նրա հոշակավոր «Սիքստինյան Տիրամայրը» կարծես թե դիտողին հաղորդում է այն վիշտը, որով ապրում են Տիրամայրը և Հիսուս Քրիստոսը, որն իր ապագա չարչարանքներով պետք է փրկեր մեղսագործ մարդկությանը:

XV դ. վերջերից Հյուսիսային Եվրոպայի նկարիչները ծանոթացան իտալական գեղանկարչությանը: Արդյունքում նրանք իրենց աշխատանքներում սկսեցին կիրառել իտալական գեղանկարչության ձեռքբերումները: Հյուսիսային Վերածննդի գեղանկարիչների շարքում հատկապես աչքի էր ընկնում գերմանացի նկարիչ **Ալբրեխտ Դյուրերը**: Մեծ վարպետությամբ է արված նրա «Ինքնանկար» դիմանկարը: Մարդկային կերպարներն առավել իրական և խորաթափանց պատկերելու համար նա ուսումնասիրեց մարդու անատոմիան և գրեց «Չորս գիրք

մարդու համամասնությունների մասին» աշխատությունը:

Իտալական Վերածննդի ազդեցությունը Նիդերլանդներում ամենից առաջ զգացվում էր գեղանկարչության բնագավառում: Նիդերլանդցի նկարիչներն իրենց նկարների համար նյութ էին քաղում ժողովրդի առօրյա կյանքից: Նրանք հաճախ պատկերում էին ժողովրդի կյանքից վերցրած զանգվածային տեսարաններ: Այսպիսի թեմաներով ստեղծագործող նկարիչների շրջանում հատկապես մեծ հռչակ էր վայելում **Պիտեր Բրեյգել Ավագը**: Այստեղ ձևավորվեցին երկու տարբեր մշակույթներ: Առաջինը (Միացյալ Գավառների Հանրապետություն) սկսեցին անվանել հոլանդական մշակույթ, իսկ երկրորդը (Իսպանական Նիդերլանդներ)՝ ֆլամանդական: Հոլանդական կերպարվեստի բարձրակետը **Ռեմբրանդտի** (1606–1669) ստեղծագործություններն են: «Անառակ որդու վերադարձը» կտավում նա պատկերում է մարդու տառապանքները և սերը: Ֆլամանդական կերպարվեստի զարգացման գործում մեծ դեր խաղաց **Ռուբենսը** (1577–1640):

Իսպանական կերպարվեստի վերելքի գործում մեծ էր նշանավոր նկարիչ **Էլ Գրեկոյի** դերը:

Առաջին գիտական հեղափոխությունը: Վերածնության և Ռեֆորմացիայի գաղափարների ազդեցության տակ ապրող մարդիկ աշխատում էին վերանայել նաև իրենց պատկերացումները և հայացքները բնության, հասարակության և մարդու վերաբերյալ: Դարերով արմատավորված ու քարացած պատկերացումներն այլևս չէին բավարարում այդ դարաշրջանի մարդկանց: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, հրագենի արտադրությունը, ձեռնարկատիրության և

անտրի զարգացումը ճշգրիտ գիտելիքների կարիք ունեին: Նման գիտելիքներ կարելի էր ձեռք բերել փորձի ու հայտնագործությունների ճանապարհով: Այսպես սկսվեց Առաջին գիտական հեղափոխությունը (XVI–XVII դդ.), որի ընթացքում ամենից առաջ զարգանում էին բնական և տեխնիկական գիտությունները:

Առաջին գիտական հեղափոխության ակունքներում կանգնած էր լեհ գիտնական **Ն. Կոպեռնիկոսը** (1473–1543): Նա մերժեց դարերով արմատավորված այն տեսակետը, որ իբր Երկիր մոլորակը Տիեզերքի կենտրոնում է, ու դիտարկումների և մաթեմատիկական հաշվարկների միջոցով ապացուցեց, որ Տիեզերքի կենտրոնում Արեգակն է, իսկ մյուս մոլորակները, այդ թվում՝ Երկիրը, պտտվում են նրա շուրջը: Ինչպես կաթոլիկ, այնպես էլ բողոքական եկեղեցիներն ընդդիմացան նրա տեսությանը: Վախենալով հալածանքներից՝ նա բարեկամներին հանձնարարեց «Երկնային ոլորտների շրջապտույտի մասին» աշխատությունը տպագրել իր մահից հետո: 1610 թ. կաթոլիկ եկեղեցին Կոպեռնիկոսի բոլոր հետևորդներին հայտարարեց հերետիկոս:

Ֆլամանդացի բժիշկ **Ա. Վեզալիուսը** (1514–1564) ուսումնասիրում էր մարդու մարմինը: Նա հերձման միջոցով տվեց մարդու մարմնի ներքին կառուցվածքի ճշգրիտ նկարագրությունը: 1543 թ. լույս տեսած նրա «Մարդկային մարմնի կառուցվածքի մասին» աշխատությունը հիմք հանդիսացավ ժամանակակից անատոմիայի համար: Վախենալով եկեղեցու հալածանքներից՝ նա ոչնչացրեց իր աշխատությունների մի մասը և դարձավ Կարլոս V կայսեր անձնական բժիշկը: Բայց ինկվիզիցիան դատապարտեց նրան ուխ-

տագնացության դեպի Պաղեստին: Վերադարձի ճանապարհին էլ նա մահացավ:

1600 թ. Հռոմի հրապարակներից մեկում ինկվիզիցիայի դատավճռով ողջակիզվեց իտալացի գիտնական **Ջորդանո Բրունոն** (1548–1600): Նա գտնում էր, որ Տիեզերքն անսահման է, և այնտեղ կան բազմաթիվ մոլորակներ: Աստղերը հեռավոր արեգակներ են, որոնց շուրջը պտտվում են մարդկանցով բնակեցված մոլորակներ: Այս տեսակետը նա հիմնավորում էր Աստվածաշնչից վերցրած փաստարկներով, այն է՝ ամենագոր Աստվածը չի կարող սահմանափակվել միայն Երկիր մոլորակի ստեղծմամբ:

Իտալացի ֆիզիկոս և աստղաբաշխ **Գալիլեո Գալիլեյը** (1564–1642) նույնպես գտնում էր, որ Երկիր մոլորակը պտտվում է Արեգակի շուրջը: 1609 թ. նա ստեղծեց ժամանակի ամենախոշոր աստղադիտակը և առաջինը դիտեց Արևի բծերը, Յուպիտերի արբանյակները և Լուսնի վրա գոյություն ունեցող անհարթությունները: 1633 թ. ինկվիզիցիան Գալիլեյի նկատմամբ դատավարություն կազմակերպեց: Վախենալով տանջանքներից՝ նա հրաժարվեց իր գաղափարներից, սակայն դուրս գալով դատարանից՝ ասաց. «Բայց, այնուամենայնիվ, այն պտտվում է»:

Գիտության հետագա զարգացման գործում մեծ դեր խաղաց անգլիացի փիլիսոփա **Ֆրենսիս Բեկոնը** (1561–1626): 1620 թ. լույս տեսած «Նոր Օրգանոն» գրքում նա ընդգծում էր, որ ճշգրիտ գիտելիքը կարելի է ձեռք բերել միայն փորձի միջոցով: Նա կարծիք է հայտնել Արեգակի էներգիայի օգտագործման, թռչող և ստորջրյա սարքերի մասին:

Առաջին գիտական հեղափոխության ընթացքում ստեղծվեց նոր ժամանակների գիտությունը: Առանձին գիտնականներ

րի ձեռքբերումներն արագորեն դառնում էին համաշխարհային գիտական մտքի սեփականությունը: Առաջին գիտական

հեղափոխությունը դարձավ այն նախադրյալներից մեկը, որն ապահովեց Եվրոպայի անցումը նոր ժամանակներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ խնդիրներ ու գաղափարներ էին քննարկվում Բարձր Վերածննդի և Հյուսիսային Վերածննդի գրական ու քաղաքական աշխատանքներում: Ներկայացրե՞ք այդ դարաշրջանի նշանավոր գործիչներին ու նրանց ստեղծագործությունները:
2. Վերածննդի արվեստի ինչ ականավոր ստեղծագործողներ գիտեք: Թվարկե՞ք նրանց գործերից: Այդ ստեղծագործություններից որո՞նց նյութն է Աստվածաշնչից: Գիտե՞ք որևէ ստեղծագործություն, որի նյութը անտիկ մշակույթից է:
3. Որո՞նք էին Առաջին գիտական հեղափոխության նախադրյալները: Ներկայացրե՞ք դրա նշանավոր գործիչներին ու նրանց գործունեությունը: Ինչ արդյունքներ ունեցավ Առաջին գիտական հեղափոխությունը:

ՄԱՍ 2

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ԲԱԺԻՆ Ա

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII ԴԱՐԻՑ XX ԴԱՐԻ ՍԿԻՋԲ)

ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍԿՋԲԻՆ

§ 1. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵՋԸ XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Եվրոպայի քաղաքական պատկերը: XVI-XVII դարերում աշխարհի քաղաքական պատկերը բազմազան էր և փոփոխական: Տարբեր մայրցամաքներում գոյություն ունեցող երկրները, որոնց բնակչության թիվը միասին կազմում էր շուրջ 550 միլիոն մարդ, հասարակական զարգացման անհավասարաչափ մակարդակներում էին: Թույլ էին նրանց միջև եղած քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը:

Երկրագնդի ավելի արագ զարգացող աշխարհամասը Եվրոպան էր, որտեղ մեկ դարի ընթացքում բնակչությունը կրկնապատկվեց: XVI դարի սկզբին այստեղ ապրում էր մոտ 90-95 մլն (այսինքն՝ երկրագնդի բնակչության 20%-ը), իսկ 1600 թ.՝ մոտ 180 միլիոն մարդ: Եվրոպայում համեմատաբար կայուն պետականություն ունեցող երկրներն էին Անգլիան, Ֆրանսիան, Իսպանիան, Պորտուգալիան, Նիդերլանդները, Ավստրիան, Դանիան, Շվեդիան, Լեհաստանը և Ռուսաստանը:

Սրանք մշտական հակասությունների մեջ էին:

Նոր ժամանակների շեմին Իսպանիան և Պորտուգալիան Եվրոպայի ամենահզոր գաղութային տերություններն էին: Սակայն այս երկրները թուլացան և իրենց տեղը զիջեցին Անգլիային, Ֆրանսիային ու Հոլանդիային:

XVI դարում Անգլիան նվաճեց Իռլանդիան, հետագայում նաև Շոտլանդիան: Անգլիայի հեղինակությունը հատկապես մեծացավ XVI դարի վերջին, երբ նա կարողացավ պարտության մատնել ծովերում իր հիմնական մրցակից Իսպանիային: Իսկ XVII դարում Անգլիան դարձավ գաղութային տերություն:

XVI դարի երկրորդ կեսին՝ ներքին կրոնաքաղաքական գծությունները հաղթահարելուց հետո, ուժեղ տերություն դարձավ նաև Ֆրանսիան: Այն առաջնային դեր էր կատարում ոչ միայն Եվրոպայում, այլև աշխարհի շատ տարածաշրջաններում: Ֆրանսիան նույնպես գաղութներ նվաճեց: XVII դարում Ֆրանսիայի նվա-

ԵՎԴՐԱՊԵՏԻ ՔՐԻՍՏՈՍԿԱՆ ՔԱՐՏԵՔԸ 1648 ԹՎԱԿԱՆԻՆ



ճումներից պաշտպանվելու համար եվրոպական երկրները երբեմն նրա դեմ դաշինք էին կազմում:

Եվրոպայի կենտրոնում կալվինականության դրոշի ներքո կայուն պետություն դարձավ 13 կանտոններից (շրջաններից) քաղկացած բազմազգ Շվեյցարիան: Կալվինականությունն ազատագրական պայքարի դրոշ դարձավ նաև Նիդերլանդներում: Արդեն գիտեք, որ 1566 թ. այստեղ սկսված հակաիսպանական հեղափոխության արդյունքում ստեղծվեց Միացյալ Գավառների Հանրապետությունը:

XVI դարում Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության սահմանները ձգվում էին Հյուսիսային և Բալթիկ ծովերից մինչև Ադրիատիկ ծով: Հարսրուրգ արքայատոհմին պատկանող կայսեր իշխանությունը հատկապես ուժեղ էր Ավստրիայում և Չեխիայում: Մնացած հողերը տրոհված էին հարյուրավոր ինքնուրույն պետությունների: XVII դարում նրանցից ուժեղացավ Պրուսիան: Այդ դարում Օսմանյան տերության դեմ տևական պատերազմներում Հաբսբուրգները նվաճեցին նոր տարածքներ, այդ թվում՝ Հունգարիան: Երեսնամյա պատերազմն էլ ավելի ամրապնդեց Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը:

Դեռևս միջնադարից Եվրոպայի հյուսիսում ուժեղ պետություն էր Դանիան, որի հետ միության մեջ էին գտնվում Նորվեգիան, Իսլանդիան, Շվեդիան և Ֆինլանդիան: Սակայն XVI–XVII դարերում Դանիան թուլացավ, նրանից անջատվեցին Շվեդիան և Ֆինլանդիան: Շվեդիան դարձավ Բալթիկ ծովի ավազանի ուժեղ պետություն:

Եվրոպայի արևելյան մասում գտնվող սլավոնական երկրներից հատկապես հզորացավ Լեհաստանը: 1569 թ. Լեհաստանը

և Լիտվայի մեծ իշխանությունը միավորվեցին մեկ պետության մեջ, որը ստացավ *Ռեչ Պուսպոլիտա* անվանումը: XVI–XVII դարերում այս պետությունը Եվրոպայի քաղաքական կյանքում կարևոր դեր էր կատարում: Նույն դարաշրջանում հզորացավ նաև Ռուսաստանը: Արդեն XVII դարում Ռուսաստանի կազմում էր Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոս ընկած հսկա տարածքը:

Այլ էր իրավիճակը Բալկանյան թերակղզում: Այստեղ գտնվող երկրները՝ Հունաստանը, Բուլղարիան, Ալբանիան, Մակեդոնիան, Ռումինիան, Սերբիան և Չեռնոգորիան, Օսմանյան տերության կազմում էին:

XVI–XVII դարերում Եվրոպայի ամենամասնատված երկրներից էր Իտալիան, որը դարձել էր մշտական պատերազմների թատերաբեմ: Սկսեց թուլանալ նաև Հռոմի պապի երբեմնի հզոր ազդեցությունը:

Ամերիկան՝ եվրոպացիների տիրույթ:

Ամերիկան կամ Նոր աշխարհը Կոլումբոսի հայտնագործումից ի վեր եվրոպացիների կողմից ամենաարագ յուրացվող տարածքն էր: Այդ գործընթացի հիմնական դերակատարներն էին նախ՝ Իսպանիան և Պորտուգալիան (XVI դար), իսկ հետո՝ Անգլիան և Ֆրանսիան (XVII դար):

Պատմական կարճ ժամանակահատվածում առաջացավ Իսպանական Ամերիկան: Այն ընդգրկում էր Հյուսիսային Ամերիկայի հարավը, ինչպես նաև Կենտրոնական և Հարավային Ամերիկայի մեծ մասը: Այս հսկա տարածքը, ներառյալ Պորտուգալիային պատկանող Բրազիլիան, XIX դարի կեսին ստացավ *Լատինական Ամերիկա* անվանումը: Այստեղ ապրում էր 12–13 միլիոն մարդ, որից 7–8 միլիոնը բնիկներ էին (հնդկացիներ), 3–4

միլիոնը՝ խառնածիններ (մետիսներ և մուլաթներ), կես միլիոնից ավելին՝ Աֆրիկայից բերված սևամորթներ, 1–1,5 միլիոնը՝ իսպանական վերաբնակիչների հետնորդներ՝ կրեոլներ:

XVII դարում մեծացավ Եվրոպայից Նոր աշխարհ ներգաղթը: Անգլիան և Ֆրանսիան սկսեցին գաղութացնել Հյուսիսային Ամերիկան: Ֆրանսիացիները ժամանակակից Կանադայի տարածքում հաստատվեցին XVII դարում:

Հյուսիսային Ամերիկայում անգլիացիների բնակեցումը կատարվեց ավելի կազմակերպված և հաստատուն: 1620 թ. հիմնվեց Նոր Անգլիա գաղութը, իսկ հետագայում առաջացան 13 գաղութներ, որոնք կառավարում էին Անգլիայի թագավորի նշանակած նահանգապետերը:

Նոր գաղութների առաջացումն ուղեկցվում էր Անգլիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և հնդկացիների միջև պատերազմներով, հնդկացիների ոչնչացմամբ, ինչպես նաև Աֆրիկայից սևամորթների ներմուծմամբ:

Ասիան, Աֆրիկան և Ավստրալիան:

Ասիա աշխարհամասի երկրները նոր ժամանակների սկզբին չունեին կայուն և հուսալի հասարակական-քաղաքական կարգեր: Դեռևս գերիշխող էր ավանդական հասարակությունը: Նույնիսկ խոշոր պետական կազմավորումները չունեին ներքին ամրություն և դժվարությամբ էին դիմակայում ժամանակի մարտահրավերներին: Այդ առումով որոշ չափով առանձնանում էր Օսմանյան տերությունը: Նրա լայնածավալ տիրույթները սփռված էին երեք աշխարհամասերում: Տերության միջուկը Փոքր Ասիան էր: Եվրոպայում օսմանները հասան մինչև Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա, որտեղ, սակայն, 1683 թ. պարտություն կրեցին: Չնայած

դրան՝ օսմանցիները մի քանի դար պատնեղ էին Արևելքի և Արևմտքի քաղաքակրթական դարավոր կապերը:

1502 թ. հաստատված Սեֆյան արքայատոհմի օրոք Իրանն սկսեց հզորանալ և տևական պատերազմներ մղել Օսմանյան տերության դեմ: Երկու պետությունների ավերիչ պատերազմների թատերաբեմի վերածվեցին Հայաստանը, Վրաստանը և Միջագետքը: Մշտական էին բախումները նաև Կենտրոնական Ասիայի պետությունների հետ: Այս բոլորի պատճառով Սեֆյան Իրանը չունեց կայուն ցամաքային սահմաններ:

Հնդկաստանը նոր ժամանակների շեմին միասնական երկիր չէր: Այստեղ ապրում էին տասնյակ ժողովուրդներ (հնդստանցիներ, բենգալներ, մարաթհներ, բիհարցիներ և այլն), որոնք հիմնականում դավանում էին երկու կրոններ՝ իսլամ և հինդուիզմ: XVI դարի սկզբին առաջացած Մեծ Մողոլի պետությունը տիրում էր Հնդկաստանի մեծ մասին: Հնդկաստանն սկսեց վերելք ապրել: Սակայն հաջորդ դարում ազգային և կրոնական հակասությունների, ինչպես նաև հարևան պետությունների դեմ մշտական պատերազմների պատճառով Մեծ Մողոլի կայսրությունը սկսեց անկում ապրել:

Նոր ժամանակների սկզբին Չինական կայսրությունը մշտական ընդհարումների մեջ էր մոնղոլների և ճապոնացիների հետ: XVII դարի սկզբին հայտնվեց մի նոր թշնամի՝ Մանջուրիան: Մանջուրները նվաճեցին Չինաստանը և ստեղծեցին Ցին արքայատոհմի պետությունը: Նրանք նվաճեցին նաև Մոնղոլիան և Կորեան:

«Ծագող արևի» երկիրը՝ Ճապոնիան, միջին դարերում միայն ձևականորեն էր կայսրություն: Կայսեր անունից երկիրը կառավարում էր սյոգունը: Օտարերկրա-

ցիների հետ շփումները, բացառությամբ չինացիների, հասան նվազագույնի: Ստեղծվեց «փակ պետություն»:

Աֆրիկա աշխարհամասի քաղաքական պատկերը նույնպես առանձնանում էր իր քաղաքակրթական բազմազանությամբ: Օսմանյան տերության կազմում գտնվող Հյուսիսային Աֆրիկայից հարավ բնակվում էին մի քանի լեզվախմբերի պատկանող հարյուրավոր ժողովուրդներ և ցեղեր: Նրանք ապրում էին բազմակացությամբ հասարակություններում՝ տոհմատիրական և ավատատիրական: Առավել զարգացած երկրներ էին Եթովպիան, ինչպես նաև Սուդանը (բառացի՝ «սևերի հող»):

Աֆրիկայի քաղաքական մասնատվածությունը հեշտացրեց եվրոպացիների

արդեն սկսվող գաղութային ներթափանցումը:

Նոր ժամանակների սկզբին Ավստրալիա աշխարհամասն աշխարհին անհայտ մի անկյուն էր: Բնակչությունը կազմված էր ավելի քան 500 ցեղերից (մոտ 250–300 հազար մարդ), ապրում էր տոհմական համայնքներով: Միահյուսված բնությամբ՝ մարդիկ ապրուստը հայթայթում էին որսորդությամբ և հավաքչությամբ: Ավստրալիան, ինչպես նաև դրա հարևան Նոր Զելանդիան եվրոպացիներին հայտնի դարձան XVI–XVII դարերում: XVIII դարում անգլիացիներն սկսեցին այս տարածքների գաղութացումը, որն ուղեկցվում էր բնիկների ոչնչացմամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն էր երկրագնդի ավելի արագ զարգացող աշխարհամասը, ինչ ուժեղ և կայուն պետականություն ունեցող երկրներ կային այնտեղ: Ո՞րն էր նոր ժամանակներում եվրոպայում ստեղծված առաջին խոշոր հանրապետությունը: Թվարկե՞ք Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության կազմում գտնվող երկրները: Ե՞րբ և ո՞ր պետությունների միավորմամբ է առաջացել Ռեյ Պոսպոլիտան: Թվարկե՞ք Բալկանյան թերակղզու երկրները:
2. Ի՞նչ տարածքներ էր ընդգրկում Իսպանական Ամերիկան: Ո՞ր տարածքն է ստացել *Լատինական Ամերիկա* անվանումը, ինչո՞ւ: Ովքե՞ր էին ապրում Լատինական Ամերիկայում:
3. Օսմանյան կայսրությունը մինչև XVII դարը Ասիայում և Աֆրիկայում ինչ երկրամասեր էր ընդգրկում: Ի՞նչ ժողովուրդներ էին ապրում Հնդկաստանում նոր ժամանակների շեմին: Վերհիշե՞ք, թե ինչ էր իրենից ներկայացնում կաստայական կառուցվածքը: Ե՞րբ է Չինաստանում ստեղծվել Յին արքայատոհմի պետությունը: Ճապոնիան նրբ դարձավ «փակ պետություն»: Ուրիշ ի՞նչ երկրներ էին «փակ պետության» քաղաքականություն վարում:
4. Ներկայացրե՞ք Աֆրիկայի քաղաքական պատկերը: Ինչո՞ւ եվրոպացիներին հաջողվեց հեշտորեն ներթափանցել և գաղութացնել աֆրիկյան երկրները:
5. Ավստրալիան և հարակից կղզիները նրբ հայտնի դարձան եվրոպացիներին: Ովքե՞ր և նրբ սկսեցին Ավստրալիայի գաղութացումը: Ի՞նչ հետևանքներ այն ունեցավ:

§ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Արդյունաբերական քաղաքակրթությունը՝ մարդկության զարգացման նոր մակարդակ: Քաղաքակրթության պատմությունն առաջադիմական, բազմազան և միասնական գործընթաց է: Միջին դարերում Արևմտյան Եվրոպայում ձևավորվել էր առանձնահատուկ քաղաքակրթություն: Սակայն այն ճգնաժամի մեջ հայտնվեց, երբ սկսվեցին անվերջանալի ավատական երկպառակությունները: Ճգնաժամի հաղթահարման գործընթացում Անգլիայում, Ֆրանսիայում և Նիդերլանդներում սկսեց ձևավորվել մի նոր քաղաքակրթություն: Հետագայում այն ընդգրկեց ողջ մայրցամաքը, Ամերիկան և ապա աշխարհի շատ երկրներ ու տարածաշրջաններ:

Նոր քաղաքակրթությունը գիտության մեջ հայտնի է տարբեր անվանումներով՝ *արևմտյան, եվրոպական, եվրոամերիկյան, արդյունաբերական* և այլն: Այս անվանումները, որոնց շուրջը հաճախ բանավիճում են, տարբեր տեսանկյուններից ձիշտ են յուրովի: Չէ՞ որ նոր քաղաքակրթությունն առաջացել է Արևմուտքում՝ Եվրոպայում, տարածվել Ատլանտյան օվկիանոսից այն կողմ՝ Ամերիկայում: Այն անվանում են նաև արդյունաբերական քաղաքակրթություն, քանի որ նյութական բարիքների աննախադեպ առատ արտադրությունը հասարակությանը դարձրեց տնտեսական մեկ մարմին:

Քաղաքակրթության այդ տեսակին բնորոշ են հասարակության արագ զարգացումը, գլխապտույտ արագությամբ կատարվող փոփոխությունները: Զարգացման լծակներն են շուկայական տնտեսությունը, ժողովրդի մասնակցությունը պետության կառավարմանը (ժողովրդա-

վարությունը), աշխարհիկ իրավական պետությունը, աշխարհիկ կրթությունը և մշակույթը, սոցիալական երաշխիքների ապահովումը, նյութական բարիքների արդարացի բաշխման համակարգը և այլն:

Արդյունաբերական քաղաքակրթությունը դարձավ մարդկության զարգացման մի նոր մակարդակ:

Հասարակական փոփոխությունները Եվրոպայում XVI–XVII դարերում: Որո՞նք էին արդյունաբերական քաղաքակրթության առաջացման նախադրյալները: Հիշենք, որ նոր դարերի սկզբին աշխարհի երկրները անհավասարաչափ էին զարգանում և տարբեր մակարդակ ունեին: Առաջընթացի միտումներն ամենից շատ ակնառու էին Եվրոպայում, որտեղ ի հայտ էին եկել ապագա արդյունաբերական քաղաքակրթության սաղմերը: Դրանք էին արհեստի բաժանումը գյուղատնտեսությունից, առևտրի ընդլայնումը, քաղաքային կյանքի ծաղկումը, ավատատերերից գյուղացիության կախվածության վերացումը, մանուֆակտուրային արտադրության առաջացումը և այլն: Սկսվել էր կրթության աշխարհիկացման գործընթացը: XII–XIII դարերում Իտալիայում, Ֆրանսիայում և Անգլիայում ստեղծվեցին առաջին համալսարանները: Հասարակական առաջընթացը հատկապես նկատելի դարձավ Վերածննդի դարաշրջանում: Գիտելիքների տարածման գործում քացառիկ դեր խաղաց գրատպության գյուտը (1445 թ.): Աշխարհագրական հայտնագործությունները մեծացրին մարդու մտահորիզոնը:

Եվրոպական քաղաքակրթության կայացման գործում կարևոր նախադրյալ

դարձավ Ռեֆորմացիան: Այն մեծ հարված հասցրեց կաթոլիկ եկեղեցուն, որը խոչընդոտում էր հասարակական զարգացումը: Եվրոպայի շատ երկրներ (Հոլանդիա, Անգլիա, Շոտլանդիա, Դանիա) հեռացան կաթոլիկ եկեղեցուց: Բողոքական եկեղեցին մարդուն ազատեց կրոնական կապանքներից: Բողոքականությունը դարձավ եվրոպական քաղաքակրթության զարգացման հիմքը:

XVI–XVII դարերում Եվրոպայում դեռևս գերակշռում էր գյուղատնտեսությունը: Բնակչության մեծագույն մասը՝ 90%–ը, գյուղացիներ էին: Աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով գյուղատնտեսությունն մուտք գործեցին նոր մշակաբույսեր: Անդրծովյան առևտրի ընդլայնումը գաղութների հետ, բնակչության աճը և տեղաշարժերը, Ամերիկայից մեծ քանակությամբ ազնիվ մետաղների ներմուծումը Եվրոպա մեծացրին ապրանքների պահանջարկը: Այդ իսկ պատճառով միջնադարյան արհեստանոցի փոխարեն առաջացավ արտադրական ավելի խոշոր ձեռնարկություն՝ մանուֆակտուրան: Դրանցում կտրուկ աճեց աշխատանքի արտադրողականությունը: XVII դարում մանուֆակտուրային արտադրանքն արդեն տարածված էր Անգլիայում, Նիդերլանդներում և Ֆրանսիայում:

XVI–XVII դարերում Եվրոպայի տնտեսության մեջ կատարված տեղաշարժերը փոփոխություններ առաջացրին նաև հասարակության սոցիալական կառուցվածքում: Դա բոլորից արագ տեղի էր ունենում Անգլիայում և Հոլանդիայում: Անգլիայում ազնվականության մի մասն սկսեց զբաղվել գործարարությամբ՝ իր հողում ստեղծելով ապրանքային տնտեսություն, մանուֆակտուրաներ: Նրանց անվանում էին նոր ազնվականություն:

Գյուղում ձեռներեց էր դառնում նաև գյուղացիների մի մասը: Այդպիսի գյուղացիները կոչվում էին ազարակատերեր (ֆերմերներ): Նրանց շնորհիվ անգլիական գյուղատնտեսությունն առաջինը Եվրոպայում դարձավ շուկայական:

Քաղաքներում ևս զարգանում էր գործարար կյանքը: Քաղաքների կենտրոնում էին գտնվում շուկաները, բանկերը, ձեռներեցների գրասենյակները և խանութները:

Քաղաքային գործարարները՝ բուրժուազիան, կազմված էր վաճառականներից, վաշխառուներից, կապալառուներից, դրամափոխներից և այլն: Հաճախ բուրժուա էին դառնում նաև արհեստավորները: Բուրժուազիան գյուղական ձեռներեցների հետ միասին դարձավ գործարար կյանքի կրողը և արտադրության կազմակերպիչը: Բուրժուազիայի սեփականությունը կոչվում էր կապիտալ, որի համար նրանց անվանում էին նաև կապիտալիստ: Մյուս կողմից՝ գյուղացիները հողագրկվում և դառնում էին վարձու աշխատող՝ բանվոր (պրոլետար): Նրանց մեծ մասը ստիպված տեղափոխվում էր քաղաք: Քաղաքներում բանվոր էին դառնում նաև սնանկացած արհեստավորները և ձեռներեցները:

Նոր դարերի սկզբին Եվրոպայում տիրում էին միապետական կարգերը: «Մեկ երկիր՝ մեկ պետություն» սկզբունքի կիրառումը դարձել էր պատմական անհրաժեշտություն: Ուստի ավանդական միապետական կարգի փոխարեն եվրոպական երկրներում առաջացավ կենտրոնացված պետական կարգ՝ *բացարձակ միապետություն* կամ *միահեծանություն*:

Միահեծանությունը կառավարման այն ձևն էր, որի ժամանակ գերագույն իշխանությունը պատկանում էր անսահմա-

նափակ իշխանություն ունեցող միապետին՝ թագավորին կամ կայսրին:

Միահեծանության դասական երկիր էր Ֆրանսիան: Երկրում ստեղծվել էր թագավորի անձի պաշտամունք: Գործում էր «Մեկ միապետ, մեկ օրենք, մեկ կրոն» սկզբունքը: Անգլիայում, ընդհակառակը, գործում էր խորհրդարան, որի հետ թագավորը հաշվի էր նստում: Եվրոպական երկրների մեծ մասին բնորոշ էր ֆրանսիական տիպի միահեծանությունը:

XVI–XVII դարերում ստեղծվեց գաղափարախոսություն, որի համաձայն՝ թագավորի իշխանությունը ստեղծել է Աստված: Օրինակ՝ Ֆրանսիայում ստեղծվեց գիտություն պետության և իրավունքի մասին, որը նպատակ ուներ հիմնավորելու թագավորական իշխանության աստվածային ծագումը, միահեծանության օրինականությունը: Միահեծանությունը վերջ տվեց ավատական գծտություններին և նպաստեց նոր հասարակության ստեղծմանը:

Մարդկանց կյանքը Եվրոպայում: Նոր ժամանակներում փոխվեց նաև մարդկանց ապրելակերպը, բարձրացավ նրանց կենսամակարդակը: Եվրոպան՝ որպես ավելի արագ զարգացող մայրցամաք, երկրագնդի մյուս տարածաշրջաններից տարբերվում էր իր բարձր կենսամակարդակով: Բնակչության եկամուտներն աճում էին նաև գաղութների նվաճումների և միջագային առևտրի արդյունքում: Ոսկու և արծաթի ներհոսքից զատ, եվրոպացիներն սպառում էին մեծ քանակությամբ գաղութային ապրանքներ՝ թեյ, սուրճ, կակաո, բրինձ, շաքար, տարբեր համեմունքներ:

Մարդկանց կենսամակարդակի աճի միտումը, անշուշտ, չէր նշանակում համընդհանուր բարեկեցության առկայություն: Հասարակության մեծագույն

մասը դեռևս տառապում էր մշտական աղքատությունից, համաձարակներից և պարբերաբար կրկնվող սովից: Գլխավոր պատճառն արտադրողական ուժերի ցածր մակարդակն էր, ինչպես նաև միջնադարից մնացած հարկային լուծը: Սովի պատճառը նաև հաճախ կրկնվող անբերրիությունն էր, որին նպաստեցին նաև XVII դարի դաժան ձմեռները: Գյուղացիության աղքատությանը նպաստում էր նաև գյուղի ներքաշումը շուկայական տնտեսության մեջ, որի ընթացքում նրանց մեծ մասը հողազրկվում էր, դառնում թափառաշրջիկ կամ տեղափոխվում քաղաք: Այդ երևույթը ամենից շատ բնորոշ էր Անգլիային:

Աշխարհի շատ տարածաշրջանների պես Եվրոպայում ևս հասարակական չարիք էին համաձարակները, որոնք հետևանք էին բժշկության և հիգիենայի ցածր մակարդակի: Հազարավոր մարդկանց կյանք էին խլում ծաղկախոր, բժավոր տիֆը (կարմիր տենդը), խոլերան և ժանտախտը:

Դեռևս ծանր էին մարդկանց կենցաղային պայմանները: Նրանց մեծ մասը տառապում էր թերսնումից և բնակարանային վատ պայմաններից: Մարդկանց սնունդը հիմնականում բուսական էր: Միսը և սպիտակ հացը մինչև XVIII դարը հասու էին միայն հարուստներին: Թեյի, սուրճի, շոկոլադի օգտագործումը կանոնավոր դարձավ միայն XVIII դարում:

Նոր ժամանակների սկզբին եվրոպական երկրներում ձևավորվեց ազգային տարազը: Սակայն մարդկանց հագուստը նախկինի պես որոշվում էր արքայական հրամաններով: Գյուղացիները հագնում էին տնային պայմաններում կարված կոպիտ հագուստ և կոշիկներ: Նույնը վերաբերում է բնակարաններին: Տները



Վերածննդի շրջանի նկարիչներն իրենց ստեղծագործություններում ընդգծել են այդ ժամանակաշրջանի նորաձևության որոշ տարրեր: Նման ստեղծագործություններից է իսպանացի նկարիչ Դիեգո Վելասկեսի «Ֆրելիներ» նկարը (1656 թ.), որտեղ պատկերված է իսպանացի Ֆիլիպ IV արքայի ընտանիքը: Կենտրոնում հինգամյա արքայազուստրն է:

հիմնականում փայտից էին կամ կավից: Քարե տները և կղմինդրե ծածկերը մեծ տարածում գտան միայն XIX դարում:

Մարդկանց ծանր վիճակը հետևանք էր նաև համարյա անընդմեջ պատերազմների: Եվրոպան հսկայական ռազմական ճամբար էր հիշեցնում: XVI դարում այստեղ խաղաղություն տիրեց ընդամենը 25, XVII դարում՝ 21 տարի: Սովորական դարձան համաեվրոպական պատերազմները:

Ծանր, տառապանքներով լեցուն առօրյան կարճացնում էր մարդկանց կյանքը: Հատկապես մեծ էր երեխաների և կանանց մահացության տոկոսը: Ծնված երեխաների միայն 50%-ն էր ապրում մինչև 20 տարեկանը:

Նոր ժամանակների սկզբին Եվրոպայում քաղաքային բնակչության թիվը չնչին էր՝ մոտ 10%: Խոշոր քաղաքներ չկային, և դրանց բնակչության թիվը սո-

վորաբար կազմում էր 5-10 հազար մարդ: Մինչև հարյուր հազար բնակիչ ունեցող քաղաքները շատ քիչ էին: Քաղաքները դեռևս ապրում էին միջնադարյան կյանքով: Մարդկանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր: Բնակչության մեծ մասն աղքատ էր և ապրում էր կեղտոտ հետնախորշերում: Չկային կոյուղի, ջրմուղ, փողոցների և թաղամասերի կանոնավոր մաքրում:

Այնուամենայնիվ, փոփոխություններն արդեն առկա էին: Դրանք հատկապես նկատելի էին մի շարք քաղաքներում: Արագ նորացվող քաղաքները քիչ էին՝ Ամստերդամը, Փարիզը և հատկապես Լոնդոնը: Վերջինս Եվրոպայի ամենաարագ աճող քաղաքն էր: 1600-1700 թթ. ընթացքում նրա բնակչությունը 200 հազարից հասավ 575 հազարի:

Քաղաքները նաև նորաձևության կենտրոններ էին: Նորաձևությունը դարա-

շրջանների փոփոխությունների արտացոլումն էր մարդկանց առօրյա կյանքում և կենցաղում: Փոխվում էին մարդկանց հագուստը, սանրվածքը, կենցաղային իրերը, տների կահավորումը, գեղեցիկի մասին ընկալումները: Վերածննդի դարաշրջանում նորաձևության կենտրոնները իտալական քաղաքներն էին, երբ գեղեցկության չափանիշը դարձավ մարդու մարմինը՝ բարձր հասակը, լայն ուսերը, կանոնավոր դիմագծերը: Կանայք գեղեցկացնում էին դեմքը, կրում հաստ և երկար

ծամեր: Հագուստի մեջ հարգի էր համարվում սպիտակը: XVI դարում նորաձևության կենտրոնը իսպանական արքունիքն էր: Իսպանական շքեղ հագուստները երկար ժամանակ գերիշխում էին Եվրոպայում:

XVII դարում նորաձևության կենտրոնը տեղափոխվեց Ֆրանսիա: Փարիզում հաստատված նորաձև հագուստը, սանրվածքը, կահույքը, վարվելակերպը և հատկապես ֆրանսերենը մեծ տարածում գտան Եվրոպայում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Միջնադարում Արևմտյան Եվրոպայում ինչ յուրահատուկ քաղաքակրթություն էր ձևավորվել, և ո՞րն էր դրա հիմքը: Արդյունաբերական քաղաքակրթությունը գիտության մեջ ինչ անվանումներով է հայտնի: Պարզաբանե՞ք արդյունաբերական քաղաքակրթության առաջացման նախադրյալները:
2. XVI–XVII դարերում Եվրոպայում տնտեսության ո՞ր ճյուղն էր գերակշռում: Ինչը նպաստեց ապրանքների պահանջարկի մեծացմանը Եվրոպայում: Արտադրական ինչ նոր ձեռնարկություններ առաջացան: Եվրոպայի առաջընթացին բնական ինչ պայմաններ ու գործոններ էին նպաստում: Ինչո՞ւ Եվրոպայում առաջինը անգլիական գյուղատնտեսությունը դարձավ շուկայական:
3. Ինչ է միահեծանությունը: Ցոյց տվե՞ք ֆրանսիական միահեծանության առանձնահատկությունները: Հիմնավորե՞ք միահեծանության պատմական անհրաժեշտությունը:
4. Նոր ժամանակի մարդը ինչի՞ հետ էր կապում բարեկեցության հույսը: Թվարկե՞ք մարդկանց տարբեր խմբերի կենցաղում եղած տարբերությունները: Որո՞նք էին Եվրոպայի արագ նորացվող քաղաքները: Հիմնավորե՞ք, որ Լոնդոնը Եվրոպայի ամենաարագ աճող քաղաքն էր: Ինչ է նորաձևությունը: Ինչ փոփոխություններ ի հայտ եկան նորաձևության մեջ:

ԳԼՈՒԽ 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Նոր ժամանակների շեմից սկսված հասարակության նորացման գործընթացը գիտության մեջ ընդունված է անվանել *արդիականացում*: Արդիականացումը

(մոդեռնացում, ֆրանս.՝ moderne — ժամանակակից) միջնադարյան հասարակությունից արդյունաբերական քաղաքակրթության անցման համաշխարհային

գործընթացն է: Այն ընդգրկում է հասարակական բոլոր ոլորտները՝ տնտեսությունը, սոցիալական կյանքը, իրավունքը, քաղաքականությունը և մշակույթը: Համաշխարհային այդ գործընթացի կենտրոնն Արևմտյան Եվրոպան էր:

Արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները: Տնտեսության զարգացումն այդ կարողությունների աճն ու հզորացումն է: Արդյունաբերական քաղաքակրթությունը մարդկային հասարակության առաջընթացի այն փուլն է, երբ պատմական համեմատաբար կարճ ժամանակում արտադրողական ուժերն ավելի զարգացան, քան նախորդ բոլոր ժամանակաշրջաններում միասին վերցրած: Դա, հիրավի, մեծ թոփք էր, նյութական բարիքների արտադրության յուրահատուկ հեղափոխություն, որը զարմանալի արագությամբ փոխեց աշխարհը:

Արդյունաբերական քաղաքակրթության կայացման գլխավոր և անխուսափելի փուլն **արդյունաբերական հեղաշրջումն է:** Արդյունաբերական հեղաշրջումը անցումն է մանուֆակտուրային արտադրությունից գործարանային, մեքենայական արտադրության: Արդյունաբերական հեղաշրջումը Եվրոպայում տևել է մոտ 140 տարի՝ XVIII դարի 60–ական թվականներից մինչև XIX դարի վերջը:

Նրան նախորդել է մի ժամանակաշրջան, որը սովորաբար անվանում են մանուֆակտուրային կապիտալիզմ: Մանուֆակտուրային կապիտալիզմի ձևավորումը սկսվել է XVI դարից: Հենց այդ ժամանակաշրջանում առաջացան այն նախադրյալները, որոնք հնարավոր դարձրին անցումն արդյունաբերական հեղաշրջման:

Առաջին կարևոր նախադրյալը **կապիտալի նախասկզբնական կուտակումն է:**

Նոր, ավելի խոշոր արտադրություն սկսելու համար ձեռներեցներին անհրաժեշտ էր «սկզբնական կապիտալ»: Սկզբում այդ կուտակումն ընթանում էր դրամական կապիտալի տեսքով: XVII դարում դրամական կապիտալ ունեցողներին սկսեցին անվանել կապիտալիստ: Այդպիսի ձեռներեցները փող էին աշխատում բոլոր միջոցներով՝ վաշխատությունից, դրամափոխությունից, աշխատանքի շահագործումից, ներքին և արտաքին առևտրից, գաղութների կողոպուտից, ստրկավաճառությունից և այլն: Ցանկացած եղանակով և միջոցով փողի կուտակումը մեծ տարածում էր ստացել: Հենց այդ կուտակված կապիտալի շնորհիվ ստեղծվեցին մանուֆակտուրաներ, որոնք դարձան արդյունաբերական քաղաքակրթության տնտեսական հիմքը:

Արդյունաբերական հեղաշրջման երկրորդ նախադրյալը հասարակության սոցիալական փոփոխություններն էին՝ ձեռներեցների դասի առաջացումը, արտադրողներին արտադրության միջոցներից զրկելը և նրանց վերածումը վարձու աշխատողների: Գործնականում դա գյուղացիների զանգվածային հողազրկման գործընթացն էր, որը հայտնի է **ագրարային հեղաշրջում** անվանումով: Հողազրկված գյուղացիները դառնում էին մանուֆակտուրաների վարձու բանվորներ, որը կարևոր նախադրյալ էր արդյունաբերության հետագա զարգացման համար: Այդպիսի աշխատուժ էին դառնում նաև սնանկացած արհեստավորները և տնայնագործները:

Երրորդ նախադրյալն այն էր, որ ձևավորվել էր **սպարանքների սպասման շուկա:** Աճում էր քաղաքային բնակչությունը, իսկ գյուղում առկա էր արդյունաբերական սպարանքների մեծ պահանջարկ:

Չորրորդ նախադրյալը *տեխնիկայի զարգացումն* էր: Մանուֆակտուրայում աշխատանքի մասնագիտացումը պայմաններ ստեղծեց անցնելու մեքենայական արտադրության: Արտադրական գործիքների կատարելագործումը հեշտացնում էր այնպիսի մեքենաների ստեղծումը, որոնք կարող էին միաժամանակ կատարել մի քանի գործողություն:

Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում: Արդյունաբերական հեղաշրջման բոլոր նախադրյալները մյուս երկրներից ավելի վաղ առաջացան և իրենց արդյունքները տվեցին Անգլիայում: Դրան նպաստեցին նաև ավատատիրության հաղթահարումը և ազգային ազատական պետության ստեղծումը: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում Անգլիան (1760–1840–ական թթ.) անցում կատարեց մեքենայական արտադրության: Դա իսկական հեղաշրջում էր, որն ունեցավ նաև հասարակական մեծ հետևանքներ:

Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում սկզբնավորվեց թեթև արդյունաբերության ոլորտում՝ բանող մեքենաների հայտնագործմամբ և կիրառմամբ: Գիտնականին կամ գյուտարարին տրվում էր արտոնագիր: Բանող մեքենաներն օգտագործում էին մանածագործության, իսկ այնուհետև՝ գործվածքեղենի արտադրությունում: Դրանք գործի էին դրվում մարդու ձեռքով, այնուհետև՝ ջրանիվի օգնությամբ: Առաջացավ համընդհանուր շարժիչի ստեղծման անհրաժեշտություն: Երկարատև աշխատանքից հետո անգլիացի *Ջեյմս Մուտտր 1784 թ.* ստացավ այդպիսի շարժիչի՝ շոգեմեքենայի արտոնագիր: Հաջորդ տարում այն առաջին անգամ գործարկվեց մանածագործության մեջ, այնուհետև՝ այլ բնագավառներում: Դա իր հերթին զարկ տվեց մետաղամշա-

կությանը, քարածխի արդյունահանմանը և այլն: Սկսվեց նաև մեքենաների միջոցով մեքենաների արտադրությունը, այսինքն՝ առաջացավ արդյունաբերության նոր ճյուղ՝ մեքենաշինությունը: Դրանում մեծ դեր խաղացին հատկապես խառատային, ֆրեզերային, շաղափող, ռանդող և այլ հաստոցների գյուտերը: Այդպես առաջացավ ծանր արդյունաբերությունը:

Մեքենաների հայտնվելը փոխեց արտադրության կազմակերպումը: Մանուֆակտուրաների փոխարեն արդեն XVIII դ. 70–ական թվականներից սկսեցին առաջանալ արդյունաբերական արտադրանքի ավելի խոշոր միավորներ՝ ֆաբրիկաներ և գործարաններ:

Արդյունաբերության թռիչքը հեղաշրջում առաջացրեց հաղորդակցության միջոցների բնագավառում: XIX դարի առաջին տասնամյակներին սկիզբ առավ շոգենավային և երկաթուղային հաղորդակցությունը, որն էժանացրեց ապրանքների տեղափոխությունը: Մեծ թափ առան նավաշինությունը, նավահանգիստների, ճանապարհների, կամուրջների և ջրանցքների կառուցումը: **1790 թ.** Անգլիայում կառուցվեց առաջին երկաթե իրանով նավը: Առագաստանավերը դառնում էին անցյալ: **1865 թ.** շոգենավերի տարողությունն առաջին անգամ գերազանցեց առագաստանավերինը: Ստեղծվեց հեռագրական կապ աշխարհի շատ երկրների հետ: **1866 թ.** Ատլանտյան օվկիանոսի հատակով հեռագրակապ հաստատվեց Ամերիկայի, **1867 թ.**՝ Հնդկաստանի հետ:

Արդյունաբերական զարգացմամբ Անգլիան աշխարհում առաջինն էր: Արդեն XIX դարի կեսերին երկիրը, ինչպես այն ժամանակ ասում էին, դարձավ «աշխարհի արհեստանոցը»:



Ջեյմս Ուատոն


Անգլիայում արդյունաբերական զարգացման մյուս կարևոր արդյունքը համազգային միասնական շուկայի ստեղծումն էր:

Արդյունաբերական հեղաշրջումը մյուս երկրներում: Արդյունաբերական հեղաշրջման առանձնահատկությունների առումով մայրցամաքի երկրները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբի երկրներն էին Անգլիան, Հոլանդիան, Բելգիան, Ֆրանսիան և Շվեյցարիան: Նրանց բնորոշ էր արդիականացման հաստատուն, միասնական ընթացքը:

Բելգիան Անգլիայից հետո երկրորդ երկիրն էր, որտեղ կատարվեց արդյունաբերական հեղաշրջում: Դրան նպաստեցին երկրի բնական պաշարների հարստությունը, նպաստավոր աշխարհագրական դիրքը Ֆրանսիայի և Գերմանիայի միջև:

Հոլանդիան բոլոր հնարավորություններն ուներ դառնալու առաջին արդյունաբերական երկիրը: Այստեղ ավատական կարգերը ամենաշուտն էին վերացվել: Չնայած դրան՝ Հոլանդիայում գերակշռող մնաց առևտրական գործունեությունը:



Ուատոնի շոգեմեքենայի մոդելը

Խանգարիչ դեր խաղացին նաև բարձր հարկերը, կապիտալի և բնակչության արտահոսքն այլ երկրներ, երկարատև պատերազմները Ֆրանսիայի ու Անգլիայի հետ:

Ֆրանսիայում արդյունաբերական հեղաշրջման դրսևորումները սկսվեցին XVIII դարի վերջին և ավարտվեցին XIX դարի կեսերին:

Երկրորդ խումբ երկրներն էին Գերմանիան, Իտալիան, Ավստրիան և Ռուսաստանը: Այստեղ տնտեսության արդիականացումը դանդաղ ընթացք ունեցավ: Նախ՝ արդյունաբերական հեղաշրջման նախադրյալներն այս կարգի երկրներում ձևավորվեցին ավելի ուշ: Արդյունաբերության մեքենայացումը և ներքին միասնական շուկան կայացան միայն XIX դարում: Պետությունը կատարում էր կապիտալ ներդրումներ, հոգ տանում ազգային մասնագետների պատրաստման և հաղորդակցության միջոցների կառուցման մասին:

Եվրոպայի մյուս երկրները՝ Իսպանիան, Պորտուգալիան, Լեհաստանը, սկանդինավյան և բալկանյան երկրները, նույնպես մտնում էին երկրորդ խմբի մեջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է արդիականացումը, երբ է այն սկսվել: Հասարակական ռի ռոլորտներն ընդգրկեց այն: Որո՞նք էին արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները: Ինչ է ագրարային հեղաշրջումը. Ինչ փոփոխություններ այն բերեց իր հետ:
2. Եվրոպական ռի երկրում առաջինը հաղթանակեց արդյունաբերական հեղաշրջումը և ինչո՞ւ: Երբ և ո՞վ է ստեղծել առաջին շոգեշարժիչը: Արդյունաբերության ինչ նոր ճյուղ ստեղծվեց: Տրանսպորտային հաղորդակցության և կապի ինչ նոր տեսակներ գործի դրվեցին:
3. Արդյունաբերական հեղաշրջման կատարման առումով Եվրոպայի երկրները պայմանականորեն քանի՞ խմբի են բաժանվում: Ներկայացրե՞ք այդ խմբերը, դրանց բնորոշ հատկանիշները և առանձնահատկությունները:

§ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՈՒ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտատեխնիկական մեծ թռիչքը XIX դարում և XX դարի սկզբին: Արդյունաբերական հեղաշրջումը Եվրոպայում և ԱՄՆ–ում հզոր խթան դարձավ արտադրողական ուժերի հետագա առաջընթացի համար: Արտադրության վերագինման մշտական պահանջարկը կարևոր ազդակ դարձավ գիտության և տեխնիկայի աներևակայելի թռիչքի համար, որը տեղի ունեցավ XIX դարի վերջերին և XX դարի սկզբին:

Իսկ որո՞նք էին այդ մեծ թռիչքի բնորոշ կողմերն ու արդյունքները:

Առաջինը գիտական հայտնագործությունների և տեխնիկական գյուտերի զանգվածային բնույթն էր: Ընդամին, դրանք տեղի էին ունենում գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներում: Նույնիսկ դժվար էր որոշել այդ բոլորի ընդհանուր քանակը:

Երկրորդը գիտությունների մասնագիտական ճյուղավորումն էր, դրանց սահմանների մերձեցումը և միահյուսումը: Ստեղծվեցին նոր գիտություններ՝ ֆիզի-

կական քիմիա, կենսաքիմիա, աստղաֆիզիկա և այլն:

Երրորդը գիտության ազգային սահմանների խախտումն էր և համաշխարհայնացման խորացումը: Գիտական համագործակցության արդյունքում ստեղծվեցին *Չափերի և կշիռների միջազգային բյուրո* (1875 թ.), *Ժամանակի միջազգային բյուրո* (1912 թ.), *Ակադեմիաների միջազգային միավորում* (1900 թ.) և այլն:

Գիտության նվաճումները դառնում էին ամուր հիմք տեխնիկական գյուտերի համար: Վերջիններս նախ և առաջ օգտագործվեցին ավտոմատացված խոշոր արտադրություն կազմակերպելու համար: Դրա համար ստեղծվեցին չափանշված միօրինակ դետալներ, հոսքային արտադրությունում փոխադրման սարքավորումներ՝ հոսքագծեր, ավտոմատ դազգահներ և այլն: Այդպիսի արտադրության համար ստեղծվեցին էներգիայի նոր աղբյուրներ՝ էլեկտրակայաններ և էլեկտրաշարժիչներ: Մետաղալարի միջոցով էլեկտրական հոսանքի տեղա-



«Ֆորդ» մակնիշի ավտոմեքենա, 1910 թ.

փոխումը հնարավորություն տվեց այն օգտագործելու արդյունաբերության և կենցաղի մեջ: Առաջացավ արդյունաբերության նոր ճյուղ՝ էլեկտրատեխնիկա:

Ստեղծվեցին նաև երկու նոր ջերմային շարժիչներ՝ շոգեսուրբինը և ներքին այրման շարժիչը: Վերջինիս շնորհիվ առաջացան նոր փոխադրամիջոցներ՝ ավտոմեքենան և ինքնաթիռը: **1886 թ.** ստեղծվեց առաջին ավտոմեքենան, **1903 թ.**՝ առաջին ինքնաթիռը: Արդեն XX դ. սկզբին ավտոմեքենաների արտադրությունը դարձավ ինքնուրույն արդյունաբերական ճյուղ: Այդպիսի ճյուղ էր նաև արհեստական նյութերից (պլաստմասսա) ստացվող իրերի արտադրությունը:

Մի շարք գյուտերի շնորհիվ հնարավոր դարձավ ստանալ էժան և որակյալ պողպատ, ալյումին և պղինձ: Մետաղների արդյունաբերական և կենցաղային օգտագործումը հասավ աննախադեպ չափերի:

Գիտության և տեխնիկայի արտադրողական ուժի վերածվելու շնորհիվ տնտեսության մեջ առաջատար դարձավ ծանր արդյունաբերությունը, այսինքն՝ արտադրական միջոցների արտադրությունը:

Արդյունաբերության կենտրոնացումն ու խոշորացումը: Արտադրության խոշոր-



Ռայթ եղբայրների առաջին ինքնաթիռը, 1903 թ.

րացումը շուկայական տնտեսության զարգացման գլխավոր միտումն է: Գլխավոր պատճառներից մեկը մշտական մրցակցությունն է, որը գործարարին ստիպում է ընդլայնել և խոշորացնել իր ձեռնարկությունը: Այս գործընթացը բնորոշ է ամբողջ XIX դարին: Խոշորացման մյուս պատճառը Եվրոպայի գերիշխումն էր համաշխարհային շուկայում: Մանր ձեռներեցն այդ շուկա միայնակ մտնել չէր կարող:

Արտադրության կենտրոնացման և խոշորացման միտումներին դարավերջին ավելացավ ևս մեկը՝ գիտատեխնիկական մեծ թռիչքը: Առաջացավ արտադրության վերագինման սուր անհրաժեշտություն, որն իր հերթին պահանջում էր խոշոր կապիտալ ներդրումներ: Քանի որ այդպիսիք չկային, ձեռներեցներն սկսեցին ստեղծել քաժնետիրական ընկերություններ:

Խոշոր կապիտալի ստեղծման պահանջարկը փոխեց նաև բանկերի դերը: Բանկերը նույնպես միավորվում էին: Ստեղծելով խոշոր կապիտալ՝ նրանք կայուն վարկեր էին տրամադրում ձեռներեցներին և նույնիսկ պետություններին: Նոր իրավիճակում բանկերի կողմից վարկավորման հնարավոր վտանգները մեծացան, քանի որ սնանկացումը մեծ չափեր էր ընդունել: Այդ պատճառով բանկերը,

որպես շահագրգիռ կողմ, սկսեցին մասնակցել արտադրությանը: Միաժամանակ խոշոր արդյունաբերողները ստեղծում էին սեփական բանկեր: Այսպես քանկային կապիտալը և արդյունաբերական կապիտալը միախառնվեցին, առաջացավ արդյունաբերաֆինանսական կապիտալ: Այս ամենը հանգեցրեց մոնոպոլիաների (մենատիրություններ) ստեղծմանը:

Մոնոպոլիան խոշոր ձեռնարկությունների միություն է, որի անդամները պայմանավորվում են վարել միասնական քաղաքականություն արտադրության մեջ և շուկայում: Միավորման պայմաններից ելնելով՝ ստեղծվեցին մոնոպոլիաների տարբեր ձևեր՝ *կարտելներ, սինդիկատներ, տրեստներ* և այլն:

Նոր իրավիճակում շուկայում գերիշխող ազատ մրցակցությանը փոխարինելու եկավ մոնոպոլիաների մրցակցությունը: Այդ մրցակցությունը դուրս եկավ մի երկրի սահմաններից և ընդունեց միջազգային բնույթ: Խոշոր կապիտալի արտահանումն այլ երկրներ դարձավ սովորական: XX դարի սկզբին կապիտալի արտահանումը կրկնապատկվեց: Առաջացան միջազգային մոնոպոլիաներ, որոնք գործունեություն էին ծավալում բազմաթիվ երկրներում: Տարբեր երկրների և տարածաշրջանների միջև տնտեսական կապերը սերտացան, առաջացան միջազգային միասնական շուկա և տնտեսություն:

Եվրոպական երկրների տնտեսական վերելքը. համաշխարհային առևտուր: Նոր դարաշրջանում Եվրոպան մնաց համաշխարհային տնտեսության առաջատարը: Այստեղ ավարտուն և ամբողջական տեսք ստացավ արդյունաբերա-

կան քաղաքակրթության տնտեսական համակարգը: Առաջատարներ դարձան նաև ԱՄՆ-ը և Ճապոնիան: Հենց այդ համակարգի շնորհիվ համաշխարհային արդյունաբերությունը XX դարի սկզբին աճեց 81,8%-ով, կրկնապատկվեց միջազգային առևտուրը:

Կապիտալիզմի զարգացման դասական երկրների շարքում գլխավոր դեր էին խաղում Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Նրանց մոտ էին կանգնած Նիդերլանդները, Բելգիան, Շվեյցարիան, Դանիան, Շվեդիան:

Մեծ Բրիտանիան, մնալով արդյունաբերական հզոր տերություն, զարգացման նոր փուլում հանդիպեց արդյունաբերության հին ճյուղերի տեխնիկական վերազինման դժվարությունների: Այդ պատճառով նրա զարգացումը դանդաղեց:

Ֆրանսիան ևս մնաց առաջատար՝ շնորհիվ քիմիական և մետաղագործական ճյուղերի ստեղծման: Սակայն այստեղ ևս նկատելի էր դանդաղ զարգացման միտումը: Արտադրության հանրագումարային ցուցանիշով Ֆրանսիան աշխարհում երկրորդ տեղից տեղափոխվեց չորրորդ տեղը:

Այսպիսով՝ XX դարի սկզբին ակնհայտ դարձավ Եվրոպայի առաջատար երկրների դանդաղ զարգացումը: Այնուհանդերձ, նրանք մնում էին կապիտալիզմի զարգացման դասական օրինակներ:

Եվրոպական մյուս երկրներում (Գերմանիա, Ռուսաստան, Իտալիա, Ավստրո-Հունգարիա և այլն) արդյունաբերությունը նոր էր սկսում զարգանալ: Այդ երկրների տնտեսության արդիականացումը շատ քանով պայմանավորված էր պետական նպատակամետ քաղաքականությամբ: Նոր դարաշրջանում այդ երկույթը խորացավ: Պետությունը ոչ միայն միջամտում էր տնտեսությանը, այլև դառնում էր կա-

պիտալ ներդնող կողմ: Այդ երկրների տնտեսության մեջ մեծ էր նաև օտար (հատկապես անգլիական և ֆրանսիական) կապիտալի դերը:

Գերմանիան միավորումից հետո կարողացավ առաջ անցնել Անգլիայից և Ֆրանսիայից: 1913 թ. արդյունաբերական արտադրությամբ նա աշխարհում գլխում էր միայն ԱՄՆ-ին:

Ռուսաստանը XX դարի սկզբին համարվում էր աշխարհի խոշոր արդյունաբերական երկրներից մեկը: Եվ չնայած մարդկային մեծ ներուժին ու բնական պաշարներին՝ Ռուսաստանը չդարձավ առաջատար: Արդյունաբերական հեղաշրջումը մեծ մասամբ վերաբերում էր միայն հսկա կայսրության եվրոպական մասին:

Տնտեսության արդիականացման դանդաղ ընթացքը հատուկ էր նաև Եվրոպայի ծայրամասերին (Պորտուգալիա, Իսպանիա, Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա և այլն):

Արդյունաբերական քաղաքակրթությունը մշտապես ընդարձակվելու միտում ուներ: Նյութական բարիքների առատ արտադրությունը և դրանց սպառման անհրաժեշտությունը, ինչպես նաև արտադրական հումքի մշտական պահանջարկը ստիպում էին այդ շուկայի մեջ ընդգրկել նորանոր երկրներ: Շուկայի ընդարձակման գլխավոր միջոցն առևտուրն է, որը նոր ժամանակներում դարձավ համաշխարհային: Այդպիսի առևտրի կենտրոններ Եվրոպայի արագ զարգացող երկրներն էին:

XVII դարում Հոլանդիան, դառնալով անկախ, Եվրոպայի առևտրում զբաղեցրեց առաջին տեղը: Նույն դարի վերջում եվրոպական առևտրում առաջատար դարձավ Անգլիան: XVIII դարում նրա գլխավոր

մրցակիցը Ֆրանսիան էր, որտեղ առաջացան մաքսից ազատ նավահանգստային քաղաքներ՝ *պորտո-ֆրանկո*: Այդ դարին բնորոշ էր գաղութային առևտուրը, որը հաճախ անվանում են եռանկյունի առևտուր՝ Եվրոպա-Աֆրիկա-Ամերիկա:

Արդյունաբերական հեղաշրջման փուլում միջազգային առևտրի գլխավոր սպարեզը Եվրոպան էր: Այստեղ էր սպառվում արդյունաբերական արտադրանքի մեծագույն մասը: Շարունակում էր զարգանալ նաև գաղութային առևտուրը:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ ձևավորվեց կապիտալիզմի համաշխարհային տնտեսություն, միջազգային առևտուրը դարձավ նրա բաղկացուցիչ մասը: Նախկինում միջազգային առևտրի գլխավոր կրողը տարբեր երկրների արտոնյալ ընկերություններն էին: Այժմ նրանց փոխարինելու են գալիս միջազգային մոնոպոլիաները: XX դարի սկզբին ստեղծված միջազգային մոնոպոլիաներն արդեն որոշում էին նաև վարձու աշխատանքի պայմանները, ինչպես նաև կարգավորում էին կապիտալի բաշխումը, նոր տեխնիկայի տարածումը և այլն: Սկսեցին նաև հրավիրել արդյունաբերական առանձին ճյուղերի ձեռներեցների միջազգային համաժողովներ, որոնք համագործակցության ծրագրեր էին մշակում:

Տարբեր երկրներ, տարածաշրջաններ և մայրցամաքներ միմյանց հետ արդեն կապված էին երկաթուղային, շոգենավային և հեռագրական կապերով: XX դարի սկզբին երկաթուղու ընդհանուր երկարությունն աշխարհում 710 հազար կիլոմետրից հասավ մեկ միլիոն 14 հազարի: Համաշխարհային առևտրական նավատորմի տարողությունը XX դարի սկզբին շուրջ 14 միլիոնից հասավ 45 միլիոն տոն-

նայի: Ծովային ուղիներով փոխադրումների մեջ առաջին տեղը գրավում էին

Անգլիան, ապա ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին գիտության և տեխնիկայի աննախընթաց թռիչքի բնորոշ կողմերը և գլխավոր արդյունքները XIX դ. վերջերին և XX դ. սկզբին: Արդյունաբերական ինչ նոր ձյուղեր առաջացան:
2. Ո՞րն է շուկայական տնտեսության գլխավոր միտումը: Ինչպե՞ս և ինչո՞ւ առաջացավ արդյունաբերաֆինանսական կապիտալը: Պարզաբանե՞ք մոնոպոլիայի էությունը, դրա ինչ տարատեսակներ գիտեք:
3. Բնութագրե՞ք աշխարհի զարգացած արդյունաբերական երկրները XX դ. սկզբին: Ինչ ընդհանրություններ և առանձնահատկություններ ունեին արդյունաբերական զարգացած և նոր զարգացող երկրները:
4. Ինչը փոխարինեց շուկայում ազատ մրցակցությունը: Ինչո՞ւ առաջացան միջազգային շուկա և տնտեսություն: Ո՞ր կարևոր իրադարձությունների շնորհիվ ընդլայնվեց միջազգային առևտուրը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Եվրոպան դարձավ միջազգային առևտրի գլխավոր կենտրոնը: Մոնոպոլիաներն ինչ դեր ստանձնեցին միջազգային տնտեսական կապերն ընդլայնելու գործում: Համաշխարհային շուկայի առաջացումն ինչ հետևանքներ ունեցավ:

§ 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նոր դասակարգերի և դասերի ձևավորումը: Եվրոպայի տնտեսության մեջ կատարված տեղաշարժերը փոփոխություններ առաջացրին նաև հասարակության սոցիալական կառուցվածքում: Սկսվեց բուրժուազիայի (կապիտալիստների) և վարձու աշխատողների (բանվորների) դասակարգերի ձևավորումը: Այդ սոցիալական գործընթացների և արդյունաբերական հասարակության ձևավորման վճռական փուլն արդյունաբերական հեղաշրջման դարաշրջանն էր: Գլխավոր պատճառն արտադրության տեխնիկական վերագինման և արտադրական կարողությունների մշտական աճն էր:

Հասարակությունը դարձավ երկբևեռ: Այն բաժանվեց երկու հիմնական դասակարգերի՝ կապիտալիստ-ձեռներեցների,

որոնք տիրում էին արտադրության միջոցներին, և բանվորների (պրոլետարներ), որոնք վարձու աշխատողներ էին: Նրանց միջև առկա հարաբերությունները վճռական դեր էին խաղում հասարակության սոցիալական կյանքում: Դրանք գործատուի և գործառուի հարաբերություններ էին, որոնք աշխատանքի շահագործման պատճառով հաճախ ստանում էին հիվանդագին ընթացք: Նրանց միջև հակամարտությունն ընդունված է անվանել **դասակարգային պայքար:** Աղքատությունը, հատկապես բանվորների ծանր սոցիալական դրությունը բնորոշ է արդյունաբերական հասարակությանը:

Միաժամանակ, պահպանվում էին հին դասակարգերը և դասերը, օրինակ՝ ազնվականությունը, ավանդական գյուղա-

ցիությունը, արհեստավորները, հոգևորականությունը, որոնք դժվարությամբ էին հարմարվում նոր հասարակությանը:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին արտադրության կենտրոնացումն ու խոշորացումը սոցիալական նոր փոփոխությունների պատճառ դարձան: Մոնոպոլիաների առաջացումը սահմանափակեց ձեռներեցի անհատական գործարարությունը: Ձևավորվեց նաև գերհարուստների մի ազդեցիկ խավ: Այդպիսի ձեռներեցը, ի տարբերություն նախորդ դարաշրջանի, և՛ արդյունաբերող էր, և՛ բանկիր, և՛ առևտրական:

Բանվոր դասակարգի հետ ևս նշանակալի փոփոխություններ կատարվեցին: Բանվորությունը դարձավ հզոր հասարակական ուժ՝ շնորհիվ տնտեսության մեջ կայուն դերի և մասնագիտական որակների բարձրացման: Արդյունաբերության վերազինումը բարձրացրեց որակյալ բանվորների պահանջարկը: Մեծ թիվ էին կազմում գրասենյակային ծառայողները (ճարտարագետներ, տեխնիկներ), որոնք սպասարկում էին արտադրությունը: Միննույն ժամանակ նվազեց գյուղացիների, արհեստավորների և մանր վաճառականների թիվը: Հզոր հասարակական ուժ դարձավ նաև մտավորականությունը, առանց որի արդյունաբերական քաղաքակրթությունը չէր կարող կայանալ: XX դարի սկզբին նրանք կազմում էին զարգացած արդյունաբերական երկրների բնակչության 10%-ը:

Նշանակալից զարգացում ապրեց գյուղացիությունը: Գյուղատնտեսության ներքաշումը շուկայական հարաբերությունների ոլորտ արմատապես փոխեց գյուղը: Ավարտվեց նախկինում սկսված ագրարային հեղաշրջումը: Գյուղացին, որպես մանր անհատական արտադրող,

զարգացած արդյունաբերական երկրներում վերացավ: Նրան փոխարինեց ապրանքային տնտեսություն ունեցող ագրարակատերը (ֆերմերը): Գյուղական այդ ձեռներեցներն էին կազմակերպում անհրաժեշտ սպառման ապրանքներ արտադրող առաջին շահութաբեր տնտեսությունները: Գյուղացիների մեծ մասը հողագրկվելով կամ դառնում էր ագրարակատիրոջ տնտեսությունում աշխատող բանվոր, կամ գնում էր քաղաք:

Արտադրության կենտրոնացումը և խոշորացումը չէր նշանակում հասարակության միջին դասի վերացում: Միջին դասը պահպանվեց, սակայն փոխվեց նրա սոցիալական կազմը: Գործարարության զանգվածային դառնալը, նախկին սահմանափակումների վերացումը շատերին էին հնարավորություն տալիս զբաղվելու մանր ձեռներեցությամբ: Դրանք գլխավորապես բժիշկներ էին, իրավաբաններ, տեխնիկներ, ճարտարագետներ, ուսուցիչներ, հրատարակիչներ և այլք:

Հասարակական բարեկեցության աճը: Արդյունաբերական հեղաշրջումը և ապա դրան հաջորդած գիտատեխնիկական առաջընթացը, առաջավոր երկրների տնտեսական վերելքը դրական ազդեցություն ունեցան բնակչության կենսամակարդակի վրա: Արդյունաբերական քաղաքակրթության գլխավոր առանձնահատկություններից մեկը նյութական բարիքների արտադրության անսովոր առատությունն էր: Մարդու անձնական սպառման առարկաների թիվը կտրուկ ավելանում էր: Սննդամթերքը դառնում էր բազմազան, պակասում էր հացահատիկի օգտագործման չափաբաժինը: Վերանում են հագուստի դարավոր սահմանափակումները: Նորաձևությունը դառնում է համատարած, ընդգրկում հասարակու-

թյան բոլոր խավերը: XIX դարի կեսից սկսում են աճել առողջապահության, կրթության և գիտության պետական ծախսերը: Աճում են մարդու պահանջմունքները, որոշակիորեն բարելավվում են կյանքի պայմանները: Կյանքի միջին տևողությունը 30–36–ից հասնում է 48–52 տարեկանի: Ի տարբերություն նախկինի՝ գրագիտությունը դառնում է զանգվածային: XX դարի սկզբին զարգացած երկրներում գրագիտության մակարդակը հասավ 90%–ի:

Հասարակական բարեկեցության աճի մասին է վկայում նաև բնակչության աճը: Եթե 1800 թ. Եվրոպայում ապրում էր 200 միլիոն մարդ, ապա 1900 թ. բնակչության թիվն անցավ 400 միլիոնի սահմանը: Դա կազմում էր աշխարհի բնակչության մեկ քառորդը: Մարդկանց մոտ 40%–ն ապրում էր քաղաքներում: Միլիոն և ավելի բնակչություն ունեցող քաղաքները դառնում էին սովորական: Արդիականացավ նաև քաղաքաշինությունը: Եվրոպական մայրաքաղաքներն արմատապես վերակառուցվեցին: Քաղաքներում հայտնվեցին նոր փոխադրամիջոցներ (ավտոմեքենա, տրամվայ, մետրոպոլիտեն), բարեկարգվեցին փողոցները, ավելացան հասարակական նշանակության շենքերի թիվը և սպասարկման ոլորտները:

Այսպիսով՝ արդյունաբերական հասարակությունը մի ամբողջական սոցիալական համակարգ էր, որի գլխավոր դիմագիծը մարդու մրցակցային և պայմանագրային գործունեությունն էր: Մյուս կողմից՝ ի տարբերություն միջնադարի, մարդկանց կենսոլորտը դառնում էր ավելի տարրողունակ և հագեցած:

Հասարակության սոցիալական զարգացման օրենսդրական ամրապնդումը: Արդյունաբերական քաղաքակրթության տնտեսական համակարգի ձևավորումը

մարդկանց միանգամից բարեկեցություն չբերեց: Աղքատությունը բնորոշ է արդյունաբերական հասարակությանը: Արդյունաբերական հեղաշրջման փուլում ժամանակակիցները բանվորների սոցիալական վիճակը նկարագրում էին ամենամալ գույներով: Բանվորները չունեին բնակարան, ապրում էին վարձով, ծանր կենցաղային պայմաններում: Պաշտպանված չէր բանվորի աշխատանքը: Չկային օրենքներ, որոնք կարգավորեին ձեռներեցի և բանվորի աշխատանքային փոխհարաբերությունները: Նրանք աշխատում էին օրական 14–16 ժամ: Չկար հանգստյան օր, աշխատանքի ընդմիջում, տարեկան արձակուրդ, ապահովագրում դժբախտ պատահարներից: Բանվորների երեխաները դպրոց հաճախելու հնարավորություն չունեին, որովհետև աշխատում էին սկսած 7–8 տարեկանից: Տարածված էին գործազրկությունը, աշխատանքի շահագործումը:

Հասարակությանը հատկապես անհանգստացնում էր կանանց և երեխաների աշխատանքի շահագործումը: Ձեռներեցը նրանց նույն աշխատանքի համար ավելի քիչ էր վճարում, քան տղամարդկանց:

Բանվորները և ձեռներեցները մշտապես դասակարգային պայքարի մեջ էին: Բանվորներն իրենց իրավունքները պաշտպանելու համար ստեղծում էին կազմակերպություններ, հատկապես **արհմիություններ**: Դասակարգային պայքարի ամենատարածված ձևը **գործադուլն** էր:

Բանվորների ծանր դրությունը, հատկապես արդյունաբերական հեղաշրջման փուլում, բացատրվում է նաև տնտեսության դեռևս անկայուն վիճակով: Տնտեսությունն այնքան զարգացած չէր, որպեսզի ապահովեր բանվորների բարեկեցությունը: Դա կատարվեց աստիճա-



Երեխաների աշխատանքը տեքստիլ արդյունաբերությունում

նաբար, և առաջին շոշափելի արդյունքները նկատելի դարձան միայն XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:

Բանվորների և հասարակության աղքատ մասի սոցիալական վիճակի աստիճանական բարելավումը ամրապնդվում էր պետական օրենքներով:

Սոցիալական օրենսդրությունը Եվրոպայի առաջավոր երկրներում հատ-

կապես մեծ տարածում գտավ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Ընդունվեցին օրենքներ, որոնք օրինականացնում էին արհմիությունների գործունեությունը, բանվորների գործադուլ անելու իրավունքը և այլն: Առանձին տեղերում կրճատվեց աշխատաժամանակը և հասավ մինչև 8–10 ժամի: Օրենքներ ընդունվեցին, որոնք բանվորներին պաշտպանում էին դժբախտ պատահարներից, գործազրկությունից: Շատ երկրներում առաջին անգամ մտցվեց ծերության կենսաթոշակ: Սովորական դարձավ աշխատանքային պայմանագրերի կնքումը, որով ձեռներեցր և բանվորը ձշտում էին փոխադարձ պարտավորությունները: Մի շարք օրենքներով բարելավվեց բնակչության բժշկական սպասարկումը: Կարևոր էր նաև 6–12 տարեկան երեխաների պարտադիր տարրական կրթության մասին օրենքների ընդունումը: Բոլոր տեսակի սոցիալական պետական ծախսերն առաջին անգամ մտան պետական բյուջե: Օրինակ՝ Անգլիայում դա կատարվեց 1909 թ.:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արդյունաբերական զարգացման հետ ինչ հիմնական դասակարգեր են առաջանում: Ովքեր էին կապիտալիստները, և ինչ է կապիտալը: Ո՞վ էր բանվորը (պրոլետար), ովքեր էին դառնում բանվոր: Ինչո՞վ էր տարբերվում XIX դ. վերջի և XX դ. մոնոպոլիստ-կապիտալիստը նախորդ ժամանակաշրջանի ձեռներեցից: Ինչ փոփոխություններ կատարվեցին բանվոր դասակարգի կյանքում: Ինչպիսին էր գյուղացիության դրությունը զարգացած արդյունաբերական երկրներում: Ներկայացրե՞ք նոր դարերի հասարակության սոցիալական պատկերը:
2. Ո՞րն էր արդյունաբերական քաղաքակրթության գլխավոր առանձնահատկությունը: Ապացուցե՞ք, որ արդյունաբերության զարգացման հետ աճում էր հասարակության բարեկեցությունը:
3. Ներկայացրե՞ք բանվորների սոցիալական վիճակը արդյունաբերական հեղաշրջման փուլում: Ինչ է նշանակում աշխատանքի շահագործում: Դասակարգային պայքարի ո՞ր ձևն էր ամենատարածվածը այդ փուլում:

4. Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էր պայմանավորված բանվոր դասակարգի ծանր վիճակը արդյունաբերական հեղաշրջման փուլում: Ի՞նչ օրենքներ ընդունվեցին բանվորների վիճակը բարելավելու համար:

ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ–ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

§ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Արդյունաբերական հասարակության ընդհանուր բնութագիրը: Ժողովրդավարությունը արդիականացման կարևորագույն դրսևորումներից մեկն է: Նրա գլխավոր բովանդակությունը հասարակության քաղաքական համակարգի արմատական փոփոխությունն է: Արդյունաբերական քաղաքակրթության բնորոշ կողմերն են.

1. Աշխատանքի և նրա արդյունքների նկատմամբ բացառիկ մեծ հարգանք: Աշխատանքը դիտվում է ոչ միայն որպես ապրելու սովորական միջոց, այլև բարձրագույն բարոյական արժեք և ծառայություն Աստծուն:
2. Բարձր և զարգացած սեփականության՝ կապիտալի առկայություն: Այն ստեղծվում է համառ աշխատանքի և ձեռներեցության արդյունքում: Ձեռներեցությունը դառնում է մարդուն հեղինակություն բերող գլխավոր զբաղմունքը:
3. Միասնական շուկան՝ տնտեսության գլխավոր լծակ և կարգավորիչ: Այն մշտապես ընդարձակվելու միտում ունի: Հենց այդ պատճառով արդյունաբերական հասարակությունն անկասելի ընթացքով դառնում է համաշխարհային քաղաքակրթություն:
4. Հասարակության սոցիալական բարդ և զարգացած կառուցվածքի առկայություն: Հիմնական դասակարգեր են դառնում ձեռներեցները և բանվորները:

5. Չարգացած հասարակական–քաղաքական և մշակութային կյանք:
6. Հասարակության մեջ մարդկանց տնտեսական, սոցիալական, հոգևոր–մշակութային և մյուս հարաբերությունների անկախացում իշխանությունից: Նախկին հպատակ–տեր հարաբերությունը վերանում է, հպատակին փոխարինելու է գալիս քաղաքացին: Արդյունքում առաջանում է քաղաքացիական հասարակություն:
7. Ժողովրդավարական, իրավական պետություն: Այդպիսի պետությունը, որը ստեղծվում է մարդկանց մասնակցությամբ և ընդհանուր համաձայնությամբ, կարգավորում է հասարակական կյանքն օրենքներով, ապահովում նրա կայուն կենսագործունեությունը:

Լուսավորական շարժումը: Վերածննդի և Ռեֆորմացիայի ժամանակները սկիզբ դրին հասարակության արդիականացման գաղափարական նախապատրաստությանը և իրականացմանը: XVII–XVIII դարերում դրան հաջորդեց արդիականացման մի նոր աշխարհայացք՝ լուսավորական գաղափարախոսությունը:

XVII դարում բարեփոխումների կարիք զգացող եվրոպական հասարակությանը հուզում էին պետության, քաղաքականության և մարդկանց իրավունքների հիմնախնդիրները: Այդ իսկ պատճառով առաջացավ *մարդկանց բնական իրա-*



Մ. Լոմոնոսով



Ճ.-Ճ. Ռուսո



Գ. Դիդրո

վունքի տեսությունը: Բնական իրավունքի գաղափարն առաջացել է դեռևս Անտիկ աշխարհում: Նոր ժամանակների սկզբին այդ տեսությունն առաջիններից մեկը փորձեց հիմնավորել հոլանդացի **Հ. Գրոտիուսը** (XVII դ.): Նա արդարացի էր համարում այն հասարակությունը, որի օրենքները բխում են բնությունից, այսինքն՝ բնական են և մարդու կամքից անկախ: Արդարացի, բոլորին օգտակար օրենքներ մարդը կարող է սահմանել բնությունից նրան տրված բանականության շնորհիվ:

Մարդկանց բնական իրավունքի տեսությունը հետագա զարգացում ապրեց: Այդ գործում մեծ դեր խաղաց անգլիացի **Ջոն Լոկը** (1632–1704): Նա «հասարակության բնական վիճակը» համարում էր ժողովրդի ինքնիշխանությունը, մարդկանց անօտարելի իրավունքների՝ ազատության և սեփականության իրագործումը:

Բնական իրավունքով զբաղվող առանձին մարդկանց գործունեությունը XVIII դ. դարձավ հզոր հասարակական շարժում: Արդիականացման ուղիների փնտրտուքները վերածվեցին հասարակական բանավեճի: Ելնելով նոր գաղափարների

բովանդակությունից՝ այն անվանեցին «**Լուսավորության դար**»: Նորովի իմաստավորվեցին գիտությունը, մշակույթը, քաղաքականությունը և տնտեսությունը: Ազգային առանձնահատկություններով հանդերձ՝ այն դարձավ համակրուպական հոգևոր երևույթ, որի կենտրոնը Ֆրանսիան էր:

Ֆրանսիայում լուսավորական շարժման նշանավոր գործիչներն էին **Ը. Մոնտեսքյոն**, **Յ. Վոլտերը**, **Գ. Դիդրոն**, **Ճ.-Ճ. Ռուսոն**, Անգլիայում և Շոտլանդիայում՝ կոմս **Շեֆսաբերին**, **Դ. Հյումը**, **Ա. Սմիթը**, Իտալիայում՝ **Պ. Վերրին**, **Չ. Բեկկարիան**, Գերմանիայում՝ **Յ. Հերդերը**, **Ի. Կանտը**, **Յ. Շիլլերը**, Ռուսաստանում՝ **Մ. Լոմոնոսովը**, **Ն. Նովիկովը** և այլք: Նրանք իմաստասերներ էին, գրողներ, արվեստագետներ, հրապարակախոսներ և հասարակական գործիչներ:

Լուսավորական շարժման գլխավոր գաղափարներն էին.

1. Ավատատիրական կարգերի և նրա հասարակական կառույցների մերժումը:
2. Մարդկային բանականությունը հասարակական երևույթների բացատրման գլխավոր միջոցն է: Շրջանառության

մեջ դրվեց «բանական ազգ» հասկացությունը:

3. Մարդկային հասարակությունը առաջադիմական զարգացում է:
4. Հասարակության առաջադիմության շարժիչ ուժերն են գիտությունը, կրթությունը, կատարյալ օրենքները, գաղափարները, արգելակիչ ուժը՝ կաթոլիկ եկեղեցին, կրոնական մոլեռանդությունը և տգիտությունը:
5. Մարդկանց և ազգերի բնական իրավունքների՝ կյանքի, ազատության և սեփականության ապահովում:
6. Իշխանության աղբյուրն ազգն է, պետությունը՝ հասարակական դաշինք, օրենքները՝ ընդհանուր կամքի դրսևորում:
7. Սահմանադրական կարգի և քաղաքացիական հասարակության հաստատում: Բռնապետության և միապետության ժխտում, հանրապետության կամ սահմանադրական միապետության հաստատում:
8. Պետական բարձրագույն իշխանության՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միմյանցից տարանջատում և անկախացում:
9. Աշխատանքը ժողովուրդների և մարդկանց հարստության գլխավոր միջոցն է: Դրա համար անհրաժեշտ է մարդկանց ազատ, սահմանափակումներից զերծ տնտեսական գործունեություն:

Ինչպես տեսնում եք, լուսավորականների գաղափարները համահունչ էին արդյունաբերական քաղաքակրթության բնորոշ կողմերին և թխում էին նրա էությունից:

Սահմանադրական կարգի հաստատումը: Լուսավորական շարժումը մեծապես սրեց հասարակական միտքը,

խթանեց գիտության և մշակույթի զարգացումը: Լուսավորության դարաշրջանի գիտնականներն աչքի էին ընկնում հանրագիտարանային գիտելիքների բազմազանությամբ:

Եվրոպայի և մյուս ժողովուրդների պատմությունը XVII–XIX դարերում ընթացավ լուսավորական գաղափարների դրոշի ներքո: Այդ բարդ գործընթացի գլխավոր արդյունքներից մեկը պետականության ազատական–սահմանադրական կարգի հաստատումն էր:

Գլխավոր գաղափարը քաղաքացու՝ որպես նոր մարդու ազատագրումն էր բռնապետությունից, արտաքին միջատությունից, ինչպես նաև նրա մասնավոր ու գործարար կյանքի ապահովումը: Իսկ դա հնարավոր էր պետականության պայմանագրային համակարգի և ազգի ինքնիշխանության սկզբունքի հաստատման միջոցով: Այսպիսի զարգացման միտումներից էականը պետության դեկլարմանը չափահաս քաղաքացիների իրական մասնակցության ապահովումն էր: Հասարակական կառույցները (կուսակցություններ, կազմակերպություններ, մամուլ և այլն), և համընդհանուր ընտրական իրավունքը դրա գլխավոր միջոցներն են:

Ազատական–սահմանադրական կարգի հաստատման գործընթացը բոլոր երկրներում միանման չէր: Քաղաքական համակարգի արդիականացումը շուտ կատարվեց Նիդերլանդներում, Շվեյցարիայում և ԱՄՆ–ում: Ազատագրվելով օտար տիրապետությունից՝ նրանց հարկ չեղավ հաղթահարելու հին պետական կարգերի դիմադրությունը:

Ազատական–սահմանադրական կարգերի հաստատումը դասական ընթացք

ունեցավ Անգլիայում և Ֆրանսիայում: Հեղափոխությունների արդյունքում Անգլիան տվեց սահմանադրական-միապետության օրինակ, Ֆրանսիան՝ հանրապետության:

Սահմանադրական կարգերի հաստատումը երկարատև և դժվարին եղավ այն երկրներում, որտեղ դեռ միջնադարից պահպանվել էին միապետական կարգի ավանդույթներ, դասային ամուր կառուցվածք և կրոնի մեծ ազդեցություն: Այդպիսի երկրներից էին Իսպանիան, Ավստրո-Հունգարիան, Ռուսաստանը և այլն:

Ռուսաստանը սահմանադրական կարգի հաստատման փորձ կատարեց միայն XX դարի սկզբին:

Սահմանադրությունները հիմնականում ստեղծվում էին ազգային-ազատագրական պատերազմների և հեղափոխությունների արդյունքում: Այդպես եղավ Իտալիայում, Գերմանիայում, Բալկաններում:

XIX հարյուրամյակը համարվում է սահմանադրությունների դար: Հիրավի, մեկ դարի ընթացքում սահմանադրական կարգեր հաստատվեցին եվրոպական բոլոր պետություններում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են արդյունաբերական հասարակության բնորոշ կողմերը: Մեկնաբանե՞ք դրանցից յուրաքանչյուրը:
2. Հասարակության արդիականացման ի՞նչ գաղափարախոսություններ են ստեղծվել XV–XVIII դդ.: Ի՞նչ է աշխարհայացքը: Բացատրե՞ք *գաղափարախոսություն* հասկացությունը:
3. Նոր ժամանակներում ո՞վ առաջինը հիմնավորեց բնական իրավունքի գաղափարը: Ներկայացրե՞ք Ջոն Լոկի տեսությունը: Ո՞ր երկիրը դարձավ լուսավորական շարժման կենտրոնը: Նշե՞ք լուսավորական շարժման նշանավոր գործիչներին: Որո՞նք էին լուսավորական շարժման գլխավոր գաղափարները:
4. Ի՞նչ ազդեցություն ունեցավ լուսավորական շարժումը գիտության և մշակույթի զարգացման վրա: Ի՞նչից էր կախված ազատական-սահմանադրական կարգի հաստատումը, և ի՞նչ ընթացք ունեցավ այն տարբեր երկրներում:

§ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ազատականություն: XIX դարի գլխավոր գաղափարական-քաղաքական հոսանքներից մեկն ազատականությունն է (լիբերալիզմ, լատ.՝ liberum — ազատ, անկախ բառից): Այն սկիզբ է առել մարդու բնական իրավունքի տեսությունից և լուսավորական շարժումից: Առաջին անգամ **ազատական** հասկացությունը օգտագործվել է Իսպանիայի՝ 1810 թ. ընտրված խորհրդարանում: Այնուհետև այն տարածվեց Եվրոպայի մյուս երկրներում և

դարձավ առաջադիմության գաղափարներին հետևող կուսակցությունների անվանում:

Ազատականությունը ելնում է լուսավորականների այն հիմնական գաղափարից, համաձայն որի՝ մարդկային հասարակությունը զարգանում է դեպի կատարյալը: Ազատականությանը բնորոշ է ապագայի նկատմամբ լավատեսությունը: Ազատականների համոզմամբ՝ մարդու գիտելիքները, բարեկեցությունը

նը և բարոյական արժեքները հետզհետե առաջընթաց են ապրում: Իսկ այդպիսի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է հասարակության մեջ ներդնել մարդկանց իրավահավասարություն, ստեղծել ժողովրդավարական օրենքներով կառավարվող պետություն: Ազատական պետության խնդիրն է ապահովել պայմաններ անհատի ընդունակությունների զարգացման, ինչպես նաև ազատ գործունեության համար՝ ի շահ մարդու և հասարակության: Պետության մյուս խնդիրը մարդկանց ստեղծած սեփականության և բարիքի պաշտպանությունն է: Այսինքն՝ ազատականները դրանով իսկ փորձում էին գտնել անհատի և հասարակության շահերի ներդաշնակեցման ուղիները: Իսկ այդպիսի զարգացման խոչընդոտներ են միապետի կամայականությունները, կրոնական անհանդուրժողականությունը և այլն:

XIX դ. կեսերին ազատականությունը Եվրոպայում (գլխավորապես՝ Անգլիայում և Ֆրանսիայում) դարձավ ազդեցիկ քաղաքական ուժ ընդդեմ միահեծանության: Իսկ նույն դարի վերջերին հանդես եկան նորազատականները: Ժողովրդավարության հաստատումն առաջավոր երկրներում առաջ բերեց նոր խնդիրներ: Եթե նախկինում ազատականները պնդում էին, թե պետության դերը մարդկանց ազատ գործունեության նկատմամբ պետք է սահմանափակել, ապա նորազատականները համոզված էին, որ պետք է մեծացնել պետության կարգավորիչ իրավունքները: Այսինքն՝ պետությունը պետք է դառնա քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բարեփոխումների նախաձեռնող և իրագործող: Ազատականների մեջ կային տարաձայնություններ: Նրանց մի մասը մերձեցավ

ձախ ուժերին (օրինակ՝ Ֆրանսիայում), մյուսները՝ ազգայնականներին և աջ ուժերին (օրինակ՝ Գերմանիայում):

Պահպանողականություն: Պահպանողականությունը (կոնսերվատիզմ, լատ.՝ *conservo* — *պահպանել* բառից) քաղաքական գաղափարախոսություն է, որն առաջացել է որպես XVII–XVIII դարերի հեղափոխությունների և լուսավորականության հակազդեցություն: Պահպանողականները համոզված էին, որ հասարակության արմատական և արագ փոփոխությունները վնասում են ազգային դարավոր արժեքներին: Պահպանողականությանը բնորոշ է խոնարհումը անցյալի և ազգային ավանդույթների առջև: Սրբացնելով ազգային արժեքները՝ կրոնը, մշակույթը, սովորույթները, պետական կարգը և այլն, նրանք իրենց գլխավոր խնդիրը համարում էին դրանց պահպանումը: Այստեղից էլ բխում է նրանց բացասական վերաբերմունքը բարեփոխումների նկատմամբ:

Պահպանողականները դարավոր արժեքներից մեկը համարում էին միապետությունը: Անգլիացի *Է. Բյոքլի* (1729–1797) կարծիքով՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարները վերացական են, ուստի դրանց իրագործումը վտանգավոր է: Ըստ նրա՝ ձիշտը անգլիական սահմանադրական միապետական կարգն է, որ գալիս է դարերից և բխում ժողովրդի շահերից:

XIX դ. առաջին տասնամյակներին պահպանողականության գաղափարները և դրանց իրագործման փորձերը հանգեցրին հետադիմության: Մեծ հեղափոխության արդյունքում ստեղծված սահմանադրական կարգերը որակվեցին անօրինական, հին կարգերը՝ օրինական: Օրինական կարգի խախտման պատճառ

էր համարվում Աստծո նկատմամբ հավատի սասանումը: Ահա թե ինչու պահպանողականներից մեկը հեղափոխությունն անվանեց «սատանայի գործ»: Ուստի և կոչ էր արվում ապավինելու եվրոպացիների դարավոր կրոնին՝ կաթոլիկությանը և նրա ղեկավար Հռոմի պապին:

Եվրոպայում պահպանողականության հայրենիքը Անգլիան էր: Այս երկրում պահպանողական գաղափարները ձևավորվեցին ընտրական բարեփոխումների շուրջ պայքարում: XIX դ. 50–70–ական թվականներին *թորի* կուսակցությունն ավելի կազմակերպվեց, ստացավ *պահպանողական* անվանումը, որը և տարածվեց եվրոպական շատ երկրներում: Այս նոր պահպանողականությունը, ի տարբերություն հնի, ստիպված եղավ ձանաչել արդյունաբերական հասարակության նոր իրողությունները: Երբեմն կազմելով կառավարություն՝ նրանք կատարում էին բարեփոխումներ՝ փորձելով դրանք լավագույնս համատեղել ավանդական արժեքների հետ: Դրանով իսկ նրանք ձգտում էին հավասարակշռելու հասարակական առաջընթացը՝ զերծ պահելով այն հեղափոխական ծայրահեղություններից:

Իսկ այն երկրներում, որտեղ պահպանողականությունը մնացել էր ավանդապաշտության մակարդակում, տեղի ունեցան հեղափոխական ցնցումներ: 1905–1907 թթ. առաջին ռուսական հեղափոխությունը դրա վառ օրինակն է:


Ազգայնականություն: Արդյունաբերական քաղաքակրթությունն ազգերի զարգացումը հասցրեց մի նոր մակարդակի, որում հայրենիքի, լեզվի, մշակույթի և մյուս ընդհանրությունների գիտակցումն ու իմաստավորումը ձեռք բերեցին նոր որակներ: Իսկ միասնական ներքին շու-

կայի ձևավորումն ազգը դարձրեց տնտեսական մեկ անբաժանելի մարմին:


Այս իրավիճակում առաջանում են հայրենի բնօրրանում ազգի տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային համախմբման և ազատագրման գաղափարախոսություններ, որը անվանում են *ազգայնականություն*: Նրա գլխավոր կարգախոսներն էին՝ «Ազգը վեր է ամեն ինչից», «Մեկ ազգ, մեկ պետություն» և այլն: Այս առումով նորօրյա ազգայնականության առաջացման հզոր խթաններ դարձան լուսավորական շարժումը և ֆրանսիական հեղափոխությունը: 1792 թ. Ավստրիայի դեմ պատերազմում Ֆրանսիայի Օրենսդիր ժողովն օրենք ընդունեց. «Հայրենիքը վտանգի մեջ է»: Ֆրանսիացիներն աշխարհին տվեցին հայրենասիրության բացառիկ օրինակ: Նապոլեոնի դարաշրջանում վերելք ապրող Ֆրանսիայի դեմ ազատագրական պայքարը եվրոպական ազգերի մոտ նոր մակարդակի բարձրացրեց հայրենիքի նկատմամբ սերը: Վիեննայի վեհաժողովը, որը վերականգնեց հին կարգերը, այլևս չէր կարող կասեցնել ազգայնական շարժումը:

XIX դարում ազգայնականության դրոշի ներքո տեղի ունեցան ազգերի քաղաքական համախմբում և ազգային նոր պետությունների ստեղծում: Դրա բնորոշ օրինակը Գերմանական կայսրության (1871 թ.) և Իտալական թագավորության (1861 թ.) ստեղծումն էր: Ազգայնական գաղափարների դրոշի ներքո ընթացավ նաև Հունաստանի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և մյուսների անկախացումն օսմանյան լծից:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ազգայնական առաջադիմական շարժումը մեծ տերություններում այլասերվեց և վերածվեց հետադիմական ազգայնամոլության:



Ռ. Օմեյն



Կ. Մարքս



Ֆ. Էնգելս

Դրա դրսևորումներից մեկը *մեծապետական շովինիզմն էր*, որը նպատակ ուներ ձուլելու հպատակ ազգերին: Այդպիսիք էին Ավստրո-Հունգարիան, Գերմանիան, Ռուսաստանը և Օսմանյան տերությունը: Հենց այդ քաղաքականության հետևանքն էր ցեղասպանությունը:

Աղքատության վերացման ուսմունքներ. հասարակական շարժումներ: Ձեռներեց-կապիտալիստների և բանվոր-պրոլետարների միջև պայքարը մշտական երևույթ էր ինչպես XIX դարում, այնպես էլ XX դարի սկզբին: Բանվորների, հատկապես կանանց և երեխաների աշխատանքի շահագործումը մտահոգում էր առաջադեմ մարդկանց: Հենց այդ պատճառով առաջացան ուսմունքներ, որոնք նպատակ ունեին ցույց տալու բարեկեցիկ հասարակության ստեղծման ուղին: Այդպիսի ուսմունքներ էին *սոցիալիզմը* և *կոմունիզմը*:

XIX դ. առաջին կեսին, պայմանավորված արդյունաբերական հեղաշրջմամբ, ստեղծվում է ավելի համակարգված ուսմունք *սոցիալիզմի* մասին: Սոցիալիզմի (ֆրանս. և լատ.՝ հասարակական) ուսմունքի ստեղծողներն են ֆրանսիացի

Ա. Սեն-Սիմոնը (1760–1825) և անգլիացի *Ռ. Օմեյնը* (1771–1858): Հենց նրանց հետևորդներից մեկն էլ 1834 թ. անգլիական մի հանդեսում առաջին անգամ օգտագործեց *սոցիալիզմ* հասկացությունը: Նրանք առաջ քաշեցին նոր հասարակարգի ստեղծման իրենց նախագծերը և համոզված էին, որ դրան կարելի է հասնել մարդկանց բարի կամքի շնորհիվ:

Չնայած առաջին սոցիալիստների անհաջողությանը՝ նրանց գաղափարները և գործունեությունը օգտակար եղան: Նրանց հետևորդներից գերմանացիներ *Կ. Մարքսը* (1818–1883) և *Ֆ. Էնգելսը* (1820–1895) սոցիալիստական գաղափարներն ավելի հիմնավորեցին և խորացրին: Մարքսը և Էնգելսը սոցիալիստներ էին, բայց սովորաբար նրանց ստեղծած ուսմունքն անվանում են *կոմունիզմ*: Առաջին անգամ «կոմունիզմ» բառն օգտագործվել է Ֆրանսիայում՝ Մեծ հեղափոխության տարիներին:

Մարքսը և Էնգելսը համոզված էին, որ կապիտալը, որպես մասնավոր սեփականություն, ծառայում է որպես բանվորների շահագործման միջոց: Հետևաբար կապիտալը, արտադրության բոլոր միջոց-

ները՝ գործարանները և ֆաբրիկաները, պետք է դարձնել հանրային, այսինքն՝ բոլորի սեփականությունը: Եվ քանի որ ձեռներեցները կամավոր չեն զիջի իրենց սեփականությունը, բանվորները պետք է կատարեն սոցիալիստական հեղափոխություն, ստեղծեն իրենց պետությունը: Բանվորական պետությունը հնարավորություն կտա ստեղծելու նոր՝ կոմունիստական հասարակարգ: Ըստ գաղափարի՝ կոմունիզմը բարձր զարգացած հասարակարգ է, որին բնորոշ է համաժողովրդական սեփականությունը, հանրային աշխատանքը, նյութական բարիքների առատությունը, բարեկեցիկ կյանքը, դասակարգերի և նույնիսկ պետության բացակայությունը:

Մարքսը և նրա հետևորդները Եվրոպայում ու աշխարհի այլ մասերում տարածեցին իրենց գաղափարները, ստեղծեցին

բազում կազմակերպություններ և կուսակցություններ: Նրանք իրենց նպատակներին հասնելու համար մասնակցում էին խորհրդարանական ընտրություններին, կազմակերպում գործադուլներ և ցույցեր: Այդ նպատակով ստեղծվեց Բանվորների միջազգային ընկերությունը՝ *Առաջին ինտերնացիոնալը* (1864–1876): Ֆրանսիական հեղափոխության հարյուրամյակի տարում ստեղծվեց Երկրորդ ինտերնացիոնալը (1889–1914):

Սոցիալիստների մի մասը գտնում էր, որ սոցիալիզմին պետք է հասնել միայն հեղափոխության ճանապարհով, մյուսը՝ բարեփոխումների: Ռուսաստանում Մարքսի ուսմունքը շարունակեց *Վ. Լենինը* (1870–1924), որը հեղափոխության համոզված կողմնակից էր:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկեք XIX դ. առաջացած քաղաքական հիմնական ուսմունքները: Ներկայացրեք ազատականության հիմնական գաղափարները: Ըստ ազատականության տեսության՝ որո՞նք էին պետության հիմնական խնդիրները:
2. Ըստ ձեզ՝ ինչո՞ւ պահպանողական գաղափարները համարվեցին հետադիմական: Ո՞ր երկիրն է համարվում պահպանողականության հայրենիք: Ո՞ր գաղափարներից առաջացավ պահպանողականությունը:
3. Որո՞նք են ազգայնականության գլխավոր կարգախոսները: Ի՞նչ դրսևորումներ ունեցավ ազգայնականությունը XIX դ.: Ո՞ր երկրներում ազգայնականությունը վերածվեց հետադիմական երևույթի, և ինչպե՞ս դա դրսևորվեց:
4. Ձեր կարծիքով՝ ո՞րն էր սոցիալիզմի և կոմունիզմի ուսմունքների առաջացման պատճառը: Ովքե՞ր են համարվում սոցիալիզմի ուսմունքի ստեղծողները: Ներկայացրեք Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարները: Սոցիալիստական կամ կոմունիստական ուղղության ի՞նչ կուսակցություններ և միջազգային կազմակերպություններ ստեղծվեցին:

§ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՆԳԼԻԱՅԻ ՌՈՂԻՆ

Խորհրդարանական միապետության ստեղծումը: XVII դարի անգլիական հեղափոխությունը խթանեց արդյունաբերական հասարակության ձևավորումը:

Հեղափոխության նվաճումներից մեկը սահմանադրական մտքի զարգացումն էր, նոր պետականության ստեղծման փորձերը:

Սահմանադրական կարգի իրենց նախագծում **ինդեփենդենտների** կուսակցությունը ծրագրում էր ստեղծել սահմանադրական միապետություն: Թագավորի և նրա կողմնակիցների համառ դիմադրությունը ձախողեց դրա իրագործումը: Ուստի 1649 թ. ինդեփենդենտները հաստատեցին հանրապետություն: Այնուհետև **Օ. Կրունվեր** միապետականների դեմ պայքարելու և քարեփոխումները պաշտպանելու համար ստեղծեց կառավարման առանձնահատուկ ձև՝ **պրոտեկտորատ: 1653 թ.** նա մի խումբ սպաների հետ կազմեց սահմանադրություն, որը հայտնի է «Կառավարման միջոցը» անունով: Այն Եվրոպայի պատմության մեջ առաջին անգամ օրենսդրորեն ձևակերպեց խորհրդարանական պետության գլխավոր սկզբունքներից մեկը՝ իշխանության տարանջատումը:

Մյուս կուսակցությունն իրեն անվանում էր **լեյեր** (հավասարար): Նրանց առաջնորդը **Ջ. Լիքենեն** էր: Նա առաջ էր քաշում մարդու բնական իրավունքից բխող սահմանադրական դրույթներ՝ ժողովրդի ինքնիշխանություն, իրավահավասարություն, չափահաս տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունք, մասնավոր սեփականության անձեռնմխելիություն և այլն:

Անգլիայի սահմանադրական կարգի մեծ նվաճում էր անձի անձեռնմխելիության մասին օրենքը (ընդունվել է **1679 թ.**):

Ստյուարտ արքայատոհմը, վերականգնելով իր գահը, փորձում էր կրկին անտեսել խորհրդարանի իրավունքները: **1688 թ.** խորհրդարանը **Ջեյմս II** թագավորին մեղադրեց սահմանադրության խախտման մեջ:

Սահմանադրություն հասկացությունը՝ որպես պետության հիմնական օրենքնե-

րի հավաքածու, առաջին անգամ օգտագործվել է Անգլիայում 1688 թ.:

Խորհրդարանը դաշինքի մեջ մտավ Նիդերլանդներում կառավարող **Վիլհելմ Օրանցու** հետ և նրա օգնությամբ երկրից վտարեց Ջեյմս II-ին: 1689 թ. Վիլհելմը հռչակվեց Անգլիայի թագավոր: Այդ բոլորը կատարվեց առանց արյունահեղության, որի համար կատարվածը անվանեցին «**Փառահեղ հեղափոխություն**»: Խորհրդարանն ընդունեց երկրի հասարակական-քաղաքական կյանքը կարգավորող կարևոր օրենքներ: 1689 թ. հաստատված «Իրավունքների օրենքը» օրենսդրական իշխանությունը տալիս էր խորհրդարանին: Հարկերի և պետական եկամուտների տնօրինումը, ինչպես նաև դատական իշխանությունը անցնում էին խորհրդարանին: Հռչակվում էր նաև խոսքի և դավանանքի ազատություն: Թագավորին վերապահվում էր միայն գործադիր իշխանությունը: Ընդունված օրենքները սկիզբ դրին սահմանադրական միապետության ստեղծմանն Անգլիայում:

XVIII դարում ընդունվեցին նոր օրենքներ, որով ամրապնդվում էր սահմանադրական կարգը: Թագավորի իշխանությունը սահմանափակվեց, փոխարենը մեծացավ խորհրդարանի դերը: Քաղաքական կյանքում մեծ դեր էին կատարում **թորի** և **վիզ** կուսակցությունները: Դրանով սկիզբ դրվեց այլախոհությանը, որը ժողովրդավարության կարևոր սկզբունքներից մեկն է: Կառավարություն էր կազմում Համայնքների ատյանում մեծամասնություն ստացած թորի կամ վիզ կուսակցությունը: Թագավորը հաստատում էր նրա կազմը և ընդունում հրաժարականը: Ընտրություններում պարտված կուսակցությունը դառնում էր ընդդիմու-

թյուն: 1707 թ., երբ Անգլիան և Շոտլանդիան միություն կազմեցին, պետությունն անվանեցին *Մեծ Բրիտանիա*:

Հասարակական-քաղաքական կյանքը: Արդյունաբերական հեղաշրջման փուլում Անգլիայում արդեն առկա սահմանադրական կարգը և քաղաքական կյանքը առաջընթաց ապրեցին: Հասարակական կյանքը փոխվում էր մեծ արագությամբ: Խոշոր քաղաքներում կուտակված բնակչությունն ուներ բազում չլուծված կենսական խնդիրներ:

Արդյունաբերական հեղաշրջման հենց սկզբից սկսեց աշխուժանալ երկրի քաղաքական կյանքը: Վիգ կուսակցությունը պահանջում էր ավելացնել ընտրողների թիվը: Իսկ երբ թագավորը փորձեց անտեսել խորհրդարանի իրավունքները, առաջացավ մեծ ընդդիմություն:

Մեծ հեղափոխության դարաշրջանում բարեփոխումների համար պայքարի վերելքն ընդհատվեց: Ընտրական իրավունքի ընդլայնման համար պայքարն ուժեղացավ XIX դ. 20–40–ական թթ., երբ ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: Սովորական դարձան ցույցերը, հանրահավաքները և իշխանությունների դեմ ընդվզելը: Չղիմանալով հասարակական ճնշումներին՝ թորի կառավարությունը 1830 թ. հրաժարական տվեց: Նրան փոխարինած վիգ կուսակցության կառավարությունը 1832 թ. կատարեց ընտրական բարեփոխում: Արդյունքում խորհրդարանի ընտրողների թիվը երեք անգամ աճեց: Այս բարեփոխումը կարևոր քայլ էր դեպի ժողովրդավարացում:

Ընտրական իրավունքի ընդլայնման և ժողովրդավարության համար զանգվածային նոր շարժումը, որն ընթացավ XIX դ. 30–50–ական թթ., պատմության մեջ հայտնի է *չարտիզմ* անունով: Չար-

տիստական շարժմանը մասնակցում էին ձեռներեցներ, արհեստավորներ, մտավորականներ, բանվորներ: Նրանց պահանջները մեծ ժողովրդականություն էին վայելում:

Չարտիզմն իր բնույթով արմատական զանգվածային շարժում էր, որը նպատակ ուներ հասնելու տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի ձեռքբերման և հասարակության ընդհանուր ազատականացման: Չարտիստները թեև հաջողության չհասան, սակայն նրանց շարժումը հզոր խթան դարձավ հասարակության հետագա ազատականացման համար:

Չափահաս տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի համար պայքարը կրկին սրվեց 1860–ական թվականներին: Թորի կուսակցության կառավարությունը մեղմացրեց գույքային սահմանափակումը: Ընտրողների թիվն ավելի քան երեք անգամ աճեց: 1872 թ. օրինականացվեց չարտիստների պահանջներից մեկը՝ գաղտնի քվեարկությունը: Ավելի ուշ համայնքների ատյանը հաստատեց երրորդ ընտրական բարեփոխման օրենքի նախագիծը: Ընտրողների թիվը երկու անգամ աճեց և հասավ միլիոնների: Տղամարդկանց և կանանց միասնական ընդհանուր ընտրական իրավունքն օրինականացվեց միայն 1928 թ.:

Հասարակական-քաղաքական համակարգի ձևափոխումը: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Մեծ Բրիտանիայի հասարակական-քաղաքական զարգացման գլխավոր միտումը երկրի սահմանադրական կարգի ամրապնդումն էր և ժողովրդավարության հաստատումը:

Պետական կարգի լուրջ փոփոխություններ տեղի չունեցան: Անգլիացիները կարողանում էին ավանդապահությունը ներդաշնակել արդիականացմանը:

Թագավորի իշխանությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում շարունակեց նվազել: Նրա դերը կարելի է բնութագրել հանրահայտ արտահայտությամբ. «**Թագավորն իշխում է, բայց չի կառավարում**»: Միաժամանակ պահպանվեց հարգանքը գահի նկատմամբ, քանի որ այն խորհրդանշում էր անգլիական պետականությունը: Հենց այդ պատճառով Վիկտորիա թագուհու երկարատև գահակալման տարիներն (1837–1901) անվանում են «**Վիկտորյան դար**»:

Պետական համակարգում գլխավոր դերը շարունակում էր կատարել խորհրդարանի համայնքների պալատը: Լորդերի պալատը մղվում էր հետին խորք: Գլխավոր պատճառը նրա մշտական ընդդիմադիր դիրքորոշումն էր բարեփոխումների նկատմամբ: Պալատը հաստատում էր բոլոր օրենքները, սակայն չէր խառնվում պետական բյուջեի ստեղծման հարցերին: Երբ այս չգրված կարգը փորձեցին խախտել, համայնքների պալատը 1911 թ. օրենք ընդունեց, որով լորդերի պալատը զրկվում էր այդ իրավունքից:

Հասարակական լուրջ նվաճում էր երկկուսակցական համակարգի ձևավորումը: Թորի և վիգ կուսակցությունները

դարձան կազմակերպված քաղաքական ուժեր: Որդեգրելով համապատասխան գաղափարախոսություն՝ թորին պաշտոնապես ստացավ *պահպանողական* անվանումը: Այս կուսակցության գաղափարախոսն էր ականավոր պետական գործիչ **Բ. Դիզրայելին**: Վիգը կոչվեց *ազատական (լիբերալ)* կուսակցություն: Ազատական կուսակցության նշանավոր պետական գործիչներ էին **Տ. Փալմերթոնը, Լ. Ջորջը** և այլք: Գալով իշխանության՝ կուսակցությունները կատարում էին բարեփոխումներ, նպաստում տնտեսության զարգացմանը, ուղղորդում երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը: Նրանց ջանքերով օրինականացվեց արհմիությունը, բարեփոխվեցին կրթությունը, բանակը, դատարանը, տեղական ինքնակառավարումը և այլն: Ընտրական պայքարն ազատ էր, տիրում էր խոսքի, ժողովների, գործադուլի, ցույցերի և հանրահավաքների ազատություն: Ստեղծվում էին նաև այլ կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ: Հատկապես կարևոր էր **1905 թ. լեյբորիստական կուսակցության** առաջացումը, որը ձգտում էր պաշտպանելու բանվորների շահերը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

- Վերհիշե՛ք Անգլիական հեղափոխության ընթացքը և արդյունքները: Հեղափոխության տարիներին սահմանադրական բարեփոխումների ինչ նախագծեր առաջադրվեցին: 1660–1680–ական թթ. սահմանադրական կարգի հաստատման ինչ քայլեր իրականացվեցին: Ինչո՞ւ Անգլիայում միապետությունը պահպանվեց: Ձեր տեսակետով՝ ինչո՞ւ են 1688–1689 թթ. իրադարձությունները կոչվել «փառահեղ հեղափոխություն»:
- Ինչպե՞ս էր ձևավորվում երկրի կառավարությունը: Ե՞րբ է ստեղծվել Մեծ Բրիտանիան:
- Ներկայացրե՛ք քաղաքական կյանքի առաջընթացն արդյունաբերական հեղաշրջման ժամանակաշրջանում: Ի՞նչ արդյունքներ տվեց ընտրական իրավունքի ընդլայնման համար սկսված արմատական շարժումը: Ի՞նչ է չարտիզմը: Բացատրե՛ք համընդհանուր ընտրական իրավունքի էությունը: Ներկայացրե՛ք Անգլիայում այդ իրավունքի վերջնական հաստատման գործընթացը:

3. Ո՞րն էր Անգլիայի հասարակական-քաղաքական զարգացման գլխավոր միտումը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին: Մեկնաբանե՞ք «Թագավորն իշխում է, բայց չի կառավարում» արտահայտությունը: Ներկայացրե՞ք անգլիական երկկուսակցական համակարգի բովանդակությունը:

§ 4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒՂԻՆ

Սահմանադրական կարգերի հաստատման սկիզբը: 1789 թ. Ֆրանսիայում հասարակական-պետական ճգնաժամը վերածվեց հեղափոխության: Դասային համաժողովն (Գլխավոր շտատներ) ընդդիմացավ արքային և կարճ ժամանակում փոխեց իր կարգավիճակը: Երրորդ դասի պատգամավորների նախաձեռնությամբ այն իրեն հռչակեց **Ազգային ժողով**: Դրանով նրանք հետևեցին լուսավորականների առաջադրած՝ ժողովրդի ինքնիշխանության գաղափարին: Մինչդեռ արքան, հետևելով միահեծանության կարգին, իրեն էր համարում Ֆրանսիայի օրինական ղեկավարը: Նա փակեց նիստերի դահլիճը և փորձեց ցրել Ազգային ժողովը: Ի պատասխան՝ Ազգային ժողովն իրեն հայտարարեց **Սահմանադիր ժողով**:

Սահմանադիր ժողովը հեղափոխությունների ժամանակ ժողովրդի կողմից ընտրված ժամանակավոր գերագույն օրենսդիր մարմին է, որն ինքնալուծարվում է սահմանադրության ընդունումից հետո:

Սահմանադիր ժողովը **1789 թ. օգոստոսի 26-ին** հաստատեց համամարդկային արժեք ունեցող **«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»**, որի հիմքում ընկած էր մարդու բնական իրավունքի տեսությունը: Հռչակագիրը սահմանում էր քաղաքացիների կյանքի, ազատության, սեփականության, բռնությանը դիմադրելու, ազգի ինքնիշխանության, իրավահավասարության, իշխանությանը մասնակցելու իրավունքները:

1791 թ. Սահմանադիր ժողովը հաստատեց առաջին սահմանադրությունը, որով Ֆրանսիան հռչակվում էր սահմանադրական միապետություն: Սահմանվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանության տարանջատում: Սահմանադրությունն առաջին անգամ օրինականացնում էր Ֆրանսիայի տնտեսական, սոցիալական, վարչական, մշակութային և քաղաքական միասնությունը: Դրանով իսկ հիմք էր դրվում իրավական պետությանը:

Սակայն թագավորը և միահեծանության կողմնակիցները կատաղի պայքար սկսեցին հին կարգերը վերականգնելու համար: **1792 թ.** ապստամբ ժողովուրդը տապալեց միապետությունը: Դա նշանակում էր 1791 թ. սահմանադրության վերացում: Ընտրվեց նոր Սահմանադիր ժողով՝ **Ազգային կոնվենտ**: Նրա առաջին օրենքով վերացվեց միապետությունը, երկրորդ օրենքով՝ Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:

Առաջին հանրապետությունը (1792–1804) օրինական, սահմանադրական պետություն էր, քանի որ Ազգային կոնվենտին ընտրել էին 21 տարին լրացած բոլոր տղամարդիկ: Այդ ժամանակ Եվրոպայի և ոչ մի երկրում ժողովրդավարության այդպիսի դրսևորում չկար: Սակայն ֆրանսիական ազգը պառակտված էր հին և նոր կարգերի կողմնակիցների միջև: 1793–1794 թթ. հաստատվեց ծայրահեղ հանրապետականների՝ **յակոբինների** հեղափոխական բռնատիրությունը: Նրա

բոլոր միջոցառումներն օրինականացրեց Ազգային կոնվենտը: Ժողովրդի կամքը կատարելու համար յակոբիններն ընդունեցին հին կարգերը հիմնովին վերացնելու ծրագիր, ինչպես նաև ժողովրդավարական սահմանադրություն:

Հաստատված սահմանադրությունը, ինչպես նաև շատ օրենքներ չիրագործվեցին ժամանակավրեպության և յակոբինների անկման պատճառներով: **1795 թ.** Ազգային կոնվենտն ընդունեց հանրապետության նոր, ավելի չափավոր սահմանադրություն: Այս սահմանադրության մեջ ևս պահպանվում էին իշխանության տարանջատումը և հակակշիռները: 1795–1799 թթ. հանրապետությունը կոչվում էր **Դիրեկտորիա:**

1799 թ. հեղաշրջումից հետո Ֆրանսիայում հաստատվեց **կոնսուլություն:** Ընդունված երկու սահմանադրությունները (1799 թ. և 1804 թ.), թեև ձևականորեն պահպանում էին հանրապետությունը և իշխանության տարանջատումը, բայց իրականում ամրապնդում էին Նապոլեոն Բոնապարտի անձնական իշխանությունը: Օրինականությունը պահպանելու համար սահմանադրությունը հաստատվում էր հանրաքվեով:

1804 թ. սահմանադրությունում նշված է. «Հանրապետության կառավարությունը վստահվում է կայսրին, ով կրնդունի Ֆրանսիացիների կայսր տիտղոսը»: Դրա հիման վրա 1804 թ. Նապոլեոն I-ը թագադրվեց կայսր: Աստիճանաբար անտեսվեց Առաջին հանրապետության սահմանադրական կարգը: Ֆրանսիան պաշտոնապես կայսրություն կոչվեց միայն **1808 թ.:** Օգտվելով իրեն տրված սահմանադրական իրավունքներից՝ Նապոլեոնը թե՛ կոնսուլության, թե՛ կայսրության տարիներին կյանքի կոչեց բազմաթիվ օրենք-

ներ, որոնք նպաստեցին երկրի հասարակական–քաղաքական զարգացմանը:

Երկրորդ հանրապետությունը և կայսրությունը: 1814 թ. Առաջին կայսրության անկումից հետո վերականգնվեց Բուրբոնների արքայատոհմը: Թագավոր հռչակվեց **Լուի XVIII-ը**, որը Մեծ հեղափոխությունը համարում էր անօրինական: Միննույն ժամանակ Լուի XVIII-ը հասկանում էր, որ առանց սահմանադրության և միապետական կարգի օրինականացման հնարավոր չէ գահակալել: Նա իր անունից հրապարակեց սահմանադրական խարտիա, որը հիշեցնում էր 1791 թ. սահմանադրությունը: Մինչդեռ իր տարածած հայտարարության մեջ նա շեշտում էր, որ թագավորը գահակալում է Աստծո կողմից տրված իրավունքով: Այսինքն՝ անտեսվում էր ժողովրդի ինքնիշխանության իրավունքը: Ահա թե ինչու Բուրբոնների գահակալումը կարճատև եղավ: **1830 թ.** հեղափոխության արդյունքում գահ բարձրացավ **Լուի Ֆիլիպը:** Նոր ընդունված սահմանադրությունը կրկնում էր 1814 թ. խարտիան, սակայն որոշ չափով ընդլայնում էր քաղաքացիների ազատությունը, սահմանափակում թագավորի օրենսդիր իշխանությունը:

Հուլիսյան միապետությունը և հաստատված սահմանադրական կարգը չարդարացրին իրենց: Ահա թե ինչու շուտով Ֆրանսիան կրկին կանգնեց նոր հեղափոխական փորձության առջև (1848–1849 թթ.): Ջենքի դիմած հազարավոր մարդիկ արքայական գահը հանդիսավոր այրեցին Փարիզի հրապարակներից մեկում: Նորաստեղծ ժամանակավոր կառավարությունը Ֆրանսիան **երկրորդ անգամ հռչակեց հանրապետություն (1848–1852 թթ.):**



Նապոլեոն I

Սահմանադիր ժողովը հաստատեց Երկրորդ հանրապետության սահմանադրությունը: Ֆրանսիան հռչակվեց «միասնական և անբաժանելի» հանրապետություն: Բարձրագույն օրենսդիր իշխանությունը տրվեց Օրենսդիր ժողովին, իսկ գործադիր իշխանությունը՝ ժողովրդի կողմից ընտրված նախագահին:

Նոր սահմանադրությունը չմիավորեց ֆրանսիական ժողովրդին: Դեռևս հասարակական մեծ ուժ էին հին կարգերի կողմնակիցները՝ միապետականները: Այս իրավիճակում հասարակության համախմբման դերն իր վրա վերցրեց նորընտիր նախագահը՝ Նապոլեոն I-ի երրորդի **Լուի Նապոլեոնը**: Նա **1852 թ.** կազմակերպեց հանրաքվե, որով օրինականացվեց կայսրության վերականգնումը: Հանրապետությունը վերացվեց, իսկ **Լուի Նապոլեոնը** հայտարարվեց «ֆրանսիացիների կայսր»՝ **Նապոլեոն III** (1852–1870) անունով: Սահմանափակվեցին Օրենսդիր ժողովի և իշխանության մյուս մարմինների լիազորությունները, ազատ մամուլը, քաղաքացիների ազատությունը: Բոլորը պետք է ենթարկվեին կայսեր



Նապոլեոն III

կամքին: Նրա կառավարումն իր բնույթով **ապտորիտար** (անձնիշխան) էր:

Երրորդ հանրապետության ստեղծումը: Երկրորդ կայսրությունը կենսունակ չէր: 1870–1871 թթ. Ֆրանսիան պարտվեց Գերմանիայի դեմ պատերազմում, իսկ կայսրը գերի ընկավ և վերջնականապես հեղինակազրկվեց: Հանրապետության վերականգնումը դարձավ անխուսափելի:

1870 թ. սեպտեմբերի 4-ին, երբ Փարիզ հասավ ֆրանսիական զորքի պարտության լուրը, ժողովուրդն ապստամբեց: Տեղի ունեցավ հերթական հեղափոխությունը, որի արդյունքում Ֆրանսիան երրորդ անգամ հռչակվեց հանրապետություն: Պատերազմում կրած պարտությունը և ժողովրդի ծանր դրությունը պատճառ դարձան նոր ապստամբության, որը սկսվեց **1871 թ. մարտի 18-ին**: Բանվորները համոզված էին, որ կառավարությունը չի ցանկանում բարելավել իրենց վիճակը և թշնամուն վոնդել երկրից: Նրանք ստեղծեցին իրենց իշխանությունը՝ **Կոմունան**: Սակայն կառավարական զորքերը դաժանորեն ճնշեցին ապստամբությունը:

Փարիզի Կոմունան ցույց տվեց, որ արդարացի պետությունը կարող է ստեղծվել միայն ժողովրդի համաձայնությամբ: Պետության և ժողովրդի համագործակցությունը խաղաղ բարգավաճման սահմանադրական միակ երաշխիքն է:

Երրորդ հանրապետության ժողովրդավարացումը: Փարիզի Կոմունայի ճնշումից հետո երկրում ծայր առավ հանրապետականների և միապետականների անհաշտ պայքար: Հենց այդ պայքարի բովում ստեղծվեց Երրորդ հանրապետության սահմանադրությունը (1875 թ.):

Ըստ նոր սահմանադրության՝ Ֆրանսիան հռչակվում էր **նախագահական հանրապետություն**: Սահմանադրությունը հաստատում էր միայն պետական կարգը: Նրանում քաղաքացիների ազատությունների մասին խոսք չկար: Հանրապետականները խնդիր դրեցին սահմանադրությունը դարձնելու ավելի ժողովրդավարական, ամրապնդելու Երրորդ հանրապետության օրինականությունը: Օրենքներ ընդունվեցին, որոնցով հուլիսի 14-ը սահմանվեց ազգային տոն, օրինականացվեց ժողովների, ցույցերի և մամուլի ազատությունը, թույլատրվեց

արհմիությունների գործունեությունը և այլն: Այլ օրենքներով սահմանվեցին անվճար, պարտադիր և աշխարհիկ տարրական կրթություն:

Ֆրանսիային բնորոշ էին բազմակուսակցականությունը և հասարակական տարաբնույթ շարժումները: Ժողովրդավարության համար պայքարում նրանք հաճախ ընդդիմանում էին միմյանց, ստեղծում նոր խմբավորումներ: Ընտրապայքարում կազմում էին քաղաքական դաշինքներ, առաջադրում բարեփոխումների ծրագրեր, փորձում ստանալ ընտրողների վստահությունը: Իշխանության չարաշահումը, նույնիսկ դատական անարդար վճիռը ստանում էր հասարակական մեծ հնչեղություն, վերածվում ժողովրդավարության համար սուր պայքարի: Սակայն այդ պայքարն ընթանում էր օրինականության շրջանակներում:

Արդյունքում ամրապնդվեցին Երրորդ հանրապետության սահմանադրական կարգերը և ժողովրդավարությունը: Հենց դա հնարավորություն տվեց, որ Ֆրանսիան դառնա արագ զարգացող և հզոր արդյունաբերական տերություն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս ձևավորվեց Ազգային ժողովը Ֆրանսիական մեծ հեղափոխության սկզբում, ինչո՞ւ այն վերանվանվեց Սահմանադիր ժողով: Ցույց տվեք «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» պատմական նշանակությունը: Ե՞րբ է ընդունվել Ֆրանսիայի առաջին սահմանադրությունը:
2. Որքա՞ն է գոյատևել Առաջին հանրապետությունը: Սահմանադրական կարգն ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց այդ տարիներին, քանի՞ սահմանադրություն ընդունվեց:
3. Ինչո՞ւ է ասվում, որ Լուի XVIII-ի հրապարակած սահմանադրական խարտիան նահանջ էր նույնիսկ 1791 թ. սահմանադրությունից:
4. Ե՞րբ է ստեղծվել Երկրորդ հանրապետությունը: Ներկայացրե՞ք 1848 թ. սահմանադրության հիմնական սկզբունքները: Ինչո՞ւ Լուի Նապոլեոնին հաջողվեց վերականգնել Առաջին կայսրության պետական կարգը: Որքա՞ն է գոյատևել Երկրորդ կայսրությունը: Ի՞նչ է ավտորիտար կառավարումը:

5. Պատմական ինչ պայմաններում վերականգնվեց հանրապետական կարգը Ֆրանսիայում: Ո՞րն է Փարիզի կոմունայի նշանակությունը: Երբ ընդունվեց Երրորդ հանրապետության սահմանադրությունը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին ինչն էր բնորոշ Ֆրանսիայի ներքաղաքական կյանքին:

§ 5. ԳԵՐՄԱՆԻԱ. ՄԱՍՆԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՆՉԵՎ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Քաղաքական մասնատվածության հաղթահարման նախադրյալները: Քաղաքական մասնատվածությունը Գերմանիայի պատմության գլխավոր առանձնահատկությունն էր: Միջնադարից մնացած այդ ժառանգությունը պահպանվեց մինչև XIX դ. երկրորդ կեսը: XVII դարում գերմանական հողերում կային ինքնիշխան շուրջ 300 աշխարհիկ և հոգևոր իշխանություն, 51 կայսերական ազատ քաղաք, հազարավոր ազատ ասպետական տիրույթներ: Այս բոլոր պետությունները կազմում էին *Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրությունը*: Կայսրը խորհրդանշում էր միասնությունը: Նրան ընտրում էր *կուրֆյուրստների խորհուրդը*՝ Հաբսբուրգ արքայատոհմից: Կար նաև խորհրդարան՝ *ռայխտագ*, որի որոշումները ենթակա էին կայսրի պարտադիր հաստատմանը: Միութենական պետական մարմինների գործունեությունը կրում էր ձևական բնույթ: Համապետական որոշումներ և օրենքներ ընդունվում էին մեծ դժվարությամբ:

Գերմանական հողերի վերոնշյալ քաղաքական իրավիճակը մեծ իմաստասեր Հեգելն անվանել է «օրինականացված անիշխանություն»: Միասնության բացակայությունը ոչ միայն խանգարել է Գերմանիայի բնականոն զարգացմանը, այլև իր կնիքն է թողել հետագա պետական կառուցվածքի, քաղաքական կյանքի և հասարակական հարաբերությունների վրա:

Մեծ հեղափոխությունը և Նապոլեոնի դարաշրջանը նպաստեցին գերմանացիների ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: Վիեննայի վեհաժողովի որոշմամբ ստեղծվեց *Գերմանական միություն*, որի կազմում կար 38 պետություն: Գերմանական միությունը թույլ կապեր ունեցող պետությունների միավորում էր:

XVIII դարում գերմանական պետությունների շարքում առանձնանում էր Պրուսիան: Այն աստիճանաբար դարձավ գերմանական հողերի տնտեսական, մշակութային և քաղաքական կենտրոնը: Արդյունաբերական հեղաշրջումը, որը սկիզբ դրեց համագերմանական շուկայի կազմավորմանը, սկսվեց Պրուսիայից:

Իսկ գերմանական մշակույթը ձեռք էր բերել համաեվրոպական նշանակություն: Գերմանիան տվեց այնպիսի իմաստասերներ և գրողներ, ինչպիսիք են *Ի. Կանտը*, *Գ. Հեգելը*, *Ֆ. Շիլլերը*, *Յ. Վ. Գյոթեն* և այլք: Հենց նրանք գերմանացիների մեջ արմատավորեցին ընդհանուր հայրենիքի գաղափարը: Ձևավորվում էր գերմանական միասնական ազգը, որը դեռևս մշակութային ընդհանրություն էր, քայք ոչ քաղաքական:

Պրուսական ուժեղ պետականության առաջացումը, արդյունաբերական հեղաշրջումը և հզոր մշակույթի ստեղծումը նախադրյալներ դարձան Գերմանիայում միասնական ազգային սահմանադրական պետություն ստեղծելու համար:

Գերմանական նոր կայսրության ստեղծումը: 1848–1849 թթ. հեղափոխու-



Օ. Բիսմարկ. Գերմանիայի առաջին կանցլեր

թյունները Եվրոպայում հասարակության արդիականացման հզոր ալիք էին: Գերմանիայում հեղափոխությունը նախ և առաջ խնդիր ուներ ստեղծելու միասնական ազգային պետություն: Գերմանացիները դա դիտում էին որպես արդիականացման գլխավոր պայման:

Գլխավոր իրադարձությունները տեղի էին ունենում Պրուսիայում: 1848 թ. Բեռլինում ժողովրդի և զորքի միջև տեղի ունեցան արյունալի ընդհարումներ: Թագավորը խոստացավ կատարել բարեփոխումներ, առաջին հերթին՝ ընդունել սահմանադրություն: Սակայն ժողովուրդը պահանջում էր համագերմանական սահմանադրություն: Այն ընդունելու համար տեղի ունեցան Ազգային ժողովի ընտրություններ: Հրավիրված Ազգային ժողովը մեկ տարի ապարդյուն փորձում էր դառնալ համագերմանական պետության գերագույն մարմինը: Գերմանական պետության ղեկավարները, վախենալով սեփական իշխանության կորստից, խանգարում էին երկրի միավորմանը: Չնայած դրան՝ 1849 թ. *Ազգային ժողովը հաստա-*

տեց համագերմանական սահմանադրությունը:

Սահմանադրության համաձայն՝ Գերմանիան հռչակվում էր կայսրություն: Բարձրագույն օրենսդիր իշխանությունը՝ խորհրդարանը, պետք է ընտրվեր տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Գործադիր իշխանությունը տրվում էր կայսրին: Առաջին անգամ գերմանացիները ստանում էին ժողովրդավարական ազատություններ:

Գերմանական պետությունները մերժեցին կայսերական սահմանադրությունը: 1848–1849 թթ. հեղափոխությունը պարտվեց: Չնայած դրան՝ պայքարը միասնական պետության ստեղծման համար շարունակվեց: Պրուսիայի թագավորը և վերնախավը հասկացան, որ երկրի քաղաքական միավորումն անխուսափելի է: Ուստի այստեղ շարունակվեցին բարեփոխումները, ընդունվեց սահմանադրություն:

Պրուսիայի գլխավորությամբ Գերմանական կայսրություն ստեղծելու համոզված կողմնակից էր *Օ. Բիսմարկը: 1862 թ.* Պրուսիայի թագավորը նրան նշանակեց առաջին նախարար: Այդ ժամանակ նա արդեն հայտնի դիվանագետ էր և պետական գործիչ: Բիսմարկը հասկանում էր, որ Գերմանիայի երբեմնի միասնությունը հնարավոր է վերականգնել՝ միայն ճնշելով գերմանական պետությունների և հատկապես Ավստրիայի դիմադրությունը: Ուստի որոշեց բարեփոխել բանակը: Երբ Պրուսիայի խորհրդարանը դրան ընդդիմացավ, Բիսմարկը հայտարարեց. «*Դարաշրջանի մեծ հարցերը վճռվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ*»:

Իրագործելով ռազմական բարեփոխում՝ Պրուսիան պարտության մատնեց

Ավստրիային և ստեղծեց **Տյուսիսգերմանական միությունը**: 1870–1871 թթ. Պրուսիան ջախջախեց երկրի միավորման հաջորդ խոչընդոտ Ֆրանսիային:

1871 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Վերսալում՝ Լուի XIV–ի երբեմնի շքեղ ապարանքում, հանդիսավորությամբ հայտարարվեց Գերմանական կայսրության ստեղծումը: Առաջին կայսր հռչակվեց Վիլհելմ I–ը (1871–1888):

Գերմանական կայսրությունը՝ սահմանադրական միապետություն: 1871 թ. ապրիլին ռայխստագը հաստատեց Գերմանական կայսրության սահմանադրությունը: Պետական կարգը կրում էր երկրի դարավոր մասնատվածության կնիքը: Գերմանիան միաձույլ ազգ էր. ուներ միասնական տնտեսություն, հասարակական հարաբերություններ և մեկ մշակույթ: Չնայած դրան՝ պետությունը դաշնային էր: Այն միավորում էր 22 միապետների և երեք ազատ քաղաքներ՝ Համբուրգ, Բրեմեն և Լյուբեկ: Պահպանվեցին տեղական սահմանադրությունները: Գերմանիայի քարձրագույն օրենսդիր աստիճանները երկուսն էին՝ **ռայխստագը** և **միութենական խորհուրդը**:

Գործադիր իշխանությունը պատկանում էր կայզերին, որը պետք է լիներ Պրուսիայի **Տոհենցոլերն** արքայատոհմից: Կայզերը նշանակում էր միակ համակայսերական նախարարին՝ կանցլերին, որի միջոցով ղեկավարում էր երկիրը: Կանցլերը պատասխանատու էր միայն կայզերին: Բացի այդ, կայզերն իրավունք

ունեւր արձակելու ռայխստագը և նշանակելու նոր ընտրություններ:

Մինչև դարի վերջն ընդունվեցին այլ օրենքներ, որով ստեղծվեցին միասնական օրենսդրական, դրամական և փոստային համակարգեր: Ստեղծվեց նաև գերագույն դատական ատյան՝ կայսերական դատարան, որի նստավայրը դարձավ Լայպցիգ քաղաքը: Այսպիսով՝ Գերմանիան դարձավ միաձույլ սահմանադրական միապետություն:

Օրենքներով նախատեսված էին նաև քաղաքացիների ժողովրդավարական ազատություններ:

Գերմանիայում քաղաքական կյանքը հազեցած էր: Գործում էին մի քանի կուսակցություններ, որոնցից ազդեցիկ էին պահպանողականները, ազգային–ազատականները, սոցիալ–դեմոկրատները: Նրանք իրենց գործունեությամբ նպաստում էին երկրի ազատականացմանը, մշակույթի զարգացմանը, ձևավորում համազգային գիտակցություն: XX դարի սկզբին Գերմանիայում լույս էր տեսնում 4000–ից ավելի լրագիր:

Միննույն ժամանակ Գերմանիայում տարածված էր ազգայնամոլությունը: Այսպես՝ **համագերմանականությունը** նախատեսում էր Եվրոպայի կենտրոնում ստեղծել **Մեծ Գերմանիա**, որը հնարավորություն կտար հասնելու համաշխարհային գերիշխանության: Դա ինչպես Գերմանիայի, այնպես էլ մյուս երկրների համար ունեցավ ողբերգական հետևանքներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերիշնչե՞ք Գերմանիայի քաղաքական վիճակը նոր ժամանակների շեմին. ո՞րն էր դրա գլխավոր պատճառը: Ինչպե՞ս է բնորոշել Հեգելը այդ վիճակը: Ե՞րբ ստեղծվեց Գերմա-

նական միությունը: Ինչո՞ւ Պրուսիան դարձավ գերմանական հողերի միավորման ազդեցիկ ուժը: Ներկայացրե՞ք Գերմանիայի միավորման նախադրյալները:

2. Ո՞րն էր 1848–1849 թթ. գերմանական հեղափոխության գլխավոր նպատակը. իրագործվե՞ց այն, թե՞ ոչ:

3. Ի՞նչ դեր է խաղացել Գերմանիայի միավորման գործում Օ. Բիսմարկը: Ներկայացրե՞ք նրա գործունեությունը: Մեկնաբանե՞ք Բիսմարկի հետևյալ խոսքը. «Դարաշրջանի մեծ հարցերը վճռվում են ոչ թե ձառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ»: Երբ և որտե՞ղ հռչակվեց Գերմանական կայսրության ստեղծումը, ո՞վ օժկեց կայսր:

4. Ե՞րբ ընդունվեց կայսրության սահմանադրությունը: Ինչպիսի՞ պետական կարգ էր այն սահմանում. տվե՞ք դրա կառուցվածքը գծապատկերի տեսքով: Ժողովրդավարական ի՞նչ իրավունքներ հաստատվեցին Գերմանիայում XIX դ. վերջերին: Թվարկե՞ք ազդեցիկ կուսակցությունները: Ի՞նչ նպատակ էր հետապնդում համագերմանականության գաղափարախոսությունը:

§ 6. ԱՎՍՏՐՈ–ՀՈՒՆԳԱՐԻԱՆ՝ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՅՄՈՒԹՅՈՒՆ

Բազմազգ տերության պատմական ուղին: Արդեն նշվել է, որ XVI–XVII դարերում Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության Հաբսբուրգ արքայատոհմը սեփական տիրոջների ընդարձակման հաշվին բավականին հզորացավ: Արդյունքում Ավստրիան դարձավ մեծ տերություն: Նրա կազմի մեջ մտնում էին Չեխիան, Հունգարիան, Բելգիան, Իտալիայի, Սերբիայի, Բոսնիայի, Վալախիայի մի մասը և այլ հողեր:

XVIII դարում Հաբսբուրգների գլխավոր հոգսը դարձավ նվաճված երկրները պահպանելը, որը հեշտ չէր: Հաճախակի էին ընդվզում հպատակ ժողովուրդները, շարունակվում էին պատերազմները հարևան պետությունների դեմ: Լուսավորյալ միապետներ *Մարիա Թերեզայի* և նրա որդի *Յոզեֆ II-ի* գահակալման շրջանում (1740–1790) կատարվեցին շատ բարեփոխումներ: Սակայն դրանք ընդհատվեցին Մեծ հեղափոխության դարաշրջանում: Հաբսբուրգները վախենում էին սեփական տիրոջներում հեղափո-

խության տարածումից: Ուստի Ավստրիան դարձավ հեղափոխական Ֆրանսիայի դեմ մշտական պատերազմողներից մեկը: Դրանցում նա միշտ պարտվում էր: **1806 թ.** Նապոլեոն I-ը վերացրեց Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրությունը: Հաբսբուրգ արքայատոհմը պահպանեց միայն Ավստրիայի կայսեր տիրոջը: Տերությունը վերջնական կործանումից փրկվեց 1812 թ. Ռուսաստանում Ֆրանսիայի պարտության արդյունքում: Ի վերջո Ավստրիան հայտնվեց հաղթողների մեջ և 1815 թ. Վիեննայի վեհաժողովի պայմանագրերով պահպանեց իր տիրոջները:

XIX դարում Ավստրիական կայսրությանը սպասում էին նոր փորձություններ: Ավստրիան և նրա կազմի մեջ մտնող ազգերը հասարակական զարգացմամբ հետ էին մնում Եվրոպայի առաջավոր երկրներից: Արդյունաբերական հեղաշրջումը, որ սկսվեց XIX դ. 30–40–ական թվականներին, ընդգրկեց միայն բուն Ավստրիայի մի մասը և Չեխիան:

Ավելի վաղ՝ XVIII դարի վերջից, Հունգարիայում, Չեխիայում և սլավոնական մյուս հողերում վերելք էր ապրում ազգային կյանքը: *Ազգային վերածնունդ*, պատմության մեջ այդպես է մնացել դարաշրջանի անունը: Ազգերի մեջ մեծանում էր սեփական պետություն ունենալու ձգտումը:

Ավստրո-Հունգարիայի կազմավորումը: 1848–1849 թթ. Ավստրիական կայսրությունում տեղի ունեցավ հեղափոխություն: Ընդվզումները տարածվեցին կայսրության բոլոր կողմերում: Ամենուրեք պահանջում էին բարեփոխումներ և առաջին հերթին՝ սահմանադրություն: Կառավարությունը հրաժարական տվեց, իշխանության գլուխ եկան ազատականները: Նորընտիր խորհրդարանը՝ *ուսխասուսգը*, դարձավ քաղաքական պայքարի ասպարեզ: Ընդունվեցին օրենքներ, որոնցով վերացվում էին ճորտությունը, ավատական հարկերը և այլն: Ավստրիայում հեղափոխական դեպքերն արյունալի ընթացքով շարունակվեցին մինչև աշուն: Ի վերջո կայսերական զորքերը կարողացան ճնշել հեղափոխության կենտրոնի՝ Վիեննայի բնակչության դիմադրությունը:

Հեղափոխությունն ավելի արյունալի ընթացք ստացավ ազգային շրջաններում: **Հունգարիայում** հեղափոխությունը վերածվեց Ավստրիայի լծի դեմ ազգային-ազատագրական հզոր պատերազմի: Հունգարները կարողացան ստեղծել սեփական սահմանադրություն և անկախ պետություն: Անկախության համար պատերազմը շարունակվեց մինչև 1849 թ. ամառը: Ճակատամարտերից մեկում զոհվեց հունգար մեծ բանաստեղծ **Շ. Պետեֆին**: Միայն Ռուսաստանի օգնությամբ Ավստրիան կարողացավ հասնել հաջողության:



Ֆրանց II

1848–1849 թթ. հեղափոխության ճնշումից հետո Ավստրիայում հաստատված կարգը հիշեցնում էր միահեծանության ժամանակները: Սակայն դա երկար չշարունակվեց: Կայսրությունը կարիք ուներ բարեփոխումների: Ազատության համար պայքարը շարունակեցին հպատակ ազգերը, հատկապես հունգարները: Դրությունը ծանրացավ, երբ Ավստրիան կորցրեց իտալական տիրույթները և պարտություն կրեց Պրուսիայից (1866 թ.): Առաջացավ կայսրության փլուզման վտանգ: Հաքսբուրգ արքայատոհմը ստիպված եղավ լուրջ զիջումներ կատարելու հունգարներին:

1867 թ. Ավստրիայի և Հունգարիայի միջև կնքվեց համաձայնագիր, որն ամրապնդվեց ընդունված սահմանադրությամբ: Արդյունքում Ավստրիական կայսրությունը վերակազմավորվեց յուրահատուկ երկկենտրոն տերության՝ Ավստրո-Հունգարիայի: Պետության կառուցվածքը ստեղծվեց երկու ազգերի դաշինքի հիմքի վրա: Տերության ղեկավար էր համարվում Հաքսբուրգ արքայատոհմի կայսրը, որն ուներ մեծ իրավունք-

ներ: Օրենքով նա Ավստրիայի կայսրն էր, Հունգարիայի՝ թագավորը: Նրան էին ենթարկվում համակայսերական երեք՝ ռազմական, արտաքին գործերի և ֆինանսական նախարարությունները: Բացի այդ, կայսրն իրավունք ուներ պետության երկու մասերում հաստատելու ընդունված օրենքները, վարչապետներին, հրավիրելու և արձակելու խորհրդարանները, արտակարգ դեպքերում ուղղակի ղեկավարելու պետությունը և այլն: Այս ամենը նորաստեղծ տերությանը տալիս էր դաշնային բնույթ: Մյուս կողմից՝ պետության կառուցվածքը համադաշնային էր, որովհետև Հունգարիան և Ավստրիան իրավահավասար միավորներ էին, ներքին կյանքում՝ լրիվ անկախ: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր պետական կառուցվածքը՝ օժտված օրենսդիր և գործադիր լայն իրավունքներով: Հունգարիան ուներ իր սահմանադրությունը, որը կարգավորում էր երկրի պետական կյանքի բոլոր բնագավառները: Երկու պետությունների միջև կար հստակ վարչական սահման: Այլ պետությունների հետ տնտեսական հարաբերությունները կարգավորվում էին կողմերի միջև 10 տարով կնքված պայմանագրերով:

Ինչպես տեսնում ենք, Ավստրո-Հունգարիան նախադեպը չունեցող, առանձնահատուկ սահմանադրական միապետություն էր: Դա հիմք է տվել նրան անվանելու *երկկենտրոն* կամ *երկմիասնական կայսրություն*:

Ավստրո-Հունգարիայի քաղաքական կյանքը: 1867 թ. սահմանադրությունը որոշ չափով ազատականացրեց հասարակությունը: Դատավորները գործադիր իշխանությունից դարձան անկախ, ընդլայնվեցին բարձրագույն օրենսդիր աստիճանի իրավունքները, հաստատվեց անձի

անձեռնմխելիություն և այլն: Հետագայում ևս ժողովրդավարությունն ընդլայնվեց: 1907 թ. Ավստրիայում օրենք ընդունվեց տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի մասին: Դրա շնորհիվ մինչև XX դ. սկիզբն Ավստրո-Հունգարիայում տնտեսությունը վերելք ապրեց:

Միևնույն ժամանակ Ավստրո-Հունգարիայում ժողովրդավարությունն ավելի ցածր մակարդակում էր, քան Եվրոպայի առաջավոր երկրներում: Գլխավոր պատճառը տերության բազմազգ բնույթն էր, որում գոյություն ուներ հպատակ ազգերի իրավունքների անտեսում և ոտնահարում: Նոր իրադրությունում կայսրությունում գերիշխող դարձան երկու ազգեր՝ ավստրոգերմանացիները և հունգարները:

Ավստրիայում հիմնական ազգային հակասությունն ավստրոգերմանացիների և չեխերի միջև էր: 1867 թ. սահմանադրությունը հռչակում էր Ավստրիայի տարածքում ապրող ազգերի իրավահավասարություն, նրանց մշակույթի և լեզվի զարգացում: Սակայն իրականում դա չէր կիրառվում: Չեխիան պահանջում էր նույնպիսի իրավունքներ, ինչպիսիք ստացել էր Հունգարիան: Այսինքն՝ երկմիասնականի փոխարեն ստեղծել եռմիասնական պետություն: Իրենց հերթին ավստրոգերմանացիները անտեսում էին չեխերի իրավունքները: XIX դ. վերջին և XX դ. սկզբին նրանց միջև բազմիցս բախումներ տեղի ունեցան չեխերենի օգտագործման օրինականացման հարցում: Այդ պայքարում առաջացավ նոր չեխերի շարժումը, որը ձգտում էր անկախության: Մյուս կողմից՝ ավստրոգերմանացիների մեջ տարածում գտան ազգայնամոլական համագերմանական գաղափարները:

Հունգարիայում ևս ազգային հիմնախնդիրը հիվանդագին ընթացք ունե-

ցավ: 1868 թ. Հունգարիայի խորհրդարանն օրենք ընդունեց «ազգերի իրավահավասարության» մասին, ըստ որի՝ Հունգարիայի բոլոր քաղաքացիները, անկախ լեզվից և կրոնից, իրավահավասար էին և կազմում էին միասնական հունգարական ազգ: Գործնականում դա նշանակում էր բոլոր ազգերի վերածում հունգարների: Բացառություն էր կազմում **խորվաթիան**, որը ստացավ որոշ ինքնավարություն: Հունգարները նաև ձգտում

էին Ավստրո-Հունգարիայի համապետական կյանքում գերիշխող դիրք գրավելու:

Ազգայնամոլությունը, որը գերիշխող դարձավ Ավստրո-Հունգարիայի ներքաղաքական կյանքում, ունեցավ կործանարար հետևանքներ: Հաբսբուրգ արքայատոհմը ձգտում էր այն նպատակաուղղելու դեպի արտաքին քաղաքականության խնդիրների լուծումը: Երկու դեպքում էլ այն պատճառ դարձավ Առաջին աշխարհամարտում Ավստրո-Հունգարիայի կայսրության փլուզման:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե երբ առաջացավ Ավստրիան, և ինչ տարածքներ էր ընդգրկում պետությունը: Ինչո՞ւ Ավստրիան դարձավ հեղափոխական Ֆրանսիայի մշտական հակառակորդը: Ո՞րն էր Ավստրիական կայսրության ներքին գլխավոր հիմնախնդիրը:
2. Նկարագրե՛ք 1848–1849 թթ. հեղափոխության ընթացքը կայսրությունում: Ինչ արդյունքներ ունեցավ այն: Ո՞վ օգնեց Ավստրիային հեղափոխությունը ձնշելու գործում:
3. Երբ և իրավական ո՞ր հիմքով ստեղծվեց երկկենտրոն տերությունը՝ Ավստրո-Հունգարիան: Ներկայացրե՛ք նորակազմ տերության պետական կառավարման համակարգը գծապատկերի տեսքով: Ո՞րն էր Ավստրո-Հունգարիայի պետական կարգի գլխավոր առանձնահատկությունը:
4. Ինչո՞ւ ազգային հարցը դարձավ տերության ներքաղաքական կյանքի հիմնական հակասությունը: Ո՞ւմ միջև էին առաջացել ազգային հակասություններ: Ինչի՞ հանգեցրեց Ավստրո-Հունգարիայի ազգայնամոլական քաղաքականությունը:

§ 7. ԻՏԱԼԻԱ. ԱՉԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ազգային ինքնագիտակցության վերելքը: Իտալիան՝ հռոմեական քաղաքակրթության երբեմնի օջախը, նոր ժամանակների սկզբին դարձավ հումանիզմի և Վերածննդի հայրենիքը: XVII–XVIII դարերում դրան հաջորդեց տնտեսական և քաղաքական անկումը: Մեծ ու փոքր պետական կազմավորումները դարձել էին հզոր հարևանների՝ Ավստրիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի պատերազմների ասպարեզ: Միայն XVIII դ. երկրորդ կեսին Իտալիայում տիրեց հարաբերական

խաղաղություն, և սկսվեց որոշ տնտեսական վերելք: Միաժամանակ տարածվեցին լուսավորական գաղափարները, որոնց ազդեցության տակ կատարվեցին հին կարգերի քարեփոխումներ: Իտալացիներից շատերը երազում էին երկիրը միավորել մեկ պետության մեջ: Մշակույթի մեջ սկսվեց ազգային վերածնության՝ **Ռիսորջիմենտոյի** ժամանակաշրջանը: Աստիճանաբար ձևավորվեց համազգային մի նոր մշակույթ, որն իտալացիների մեջ

ամրապնդեց ընդհանուր հայրենիքի գաղափարը:

Մեծ հեղափոխության շրջանում Ռիսորջիմենտոն դարձավ նաև քաղաքական շարժում: Նապոլեոնի դարաշրջանում Իտալիայում տարածվեց ֆրանսիական առաջադիմական օրենսդրությունը, որը լուրջ հարված էր ավատատիրությանը: Իսկ ֆրանսիական տիրապետության դեմ ընդվզումները նպաստեցին իտալացիների ազգային ինքնագիտակցության վերելքին:

Վինենայի վեհաժողովից հետո շատերը չհաշտվեցին հին կարգերի վերականգնման, Իտալիայի քաղաքական մասնատվածության և իտալական շատ հողերում Ավստրիայի տիրապետության պահպանման հետ: Երկրի միավորման համար պայքարը շարունակվեց:

Ռիսորջիմենտոյի նոր փուլի դրոշակակիրներ դարձան քաղաքականության մեջ՝ **Ջ. Մաձինին**, մշակույթի մեջ՝ գրող **Ա. Մանձոնին** և մեծ երգահան **Ջ. Վերդին**: Նրանց գործունեությունը նպաստեց իտալացիների ազգային ինքնագիտակցության նոր վերելքին: Մաձինին ստեղծեց «Երիտասարդ Իտալիա» կազմակերպությունը: Նրա շուրջը համախմբվեցին Իտալիան հեղափոխական ճանապարհով միավորելու բազմաթիվ կողմնակիցներ:

Միասնական ազգային պետություն ստեղծելու հնարավորություն ստեղծվեց 1848–1849 թթ., երբ Ֆրանսիայում սկսված հեղափոխական ալիքն ընդգրկեց նաև Իտալիան: Ջենթ վերցրած իտալացիները պահանջում էին միացյալ սահմանադրություն, ժողովրդավարություն և Ավստրիայից իտալական հողերի ազատագրում: Մաձինին և նրա կողմնակիցները կարողացան Հռոմում և Վենետիկում ստեղծել հանրապետություն: Ֆրանսիայի, Իսպա-



Ջ. Մաձինի

նիայի և Ավստրիայի զորքերը, համագործակցելով Հռոմի պապի և իտալական միապետների հետ, ճնշեցին ազգային հեղափոխությունը: Նրանք չէին ցանկանում իրենց հարևանությամբ ունենալ միասնական, անկախ և հզոր պետություն:

1848–1849 թթ. հեղափոխությունը, չնայած պարտությանը, իտալացիների մեջ ամրապնդեց ընդհանուր հայրենիքի գաղափարը և հող նախապատրաստեց միասնական պետության ստեղծման համար:

Իտալական թագավորության ստեղծումը: XIX դ. 50–60–ական թթ. կայացան Իտալիայի քաղաքական միավորումը և համազգային պետության ստեղծումը: Արդեն ավարտվել էր իտալական նոր ազգի կազմավորումը: Բոլոր իտալացիներին միավորում էին ընդհանուր հայրենիքը, լեզուն, մշակույթը, տնտեսությունը և կրոնը:

Իտալիայի ազգային-քաղաքական միավորումն առանձնահատուկ ընթացք ունեցավ: Ինչպես և Գերմանիայում, նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց իտալական պետություններից ամենաուժեղը՝ Սարդինական թագավորությունը: Սար-



Ջ. Գարիբալդի

դինիան Ֆրանսիայի հետ դաշինք կնքեց ընդդեմ Ավստրիայի:

Դաշնակիցները պարտության մատնեցին Ավստրիային: Հյուսիսային Իտալիայի մեծ մասն անցավ Սարդինիային: Հաղթանակն իտալացիների մեջ առաջացրեց մեծ ոգևորություն: Ժողովրդի ճնշման տակ Սարդինիային միացան նաև Տոսկանայի, Մոդենայի և Պարմայի պետությունները: Ազատագրական պատերազմն ընդունեց համաժողովրդական բնույթ:

1860 թ. ապստամբություն սկսվեց Նեապոլի թագավորությունում: Մաձինիի առաջարկով ապստամբներին օգնության շտապեց **Ջ. Գարիբալդին**: Նա «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության նախկին անդամ էր և բազմիցս աչքի էր ընկել իր սխրանքներով: «Կարմիր շապկավորների հազարյակը», ինչպես անվանում էին Գարիբալդիի կամավորներին, ափ իջավ Սիցիլիայում: Կարձ ժամանակում նա ժողովրդի աջակցությամբ ազատագրեց Իտալիայի հարավը, որը նույնպես միացավ Սարդինիային:

1861 թ. առաջին անգամ ընտրվեց համաիտալական խորհրդարան, որն օրենք ընդունեց Իտալական թագավորության ստեղծման մասին: Վենետիկն Իտալական թագավորության կազմի մեջ մտավ ավստրո-պրուսական (1866), իսկ Հռոմը՝ ֆրանս-գերմանական պատերազմների արդյունքում (1870): **1871 թ.** Հռոմը հռչակվեց Իտալիայի մայրաքաղաք:

Իտալական թագավորության ստեղծումով ավարտվեց Ռիսորջիմենտոյի մեկդարյա ժամանակաշրջանը: Դրա գլխավոր արդյունքը միասնական ազգային պետության՝ Իտալական թագավորության ստեղծումն էր:

Պետության և հասարակության արդիականացումը: Իտալական թագավորությունը սահմանադրական միապետություն էր: Պետության սահմանադրությունն ստեղծվել էր դեռևս 1848 թ.՝ Սարդինիայի արքայի օրենքով: 1861 թ. նորընտիր խորհրդարանը Սարդինիայի գործող սահմանադրությունն օրինականացրեց որպես նորաստեղծ Իտալական թագավորության համապետական հիմնական օրենք: Այդ սահմանադրությունը գործեց մինչև 1922 թ.:

Սահմանադրությունը սահմանում էր իշխանության յուրատեսակ տարանջատում: Գործադիր իշխանությունն ամբողջովին վերապահվում էր թագավորին: Օրենքն իրավական ուժ էր ստանում, եթե այն հաստատում էին պատգամավորների ատյանը, սենատը և թագավորը: Դատարանը ևս ենթարկվում էր թագավորին: Սենատի անդամներին թագավորն էր նշանակում՝ ցմահ: Սենատը միաժամանակ Գերագույն դատարան էր: Պատգամավորների ատյանում կարող էին ընտրվել 30 տարին լրացած քաղաքացիները: Ատյանին էր վերապահված հարկերի սահման-

ման, ինչպես նաև պետական ծախսերի նախնական քննարկման և հաստատման իրավունքը: Առանց խորհրդարանի երկու աստիճանների համաձայնության երկրի սահմանները չէին կարող փոփոխվել:

Սահմանադրությամբ իտալացիներն ստանում էին նաև ժողովրդավարական իրավունքներ:

Իտալիայի միավորումից հետո փոխվեց նաև Հռոմի պապի կարգավիճակը: Պապը միշտ խանգարել էր Իտալիայի միավորմանը: **1871 թ.** օրենքով կարգավորվեցին պետության և պապի հարաբերությունները: Պապի անձը հռչակվեց սուրբ և անձեռնմխելի: Պապը մնում էր բոլոր կաթոլիկների հոգևոր առաջնորդը: Նա կարող էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ: Պապի տարեկան ծախսերը պետք է հոգար իտալական պետությունը: Միաժամանակ վերացվում էր նրա աշխարհիկ իշխանությունը, և այն սահմանափակվում էր Վատիկանի ու Լաթերանյան սպարանքներով: Հռոմի պապը հրաժարվեց իր մասին օրենքը ճանաչելուց և երկար ժամանակ թշնամական հարաբերությունների մեջ էր պետության հետ:

Եվրոպայի զարգացած երկրների համեմատությամբ Իտալիան տնտեսապես հետ էր մնում: Հատկապես հետամնաց էին երկրի հարավային շրջանները: Արդյունաբերական հեղաշրջումն սկսվեց բավականին ուշ: Առաջացավ «հարավի հարցը», որը երկրի քաղաքական կյանքը պահում էր մշտական լարվածության մեջ: Ահա թե ինչու, չնայած սահմանադրական երաշխիքներին, իտալական հասարակության արդիականացումը դժվարին ընթացք ունեցավ: Մինչև XX դ. սկիզբը սուր պայքար էր ընթանում պահպանողական և ազատական ուժերի միջև: Այդ պայքարի

ընթացքում կատարվեցին շատ բարեփոխումներ: Ստեղծվեցին միասնական ազգային դրամական միավոր, չափ ու կշիռ, ազգային բանկ, մաքսային օրենքներ և այլն: Օրենքներ ընդունվեցին տարրական պետական դպրոցներ ստեղծելու, քաղաքացիական ամուսնության, ընտրական իրավունքի ընդլայնման, ազգային արդյունաբերության հովանավորման մասին և այլն:

Հասարակության ազատականացման համար պայքարը հատկապես սրվեց XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Առաջացան բազմաթիվ նոր կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ:

Հատկապես նշանավոր էր **Ջ. Ջոլիանի**, որն ազատական պետության ստեղծման գործում մեծ դեր խաղաց: Պատմության մեջ XX դ. սկիզբը մնացել է «Ջոլիտիի դարաշրջան» անվամբ: Նրա ջանքերով ընդունվեցին բազմաթիվ օրենքներ, որոնց շնորհիվ ընդլայնվեցին ժողովրդավարությունը և աշխատանքային օրենսդրությունը: Կարգավորվեցին հարկերը, մեծ թռիչք ապրեցին տնտեսությունը և մշակույթը:

Անշուշտ, Իտալիան ժողովրդավարության առումով զիջում էր առաջավոր երկրներին: Դեռևս շատ էին հասարակական հակասությունները՝ բանվորական և սոցիալիստական շարժումները, աղքատությունը, Հարավի տնտեսական հետամնացությունը և այլն: Մյուս կողմից՝ հասարակության արդիականացման գործընթացն Առաջին աշխարհամարտի նախօրյակին մթազնեց: Մեծ թափ ստացավ երկրի ռազմականացումը: Ռիսորջիմենտոյի դարաշրջանի առաջադեմ ազգայնականությունը փոխարինելու եկավ ազգայնամոլությունը, որը երկիրը տարավ աղետաբեր պատերազմների հունով:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է նշանակում Ռիսորջիմենտո: XIX դ. առաջին կեսին ինչ պայմաններ նպաստեցին իտալացիների ազգային կյանքի վերելքին: Ովքեր էին այս շրջանում Ռիսորջիմենտոյի գլխավոր դեմքերը:
2. Իտալացիներն ինչ նպատակներ էին հետապնդում 1848–1849 թթ. հեղափոխության ժամանակ: Ներքին և արտաքին ինչ ուժեր միավորվեցին հեղափոխականների դեմ և ինչո՞ւ: Ներկայացրե՞ք իտալական ազգային հեղափոխության նշանակությունը:
3. Ներկայացրե՞ք Իտալիայի միավորման գործընթացը XIX դ. 50–60–ական թվականներին: Ո՞վ դարձավ գլխավոր դերակատարն այդ գործընթացում. ձեր պատասխանը հիմնավորե՞ք փաստերով: Ե՞րբ Հռոմը հռչակվեց միավորված Իտալիայի մայրաքաղաք:
4. Ինչպիսի՞ն էր Իտալական թագավորության պետական կարգը: Յո՞ւյց տվեք Իտալիայի պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները:
5. Ինչո՞ւ էր Հռոմի պապը խոչընդոտում Իտալիայի միավորմանը: Ինչպե՞ս կարգավորվեցին պետության և պապի հարաբերությունները: Ինչ առաջընթաց ունեցավ իտալական հասարակությունը XIX դ. վերջին և XX դ. սկզբին:

§ 8. ԱՋԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ազգային պետությունների առաջացման նախադրյալները: Եվրոպայի մաս կազմող բալկանյան երկրները՝ Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան, Չեռնոգորիան, Ալբանիան և մյուսները, անցել են զարգացման դժվարին ուղի: Գլխավոր պատճառը օսմանյան դարավոր տիրապետությունն էր: Օսմանյան բռնաձնշումները դրսևորվում էին տնտեսության և հասարակական–քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում: Մյուս կողմից՝ իսկական չարիք էին անվերջանալի պատերազմները և երկպառակությունները:

Օսմանյան լուծը չէր կարող ամբողջովին կասեցնել բալկանյան ժողովուրդների ազգային զարգացումը: Արդեն XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին արդիականացումը դրսևորվում էր տնտեսության, մշակույթի և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Զարգանում էր

ներքին և արտաքին առևտուրը: Վաճառականները հիմնականում հույներ էին, բուլղարներ, հայեր և այլք: Քաղաքներում նրանք սկսեցին ստեղծել մանուֆակտուրաներ: Արդյունաբերական հեղաշրջումը Բալկանյան թերակղզին ներքաշեց առաջավոր երկրների շուկայական ոլորտ:

Տնտեսության աշխուժացումը և գործարարների հանդես գալը նպաստեցին ազգային ինքնագիտակցության և մշակույթի զարգացմանը: Շատերը կուտակված կապիտալի մի մասն օգտագործում էին ազգօգուտ գործերում: Լուսավորական գաղափարների և կրթության տարածմանը զուգընթաց ձևավորվեցին հույների, բուլղարների, սերբերի և մյուսների գրական լեզուները: Սկիզբ դրվեց մամուլին, տպագրությանը, աշխարհիկ կրթությանը և դասագրքերի ստեղծմանը: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին լույս էր տեսնում 8 հունարեն պարբերական: Բուլ-



Վուկ Կարաջիչ

դարերեն առաջին դասագիրքը ստեղծվեց 1824 թ., թերթերը՝ 40-ական թվականներին: Սերբական գրական լեզվի և նոր մշակույթի ստեղծման մեջ մեծ դեր կատարեց **Վ. Կարաջիչը** (1787–1864):

Լուսավորական գաղափարների տարածմանը և հասարակության արդիականացման գործընթացին նպաստեց նաև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Եվրոպայում տեղի ունեցող դեպքերը բալկանյան ժողովուրդների մեջ ուժեղացնում էին օսմանյան տիրապետությունից ազատագրման ձգտումը: Ստեղծվեցին հասարակության քաղաքական բարեփոխման նախագծեր, որոնց մեջ առաջնայինը դարձավ ազգային-ազատական պետության ստեղծման գաղափարը:

Ազգային-ազատագրական շարժումների արդյունքները: XIX դարը օսմանյան լծից բալկանյան ժողովուրդների ազատագրման և ինքնուրույն պետականություն ստեղծելու ժամանակաշրջանն է: Նոր դարաշրջանին բնորոշ էին գաղափարական ուղղվածությունը և ազգային պետության ստեղծման նախագծերի իրագործման նպատակալաց պայքարը:

Բալկանյան թերակղզում հույն նոր ազգի ձևավորման գործընթացը մյուսներից ավելի արագ էր ընթանում: Հետևաբար առաջինն իր ազատությունը ձեռք բերեց **Հունաստանը**: Հույներն ապստամբություն սկսեցին 1821 թ.: Միայնակ, առանց դաշնակիցների նրանք մի քանի տարի պատերազմեցին սուլթանի դեմ: Անգլիան, Ռուսաստանն ու Ֆրանսիան սուլթանից պահանջեցին ինքնավարություն տալ Հունաստանին: Մերժում ստանալով՝ դաշնակիցների միացյալ ռազմանավերը ջախջախեցին օսմանյան նավատորմը: 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում սուլթանը նոր պարտություն կրեց և հաշտվեց Հունաստանի անկախ պետության ստեղծման հետ: **1830 թ.** տերությունները ձանաչեցին Հունաստանի անկախությունը: Նրա սահմանների մեջ չմտան Կրետեն, Թեսալիան և հունական այլ հողեր: Այդ իսկ պատճառով հույների ազատագրական պայքարը շարունակվեց մինչև 1913 թ., երբ Բալկաններում վերացավ օսմանյան տիրապետությունը:

Օսմանյան տերությանը չհաջողվեց **Չեռնոգորիան** լրիվ ենթարկել իրեն: Լեռներում ապրող այդ փոքր հերոսական ժողովուրդն արդեն XVIII դարի վերջից ինքնուրույն էր: Չեռնոգորիան սուլթանի դեմ պատերազմներում իր անկախությունն ամրապնդեց 1862 թ.:

Սերբիայի ազատագրական պայքարն անկախության համար ընթացավ ավելի երկար: Մի քանի անգամ սերբերի ապստամբելուց հետո՝ **1830 թ.**, սուլթանն ստիպված եղավ **Սերբիան** ձանաչել որպես ինքնավար ժառանգական իշխանություն: 1867 թ. օսմանյան կայսրները դուրս հանվեցին Սերբիայից, որը կարևոր քայլ էր դեպի ինքնիշխանություն:

Դանության իշխանությունները՝ Մոլդովան և Վալախիան, համառ պայքարում կարողացան որոշ չափով ինքնավարություն պահպանել: Այն ամրապնդվեց 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում: Շուտով պայքար սկսվեց երկու իշխանությունների միության հիման վրա նոր՝ ռումինական պետություն ստեղծելու համար: **1859–1861 թթ.** ընթացքում միության համար պայքարն ավարտվեց հաջողությամբ: Ստեղծվեց **Ռումինիա** իշխանությունը, որը դեռևս կախյալ էր սուլթանից:

1875–1876 թթ. Բոսնիան, Հերցեգովինան, Սերբիան, Բուլղարիան, Ռումինիան և Չեռնոգորիան անհաջող ապստամբություն սկսեցին Օսմանյան կայսրության դեմ: Բալկանյան ձգնաժամը վերածվեց հերթական ռուս–թուրքական պատերազմի: Արդյունքում օսմանյան զորքերը պարտվեցին: 1878 թ. Բեռլինի վեհաժողովը ճանաչեց Սերբիայի, Ռումինիայի և Չեռնոգորիայի անկախությունը: Ավստրո–Հունգարիան բռնազավթեց Բոսնիան և Հերցեգովինան: Բուլղարիան տրոհվեց երկու մասի: Մի մասում ստեղծվեց սուլթանից կախյալ Բուլղարական իշխանություն: Մյուս մասը դարձավ ներքին ինքնավարություն ունեցող օսմանյան նահանգ՝ **Արևելյան Ռումելիա** անունով: 1885 թ. վերջինս ապստամբեց և միացավ Բուլղարիային: **Բուլղարիան** վերջնական անկախության հասավ **1908 թ.**:

Ալբանիան անկախ հռչակվեց և տերությունների կողմից ճանաչում ստացավ 1912–1913 թթ.:

Բալկանյան երկրներից Մակեդոնիան, Բոսնիան և Հերցեգովինան վերջնականապես անկախացան միայն Առաջին աշխարհամարտից հետո հաստատված նոր աշխարհակարգի արդյունքում:

Նորանկախ պետությունների սահմանադրական կարգը և արդիականացումը:

Բալկանյան թերակղզում ժողովուրդների ազատագրումը օսմանյան լծից և ազգային պետությունների ստեղծումը դժվարին ընթացք ունեցան: Ազատագրական պայքարն ընթանում էր ազգայնական գաղափարների դրոշի ներքո, որոնք նաև խթանեցին հասարակության ազատականացումը: Անշուշտ, սահմանադրությունների ընդունումը և բարեփոխումները կատարվում էին հասարակական սուր պայքարի պայմաններում:

Ազգային արդյունաբերության ստեղծումը նոր էր սկսվում և ձգձգվեց մինչև XX դարի սկիզբը: Դրան խանգարում էին ավատական հողատիրությունը և օտար կապիտալի ներհոսքը: Եվ չնայած դժվարություններին՝ XX դարի սկզբին Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան և մյուսները դարձան ազրարային–արդյունաբերական երկրներ: Դրանում քիչ դեր չխաղացին ազգային սահմանադրական կարգի ստեղծումը և ազատական օրենքների ընդունումը:

Սահմանադրության ստեղծման առաջին փորձերը կատարվեցին Մեծ հեղափոխության դարաշրջանում: XVIII դարի վերջին հույն **Վ. Ռիզասը** Հունաստանի և բալկանյան մյուս ժողովուրդների համար գրեց սահմանադրություն: 1822 թ. Հունաստանի Ազգային ժողովը հաստատեց առաջին սահմանադրությունը, որը նախատեսում էր ժողովրդավարական հանրապետություն: Սակայն ի վերջո Հունաստանը դարձավ սահմանադրական միապետություն: Հետագայում Հունաստանում հաստատվեցին տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունք և ժողովրդավարական ազատություններ: Առաջացան կուսակցություններ, ձևավոր-

վեց արդյունաբերական քաղաքակրթությանը բնորոշ հասարակական-քաղաքական կյանք:

Սերբիայում պետական մարմինները ձևավորվում էին ազատագրական պայքարին զուգահեռ: 1838 թ. երկրում սուր պայքար սկսվեց իշխանի միահեծանության դեմ: Սուլթանի կողմից հաստատված կանոնադրությունը սահմանափակում էր իշխանի իրավունքները: 1860-ական թվականներին ժողովուրդը ներկայացնող **Սկուպշինան** վերջնականապես դարձավ բարձրագույն օրենսդիր իշխանություն: 1869 թ. ընդունվեց նոր սահմանադրություն, որով Սերբիան հռչակվում էր միապետություն: Օրենսդիր իշխանությունը համատեղ իրագործում էին իշխանը և Սկուպշինան: Հաստատվեց նաև անձի և մամուլի ազատություն: Բեռլինի վեհաժողովից հետո վերջնականապես ձևավորվեցին քաղաքական կուսակցությունները: Սերբիան 1888 թ. հռչակվեց սահմանադրական միապետություն:

Ռումինիայում սահմանադրությունն ընդունվեց 1866 թ.: Այն մեծ իրավունքներ էր տալիս իշխանին: Սահմանափակ էին երկատյան խորհրդարանի իրավունքները, ինչպես նաև ընտրական իրավունքը: Միննույն ժամանակ հռչակվում էին քա-

ղաքացիների ժողովրդավարական ազատություններ: 1881 թ. Ռումինիան դարձավ թագավորություն: Դրանից հետո էլ շարունակվեց տնտեսության և քաղաքական կյանքի ազատականացումը:

1879 թ. Բուլղարիայի Տիոնովո քաղաքում իր աշխատանքն սկսեց Սահմանադիր ժողովը: Կարճ ժամանակ անց այն ընդունեց ազատական սահմանադրություն: Բուլղարիան հռչակվեց սահմանադրական միապետություն: Պետության ղեկավարի՝ իշխանի (հետագայում՝ թագավոր) և Ազգային ժողովի իրավունքները հստակորեն տարանջատվեցին: Հաստատվում էին քաղաքացիների սեփականության անձեռնմխելիությունը, ժողովրդավարական ազատությունները, ինչպես նաև 21 տարին լրացած արական բնակչության ընդհանուր ընտրական իրավունքը:

Ժողովրդավարական արժեքների իրագործման և նոր ազատական օրենքների համար պայքարը հետագայում շարունակվեց:

Բալկանյան երկրների արդիականացումը հասավ զգալի հաջողությունների: Սակայն հասարակության ազատականացման գործում նրանք չկարողացան հասնել Արևմտյան Եվրոպայի առաջավոր երկրներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XVII–XVIII դդ. ինչն էր արգելակում բալկանյան երկրների ու ժողովուրդների բնականոն զարգացումը: Արդիականացման գործընթացն ինչպիսի՞ հետևանքներ ունեցավ նրանց համար:
2. Ներկայացրե՞ք լուսավորական գաղափարների տարածման և մշակույթի զարգացման ազդեցությունը բալկանյան երկրների ազգային-ազատագրական պայքարի վրա: Ո՞րն էր այդ պայքարի գերագույն նպատակը:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ XIX դ. ընթացքում բալկանյան գրեթե բոլոր երկրները կարողացան հասնել անկախության: Կազմե՞ք անկախացման գործընթացի ժամանակագրությունը:

4. Հասարակության առաջընթացի ինչ դժվարություններ էին ծառայել նորանկախ բալկանյան պետությունների առջև: Ներքին և արտաքին ինչ նախադրյալների շնորհիվ զարգացավ այդ երկրների տնտեսությունը:

5. Բալկանյան դր պետությունը առաջինն ընդունեց սահմանադրություն: Ինչպիսի՞ պետական կարգ հաստատվեց բալկանյան ազգային պետություններից յուրաքանչյուրում:

§ 9. ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌՌԴԻՆ

Արդիականացման սկիզբը: Ուշ միջնադարում Ռուսաստանում ստեղծվեց կենտրոնացված ուժեղ պետություն: XVII դ. հաստատվեց Ռոմանովների արքայատոհմի միահեծանությունը: Սակայն ռուսական ավանդական հասարակությունը հետ էր մնում Եվրոպայից: Հին կարգերի բարեփոխումը և շրջադարձը դեպի Եվրոպա սկսեց իրագործել **Պյոտր I Ռոմանովը** (1682–1725): Նա երազում էր Ռուսաստանը արևմտյան արժեքների երկիր դարձնելու մասին: Քառորդ դարի ընթացքում եռանդուն ցարին հաջողվեց կատարել բազմապիսի բարեփոխումներ: Արդյունքում Ռուսաստանն առաջին անգամ ինչ–որ չափով դարձավ եվրոպական քաղաքակրթության մաս: Կառուցվեց նոր մայրաքաղաք, բացվեցին դպրոցներ, հիմնվեցին գիտությունների ակադեմիա, թերթ, ստեղծվեց նոր բանակ և նավատորմ, բարեփոխվեց պետության կառավարումը:

Անշուշտ, բարեփոխումները միշտ չէ, որ հասնում էին նպատակին: Ավելին՝ դրանք հաճախ ձախողվում էին կամ ունենում անցանկալի հետևանքներ: Հաջողություն չունեցան քաղաքների ինքնակառավարման, ինչպես նաև դատական բարեփոխումները: Ի տարբերություն Եվրոպայի՝ Ռուսաստանում տնտեսության զարգացման գլխավոր լծակը պետությունն էր:

1721 թ. օրենքով Պյոտր Մեծն ընդունեց **կայսեր** տիտղոսը: Օրենքում նշված

էր, որ կայսրը Ռուսաստանի ինքնակալն է: Այսինքն՝ կայսեր հրամաններն օրենքի ուժ ունեին քոլորի համար: Ոչ մի խոսք չկար հպատակների իրավունքների մասին: Չկար խորհրդարան կամ տարբեր դասերի ներկայացուցիչների ժողով: Մա նշանակում է, որ Ռուսաստանի արդիականացումը մակերեսային էր:

XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանում առաջադիմեց մանուֆակտուրային կապիտալիզմը: Միաժամանակ Եվրոպայից Ռուսաստան էին թափանցում լուսավորական գաղափարներ: Իրեն լուսավորական էր համարում **Եկատերինա II** կայսրուհին (1762–1796): Չնայած դժվարություններին՝ նա կատարեց որոշ ազատական բարեփոխումներ: Օրինակ՝ 1775 թ. օրենք ընդունվեց ազատ ձեռներեցության մասին: Նույն թվականի վարչական օրենքով Ռուսաստանը բաժանվեց 50 նահանգների: Առաջին անգամ նահանգներում տարանջատվեցին գործադիր, դատական և ֆինանսական իշխանությունները: Եկատերինա Մեծի ժամանակ Ռուսաստանի օրենսդրության մեջ ամրապնդվեց **հպատակների իրավունք** հասկացությունը: Մյուս կողմից՝ Ռուսաստանի վերածվելը եվրոպական մեծ տերության նպաստեց ռուսների ազգային ինքնագիտակցության խորացմանը: Այն ուներ կայսերական բնույթ, այսինքն՝ սեփական ազգի բացառիկությունը և առավելությունը կայսրության մյուս ժողովուրդ–



Պյոտր I



Եկատերինա II



Նիկոլայ I

ների նկատմամբ: Դա ևս խոչընդոտում էր Ռուսաստանի արդիականացմանը:

Ռուսական քաղաքակրթությունը XIX դարում: XIX դարի սկզբին Ռուսաստանը Եվրոպայի ամենախոշոր տերությունն էր թե՛ բնակչությամբ (36 միլիոն), թե՛ տարածքով (մոտ 16 միլիոն քառ. կմ): Հարյուր տարվա ընթացքում այն դարձավ աշխարհի խոշորագույն արդյունաբերական տերություններից մեկը: Եվ, այնուամենայնիվ, ռուսական հասարակությունը մշտապես ձգնաժամի մեջ էր: Ինչո՞վ էր պայմանավորված այդպիսի զարգացումը:

XIX դարի ընթացքում ռուսները շարունակ բանավիճում էին, թե քաղաքակրթական որ ուղիով պետք է զարգանա Ռուսաստանը: Հասարակության մեծ մասը գտնում էր, որ պետք է հավատարիմ մնալ ազգային ավանդական արժեքներին: Մյուսները պնդում էին, որ պետք է հետևել Արևմուտքին: Ոմանք էլ մտածում էին հեղափոխության մասին: Բոլոր այս գործընթացներին մասնակցում էին Ռուսական կայսրության հպատակ ազգերը՝ ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները, մերձբալթյան ժողովուրդները և այլք: Դա առաջին հերթին վերաբերում է

արդիականացմանը, որը նպաստում էր քաղաքակրթական փոխազդեցություններին և ազգային ինքնագիտակցության վերելքին:

Ռուսական պետությունը հակված էր պահպանելու ավանդական հասարակությունը, խուսափելու արագ բարեփոխումներից:

XIX դարի սկզբին Ռուսաստանում լուսավորական գաղափարները հիմնականում ծանոթ էին երիտասարդ ազնվական այն սպաներին, ովքեր մասնակցել էին Ֆրանսիայի դեմ ռուսական զորքերի 1813–1814 թթ. արշավանքին: Հենց նրանք էլ սկսեցին ստեղծել գաղտնի ընկերություններ, առաջ քաշել սահմանադրական նախագծեր: 1825 թ. դեկտեմբերին նրանք ապստամբեցին և փորձեցին նոր գահ բարձրացած **Նիկոլայ I-ին** (1825–1855) պարտադրել ազատական բարեփոխումներ: **Դեկաբրիստները** (այդ անունով նրանք մնացին պատմության մեջ) ձախողվեցին: Ցարը որոշեց ամեն գնով պայքարել հեղափոխական շարժումների դեմ:

Հասարակության մեջ ռուս ազգի ինքնության շուրջ սուր բանավեճեր սկսվեցին: Ռուս մտավորականությունը բաժան-



Ալեքսանդր II

վեց երկու ճամբարի՝ **արևմտականների և սլավոնասերների**:

Արևմտականները կարծում էին, որ Ռուսաստանը պետք է առաջ գնա Պոտր Մեծի նախանշած ուղիով: Նրանք չէին ժխտում Ռուսաստանի յուրօրինակ ազգային ինքնությունը: Միաժամանակ համոզված էին, որ պետք է վերացվեն ճորտությունը, զարգացմանը խոչընդոտող գյուղական համայնքը, և հաստատվի սահմանադրական միապետություն:

Սլավոնասերները համոզված էին, որ երկրի եվրոպականացումը կվերացնի ռուսների ազգային արժեքները և ինքնությունը: Ըստ նրանց՝ ռուսական հասարակությունն ընդունակ է շրջանցելու կապիտալիզմը և ազգային արժեքների հիմքի վրա կառուցելու նոր հասարակարգ: Սլավոնասերների կարծիքով՝ սլավոնական քաղաքակրթությունը, որի միջուկը Ռուսաստանն է, ավելի բարձր է Եվրոպայից: Սլավոնասերները կտրուկ բարձրացրին ռուսների ազգային ինքնագիտակցությունը, խորացրին նրա մեծապետական բնույթը:

Ռուսաստանի տնտեսությունը սկսեց զարգանալ արդյունաբերական ուղի-

ով: Գիտակցելով բարեփոխումների անհրաժեշտությունը՝ **Ալեքսանդր II-ը (1855–1881)** 1861 թ. վերացրեց գյուղացիների ճորտությունը, հաստատեց տեղական ինքնակառավարում, բարեփոխեց դատական համակարգը: Ալեքսանդր Ազատարարը մտածում էր նաև սահմանադրություն ընդունելու մասին, սակայն սպանվեց հեղափոխական նարոդնիկների կողմից:

Ռուսաստանի քաղաքակրթական ճգնաժամը: Ռուսական քաղաքակրթու-

թյան արդիականացման այլ ուղի էին առաջարկում **հեղափոխականները:**

Նրանք համոզված էին, որ ինքնակալությունը խաղաղ ճանապարհով հնարավոր չէ բարեփոխել: Եվ ազատական իդեալին հակադրեցին հեղափոխական-ժողովրդավարական իդեալը, որի իրագործման արդյունքում պետք է կառուցվեր սոցիալիստական հասարակարգ: Նրանց կարծիքով՝ Ռուսաստանում դա հեշտ էր անել, քանի որ գյուղական համայնքը սոցիալիզմի սաղմն էր: Նրանք մտածում էին համայնքում տիրող հավասարությունը գյուղացիական հեղափոխության միջոցով տարածել Ռուսաստանում:

XIX դարի 70-ական թվականներին Ռուսաստանում գյուղացիական հեղափոխության հետևորդներ դարձան **նարոդնիկները:** Գյուղացիների մեջ քարոզչական աշխատանք տանելու համար նրանք կազմակերպեցին «Երթ դեպի ժողովուրդ»: Այդ մեծ միջոցառումն ավարտվեց ձախողմամբ, քանի որ հերթական անգամ գյուղացիները ցույց տվեցին իրենց նվիրվածությունը ինքնակալությանը:

Ռուսաստանում հեղափոխականների հաջորդ սերունդը **սոցիալ-դեմոկրատներն** էին: Նրանց գաղափարախոսության հիմքը դարձան կապիտալիզմի

վերացման և սոցիալիզմի հաստատման Կ. Մարքսի հայացքները: Ռուսական հեղափոխական շարժման ծայրահեղ թևի ղեկավարն էր **Վ. Ուլյանովը (Լենին):**

XX դարի սկզբին Ռուսաստանում արդիականացումն ընդգրկեց հասարակության բոլոր դասերը: Սակայն պետության ավանդական կառույցները, հասարակության մեջ գերիշխող պահպանողականները խանգարում էին առաջընթացին: Նույնիսկ ազատականները գործում էին ընդհատակում: Բանվորական շարժումն ընդունեց քաղաքական բնույթ: Սկսեցին առաջանալ կուսակցություններ, որոնց ծրագրերի գլխավոր նպատակը սահմանադրական կարգերի ստեղծումն էր:

Ինքնակալությունը հաշվի չէր նստում նաև կայսրության ծայրամասերում գործող հպատակ ազգերի՝ ուկրաինացիների, վրացիների, հայերի և մյուսների ազգայնական շարժման հետ: Այդ շարժումները հաճախ համահունչ էին Ռուսաստանի արդիականացման գործընթացին: Այդ իսկ պատճառով ինքնակալության թշնամանքը հպատակ ազգերի ազատագրական ձգտումների նկատմամբ խորանում էր:

Հասարակության արդիականացման ձգնաձամն առաջին անգամ հանգեցրեց համաժողովրդական արյունալի հեղափոխության (1905–1907 թթ.): Մի քանի տարի շարունակ ծանր պայքար էր ընթանում արդիականացմանը և ավանդական արժեքներին կողմնակից հասարակական

ուժերի միջև: Արդիականացման արժեքներին հետամուտ ուժերը (ազնվականության և մտավորականության մի մասը, բուրժուազիան) քիչ էին: Սոցիալ–դեմոկրատներն էլ հակված էին արդիականացման արժեքները զոհաբերելու սոցիալական արդարության հավասարարական իդեալին՝ սոցիալիզմին: Սակայն ժողովրդի մեծ մասը կողմ էր ռուսական հասարակության ավանդական արժեքներին: Այս բոլորի արդյունքում թեև ինքնակալությունը հաղթեց, բայց և ստիպված եղավ նահանջել պետական ավանդապահությունից: Առաջին անգամ ինքնակալությունը լուրջ երկխոսության մեջ մտավ հասարակության հետ:

1906 թ. ապրիլին հրապարակված «Ռուսական կայսրության պետական հիմնական օրենքները» նախատեսում էր օրենսդրական իրավունքով երկատյան Պետական դումայի ստեղծում: Այն պետք է հրավիրվեր ընտրական օրենքի հիման վրա: Իսկ դա նշանակում էր պետական ավանդական կարգի փոփոխություն և արդիականացում: Դրան էին միտված նաև գրաքննության մեղմացումը, ազատ խոսքի տարածումը և այլն: Տնտեսության ազատականացման գործում մեծ նշանակություն ունեցավ գյուղական համայնքի մասին օրենքը: Ըստ այդ օրենքի՝ գյուղացիներն իրավունք էին ստանում դուրս գալու համայնքից և դառնալու հողի սեփականատեր:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Պյոտր I–ի բարեփոխումները: Ի՞նչ արդյունքներ տվեցին դրանք: Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Եկատերինա II կայսրուհին:
2. Ովքե՞ր էին ղեկաբրիստները: Ի՞նչ գաղափարներ էին նրանք առաջ քաշում:

3. Ովքեր էին արևմտականները և սլավոնասերները: Ներկայացրե՞ք արևմտականների և սլավոնասերների հայացքները: Ինչո՞ւ է Ալեքսանդր II–ը ժողովրդի հիշողության մեջ մնացել *Ազատարար* անունով:

4. Հեղափոխական շարժման մեջ ի՞նչ ուղղություններ էին ձևավորվել Ռուսաստանում XIX դ. վերջին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ձախողվեցին նարոդնիկների ձեռնարկումները: Ներկայացրե՞ք 1905–1907 թթ. հեղափոխության արդյունքները: Ներկայացրե՞ք Ռուսաստանի արդիականացման առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՈՂԻՆ

§ 1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

ԱՄՆ–ի պատմության գաղութային փուլը: Նոր դարերում Ամերիկա մայրցամաքի երկրների զարգացման գլխավոր արդյունքը արդյունաբերական քաղաքակրթության ձևավորումն էր: Այն կազմում է արևմտյան քաղաքակրթության մի մասը: Միննույն ժամանակ ամերիկյան քաղաքակրթությունն անցել է կազմավորման յուրահատուկ ուղի, որում հատկապես առանձնանում է Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Հյուսիսային Ամերիկայի անգլիական գաղութացման փորձերն սկսվել են XVI դ. վերջից, սակայն հաստատուն բնակավայրեր հիմնվեցին միայն XVII դ. սկզբին: Անգլիացիներն ուժեղ դիմադրության չհանդիպեցին, որովհետև բնիկ ցեղերը գտնվում էին զարգացման ցածր մակարդակում: Առաջին այդպիսի գաղութներից մեկը *Վիրջինիան* էր:


Դրանից հյուսիս մի խումբ *պուրիտաններ* 1620 թ. հիմնեցին *Նոր Դիմնուտ* ավանը: Դեռևս «Մեյֆլաուեր» նավում, որով նրանք հասան Նոր աշխարհ, վերաբնակիչները, որոնք պատմության մեջ մնացել են «ուխտավոր հայրեր» անունով, երդվեցին հիմնել նոր հասարակություն և ապրել արդար օրենքներով: Այդ նպատակով

նրանք կազմեցին և ստորագրեցին «Համաձայնագիր Մեյֆլաուերի վրա» փաստաթուղթը: Բոլոր այդ հողերը կոչվեցին *Նոր Անգլիա*, որը դարձավ ամերիկյան ազգային գիտակցության առաջացման օրրանը:

Գաղութներ հիմնում էին ձեռներեցությամբ զբաղվող ընկերությունները, կրոնական համայնքները և մասնավոր մարդիկ, որոնք այդ հողերին տիրում էին թագավորական հրովարտակներով:

Աստիճանաբար Եվրոպայից վերաբնակիչների հոսքը մեծ չափեր ընդունեց: Մինչև XVIII դարի կեսը ձևավորվեց 13 գաղութ՝ 1 մլն 760 հազար բնակչությամբ: Գաղութաբնակները զբաղվում էին ձեռներեցությամբ, ստեղծում էին ֆերմերային տնտեսություններ, մանուֆակտուրաներ, որոնք բավարարում էին տեղական շուկայի պահանջները: Ձևավորվում էր շուկայական տնտեսություն: Նոր յուրացվող հողերում զգացվում էր աշխատող ձեռքի մեծ պակաս: Այդ պատճառով 1619 թ–ից ի վեր Աֆրիկայից սկսեցին այստեղ բերել սևամորթների, որոնց ստրկացրին: Աֆրիկյան ստրկավաճառությունը XVII–XVIII դարերում ծաղկում էր ապրում:

ԱՄՆ-Ի ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ



XVIII դարի երկրորդ կեսին Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութներում ձևավորվեց ամերիկյան ժողովուրդը: Նրա առանձնահատկություններն էին բազմազգ ակունքները, գրագիտության բարձր մակարդակը, նոր հողերի յուրացումը, հնդկացիների հետ մշտական հակամարտությունը: Ձևավորվել էր մարդկային մի նոր անհատականություն, որին բնորոշ էր գոյատևման համար պայքարը, համարձակությունը, սեփական ձակատագրի ազատ տնօրինումը, համառությունն ու գործարարությունը: XVIII դ. վերջին ընդհանուր հայրենիքի, մշակութի, հասարակական հոգեբանության և գիտակցության ձևավորման գործընթացը դարձել էր անշրջելի:

Անկախության պատերազմը և ԱՄՆ-ի առաջացումը: Անգլիան խոչընդոտում էր ամերիկյան գաղութների ինչպես տնտեսական զարգացմանը, այնպես էլ քա-

ղաքական համախմբմանը: Յոթնամյա պատերազմից (1756–1763 թթ.) հետո Անգլիան ավելացրեց իր գործերի թիվը գաղութներում: Խորհրդարանը պատերազմի ծախսերը հոգալու համար ծանրացրեց հարկերը: Ի պատասխան՝ գաղութաբնակները սկսեցին ստեղծել հայրենասիրական գաղտնի ընկերություններ, հրաժարվեցին անգլիական ապրանքներից: Միասնաբար հանդես գալու համար 1774 թ. **Ֆիլադելֆիա** քաղաքում հրավիրվեց գաղութների ներկայացուցիչների համաժողով՝ **Կոնգրես**: Կոնգրեսն իր հպատակությունը հայտնեց Անգլիային՝ առաջարկելով համագործակցություն: Ի պատասխան՝ թագավորը նրանց հայտարարեց խոտվարար: 1775 թ. գաղութների և Անգլիայի միջև պատերազմ սկսվեց: Կոնգրեսը, որը դարձավ պետական մարմին, ղեկավարեց ազատագրական պատերազմը: Ստեղծ-

վեց բանակ, որի հրամանատար նշանակվեց գնդապետ **Ջ. Վաշինգտոնը**: Անկախության գաղափարը տարածվեց և ամրապնդվեց ժողովրդի մեջ: **1776 թ. հուլիսի 4-ին** Կոնգրեսը հաստատեց լուսավորական **Թ. Ջեֆերսոնի** գլխավորած հանձնաժողովի մշակած **Անկախության հռչակագիրը**: Այդ օրը դարձավ ամերիկացիների ազգային տոնը, որը նշվում է ամեն տարի: Բոլոր գաղութներն իրենց հայտարարեցին անկախ նահանգներ և խզեցին կապերը Անգլիայի հետ:

Անկախության հռչակագիրը, որը սկիզբ դրեց ԱՄՆ-ի ստեղծմանը, նոր ժամանակների դարակազմիկ սահմանադրական օրենք է: Այն առաջին քաղաքական փաստաթուղթն է, որում արտացոլված են լուսավորական շարժման գաղափարները: Դրանում ձևակերպված են մարդկանց բնական իրավունքի երեք գլխավոր սկզբունքները՝ կյանքի, ազատության և երջանկության ձգտման իրավունքները:

Անկախության հռչակագրի մյուս կարևոր սկզբունքն ազգի ինքնիշխանության գաղափարն է, բռնապետության դեմ ժողովրդի ընդվզելու իրավունքը: Հռչակվում է, որ օրինական է միայն ազգի ինքնորոշման իրավունքը և ընդհանուրի համաձայնությամբ ստեղծված պետությունը: Դրանով իրավական հիմնավորում է ստանում նաև հանրապետական կարգի առավելությունը միապետության նկատմամբ:

Ամերիկյան ժողովուրդը մեծ նվիրումով շարունակեց պատերազմել իր ազատության համար: Ռազմական գործողությունները շարունակվեցին մինչև 1781 թ.: Այդ ընթացքում ամերիկյան դիվանագիտությանը հաջողվեց Անգլիայի դեմ ստեղծել ռազմաքաղաքական դաշինք,



ԱՄՆ-ի առաջին նախագահ՝ Ջորջ Վաշինգտոն

որի մեջ մտնում էին Ֆրանսիան, Իսպանիան և Նիդերլանդները: Բացի այդ, ամերիկյան բանակում կռվում էին Եվրոպայից եկած 7 հազար կամավորներ: Նոր ծնվող պետության նկատմամբ դրական չեզոքություն էին պահպանում նաև Ռուսաստանը, Ճվեդիան, Դանիան և ուրիշներ: Ի վերջո դաշնակիցները Յորքթաուն քաղաքում անգլիացիներին ստիպեցին անձնատուր լինել: Անգլիայի վիճակը կտրուկ վատացավ: Վտանգ առաջացավ, որ դաշնակիցները կարող են ներխուժել Մեծ Բրիտանիա: Անգլիացիները դադարեցրին ռազմական գործողությունները և բանակցություններ սկսեցին: **1783 թ. Վերսալում** կնքվեց հաշտության պայմանագիր, որով միջազգային ճանաչում ստացավ Ամերիկայի Միացյալ Նահանգներ պետության ստեղծումը: Այսպես Ամերիկյան մայրցամաքում ասպարեզ իջավ մի պետություն, որն աստիճանաբար հզորացավ, ստեղծեց յուրահատուկ զարգացած քաղաքակրթություն, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից աշխարհը:

Սահմանադրության ընդունումը: Անկախության պատերազմից հետո երկրում ստեղծվել էր տնտեսական ծանր վիճակ: Այն հաղթահարելու համար անհրաժեշտ էր համախմբել բոլոր նահանգների ջանքերը: Մինչդեռ պատերազմի ընթացքում ստեղծված սահմանադրական կարգը խանգարում էր դրան: Ինչ էր տեղի ունեցել:

Անկախության հռչակագրի ընդունումից հետո բոլոր գաղութներն իրենց հայտարարեցին հանրապետություն և ընդունեցին սահմանադրություններ: Մինչդեռ համատեղ գործողությունների համար հարկավոր էր ընդհանուր սահմանադրություն: Այդ խնդիրը լուծելու համար 1777 թ. Կոնգրեսը մշակեց նոր պետության առաջին սահմանադրությունը՝ «**Տասնադարյան հողվածները**»: Այն հաստատվեց միայն 1781 թ. և գործեց մինչև 1789 թ.: Ընդհանուր սահմանադրությունն անկախ նահանգների միութենական պայմանագիր էր: Կոնգրեսի իրավունքները շատ սահմանափակ էին: Նույնքան մեծ էին նահանգների իրավունքները: Գործնականում նահանգներն անկախ հանրապետություններ էին և մտածում էին դառնալ առանձին պետություններ: Չէր վերացել նաև արտաքին վտանգը: Անկախության պատերազմին մասնակից պետական գործիչները հասկանում էին միասնական, կենտրոնացված պետության ստեղծման անհրաժեշտությունը: Նրանց նախաձեռնությամբ մայրաքաղաք Ֆիլադելֆիայում հավաքվեցին նահանգների 55 ազդեցիկ պատվիրակներ: Նրանք **Ջ. Վաշինգտոնի** գլխավորությամբ կազմեցին Սահմանադիր ժողով, որը 1787 թ. մշակեց նոր սահմանադրության նախագիծ:

Սահմանադրությունն ընդունվեց 1791 թ.: Կոնգրեսը հաստատեց Իրավունքների մասին րիլը, որում տեղ գտան

նորաստեղծ սահմանադրության առաջին տասը փոփոխությունները: Դրանք սահմանում էին խոսքի, մամուլի, ժողովների, դավանանքի ազատություն, ինչպես նաև՝ քաղաքացիներին պաշտպանում կամայականություններից:

Ըստ սահմանադրության, որը գործում է առ այսօր, ԱՄՆ-ը դարձավ **դաշնային հանրապետություն**: Նրա կազմի մեջ մտան միության ինքնիշխան նահանգները: Քաղաքական համակարգը կառուցվեց իշխանության տարանջատման սկզբունքով, որն ապահովում էր բարձրագույն իշխանության երեք զազաթների փոխգապումը և հակակշռումը: Դրան նպաստում էր նաև նահանգների լայն իրավունքների պահպանումը, ինչպես նաև կենտրոնական իշխանության ավելի մեծ լիազորությունների հստակ սահմանումը: Սահմանադրությամբ ստեղծվում էր ուժեղ կենտրոնական իշխանություն՝ միասնական ֆինանսահարկային համակարգով և ընդհանուր զինված ուժերով:

Բարձրագույն օրենսդիր մարմինը դարձավ Կոնգրեսը՝ բաղկացած **Սենատից** և **Ներկայացուցիչների սաղսանից**: Նրանց ընդունած օրենքները հաստատում էր գործադիր իշխանությունն իրականացնող **նախագահը**: Նախագահին և փոխնախագահին ընտրում էր նահանգների ընտրիչների կոլեգիան՝ չորս տարի ժամանակով: Իշխանության երրորդ զազաթը Գերագույն դատարանն էր, որի գլխավոր գործառույթներն էին բարձրագույն դատական իշխանության իրագործումը և սահմանադրության մեկնաբանությունը: Գերագույն դատարանի նախագահին և անդամներին նշանակում էր նախագահը: Դատավորներն իրենց պաշտոնում մնում էին այնքան ժամանակ, «քանի դեռ նրանց վարքն անբասիր է»:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հյուսիսային Ամերիկայում ենք են հիմնվել գաղութներ: Ուլքենը էին «ուխտավոր հայրերը»: XVIII դ. կեսին քանի անգլիական գաղութ կար Հյուսիսային Ամերիկայում: Ներկայացրեք ամերիկյան ժողովրդի ձևավորման գործընթացը:
2. Որո՞նք էին ամերիկյան ժողովրդի անկախության համար պայքարի նախադրյալները: Ինչո՞ւ և ինչպե՞ս սկսվեց պատերազմը Անգլիայի և գաղութների միջև: Ե՞րբ հաստատվեց Անկախության հռչակագիրը: Պարզաբանե՞ք այդ փաստաթղթի բովանդակությունը: Ո՞ր երկրները պաշտպանեցին ամերիկյան ժողովրդին: Ո՞ր պայմանագրով ձանաչում ստացավ Ամերիկայի Միացյալ Նահանգներ պետությունը:
3. Ներկայացրե՞ք սահմանադրության ընդունման գործընթացը: Ուլքենը կարևոր դեր խաղացին ԱՄՆ–ի սահմանադրության մշակման գործում: Կառավարման ի՞նչ համակարգ հաստատվեց ԱՄՆ–ում. գծապատկերի տեսքով ներկայացրե՞ք այն:

§ 2. ԱՄՆ–Ը XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հասարակական–քաղաքական զարգացումը: «Ամերիկյան հրաշքը», ինչպես հաճախ որակում են ԱՄՆ–ի առաջացումը, նոր ուժով շարունակվեց XIX դարում: Արդիականացման ուղիով ԱՄՆ–ն ավելի արագ էր զարգանում, քան Եվրոպայի առաջատար երկրները: Եվրոպայում հեղափոխություններն ընթանում էին հին կարգերի կողմնակիցների դեմ արյունալի ընդհարումների, նրանց սեփականության բռնագրավման և ահաբեկության հունով: Այլ էր իրավիճակն ԱՄՆ–ում: Անկախության պատերազմի ղեկավարները կարողացան համատեղել ազատության և սեփականության կարգախոսները: Ժողովրդի ազատասիրական ձգտումներն ուղղորդվեցին դեպի հակագաղութային արդարացի պայքարը: Հենց սկզբից ամերիկացիների գիտակցությունում հիմնավորվեց հասարակությունն օրինական ճանապարհով բարեփոխելու գաղափարը: Արդիականացումն ընթանում էր հասարակության զարգացման ներքին գործոնների ազդեցությամբ, այսինքն՝ բնական հունով: Ի տարբերություն մյուս

երկրների՝ ամերիկացիներին հարկ չեղավ հաղթահարելու մինչարդյունաբերական հասարակության ավանդույթները:

Ամերիկյան հասարակության համընդհանուր կայացման և զարգացման գործում հսկայական դեր խաղաց **1787 թ.** սահմանադրությունը:

Նոր սահմանադրության գործադրումից հետո՝ 1789 թ., առաջին նախագահ ընտրվեց **Ջ. Վաշինգտոնը:** Այդ ընթացքում քաղաքական դաշտում ուրվագծվեց երկու քաղաքական խմբավորում՝ **Ֆեդերալիստներ** և **հակաֆեդերալիստ–ժողովրդասիրներ:** Վերջիններս 1794 թ. սկսեցին կոչվել **հանրապետականներ:** Ֆեդերալիստները, որոնք համախմբված էին Վաշինգտոնի շուրջը, կողմ էին պետության կենտրոնացմանը: Վաշինգտոնը, որ մեծ հեղինակություն ուներ, նախագահ ընտրվեց նաև երկրորդ անգամ: Նա հրաժարվեց նախագահական ընտրություններին երրորդ անգամ մասնակցելուց, որը հետագայի համար դարձավ կարևոր քաղաքական նախադեպ: Վաշինգտոնը վարում էր հասարակության համախմբման

քաղաքականություն: Այդ նպատակով նա հանրապետական Թ. Ջեֆերսոնին նշանակեց պետական քարտուղար:

Երկու անգամ նախագահ ընտրվելով՝ **Թ. Ջեֆերսոնը** (1801–1809 թթ.) քաղաքական դաշտում կատարեց կարևոր փոփոխություն: Նա կառավարություն կազմեց միայն իր կուսակից հանրապետականներից: Այդ սկզբունքը հետագայում պահպանվեց մինչև XX դարի կեսերը: Ջեֆերսոնի քաղաքականությունը նպաստեց ֆեդերալիստների կուսակցության անկմանը: Դրանից հետո հանրապետականները քաղաքական դաշտում մնացին մեռակ:

Քաղաքական դաշտում Հանրապետական կուսակցությունը չկարողացավ երկար իշխել: **1828 թ.** այդ կուսակցությունը պառակտվեց, որի մի մասի հենքի վրա առաջացավ Ժողովրդավարական կուսակցությունը: Նրա առաջին թեկնածու Է. Ջեքսոնը երկու անգամ ընտրվեց նախագահ (1829–1837 թթ.): «Ջեքսոնի դարաշրջան» անունով է մնացել նրա նախագահությունը ԱՄՆ–ի պատմության մեջ: Այդ դարաշրջանին բնորոշ են քաղաքական կյանքի վերելքը և ժողովրդավարության զարգացումը: Առաջացան բազմաթիվ կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ: Հանրապետական կուսակցության մյուս մասը վերակազմավորվեց և ստացավ **ազգային հանրապետականներ** (կամ **վիգ**) անունը: Առաջին անգամ ստեղծվեցին բանվորական կուսակցություններ և արհմիություններ: Նախագահ Ջեքսոնը բանվորների տնտեսական պահանջներն արդարացի էր համարում և պաշտպանում էր նրանց: Նահանգների մեծ մասում ընտրական իրավունք ունեցողների թիվն ավելացավ: Բացի այդ, վերացվեցին պարտքի

չվճարման համար բանտարկությունը, նահանգների զորքերում պարտադիր ծառայությունը, պետական հիմնարկներում սահմանվեց 10–ժամյա աշխատանքային օր, ստեղծվեցին անվճար հասարակական դպրոցներ: Նախագահին հաջողվեց կանխել հասարակության պառակտումը և ամրապնդել սահմանադրական կարգը: Այս բոլորի համար Ջեքսոնը ձեռք բերեց «ժողովրդական նախագահի» համբավ:

Ստրկությունը և հասարակական ձգնաժամը: Է. Ջեքսոնից հետո ավելի էր դժվարանում հասարակության միասնության պահպանումը: Նոր նախագահների ներքին քաղաքականությունը չէր բավարարում ԱՄՆ–ի տարբեր տարածաշրջանների բնակչությանը: Հարավում գերիշխում էր ստրկական աշխատանքի վրա հիմնված ապրանքային տնտեսությունը՝ պլանտացիաները: Հյուսիսում, որտեղ գերակշռող էին ֆերմերային տնտեսությունները և արդյունաբերությունը, բնակչության մեծ մասը դեմ էր ստրկությանը: Արևմուտքի նոր յուրացվող հողերում տարածված էին և՛ ստրկությունը, և՛ ազատավարձու ֆերմերային տնտեսությունները:

Ստրկությունը խոչընդոտում էր ԱՄՆ–ի ժողովրդավարական և ազատ զարգացմանը: Ստրկության վերացման հարցը դարձավ երկրի ներքաղաքական պայքարի գլխավոր բովանդակությունը: Դեռևս XVIII դարի վերջին տասնամյակներին Անգլիայում և Ֆրանսիայում սկսվեց հասարակական շարժում ստրկության վերացման համար: Այն կոչվում էր **սթրիցիոնիզմ** (անգլ.՝ ոչնչացում, վերացում): Աթոլիցիոնիստներն ստեղծում էին կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, հրատարակում թերթեր: Ստրկությանը կողմնակից էին ոչ միայն Հարավի պլանտատորները, այլև



Արախան Լինկոլնը իր աշխատակազմի հետ քննարկում է ստրկատիրության վերացման ծրագիրը, 22.07.1862 թ.

այնպիսիք, որոնք համոզմունքներով *նաւիստ* էին: Դրանք այն մարդիկ էին, ովքեր համոզված էին, որ սպիտակ ռասան քարձր է, իսկ սևամորթը՝ ցածր:

Ստրկության հարցի շուրջ պայքարին մասնակցում էին կուսակցությունները: ԱՄՆ–ի Կոնգրեսում հասարակության պառակտումը չխորացնելու համար խուսափում էին ստրկության հարցի քննարկումից: Չնայած դրան՝ ներքաղաքական ճգնաժամը սուր ընթացք ստացավ XIX դ. կեսերին: Ստրկական անարդյունավետ աշխատանքի վրա հիմնված Հարավի տնտեսությունը հետ էր մնում արդյունաբերական Հյուսիսից: Այնինչ ստրկատերերը Արևմուտքի նոր յուրացվող հողերում շարունակում էին տարածել ստրկությունը: Դա առաջացրեց հասարակական լարվածություն և քաղաքացիական պատերազմի վտանգ: Այս պայմաններում ժողովրդավարական կուսակցությունը ժողովրդի մեջ կորցրեց վստահությունը, իսկ Ազգային հանրապետական կուսակցությունը քայքայվեց: Ստրկության հակառակորդները **1854 թ.** ստեղծեցին **Հանրապետական կուսակցությունը**: Նրանք

խնդիր դրեցին արգելելու ստրկության տարածումը, հովանավորելու հայրենական արդյունաբերությունը և քաղաքական իշխանությունից հեռացնելու ստրկատերերին: Չնայած դրան՝ նախագահական ընտրություններում հաղթեց ժողովրդավարների թեկնածուն, որն ամրապնդեց ստրկատերերի դիրքերը: Դա ավելի խորացրեց հասարակական ճգնաժամը:

Քաղաքացիական պատերազմը:

Ստրկության հիմնախնդրի շուրջ ամերիկյան հասարակության քաղաքական պառակտումն ի վերջո հանգեցրեց քաղաքացիական պատերազմի: Դեպքերն արագացան 1860 թ., երբ ԱՄՆ–ի 15–րդ նախագահ ընտրվեց ստրկության համոզված հակառակորդ, հանրապետական Ա. Լինկոլնը: Նա դեմ էր բռնի ուժով ստրկության արագ վերացմանը և համոզված էր, որ դա պետք է կատարվի ստրկատերերին փոխհատուցման և բարեփոխումների օրինական ձևնապահով: Եվ, չնայած դրան, Հարավի ստրկատերերը չցանկացան պետության ղեկավարի պաշտոնում տեսնել ստրկության հակառակորդի: Չսպասելով, որ նոր նախագահը

սկսի պաշտոնավարումը, նրանք խոռվություն բարձրացրին: Հարավի 11 նահանգներ ստեղծեցին առանձին պետություն, որը սկզբում կոչվում էր **Հարավի Կոնֆեդերացիա** (Համադաշնություն), ավելի ուշ՝ **Ամերիկայի Կոնֆեդերատիվ Նահանգներ**: Նոր պետության նախագահը հայտարարեց, որ ստրկությունը բնականոն վիճակ է սևամորթների համար: Այսպես ԱՄՆ-ը տրոհվեց երկու պետության:

1861 թ. Կոնֆեդերացիան ավարտեց բանակի ստեղծումը և սկսեց ռազմական գործողություններ: Լինկոլնը նրանց հայտարարեց խոռվարար և քաղաքացիներին կոչ արեց զինվորագրվելու բանակին ու պաշտպանելու երկրի սահմանադրական կարգը: Նախագահի կոչին արձագանքեցին հարյուր հազարավոր մարդիկ: Թեև Հյուսիսն ստեղծեց ավելի մեծ բանակ, բայց այն իր մարտունակությամբ զիջում էր Հարավի զորքին: Հենց դրանով են բացատրվում պատերազմի առաջին փուլում՝ 1861–1862 թթ., Հարավի հաջողությունները: Նույնիսկ ստեղծվեց մայրաքաղաք Վաշինգտոնի գրավման սպառնալիք: Հարավցիներին ոգևորում էր նաև այն, որ Անգլիան և Ֆրանսիան մտադիր էին օգնելու նրանց:

Նախագահ Լինկոլնը դիմեց վճռական քայլերի: **1862 թ.** նա հաստատեց Կոնգրեսի ընդունած **հունսթեյնների** (բառացի՝ տնամերձ) մասին օրենքը, ըստ որի՝ Արևմուտքում հող կարող էին ստանալ 21 տարին լրացած ամերիկացիները: Լինկոլնը նաև հայտարարեց, որ խոռվարար նահանգներում ստրուկները **1863 թ. հունվարի 1-ից** ազատ են արձակվում և զորակոչվում բանակ: Այս բոլորը երկրում

առաջացրեց մեծ խանդավառություն: Հազարավոր հողագործներ և ստրուկներ զինվորագրվեցին բանակին և նավատորմին: Արդյունքում՝ բեկում սկսվեց հոգուտ Հյուսիսի, և քաղաքացիական պատերազմի երկրորդ փուլում՝ 1863–1865 թթ., Հարավի բանակը պարտվեց: Հաղթանակի պատվին տեղի ունեցան տոնակատարություններ: Սակայն ուրախությունը երկար չտևեց, քանի որ Վաշինգտոնում ներկայացման ժամանակ վարձու մարդասպանը **1865 թ. սպրիլի 14-ին** սպանեց Լինկոլնին:

Պարտությունից հետո անգամ Հարավի ստրկատերերը չէին պատրաստվում հանձնվել: Ահա թե ինչու Հարավի վերակառուցումը տևեց տարիներ (1865–1877 թթ.), որը համընկավ հանրապետականներ Է. Ջոնսոնի և Ու. Գրանտի նախագահությանը: **1867 թ.** Կոնգրեսը հաստատեց **«Հարավի վերակառուցման օրենքը»**: Այն նպատակ ուներ սևամորթների քաղաքացիական իրավունքներն իրագործելու կյանքում: Բայց քանի որ դիմադրությունը մեծ էր, Հարավի նահանգներում մտցվեց ռազմական դրություն:

1865–1866 թթ. սահմանադրության մեջ կատարվեցին 13-րդ և 14-րդ փոփոխությունները, որոնցով օրինականացվեց ստրկության վերացումը:

Այս բոլորի արդյունքում Հարավի և Հյուսիսի միջև հասարակական–քաղաքական տարբերությունները վերացան: Միևնույն ժամանակ շատ բարեփոխումներ մնացին կիսատ կամ մոռացության մատնվեցին: Պահպանվեցին նաև սևամորթների նկատմամբ խտրականությունը և ռասիզմի բազմաբնույթ դրսևորումները:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արդիականացման ԱՄՆ-ի ուղին ինչո՞վ էր տարբերվում եվրոպականից: Սահմանադրության ընդունումից հետո ԱՄՆ-ի քաղաքական դաշտում ինչ խմբավորումներ ի հայտ եկան: Ո՞ւմ շուրջ էին համախմբված ֆեդերալիստները, ինչ քաղաքականություն էին նրանք վարում:
2. Տնտեսական ինչ շրջանների էր բաժանվում ԱՄՆ-ը: Ներկայացրե՞ք արդիցիոնիստական շարժումը: Ի՞նչ է ռասիզմը: Ինչպիսի՞ ընթացք ստացավ ստրկության հարցի շուրջ պայքարը:
3. Ինչո՞ւ ԱՄՆ-ը XIX դ. 60-ական թթ. քաղաքականապես տրոհվեց: Նկարագրե՞ք քաղաքացիական պատերազմի սկիզբն ու ընթացքը: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Լինկոլնը իրավիճակը շտկելու համար: Ի՞նչ հետևանքներ ունեցան դրանք:


§ 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

Արդյունաբերական զարգացման մեծ թռիչքը: Քաղաքացիական պատերազմից հետո ԱՄՆ-ի տնտեսական զարգացումն աննախադեպ ընթացք ստացավ: Երկրում կար երեք տնտեսական շրջան՝ արդյունաբերական հյուսիս-արևելք, ստրկական աշխատանքի վրա հիմնված գյուղատնտեսական հարավ և նոր յուրացվող արևմտյան հողեր: Նոր դարաշրջանում նրանց միջև տնտեսական տարբերություններն աստիճանաբար վերացան: Գյուղատնտեսության մեջ կատարվեցին արմատական փոփոխություններ: Նոր հողերի յուրացումը մինչև դարի վերջը կրկնապատկվեց: Իսկ հաջորդ դարի սկզբին ֆերմերային տնտեսությունների թիվը հասավ մոտ 1 միլիոնի: Դրանք մեծ մասամբ արտադրում էին հացահատիկ և եգիպտացորեն: Ամերիկացիները Եվրոպան հեղեղեցին էժան գյուղմթերքով: Գյուղատնտեսության այդպիսի արագ շուկայացումն ընդունված է անվանել **կապիտալիզմի զարգացման «ամերիկյան ուղի»:**

ԱՄՆ-ի արդյունաբերական զարգացումը նույնպես արագ էր ընթանում: Հարուստ բնական պաշարները, բարեն-

պաստ աշխարհագրական դիրքը, հարմար ծովային ուղիները նպաստեցին արդյունաբերության արագ ծավալմանը: Երկիրը չունեւ նաև ռազմական ներխուժման ձգտող հարևաններ: Դա հնարավորություն տվեց չափավորելու ռազմական ծախսերը: Բացի այդ, ԱՄՆ-ը խրախուսում էր Եվրոպայից կապիտալի ներմուծումը երկիր:

Արդյունաբերական հեղաշրջումն սկսվեց XIX դ. 40-ական թվականներին: Կարճ ժամանակում ԱՄՆ-ը դարձավ արդյունաբերական հզոր տերություն: Արդեն 1890 թ. արդյունաբերական արտադրության ծավալով երկիրն աշխարհում գրավում էր առաջին տեղը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին ԱՄՆ-ում արտադրվում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 36%-ը: 1914 թ. այնտեղ արդեն կար 1 մլն 763 հազար տարբեր տեսակի ավտոմեքենա: Այդ ցուցանիշը 3,6 անգամ մեծ էր, քան Արևմտյան Եվրոպայի երկրներում միասին վերցրած: Տնտեսության մեջ գերակշռող դարձավ ծանր արդյունաբերությունը: Միաժամանակ արդիականացվեց թեթև արդյունաբերությունը: ԱՄՆ-ում



Ալեքսանդր Բել

առաջին անգամ սկսեցին արտադրել չափաբերված բանվորական հագուստ (դրանցից աշխարհում մեծ տարածում գտավ ջինսը), ինչպես նաև կոշիկ, սպիտակեղեն և սննդամթերք: Գիտությամբ և գյուտարարությամբ զբաղվելը դարձավ ձեռներեցություն: Ամենուրեք ստեղծվում էին գիտահետազոտական հիմնարկներ, փորձակայաններ, որոնք սերտորեն կապված էին արտադրական ընկերությունների հետ: Նշանավոր գյուտարարներ էին *Թ. Էդիսոնը* (էլեկտրական և քիմիական սարքեր), *Ա. Բելը* (հեռախոս), *Ջ. Վեստինգհաուզը* (գնացքների սարքավորումներ) և այլք: ԱՄՆ-ում գերիշխում էր աշխատասիրության ոգին և աշխատանքի նկատմամբ համընդհանուր հարգանքը:

Միասնական ներքին շուկայի առաջացման կարևոր արդյունքներից մեկը նոր ձևաապարհների, ջրանցքների, նավահանգիստների և հատկապես երկաթուղիների կառուցումն էր: Այս բնագավառում ևս ԱՄՆ-ն առաջինն էր աշխարհում: Մի քանի երկաթուղային գծեր միացնում էին Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսի ափամերձ նահանգները: ԱՄՆ-ը առևտ-

րանավերի թվով (2300) զիջում էր միայն Մեծ Բրիտանիային (11 400):

Եվրոպական երկրների նման՝ ԱՄՆ-ում ևս սուր մրցակցության պայմաններում արդյունաբերությունը խոշորանում էր: Առաջացան բազմաթիվ մոնոպոլիաներ, որոնցից տարածված էին *տրեստները*: XX դարի սկզբին արդյունաբերության կենտրոնացումը և խոշորացումն ավելի մեծ չափեր ընդունեցին: Երկրի արդյունաբերական արտադրանքի 75%-ը բաժին էր ընկնում 445 տրեստների: Նրանց հետ մրցակցում էին հազարավոր մանր ու միջին ձեռնարկություններ: Խոշոր ձեռներեցները վարձում էին գործարարության կազմակերպման և ղեկավարման մեջ հատուկ մասնագիտացած մարդկանց՝ *մենեջերներին*: Առաջին անգամ հիմնվեցին մենեջերական դպրոցներ:

Հասարակության սոցիալական զարգացումը: ԱՄՆ-ում սոցիալական հարաբերությունները ձևավորվեցին արդյունաբերական հասարակությանը համապատասխան: Ինչպես Եվրոպայի առաջատար երկրներում, այստեղ ևս առաջացավ երկրներ հասարակություն՝ ձեռներեցներ և բանվորներ: Այս դասակարգերի, ինչպես նաև արտադրությունը սպասարկող մյուս դասերի առաջացման ընթացքն ԱՄՆ-ում ուներ որոշ առանձնահատկություններ: Դրանցից են Եվրոպային և մյուս երկրներին բնորոշ միջնադարյան դասակարգերի և դասերի բացակայությունը, քնիկների՝ հնդկացիների և սևամորթ ստրուկների՝ հասարակությանը միաձուլվելու բարդ գործընթացը, այլ երկրներից ներգաղթածների մեծ թիվը, կրոնական բազմազանությունը և այլն:

ԱՄՆ-ում ձեռներեցների դասակարգի ձևավորումը, որն ավարտվեց XIX դարի

վերջին, հենց սկզբից դժվարին ընթացք ունեցավ ստրկության պատճառով: Դրա վերացումից հետո պլանտատոր-ստրկատերերը դարձան ֆերմերներ և արդյունաբերողներ, ստրուկները՝ ազատավարձու բանվորներ: Նրանց միայն մի փոքր մասը հող ստացավ: Սևամորթները կազմեցին ստորին դասը, և ռասիզմը հետագա տասնամյակներում ոչ միայն պահպանվեց, այլև որոշ նահանգներում զարգացում ապրեց:

Նոր ձևավորված ձեռներեցների դասակարգը միատարր չէր: Վերնախավը կազմում էին գերհարուստները: Նրանք հիմնականում ծանր արդյունաբերության տարբեր ճյուղերում առաջացած տրեստների տերերն էին: Առաջիններից մեկը **Ջ. Ռոկֆելլերի** «Ստանդարտ Օյլ» տրեստն էր, որը տնօրինում էր երկրի նավթի մշակման 90-95%-ը: Շատ ձեռներեցներ և արդյունաբերողներ էին, և բանկիրներ: Ձեռներեցների հիմնական զանգվածը միջին դասն էր, որը վերակազմավորվեց և հզոր հասարակական ուժ դարձավ վերակառուցումից հետո: Դրանք մանր արտադրողներ էին, ֆերմերներ, առևտրականներ, ճարտարագետներ և այլք:

ԱՄՆ-ում հասարակության մի ստվար զանգվածը կազմում էր բանվորությունը: Բանվորների սոցիալական վիճակը Եվրոպայի համեմատությամբ բարվոք էր: Այստեղ որակյալ բանվորները ստանում էին ավելի բարձր աշխատավարձ: Սակայն բանվորների տնտեսական պայմանները դարձյալ բավարար չէին: Խտրական վերաբերմունք կար սևամորթների, կանանց և ներգաղթածների նկատմամբ. որոնց նույն աշխատանքի դիմաց ավելի քիչ էին վճարում ԱՄՆ-ի քաղաքացի սպիտակամորթ տղամարդկանց համեմատությամբ:



Ջոն Ռոկֆելլեր

Ժողովրդավարության կայացումը:

XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին ԱՄՆ-ում ձևավորվեց քաղաքացիական հասարակություն: Ամրապնդվեցին երկրի սահմանադրական կարգը, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունը: Մեծացավ երկրի հասարակական-քաղաքական կյանքին ժողովրդի մասնակցությունը: Հասարակության ստորին խավերին պատկանող շատ տաղանդավոր ամերիկացիներ դարձան խոշոր պետական գործիչներ, գորավարներ, գիտնականներ: Առաջացան հարյուրավոր հասարակական կազմակերպություններ, որոնք նպաստեցին ամերիկացիների ազգային ինքնագիտակցության վերելքին:

Ձևավորվեց **երկրասակցական համակարգը**: Երկրի քաղաքական կյանքում գերիշխում էին Հանրապետական և Ժողովրդավարական կուսակցությունները: Առաջնային դերը պատկանում էր հանրապետականներին, որոնք մեծ դեր էին խաղացել ստրկության վերացման գործում:

Կուսակցությունները գլխավորը համարում էին գործարարության խրախու-

տումը, հայրենական արդյունաբերության պաշտպանությունը օտար մրցակցությունից, դոլարի ոսկե ստանդարտի պահպանումը, որը սահմանվեց 1900 թ.:

Հանրապետականները և ժողովրդավարներն անտեսում էին սոցիալական բարեփոխումները: Կուսակցական վերնախավի համար քաղաքականությամբ զբաղվելը դարձավ շահավետ ձեռնարկություն: Մոնոպոլիաների չարաշահումների դեմ սկսվեցին միջին դասի, գլխավորապես ֆերմերների զանգվածային շարժումներ: Իրենց շահերի պաշտպանության համար կազմակերպություններ էին ստեղծում նաև բանվորները: Նրանք գլխավորապես պահանջում էին ութժամյա աշխատանքային օր:

XX դարի սկզբին հասարակական շարժումների ճնշման տակ երկու կուսակցությունների ներսում սկսվեց պայքար առաջադիմական բարեփոխումների համար: Դրանում մեծ դեր էր խաղում հանրապետական նախագահ **Թ. Ռուզվելտը** (1901–1909 թթ.): Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը ստացավ «Նոր ազգայնականություն» անվանումը: Այն նախատեսում էր բարձրացնել պետության դերը հասարակական կյանքում, պայքարել մոնոպոլիաների չարաշահումների դեմ: Պետության հսկողության տակ անցան խոշոր գործարքները, դեղորայքի և սննդամթերքի արտադրությունը, բնական պաշարների պահպանությունը և

այլն: Հատուկ օրենքով առաջին անգամ կարգավորվեց նախընտրական քարոզչությունը: Բանկերին և մոնոպոլիաներին արգելվեց փող հատկացնել պատգամավորության թեկնածուներին: Վերջիններս պարտավոր էին հայտարարություն տալ իրենց նախընտրական ծախսերի մասին:

Երբ Ռուզվելտից հետո հանրապետականները չափավորեցին բարեփոխումները, նախաձեռնությունն անցավ ժողովրդավարներին: 1912 թ. նախագահական ընտրությունում հաղթեց նրանց թեկնածու **Վ. Վիլսոնը**: Նրա բարեփոխումների ծրագիրը հայտնի է «Նոր ազատություն» անունով: Նոր ընդունված օրենքներից էին առաջադիմական եկամտահարկը, մոնոպոլիաների չարաշահումների դեմ պայքարի խստացումը, բանվորների արտադրական ապահովագրումը, կանանց և երեխաների աշխատանքային ժամերի կրճատումը և այլն: Տնտեսության համար մեծ նշանակություն ունեցավ Դաշնային բանկի, ինչպես նաև 12 պահուստային բանկերի ստեղծումը: Քաղաքական կյանքում կարևոր էր սենատորների ընտրության բարեփոխումը: Այսուհետ նրանց պետք է ընտրեր ոչ թե տեղական օրենսդիր ժողովը, այլ նահանգների ընտրողները՝ ընդհանուր քվեարկությամբ: Սահմանադրական փոփոխությունից հետո (1920 թ.) ընտրական իրավունք ստացան նաև կանայք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պարզաբանեք գյուղատնտեսության զարգացման ամերիկյան ուղու առանձնահատկությունները: ԱՄՆ-ում երբ սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը, ինչ արդյունքներ ունեցավ այն: Երկրի տնտեսության մեջ ո՞ր ձյուն էր գերակշռում: Մոնոպոլիաների ո՞ր ձևն էր տարածված ԱՄՆ-ում XX դ. սկզբին:
2. Ինչ պայմաններում էր ձևավորվում ամերիկյան ձեռներեցների դասակարգը: Ինչ խավերից էր այն կազմված:

3. Ո՞ր կուսակցություններն էին գերիշխում ԱՄՆ–ի քաղաքական կյանքում: Ի՞նչ էին նախատեսում Թ. Ռուզվելտի «Նոր ազգայնականություն» և Վ. Վիլսոնի «Նոր ազատություն» կոչվող բարեփոխումների ծրագրերը: Ներկայացրե՞ք նախագահ Թ. Ռուզվելտի դերը ԱՄՆ–ի հզորացման գործում:

§ 4. ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Լատինական Ամերիկայի անկախացումը: Կենտրոնական և Հարավային Ամերիկայում Նոր ժամանակների սկզբին հաստատվեց Իսպանիայի և Պորտուգալիայի գաղութային տիրապետությունը: Այս գաղութները XIX դարի կեսին ստացան **Լատինական Ամերիկա** ընդհանուր անվանումը: Այստեղ ևս, ինչպես ԱՄՆ–ում, եվրոպացիների հետնորդներն աստիճանաբար դարձան առանձին ազգեր: Դրանք ձևավորվեցին կրեոլների (իսպանացիների հետնորդներ), բնիկների (ինդկացիներ) և աֆրիկյան սևամորթների համաձուլումից:

Ամերիկյան հասարակության գլխավոր մասը դարձան կրեոլները, որոնք, ի տարբերություն գաղութարարների, Լատինական Ամերիկյան համարում էին իրենց հայրենիքը: Ամերիկյան ժողովրդի ձևավորմանը նպաստում էր ազգային արդյունաբերության և մշակույթի ստեղծումը: Մեծ տարածում ստացան լուսավորական գաղափարները: Սակայն այդ զարգացմանը խանգարում էին Իսպանիան և Պորտուգալիան: Նրանք ձգտում էին գաղութները դարձնելու սեփական արդյունաբերության հումքի աղբյուր, արգելում էին առևտուրն այլ երկրների հետ և այլն:

XIX դ. սկզբին անկախ հայրենիք ունենալու պայքարն սկսեց վերելք ապրել: Ամերիկա մայրցամաքի ժողովուրդների վրա մեծ տպավորություն թողեցին ԱՄՆ–ի կազմավորումը և Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Ազատագրության գաղափարն ընդգրկեց ամբողջ հասա-

րակությունը: **1804 թ.** Լատինական Ամերիկայում առաջինն անկախ պետություն դարձավ **Հաիթին:** 1810 թ., երբ Իսպանիան և Պորտուգալիան նապոլեոնյան ներխուժման հետևանքով հայտնվել էին դժվարին իրավիճակում, Նոր Իսպանիայից (Մեքսիկա) մինչև Չիլի և Լա Պլատա սկսվեց անկախության համար պատերազմը: Այն ընթացավ երկու փուլով:

Առաջին փուլում (1810–1815 թթ.) ազատագրական պայքարի կենտրոնը Վենեսուելան էր: Այստեղ անկախության համար պատերազմի առաջնորդներ դարձան **Ֆ. Միրանդան** և **Ս. Բոլիվարը:** Վենեսուելան հռչակվեց հանրապետություն, կատարվեցին բարեփոխումներ: Բոլիվարը երազում էր ստեղծել Լատինական Ամերիկայի երկրների համադաշնություն: Մեքսիկայում ազատագրական պայքարին մասնակցում էին նաև մեծ թվով ինդկացիներ և ստրուկներ: Սակայն գաղութները վերջնական ազատության չհասան: 1813–1815 թթ. Իսպանիան կարողացավ գաղութների մեծ մասում վերականգնել իր տիրապետությունը: Միայն Լա Պլատան պահպանեց համառ պայքարում ձեռք բերված անկախությունը:

Ազատագրական պայքարի երկրորդ փուլը, որը պսակվեց հաջողությամբ, ընթացավ 1816–1826 թթ.: Այս անգամ պայքարի գլխավոր օջախը դարձավ Լա Պլատան, որտեղից այն տարածվեց մյուս երկրներում: Իսպանիան չկարողացավ կասեցնել նոր պետությունների առաջացումը: 1816 թ. Վենեսուելայում Բոլիվարի



Տիրանսիկո Միրանդա

գլխավորությամբ նոր ապստամբություն սկսվեց: Նրա կամավորական բանակում կար 5 հազար եվրոպացի: Մի շարք հաղթանակներից հետո ժողովրդի կողմից «ազատարար» մականունը ստացած Բոլիվարի բանակը հերոսական անցում կատարեց Անդերի բարձր, ձյունոտ լեռներով և ազատագրեց Նոր Գրանադան: Այն միացավ Վենեսուելային և ստացավ *Մեծ Կոլումբիա* անունը: Այստեղ հաստատվեց հանրապետություն, որի նախագահ դարձավ Բոլիվարը: 1825 թ. նրա անունով կոչվեց Պերուի մի մասում առաջացած պետությունը՝ *Բոլիվիա*: 1826 թ. ընկավ իսպանացիների վերջին հենակետը:

Ազատագրական պատերազմի արդյունքում առաջացան 20 պետություններ՝ Մեքսիկան, Չիլին, Պերուն, Բրազիլիան, Պարագվայը, Ուրուգվայը, Արգենտինան և այլն: Կուբան համառ պայքարից հետո ազատության հասավ միայն 1902 թ.:

Լատինական Ամերիկայի արդիականացումը: Անկախության նվաճումից հետո Լատինական Ամերիկայի ժողովուրդները թևակոխեցին ազգային ինքնության հաստատման մի նոր փուլ: Դա դժվարին



Սիմոն Բոլիվար

գործընթաց էր, որին խանգարում էին գաղութային տիրապետության մնացուկները: Դեռ երկար ժամանակ պահպանվեցին ստրկությունը և հարկադիր աշխատանքը, հնդկացիների ճնշված վիճակը և մեկուսացվածությունը, մետրոպոլիայի հետ կապված խոշոր հողատեր կրեոլների արտոնությունները, բնակչության մեծ մասի աղքատությունը և իրավազրկությունը:

Լատինական Ամերիկայի երկրները զարգանում էին արդյունաբերական քաղաքակրթության ուղիով: Դրան նպաստեց դեռևս անկախության պատերազմի ժամանակ սկսված ստրկության վերացումը: Վերջինը Բրազիլիան էր, որտեղ ստրկությունն արգելվեց 1888 թ.: Արդյունաբերության զարգացմանը նպաստեց հարուստ հանքային պաշարների արդյունահանումը: XIX դ. կեսին արդյունաբերական հեղաշրջում սկսվեց Արգենտինայում, Բրազիլիայում, Մեքսիկայում, քիչ ուշ՝ մյուս երկրներում: Նույն ժամանակ սկսվեց երկաթուղիների կառուցումը: Լատինական Ամերիկան մասնագիտանում էր գյուղարտադրանքի (հատկապես հացահատիկի) մեջ, որով հեղեղեց եվրոպա-

կան շուկաները: Տնտեսության մեջ պահպանվեց օտար կապիտալի մեծ դերը:

Լատինական Ամերիկայի երկրների քաղաքական զարգացումն ընթանում էր ազատական–սահմանադրական կարգեր ստեղծելու ուղիով: Բոլոր երկրների պետական կարգը հանրապետական էր: Հիմնական օրենքները պատճենում էին ԱՄՆ–ի սահմանադրությունը՝ նախագահ, երկատյան օրենսդիր մարմին, փոքրաթիվ ընտրողներ: Իսկ Բրազիլիան, որ երկար ժամանակ կայսրություն էր, հանրապետություն դարձավ միայն 1891 թ. և ԱՄՆ–ի նմանությամբ կոչվեց Բրազիլիայի Միացյալ Նահանգներ:

Ի տարբերություն Եվրոպայի՝ Լատինական Ամերիկային բնորոշ էր մշտական ներքաղաքական անկայունությունը: Օրինակ՝ Մեքսիկայում 1824–1857 թթ. ընթացքում փոխվել էր ավելի քան 40 նախագահ: Մշտական էր իշխանության համար անգիջում պայքարը կառավարող վերնախավի ներսում, ինչպես նաև զինվորական խմբավորումների միջև: Դա պայքար էր ավանդական–պահպանողական և ազատական–առաջադիմական ուժերի միջև: Ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը սովորական էին սահմանադրությունների փոփոխումը (բոլորը միասին՝ 125 անգամ), բռնատիրությունների հաստատումը, քաղաքացիական պատերազմները, խռովությունները: Դեռևս անկախության պատերազմի տարիներին առաջացավ **կառուցիկոյի** երևույթը: Դա ուժեղ առաջնորդի գաղափարն էր, որը մշտապես դրսևորվում էր տարբեր երկրների ներքաղաքական ճգնաժամերի պահերին: Նման դեպքերում իշխանությունը ստանում էր անհատական քնույթ, սկսվում էր պետության ղեկի մոտ հայտնված առաջնորդի սրբացումը և այլն: Հասարակությունը

համոզված էր, որ այդպիսի առաջնորդին վիճակված է հատուկ առաքելություն, որը կարելի է կյանքի կոչել նրա արդարության և «ազգի հայր» դառնալու ճանապարհով:

Ներքին ճգնաժամերին նպաստում էին նաև նորանկախ պետությունների միջև տարածքային վեճերը, որոնք հաճախ վերածվում էին ռազմական քախումների: Այդպիսի պատերազմներին հաճախ միջամտում էին մեծ տերությունները, հատկապես Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և ԱՄՆ–ը:

Լատինական Ամերիկայում ԱՄՆ–ի առանձնահատուկ քաղաքականությունը հիմնավորեց նախագահ **Ջ. Մոնրոն**՝ 1823 թ. Կոնգրեսին հղված ուղերձում: **Մոնրոյի ուսմունքը**, ինչպես այն մնացել է պատմության մեջ, հռչակում էր «Ամերիկան՝ ամերիկացիներին» կարգախոսը: Դրանում դատապարտվում էր զաղութարարությունը, հիմնավորվում՝ ազգերի ինքնիշխանությունը: «Մոնրոյի ուսմունքի» շարունակությունը դարձավ **1889 թ.** ԱՄՆ–ի նախաձեռնությամբ առաջացած **պանամերիկյան շարժումը**: Նրա հիմքում ընկած է Ամերիկյան մայրցամաքի երկրների զարգացման ինքնուրույն ուղու և շահերի ընդհանրության գաղափարը: Այսպես սկիզբ դրվեց Ամերիկա մայրցամաքի երկրների ռազմաքաղաքական դաշինքին, որը գործում է մինչ օրս:

Լատինական Ամերիկայի սոցիալական և մշակութային զարգացումը: Անկախության ձեռքբերումը նպաստեց Լատինական Ամերիկայի սոցիալական ու մշակութային զարգացմանը: Անկախության նվաճման պահին այստեղ ապրում էր 17 միլիոն, XX դ. սկզբին՝ 63 միլիոն մարդ: Նրանք պատկանում են մարդկության երեք՝ մոնղոլոիդ (բնիկներ), եվրոպոիդ (Եվրոպայից ներգաղթածներ) և

ներգրո-ավստրալոիդ ռասաներին: Մեծացավ խառնածին բնակչության թիվը: Բնիկ մեծաքանակ ժողովուրդները (կեչուա, մայա, այմարա, կիչե և այլք) Մեքսիկայում, Պերուում, Չիլիում և մյուս երկրներում պահպանեցին իրենց լեզուն և մշակույթը: Նրանք շարունակեցին մնալ հասարակության ամենաընչագուրկ, իրավագուրկ և մեկուսացված մասը: Տարածաշրջանի բնակչության մեծ մասը՝ կրեոլներն ու նրանց հետ խառնված մյուս ռասաները, խոսում էին իսպաներեն (Բրազիլիայում՝ պորտուգալերեն): Նրանք, ինչպես նաև անգլիական, ֆրանսիական, հոլանդական գաղութների բնակչությունը, որոնք խոսում էին մետրոպոլիայի լեզուներով, սոցիալական առումով բազմաշերտ էին:

Լատինական Ամերիկայի բնակչության մեծ մասի (90%) կրոնը կաթոլիկությունն էր: Անկախության նվաճումից հետո խղճի ազատությունը դարձավ սահմանադրական օրենք: Ավելի ուշ մի շարք երկրներում եկեղեցին օրենքով անջատ-

վեց պետությունից: Եկեղեցին իր գործունեությամբ փորձում էր մեղմել սոցիալական հակամարտությունները:

Անկախության նվաճումից հետո Լատինական Ամերիկայի ժողովուրդները ստեղծեցին յուրահատուկ մշակույթ: Այն վերելք ապրեց XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ կայունացավ ներքաղաքական կյանքը: Ընդլայնվեց կրթական համակարգը, ստեղծվեցին մի քանի տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտական հիմնարկներ: Լույս էին տեսնում մեծ քանակությամբ թերթեր և ամսագրեր: Հատկապես մեծ առաջընթաց ապրեց գեղարվեստական գրականությունը: Առաջացավ «կրեոլիզմ» կամ «ամերիկանիզմ» գրական ուղղությունը, որի հետևորդները փորձում էին ձգրիտ պատկերել լատինամերիկյան երկրների յուրահատուկ կյանքը: Լատինական Ամերիկայի բնիկ ժողովուրդներն իրենց հերթին ստեղծեցին ազգային լեզուներով գեղարվեստական գրականություն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե XIX դ. կեսին ո՞ր տարածքներն ստացան Լատինական Ամերիկա անվանումը: Պարզաբանե՛ք XIX դ. սկզբին Լատինական Ամերիկայում սկսված անկախության համար պայքարի նախադրյալները: Առաջինը ո՞ր երկիրը հասավ անկախության:
2. Քանի՞ փուլով է ընթացել Լատինական Ամերիկայի անկախության պայքարը: Ընդհանրացրե՛ք Նոր շրջանում այս տարածաշրջանի երկրների ազատագրական պայքարի արդյունքները:
3. Անկախացումից հետո ի՞նչ ուղիով զարգացան Լատինական Ամերիկայի երկրները: Կառավարման ի՞նչ համակարգեր ստեղծվեցին նորաստեղծ պետություններում: Բացատրե՛ք կառուցիվոյի երևույթը: Ի՞նչ նպատակ էր հետապնդում «Մոնրոյի ուսմունքը»:
4. Ներկայացրե՛ք Լատինական Ամերիկայի ժողովրդագրական պատկերը XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Ո՞ր կրոնն է գերիշխում Լատինական Ամերիկայի երկրներում:

ԲԱԺԻՆ Բ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

§ 1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ

Օսմանյան կայսրության տրոհման սկիզբը: XVII դարի կեսերին Օսմանյան կայսրությունը դեռևս տիրում էր ահռելի տարածքի՝ վերահսկելով Արևմուտք-Արևելք կարևորագույն ռազմավարական և առևտրական ուղիները և հումքի հարստագույն աղբյուրները: Սակայն այն խիստ անկայուն քաղաքական միավոր էր: Օսմանյան սուլթաններին այդպես էլ չհաջողվեց ստեղծել կոտ քաղաքական, տնտեսական և մշակութային կառույց, որը թույլ կտար ապահովել երկրի ներքին կայունությունը: Դրան խոչընդոտում էր նաև այն, որ թուրքերը կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Այդ պայմաններում տերության միասնականությունը հնարավոր էր պահպանել միայն խոշոր ռազմական ուժի առկայության դեպքում: Օսմանյան բանակի հիմքը կազմող ռազմավարատիրական խավն աստիճանաբար կորցնում էր իր նախկին դերը, ինչը արտացոլվեց բանակի մարտունակության վրա:

Վեստֆալյան խաղաղության պայմանագրից հետո Օսմանյան կայսրության դերը միջազգային ասպարեզում սկսեց նվազել: Թուրքերը անհաջողություններ կրեցին Ավստրիայի և Ռուսաստանի դեմ պատերազմներում: Հատկապես ծանր էր պարտությունը Վիեննայի մոտ 1683 թ.: 1684–1686 թթ. տերության դեմ ձևավորվեց «Սրբազան լիգան»՝ Ավստրիայի,

Լեհաստանի, Վենետիկի և Ռուսաստանի մասնակցությամբ: Ավստրիացիները մտան Սերբիա, և միայն Անգլիայի ու Հոլանդիայի ճնշման տակ **1699 թ.** կնքվեց *Կարլովիցի խաղաղության պայմանագիրը*, որը որոշ չափով նվազեցրեց թուրքերի տարածքային կորուստները: Այնուամենայնիվ, թուրքերը կորցրին Արևելյան Հունգարիան, Տրանսիլվանիան և Խորվաթիան:

1724 թ. Ռուսաստանի հետ կնքված պայմանագրով թուրքերը հրաժարվեցին մերձկասպյան շրջանների նկատմամբ իրենց նկրտումներից: Կորուստներ եղան նաև Սեֆյան Իրանի դեմ պատերազմում: Արտաքին ասպարեզում տերության գլխավոր հակառակորդներն էին Ավստրիան և Ռուսաստանը: Այս երկուսի դեմ հակամարտությունից հաջողությամբ օգտվում էին Անգլիան և Ֆրանսիան, որոնք ամրապնդում էին իրենց ազդեցությունը սուլթանի վրա՝ ընդարձակելով տնտեսական դիրքերն Արևելյան Միջերկրականում:

Տերության դիրքերի վրա հատկապես ծանր հետևանքներ ունեցավ 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը: *Քյուչուք-Կայնարջայի պայմանագրով* Ղրիմը կցվեց Ռուսաստանին: 1787–1891 թթ. նոր պատերազմից հետո ռուս-թուրքական սահմանը վերաձևվեց հոգուտ ռուսների: Թուրքերը ստիպված

էին հրաժարվել Վրաստանի նկատմամբ նկրտումներից, իսկ Մոլդովայի և Վալախիայի նկատմամբ հաստատվեց Ռուսաստանի հովանավորությունը:

Այսպիսով՝ XVII–XVIII դարերում Օսմանյան տերությունը պարբերաբար կորցնում էր իր տիրույթները՝ վերածվելով եվրոպական տերությունների արտաքին քաղաքական ծրագրերի իրականացման դաշտի: Այդ գործընթացը, որը XVIII դարի երկրորդ կեսին ձևակերպվեց որպես *Արևելյան հարց*, հետագայում ավելի խորացավ: Գնալով աճում էր տերության կախվածությունը եվրոպական պետություններից:

Վերջիններս լայնորեն օգտագործում էին Օսմանյան տերության հպատակ ժողովուրդների, հատկապես քրիստոնյաների ազգային–ազատագրական նկրտումները:

Օսմանյան կայսրությունը բարենորոգումների շրջանում: XVIII դ. վերջերին Օսմանյան կայսրությունը Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցության ներքո թևակոխեց նոր դարաշրջան: Դա կայսրության համար սոցիալ–տնտեսական ու քաղաքական անկման, տարածքային կորուստների, հպատակ ժողովուրդների ապստամբությունների և, վերջապես, ցեղասպանության շրջան էր: Կառավարության փորձերը՝ սահմանափակ արևմտամետ բարենորոգումների միջոցով ապահովել կայսրության գոյատևումը, մնացին անարդյունք:

Կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդները, ի տարբերություն իշխող թուրք ժողովրդի, ավելի պատրաստ էին Ֆրանսիական մեծ հեղափոխության առաջադեմ ազատական և ժողովրդավարական գաղափարների ընկալմանը: Դա խթանեց թուրքական լծի դեմ ուղղված

նրանց ազգային–ազատագրական պայքարի աճը:

Այդ պայմաններում ծանրացավ Օսմանյան կայսրության միջազգային դրությունը: Արևելյան հարցը դարձավ միջազգային հարաբերությունների կարևորագույն ուղղություններից մեկը:

Ստեղծված ծանր իրավիճակից թուրքական վերնախավը փորձեց դուրս գալ՝ բռնելով բարենորոգումների ճանապարհը: Դրանով նա հույս ուներ ուժեղացնելու բանակը և որոշ զիջումների միջոցով թուլացնելու հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարը:

XVIII դ. վերջին բարենորոգումների սկիզբը դրեց սուլթան *Սելիմ III-ը*: Եվրոպական օրինակով ստեղծվեցին սահմանափակ թվով նոր զինվորական ստորաբաժանումներ, հիմնադրվեցին ռազմական ուսումնարաններ: Սուլթան *Մահմուդ II-ը* 1826 թ. վերացրեց օսմանյան բանակի ենիչերիական ստորաբաժանումները: Սակայն այդ բարենորոգումները չուժեղացրին օսմանյան բանակը: 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտվեց և ստիպված էր ճանաչել Հունաստանի անկախությունը:

1839 թ. ազդարարվեց արևմտամետ բարենորոգումների նոր փուլի մասին: Այն ստացավ *թանգիմաթ* անվանումը (1839–1876): Այդ բարենորոգումները, որոնք նախատեսում էին ոչ մուսուլմանների իրավահավասարություն մուսուլմանների հետ, չհասան իրենց նպատակին:

1853 թ. Ռուսաստանը պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ, որի իրական նպատակն էր նրա տարածքային անդամահատումը: Անգլիան ու Ֆրանսիան աջակցեցին Օսմանյան կայս-



Աբդուլ Համիդ II

րությանը: Ակիզք առած Ղրիմի պատերազմը ավարտվեց 1856 թ. Ռուսաստանի պարտությամբ: Արդյունքում՝ Օսմանյան կայսրությունում ուժեղացավ Անգլիայի ու Ֆրանսիայի ազդեցությունը:

Թանգիմաթի բարենորոգումներն ի վիճակի չեղան ապահովելու երկրի տնտեսական զարգացումը և դանդաղեցնելու կայսրության քայքայման գործընթացը: Չհաջողվեց նաև թուլացնել հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները:

1876 թ. բռնկվեց բուլղարների խոշոր ապստամբությունը, որը թուրքական իշխանություններին մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել: Բուլղարների ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարելու նպատակով կառավարությունն ընդունեց գործողությունների ծրագիր՝ իր էությամբ ցեղասպանական: Այն չհաջողվեց իրականացնել, քանի որ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում սկիզբ դրվեց Բուլղարիայի անկախացմանը:

Դժգոհությունը համակել էր նաև իշխող թուրքական տարրին, ինչի արդյուն-

քում առաջացավ «նոր օսմանցիների» ընդդիմադիր շարժումը: Այն գտնում էր, որ կայսրության տարածքային ամբողջականության պահպանման միակ միջոցը սուլթանի իշխանության սահմանափակումն է և սահմանադրության հոշակումը:

Աբդուլ Համիդ II-ի զուլյունի շրջանը:

1876 թ. Օսմանյան կայսրության ճգնաժամը սուր բնույթ ընդունեց: Նոր գահ բարձրացած *Աբդուլ Համիդ II-ը* (1876–1909) իր հրովարտակով ազդարարեց սահմանադրության ընդունումը: Հաջորդ տարի տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց մասնակցեցին կայսրության բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները: Գումարվեց առաջին օսմանյան խորհրդարանը, որտեղ ներկայացված էին նաև քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում՝ հայերը:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիները Օսմանյան կայսրության պատմության ամենադաժան շրջաններից են: 1878 թ. նա ցրեց խորհրդարանը և հաստատեց իր միանձնյա կառավարման բռնատիրական համակարգը: Լինելով կասկածամիտ և վախկոտ՝ նա ստեղծեց հզոր գաղտնի ոստիկանական ծառայություն և հաստատեց խիստ գրաքննություն: Վերջինիս գործունեությունը շատ դեպքերում վերածվում էր զավեշտի: Այսպես, օրինակ՝ արգելված էր օգտագործել H_2O բանաձևը, քանի որ այն կարող էր հասկացվել որպես «Համիդ II-ը հավասար է գրոյի»: Պատահական չէ, որ ժամանակակիցներն Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանը բնութագրում էին որպես «զուլյուն», ինչը կարելի է թարգմանել որպես զանգվածային ահաբեկում և կոտորած, իսկ իրեն անվանում էին «արյունարբու» կամ «կարմիր սուլթան»:

Սուլթանը վերջ դրեց արևմտամետ քարենորոգումների քաղաքականությանը և որդեգրեց *համահալալականության* (պանիսլամիզմ) քաղաքականությունը: Նա օգտագործեց այն հանգամանքը, որ թուրք սուլթանները դեռևս XVI դարում բռնազավթել էին խալիֆայի՝ աշխարհի բոլոր մուսուլմանների առաջնորդի տիտղոսը: Սուլթանը ձգտում էր կայսրության ներսում իր քաղաքականության հենարան դարձնելու մուսուլմաններին, ինչպես նաև համախմբել աշխարհի մուսուլման ժողովուրդներին Օսմանյան կայսրության ղեկավարության ներքո:

Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությունը հենվում էր երկրի ամենահետամնաց սոցիալական ուժերի վրա: Նրա կառավարման շրջանում ավելի ակնառու դարձավ Օսմանյան կայսրության հետամնացությունը, ուժեղացավ նրա կախվածությունն արտասահմանյան կապիտալից:

XIX դ. 70-ական թթ. միջազգային բնույթ ձեռք բերեց Հայկական հարցը, որը, սկզբում լինելով Արևելյան հարցի քաղկացուցիչ մասը, հետզհետե դարձավ միջազգային հարաբերությունների կարևորագույն խնդիրներից մեկը: Աբդուլ Համիդը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը կասեցնելու նպատակով ստեղծեց քրդերից կազմված «համիդիե» հրոսակախմբերը: Վերջիններս, ահ ու սարսափ տարածելով հայ խաղաղ բնակչության շրջանում, ստիպում էին արտագաղթել հայրենի հողերից՝ այդպիսով նպաստելով Արևմտյան Հայաստանի հայաթափմանը:

1894–1896 թթ. թուրքական իշխանություններն անցան հայ ժողովրդի գանգվածային կոտորածների քաղաքականության իրագործմանը: Նրանց նպատակն

էր հայերին ֆիզիկապես ոչնչացնել իրենց պատմական հայրենիքում և այդպիսով «լուծել» Հայկական հարցը: Այդ քաղաքականությանը զոհ գնացին շուրջ 300 հազար հայեր:

Օսմանյան կայսրությունը երիտթուրքերի իշխանության շրջանում: Աբդուլ Համիդ II-ի բռնատիրական քաղաքականությունը դժգոհություն էր առաջացրել նաև թուրքական միջավայրում: Ստեղծվեց գաղտնի կազմակերպություն, որի նպատակն էր գահընկեց անել նրան և վերահաստատել սահմանադրությունը: Այդ կազմակերպության անդամներն իրենց անվանում էին *երիտթուրքեր*: Նրանք իրենց կազմակերպության մեջ ներգրավեցին նաև օսմանյան բանակի բազմաթիվ սպաների, որոնք և **1908 թ. հուլիսին** կատարեցին հեղաշրջում՝ ստիպելով սուլթանին հռչակել սահմանադրության վերականգնումը:

Երիտթուրքական կուսակցությունը, հաղթելով խորհրդարանական ընտրություններում, եկավ իշխանության: Սկզբում երիտթուրքերը պահեցին Աբդուլ Համիդ II-ին գահի վրա, սակայն երբ վերջինս 1909 թ. փորձեց կազմակերպել հեղաշրջում, գահընկեց արին նրան: Գահ բարձրացավ սուլթան *Մեհմեդ Ռեշատ V-ը*, որը գտնվում էր երիտթուրքերի ազդեցության ներքո:

Չկարողանալով լուծում տալ երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդիրներին՝ երիտթուրքերը իրենց քաղաքականության հիմնաքարը դարձրին հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարը: Սկսած 1911 թ.՝ պաշտոնական գաղափարախոսություն հռչակվեց *պանթուրքիզմը*՝ ծայրահեղ շովինիստական քաղաքական-հասարակական

ուամունքը: Այն քարոզում էր ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման անհրաժեշտությունը: Արտաքին քաղաքականության ոլորտում պանթյուրքիզմը որպես գլխավոր նպատակ էր հռչակում աշխարհի թյուրքալեզու ժողովուրդների միասնական պետության ստեղծումը օսմանյան Թուրքիայի ղեկավարության ներքո:

Երիտթուրքերի տիրապետության տարիներին ազգային-ազատագրական շարժումն ընդլայնվեց և ներառեց նաև մուսուլման ժողովուրդներին՝ ալբանացիներին և արաբներին: Շարունակվեցին նաև ռազմական պարտությունները և տարածքային կորուստները: Մասնավորապես Տրիպոլիտանական և երկու Բալկանյան պատերազմներն ակնառու դարձրին Օսմանյան կայսրության թուլությունը:

Փորձելով իրականացնել պանթյուրքական ծրագրերը՝ երիտթուրքերի պարագլուխները միացան Գերմանիայի կողմից ղեկավարած դաշինքին և ներ-

քաշեցին Օսմանյան կայսրությանը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Նրանց գլխավոր նպատակն էր ռուսներից նվաճել Կովկասը, սակայն 1914 թ. սկսված հարձակումը ավարտվեց թուրքական բանակի ջախջախիչ պարտությամբ: Ռուսական բանակը սկսեց առաջանալ Արևմտյան Հայաստանի տարածքում:

Երիտթուրքական իշխանությունները համարեցին, որ պատերազմի պայմաններում ստեղծվել են բարենպաստ նախադրյալներ վաղուց ի վեր նախապատրաստած հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար: Մարդկության դեմ ուղղված այդ ծանրագույն պետական հանցագործությանը՝ Մեծ եղեռնին, զոհ գնացին 1,5 միլիոն հայեր:

Պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունը պարտություն կրեց: Երիտթուրքերի պարագլուխները, որոնք երկիրը ներքաշել էին պատերազմի մեջ և իրականացրել Հայոց ցեղասպանությունը, փախան արտասահման:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՞ք Օսմանյան կայսրության դրության առանձնահատկությունները XVII–XVIII դարերում: Վերհիշե՞ք, թե ինչ է Արևելյան հարցը, և երբ է այն առաջացել:
2. Ո՞վ նախաձեռնեց արևմտամետ բարենորոգումների միջոցով Օսմանյան կայսրության դրությունը բարելավելու քայլերը: Ի՞նչ է թանգիմաթը, ինչո՞ւ այն հաջողություն չունեցավ:
3. Բացատրե՞ք ինչ է գուլյումի շրջանը: Աբդուլ Համիդ II–ն ինչո՞ւ որդեգրեց համախլամականության քաղաքականություն: Ո՞ր ուժերն էին Աբդուլ Համիդ II–ի քաղաքական հենարանը: Ինչպե՞ս է բնութագրվում հայերի նկատմամբ նրա քաղաքականությունը:
4. Ովքե՞ր էին երիտթուրքերը: Ի՞նչ արդյունք ունեցավ երիտթուրքական շարժումը: Ի՞նչ է պանթյուրքիզմը: Ներկայացրե՞ք երիտթուրքերի՝ հայերի հանդեպ քաղաքականության էությունը և նպատակը:

§ 2. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Նապոլեոնի եգիպտական արշավը:
Նոր ժամանակների սկիզբը արաբա-

կան աշխարհում ազդարարեց գեներալ Նապոլեոն Բոնապարտի կողմից կազ-

մակերպված ֆրանսիական արշավանքը Եգիպտոսի դեմ: Այդ ժամանակ Եգիպտոսը գտնվում էր մամլյուք բեյերի իշխանության ներքո, որոնք ենթարկվում էին օսմանյան սուլթաններին: 1798 թ. ֆրանսիական 30 հազարանոց բանակն ափ իջավ Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստում: Նապոլեոնը հրապարակեց հրովարտակ, որտեղ եգիպտացիներին խոստացավ ազատագրել նրանց մամլյուքների լծից և հաստատել արդար կառավարման համակարգ: Ապա նա շարժվեց դեպի մայրաքաղաք Կահիրե: Ֆրանսիական բանակը, հեշտությամբ պարտության մատնելով վառ զինված և անկազմակերպ մամլյուքյան զորքերին, գրավեց Կահիրեն: Եգիպտոսը հայտնվեց ֆրանսիացիների իշխանության տակ:

Շեռագայում Նապոլեոնը շարունակեց հարձակումը Սիրիայի վրա, սակայն հանդիպելով թուրքական և անգլիական զորքերի համառ դիմադրությանը՝ ստիպված էր նահանջել Եգիպտոս: Նա, հասկանալով, որ ֆրանսիական տիրապետությունը Եգիպտոսում դատապարտված է պարտության, լքեց իր բանակը և վերադարձավ Ֆրանսիա: Օգտվելով դրանից՝ թուրքական և անգլիական զորքերին հաջողվեց 1801 թ. վերջնական պարտության մատնել ֆրանսիացիներին, որոնց զորքերի մնացորդները լքեցին Եգիպտոսը:

Եգիպտոսի արաբները չընդունեցին ֆրանսիացիների իշխանությունը և ծավալեցին զինված դիմադրական շարժում: Այն ուղեկցվում էր ազատագրական գաղափարների տարածմամբ:

Այդպիսով՝ ֆրանսիացիների կողմից Եգիպտոսի գրավումը մի կողմից՝ նպաստեց այդ երկրի արաբ բնակչության միջավայրում ազատագրական նկրտումների առաջացմանը, մյուս կողմից՝ հնարավոր



Մուհամեդ Ալի փաշա

ություն տվեց արաբներին ծանոթանալու Ֆրանսիական մեծ հեղափոխության առաջադեմ գաղափարներին:

Մուհամեդ Ալիի կառավարումը Եգիպտոսում: Ֆրանսիացիների հեռանալուց հետո Եգիպտոսում մնացին թուրքական, անգլիական և մամլյուքների բանակները: Անգլիացիները, օգնություն ցույց տալով մամլյուքներին, փորձում էին օգտագործել նրանց թուրքերի դեմ և հաստատել իրենց գերիշխանությունը Եգիպտոսում: Երբ 1803 թ. անգլիացիները դուրս բերեցին իրենց զորքերը, պայքարը թուրքերի և մամլյուքների միջև ծայրաստիճան սրվեց: Դրանից օգտվեց թուրքական բանակում ծառայող ազգությամբ ալբանացի **Մուհամեդ Ալին**, որը 1805 թ. Եգիպտոսում եկավ իշխանության: Օսմանյան սուլթանը ստիպված էր ճանաչել նրան Եգիպտոսի փաշա:

Մուհամեդ Ալիի իշխանության շրջանում (1805–1840) Եգիպտոսում կարևոր բարենորոգումներ իրականացվեցին գյուղատնտեսության, ռազմական, պետական կառավարման և մշակութային

ուրրտներում: Դրանք նպաստեցին երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, մշակութային վերածննդին և բանակի հզորացմանը:

Օգտագործելով այդ բարենպաստ պայմանները՝ Մուհամեդ Ալին սկսեց իրականացնել հզոր միասնական արաբական պետության ստեղծման իր ծրագիրը: 1831 թ. նրա բանակը գրավեց Սիրիան և սկսեց առաջխաղացումը Փոքր Ասիայում: Թուրքական սուլթանը Մուհամեդ Ալիին հայտարարեց ապստամբ և փորձեց կանգնեցնել նրա հարձակումը, սակայն թուրքական բանակը կրեց մի շարք ծանր պարտություններ, և 1832 թ. Եգիպտական զորքերը հայտնվեցին Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի մատույցներում:

Թվում էր, թե Օսմանյան կայսրությունը դատապարտված է: Սակայն ռուսական ռազմական օգնության շնորհիվ այն փրկվեց: Մուհամեդ Ալին ստիպված էր կնքել զինադադար և հետ քաշել իր զորքերը Փոքր Ասիայից: Նա ճանաչեց սուլթանի գերիշխանությունը՝ փոխարենը պահպանելով իր իշխանությունը Եգիպտոսում և Սիրիայում:

Հետագայում, ձգտելով պահպանելու Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, եվրոպական երկրները Անգլիայի ղեկավարությամբ կազմակերպեցին զինված միջամտություն հօգուտ թուրքերի և պարտության մատնեցին Մուհամեդ Ալիին: Այդպիսով՝ նրա ծրագիրը՝ ստեղծելու անկախ միասնական արաբական պետություն, չիրականացավ: 1841 թ. Եգիպտոսն անցավ անգլիացիների հսկողության տակ: 1882 թ. նրանք գրավեցին այդ երկիրը և ստեղծեցին այստեղ իրենց խոշոր բանակը:

Լուսավորչական շարժումը: XIX դ. երկրորդ կեսից Սիրիայի տարածքում, որի մեջ մտնում էր նաև ժամանակակից Լիբանանը, սկիզբ առավ լուսավորչական շարժում: Դրա ղեկավարներն առաջ քաշեցին կրթության տարածման միջոցով արաբ ժողովրդի վերածննդի գաղափարը: Այդ շարժման առաջացմանը նպաստեցին թանգիմաթի արևմտամետ բարենորոգումները և սահմանադրության հռչակումը Օսմանյան կայսրությունում: Մեծ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ 1861 թ. Լիբանանը ֆրանսիացիների օգնությամբ ձեռք բերեց ինքնավարություն Օսմանյան կայսրության կազմում:

Արաբական վերածննդի գործիչները հանդես էին գալիս արաբերենի, արաբական գրականության, մշակույթի զարգացման օգտին, քարոզում էին հայրենասիրական գաղափարներ: Նրանք հիմնադրում էին դպրոցներ, որտեղ ուսուցումն ընթանում էր արաբերենով, հրապարակում էին արաբերեն պարբերականներ: Լուսավորիչները հանդես էին գալիս նաև կրոնական թշնամանքի, անհանդուրժողականության և կրոնական մոլեռանդության, ինչպես նաև ավաղատիրական նախապաշարումների դեմ: Նրանք կոչ էին անում արաբ մտավորականությանը ծանոթանալու առաջադեմ եվրոպական ուսմունքներին և քարոզում էին ազատական գաղափարներ: Այդ շարժման ակա՛նավոր ներկայացուցիչներից էր **Բուրբուսայ-Բուրթանին:**

Հետագայում այդ շարժումը տարածվեց նաև Եգիպտոսում: Այստեղ նա հանդես եկավ ավելի շատ իսլամի արդիականացման և համախլամականության տեսքով: Արաբական վերածննդի այդ ուղղության ներկայացուցիչները կարևորում էին պայքարը եվրոպական ազդեցության

դեմ: Նրանց կարծիքով՝ քարենորոգումներ կատարելով իսլամական կրոնում և հարմարեցնելով այն ժամանակակից պահանջներին՝ հնարավոր կլինի մուսուլմանական աշխարհը համախմբել համաիսլամականության դրոշի ներքո: Համաիսլամականության գաղափարախոսն էր **Ջարալ էդ Դին Աֆղանին:**

Հետզհետե արաբ լուսավորիչների միջավայրում սկսեցին ձևավորվել արաբական ազգայնականության գաղափարները: Կոչեր էին հնչում զինված ապստամբության միջոցով ազատվելու թուրքական լծից և վերականգնելու միասնական արաբական հայրենիքի անկախությունը:

Արաբների ազգային-ազատագրական պայքարը թուրքական լծի դեմ: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից և սահմանադրության վերականգնումից հետո արաբական շարժումը Օսմանյան կայսրությունում նոր վերելք ապրեց: Սկզբնական շրջանում արաբական ղեկավարները հույս ունեին հասնելու ինքնավարության՝ բարենորոգված Օսմանյան կայսրության շրջանակներում: Սակայն երբ պարզ դարձավ, որ երիտթուրքերը անց են կացնում պանթուրքական քաղաքականություն ազգային հարցում, արաբներն սկսեցին ստեղծել գաղտնի կազմակերպություններ: Վերջիններս հանդես էին գալիս անկախության օգտին: 1913 թ. սկսած՝ գաղտնի «Ալ Ահր» («Պատգամ») կազմակերպությունը, որի մեջ մտնում էին հիմնականում օսմանյան բանակում ծառայող արաբ սպաներ, սկսեց նախապատրաստվել զինված ապստամբության: Նախատեսվում էր, որ ապստամբությունը պետք է սկիզբ առներ Իրաքում և հետագայում տարածվեր այլ արաբական երկրներում: Թուրքական իշխանություններին

հաջողվեց բացահայտել այդ կազմակերպությունը և կանխել ապստամբությունը:

Առաջին համաշխարհային պատերազմը ավելի սրեց թուրք-արաբական հակամարտությունը: 1915–1916 թթ. թուրքական իշխանությունները ձեռնարկեցին արյունալի պատժիչ միջոցառումներ արաբ ազգայնականների դեմ: Մահապատժի ենթարկվեցին 800–ից ավելի արաբական ազգային-ազատագրական շարժման ղեկավար գործիչներ:

Սակայն նույնիսկ այդ ծանր հարվածը չընկճեց արաբներին: **1916 թ. Հիջազում**, որտեղ գտնվում էին իսլամի սրբազան քաղաքներ Մեքքան և Մեդինան, անգլիացիների օգնությամբ սկսվեց հակաթուրքական ապստամբություն: Օսմանյան կայսրությունը, ներգրավված լինելով պատերազմի մեջ, հնարավորություն չուներ ձնշելու ապստամբությունը: Հիջազի տիրակալ **Հուսեյնը** իրեն հայտարարեց արաբ ժողովրդի թագավոր և ստեղծեց կառավարություն, որի նստավայր դարձավ Մեքքան: Թվում էր, թե իրականանում են միասնական արաբական պետության ստեղծման մասին արաբ ազգայնական գործիչների երազանքները:

Անգլիայի ու Ֆրանսիայի գերիշխանության հաստատումն արաբական երկրների վրա: Անգլիան ու Ֆրանսիան արաբական երկրների վերաբերյալ ունեին այլ ծրագրեր: Նրանք չձանաչեցին Հուսեյնին բոլոր արաբների թագավոր, այլ ընդամենը՝ Հիջազի թագավոր: Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը սկսեցին գաղտնի բանակցություններ պատերազմի ավարտից հետո Օսմանյան կայսրության տրոհման և նրա տարածքների վրա իրենց գերիշխանության հաստատման վերաբերյալ: 1916 թ. նրանք ստորագրեցին գաղտնի համաձայնագիր, որը հե-

տագայում հայտնի դարձավ նրա վրա իրենց ստորագրությունները դրած դիվանագետներ *Սայքսի* (Անգլիա) և *Պիկոյի* (Ֆրանսիա) անունով: Այն նախատեսում էր Օսմանյան կայսրության արաբական տիրույթների բաժանումը Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

Միաժամանակ, անգլիական գործերը, որոնք գործում էին Մերձավոր Արևելքում, արաբների աջակցությամբ պարտության էին մատնում թուրքական բանակներին և շարժվում դեպի արաբական տարածքներ: 1917 թ. նրանք գրավեցին Իրաքն ու Պաղեստինը և հաստատեցին իրենց

վարչական կառավարումը: Հաջորդ տարի անգլիացիները գրավեցին Սիրիայի և Լիբանանի գլխավոր քաղաքները:

1918 թ. սեպտեմբերին Անգլիան ու Ֆրանսիան ստորագրեցին նոր համաձայնագիր, որը հիմնականում վերահաստատեց Սայքս-Պիկոյի համաձայնագրի դրույթները: Արաբական երկրների մեծ մասը բաժանվեց նրանց միջև: Արաբների իշխանությունը ճանաչվեց միայն Հիջազում և Հորդանանում: Արաբական միասնական պետության գաղափարն անցավ պատմության գիրկը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ կարգավիճակ ուներ Եգիպտոսը Օսմանյան կայսրությունում XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին: Ինչ դեր խաղաց Նապոլեոն I-ի եգիպտական արշավանքը:
2. Պարզաբանե՞ք Մուհամեդ Ալիի բարեփոխումների արդյունքները: Ինչո՞ւ Եգիպտոսի անկախացման համար պայքարն այս շրջանում հաջողությամբ չպսակվեց:
3. Նշե՞ք արաբ լուսավորական շարժման հայտնի դեմքերի: Արաբական դժբերություն տեղի ունեցան ազգայնական շարժումներ. ինչ արդյունք ունեցան դրանք:
4. Ներկայացրե՞ք արաբական աշխարհում Անգլիայի և Ֆրանսիայի գերիշխանության հաստատման գործընթացը:

§ 3. ԻՐԱՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Իրանը Ղաջարների իշխանության ներքո: Նոր ժամանակների սկիզբը Իրանում համընկնում է *Ղաջարների* հարստության հաստատման հետ, որի տիրապետությունը շարունակվեց մոտ 130 տարի: Ղաջարների թյուրքական ցեղի հարստության հիմնադիրը դեռ երիտասարդ տարիներից փառամոլությամբ ու դաժանությամբ աչքի ընկնող *Աղա Մուհամմադ* խանն էր՝ այդ ցեղի առաջնորդը: Նա իշխանության համար պայքարում, բացի իր ցեղից, հենվում էր նաև մի շարք այլ թյուրքական ցեղերի վրա:

1794 թ. ղաջարները գերեվարեցին նախորդ կառավարող հարստության ներկայացուցիչ վերջին շահին, և Աղա Մուհամմադը անձամբ կուրացրեց նրան: Հաջորդ տարի երկրի նոր մայրաքաղաք հռչակվեց Թեհրանը, որը մինչ այդ աննշան քաղաք էր: 1796 թ. Աղա Մուհամմադ խանը թագադրվեց Իրանի շահ: Նրան հաջողվեց միավորել երկիրը՝ հիմք դնելով պետական կառավարման միասնական համակարգին: Աղա Մուհամմադը նպատակ ուներ վերականգնելու Իրանի երբեմնի հզորությունը: Նա ցանկանում էր գրավել ամբողջ Այսրկովկասը՝ այնտեղից դուրս

մղելով Իրանի գլխավոր ախոյանին՝ Ռուսաստանին: 1797 թ. իրանական քանակը ներխուժեց Այսրկովկաս ու գրավեց Ղարաբաղը: Սակայն Շուշիում Աղա Մոհամմադ շահը քնած ժամանակ դավադրաբար սպանվեց:

Հետագայում պայքարը Իրանի և Ռուսաստանի միջև Կովկասի համար ավելի սրվեց, տեղի ունեցան արյունալի պատերազմներ: Այդ պայքարն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: 1828 թ. ստորագրվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որն ամրագրեց Այսրկովկասը, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի հիմնական հատվածը Ռուսաստանի կազմում: Երկու երկրների միջև սահմանը այսուհետ անցնելու էր Արաքս գետով: Նրանց միջև ստորագրվեց նաև առևտրային պայմանագիր, որը սկիզբ դրեց ռուս առևտրականների արտոնություններին Իրանում:

Հարավային Կովկասում կրած ծանր պարտություններից հետո փորձելով վերահաստատել վաղուց արդեն կորցրած հզոր տերության կարգավիճակը՝ դաջարական Իրանն սկսեց վարել ակտիվ և նվաճողական արտաքին քաղաքականություն: Նա ձգտում էր Միջին Արևելքում նոր նվաճումներով փոխհատուցել իր տարածքային կորուստները: Սակայն այս հարցի կապակցությամբ սրվեցին հարաբերությունները Անգլիայի հետ:

1837 թ. ծագեց անգլո-իրանական հակամարտություն անգլանական Հերաթ քաղաքի համար: Այդ քաղաքը Անգլիայի համար ուներ կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն, քանի որ այն Հնդկաստանի հետ կապող ճանապարհի վրա էր:

Իրանի վրա ճնշում գործադրելու նպատակով անգլիական նավատորմը մտավ Պարսից ծոց, և Իրանը ստիպված 1841 թ.



Իրանի շահ Մոհամմադ Ալի

ստորագրեց առևտրական պայմանագիր Անգլիայի հետ: Այդ պայմանագիրը հաստատեց անգլիացիների հսկողությունը դաջարական Իրանի տնտեսության վրա:

Բաբիների շարժումը: XIX դ. կեսերին քաղաքական ու սոցիալական խոր ճգնաժամի մեջ հայտնված Իրանում հրապարակ է իջնում նոր կրոնաքաղաքական ուսմունք՝ **բաբիականությունը:** Այն դարձավ նրա հետևորդների՝ բաբիների լայնածավալ շարժման գաղափարախոսությունը: Շարժման հիմնադիրն էր **Ալի Մոհամմադը:** Նա ծնվել էր առևտրականի ընտանիքում, երիտասարդ տարիներին զբաղվել էր առևտրով, սակայն հետագայում տարվել էր կրոնափիլիսոփայական խնդիրների ուսումնասիրությամբ:

Ալի Մոհամմադը 1844 թ. իրեն հայտարարեց շուրջ հազար տարի առաջ անհետացած **իմամ Մահդիի** պատգամախոս՝ Բաբ (արաբերեն բաբ՝ «դարպաս»), որը ժողովրդին հաղորդելու էր իմամի կամքը: Երեք տարի անց Բաբը հայտարարեց, թե ինքն է Մահդիին: Բաբը գրեց «Բայան» («Հայտնություն») վերնագրով գիրքը, որ-

տեղ շարադրված են բաքիականության հիմնական դրույթները:

Համաձայն այդ դրույթների՝ Իրանում պետք է ստեղծվեն բաքիների սրբազան թագավորություն: Այստեղ կհաստատվեն սոցիալական արդարություն ու հավասարություն, հողը և բերքը կպատկանեն բոլորին: Բաքի ուսմունքը մեծ տեղ էր հատկացնում կրոնական հարցերին: Նա պնդում էր, որ Ղուրանը հնացել է և պետք է փոխարինվի Բայանով: Բայրը դեմ էր իսլամի մի շարք կարևոր հիմնադրույթներին՝ պարտադիր աղոթք, ուխտագնացություն դեպի իսլամի սրբազան վայրեր, պաս և ծոմ: Նա չէր ընդունում նույնիսկ ջիհադը՝ «անհավատների» դեմ մուսուլմանների սրբազան պատերազմը: Բաքիները կողմնակից էին կնոջ ու տղամարդու իրավահավասարության, միամուսնության: Նրանց միջավայրում խրախուսվում էր հանդուրժողականությունը այլախոհության ու անհավատության նկատմամբ: Ըստ էության, բաքիականությունը նախատեսում էր ստեղծել նոր հասարակություն:

Բաքի ուսմունքն արագորեն տարածվեց ողջ երկրով մեկ: Ահաբեկված իշխանությունները ձերբակալեցին Բաքին, բանտարկեցին, և հետագայում գնդակահարեցին: Սակայն նրա կողմնակիցները չընկճվեցին, և մեծ թափ ստացած կրոնասոցիալական այս շարժումը շարունակվեց նույնիսկ Բաքի մահապատժից հետո: Այն հաջողվեց ճնշել միայն 1852 թ.:

Անգլո-ոուսական մրցակցությունը Իրանում: Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմական թուլությունը մեծ հնարավորություններ ստեղծեց ժամանակի հզոր տերությունների, հատկապես Անգլիայի և Ռուսաստանի համար: Նրանք առանց ռազմական գավթումների կարողացան «խաղաղ» մուտք գործել այդ

երկիր և հաստատել այստեղ իրենց հսկողությունը նրա տնտեսության, բնական հարստությունների ու քաղաքականության վրա: Իրանն անշեղորեն վերածվում էր նաև Ռուսաստանի և Անգլիայի ռազմական կցորդի: Երկրի հյուսիսում տեղակայվում էին ռուսական զորքեր, իսկ հարավում՝ անգլիական:

Քայքայված տնտեսության պատճառով պետական եկամուտների նվազումը ստիպում էր դաջարական շահերին շարունակ վարկեր վերցնել Անգլիայից, ինչը ուժեղացնում էր Իրանի տնտեսական ու ֆինանսական կախվածությունը նրանից: Անգլիան առաջին օտարերկրյա պետությունն էր, որն սկսեց ձեռք բերել կոնցեսիաներ: Նրանց թվին էր պատկանում Անգլո-պարսկական նավթային ընկերությունը, որը ժամանակի ընթացքում դարձավ աշխարհի ամենախոշոր ընկերություններից մեկը:

Ռուսաստանը նույնպես ձգտում էր տիրանալու խոշոր կոնցեսիաների: Ռուսական կոնցեսիաներից աչքի էր ընկնում ռուսահպատակ հայ մեծահարուստ Ս. Լիանոզովի՝ Կասպից ծովի հարավային մասում ձկան որս իրականացնելու քաջամիկ իրավունքը:

Օտար պետությունների գաղութային քաղաքականությունը Իրանի նկատմամբ խոչընդոտում էր բնական հարստությունների առատությամբ աչքի ընկնող երկրի սոցիալ-տնտեսական բնականոն զարգացումը: Ամենուրեք տիրում էր աղքատություն, չքավորություն, սով, կաշառակերություն:

1905-1911 թվականների սահմանադրական շարժումը: Իրանի առաջադեմ մտավորական շրջանակները գիտակցում էին իրենց հայրենիքի անմխիթար վիճակը և փորձում էին գտնել դրանից դուրս

գալու ուղիներ՝ հակվելով դեպի արևմտամետ բարենորոգումները:

XIX դ. երկրորդ կեսի բարենորոգիչների կարկառուն ներկայացուցիչներից էր հայազգի **Մայքոմ (Մեկրոն) խասնը** (Հովսեփ Հակոբի Մելքումյան): Շահական պալատում վարելով մի շարք բարձր պաշտոններ՝ նա նաև զբաղվում էր հասարակական, լուսավորչական ու գրական գործունեությամբ, հանդես էր գալիս երկրում արևմտամետ բարենորոգումներ իրականացնելու և սահմանադրություն հռչակելու օգտին:

1905 թ. հարատև սովի պատճառով Թեհրանում տարերայնորեն ծագեցին զանգվածային ընդվզումներ իշխանությունների դեմ: Դրանց մասնակիցները պահանջեցին հռչակել սահմանադրություն ու գումարել մեջլիս (խորհրդարան): Շահը ստիպված էր զիջումների գնալ: 1906 թ. հրապարակվեց նրա հրովարտակր՝ սահմանադրություն ընդունելու և մեջլիս հիմնադրելու վերաբերյալ: Նույն տարում մեջլիսն սկսեց գործել:

Սակայն հետադիմական ուժերը նոր գահ բարձրացած շահ Մոհամմադ Ալիի ղեկավարությամբ, որոնք չէին ցանկանում համակերպվել սահմանադրական վերափոխումների հետ, ստանալով օտա-

րերկրյա պետությունների, առաջին հերթին Ռուսաստանի օգնությունը, անցան հակահարձակման: Ռուս կազակների գումարտակը շահի հրամանով իրականացրեց պետական հեղաշրջում և ձերբակալեց մեջլիսի անդամներին: Երկրում ծավալվեց սուր պայքար սահմանադրականների և շահի կողմնակիցների միջև: Սահմանադրական ուժերին աջակցում էին նաև Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչները: Առավել աչքի ընկավ հայազգի տաղանդավոր զորավար **Եփրեմ խասնը**: Ստանալով ժողովրդի աջակցությունը՝ հեղափոխական ուժերին հաջողվեց վերականգնել սահմանադրական կարգերը:

Սակայն 1911 թ. գրավելով հյուսիսային Իրանը՝ Ռուսաստանը պարտադրեց առաջադեմ ուժերին հեռանալ իշխանությունից և հանձնել այն շահի կողմնակիցներին: Այդպիսով՝ սահմանադրական շարժումը պարտություն կրեց:

1905–1911 թթ. սահմանադրական շարժումը նպաստեց երկրի ազգաբնակչության քաղաքական և ազգային ինքնագիտակցության վերելքին՝ հզոր հարված հասցնելով քայքայված դաշարական միապետությանը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XVIII դարի վերջին դժբախտությունը հաստատվեց Իրանում:
2. XIX դարում դժբախտությունների արդյունքում Իրանն ունեցավ տարածքային կորուստներ, և որոնք էին դրանք:
3. Որքան է տևել բաբիական շարժումը, ինչ գաղափարներ էր քարոզում նրա հիմնադիրը:
4. Ո՞ր երկրներն էին մրցակցում Իրանում գերիշխանություն հաստատելու համար: Ներկայացրե՞ք նրանց մրցակցության հետևանքները Իրանի համար:
5. Ո՞վ էր Մայքոմ խասնը, ինչ գաղափարների կողմնակից էր նա: Ներկայացրե՞ք 1905–1911 թթ. սահմանադրական շարժման ընթացքն ու արդյունքները:

§ 4. ՉԻՆԱՍՏԱՆԸ, ՃԱԴՈՆԻԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Չինաստանի ինքնահզորացման փորձերը: XIX դարի երկրորդ կեսին Չինաստանը՝ երբեմնի ծաղկուն քաղաքակրթության երկիրը, դարձավ արևմտյան արդյունաբերական պետությունների կիսագաղութը: Երկիրը շարունակ պարտություն էր կրում եվրոպացիների դեմ պատերազմներում: Կնքված անիրավահավասար պայմանագրերով օտարերկրացիներն ստացան գործարարությամբ զբաղվելու նպաստավոր պայմաններ: Չինաստանը դարձավ առաջավոր ազգերի արդյունաբերական արտադրանքի սպառման շուկա: Օտարերկրյա բանկերը փոխառություններ էին տրամադրում պետությանը, վերահսկում նրա եկամուտները, երկրի առանձին տեղերում ձեռք բերում նորանոր արտոնություններ: Այդ բոլորը վնասում էր չինական տնտեսության զարգացմանը: Մյուս կողմից՝ Չինաստանի ներքաշումը համաշխարհային տնտեսության մեջ նպաստեց ազգային տնտեսության զարգացմանը:

Մշտական պարտությունները Ցին արքայատոհմի վերնախավում առաջացրին համոզում, որ եվրոպացիները ռազմական ասպարեզում ավելի ուժեղ են: Ուստի նրանք որոշեցին հրաժարվել նախկին մեկուսացումից, սկսեցին դեսպանություններ փոխանակել, կնքել շահավետ պայմանագրեր, յուրացնել արևմտյան պետությունների ռազմատեխնիկական փորձը: Այս քաղաքականությունը, որը շարունակվեց 1860–1894 թթ., Չինաստանի պատմության մեջ հայտնի է *ինքնահզորացում* անունով: Արևմտյան տերությունների մասին հրատարակվեցին գրքեր, ստեղծվեցին արտաքին գործերի պետական մարմիններ, դպրոցներ, զինագործարաններ և նավաշինարաններ:

1894–1895 թթ. պատերազմում Չինաստանը պարտվեց Ճապոնիային: Պատերազմն ակնհայտորեն ցույց տվեց, որ «ինքնահզորացման» քաղաքականությունը ձախողվել է: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ բարեփոխումները կատարվում էին չինական ավանդական հասարակության պահպանման պայմաններում: Չինական արքունիքը և հասարակության վերնախավը դեմ էին արմատական բարեփոխումներին:

Պայքար արդիականացման համար: «Ինքնահզորացման քաղաքականության» ձախողումից հետո Չինաստանում սկսվեց արդիականացման համար պայքարի նոր փուլ, որը շարունակվեց ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը: Չինական ավանդական հասարակության բարեփոխման հիմնավորմամբ հանդես եկավ **Կան Յուվեյը:** Գլխավոր պահանջներն էին՝ բանակի ուժեղացում, ազգային արդյունաբերության պաշտպանություն, կոնֆուցիական գաղափարախոսության ամրապնդում, սահմանադրական միապետության ստեղծում: Յուվեյը մտածում էր համատեղել չինական ավանդական հասարակությունը արևմտյան արժեքների հետ: Նրա կողմնակիցների շարժումն ընդունեց համաչինական բնույթ: Սակայն հին կարգերի կողմնակիցները կարողացան ձախողել բարեփոխումների համար պայքարը:

Չին ժողովրդի ազգային հպարտությանը վիրավորում էր արևմտյան տերությունների ներթափանցումը Չինաստան: 1898–1901 թթ. ընթացքով համաժողովրդական ապստամբություն ընդդեմ օտարերկրացիների: Այն ղեկավարում էր **«Իխեթուան»** («Արդարության և խաղաղության ջոկատներ») գաղտնի կրոնա-



Կան Յուվեյ



Սուն Յաթսեն



Մուցուխիսո Մեյձի

կան ընկերությունը: Նրանք խնդիր ունեին փրկելու չինական քաղաքակրթությունը, թույլ չտալու նրա արևմտականացումը: Սակայն արևմտյան տերությունները կարողացան ձնշել չին ժողովրդի ընդվզումը:

Չինաստանի արդիականացման գլխավոր խոչընդոտը Ցին արքայատոհմն ու հին ազնվականությունն էին: Ահա թե ինչու նրանց դեմ սկսվեցին հեղափոխական շարժումներ հանուն երկրի լիարժեք նորացման: Այն գլխավորում էր **Սուն Յաթսենը**: Նա հիմնեց «Չինաստանի վերածննդի միություն» կազմակերպությունը: Միաժամանակ պայքար սկսվեց սահմանադրության համար: Առաջանում էին նորանոր հեղափոխական կազմակերպություններ:

1911-1912 թթ. Չինաստանում տեղի ունեցավ **հեղափոխություն**, որը պատմության մեջ հայտնի է **սինխայան** անվամբ: Նրանում մեծ դեր էին կատարում Սուն Յաթսենը և իր կողմնակիցները: Սինխայան հեղափոխության արդյունքում տապալվեց միապետական կարգը և հաստատվեց հանրապետություն: Սակայն երկրում կայունություն չհաստատվեց, և ժողովրդավարության համար

պայքարը շարունակվեց հաջորդ տասնամյակներում:

Ճապոնիան՝ Արևելքի ստաջին արդյունարևրական քաղաքակրթության երկիր: Ճապոնիան Չինաստանի նման համարվում էր փակ երկիր: 1854 թ. ԱՄՆ-ը պատերազմի սպառնալիքով ստիպեց նրան պայմանագիր կնքել, որով ամերիկյան նավերը կարող էին մուտք գործել երկրի նավահանգիստներ: Այսպես սկսվեց Ճապոնիայի ազատ հաղորդակցումն աշխարհի հետ: Շուտով ճապոնացիները համոզվեցին, որ երկիրն Արևմուտքի համեմատությամբ հետամնաց է: Օտար ապրանքների մրցակցությունից տուժում էր Ճապոնիայի տնտեսությունը: Երկրում սկսվեց շարժում արդիականացման համար: 1868 թ. հեղափոխության արդյունքում վերացվեց Տոկուգավա սյոգունների իշխանությունը, որը Ճապոնիան կառավարում էր 1603 թ. ի վեր: Իշխանությունն անցավ 15-ամյա **Մուցուխիսո** կայսրին, որն ստացավ **Մեյձի** (Լուսավորյալ կառավարում) անունը: Կայսրը Կիոտո հին մայրաքաղաքից տեղափոխվեց սյոգունի նստավայր Էդո, որը ստացավ **Տոկիո** անունը:

Մեյձիի կառավարումը շրջադարձային պահ դարձավ Ճապոնիայի պատմության մեջ: Համեմատաբար կարճ ժամանակում Ճապոնիան վերածվեց Արևմուտքին մրցակից արդյունաբերական տնտեսության: Դա բարեփոխումների և ծաղկման դարաշրջան էր: Երկրում ձևավորվեցին արդյունաբերական քաղաքակրթությանը բնորոշ հասարակական հարաբերություններ և ազգային հզոր մշակույթ: Վերջ տրվեց ավատատիրությանը, հաստատվեց դասային հավասարություն, ձևավորվեցին ներքին միասնական շուկա և մրցունակ արտադրություն: Խոշոր արդյունաբերական քաղաքներ դարձան Տոկիոն, Օսական, Կիոտոն և այլն: Սկիզբ դրվեց եվրոպական կրթական համակարգին, կառուցվեցին առաջին երկաթուղին, հեռագրագիծը, գործողության մեջ դրվեցին նոր փոստային ծառայությունը, գրիգորյան օրացույցը: Շատ երիտասարդներ սկսեցին կրթություն ստանալ արևմտյան առաջավոր համալսարաններում:

Արագ զարգացման շնորհիվ բնակչության թիվը 38-ից հասավ ավելի քան 72 միլիոնի: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Ճապոնիան դեռևս ազրարային-արդյունաբերական երկիր էր: Չնայած դրան՝ զարգացման արագությամբ երկիրը նույնիսկ առաջ էր անցել ԱՄՆ-ից և Գերմանիայից:

Հասարակական առաջընթացում կարևոր նշանակություն ունեցավ սահմանադրական կարգերի ստեղծումը: Ճապոնիան, որպես օրինակ, իրեն հարմար գտավ Գերմանական կայսրության սահմանադրությունը: 1889 թ. հաստատված հիմնական օրենքով երկիրը հռչակվում էր սահմանադրական միապետություն: **Կայսրը (միկադո)** սահմանադրությամբ հռչակվում էր սրբազան և անձեռնմխելի:

Նա ստանում էր ավելի մեծ իրավունքներ, քան երկառյան խորհրդարանը: Կայսրն իրավունք ուներ հրավիրելու և արձակելու խորհրդարանը, հայտարարելու պատերազմ և կնքելու հաշտություն, նշանակելու խորհրդարանի վերին ատյանի անդամներին: Քաղաքացիներին տրվում էին ժողովրդավարական ազատություններ: Հիմնական օրենքի շուրջ քաղաքական պայքարը, ինչպես նաև հաստատված սահմանադրությունը, չնայած իր պահպանողական բնույթին, նպաստեցին հասարակական կյանքի աշխուժացմանը: Առաջացան կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ և տարաբնույթ շարժումներ:

Արտաքին քաղաքականության մեջ Ճապոնիան հասավ լուրջ հաջողությունների: Մինչև XX դարի սկիզբը երկիրն ազատվեց 15 անիրավահավասար պայմանագրերից: Բազմաթիվ երկրների հետ հաստատվեցին դիվանագիտական, տնտեսական և մշակութային կայուն հարաբերություններ:

Ճապոնիայում գերիշխող դարձավ ազգայնական գաղափարախոսությունը: Դրան նպաստում էր նաև ազգային կրոնը՝ **սինտոյականությունը** (բառացի՝ աստվածների մասին ուսմունք): Ըստ այդ ուսմունքի՝ կայսրն իր իշխանությունը ստացել է արևի աստծուց՝ Ամատերասից: Ուստի բոլորը, որպես հայրենասիրության գերագույն դրսևորում, պետք է նվիրվեին նրան: Ճապոնացիները համոզված էին, որ իրենք, որպես ազգ, ունեն կայսեր շուրջ Ասիայի ժողովուրդներին Արևմուտքի դեմ համախմբելու առաքելություն:

Ստեղծելով ուժեղ քանակ՝ Ճապոնիան միջազգային ասպարեզում սկսեց մեծ դեր խաղալ: Մինչև Առաջին աշխարհամարտը երկրի տարածքը զավթումների

հաշվին կրկնապատկվեց: Զավթումների գլխավոր ուղղությունները Կորեան և Չինաստանն էին: Երկիրը հատկապես հզորացրին հաղթանակները 1894–1895 թթ.

չին–ճապոնական և 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմներում: Այդ բոլորի շնորհիվ Ճապոնիան դարձավ գաղութային տերություն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրե՞ք Չինաստանի «ինքնահզորացման» քաղաքականության էությունը: Ինչո՞ւ այն ձախողվեց:
2. Ո՞վ էր Կան Յուվեյը, ինչ պահանջներ նա առաջադրեց հասարակության բարեփոխման համար: Արևմտականացման դեմ ուղղված ինչ շարժում սկսվեց, ինչո՞վ այն ավարտվեց: Որո՞նք էին 1911–1912 թթ. չինական հեղափոխության գլխավոր արդյունքները:
3. Ե՞րբ վերացվեց սյոգունությունը Ճապոնիայում: Ներկայացրե՞ք XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Ճապոնիայի արդիականացման գլխավոր արդյունքները:
4. Քաղաքական ինչ համակարգ ձևավորվեց Ճապոնիայում: Թվարկե՞ք արտաքին քաղաքականության բնագավառում երկրի ունեցած հաջողությունները:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 1. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Գաղութային համակարգի բնորոշ կողմերը: Գաղութացումը, որպես վերաբնակեցում, ինչպես նաև նվաճված հողերի կողոպուտի և յուրացման համակարգ, միշտ եղել է համաշխարհային պատմական գործընթացի կարևոր մասը:

Այն մեծ մասամբ ընթացել է բռնի միջոցներով և տևել դարեր: Գաղութային համակարգի բնորոշ կողմերից մեկը քաղաքակրթությունների տևական բախումն է: Բազմաթիվ ժողովուրդների կյանքում դա ունեցել է ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքներ:

Նոր ժամանակներում գաղութացման գործընթացում ի հայտ էին եկել նոր առանձնահատկություններ:

1. Գաղութային ծավալման գլխավոր կենտրոնը դարձել էր Եվրոպան: Այստեղ ձևավորված արդյունաբերական քաղաքակրթությունը մշտապես ծա-

վալվելու միտում ուներ և ազգային ու կրոնական պատենշներ չէր հանդուրժում: Եվրոպացիները, հենվելով իրենց գիտատեխնիկական նվաճումների վրա, կարողացան բռնությամբ միավորել աշխարհը և ստեղծել աննախադեպ համաշխարհային գաղութային տնտեսություն:

2. Մշտապես զարգացող արդյունաբերությունը և շուկայական տնտեսությունը պահանջում էին հումքի նորանոր աղբյուրներ: Եվրոպայում դրանց պաշարները քիչ էին կամ ընդհանրապես չկային (գանազան հանքատեսակներ, բամբակ, բուրդ և այլն): Այսինքն՝ գաղութները դառնում էին հումքի աղբյուրներ:
3. Եվրոպական արդյունաբերությունը պահանջում էր իր ապրանքների համար նորանոր շուկաներ: Տեղական

շուկան չէր բավարարում, որի պատճառով արդյունաբերական արտադրանքն սկսում էին արտահանել գաղութային երկրներ: Այսինքն՝ գաղութները վերածվում էին արդյունաբերական ապրանքների սպառման ընդարձակ շուկաների:

4. Եվրոպացիները կապիտալ էին ներդնում հետամնաց երկրներում՝ ստեղծելով պլանտացիաներ, հանքավայրեր, ձեռնարկություններ, կառուցում էին երկաթուղիներ և այլն: Դրանցում չնչին աշխատավարձով աշխատում էին տեղացիները: Այսինքն՝ գաղութային բնակչությունը վերածվում էր շահագործվող էժան բանվորական ուժի:
5. Գաղութներում ծավալվող տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական գործընթացներն ի վերջո հանգեցնում էին արդյունաբերական նոր ազգերի առաջացման, նրանց ազատագրման և ազգային պետությունների ստեղծման:

Նոր ժամանակներում այս բոլորն ապահովելու համար ստեղծվում էին համապատասխան պետական հիմնարկներ, գաղութային վարչակարգ, օրենքներ և այլն: Այլ խոսքով՝ ձևավորվում էր գաղութային համակարգ: Գաղութներ ունեցող երկրին անվանում էին *մետրոպոլիս* (հուն. մայր-պետություն):

Եվրոպացիների գաղութային նվաճումները XVII–XVIII դարերում: Գաղութային նվաճումներն սկսվեցին Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանից: Առաջին գաղութային կայսրությունները Պորտուգալիան և Իսպանիան էին: Դեռևս XVI դարում Պորտուգալիան զավթել էր Հնդկական օվկիանոսի կարևոր առևտրական ուղիները և

այնտեղից դուրս մղել արաբներին: Միաժամանակ Պորտուգալիան զավթեց Բրազիլիան: Իսպանիայի գաղութային նվաճումների գլխավոր ուղղությունները Կենտրոնական և Հարավային Ամերիկան էին:

Գաղութներից կողոպտված հսկա հարստությունը բարգավաճում չբերեց ո՛չ Պորտուգալիային և ո՛չ էլ Իսպանիային: Ավատական և կղերական վերնախավն այդ երկրներում փողը ծախսում էր շքեղ կյանք վարելու համար: Դա հանգեցրեց այն բանին, որ գաղութային նվաճումների նախաձեռնությունն աստիճանաբար անցավ հզորացող Նիդերլանդներին, Անգլիային և Ֆրանսիային:

1600 թ. Անգլիայում և 1602 թ. Նիդերլանդներում կազմակերպվեցին *Արևելահնդկական ընկերությունները*, որոնք մեծ դեր խաղացին գաղութային նվաճումներում: Այս ընկերությունները կարողացան XVII դարի առաջին կեսին Արևելքից դուրս մղել Պորտուգալիային: Փոխադարձ համաձայնությամբ հոլանդացիները հաստատվեցին Ինդոնեզիայում և հարակից կղզիներում, անգլիացիները՝ Հնդկաստանում: 1615 թ. պորտուգալացիներին պարտության մատնելուց հետո Անգլիան իր առաջին հենակետը հիմնեց Հնդկաստանում:

XVII դարը Հոլանդիայի գաղութային գերիշխանության ժամանակաշրջանն էր: Ոչ միայն Հնդկական օվկիանոսի ավազանում, այլև բուն Եվրոպայում առևտրի մեծ մասը կատարվում էր նրանց միջոցով: Դա նեղում էր Անգլիային և Ֆրանսիային: Հետևաբար այս երեք երկրների միջև նախնական համաձայնությունը խախտվեց, և սկսվեց տևական հակամարտություն: Անգլիան հաղթեց նախ Նիդերլանդներին, իսկ հետո՝ Ֆրանսիային: Այսպես

XVIII դարում գաղութային աշխարհում գերակշռությունն անցավ Անգլիային:

Նվաճված երկրներում հաստատվեցին կողոպուտի և տեղական բնակչության շահագործման դաժան համակարգեր: Աֆրիկյան ստրկավաճառության առյուծի բաժինն անցավ Անգլիային: XVII–XVIII դարերում Վեստ Ինդիայի կղզիներում և Ամերիկայում ստեղծվեցին ստրկական աշխատանքի վրա հիմնված խոշոր տնտեսություններ, որոնք կոչվում էին *պլանտացիա* (լատ.՝ բույսերի տնկում):

Ստրուկների աշխատանքն օգտագործում էին բոլոր մետրոպոլիսները: Նրանց միջև ստրկավաճառությունից ստացվող շահույթի համար ընթանում էր մշտական պայքար: Աֆրիկայում ստրուկների ձեռքբերման գլխավոր շրջաններն էին Ոսկե Ափը, Կոնգոն և Անգոլան: Ստրուկները գլխավորապես սպառվում էին Ամերիկայում: Ստրկավաճառության 4 դարերի ընթացքում Աֆրիկայից Ամերիկա է բերվել 15–16 միլիոն մարդ: Այդ ընթացքում Աֆրիկայում գոհվել է 60–70 միլիոն մարդ:

Ստրկության հիմնասխեմայի և գաղութատիրությունը XIX դարում: Մեծ հեղափոխությունը ցնցեց ոչ միայն Եվրոպան, այլև գաղութային աշխարհը: Գաղութներում ազատագրման հույս առաջացավ: Սակայն Ֆրանսիայի հեղափոխական կառավարությունը ոչ միայն գաղութներին ազատություն չտվեց, այլև դրանցում չտարածեց մետրոպոլիայի սահմանադրական կարգը, գաղութներում նույնիսկ չվերացվեց ստրկությունը:

Միննույն ժամանակ շատ առաջադեմ եվրոպացիներ հասկանում էին, որ ստրկությունը պետք է վերացնել: XVIII դ. վերջին տասնամյակներում ստրկության վերացման համար պայքարը վերածվեց հասարակական շարժման, որը, ինչ-



Ստրուկների աճուրդ Նոր Օղեանում, ԱՄՆ, 1750 թ.

պես նշվել է, ստացավ *աբոլիցիոնիզմ* անունը: Աբոլիցիոնիստների կարծիքով ստրկությունը ոչ միայն շահութաբեր չէր, այլև՝ վնասակար: Գլխավոր փաստարկներն էին՝ ա) ստրուկներ ձեռք բերելու համար հազարավոր եվրոպացիներ գոհվում են, բ) ստրուկների աշխատանքն արտադրողական չէ և խանգարում է արդյունաբերության զարգացմանը, գ) ստրկության պատճառով Աֆրիկայի չզարգանալը գրկում էր արդյունաբերական արտադրանքը սպառման մեծ շուկայից, դ) ստրկությունը բարոյական չէ, քանի որ «սևամորթը նույնպես մարդ է»:

XIX դ. սկզբին Անգլիայում, ապա մյուս երկրներում աբոլիցիոնիզմը դարձավ պետական քաղաքականություն: Անգլիայում համոզվեցին, որ Աֆրիկյան իրենց երկրի համար ավելի շատ անհրաժեշտ է որպես հումքի աղբյուր: Մինչդեռ ստրուկների արտահանումը Նոր աշխարհի Աֆրիկյան գրկում էր բանվորական ուժից, որն այնքան անհրաժեշտ էր արդյունաբերական հումքի արտադրության համար: Բուն Անգլիայում ստրկական աշխատանքի օգտագործումն արգելվել էր դեռևս 1772 թ.:

1833 թ. օրենքով ստրկությունն արգելվում էր Բրիտանական կայսրության գաղութներում: XIX դարի առաջին կեսին համանման օրենքներ ընդունվեցին նաև ԱՄՆ-ում, Շվեդիայում, Ֆրանսիայում և Հոլանդիայում:

Ստրկավաճառության և ստրկության արգելումը չէր նշանակում նրա վերացում: Ավելին՝ ստրկավաճառությունը վերելք էր ապրում մաքսանենգ ճանապարհով: Դրան նպաստում էր ԱՄՆ-ում և Լատինական Ամերիկայի շատ նորանկախ երկրներում ստրկության պահպանումը:

Նապոլեոնյան պատերազմների շրջանում գաղութային նվաճումների համար պայքարը սրվեց նոր ուժով: Նապոլեոնի անկումից հետո Վիեննայի վեհաժողո-

վում և մյուս միջազգային պայմանագրերում որոշումներ ընդունվեցին ստրկավաճառության դեմ համատեղ պայքարի մասին: Այդ պայքարն արդյունավետ չէր: Իսկ Անգլիան, որ Վիեննայի վեհաժողովի արդյունքում հայտնվել էր շահեկան վիճակում, ստրկավաճառության դեմ պայքարն օգտագործում էր նոր գաղութներ ձեռք բերելու համար: Գաղութների համար պայքարում նրա գլխավոր մրցակիցը շարունակեց մնալ Ֆրանսիան: Միևնույն ժամանակ իր գաղութներն ընդարձակելու համար Անգլիան մրցակցում էր Ռուսաստանի հետ: Հնդկաստանը, որի նվաճումն ավարտվեց 1849 թ., դարձավ Մեծ Բրիտանիայի նոր նվաճումների գլխավոր հենակետը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե ինչ է գաղութը, և երբ է սկսվել գաղութացման գործընթացը: Ներկայացրե՛ք Նոր ժամանակներում գաղութացման գործընթացի առանձնահատկությունները:
2. Նկարագրե՛ք XVII–XVIII դարերում եվրոպացիների գաղութային նվաճումների արդյունքները: Որո՞նք էին Նոր ժամանակների գաղութային տերությունները: Ներկայացրե՛ք նրանց միջև տեղի ունեցած մրցակցության հիմնական արդյունքները:
3. Ի՞նչ տեսք ընդունեց ստրկությունը Նոր ժամանակներում: Ներկայացրե՛ք դրա վերացման համար պայքարի դրսևորումները Եվրոպայում և ԱՄՆ-ում: XIX դ. առաջին կեսին գաղութային ի՞նչ նոր նվաճումներ եղան և ո՞ւմ կողմից:

§ 2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ

Անգլիական վերաբնակեցված գաղութների ստեղծումը: Նոր դարաշրջանում գաղութների համար պայքարն ընթանում էր Ասիայում, Խաղաղ օվկիանոսի ավազանում և հատկապես Աֆրիկայում: Նոր հողերի նվաճման կարևոր հետևանքներից մեկը վերաբնակեցված գաղութների ստեղծումն էր: Այդպիսի գաղութներ առաջանում էին այն տեղերում, որտեղ նվաճումներն ուղեկցվում էին մետրո-

պոլիայից և այլ եվրոպական երկրներից բնակչության զանգվածային ներգաղթով: Մյուս կարևոր իրողությունը նվաճված հողերում նոր ազգային ընդհանրությունների առաջացումն էր: Այսինքն՝ *ներգաղթած վերաբնակիչներն աստիճանաբար ստեղծում էին ինքնուրույն հասարակություն:* Մետրոպոլիան ամեն կերպ փորձում էր խոչընդոտել նրանց տնտեսական,

սոցիալական, մշակութային և քաղաքական զարգացումը:

Վերաբնակեցված գաղութներում սկսվում էին ազատագրական շարժումներ, որոնք հանգեցնում էին նոր պետությունների առաջացմանը: Նման ուղիով են առաջացել ԱՄՆ-ը և Լատինական Ամերիկայի երկրները: Առանձնահատուկ ուղիով զարգացան Անգլիայի Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա և Կապ (անգլ.՝ Բեյի) գաղութները:

Կանադան XVII դարում դարձավ Ֆրանսիայի գաղութը: Միաժամանակ մեծ չափեր ընդունեց անգլիական և եվրոպական մյուս վերաբնակիչների ներհոսքը: Յոթնամյա պատերազմի (1756–1763 թթ.) հետևանքով Կանադան անցավ Անգլիային: Ֆրանսիացիներով բնակեցված հողերը, որոնք կոչվեցին Քվեբեկ, ստացան որոշ արտոնություններ: Կանադայի բնակչությունը (և՛ ֆրանսախոս, և՛ անգլախոս) իր ինքնուրույնության համար պայքարում էր թե՛ ԱՄՆ-ի զավթողական, թե՛ Անգլիայի գաղութային քաղաքականության դեմ: Միաժամանակ ընթանում էր բնիկների բնաջնջում: Նրանց միայն մի փոքր մասը պահպանվեց լեռնային մասերում:

Վախենալով Հյուսիսային Ամերիկայում իր գաղութների կորստից՝ անգլիական խորհրդարանը 1867 թ. *Կանադային* տվեց դաշնային *դոմինիոնի* (բառացի՝ *տիրույթ*) կարգավիճակ: Մեծ Բրիտանիայի թագի ներքո մնացած Կանադան իրավունք ստացավ ունենալու իր սահմանադրությունը:

Ավստրալիայի գաղութացումն ուժեղացավ, երբ Անգլիան Հյուսիսային Ամերիկայում կորցրեց իր 13 գաղութները: Առաջին վերաբնակիչներն աքսորյալ հանցագործներ էին: Հետագա արտո-

վածների մեջ մեծ թիվ էին կազմում նաև քաղաքական վտարանդիները, ինչպես նաև իռլանդացիներն ու շոտլանդացիները: Աստիճանաբար այստեղ եկան նաև ազատ վերաբնակիչներ: Վերաբնակեցումը դանդաղ էր ընթանում, և միայն 1827 թ. Ավստրալիան հայտարարվեց անգլիական տիրույթ: Ազատ վերաբնակեցումը գանգվածային դարձավ 1851 թ. հետո, երբ Վիկտորիա գաղութում հայտնաբերվեցին ոսկու հանքեր, և սկսվեց «ոսկու տենդը»: Կարճ ժամանակում բնակչության թիվն անցավ մեկ միլիոնի սահմանը: Սկսվեց տնտեսության և հասարակական կյանքի վերելք: Նոր պայմաններում պայքար սկսվեց ինքնավարության համար: Արդյունքում 1901 թ. ստեղծվեց *Ավստրալական Միությունը*, որն ուներ դոմինիոնի կարգավիճակ:

Ավստրալիայում բնիկների ոչնչացումն իրականացվում էր ավելի վայրենի հնարներով, քան Հյուսիսային Ամերիկայում: Նրանց ոչնչացումը խրախուսելու համար անգլիական գաղութարարները նույնիսկ սահմանում էին մրցանակներ:

XVIII դ. վերջից և XIX դ. սկզբից սկսվեց Նոր Զելանդիայի գաղութացումը: Բնիկները (*մաորիներ*) դեռևս նախնադարյան կարգերի դարաշրջանում էին: Նրանց ոչնչացումն սկսվեց 1840 թ. հետո, երբ Անգլիան լրիվ զավթեց կղզին: Սկսվեց վերաբնակիչների մեծ հոսք: Նոր Զելանդիան դոմինիոնի կարգավիճակ ստացավ միայն 1907 թ.:

XVII դ. սկզբին Հարավային Աֆրիկայում հողանոտական արևելահնդկական ընկերությունը ստեղծել էր Կապի գաղութը: XIX դ. սկզբին այն զավթեցին անգլիացիները: Քիչ ավելի ուշ սկսվեց գաղութի վերաբնակեցումն անգլիացիներով: Անգլիական կառավարությունը գաղութից

վոնդեց **բուրերին**, որոնք հոլանդացի, ֆրանսիացի և գերմանացի բողոքական եկեղեցուն պատկանող վերաբնակիչների սերունդներն էին: Նրանց միախառնումից առաջացել է **աֆրիկաներենը**: 1867 թ. ավմաստի հանքերի հայտնաբերումը խթանեց Հարավային Աֆրիկայում անգլիացիների վերաբնակեցումը: XIX դ. վերջին անգլիացիները բուրերի դեմ արյունահեղ պատերազմից հետո գրավեցին նրանց հողերը: Այս բոլորի հետևանքով 1910 թ. Կապի գաղութը և անգլիական մյուս գաղութները միավորվեցին և կազմեցին մեկ ընդհանուր դոմինիոն՝ Հարավաֆրիկյան Միությունը:

Ինքնավարություն ստացած վերաբնակեցված գաղութները տվյալ պահին չէին ձգտում անկախության: Դրա պատճառներն էին դեռևս պահպանվող ազգային ընդհանրությունները, արդյունաբերության զարգացման ցածր մակարդակը, այլ տերություններից պաշտպանվելու անհրաժեշտությունը և այլն:

Գաղութային նվաճումների գաղափարական հիմնավորումը: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին նոր գաղութներ ձեռք բերելու համար պայքարն ավելի սրվեց երկու պատճառով: Առաջին՝ ավարտվում էր արդյունաբերական քաղաքակրթության և համաշխարհային տնտեսության ձևավորումը: Երկրորդ՝ առաջանում էին նոր ազգային պետություններ և հզոր արդյունաբերություն ունեցող երկրներ՝ Գերմանիա, ԱՄՆ, Իտալիա, Ռուսաստան, Ճապոնիա և այլն:

XIX դ. կեսին աշխարհի ամենամեծ գաղութային կայսրությունը Մեծ Բրիտանիան էր: Անգլիայում համոզված էին, որ գաղութները երկրի բարեկեցության աղբյուրներն են: Բրիտանացիները հպարտանում էին իրենց նվաճումներով՝

ասելով. «*Բրիտանական անասինան կայսրությունում արևը երբեք մայր չի մտնում, և արյունը երբեք չի չորանում*»: Իրենց տերությունը նրանք համեմատում էին երբեմնի հզոր Հռոմեական կայսրության հետ: Հենց այդ առիթով շրջանառության մեջ մտավ **իմպերիալիզմ** հասկացությունը: Իմպերիալիզմ ասելով՝ անգլիացիները հասկանում էին նախ և առաջ իրենց քաղաքակրթության տարածումն աշխարհում, որը «հետամնաց» ժողովուրդներին բերում է զարգացում: Այսպես առաջացավ սեփական գերագանցության համոզումը: Սկսեցին տարածվել ցեղապաշտական (ռասիստական) գաղափարներ, համաձայն որոնց՝ սպիտակ ցեղը (ռասան) իր մարդկային որակներով բարձր է սևամորթներից և դեղնամորթներից:

Ցեղապաշտական գաղափարները, որոնք նպատակ ունեին արդարացնելու գաղութային նվաճումները, հատկապես մեծ տարածում գտան նորաստեղծ Գերմանական կայսրությունում: Տարածվեց «*գերմանական ցեղը քարձր է բոլորից*» գաղափարը: Այն դարձավ պետական քաղաքականություն:

Գաղութային նվաճումների գաղափարները տարածում գտան նաև ԱՄՆ-ում: Այստեղ քարոզում էին, որ «ճակատագրի կանխորոշմամբ» անգլոսաքսերը պետք է գերիշխեն աշխարհում:

Համանման ազգայնամոլական և իմպերիալիստական գաղափարները XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին տարածվեցին նաև մյուս երկրներում և բազում չարիքներ պատճառեցին մարդկությանը:

Աշխարհի գաղութային բաժանման ասպարտը և հետևանքները: XVIII դ. վերջից սկսվում է աֆրիկյան մայրցամաքի հետևողական յուրացումը: 1791–1890 թթ. ընթացքում տարբեր երկրներից Աֆրի-

կայի ներքին շրջաններ այցելեցին 200-ից ավելի գիտական արշավախմբեր: 1878 թ. Բելգիայի թագավոր Լեոպոլդ II-ը Բրյուսելում կազմակերպեց Աշխարհագրական միջազգային համաժողով, որը նպատակ ուներ նպաստելու Աֆրիկայի յուրացմանը: Աֆրիկայի գաղութացման գործընթացին եռանդուն մասնակցություն ունեցան նաև զանազան քրիստոնեական միսիոներական կազմակերպություններ:

Չնայած մեծ ջանքերին՝ 1876 թ. դրությամբ եվրոպացիները գաղութացրել էին «Ան մայրցամաքի» ընդամենը 10%-ը: Հենց այդ ժամանակներից էլ սկսվեց եվրոպացիների զանգվածային ներթափանցումը երկրի ներքին շրջաններ:

Աֆրիկայի վերջնական բաժանման գործում մեծ նշանակություն ունեցավ 1884-1885 թթ. Բեռլինի միջազգային համաժողովը, որին մասնակցում էր 12 եվրոպական երկիր, ինչպես նաև ԱՄՆ-ը և Օսմանյան կայսրությունը: Մասնակիցները ստորագրեցին պայմանագիր, որով սահմանվում էին մայրցամաքի համատեղ գաղութացման սկզբունքները և կարգը: 1900 թ. դրությամբ Աֆրիկայի 90%-ն արդեն բաժանվել էր Ֆրանսիայի, Անգլիայի,

Բելգիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Գերմանիայի և Իտալիայի միջև: Ամենաշատը բաժին ընկավ Ֆրանսիային՝ Աֆրիկայի տարածքի 42,1%-ը: Անգլիային հասավ մայրցամաքի տարածքի 37,7%-ը: Աֆրիկայում անկախ պետություններ մնացին միայն Եթովպիան և Լիբերիան:

XX դ. սկզբին աշխարհի գաղութային բաժանումն ավարտվել էր: Ամենամեծ գաղութային տերությունը նախկինի պես Մեծ Բրիտանիան էր: Ավանդական մետրոպոլիաներից բացի, նոր գաղութային կայսրություններ դարձան Գերմանիան, ԱՄՆ-ը, Իտալիան, Ճապոնիան և Բելգիան: 1914 թ. դրությամբ երկրագնդի տարածքի 67%-ը և բնակչության 60%-ը կամ գաղութներ էին, կամ կիսագաղութներ: Այսպես ձևավորվեց գաղութային համաշխարհային համակարգը:

Մյուս կողմից՝ գաղութային համակարգի ստեղծումն ունեցավ նաև դրական հետևանքներ: Գաղութային երկրների ժողովուրդները, հաղորդակից դառնալով համաշխարհային տնտեսությանը, սկսեցին զարգանալ արդյունաբերական քաղաքակրթության կազմավորման ուղիով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է վերարնակեցված գաղութը: Ասիայում, Խաղաղ օվկիանոսի ավազանում և Աֆրիկայում ինչ նման գաղութներ ստեղծվեցին: Ինչ ուղիով զարգացան անգլիական գաղութներ Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան և Կապը:
2. Գաղափարապես ինչպե՞ս էին տերությունները հիմնավորում իրենց գաղութային նվաճումները: Ինչո՞ւ XIX դ. վերջին և XX դ. սկզբին սրվեց պայքարը գաղութների համար:
3. Երբ ավարտվեց աշխարհի գաղութային բաժանումը: Ո՞ր երկիրն էր ամենամեծ գաղութատերը: Ներկայացրե՞ք գաղութային համակարգի ստեղծման հետևանքները:

ԲԱԺԻՆ Գ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ: ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

ԳԼՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

§ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՆԱԴՈՒԼԵՆՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՎԱՐՏԸ

Միջազգային համակարգի զարգացման փուլերը Նոր ժամանակներում: Միջազգային հարաբերությունների համակարգում աշխարհակարգերի հաստատման և փոփոխման մի քանի փուլեր եղան: Առաջինը Վեստֆալյան համակարգն էր: 1648 թ. կնքված Վեստֆալյան հաշտության պայմանագիրը հանրազոմարի բերեց համաեվրոպական Երեսնամյա պատերազմը: Ստեղծվեց որակապես նոր աշխարհակարգ, որին բնորոշ էին միմյանց մրցակից ու հաճախակի փոփոխվող քաղաքական դաշինքները: Այս համակարգը գոյատևեց մոտ 150 տարի՝ ընդհուպ մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և նապոլեոնյան պատերազմները:

Նապոլեոնյան պատերազմների ավարտին զումարված 1815 թ. Վիեննայի համաժողովը ծնունդ տվեց միջազգային հարաբերությունների նոր աշխարհակարգին: Այս համակարգն անվանեցին Վիեննայի կամ «Հնգյակի» համակարգ, քանի որ դրանում ծանրակշիռ դեր էին խաղում հինգ պետություններ՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Պրուսիան և Ավստրիան: Հետագայում «մեծերի ակումբի» անդամ դարձան Օսմանյան կայսրությունը, Ավստրո-Հունգարիան (Ավստրիայի փոխարեն), Գերմանիան (Պրուսիայի

փոխարեն), Իտալիան, իսկ ավելի ուշ՝ Ճապոնիան և ԱՄՆ-ը:

Վիեննայի կոնգրեսի արդյունքում ստեղծված համակարգում «հավասարակշռության դատավորի» դերում էր Մեծ Բրիտանիան՝ ժամանակի միակ համաշխարհային տերությունը: Այդ համակարգը գոյատևեց մոտ 100 տարի՝ հանգեցնելով երկու հակադիր դաշինքների՝ Անտանտի և Եռյակ միության ստեղծմանը: Համակարգը վերացավ Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում:

Միջազգային հարաբերությունները XVII դարի երկրորդ կեսից մինչև 1780-ական թթ.: Վեստֆալյան հաշտության պայմանագիրը Եվրոպայում նոր աշխարհակարգի սկիզբը դրեց: Եվրոպական թատերաբեմում այսուհետև բավական երկար ժամանակ առաջատար դիրքերում հայտնվեցին Ֆրանսիան, Ռուսաստանը և Ավստրիան: Փոխվեց ուժերի հարաբերակցությունը եվրոպական պետությունների և Օսմանյան կայսրության միջև: XVII դարում կայսրությանը հասցված պարտությունները զգալիորեն թուլացրել էին նրան:

XVII դ. կեսերից Եվրոպայի առաջատար պետությունների փոխհարաբերություններում հայտնվում է մի նոր գործոն,

որը պայմանավորված էր արդյունաբերական հասարակության սկզբնավորմամբ: Եվրոպայից դուրս հումքի նոր աղբյուրների և շուկաների ձեռքբերման պահանջը զարկ տվեց գաղութացման տեմպերի աճին: Այս ասպարեզում Իսպանիային և Պորտուգալիային հետևեցին Անգլիան, Հոլանդիան և Ֆրանսիան, որոնց միջև գաղութների համար անզիջում պայքար ծավալվեց: XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբներին ցամաքում ու ծովում տեղի ունեցան մի շարք պատերազմներ Անգլիայի և Հոլանդիայի, Հոլանդիայի և Ֆրանսիայի միջև: Պատերազմների արդյունքում Հոլանդիան կորցրեց իր գաղութների զգալի մասը:

Այս փուլի միջազգային հարաբերություններում ակնհայտ էր մի միտում: Առաջատար պետություններից որևէ մեկի ծավալապաշտական նկրտումներն անմիջապես հանգեցնում էին նրա դեմ մի քանի պետությունների համախմբման: Ստեղծվող միությունները ժամանակավոր և անկայուն էին:

Երբ 1660–ական թվականներին Իսպանիային պատկանող Ֆլանդրիայի և Բրաբանտի համար (ժամանակակից Բելգիա) Ֆրանսիայի և Իսպանիայի միջև ընթանում էր պատերազմ, Ֆրանսիայի դեմ հանդես եկան Հոլանդիան, Շվեդիան և Անգլիան:

Արևելաեվրոպական տարածաշրջանում միջազգային հարաբերությունների առանցք էին կազմում Ռուսաստանը, Լեհաստանը, Օսմանյան կայսրությունը: 1654–1667 թթ. Ուկրաինայի և Բելառուսի համար Ռուսաստանի և Լեհաստանի միջև սկսված պատերազմի մեջ ներքաշվեցին Շվեդիան և Օսմանյան կայսրությունը: Ռուսաստանը ձգտում էր մուտք ձեռք բերելու նաև դեպի Բալթիկ ծով:

XVIII դ. երկրորդ կեսին միջազգային հարաբերություններում լարվածության նոր ալիք սկսվեց՝ կապված Անգլիայի ամերիկյան գաղութների անկախացման համար մղվող պատերազմի հետ: Անգլիայի դեմ միավորվեցին Ֆրանսիան, Իսպանիան և Հոլանդիան: Իսկ Արևելյան Եվրոպայում Ռուսաստանը, հաջողության հասնելով Լեհաստանի դեմ պայքարում, շարունակում էր շարժվել դեպի Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Բալկաններ:

Այսպիսով՝ XVII դ. երկրորդ կեսից մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ընկած ժամանակահատվածում միջազգային հարաբերությունների գլխավոր առանձնահատկությունը կայուն աշխարհաքաղաքական համակարգի քայքայությունն էր:

Հեղափոխական Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը: Միապետությունը տապալած Ֆրանսիան սկսեց իրականացնել նոր՝ ազգային արտաքին քաղաքականություն, որը սուր հակամարտության մեջ մտավ Եվրոպայի այլ տերությունների հետ: Ֆրանսիան առաջ էր քաշել «երձիթներին՝ խաղաղություն, պալատներին՝ պատերազմ» կարգախոսը և հրաժարվում էր վարել նվաճողական պատերազմներ: Իսկ տարածքներ կցում էր՝ միայն հենվելով ժողովրդի ինքնիշխանության սկզբունքի վրա՝ օգտագործելով հանրաքվեների մեխանիզմը: Սակայն այդ քաղաքականությունը իրականում վերածվում էր հեղափոխությունը տարածելու կամ արտահանելու քաղաքականության:

Ֆրանսիան, հայտնվելով դիվանագիտական մեկուսացման մեջ, 1792 թ. պատերազմ սկսեց Ավստրիայի և Պրուսիայի դեմ: Առաջին փուլում նա կրում էր ծանր

պարտություններ: Արդյունքում Անգլիան, Ավստրիան և Պրուսիան տարածքային պահանջներ էին ներկայացնում Ֆրանսիային, ինչի պատճառով պատերազմը նրանց դեմ վերաճեց պատերազմի՝ հանուն անկախության:

Շրջադարձային եղավ 1794 թ.: Հակաֆրանսիական կոալիցիայի մեջ էին ներգրավվել Եվրոպայի համարյա բոլոր երկրները: Նա հարաքերություններ ուներ միայն ԱՄՆ-ի և Շվեյցարիայի հետ: Սակայն ռազմի դաշտում ֆրանսիական բանակն սկսեց հաղթանակներ տանել և ռազմական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածքները: Արդյունքում հակաֆրանսիական կոալիցիան քայքայվեց:

Ցակորհնյան բռնատիրության տապալումից հետո Ֆրանսիան սկսում է հետևողական պայքար՝ մայրցամաքային Եվրոպայում գերիշխանության համար: Պարտության մատնվեցին Իսպանիան, Հոլանդիան և Պրուսիան, որոնց հետ Բագելում 1795 թ. ստորագրվեցին խաղաղության պայմանագրեր: Հռենոսի ձախ ափը, այդ թվում՝ Բելգիան, միացվեցին Ֆրանսիային: Հոլանդիան ճանաչեց նրա գերիշխանությունը, իսկ հյուսիսային Գերմանիայի պետությունները հայտարարեցին իրենց չեզոքության մասին՝ դուրս գալով հակաֆրանսիական կոալիցիայից:

Այս հաջողությունից օգտվելով՝ ֆրանսիական դիվանագիտությունն սկսեց իրագործել իր առջև ծառայած հաջորդ խնդիրը՝ երկրի սահմանների ամրության ապահովումը: Այդ նպատակով սահմաններին հարող և այլ պետություններից բռնազավթված տարածքների վրա ստեղծվեցին Ֆրանսիայից կախյալ վիճակում գտնվող խամաճիկային «հանրապետություններ»: 1799 թ. Եվրոպայի քա-

ղաքական քարտեզի վրա կար արդեն **6 նման «ինքնիշխան» հանրապետություն:**

Դրանից հետո Ֆրանսիան անցավ իր բուն նպատակին՝ գերիշխանության հաստատմանը Արևելյան Միջերկրականի վրա:

1796–1797 թթ. այդ ծրագիրն իրականացավ երիտասարդ գեներալ Բոնապարտի ռազմական հանձարի շնորհիվ: Նա արագ պարտության մատնեց Ավստրիական կայսրությանը, որի ենթակայության տակ էր համարյա ողջ Իտալիան: Երբ ֆրանսիական զորքերը շարժվեցին դեպի մայրաքաղաք Վիեննա, Ավստրիան ստիպված ստորագրեց խաղաղության պայմանագիր:

Այդպիսով՝ Իտալիան անցավ Ֆրանսիայի գերիշխանության տակ, իսկ Եվրոպական դիվանագիտության թատերաբեմում հայտնվեց նոր գործող անձ՝ **գեներալ Բոնապարտը:** Հետագայում նա ժամանակավորապես գրավեց նաև Եգիպտոսը:

Մայրցամաքային Եվրոպայում առաջացավ նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Ֆրանսիան ոչ միայն զգալիորեն ամրապնդել էր իր դիրքերը Եվրոպայում, այլ նաև վտանգ էր ներկայացնում Անգլիայի ամենակարևոր գաղութի՝ Հնդկաստանի համար:

Սակայն Դիրեկտորիայի դիվանագիտությանը չհաջողվեց ամրագրել այդ հաջողությունները: Առաջացավ երկրորդ հակաֆրանսիական կոալիցիան Անգլիայի ղեկավարությամբ, և Ֆրանսիան հերթական անգամ հայտնվեց մեկուսացման մեջ: Դաշնակիցները վերսկսեցին ռազմական գործողությունները և հասան մի շարք հաղթանակների:

Նապոլեոնյան Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը: 1799–1815 թթ. Ֆրանսիան միանձնյա կառավարում էր

Բոնապարտը՝ սկզբում՝ որպես առաջին կոնսուլ, իսկ 1804 թվականից՝ որպես կայսր Նապոլեոն I: Նա էր հիմնականում որոշում և ղեկավարում երկրի արտաքին քաղաքականությունը: Նապոլեոնի կողքին էր կոմս *Թալեյրանը*, որը դասվում է բոլոր ժամանակների լավագույն դիվանագետների շարքին:

Այդ շրջանի ֆրանսիական արտաքին քաղաքականության նպատակը Եվրոպայում Ֆրանսիայի գերիշխանությունը ապահովելն էր և իր հիմնական ախտանի՛ն՝ Անգլիային պարտության մատնելը: Ֆրանսիան զիջում էր Անգլիային ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ ռազմածովային հզորությամբ: Անգլիան իր հերթին զիջում էր Ֆրանսիային ցամաքային ուժերի հզորությամբ: Այդ պատճառով, փորձելով դիմակայել Ֆրանսիայից եկող վտանգին, Անգլիան մայրցամաքում ստեղծում էր հակաֆրանսիական կոալիցիաներ, որոնք շեղում էին Ֆրանսիայի ուշադրությունը Անգլիայից:

Մարենգոյի (1800 թ.) ճակատամարտում ֆրանսիացիները պարտության մատնեցին ավստրիացիներին, որից հետո Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը դուրս եկան կոալիցիայից: Որպես հետևանք՝ կնքվեց Այնենի խաղաղության պայմանագիրը (1802 թ.), որով Անգլիան, կորցնելով իր դաշնակիցներից շատերի աջակցությունը, ստիպված էր ճանաչելու Ֆրանսիայի բոլոր տարածքային ձեռքբերումները Եվրոպայում:

Անգլիային հաջողվեց **1805 թ.** ստեղծել երրորդ հակաֆրանսիական կոալիցիան, սակայն *Առատերլիցի ճակատամարտում* Նապոլեոնի հաղթանակից հետո այն նույնպես փլուզվեց: Այս անգամ Ավստրիան ջախջախիչ պարտություն կրեց: Նա ստիպված էր համաձայնվել հարավգեր-

մանական մանր պետություններից կազմված *Հռենոսյան Միության* ստեղծման հետ, որն ընդունեց Ֆրանսիայի գերիշխանությունը: Նապոլեոնը որոշեց վերջ տալ նաև Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրությանը, որն արդեն վաղուց ի վեր գոյություն ուներ միայն թղթի վրա:

Գերմանական հողերի մի մասի վրա Ֆրանսիայի գերիշխանության հաստատումը անհանգստացրեց *Պրուսիային*, որն էլ դարձավ չորրորդ հակաֆրանսիական կոալիցիայի կենտրոնական ուժը: Սակայն մեկ ամիս անց Նապոլեոնին հանձնվեցին Բեռլինի բանալիները, և նա հանդիսավոր մուտք գործեց ջախջախված Պրուսիայի մայրաքաղաք:

Ռազմական հաղթանակներին հետևում էին դիվանագիտականները: Դրանցից ամենակարևորն էր 1806 թ. հայտարարված *Անգլիայի* մայրցամաքային շրջափակումը, որն արդյունք էր Ֆրանսիայի ճնշման:

Մայրցամաքային Եվրոպայում միակ չպարտված հզոր տերությունը մնացել էր *Ռուսաստանը: 1807 թ.* ֆրանսիական բանակը մոտեցավ նրա սահմաններին, սակայն Նապոլեոնը նախընտրեց համաձայնության գալ ռուսների հետ: Ստորագրվեց *Տիլզիտի պայմանագիրը*, որով ռուսական կայսր Ալեքսանդր I-ը ճանաչեց Ֆրանսիայի բոլոր տարածքային ձեռքբերումները Եվրոպայում: Փոխարենը նա ստացավ գործողությունների ազատություն իր վաղեմի հակառակորդներ Օսմանյան կայսրության ու Շվեդիայի դեմ: Դա ռուսական դիվանագիտության կարևոր հաղթանակն էր: Պատահական չէ, որ հետագայում Նապոլեոնը խոստովանում էր, որ դեռևս նախքան 1812 թ. պատերազմը Ռուսաս-

տանի դեմ սկսելն, ինքը կիսով չափ արդեն պարտված էր:

1809 թ. ստեղծվեց հինգերորդ հակաֆրանսիական կոալիցիան: Այս անգամ Անգլիայի կողքին մնացել էր միայն Ավստրիան: Չնայած այն հանգամանքին, որ ավստրիական բանակը կռվեց խիզախությամբ, սակայն մի քանի ամսից ֆրանսիացիները գրավեցին Վիեննան: Պատերազմը Ռուսաստանի դեմ դարձավ անխուսափելի:

Ռուսաստանից 1812 թ. Ֆրանսիայի կրած ծանր պարտությունը փոխեց ուժերի հարաբերակցությունը Եվրոպայում: Արդեն հաջորդ տարում Ռուսաստանը և

Պրուսիան կնքեցին հակաֆրանսիական դաշինք, որին շուտով միացավ Ավստրիան: **1813 թ. Լայպցիգի** մոտ տեղի ունեցած «*ժողովուրդների ճակատամարտում*» այդ երկրների միացյալ բանակը հաղթեց Նապոլեոնին՝ այդպիսով նախանշելով Ֆրանսիայի վերջնական պարտությունը: 1814 թ. կնքվեց քառակողմ (Ռուսաստան, Անգլիա, Ավստրիա, Պրուսիա) հակաֆրանսիական պայմանագիր, որը հիմք դրեց հետպատերազմյան Եվրոպայի միջազգային հարաբերությունների նոր համակարգին: Այն մտավ պատմության մեջ որպես **Վիեննայի համակարգ**:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՞ք միջազգային հարաբերությունների փուլերը Նոր ժամանակներում:
2. Ո՞ր պետություններն առավել շահեցին Վեստֆալյան խաղաղության պայմանագրից: Եվրոպական պետությունների փոխհարաբերություններում XVII դ. երկրորդ կեսին ինչպիսի՞ նոր գործոն հանդես եկավ: Ո՞ր պետություններն էին կազմում միջազգային հարաբերությունների առանցքն Արևելյան Եվրոպայում:
3. Ի՞նչ արտաքին քաղաքականություն էր վարում հեղափոխական Ֆրանսիան: Ինչո՞ւ նա հայտնվեց դիվանագիտական մեկուսացման մեջ: Յո՞ւյց տվե՞ք հեղափոխության տարածման քաղաքականության արդյունքները:
4. Ներկայացրե՞ք դիրեկտորիայի դիվանագիտության մեջ տեղի ունեցած փոփոխությունները և դրանց արդյունքները:
5. Ո՞ւմ դեմ էր ուղղված Նապոլեոնի արտաքին քաղաքականությունը: Ո՞վ էր Թալեյրանը: Որո՞նք էին ցամաքային Եվրոպայում Նապոլեոնի հաջողությունների պատճառները: Ինչո՞ւ Ֆրանսիան պարտվեց Ռուսաստանին, ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ պարտությունը:

§ 2. ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1814–1860–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վիեննայի համաժողովը և Սրբազան դաշինքի ստեղծումը: Վիեննայի համաժողովը (1814–1815 թթ.) իր ժամանակի համար բացառիկ երևույթ էր: Այն ոչ միայն իրականացրեց հետպատերազմյան Եվրոպայի տարածքային վերաբաժանումը, այլ նաև միջազգային հարաբերություն-

ների նոր համակարգի հիմքը դրեց: Վիեննայի համաժողովը մշակեց նաև դիվանագիտական գործունեության հիմքերը, որոնք լայնորեն կիրառվում են մինչ օրս:

Նապոլեոնյան Ֆրանսիային հաղթող տերությունները՝ Ռուսաստանը, Անգլիան, Ավստրիան, Պրուսիան, Եվրոպայում



Շառլ Մորիս դը Թալեյրան

ուժերի հարաբերակցությունը պահպանելու համար համաժողովի աշխատանքներին հրավիրեցին մասնակցելու նաև պարտված Ֆրանսիային: Մասնակցում էին նաև եվրոպական մի շարք այլ պետություններ՝ Շվեդիան, Իսպանիան, Պորտուգալիան, որոնք համաժողովում որոշիչ դեր չէին խաղում:

Համաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին ռուսական կայսր **Ալեքսանդր I-ը** և ավստրիական կայսր **Ֆրանց I-ը**, ինչպես նաև ժամանակի խոշորագույն դիվանագետներից Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար **Թալեյրանն** ու Ավստրիայի կանցլեր **Մետերնիխը**:

Թալեյրանը համաժողովի իրական առաջատար դեմքն էր: Նրա դիվանագիտական հանձարի մեծագույն նվաճումն էր հաղթողների միջև գոյություն ունեցող հակասությունների օգտագործման միջոցով Եվրոպայի տերությունների շարքում պարտված Ֆրանսիայի տեղի վերականգնումը:

Կայսր Ալեքսանդր I-ը, զիջելով Թալեյրանին դիվանագիտական պայքա-



Ալեքսանդր I

րում, փորձում էր ստանձնել համաժողովի հոգևոր առաջնորդի դերը: Նա էր հեղինակել **1815 թ. սեպտեմբերին** ընդունված **հայտարարագիրը**, որը հիմք հանդիսացավ Սրբազան դաշինքի համար: Քրիստոնեական կրոնի ոգով տոգորված այդ փաստաթղթում նշվում էր, որ այսուհետ տերություններն իրենց հարաբերություններում պետք է ղեկավարվեն սիրո, արդարության, խաղաղության և եղբայրության սկզբունքներով: Սակայն համաժողովում մասնակիցների միջև ծավալվել էր կատաղի դիվանագիտական պայքար՝ նոր տարածքներ զավթելու նպատակով: Պրուսիան ձգտում էր իրեն միացնելու Սաքսոնիան, Ռուսաստանը՝ Պրուսիայի տիրապետության տակ գտնվող լեհական հողերը, Ավստրիան՝ ավելացնելու իր իտալական տիրույթները: Միայն Անգլիան էր, որը չէր ձգտում հասնելու տարածքային ձեռքբերումների Եվրոպայում՝ սահմանափակվելով Հնդկաստանում ու Հնդկաչինում Ֆրանսիայից զավթած գաղութներով:

Համաժողովում ընդգծվում էր նաև միապետների օրինական իրավունքը՝ ղե-

կավարելու երկրները և ժողովուրդներին՝ որպես միասնական քրիստոնեական ընտանիքի անդամների հայրեր: Նրանց կամքը համարվում էր սրբազան, իսկ ամեն մի ընդվզում դրա դեմ՝ անօրինական:

Վիեննայի համաժողովը կարևոր նշանակություն ունեցավ միջազգային հարաբերությունների համակարգը մեծ տերությունների կողմից ավելի կառավարելի դարձնելու տեսակետից: Համակարգի մասնակից տերությունների միջև հավասարակշռության պահպանումը համարվեց կարևորագույն նպատակ: Այդ համակարգն ընդունված է անվանել «եվրոպական համերգ»:

Սրբազան դաշինքի գործունեությունը:

Նորաստեղծ դաշինքի գործունեությունը ծավալվեց երկու ուղղությամբ: Դրանցից առաջինը ձգտում էր մեծ տերությունների տարածքային զավթումներին հաղորդելու օրինական տեսք՝ պահպանելով համակարգի հավասարակշռությունը: Իսկ երկրորդի գերագույն նպատակը բոլոր միջոցներով Եվրոպայում ծավալվող հեղափոխությունների դեմ պայքարելն էր:

Վիեննայի համաժողովում որոշում ընդունվեց բաժանելու լեհական հողերը Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև: Սաքսոնիայի մեծ մասը, ինչպես նաև մի շարք այլ գերմանական հողեր անցան Պրուսիային՝ այդպիսով ավելի ուժեղացնելով Պրուսիայի դիրքերը որպես համաժողովի կողմից ստեղծված Գերմանական միության ղեկավար:

Վիեննայի համաժողովը մերժեց պետականություն չունեցող երկրների իրավունքը՝ ստեղծելու իրենց ազգային պետությունները՝ համարելով այն անօրինական: Այդպիսով՝ եվրոպական մի շարք խոշոր ժողովուրդներ՝ իտալացիները,

գերմանացիները, լեհերը, բելգիացիները, գրկվեցին միասնական ազգային պետականությունն ունենալու իրավունքից:

Սրբազան դաշինքի անդամ պետությունները պարբերաբար կազմակերպում էին համաժողովներ, որտեղ քննարկվում էին գոյություն ունեցող աշխարհակարգին սպառնացող վտանգները կանխելուն ուղղված համատեղ գործողությունները:

Վիեննայի կոնգրեսը և Սրբազան դաշինքի ստեղծումը միայն ժամանակավորապես ապահովեցին ձևավորված աշխարհակարգի անխափան գոյությունը: Արդեն 1820-ական թթ. սկիզբ առան հեղափոխություններ (Իսպանիա, Իտալիա) և ազգային-ազատագրական շարժումներ: Դաշինքի անունից գործող Ֆրանսիան գորք մտցրեց Իսպանիա և վերականգնեց այնտեղ Բուրբոնների արքայատոհմի իշխանությունը: Նույնը կատարվեց Իտալիայում, որտեղ միայն ավստրիական քանակի ներխուժման շնորհիվ իրենց գոյությունը պահպանեցին Նեապոլի և Պյեմոնտի թագավորությունները:

Արդեն նույն՝ 1820-ական թթ. Դաշինքի անդամների հարաբերություններում սկսեցին նկատվել տարաձայնություններ կապված այս կամ այն հարցի հետ, մասնավորապես հունական ապստամբության հարցում:

1821 թ. Հունաստանում սկսվեց ապստամբություն օսմանյան տիրապետությունից ազատագրվելու նպատակով: Սրբազան դաշինքը դատապարտեց հույների ապստամբությունն ընդդեմ «օրինական տիրակալի»: Ավստրիայի կանցլեր Մետերնիխն առաջարկեց չմիջամտել հույների և թուրքերի միջև ընթացող պատերազմին:

Սակայն 1825 թ. Ռուսաստանը, լինելով Դաշինքի անդամ, այնուամենայնիվ

որոշեց միջամտել հունական գործերին՝ նպատակ ունենալով մեծացնել իր ազդեցությունը Բալկաններում: Այդպիսի դիրքորոշում ուներ նաև Անգլիան՝ առաջնորդվելով միևնույն դրդապատճառներով: 1827 թ. կնքվեց ռուս-անգլո-ֆրանսիական համաձայնագիր հունական հարցերում համատեղ գործունեության վերաբերյալ: Դաշնակիցներն առաջարկեցին սուլթանին զորքերը դուրս բերել Հունաստանից և վերջինիս ինքնավարություն տրամադրել: Մերժում ստանալով՝ դաշնակիցների միացյալ նավատորմը Նավարինի մոտ ջախջախեց օսմանյան ուժերին: Հաջորդ տարի Նիկոլայ I-ը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը, իսկ ֆրանսիական զորքերն ասի իջան Հունաստանում: Շուտով Հունաստանն անկախություն ստացավ:

Միջազգային հարաբերությունները XIX դարի կեսերին: Դարի կեսերին Եվրոպայի միջազգային հարաբերություններում սկսվում են նոր միտումներ, որոնցից գլխավորը Սրբազան դաշինքի անդամների միջև հակասությունների խորացումն էր:

Դաշնակիցների միջև հակասությունները սրվեցին՝ կապված Օսմանյան կայսրության և կախյալ Եգիպտոսի միջև սկսված պատերազմի հետ: Օգտվելով 1828–1829 թթ. կայսրության՝ Ռուսաստանից կրած պարտությունից՝ Եգիպտոսի կառավարիչ Մուհամմեդ Ալին 1831 թ. զորք մտցրեց Սիրիա և Լիբանան ու պարտության մատնեց թուրքերին: Անգլիան և Ֆրանսիան մերժեցին սուլթանին օգնել Եգիպտոսի դեմ պատերազմում: Միայն Ռուսաստանը համաձայնվեց օգնել և նույնիսկ մի նավախումբ ուղարկեց Կոստանդնուպոլիս: Մուհամմեդ Ալին ստիպված էր հետ քաշել իր զորքերը: Զգալով

Օսմանյան կայսրության վրա Ռուսաստանի ազդեցության խորացումը՝ Անգլիան և Ֆրանսիան իրենց վրա վերցրին թուրքերի և եգիպտացիների միջև բանակցությունները կազմակերպելու խնդիրը: Օսմանյան կայսրության և Եգիպտոսի միջև կնքվեց պայմանագիր, որով Եգիպտոսը, ձեռքանորեն համարվելով սուլթանից կախյալ, ստացավ Սիրիան և Պաղեստինը: Նույն թվականին կնքվեց նաև ռուս-թուրքական պայմանագիր փոխօգնության մասին (Ունքյար-Իսքելեսիի պայմանագիրը):

Եգիպտական միջադեպը եվրոպական տերություններն օգտագործեցին նաև Օսմանյան կայսրության նկատմամբ իրենց վերահսկողությունը մեծացնելու հարցում: Ռուսաստանը, Անգլիան, Ավստրիան, Պրուսիան և Օսմանյան կայսրությունը **1840 թ. Լոնդոնում** կնքեցին համաձայնագիր: Ըստ դրա՝ հիշյալ պետությունները պարտավորվում էին աջակցել կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը: Միաժամանակ արգելվեց պետությունների ռազմանավերի մուտքը Բոսֆորի և Դարդանեղի նեղուցներ:

Վերոհիշյալ իրադարձությունները հստակորեն դրսևորեցին Սրբազան դաշինքի անկայունությունը: Այս շրջանից սկսվում է դաշնակիցների հարաբերությունների անշեղ սրում: Եվրոպական տերություններից յուրաքանչյուրն ուներ սեփական շահերը, որոնք պատմական որոշակի իրավիճակներում պետք է գերակայեին ընդհանուրի նկատմամբ: XIX դ. կեսերին և հետագայում այդ շահերի կիզակետը Օսմանյան տերությունն էր, հատկապես դրա Բալկանյան հատվածը:

Դա վառ դրսևորվեց Ղրիմի պատերազմում (1853–1856 թթ.), երբ Դաշինքի անդամները հանդես եկան միմյանց դեմ: Այդպիսով՝ Սրբազան դաշինքը և դրա

հիման վրա ձևավորված քաղաքական համակարգն անցյալի գիրկն անցավ: Այսուհետև պետությունների միջև հարաբերությունների բնույթը պայմանավորված էր պահի թելադրանքով՝ կապված որևէ կոնկրետ խնդրի լուծման հետ: Այդպիսի իրավիճակ ստեղծվեց 1859–1861 թթ.՝ կապված Ռումինիայի անկախության խնդրի հետ: Մոլդովայի և Վալախիայի միավորմամբ Ռումինիայի ստեղծումն առաջ բերեց Օսմանյան կայսրության, Ավստրիայի և Անգլիայի դժգոհությունը՝ Ռուսաս-

տանից և Ֆրանսիայից աջակցություն չստանալու պատճառով:

Միջազգային հարաբերություններում որակապես նոր փուլ սկսվեց Գերմանիայի միավորմամբ և դրան հաջորդած 1870–1871 թթ. Ֆրանս–պրուսական պատերազմով: Այսուհետև եվրոպական մայրցամաքում սկսվեց քաղաքական ուժերի վերադասավորում, որի հետևանքը կայուն ռազմաքաղաքական խմբավորումների ձևավորումն էր XIX դարավերջին և XX դարի սկզբներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ նպատակով էր գումարվել Վիեննայի համաժողովը: Ովքեր էին գլխավոր դերակատարները միջազգային այդ մեծ հավաքում: Պարզաբանե՞ք Ալեքսանդր I–ի հայտարարագրի էությունը. ինչ դեր խաղաց այն: Բացատրե՞ք նոր աշխարհակարգի բնորոշ կողմերը: Վերհանե՞ք Վիեննայի վեհաժողովի նշանակությունը:
2. Ո՞ր ուղղություններով ծավալեց իր գործունեությունը Սրբազան դաշինքը: Ինչո՞ւ անտեսվեց ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Ինչ տարաձայնություններ կային Սրբազան դաշինքի տերությունների միջև: Գնահատե՞ք Դաշինքի գործունեությունը:
3. Եվրոպայում XIX դ. կեսերին ինչ նոր միտումներ ի հայտ եկան միջազգային հարաբերություններում: Ներկայացրե՞ք տերությունների միջև ծավալված պայքարը՝ Օսմանյան կայսրությունում իրենց դիրքերն ամրապնդելու համար: Ո՞րն էր Արիմի պատերազմի գլխավոր պատճառը: Ինչ հետևանք ունեցավ այս պատերազմը Վիեննայի աշխարհակարգի համար: Դրանից հետո ինչ միտումներ էին գերակշռում եվրոպական միջազգային հարաբերություններում:

§ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Միջազգային հարաբերությունների զարգացման նոր դարաշրջանը: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին միջազգային հարաբերություններում ի հայտ եկան նոր իրողություններ: Նախ՝ համաշխարհային տնտեսության առաջացումը նպաստեց միջազգային հարաբերությունների ազատականացմանը: Միջազգային տնտեսական համագործակցությունը դարձավ բազմակողմ և բազմաբնույթ:

Միջազգային հարաբերությունների ազատականացման գործում մեծ դեր էին խաղում նաև հասարակական շարժումները, մամուլը, համանեվրոպական մշակութային միջոցառումները և այլն: Եվրոպայում և Ամերիկայում առաջանում էին տարբեր բնագավառներում համագործակցող միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ:

Մարդկանց ամենից շատ մտահոգում էր պատերազմի հիմնախնդիրը: Գիտատեխնիկական մեծ նվաճումները նոր դարաշրջանում հնարավորություն տվեցին կատարելագործելու գենքի տեսակները, ստեղծելու նորերը: Պատերազմներն առավել քան երբևէ դարձան ավերիչ և հաճախակի: Այս բոլորը դրդեց տարբեր երկրների առաջադեմ մարդկանց պայքար սկսելու բոլոր տեսակի պատերազմների դեմ: Այսպես առաջացավ խաղաղության կողմնակիցների միջազգային շարժումը: Նրանց մասնակիցներին անվանում էին **խաղաղապաշտներ** (պացիֆիստ): Խաղաղապաշտները համոզված էին, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ասպարեզում բոլոր հակամարտություններն անխտիր պետք է լուծել բանակցությունների ճանապարհով: **1843 թ.** նրանք առաջին անգամ Լոնդոնում գումարեցին **Խաղաղության համաշխարհային համաժողով**: Այդպիսի համաժողովների հրավիրումը տարբեր քաղաքներում դարձավ ավանդույթ:

Խաղաղապաշտները ծավալեցին հակապատերազմական լայն քարոզչություն, որը մեծ տարածում գտավ XIX դ. 80–90-ական թվականներին: Խաղաղապաշտները փորձում էին կրոնական կամ իմաստասիրական գաղափարներով հիմնավորել բոլոր պատերազմների անբարոյականությունը: Նրանք դեմ էին ուզվածական ծախսերի մեծացմանը, նոր զինատեսակների տարածմանը: **1891 թ.** Բեռնում ստեղծվեց **Խաղաղության միջազգային բյուրո**: Խաղաղապաշտներն աշխարհում հրատարակում էին 33 պարբերական: Առաջին աշխարհամարտի նախօրյակին աշխարհի 19 երկրներում գործում էին 136 խաղաղապաշտական կազմակերպություններ:



Անրի Դյունան, շվեյցարացի ձեռներեց, հասարակական գործիչ, Կարմիր խաչի միջազգային ընկերության հիմնադիրը

Խաղաղապաշտների և միջազգային համագործակցության կողմնակիցների գործունեության արդյունքներից մեկը **Միջազգային կարմիր խաչի** ընկերության ստեղծումն էր (1863 թ.): Չեզոքություն պահպանելով՝ ընկերությունը նպատակ ուներ անխտիր օգնելու պատերազմներից բոլոր տուժածներին: Հետագայում կազմակերպությունն իր գործունեությունն ընդլայնեց, դարձավ ազդեցիկ միջազգային ուժ և գործում է մինչ օրս:

Միջազգային կյանքում մեծ դեր էին խաղում նաև կրոնական, արհմիութենական, եկեղեցական և կանանց տարաբնույթ կազմակերպությունները:

Միջազգային իրավունքի մարդասիրական նորմերի տարածումը նպաստում էր ժողովուրդների փոխըմբռնմանը և խաղաղության պահպանմանը: Առանց դրանց պատերազմները կդառնային ավելի հաճախակի և ավելի ավերիչ:

Ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը ստիպեց պետություններին ընդլայնել միջազգային իրավունքը, համագործակցության ձևերը, ավելի մեծ ուշադրություն դարձնել պատերազմի և խաղաղության հիմ-

նախնդիրներին: Ֆրանս-գերմանական պատերազմից հետո շատ երկրների խորհրդարանականներ սկսեցին մասնակցել խաղաղության կողմնակիցների շարժմանը: Խաղաղապաշտ խորհրդարանականները հաճախ էին հրավիրում միջազգային համաժողովներ: **1899 թ.** նրանք ստեղծեցին *Միջխորհրդարանական միություն*, որը հրավիրում էր տարեկան նստաշրջաններ:

Իրենց հերթին՝ պետությունները ևս ձգտում էին միջազգային օրենքներով կարգավորելու պատերազմ վարելու միջոցները և միջպետական համագործակցությունը տարաբնույթ հարցերում: Նույն միտումով ջանքեր էին գործադրվում նաև կանխելու պատերազմները, խաղաղ լուծում տալու հակամարտություններին, ստեղծելու միջնորդ դատարաններ: 1881–1900 թթ. դիվանագետների ջանքերով 111 միջազգային հակամարտություն խաղաղ լուծում է ստացել: **1889 թ.** Ռուսաստանի նախաձեռնությամբ *Հասագայում* հրավիրվեց 26 պետությունների միջազգային համաժողով: Ընդունված համաձայնագրով երաշխավորվում էր միջազգային վեճերի խաղաղ կարգավորումը: Կարգավորվեցին պատերազմ վարելու առանձին ձևերը, արգելվեց պայթող գնդակների և թունավոր նյութերի օգտագործումը:

1907 թ. Հասագայում ԱՄՆ–ի նախաձեռնությամբ երկրորդ անգամ հրավիրվեց պետությունների համաժողով: Այս անգամ նրա աշխատանքներին մասնակցում էին 44 պետություններ: Վիեննայի վեհաժողովից հետո այդքան պետություններ համատեղ քննարկումներ չէին կատարել: Այստեղ կարգավորվեցին միջազգային հակամարտությունների լուծման սկզբունքները: Սահմանափակվեց ուժի օրինական օգտագործման շրջանակը,

հստակեցվեցին ցամաքում և ծովում պատերազմներ վարելու չափանիշները: Այլ որոշումներով սահմանվեցին չեզոք երկրների իրավունքները և պարտականությունները: Համաժողովում հաստատված պատերազմի մասին միջազգային իրավունքի շատ չափանիշներ այսօր ևս չեն կորցրել իրենց արդիականությունը:

Ռազմաքաղաքական դաշինքների ձևավորումը Եվրոպայում: Արդյունաբերական հեղաշրջման ավարտը նշանավորվեց նոր՝ հակասական աշխարհաքաղաքական համակարգի ստեղծմամբ: Արդյունաբերական քաղաքակրթության արժեքներն ամրապնդվեցին և անշեղորեն տարածվում էին աշխարհում: Սակայն այս դրական միտումը հետզհետե հակասական ընթացք էր ստանում: Ինչպես նշվել է, հետամնաց ազգերի նկատմամբ սեփական գերազանցության համոզմունքը եվրոպական ազգերի մոտ դարձավ մեծապետական գաղափարախոսության հիմնարար դրույթ: Այն ընդունված է անվանել *խնկերխախում* (ծավալապաշտություն):

Հակասություններով լեցուն էին նաև պետությունների հարաբերությունները: Ինչպես գիտեք, Վիեննայի վեհաժողովի հաստատած «ուժերի հավասարակշռությունը» XIX դ. 60–ական թվականներին փլուզվեց: Ազգային նոր պետությունների առաջացումը Եվրոպայում ստեղծեց նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Պետությունների արտաքին քաղաքականության գլխավոր փաստարկ դարձավ երկրի աշխարհագրական դիրքի ամրապնդման, կենսական տարածքների գրավելու անհրաժեշտությունը: Ակնհայտ էր, որ եվրոպական պետությունները ոչ միայն ձգտում էին նվաճելու հետամնաց երկրներ, այլև գերիշխելու միմյանց: Նրանց միջև սկսվեց ռազմական տենդագին

մրցավազք: 1883–1903 թթ. ընթացքում եվրոպական պետություններում ռազմական ծախսերն աճեցին 200%-ով, իսկ գինվորների քանակը՝ 25%-ով: Եվրոպայում հակասություններն աստիճանաբար խորանում էին մի կողմից՝ նորաստեղծ Գերմանական կայսրության, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի, մյուս կողմից՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:

Օ. Բիսմարկը ձգտում էր մեկ անգամ ևս ջախջախելու Ֆրանսիան: Այդ հարցում Ռուսաստանի հետ համաձայնության ձախողումից հետո նա 1879–1882 թթ. ստեղծեց հզոր ռազմաքաղաքական *Եռյակ դաշինք*՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մասնակցությամբ: Այսպես եվրոպայում սկսվեց քաղաքական միությունների մի նոր դարաշրջան, որն ի վերջո հանգեցրեց աղետալի հետևանքների:

Եռյակ դաշինքի ստեղծումից հետո Ռուսաստանի և Ֆրանսիայի համար պարզ դարձավ, որ եվրոպայում իրենց գլխավոր հակառակորդը Գերմանական կայսրությունն է: Ուստի նրանց միջև ավելի վաղ սկսված մերձեցումը 1891–1893 թթ. ավարտվեց ռազմաքաղաքական դաշինքի կնքմամբ:

Այս բոլորը, ինչպես նաև գաղութային նվաճումների ընդլայնումը ավելի սրեցին միջազգային լարվածությունը: Մեծ Բրիտանիան, որ մինչ այդ վարում էր «փայլուն մեկուսացման» քաղաքականություն, երկյուղ կրելով Գերմանիայի հզորացումից և իր գաղութները կորցնելու վտանգից, նույնպես դաշնակիցներ էր փնտրում: Դա հանգեցրեց երկու դարավոր հակառակորդների՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի մերձեցմանը: Արդյունքում **1904 թ.** հարթվեցին բոլոր տարաձայնությունները,

և աշխարհում ազդեցության ոլորտների բաժանման մասին եկան «*արտագին համաձայնություն*» (ֆրանս.՝ Entente cordiale, կրճատ՝ Անտանտ): **1907 թ.** Անտանտին միացավ նաև Ռուսաստանը, որով համաձայնությունը դարձավ եռակողմ: *Եռյակ դաշինքի* և *Եռյակ համաձայնություն*՝ Անտանտի մրցակցությունը ի վերջո հանգեցրեց համաշխարհային պատերազմի:

ԱՄՆ-ը միջազգային հարաբերություններում: XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին միջազգային հարաբերություններում կարևոր տեղ էին զբաղեցնում նաև ամերիկյան պետությունները: Անշուշտ, նրանցից առաջնային դեր կատարում էր ԱՄՆ-ը, չնայած նա չէր խառնվում եվրոպական գործերին: Դա մի կողմից վկայում է այն մասին, որ նա դեռևս չէր կարող իր կամքը թելադրել եվրոպական տերություններին: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ն այնքան էր հզորացել, որ չէր ցանկանում իր գործունեությունը սահմանափակել պայմանագրերով և դրանից բխող պարտավորություններով: Հիրավի, ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը ԱՄՆ-ը չմտավ որևէ ռազմաքաղաքական միության մեջ, չստանձնեց և ոչ մի աշխարհաքաղաքական նպատակ հետապնդող պարտավորություն:

ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը տվյալ դարաշրջանում ընդգրկում էին Լատինական Ամերիկան, Խաղաղ օվկիանոսի ավազանի և հատկապես Հեռավոր Արևելքի երկրները:

Արդեն նշվել է XIX դ. վերջին համաամերիկյան գաղափարների տարածման մասին: XX դ. սկզբին ԱՄՆ-ը Լատինական Ամերիկայում վարում էր «*մեծ մահակի*», այսինքն՝ բռնի ուժով իր ազդեցությունն այնտեղ հաստատելու քաղա-

քականություն: Կուբան իր ազդեցությամբ ենթարկելուց հետո (1898–1901 թթ.) ԱՄՆ–ը 1903 թ. Պանամայում խռովություն հրահրեց: Պանաման անջատվեց Կոլումբիայից և դարձավ առանձին պետություն: Միայն դրանից հետո ԱՄՆ–ը կարողացավ իրագործել Պանամայի ջրանցքի կառուցումը, որը տնտեսական մեծ նշանակություն ուներ: Նույն ձևով Լատինական Ամերիկայի երկրներին պարտադրում էր պայմանագրեր, ինչն իրավունք էր տալիս նրան միջամտելու այդ պետությունների ներքին գործերին:

ԱՄՆ–ը բոլոր միջոցներով ձգտում էր տիրելու նաև Խաղաղ օվկիանոս-

սի ծովային ուղիներին: XIX դ. վերջին նա կարողացավ իր հովանավորությունը տարածել Ֆիլիպինների և Հավայան կղզիների վրա: Միևնույն ժամանակ սկսվեց նաև ներթափանցումը Կորեա և Չինաստան: Այդ ժամանակ արդեն մեծ տերությունները Չինաստանը բաժանել էին ազդեցության գոտիների: Սակայն ԱՄՆ–ը մերժեց այդ և 1899 թ. հայտարարեց, որ ինքը Չինաստանում վարելու է *«բաց դռների և հավասար հնարավորությունների»* քաղաքականություն: Այդպես նա ապահովեց իր ներկայությունը նաև Չինաստանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նոր դարերում ինչ իրողություններ ազդեցին միջազգային հարաբերությունների զարգացման վրա: Ինչը նպաստեց խաղաղապաշտական շարժման առաջացմանը: Ներկայացրե՞ք այդ շարժման զարգացման ընթացքը XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Թվարկե՞ք միջազգային նորաստեղծ մյուս կազմակերպությունները: Բացատրե՞ք Հաագայի 1889 թ. և 1907 թ. միջազգային համաժողովների նշանակությունը:
2. Որո՞նք էին Եվրոպայում ազգամաքաղաքական երկու դաշինքների առաջացման պատճառները: Երբ դրանք ստեղծվեցին, թվարկե՞ք մասնակից երկրները: Ինչ նպատակներ էին հետապնդում երկու խմբավորումները և դրանց գլխավոր մասնակիցները:
3. Ինչը նպաստեց ԱՄՆ–ի միջազգային դերի աճին: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ԱՄՆ–ը չէր խառնվում եվրոպական գործերին: Ո՞ր տարածքներն էին մտնում նրա աշխարհաքաղաքական շահերի ոլորտը: Բացատրե՞ք «մեծ մահակի» ու «բաց դռների և հավասար հնարավորությունների» արտաքին քաղաքական սկզբունքների էությունը:

§ 4. ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Նոր դարերի պատերազմների բնույթը: Պատերազմները միշտ ուղեկցել են մարդկությանը և եղել համաշխարհային պատմական գործընթացի անբաժան մասը: Նոր դարերում, արդյունաբերական քաղաքակրթության ձևավորմանը զուգընթաց, պատերազմների գլխավոր պատճառ դարձավ հումքի և սպառման շուկաների համար պետությունների տա-

րածքային և գաղութային ընդարձակման անզուսպ միտումը: Մյուս կարևոր պատճառը նոր, ազգային պետությունների առաջացման գործընթացն էր, որն անհնար էր առանց ուժի կիրառման: Հետևելով այս մտտեցմանը՝ պատերազմներն իրենց բնույթով կարող են լինել *արդարացի և անարդարացի:*

Արդարացի են այն պատերազմները, որոնք նպատակ ունեն ազգն ազատագրելու մեկ այլ ազգի տիրապետությունից, պատմական սահմաններում ստեղծելու ազգային պետություն: Նոր ժամանակներում այդպիսի ազատագրական պատերազմների գլխավոր գաղափարը **ազգերի բնական ինքնորոշման իրավունքն էր**: Այդպիսի պատերազմների արդյունքում են առաջացել Բալկանյան թերակղզու և Լատինական Ամերիկայի պետությունները: Այդպիսի պատերազմների դրսևորումներ են հեղափոխությունների ժամանակ տեղի ունեցած քաղաքացիական կռիվները, օրինակ՝ անգլիական և ֆրանսիական հեղափոխությունները: Արդարացի պատերազմների օրինակ են նաև ազգային հեղափոխությունները, երբ ազգն ազատագրվում է օտար տիրապետությունից: Այդպիսի երկրների օրինակ է Իտալիան:

Անարդարացի են այն պատերազմները, որոնք նպատակ ունեն բռնությամբ յուրացնելու այլ ազգերի տարածքները և շահագործելու նվաճված ժողովուրդներին: Ինչպես նշվեց, նոր ժամանակներում այդպիսի գավթողական պատերազմների մեծ մասը տեղի էր ունենում գաղութացման ընթացքում: Պատերազմներ մղվում էին ոչ միայն բնիկ ժողովուրդների դեմ, այլև գաղութատեր երկրների միջև: Դրանք ընթանում էին աննախադեպ և առանձնակի դաժանությամբ:

Պատերազմներ աշխարհի տարածքային բաժանման համար տեղի էին ունենում բազմաթիվ տեղական պատերազմներ: Դրանք անարդարացի կամ, ինչպես հաճախ անվանում են, իմպերիալիստական պատերազմներ էին: Դրանցից մեկը իսպանա-



Գեներալ Կ. Գարսիան և ամերիկյան զորքերի իրանանատար Ու. Լուդլուն Կուբայում, 1898 թ.

ամերիկյան պատերազմն էր Կուբայում գերիշխելու համար:

Լատինական Ամերիկայում գտնվող Կուբան դեռևս շարունակում էր մնալ Իսպանիայի գաղութը, որը խանգարում էր նրա զարգացմանը: XIX դ. երկրորդ կեսին իսպանական լծի դեմ ազատագրական պայքարը դարձավ կազմակերպված: 1895 թ. հերթական անգամ բռնկվեց ազատագրական պատերազմ: Սակայն 1898 թ. ԱՄՆ-ը Կուբային օգնելու պատրվակով պատերազմ հայտարարեց Իսպանիային: Կարճ ժամանակում Իսպանիան պարտվեց, իսկ ԱՄՆ-ի զորքերը հաստատվեցին Կուբայում: **Կուբան ձևականորեն հռչակվեց անկախ պետություն (1902 թ.):** Ամերիկյան զորքերը «Համաշխարհային շաքարամանից», ինչպես անվանում էին Կուբային, հեռացան միայն այն բանից հետո, երբ նրա սահմանադրության մեջ ամրագրվեց երկրի ներքին գործերին ԱՄՆ-ի միջամտության և նրա տարածքն օգտագործելու իրավունքը:

Արդեն նշվել է Կապի գաղութի և բուրերի երկրի մասին: Անգլիան ամեն կերպ

ձգտում էր զավթելու բուրական երկու հանրապետությունների՝ Տրանսվալի և Օրանժի՝ ավաաստով հարուստ հողերը: **1899–1902 թթ.** նրանց միջև տեղի ունեցավ պատերազմ: Այդ պատերազմին բնիկ աֆրիկացիները չէին մասնակցում: Երկու ճակատամարտերում բուրերին պարտվելուց հետո անգլիացիներն իրենց գորքի թիվը հասցրին 450 հազարի: Չնայած փոքրաթվությանը՝ բուրերը կովում էին մեծ անձնագրհույամբ: Ի վերջո բուրերի ուժերը սպառվեցին, և նրանք ստիպված էին հանձնվել:

Աֆրիկայում և Ասիայում զավթողական պատերազմներ էր վարում նաև Ֆրանսիան: 1830 թ. ներխուժելով Ալժիր՝ ֆրանսիական բանակը տևական պատերազմների միջոցով զավթեց երկիրը: 1881 թ. նույն կարգով Ֆրանսիան բռնազավթեց նաև Թունիսը: 1883–1885 թթ. Չինաստանի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցավ պատերազմ, որի արդյունքում Ֆրանսիան բռնազավթեց Վիետնամը:

Գաղութային տևական պատերազմներ էին վարում նաև Գերմանիան և Իտալիան: Վերջինս, որ երազում էր երբեմնի Հռոմեական կայսրությունը վերականգնելու մասին, նվաճումներ սկսեց Աֆրիկայում: 1911–1912 թթ. պատերազմելով Օսմանյան տերության դեմ՝ Իտալիան նրանից զավթեց Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: Այդ հողերի վրա ստեղծվեց **Լիբիա** գաղութը:

Երկու կողմերի համար անարդարացի և զավթողական էր նաև ռուս-ճապոնական պատերազմը 1904–1905 թթ.: Ռուսաստանը և Ճապոնիան ձգտում էին իրենց գերիշխանությունը հաստատելու Չինաստանի հյուսիսարևելյան մասում, Կորեայում, Սախալինում և այլուր: Մեծ զոհերի գնով Ճապոնիային հաջողվեց

հաղթել և զավթել Սախալինի հարավային մասը, ամրապնդվել Կորեայում և Ռուսաստանին հարող ծովերում:

Բալկանյան ժողովուրդների ազատագրական պատերազմները: Արևելյան հարցը, ինչպես նշվել է, Օսմանյան տերության հպատակ ազգերի ազատագրման հիմնախնդիրների ամբողջությունն է: Արևելյան հարցում պայքար էին մղում Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, ավելի ուշ՝ Գերմանիան և Իտալիան: Եվրոպական տերություններն իրենց միջամտությունն արդարացնում էին քրիստոնյաներին պաշտպանելու կամ Օսմանյան տերության ամբողջականության պահպանման փաստարկներով: Տերությունների համատեղ միջամտությունը ժամանակակիցներն անվանել են **«եվրոպական համերգ»**: Այդպիսի հերթական «համերգ» տեղի ունեցավ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Պատերազմում Ռուսաստանը հաղթեց և կնքեց իր համար շահավետ Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Այն նպաստեց բալկանյան ազգերի ազատագրմանը, որոնք արդարացի պատերազմի մեջ էին սուլթանի դեմ: Օսմանյան կառավարությունը պարտավորվեց նաև հայկական նահանգներում կատարելու բարեփոխումներ: Օսմանյան տերությունը կանգնած էր փլուզման շեմին: Վախենալով Բալկաններում և Մերձավոր Արևելքում Ռուսաստանի գերիշխանության հաստատումից՝ տերությունները 1878 թ. Բեռլինում հրավիրեցին վեհաժողով: Նրանք պատերազմի սպառնալիքով ստիպեցին Ռուսաստանին հրաժարվել իր նվաճումների մի մասից: Սուլթանին օգնելու դիմաց Ավստրո-Հունգարիան գրավեց Բոսնիան և Հերցեգովինան, Անգլիան՝ Կիպրոսը, մի փոքր ուշ՝ Եգիպտոսը:

Արևելյան հարցում «եվրոպական համերգը» շարունակվեց նաև հետագայում:

1904–1907 թթ. հետո, երբ ձևավորվեց Անտանտը, Եվրոպայում միջազգային հարաբերություններում կտրուկ մեծացավ լարվածությունը: Անտանտի և Եռյակ դաշինքի երկրների միջև հակասություններն օրավոր խորանում էին: Կողմերի միջև հակամարտությունները հաջորդում էին մեկը մյուսին: Գերմանիան, Ավստրո-Հունգարիայի հետ դաշնակցելով, ավելի եռանդուն սկսեց ներթափանցել Բալկաններ և Օսմանյան կայսրություն, որոնք ավանդաբար Անգլիայի և Ռուսաստանի ազդեցության ոլորտներն էին: Օգտվելով երիտթուրքական հեղաշրջումից՝ 1908 թ. Ավստրո-Հունգարիան բռնակցեց Բոսնիան և Հերցեգովինան:

Բալկանյան պետությունների գլխավոր հակառակորդը նախկինի պես մնում էր Օսմանյան կայսրությունը: Օգտվելով նրա թուլացումից՝ Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը, Չեռնոգորիան ստեղծեցին Բալկանյան միությունը: Այս դաշինքին ոգևորում էր Անտանտը: 1912 թ. հոկտեմբերին դաշնակիցները պատերազմ սկսեցին Օսմանյան տերության դեմ, որին պաշտպանում էր Եռյակ դաշինքը:

Բալկանյան առաջին պատերազմն արդարացի պատերազմ էր, քանի որ նվաճված հողերը օսմանցիների կողմից բռնա-

զավթված ազգային տարածքներ էին: Սակայն Բալկանյան միությունը չկարողացավ օգտվել հաղթանակից, որովհետև դաշնակիցները դրանից հետո անտեսեցին ազատագրված հողերի ազգային պատկանելությունը: Նրանք փորձեցին իրար մեջ բաժանել Մակեդոնիան և Ալբանիան: Բալկանյան միությունը քայքայվեց: Սերբիան, Հունաստանը, Ռումինիան և պարտված Օսմանյան տերությունը դաշինքի մեջ մտան ընդդեմ Բուլղարիայի: Բուլղարիան, որին աջակցում էր Եռյակ դաշինքը, 1913 թ. հունիսի 29–ին ռազմական զործողություններ սկսեց Սերբիայի դեմ: Այսպես սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը, որում բուլղարական բանակը պարտվեց: Բուխարեստում կնքված հաշտության պայմանագրով Հունաստանը ստացավ Էգեյան ծովի կղզիները, Կրետեն, Էպիրոսը, Հարավային Մակեդոնիան: Սերբիան ստացավ Մակեդոնիայի մեծ մասը, Ռումինիան՝ Դորբուջան, թուրքերը՝ Ադրիանուպոլիսը:

Բալկանյան պատերազմների գլխավոր արդյունքը օսմանյան տիրապետության վերացումն էր Բալկանյան թերակղզում: Բալկանյան պատերազմները խորացրին հակասությունները Անտանտի ու Եռյակ դաշինքի միջև և արագացրին Առաջին աշխարհամարտի սանձազերծումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նոր դարերում որո՞նք էին պատերազմների գլխավոր պատճառները: Ըստ այդմ՝ ինչ բնույթ էին ունենում պատերազմները. բերե՞ք օրինակներ:
2. Ի՞նչն էր աշխարհի տարբեր մասերում ընթացած զավթողական տեղական ռազմական բախումների գլխավոր պատճառը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին ո՞ւմ միջև, ե՞րբ և ո՞ր երկրների համար տեղի ունեցան նման պատերազմներ: Ներկայացրե՞ք դրանց արդյունքները: Ցոյց տվե՞ք ռուս-ճապոնական պատերազմի պատճառները: Ներկայացրե՞ք դրա արդյունքները:

3. Բալկանյան տարածաշրջանի համար ո՞ր տերություններն էին պայքարում և ինչի հասան XIX դ. վերջին ու XX դ. սկզբին: Որո՞նք էին Բալկանյան առաջին պատերազմի պատճառները: Ի՞նչ արդյունքներ տվեց այն: Ի՞նչու տեղի ունեցավ Բալկանյան երկրորդ պատերազմը: Ձեր կարծիքով՝ ո՞վ ավելի շատ շահեց դրանից: Ի՞նչ նշանակություն ունեցան Բալկանյան պատերազմները:

ՓԼՈՒԽ 8. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ (1914–1918 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

§ 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՃՊԱԺԱՄԸ

Արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամը: XX դ. սկզբին ակնհայտ դարձավ, որ Եվրոպայում կուտակվել են չլուծված լուրջ հակասություններ, որոնք սպառնում են կործանել արդյունաբերական քաղաքակրթությունը: Որո՞նք էին ընդհանուր ճգնաժամի գլխավոր պատճառները:

Ճգնաժամի **կյութական հիմքը** շուկայական տնտեսության մեծ թռիչքն էր: Համաշխարհային տնտեսության առաջացումը տարբեր երկրների միջև սրեց մրցակցությունը հայրենական ապրանքների սպառման շուկաների համար: Մյուս կողմից՝ ներքին շուկան դարձավ գերիագեցած, և ազգային ձեռներեցության հետագա զարգացման համար անհրաժեշտ էին նորանոր տարածքներ, արտաքին շուկաներ: XIX դարի վերջին մեծ տերությունների միջև ավարտվեց աշխարհի տարածքային բաժանումը: XX դարի սկզբին բաժանված աշխարհի վերաբաժանման համար պայքարն ընդունեց սպառնալի չափեր: Հենց դա էլ արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամին տվեց համաշխարհային բնույթ:

Ճգնաժամն ուներ նաև **սոցիալական բովանդակություն**: Մեքենայացված արդյունաբերական արտադրությունում աշխատանքի բնույթը կոլեկտիվ էր, որը հանգեցրեց անհատի դիմագրկման:

Առաջացավ գանգվածային գիտակցություն, որը երկրորդ պլան մղեց արևմտյան քաղաքակրթության հումանիստական հիմքը կազմող անհատականության գաղափարը: Հասարակության հիմնական գանգվածը՝ բանվորությունը, դարձավ մեքենայի կցորդ, որն ապրում էր մշտական դժվարությունների և դաժան մրցակցության պայմաններում: Այսպիսի իրավիճակում արդյունաբերական քաղաքակրթության գլխավոր արժեքները՝ ժողովրդավարությունը, ազատությունը, քաղաքացիական հասարակության գոյությունը, դրվեցին հարցականի տակ:

Սոցիալական հակասություններից բացի, արևմտյան քաղաքակրթության ճգնաժամին նպաստում էին նաև այլ գործոններ: Արդեն նշվել է այն դրական պատմական մեծ դերը, որ խաղացել է ազգայնականությունը XVIII–XIX դարերում: Հենց դրա գաղափարների դրոշի ներքո ստեղծվում էին սահմանադրական կարգեր, առաջանում՝ ազգային նոր պետություններ: Սակայն XIX դ. վերջին ու XX դ. սկզբին ազգայնականությունն այլասերվեց ազգայնամոլության, որի դրսևորումները դարձան մեծապետական շովինիզմը, ռասիզմը և այլատյացությունը: Ազգը, ինչպես նաև նրա համախմբման ու կազմակերպման քաղաքական ձևը՝ պետությունը, սրբացվեցին որպես բարձրագույն



Բրիտանական հրետանային գումարտակի ձամբարը Երուսաղեմի մերձակայքում

արժեքներ: Ազգային պետության գաղափարը փոխարինելու եկավ ժողովրդավարությանը:

Այսպիսի պայմաններում արդարացվում էին հպատակ ազգերի նկատմամբ բռնաճնշումները, այլ երկրների նվաճումները և այլն: Ազգայնամոլությունը դարձավ զանգվածային գիտակցություն, որն ունեցավ աղետալի հետևանքներ:

Եվրոպական բոլոր պետություններն ավելացնում էին ռազմական ծախսերը, ստեղծում նոր զինատեսակներ, վարում նվաճողական պատերազմներ: Եվ այդ հակամարտությունն ընթանում էր միևնույն քաղաքակրթության մաս կազմող երկրների միջև: Հենց դա էլ հանգեցրեց Առաջին աշխարհամարտին:

Առաջին աշխարհամարտի մասնակիցների նպատակները: 1914 թ. ակնհայտ դարձավ Եվրոպայում ձևավորված երկու ռազմաքաղաքական դաշինքների՝ Եռյակ միության և Անտանտի միջև տասնամյակներ շարունակվող հակամարտության անհաշտելի ընթացքը:

Գերմանական կայսրությունը ձգտում էր իրագործելու համագերմանականության գաղափարները, այն է՝ Եվրոպայի կենտրոնում ստեղծել Մեծ Գերմանիա, զավթել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Բելգիայի գաղութները, Ռուսաստանից

խլել Ուկրաինան, մերձբալթյան երկրները, լեհական հողերը, գերիշխանություն հաստատել Բալկանյան թերակղզում և Մերձավոր Արևելքում: Գերմանացիների կարծիքով՝ այդ բոլորն ի վերջո կհանգեցնեի Գերմանիայի համաշխարհային գերիշխանության հաստատմանը:

Ավստրո-Հունգարիան խնդիր էր դրել իր դաշնակից Գերմանիայի հետ միասին տիրելու Բալկաններում, կանխելու սլավոնական նոր պետությունների առաջացումը, ինչպես նաև զավթելու Ռուսաստանի կազմում գտնվող լեհական հողերի մի մասը, գերիշխելու Ադրիատիկ, Սև և Էգեյան ծովերում:

Իտալիան ձգտում էր Ավստրո-Հունգարիայից խլելու Ադրիատիկ ծովի հյուսիսային ափերը, զավթելու Ալբանիան, Էգեյան ծովի կղզիները, հողեր Փոքր Ասիայում, գերիշխելու Միջերկրական ծովում:

Մեծ Բրիտանիան նպատակ ուներ պահպանելու իր գաղութային կայսրության ամբողջականությունը և ջախջախելու իր գլխավոր մրցակից Գերմանիային: Բացի այդ, նա մտադիր էր մասնատելու Օսմանյան կայսրությունը, տիրելու Միջագետքին, Պաղեստինին, Արաբիային և ամրապնդվելու Եգիպտոսում:

Ֆրանսիան ծրագրել էր ոչ միայն հետքերել 1871 թ. Գերմանիային գիցած Էլզա-



Ավստրիացի զինվորները խրամատներում

սր և Լոթարինգիան, այլև զավթել հանքերով հարուստ Հռենոսի ձախ ափը: Նա խնդիր էր դրել նաև նվաճելու Սիրիան, արաբական այլ հողեր, Կիլիկիան և գերմանական գաղութներ:

Ռուսաստանը ձգտում էր ջախջախելու Գերմանիային և Ավստրո-Հունգարիային, իր գերիշխանությունը տարածելու Բալկաններում, մասնատելու Օսմանյան տերությունը, զավթելու Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, Արևմտյան Հայաստանը, հասնելու Միջերկրական ծով:

Օսմանյան տերությունը նպատակ ուներ Ռուսաստանից զավթելու Արևելյան Հայաստանը, Վրաստանը, ամբողջ Կովկասը, Արիմը, իսկ Իրանից՝ Իրանական Ատրպատականը: Իշխանության գլուխ գտնվող երիտթուրքերը դրանով իսկ մտադիր էին իրագործելու իրենց պանթուրքական ծրագիրը: Այդ ծրագրի մասն էին կազմում Հայաստանի հայաթափումը և հայերի զանգվածային ոչնչացումը:

Ճապոնիան մտադիր էր ոչ միայն Խաղաղ օվկիանոսում խլելու գերմանական գաղութները, այլև տիրելու Չինաստանին:

Ամերիկայի Միացյալ Նահանգները, որը պատերազմի մեջ մտավ ավելի ուշ, ձգտում էր տնտեսական օգուտներ ստանալու, ամրապնդելու իր դիրքերը Լատինական Ամերիկայում և աշխարհում:

Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվեցին նաև երկրներ և ժողովուրդներ, որոնք հետապնդում էին ազատագրական նպատակներ: Այդպիսին էին Սերբիան, Չեռնոգորիան, հայերը, արաբական երկրները և այլն:

Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծումը: 1914 թ. ամռանը Եվրոպայում ծայրաստիճան սրվել էր քաղաքական իրադրությունը: Տերությունները համոզված էին, որ եկել է իրենց ռազմաքաղաքական ծրագրերի իրագործման ժամանակը: Մինչ այդ պատերազմական իրավիճակները, հատկապես Բալկանյան թերակղզում, հաջորդում էին մեկը մյուսին: Իզուր չէ, որ XX դ. սկզբին Բալկաններն անվանում էին «Եվրոպայի վառոդի նկուղ»: Հունիս-հուլիս ամիսներին այնտեղ առաջացած հերթական պատերազմական ձգնաժամն էլ սկիզբ դրեց Անտանտի և Եռյակ դաշինքի միջև մեծ պատերազմին: Դա տեղի ունեցավ հետևյալ հանգամանքներում:

1914 թ. Ավստրո-Հունգարիան զորավարություններ սկսեց Սերբիայի սահմանի մոտ՝ Բոսնիայում: Զորավարություններին մասնակցելու համար Սարաևո քաղաք ժամանեց Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը: Սերբական հայրենասիրական կազմակերպությունները նույն օրը ձեռնարկեցին թագաժառանգի ու նրա կնոջ սպանությունը: Ավստրո-Հունգարիան Գերմանիայի հետ խորհրդակցելուց հետո Սերբիային ներկայացրեց ծանր պահանջներ: Չնայած այդ պահանջների բավարարմանը՝

Ավստրո-Հունգարիան հուլիսի 28-ին պատերազմ հայտարարեց և որոշեց ոչնչացնել սլավոնական ազգերի ազատագրական պայքարը գլխավորող Սերբիային:

Գերմանիայում համոզված էին, որ Ռուսաստանը պատրաստ չէ պատերազմի, ուստի չի պաշտպանի իր դարավոր դաշնակից Սերբիային: Սակայն հակառակ դրան՝ Ռուսաստանը զորահավաք սկսեց: Գերմանիան պահանջեց դադարեցնել զորահավաքը, սակայն մերժում ստանալով՝ 1914 թ. օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Օգոստոսի 3-ին, պատճառաբանելով, որ իբր ֆրանսիական օդանավերը խախտել

են իր սահմանը, Գերմանիան պատերազմ հայտարարեց նաև Ֆրանսիային, ապա, խախտելով Բելգիայի չեզոքությունը, նրա տարածքով հարձակվեց Ֆրանսիայի վրա: Դա առիթ դարձավ, որ օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիան և իր դոմինիոնները պատերազմ հայտարարեն Գերմանիային: Նույն ամսին Գերմանիային պատերազմ հայտարարեց նաև Ճապոնիան: Հետզհետե պատերազմի մեջ մտան նաև այլ երկրներ, և այն դարձավ համաշխարհային: Անտանտի դաշինքի պետությունների թիվը հասավ 34-ի, Եռյակ դաշինքինը՝ 4-ի, ընդամենը՝ 38 պետություն: Առաջին աշխարհամարտը շարունակվեց մինչև 1918 թ. նոյեմբերի 11-ը:

**Առաջին աշխարհամարտի մասնակիցների՝
պատերազմի մեջ ներգրավվելու ժամանակագրություն**

Տարեթիվ	Ով է պատերազմ հայտարարել	Ում է պատերազմ հայտարարել
28 հուլիսի, 1914 թ.	Ավստրո-Հունգարիա	Սերբիա
1 օգոստոսի, 1914 թ.	Գերմանիա	Ռուսաստան
3 օգոստոսի, 1914 թ.	Գերմանիա	Ֆրանսիա
3 օգոստոսի, 1914 թ.	Գերմանիա	Բելգիա
4 օգոստոսի, 1914 թ.	Բրիտանական կայսրություն	Գերմանիա
5 օգոստոսի, 1914 թ.	Չեռնոգորիա	Ավստրո-Հունգարիա
6 օգոստոսի, 1914 թ.	Ավստրո-Հունգարիա	Ռուսաստան
6 օգոստոսի, 1914 թ.	Սերբիա	Գերմանիա
6 օգոստոսի, 1914 թ.	Չեռնոգորիա	Գերմանիա
12 օգոստոսի, 1914 թ.	Բրիտանական կայսրություն և Ֆրանսիա	Ավստրո-Հունգարիա
15 օգոստոսի, 1914 թ.	Ճապոնիա	Գերմանիա
3 նոյեմբերի, 1914 թ.	Ռուսաստան	Թուրքիա
5 նոյեմբերի, 1914 թ.	Բրիտանական կայսրություն և Ֆրանսիա	Թուրքիա
23 մայիսի, 1915 թ.	Իտալիա	Ավստրո-Հունգարիա
14 հոկտեմբերի, 1915 թ.	Բուլղարիա	Սերբիա
9 մարտի, 1916 թ.	Գերմանիա	Պորտուգալիա
27 օգոստոսի, 1916 թ.	Ռումինիա	Ավստրո-Հունգարիա
28 օգոստոսի, 1916 թ.	Իտալիա	Գերմանիա
6 ապրիլի, 1917 թ.	ԱՄՆ	Գերմանիա

7 ապրիլի, 1917 թ.	Պանամա և Կուբա	Գերմանիա
27 հունիսի, 1917 թ.	Հունաստան	Գերմանիա
22 հուլիսի, 1917 թ.	Սիամ	Գերմանիա
4 օգոստոսի, 1917 թ.	Լիբերիա	Գերմանիա
14 օգոստոսի, 1917 թ.	Չինաստան	Գերմանիա
26 հոկտեմբերի, 1917 թ.	Բրազիլիա	Գերմանիա
7 դեկտեմբերի, 1917 թ.	ԱՄՆ	Ավստրո-Հունգարիա

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր երկրներն էր ընդգրկում արդյունաբերական քաղաքակրթությունը նոր դարերի ավարտին: Ինչո՞ւ է այն համարվում եվրոպակենտրոն: Ի՞նչ դրսևորումներ ունեցավ արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ XX դ. սկզբին սրվեց պայքարը աշխարհի վերաբաժանման համար: Ի՞նչ հետևանքներ ունեցավ ազգայնամոլությունը:
2. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Առաջին աշխարհամարտի մասնակից երկրներից յուրաքանչյուրը: Այդ երկրներից որո՞նց շահերն էին համընկնում:
3. Ո՞ր իրադարձությունը առիթ հանդիսացավ Առաջին աշխարհամարտի սանձազերծման համար: Ինչո՞ւ էին Գերմանիայում համոզված, որ Ռուսաստանը չի արձագանքի Սերբիայում տեղի ունեցող իրադարձություններին: Ե՞րբ սկսվեց Առաջին աշխարհամարտը և մինչև ե՞րբ շարունակվեց:

§ 2. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատերազմի սկիզբը: Առաջին աշխարհամարտի ռազմական գործողություններն ընթանում էին Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, ինչպես նաև օվկիանոսներում և ծովերում: Առաջացավ մինչև մեկ տասնյակ պատերազմական ճակատ, որոնցում կռվում էր 70 միլիոնից ավելի զինվոր: Բայց որովհետև քաղաքակրթական ճգնաժամի կենտրոնը Եվրոպան էր, գլխավոր ճակատներն այնտեղ էին: Պատերազմի ելքը վճռվում էր երկու ճակատներում: Առաջինը Արևմտավերոպական ռազմական թատերաբեմն էր, որը ֆրանս-գերմանական սահմանով և Բելգիայով ձգվում էր մոտ 700 կիլոմետր: Երկրորդը Արևելավերոպական (ռուսական) ճակատն էր, որն անցնում էր ռուս-

գերմանական և ռուս-ավստրիական սահմանների երկայնքով:

Պատերազմի առաջին իսկ ամիսներին հակառակորդ խմբավորումների մշակած կարճատև հաղթական պատերազմի ծրագրերը ձախողվեցին: Գերմանիան նախատեսել էր ամբողջ ուժերը կենտրոնացնել և ջախջախել Ֆրանսիային, ապա Ռուսաստանին: **1914 թ.** օգոստոսին գերմանական բանակին հաջողվեց գրավել Բելգիան, Լյուքսեմբուրգը և ներխուժել Ֆրանսիա: **Սևպտեմբեր** ամսին **Մասն գետի** մոտ տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ, որին մասնակցում էր 1,5–2 միլիոն զինվոր: Անգլո-ֆրանսիական բանակին հաջողվեց կանգնեցնել գերմանացիներին և ստիպել նրանց նահանջել:

Մարտերը շարունակվեցին Բելգիայում: Կողմերը տվեցին 600 հազար զոհ: Չկարողանալով հասնել հաջողության, հակառակորդներն անցան դիրքային մարտերի:

Ման գետի ձակատամարտում գերմանացիների նպատակների ձախողմանը նպաստեց օգոստոս-սեպտեմբերի ընթացքում ռուսական երկու բանակների ներխուժումն Արևելյան Պրուսիա: Ճիշտ է, ռուսական բանակները պարտվեցին, սակայն Գերմանիան ստիպված եղավ զորքեր տեղափոխելու Արևելյան ձակատ, որը թուլացրեց նրանց դիրքերը Արևմտյան ձակատում: Բայց ռուսական բանակը սեպտեմբերին կարողացավ պարտության մատնել Ավստրո-Հունգարիայի բանակին և գրավել Արևելյան Գալիցիան: Իր դաշնակցին օգնելու համար Գերմանիան հարձակում սկսեց Վարշավայի ուղղությամբ, որը նպատակին չհասավ:

Ավստրո-Հունգարիան օգոստոսից նոյեմբերն ընկած ժամանակահատվածում երեք անգամ փորձեց ջախջախել Սերբիային: Երկու անգամ գրավեց Բելգրադը և կատարեց ավերածություններ: Բայց սերբական բանակը կարողացավ երկրից հետ մղել զավթիչներին և պաշտպանել իր անկախությունը: Դրանից հետո այստեղ ևս առժամանակ դիրքային պատերազմ սկսվեց:

1914 թ. պատերազմի արդյունքները հօգուտ Անտանտի էին: Նախ՝ Գերմանիան ստիպված եղավ պատերազմը վարել երկու ձակատով: Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի բանակները պարտություններ կրեցին: Ճապոնիան, Անգլիան և Ֆրանսիան զավթեցին Գերմանիայի բոլոր գաղութները Խաղաղ օվկիանոսում և Աֆրիկայում: Սակայն Անտանտը վերջնական հաջողության չհասավ և տվեց մարդկային ու նյութական մեծ կորուստներ: Բացի այդ,

Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտավ Օսմանյան կայսրությունը:

Ռուսական գործողությունները 1915-1916 թվականներին: Ինչպես նշվել է, Իտալիան Եռյակ միության հիմնադիր անդամներից էր: Պատերազմի սկզբում նա չեզոք էր: Այնուհետև, համաձայնության գալով Անտանտի հետ, նա 1915 թ. մայիսին պատերազմ սկսեց Ալստրո-Հունգարիայի դեմ: Սակայն ամբողջ տարվա ընթացքում նրա բոլոր ռազմական ձեռնարկումները հաջողություն չունեցան: Իտալական և Արևմտյան ձակատներում պատերազմը դարձավ դիրքային:

Արևմտյան ձակատում 1915 թ. դաշնակիցները գործում էին դանդաղ և ավելի շատ զբաղված էին իրենց տնտեսության ռազմականացմամբ: Միայն աշնանը նրանք նախաձեռնեցին հարձակում, որն իրադրությունը չփոխեց: Անգլիայի և Ֆրանսիայի անվճարական գործողությունները հնարավորություն տվեցին Գերմանիային մեծ հարձակում սկսելու Ռուսաստանի դեմ:

Գերմանիան, իր պաշտպանական դիրքերն ամրացնելով Արևմտյան ձակատում, որոշեց ջախջախել Ռուսաստանին: Այդ նպատակով նա հսկայական ուժեր կուտակեց Արևելյան ձակատում: Ռուսական գործողությունները սկսվեցին հունվարին և շարունակվեցին մինչև աշնան վերջը: Ռուսաստանին հաջողվեց կանգնեցնել գերմանական հարձակումը և նրան պարտադրել դիրքային պատերազմ: Այսինքն՝ Ռուսաստանին շարքից հանելու Գերմանիայի նպատակը ձախողվեց:

1915 թ. սեպտեմբերին Բուլղարիան դաշինքի մեջ մտավ Օսմանյան Թուրքիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ: *Այսպես ստաջագավ Բաղդադ*

միությունը: Դաշնակիցների զոհը դարձավ հերոսաբար մարտնչող Սերբիան: Սերբական ջախջախված բանակը, կառավարությունը և բնակչությունը ստիպված եղան տեղափոխվելու հունական Կորֆու կղզի: Այստեղից սերբական բանակը տեղափոխվեց Սալոնիկ, որտեղ ֆրանսիական, անգլիական և ռուսական զորախմբերի հետ ստեղծեցին մի նոր ճակատ: Տարվա վերջին Ավստրո-Հունգարիան արդեն զավթել էր Ալբանիան և Չեռնոգորիան:

1916 թ. Եվրոպայի ռազմաբեմերում պատերազմի լարվածությունը հասավ իր գագաթնակետին: Գերմանիան այս անգամ գլխավոր հարվածի ուղղությունը կրկին տեղափոխեց Արևմտյան ճակատ և նորից փորձեց ջախջախել Ֆրանսիային: Գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ **Վերդենի** մոտ, որն ընթացավ փետրվարից մինչև դեկտեմբեր: Այս ճակատամարտը հաճախ անվանում են «**Վերդենյան մատաղս**», քանի որ երկու կողմերը տվեցին մոտ մեկ միլիոն զոհ: Այս անգամ ևս գերմանացիները չկարողացան հասնել վճռական հաջողության, և դիրքային փոփոխություններ տեղի չունեցան:

Մինչ ընթանում էին Վերդենի համար մարտերը, հուլիս-նոյեմբեր ամիսներին անգլո-ֆրանսիական զորքերը **Սոմ** գետի մոտ ձեռնարկեցին խոշոր հարձակում: **Անգլիացիներն առաջին անգամ օգտագործեցին տանկեր**, որը գերմանացիների մեջ առաջացրեց մեծ խուճապ: Դաշնակիցներին չհաջողվեց խախտել գերմանացիների պաշտպանությունը, և ճակատամարտն ավարտվեց անարդյունք: Չնայած դրան՝ նախաձեռնությունն անցավ դաշնակիցներին:

Արևելյան ճակատում 1916 թ. ամենախոշոր իրադարձությունը ռուսական զոր-

քերի հարձակումն էր: Ռուսական բանակը, որ միանգամից գործողություն սկսեց ռազմաճակատի մի բանի տեղերից, հակառակորդի դիրքերում խորացավ 80–120 կիլոմետր: Ռուսական բանակի այս հաջող հարձակումը փրկեց իտալական բանակին վերջնական ջախջախումից, թեթևացրեց ֆրանսիացիների դրությունը Վերդենում: Հաղթանակը նպաստեց, որ Ռումինիան պատերազմի մեջ մտնի Անտանտի կողմում:

1916 թ. ռազմական գործողությունների արդյունքում Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան թուլացան և անցան պաշտպանության:

Պատերազմական գործողությունները ծովում: Առաջին աշխարհամարտի կարևոր մաս են կազմում ռազմական գործողությունները ծովերում: Այդ առումով հատկապես առանձնանում է Մեծ Բրիտանիան, որի նավատորմը բոլորից հզորն էր: Անգլիան իր առաջ խնդիր էր դրել Հյուսիսային ծովից շրջափակելու Գերմանիայի ափերը: Դրա նպատակն էր թույլ չտալ, որ Գերմանիան առևտուր անի այլ երկրների հետ, ինչպես նաև արգելափակել նրա ռազմական նավատորմը: Սկզբնապես դա նրան հաջողվեց: 1915 թ. սկզբին Անգլիան արդեն ոչնչացրել էր օվկիանոսներում գտնվող Գերմանիայի ռազմանավերը:

Ընդհանուր առմամբ, ծովերում Անտանտի ռազմական նավատորմը գերիշխում էր: Մինչև 1915 թ. վերջը ռուսական նավատորմին հաջողվեց Բալթիկ ծովում թույլ չտալ գերմանական ռազմանավերի մուտքը Ֆիննական ծոց: Ռուսական նավատորմը հաջողությամբ էր գործում նաև Սև ծովում: Ֆրանսիական նավատորմը պաշտպանում էր երկրի ծովային սահմանները և հաղորդակցությունը Միջերկ-

րական ծովում: Նա խնդիր ուներ նաև թույլ չտալու, որպեսզի Ավստրո-Հունգարիայի նավատորմն Ադրիատիկ ծովից դուրս գա Միջերկրական ծով:

Ծովամարտերում անսպասելի կարևոր գործոն դարձավ ստորջրյա նավատորմի՝ ռազմական սուզանավերի օգտագործումը: Սուզանավերի պիտանիությունը ռազմական նպատակներով դեռևս անկատար էր: Սակայն գերմանացիները կարողացան հակառակորդի նավերի տորպեդահարումը դարձնել արդյունավետ: Գերմանիայում դա առաջացրեց մեծ ոգևորություն: Անտանտի նավերի սուզանավային ոչնչացումը մեծ չափեր ընդունեց: Խորտակվում էին նաև ուղևորատար նավեր: Օրինակ՝ 1915 թ. մայիսի 7-ին գերմանացիները խորտակեցին անգլիական «Լուզիտանիա» մարդատար նավը, որի հետևանքով զոհվեց 1200 մարդ: Դա մեծ վրդովմունք առաջացրեց աշխարհում,



«Պլուտալա» ռազմանավը, 1915 թ.

հատկապես ԱՄՆ-ում: ԱՄՆ-ի և Գերմանիայի հարաբերությունները կտրուկ վատացան:

Իր չափերով աննախադեպ մեծ ծովամարտ տեղի ունեցավ Յուտլանդիա թերակղզու մոտ 1916 թ. մայիսի 31-ից հունիսի 1-ը: Գերմանացիները չկարողացան ձեռքել շրջափակումը և վերադարձան տեղակայման վայրեր: Նրանք այդտեղ գամված մնացին մինչև պատերազմի վերջը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ էին ծավալվում ռազմական գործողությունները: Որո՞նք էին պատերազմի գլխավոր ճակատները: Ի՞նչ հաջողությունների հասավ Գերմանիան 1914 թ.: Ինչպե՞ս ընթացան ռազմական գործողությունները Արևելյան ճակատում: Ո՞ր խմբավորման օգտին էին ընթանում ռազմական գործողությունները 1914 թ.: Ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ Գերմանիան 1915 թ. ռազմական հաջողություններ ունեցավ Արևելյան ճակատում: Ի՞նչ տարածքներ նա գրավեց: Ե՞րբ և ինչպե՞ս առաջացավ Քառյակ միությունը: Ե՞րբ է տեղի ունեցել Վերդենի ճակատամարտը: Ի՞նչ անունով է այն հայտնի: Ի՞նչ արդյունք ունեցավ այն: Ո՞վ առաջինը գործածեց տանկեր:
3. Ի՞նչ խնդիր էր դրել իր առջև Մեծ Բրիտանիան ծովում: Ի՞նչ նորություն կիրառեց Գերմանիան ծովամարտերում: Որտե՞ղ և ե՞րբ տեղի ունեցավ Առաջին աշխարհամարտի ամենախոշոր ծովամարտը: Ինչո՞վ ավարտվեց այն:

§ 3. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան տերության՝ պատերազմի մեջ մտնելու պատճառները: Առաջին աշխարհամարտի մասնակիցների կազմում Օսմանյան տերությունն առանձնա-

նում է թե՛ իր նպատակների բնույթով, թե՛ պատերազմում խաղացած դերով և թե՛ դրա հետևանքներով: Պատերազմին նրա մասնակցության գլխավոր նպատակը

տերության ամբողջականության պահպանումն էր: Այդ նպատակն անիրագործելի էր, որովհետև տերության տասնյակ ժողովուրդներ ձգտում էին ազատության և արդիականացման:

Մյուս առանձնահատկությունը երիտթուրքական կուսակցության գաղափարախոսությունն էր: Ի սկզբանե այն ուներ ոչ թե ազատագրական, այլ ծայրահեղ ազգայնամոլական բովանդակություն: Գլխավոր նպատակն էր տերության ամբողջականությունը պահպանել նրա կազմի մեջ մտնող հպատակ ժողովուրդներին թուրքացնելու միջոցով: Միասնական օսմանյան ազգ ստեղծելու գաղափարը նույնպես անիրագործելի էր:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Օսմանյան տերություն թափանցեցին նաև համախալամիզմի գաղափարները: Դրանք քարոզում էին իսլամական ընդհանուր պետության ստեղծում: Երիտթուրքերն այս գաղափարին ևս կողմ էին, քանի որ մտածում էին դա անել սուլթանի գահի ներքո: Գործնականում դա նշանակում էր իսլամ դավանող ժողովուրդներին ենթարկել թուրքական պետությանը:

1911–1912 թթ. սուլթանը պարտություն կրեց նախ Իտալիայի, ապա Բալկանյան երկրների դաշինքի դեմ պատերազմներում: Այդ պատերազմների հետևանքով Օսմանյան տերությունը ոչ միայն կորցրեց տարածքներ, այլև պարզ դարձավ օսմանացման գաղափարների սնանկությունը: Երիտթուրքերը դրանից հետո որդեգրեցին մեկ այլ ազգայնամոլական գաղափարախոսություն՝ *պանթուրքիզմը*: Այն նախատեսում էր Փոքր Ասիայից մինչև Կենտրոնական Ասիա ընկած երկրներում ապրող թուրքալեզու ժողովուրդներին միավորել մեկ պետության մեջ: Պետք է ստեղծվեր *Մեծ Թուրան*: Պանթուրքա-

կան գաղափարների իրագործման դեպքում տասնյակ ժողովուրդներ պետք է ոչնչացվեին կամ թուրքացվեին:

1913 թ. երիտթուրքերը կատարեցին նոր պետական հեղաշրջում և զավթեցին իշխանությունը: Նրանցից առավել ազդեցիկ էին Էնվեր փաշան, Թալեաթ փաշան և Ջեմալ փաշան, որոնց անվանում էին եռապետներ: Նրանք հաստատեցին իրենց բռնապետությունը և իշխանության գլուխ մնացին մինչև Առաջին աշխարհամարտի վերջը: Հենց այդ եռյակը նախապատրաստեց Օսմանյան տերության մասնակցությունն Առաջին աշխարհամարտին:

Երիտթուրքերի քաղաքական կողմնորոշումը Գերմանիան էր: Նրանք կարծում էին, որ Գերմանիան պանթուրքական գաղափարների իրագործման խնդրում ավելի հուսալի դաշնակից է, քան Անգլիան և Ֆրանսիան: Պատերազմի հենց սկզբից գաղտնի ռազմական դաշինք կնքվեց Գերմանիայի հետ: Եվ առանց պատերազմ հայտարարելու 1914 թ. հոկտեմբերին Սև ծովում թուրքական նավատորմը թշնամական գործողություններ սկսեց: Դա ստիպեց Ռուսաստանին պատերազմ հայտարարել Օսմանյան տերությանը:

Օսմանյան ռազմաքաղաքական ծրագրերի ձախողումը: Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան տերությունը ռազմական գործողություններ էր մղում Սև ծովում, Կովկասյան և Բալկանյան ճակատներում, Իրանի և արաբական երկրների տարածքներում:

Երիտթուրքերը պատերազմի ընթացքում քանակ զորակոչեցին 4 միլիոն մարդու, որից 1,5-ը գործող բանակում էին: Օսմանյան բանակը երթեք այդքան մեծ չէր եղել: Պատերազմի օսմանյան ծրագիրը երկու ուղղություն ուներ՝ 1) տիրել



Թուրքական ռազմական ուժերը պատրաստվում են հարձակվան Սուեզի շրջանում, 1914 թ.

Սուեզի ջրանցքին, Եգիպտոսին և Հյուսիսային Աֆրիկային, 2) ջախջախել Ռուսաստանին, գրավել Կովկասը, Ղրիմը, Մերձվոլգյան շրջանները: Օսմանյան մեկ այլ բանակ պետք է Իրանի վրայով ներխուժեր Կենտրոնական Ասիա և նվաճեր այն: Հենց դա էլ հնարավորություն կտար իրագործելու պանթուրքական ծրագիրը:

Կովկասյան ճակատում պատերազմն սկսվեց նոյեմբերին: Ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը Արևմտյան Հայաստանն էր: Ռուսական բանակը հասավ հաջողությունների: Օսմանյան զորքերի հրամանատարությունն իր վրա վերցնելով՝ էնվեր փաշան մեծ հարձակում սկսեց: Նա բազմաթիվ ուղերձներով կոչ էր անում Կովկասի մուսուլմաններին ապստամբելու ռուսների դեմ: 1914 թ. դեկտեմբերի սկզբին ռուսական բանակին հաջողվեց *Սարիղամիշի* մոտ կասեցնել օսմանյան բանակի հարձակումը: Դեկտեմբերի 22-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 18-ը (նոր տոմարով) տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքը լիովին ջախջախեց թուրքական բանակին:

Սարիղամիշի ձախողումից հետո թուրքերը նախապատրաստվեցին նոր հար-

ձակվան: Նրանք 1915 թ. սկզբին ներխուժեցին Իրան, գրավեցին Թավրիզը և այլ տարածքներ: Սակայն անգլիական և ռուսական զորքերը, տարբեր կողմերից ներխուժելով Իրան, թուրքերին վտարեցին այնտեղից: Միաժամանակ 1915 թ. գարնանը ռուսական բանակը հարձակում սկսեց, գրավեց Ալաշկերտը, Վանը և հայկական այլ հողեր: 1916 թ. հունվար-փետրվար ամիսներին ռուսական բանակը նվաճեց Էրզրումը, Մուշը և Բիթլիսը: Գարնանը և ամռանը ռուսները գրավեցին նաև Երզնկան, Բաբերդը, ինչպես նաև Տրապիզոնը: Այս կարևոր հաղթանակները ձախողեցին երիտթուրքերի նվաճողական ծրագրերը:

1915–1916 թթ. օսմանյան զորքերը փորձեցին գրավել Սուեզի ջրանցքը, ինչը չհաջողվեց: Դրա փոխարեն թուրքերը կարողացան Միջագետքում գերել անգլիական մի բանակ:

Ծովում և ցամաքում հակառակորդների միջև ամենախոշոր ճակատամարտը տեղի ունեցավ Դարդանեղի նեղուցի մոտ:

Դարդանեղի ծովամարտը տեղի ունեցավ 1915 թ. փետրվար-մարտին: Դաշնակիցներին չհաջողվեց գրավել ականապատված և հուսալի պաշտպանված

Դարդանելի նեղուցը: Այնուհետև անգլիացիներն ու ֆրանսիացիները **Գալիպոլի թերակղզում** կենտրոնացրին կես միլիոնից ավելի զինվոր: Սակայն գերմանասոմանյան զորքերի դեմ ճակատամարտում, որը տևեց ապրիլից մինչև դեկտեմբեր, նրանք պարտվեցին և նահանջեցին Սալոնիկի ճակատ:

Միջազգետքում և Դարդանելում տարած հաղթանակները պատերազմի ընթացքը չփոխեցին հոգուտ թուրքերի: Օսմանյան տերությունը 1914–1916 թթ. ընթացքում մեծ մասամբ պարտվել և արյունաքամ էր եղել: Այսպիսի պայմաններում երիտթուրքերը շարունակում էին պատերազմը, և Օսմանյան տերության փլուզումը դարձավ անխուսափելի:

Օսմանյան հպատակ ազգերը և համաշխարհային պատերազմը: Օսմանյան տերության կազմում ապրող տասնյակ ժողովուրդների մի մասը XIX դարում և XX դ. սկզբին կարողացավ ազատագրվել օսմանյան լծից: Մյուսները՝ հայերը, ալբանացիները, արաբները և այլք, շարունակում էին տառապել օսմանյան տիրապետությունից: Նրանց հետագա զարգացումն անհամատեղելի էր օսմանյան տիրապետության հետ: Մինչդեռ երիտթուրքերի ազգայնամոլական քաղաքականությունը նպատակ ուներ կանխելու Օսմանյան տերության փլուզումը և ամեն գնով ձուլելու կամ ոչնչացնելու հպատակ ազգերին: Առաջին աշխարհամարտն այդպիսի ծրագրերի իրագործման հարմար պահ էր:

Առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի ողբերգությունը պայմանավորված էր նրա քաղաքական երկատվածությամբ: Պատերազմում Հայաստանը գտնվում էր միմյանց թշնամի Ռուսաստանյան կայսրության և Օսմանյան տերու-



Հայ գաղթականները Սիրիայի անապատում

թյան կազմում: Ավելին՝ կարևոր ճակատներից մեկը մեծ մասամբ համընկնում էր Հայաստանի սահմաններին: Հայերի համար ցանկացած ընտրություն հղի էր մեծ վտանգներով: Բնականաբար, հայերի մեծ մասը կողմնորոշվեց դեպի Անտանտ և առաջին հերթին՝ Ռուսաստան: Ռուսաստանը բանակ զորակոչեց 200 հազար հայ զինվորների, որոնք տարբեր ճակատներում մինչև վերջ կատարեցին իրենց պարտքը: Բացի այդ, կազմվեցին նաև հայկական կամավորական ջոկատներ: Մինևույն ժամանակ, Օսմանյան տերությունում ապրող ավելի քան 300 հազար հայեր ևս զորակոչվեցին օսմանյան բանակ:

Երիտթուրքերի կառավարությունը պատերազմի հենց սկզբից՝ 1914 թ. հոկտեմբերի վերջերից, ձեռնամուխ եղավ հայերի ծրագրված ոչնչացմանը: Նախ սպանեցին բանակ զորակոչվածներին, այնուհետև մտավորականությանը և ապա անպաշտպան մնացած բնակչությանը: Այդ վիճակը շարունակվեց մինչև պատերազմի ավարտը: 1915 թ. դարձավ Մեծ եղեռնի գլխավոր փուլը: Անվտանգության պատրվակով տեղահանվեց ու ոչնչացվեց Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայությունը: Մեծ եղեռնի ժամանակ Օս-

մանյան կայրությունում ապրող ավելի քան երկուսուկես միլիոն հայերից մեկուկես միլիոնը սպանվեց, իսկ մնացածն ունեզրկվեց և հայրենագրվեց:

Հայերի ճակատագրին արժանացան նաև հույները և ասորիները: Պատրվակ բռնելով Անտանտի կողմում Հունաստանի՝ պատերազմի մեջ մտնելը՝ թուրքական կառավարությունը Սև ծովի ափամերձ շրջաններից և այլ վայրերից տեղահանեց ու արքտից 600 հազար հույների: Դրանք ևս ուղեկցվում էին թալանով, բռնություններով և սպանություններով. այսպես Պոնտոսի հույները նույնպես ենթարկվեցին ցեղասպանության:

Երիտթուրքերն աշխարհամարտի տարիներին ծայրահեղ ազգայնամոլական

քաղաքականություն իրագործեցին նաև արաբական երկրներում: Ձեռնալ փաշան վերացրեց Լիբանանի ինքնավարությունը: Նրա համար արաբական երկրները՝ Սիրիան, Լիբանանը, Իրաքը և մյուսները, թուրքական տարածքներ էին: Նա մահապատժի ենթարկեց բոլոր այն ազգայնական արաբներին, որոնք մտածում էին սեփական հայրենիքի ազատության մասին: Հենց դա էր պատճառը, որ սուլթանի հոջակած «սրբազան պատերազմն» ի վերջո արձագանք չգտավ արաբների մեջ: Ավելին՝ արաբներն սկսեցին հրաժարվել օսմանյան բանակում ծառայելուց և ձեռնամուխ եղան պարտիզանական պայքարի: Նույն պատճառով արաբները կողմնորոշվեցին դեպի Անտանտը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Օսմանյան տերությունը դարձավ աշխարհամարտի մասնակից: Որո՞նք էին երիտթուրքերի նպատակները: Ինչո՞ւ Օսմանյան տերությունը հանդես եկավ Գերմանիայի կողքին:
2. Ռազմական ծրագրով ինչ էին նախատեսել երիտթուրքերը: Ինչ էր նախատեսել Ռուսաստանը Կովկասյան ճակատում: Ե՞րբ սկսվեցին ռազմական գործողությունները Ռուսաստանի և Օսմանյան տերության միջև:
3. Նկարագրե՞ք պատերազմի ընթացքը ռուս-թուրքական ճակատում 1914–1916 թթ.:
4. Ինչպիսի՞ ընթացք ունեցավ պատերազմը Միջագետքում՝ Սուեզի շրջանում: Ինչ ավարտ ունեցան Դարդանեղի ծովամարտը և Գալիպոլիի ճակատամարտը:
5. Ինչ իրավիճակ առաջացրեց պատերազմը հայերի և Հայաստանի համար: Ինչո՞ւ հայերի մեծ մասը կողմնորոշվեց դեպի Անտանտը: Որո՞նք էին հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականության պատճառները: Վերհիշելով «Հայոց պատմություն»-ից ձեր սովորածը՝ ներկայացրե՞ք, թե ինչ փուլերով իրագործվեց Մեծ եղեռնը: Ո՞ր ժողովուրդները, ինչպես հայերը, ենթարկվեցին ցեղասպանության թուրքերի կողմից:

§ 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ

Տնտեսական և քաղաքական ճգնաժամի խորացումը: 1917 թ. պատերազմական ճգնաժամը հասավ իր գագաթնակետին: Գերմանիան և նրա դաշնակիցները,

հայտնվելով ծանր վիճակում, փորձեցին բանակցություններ սկսել և իրենց համար պատվավոր հաշտություն կնքել: Սակայն Անտանտը մերժեց, և պատերազմը շա-

րունակվեց նոր ուժով: Ավելացավ պատերազմի մասնակիցների թիվը: Անտանտի կողմից պատերազմի մեջ մտավ **ԱՄՆ-ը**: Դա տեղի ունեցավ այն քանից հետո, երբ գերմանացիները խորտակեցին ԱՄՆ-ի մի քանի նավ, որն էլ պատերազմ սկսելու առիթ դարձավ: Անտանտի կողմից պատերազմի մեջ մտան նաև Լատինական Ամերիկայի 14 երկրներ, Սիամը (Թաիլանդ), Լիբերիան, Հունաստանը և Չինաստանը:

Աշխարհամարտն առանձնակի ծանր ազդեցություն ունեցավ տնտեսության վրա: Ամենից առաջ սահմանափակվեցին տարբեր երկրների միջև տնտեսական կապերը, կազմալուծվեց միջազգային շուկայական համակարգը: Պատերազմող կողմերն իրենց տնտեսական կարողություններն ի սպաս էին դրել պատերազմի կարիքներին: Իսկ դա նշանակում էր առաջին անհրաժեշտության սպառման ապրանքների կրճատում: Արտադրությունում աշխատողների թիվը կրճատվել էր միլիոնավոր մարդկանց քանակ գորակոչելու պատճառով: Մյուս կողմից՝ բոլոր երկրներում սկսել էին սպառվել արդյունաբերական հումքի և մթերքների պաշարները: Առաջացավ տնտեսության ընդհանուր փլուզման սպառնալիք:

Առաջին աշխարհամարտը տնտեսության մեջ առաջացրեց նաև որակական փոփոխություններ: Նախ՝ տնտեսական կապերի խզման պատճառով գաղութներում և կիսագաղութներում արագացավ ազգային արդյունաբերության զարգացումը, և ծավալվեց ձեռներեցությունը: Այդ ամենը լուրջ նախադրյալներ ստեղծեց գաղութային համակարգի հետագա ձգնաժամի և ազատագրական պայքարի վերելքի համար: Երկրորդը տնտեսության մեջ պետության դերի փոփոխությունն էր:

Նախկինում պետությունը չէր միջամտում տնտեսությանը, ձեռներեցները և մոնոպոլիաները գործում էին ազատ: Պատերազմի կարիքները ստիպեցին փոխել իրավիճակը. պետական մարմիններն սկսեցին զբաղվել տնտեսության կարգավորմամբ:

Պատերազմը սոցիալական ծայրահեղ թշվառ վիճակի հասցրեց միլիոնավոր մարդկանց: Տարածվեցին սովը և հիվանդությունները: Չէր բավարարում սննդամթերքը, որի սպառումը նվազեց 2–3 անգամ: Ծատ երկրներում պետությունները մտցրին մթերքների սպառման քարտային համակարգ և սահմանեցին խիստ վերահսկողություն: Տնտեսության ռազմականացումը նույնպիսի բնույթ սովեց քանվորների և ծառայողների աշխատանքին: Արգելվեցին գործադուլները, ցույցերը, դադարեց գործել աշխատանքային օրենսդրությունը:

Չնայած պետական խիստ վերահսկողությանը՝ պատերազմող երկրներում ժողովրդի ծանր և անելանելի վիճակն առաջացրեց **հեղափոխական իրադրություն**: Գործադուլները և տարաբնույթ ընդվզումները դարձան սովորական: Հակապատերազմական տրամադրություններն աճում էին մեծ արագությամբ: Հաճախակի դարձան այն դեպքերը, երբ զինվորները չէին ցանկանում ենթարկվել հրամանատարությանը: Հեղափոխության իրական հեռանկարը դամոկլյան սուր դարձավ պատերազմի մասնակից գլխավոր երկրներում:

Հեղափոխական մեծ ձգնաժամը Ռուսաստանում: Առաջին աշխարհամարտի հետևանքով սրված ձգնաժամը ամենից շատ ողբերգական ընթացք ունեցավ Ռուսաստանում: Դրա գլխավոր պատճառներից մեկը հասարակության արդիականացման ցածր մակարդակն էր:



Նիկոլայ II

Պատերազմը Ռուսաստանում հասարակական հակասություններն ավելի արեց, քան մյուս պատերազմող երկրներում: Խափանվել էին երկաթուղիների կանոնավոր երթևեկությունը, բանակի մատակարարումները: Կազմալուծվել էր երկրի ֆինանսական համակարգը, պետական պարտքը քառապատկվել էր: Ժողովրդի մեջ աճում էր դժգոհությունը Նիկոլայ II ցարից և նրա արքունիքից: Պարենային ձգնաժամը քաղաքներում հասել էր ծայրահեղ չափերի: Պետրոգրադի և Մոսկվայի խանութների ցուցանակներին հաճախ կարելի էր կարդալ հայտարարություն՝ «Հաց չկա և չի լինելու»: Մթերքների գներն աճեցին 5–8 անգամ:

1917 թ. հունվար–փետրվար ամիսներին ձգնաժամն աննախադեպ սրվեց: Փետրվարի վերջին Պետրոգրադում սկսված գործադուլը դարձավ համընդհանուր: Ջորքը, որի վրա հույս էր դրել ցարը, անցավ ժողովրդի կողմը: Համընդհանուր գործադուլը վերածվեց զինված ապստամբության: **Փետրվարի 27-ին** (հին տոմարով) մայրաքաղաք Պետրոգրադը հայտնվեց ապստամբների ձեռ-



Վլադիմիր Լենին

քում, հեղափոխությունը հաղթեց: Առաջացավ **երկիշխանություն**՝ Բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդ և Պետական դումայի կոմիտե, որը դարձավ ժամանակավոր կառավարություն: Մարտի 2-ին Նիկոլայ II-ը իրաժարվեց գահից, որով Ռուսաստանում ինքնակալության դարաշրջանն ավարտվեց: Ստեղծվեց հասարակության արդիականացման իրական հնարավորություն: Հռչակվեց քաղաքացիների իրավահավասարություն, համընդհանուր և հավասար ընտրական իրավունք, խոսքի, մամուլի, ժողովների և գործադուլների ազատություն: Փետրվարյան հեղափոխության շնորհիվ իշխանության գլուխ եկան ժողովրդավարական ուժերը:

Երկիշխանության հաստատումից հետո քաղաքական ուժերի մեծ մասը ձգտում էր Ռուսաստանը ժողովրդավարական հանրապետություն դարձնելու: Սակայն դա պետք է կատարվեր համաշխարհային պատերազմի շարունակման պայմաններում: Ապրիլին ժամանակավոր կառավարությունը դիմեց Անտանտի իր դաշնակիցներին և հավաստիացրեց,



«Իլյա Մուրոմեց» գրահամբեման
Պետրոգրադում, 1917 թ.

որ Ռուսաստանը պատերազմը շարունակելու է մինչև հաղթական ավարտը:

Պատերազմի շարունակումը խորացրեց Ռուսաստանի ներքին ճգնաժամը: Հենց այդ ժամանակ էլ սկսեց մեծանալ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծայրահեղ հեղափոխական թևի՝ *բոլշևիկների* ազդեցությունը: Նրա առաջնորդը՝ *Վ. Լենինը*, հայտարարեց, որ ճգնաժամից դուրս գալու միակ ելքը սոցիալիստական հեղափոխությունն է և պրոլետարիատի (բանվորների) դիկտատուրայի հաստատումը: Պատերազմից հոգնած, թշվառ և սովահար ժողովրդի մեջ բոլշևիկներն սկսեցին մեծ ազդեցություն ձեռք բերել: Նրանք պախարակում էին ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, խոստանում խաղաղություն, սոցիալական արդարություն, գյուղացիներին՝ հող, բանվորներին՝ գործարաններ և ֆաբրիկաներ, ընդհանուր բարեկեցություն:

1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով՝ **նոյեմբերի 7-ին**) Պետրոգրադում բոլշևիկները կատարեցին զինված հեղաշրջում: Ժամանակավոր կառավարությունը տապալվեց, և իշխանությունն անցավ բոլշևիկյան կուսակցությանը: Իշ-

խանության զավթումը չնայած կատարվեց զինված ապստամբության միջոցով, սակայն գործնականում տեղի ունեցավ անարյուն:

Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքը: 1917 թ. հոկտեմբերի 25-ին՝ զինված ապստամբության հաղթանակի օրը, Պետրոգրադում իր աշխատանքներն սկսեց *Բանվորների և զինվորների խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարը*: Նրա պատգամավորների կեսից ավելին բոլշևիկներ էին: Համագումարը հռչակեց իշխանության անցումը խորհուրդներին, Ռուսաստանը հայտարարվեց խորհրդային հանրապետություն: Ստեղծվեց խորհրդային գործադիր առաջին իշխանությունը՝ *Ժողովրդական կոմիսարների խորհուրդը (Ժողովակոմիտե)*, որի ղեկավար ընտրվեց Վ. Լենինը: Բոլշևիկները հասան նրան, որ 1918 թ. հունվարի սկզբին ցրվեց ժողովրդի կողմից ընտրված *Սահմանադիր ժողովը*:

Հոկտեմբերյան հեղաշրջումը ոչ միայն Ռուսաստանի, այլև Եվրոպայի ու աշխարհի համար ունեցավ քաղաքակրթական մեծ հետևանքներ:

Բոլշևիկները սկիզբ դրեցին արդյունաբերական քաղաքակրթական շրջանակներում մի նախագծի իրագործման, որն ընդունված է անվանել *սոցիալիզմ* կամ *կոմունիզմ*: Այն նախատեսում էր ստեղծել համընդհանուր սեփականության և կոլեկտիվ արտադրության վրա հիմնված հասարակարգ: Նրանում աշխատանքի արտադրողականությունը, տնտեսության արդյունաբերացումը, սոցիալական արդարությունը, ժողովրդավարությունը, մշակույթի աշխարհիկացումն ավելի բարձր պետք է լինեին, քան Արևմուտքում: Դրան հասնելու ուղին դարձան պետու-

թյան դերի աննախադեպ մեծացումը, նոր արժեքների հիման վրա ազգերի միջև բարեկամության հաստատումը և այդ ոգով մարդու դաստիարակումը:

Բոլշևիկները նոր քաղաքակրթական նախագծի անհապաղ իրագործման գլխավոր միջոց ընտրեցին բռնությունը և համաշխարհային հեղափոխությունը: Դեպքերի ողբերգական ընթացքը պայմանավորված էր նաև նրանով, որ Ռուսաստանի հասարակության մի զգալի մասը թշնամանքով ընդունեց կոմունիս-

տական գաղափարները և բոլշևիկների ծայրահեղ հեղափոխական գործելաոճը: Ահա թե ինչու Հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդեց ծանր, ավերիչ և երկարատև *քաղաքացիական պատերազմը (1918–1920)*: Բնականաբար, բոլշևիկների իշխանության գլուխ գալը թշնամանքով ընդունեցին նաև Արևմուտքի երկրները: Գլխավոր պատճառն այն էր, որ բոլշևիկների որդեգրած կոմունիստական գաղափարներն անհարիր էին արևմտյան շատ արժեքներին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Անտանտը մերժեց Գերմանիայի և նրա դաշնակիցների առաջարկած հաշտությունը: Ինչո՞ւ ԱՄՆ-ը պատերազմի մեջ մտավ Անտանտի կողմից: Ուժային հարաբերակցությունն ինչպե՞ս փոխվեց 1917 թ.:
2. Աշխարհամարտն ի՞նչ բացասական ազդեցություն ունեցավ տնտեսության վրա: Ինչո՞ւ պետությունը սկսեց զբաղվել տնտեսության կարգավորմամբ:
3. Ինչո՞ւ քաղաքակրթական ձգնաժամն առավել ծանր ընթացք ունեցավ Ռուսաստանում: Երբ սկսվեց հակամիապետական ապստամբությունը Պետրոգրադում: Ինչո՞վ ավարտվեց այն: Ճգնաժամից դուրս գալու ի՞նչ ելք էին առաջարկում բոլշևիկները: Երբ և ի՞նչ ձանապարհով բոլշևիկները եկան իշխանության:
4. Երբ Ռուսաստանը հայտարարվեց խորհրդային հանրապետություն: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հոկտեմբերյան հեղաշրջումը: Ի՞նչ հասարակարգ էին նախատեսում կառուցել բոլշևիկները: Նրանք իրենց գաղափարներն իրականացնելու համար ի՞նչ միջոցներ էին ընտրել:

§ 5. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Խորհրդային Ռուսաստանը և Առաջին աշխարհամարտը: Խորհուրդների համառուսաստանյան II համագումարը **1917 թ. հոկտեմբերի 26–ին** օրենք ընդունեց հաշտության մասին: Համագումարը դիմեց բոլոր երկրներին և ժողովուրդներին՝ առաջարկելով դադարեցնել պատերազմը և կնքել համընդհանուր հաշտություն՝ առանց ուրիշի հողերի բռնակցման և ռազմատուգանքների: Խորհրդային կառավարությունը հրապարակեց Ռուսաս-

տանի դաշնակիցների հետ նախկինում կնքված գաղտնի պայմանագրերը, որոնք նախատեսում էին բռնակցումներ:

Բոլշևիկները համոզված էին, որ իրենց հակապատերազմական քաղաքականությունը բոլոր երկրներում կառաջացնի հեղափոխական վերելք և կստիպի պետություններին հրաժարվել պատերազմից: Դա նաև հնարավորություն կտար ձնշված ժողովուրդներին ինքնորոշվելու, այսինքն՝ սեփական կամքով լուծելու



Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը, 1918 թ. մարտի 3

անկախության, հասարակական-քաղաքական կարգի և ազգային մյուս հիմնախնդիրները: Բոլշևիկների մեջ տարածված էր այն կարծիքը, որ հեղափոխական պիքը կտարածվի աշխարհում, և բոլոր ազգերը կընտրեն սոցիալիզմի ուղին:

Հաշտության կնքումը և խաղաղությունը նաև անհրաժեշտ էին բոլշևիկներին խորհրդային կարգերի ամրապնդման ու երկրում սկսված քաղաքացիական պատերազմում հաղթելու համար: Հենց այդ պատճառով նրանք 1917 թ. վերջին բանակցություններ սկսեցին Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ: Հաշտության պայմանագիրը կնքվեց *Բրեստ-Լիտովսկում 1918 թ. մարտի 3-ին*: Պայմանագիրը կնքվեց Գերմանիայի առաջադրած պայմաններով: Խորհրդային իշխանությունը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսի մի մասից, Ուկրաինայից և մերձբալթյան երկրներից: Ռուսաստանը պարտավորվեց նաև վճարել 6 միլիոն ոսկե մարկ ռազմատուգանք:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը հասկապես աղետալի հետևանքներ ունեցավ Հայաստանի համար: Պայմանագրով օսմանյան Թուրքիային էին տրվում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսը և Արդահանը: Իսկ ռուսական զորքերի հեռանալուց հետո Հայաստանը միայնակ մնաց օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմում և ստիպված էր կենաց-մահու կռիվ մղել իր գոյատևման համար:

Քաղաքի միության պարտությունը:

Բոլշևիկների հույսերը, որ պատերազմող երկրների ժողովուրդները խաղաղության և սոցիալիզմի համար հեղափոխություն կսկսեն, չարդարացան: Ազգային-պետական շահերի գիտակցումը և հայրենասիրությունը մարդկանց համար գլխավոր արժեքներ էին մնում նույնիսկ պատերազմի չորրորդ տարում: Այդ իսկ պատճառով 1918 թ. պատերազմը շարունակվեց նոր ուժով:

Արևելյան (Ռուսական) ճակատի վերացումը Գերմանիային հնարավորություն տվեց պատերազմը շարունակելու

միայն Արևմտյան Ճակատում: Բրեստ-Լիտովսկի հաշտությունից հետո Գերմանիան պաշտպանությունից անցավ լայնածավալ հարձակման: Նրա հարձակմանը մասնակցում էր 4 միլիոն զինվոր, զործի դրվեցին 15 000 հրանոթ, 3000 ինքնաթիռ և 10 տանկ: Դրա դեմ դաշնակիցներն ունեին 5 միլիոն մարդ, 16 000 հրանոթ, 3800 ինքնաթիռ և 800 տանկ:

Գերմանացիներին հաջողվեց ձեռքել դաշնակիցների պաշտպանությունը, հասնել Մառն գետի շրջանը: Գերմանական հրետանին 70 կիլոմետր հեռավորությունից սկսեց ուժեղացնել Փարիզը: Սակայն դրանք գերմանացիների վերջին հաջողություններն էին: Օգոստոսին նախաձեռնությունն անցավ Անտանտին: Բալկանյան ճակատում Բուլղարիան պարտվեց և սեպտեմբերի վերջին կնքեց զինադադար: Այդ ժամանակ անգլո-ֆրանս-ամերիկյան զորքերն Արևմտյան ճակատում հակահարձակման անցան և ջախջախեցին գերմանացիներին: Գերմանիան ևս զինադադար խնդրեց:

Սեպտեմբերին օսմանյան բանակը պարտություն կրեց Պաղեստինում և Մակեդոնիայում: Երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց: Սուլթանը **1918 թ. հոկտեմբերի 30-ին** զինադադար կնքեց և իրեն հանձնեց դաշնակիցների ողորմածությանը: Կոստանդնուպոլիսն անցավ դաշնակիցների վերահսկողության տակ:

Նոյեմբերի 3-ի զինադադարով իրեն պարտված ճանաչեց նաև Ավստրո-Հունգարիան: Նույն օրը հեղափոխություն սկսվեց Գերմանիայում: Վիլհելմ II կայսրը հրաժարական տվեց և հեռացավ երկրից: Նոր կառավարության պատվիրակությունը **1918 թ. նոյեմբերի 11-ին Կոնպիենյան անտառում** դաշնակից զորքերի հրամա-

նատար մարշալ **Ֆ. Ֆոշի** շտաբ-վագոնում ստորագրեց զինադադար, որով Գերմանիան ընդունեց իր պարտությունը: **Գերմանիայի անձնատվությունը ապարտվեց Առաջին աշխարհամարտը:** Հաշտության բանակցությունները շարունակվեցին 1919–1922 թթ. ընթացքում, կնքվեցին Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող պայմանագրեր:

Առաջին աշխարհամարտի հետևանքները: Առաջին աշխարհամարտը՝ որպես արդյունաբերական քաղաքակրթության մեծ ձգնաժամ, ունեցավ քացառիկ ծանր հետևանքներ: Պատերազմն ընդգրկեց ամբողջ աշխարհը և իր կնիքը թողեց ոչ միայն անմիջական մասնակիցների, այլև չեզոք երկրների հետագա զարգացման վրա: Աշխարհամարտի հետևանքներն, ըստ իրենց բնույթի, կարելի է համակարգել հետևյալ կերպ՝ մարդկային և նյութական կորուստներ:

Մարդկային կորուստներ: Մոտավոր հաշվարկներով պատերազմի ողջ ընթացքում սպանվել է 10 միլիոնից ավելի զինվոր: Ռազմական գործողությունների և ահաբեկությունների հետևանքով զոհվել է մոտ 13 միլիոն քաղաքացիական բնակչություն: Վիրավորվել և խեղանդամ է դարձել 20 միլիոն մարդ, 9 միլիոն երեխա որբացել է ծնողների զոհվելու հետևանքով: Այս դժբախտությունների հետևանքով խեղվել է մարդկանց առնվազն երեք սերունդների կյանք: Բոլորից շատ մարդկային կորուստներ տվել է Ռուսաստանը, այնուհետև՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան, Անգլիան և մյուսները:

Նյութական կորուստներ: Առաջին աշխարհամարտի ընթացքում նյութական վնասները հասել են անհավանական մեծ չափերի: Պատերազմի ընթացքում տար-



Առաջին աշխարհամարտում գործածված
ռազմական ինքնաթիռ

բեր գինատեսակների և ռազմամթերքի արտադրության համար ծախսվել է մոտ 240 միլիարդ դոլար: Դրանց օգտագործման հետևանքով պատճառված նյութական վնասը կազմում է ավելի մեծ գումար՝ 350 միլիարդ դոլար: Պատերազմի ծախսերը միջին հաշվով կազմեցին գլխավոր մասնակիցների ազգային հարստության 1/3-ը:

Պատերազմի հետևանքով քայքայվեց բազմաթիվ երկրների տնտեսությունը, ամայացան հսկայական տարածքներ, կործանվեցին հազարավոր քաղաքներ, գյուղեր, շինություններ և այլն: Ոչնչացվեցին նաև մեծ քանակությամբ մշակութային արժեքներ, որոնց մի մասը՝ անվերադարձ: Օրինակ՝ գերմանական քանակը հիմնովին ավերեց և կողոպտեց Բելգիայի Լուվեն քաղաքը, որը համարվում էր մշակութային արժեքների թանգարան:

Նոր գինատեսակների և պատերազմական միջոցների օգտագործումը: Առաջին աշխարհամարտը կյանքի կոչեց զենքի նոր տեսակներ, որոնք հնարավոր դարձրին մարդկանց զանգվածային ոչնչացումը: Ստեղծվեցին նոր հրանոթներ, որոնք կարող էին կրակել 10–100 կիլոմետր: 1916 թ. Սոմ գետի ճակատամարտում անգլիացիներն առաջին անգամ օգտագործեցին տանկեր, որը հետո մեծ տարածում գտավ: 1915 թ. սկսած՝ նախ Գերմանիան

և ապա մյուս երկրները հակառակորդի դեմ սկսեցին օգտագործել քիմիական զենք: Բելգիայի Իպր քաղաքի մոտ օգտագործված գազը վնասեց 15 հազար մարդու, որից 5 հազարը մահացավ:

Պատերազմի մեջ նորություն էր նաև ինքնաթիռների օգտագործումը: Դրանք զանգվածաբար օգտագործում էին որպես հետախուզական և ռազմական հարվածող ուժ: Ընդամին՝ պատերազմի ընթացքում կատարելագործվեց դրանց տեխնիկան: Տասն անգամ աճեց մարտական ինքնաթիռների արտադրությունը և հասավ շուրջ 10 հազար միավորի:

Մեծ չափերով կատարելագործվեցին ռազմանավերը և ծովային ականները: Պատերազմում առանձնակի նշանակություն ձեռք բերեց սուզանավերի օգտագործումը: Սուզանավային պատերազմը Գերմանիայի կողմից դարձավ ծովերում պատերազմ վարելու գլխավոր միջոց:

Առաջին աշխարհամարտն առանձնացավ նաև քաղաքական հետևանքներով: Պարտությունների և հեղափոխությունների հետևանքով փլուզվեցին չորս կայսրություններ՝ Ռուսաստանը, Գերմանիան, Օսմանյան տերությունը և Ավստրո-Հունգարիան: Արդյունքում առաջացան նոր պետություններ՝ Լեհաստան, Լատվիա, Ֆինլանդիա, Լիտվա, Էստոնիա, Հարավսլավիա, Ավստրիա, Հունգարիա, Հայաստան, Վրաստան և Ադրբեյջան: Հիմք դրվեց արաբական երկրների անկախացմանը:

Պատերազմի հետևանքով Գերմանիան թուլացավ, Անգլիան, Ֆրանսիան, Ճապոնիան և հատկապես ԱՄՆ-ը հզորացան: Մյուս կողմից՝ գաղութներում սկսեց վերելք ապրել ազատագրական պայքարը:

Առաջին աշխարհամարտի ռազմաքաղաքական գործընթացներում առանձնա-

ցավ ևս մի երևույթ: Դա խաղաղ բնակչության ծրագրված տեղահանումն ու զանգվածային ոչնչացումն էր, որը բնորոշ է ցեղասպանությանը: 1914–1918 թթ. Օսմանյան տերությունն այդպիսի ցեղասպանություն իրագործեց հայերի, հույների, ասորիների նկատմամբ, որին զոհ գնացին սեփական հայրենիքում ապրող միլիոնավոր մարդիկ:

Խորհրդային Ռուսաստանի սուսչացումը Առաջին աշխարհամարտի գլխավոր հասարակական-քաղաքական հետևանքն էր: Որպես քաղաքակրթական զարգացման այլընտրանք՝ Խորհրդային Ռուսաստանը սկսեց հակադրվել Արևմուտքին: Դրանով իսկ համաշխարհային զարգացման հակասությունները չհաղթահարվեցին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ է ընդունվել հաշտության մասին օրենքը Ռուսաստանում: Ինչո՞ւ էր բոլշևիկներին անհրաժեշտ հաշտության կնքումը: Որտե՞ղ և ճի՞ր կնքվեց հաշտության պայմանագիրը: Ինչ պայմաններ էին դրվում Ռուսաստանի առջև: Ինչ հետևանքներ ունեցավ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Հայաստանի համար:
2. Արդարացան արդյոք բոլշևիկների հույսերը՝ կապված պատերազմող երկրներում հեղափոխություններ սկսվելու հետ: Ինչո՞ւ:
3. Արևելյան ճակատի վերացումն ինչ հնարավորություն ընձեռեց Գերմանիային: Ինչպե՞ս ընթացան ռազմական գործողությունները դրանից հետո: Ինչը ստիպեց Գերմանիային գինադադար կնքել: Երբ և որտե՞ղ դա տեղի ունեցավ:
4. Ներկայացրե՞ք Առաջին աշխարհամարտի հետևանքները մարդկային կորուստների և նյութական վնասների առումով: Ինչ նոր գինատեսակներ և պատերազմական միջոցներ կիրառվեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում: Ինչ փոփոխություններ կրեց աշխարհի քաղաքական քարտեզը:

ԲԱԺԻՆ Դ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 9. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Արդյունաբերական քաղաքակրթության բնույթն այնպիսին էր, որ մշտապես իրանում էր մշակույթի զարգացումը և չէր սահմանափակում այն: Մշակույթն ար-

դյունաբերական քաղաքակրթության այն ներուժն էր, որն ապահովում էր անընդհատ զարգացումը, որոշակիացնում նրա արժեքները, սահմանում ապագան: Մշա-

կույթն արդյունաբերական քաղաքակրթությունը պահում էր մշտական ստեղծագործական որոնումների մեջ, նաև լուծումներ տալիս հասարակական առաջընթացին:

Նոր դարերում աշխարհի բոլոր ժողովուրդներն ստեղծեցին իրենց յուրահատուկ ազգային մշակույթը: Դրանցից յուրաքանչյուրը համաշխարհային քաղաքակրթության կարևոր մաս է կազմում: Եվրոպան և ԱՄՆ-ը նոր մշակույթի գլխավոր օջախներն էին:

Կրթական համակարգը: Կրթությունը մշակույթի զարգացման հիմքն է, հասարակական առաջընթացի գլխավոր ցուցանիշներից մեկը: Կրթության նշանակությունն աննախադեպ մեծանում է արդյունաբերական հասարակությունում: Առանց գանգվածային կրթական համակարգի արդյունաբերական քաղաքակրթությունը չէր կարող կայանալ և զարգանալ: Այլ խոսքով՝ կրթության հասարակական պահանջարկը նոր դարերում հետզհետե մեծանում է և համահունչ դառնում արդյունաբերական հասարակության զարգացմանը:

Նոր դարերում կրթության զարգացումը, ինչպես նաև արդյունաբերական հասարակության կայացումը հարթ չէին ընթանում:

Կրթության զարգացմանը մեծապես խթանում էին հումանիզմի գաղափարները, լուսավորական շարժումը, հեղափոխությունները, ժողովրդավարության հաստատումը, գրահրատարակչությունը և այլն: Զարգացման գլխավոր ցուցանիշը նոր դարերում կրթության աշխարհիկ բովանդակության հաստատումն էր: Այսինքն՝ կրթության համակարգը դուրս բերվեց եկեղեցու իրավասությունից և դարձավ պետության գործը: Մյուս կողմից՝

փոխվում էր կրթության բովանդակությունը. կրոնի դասավանդումը կամ նվազում էր, կամ վերացվում: Հիմնական էր դառնում գործնական գիտելիքներ տվող բնագիտական և մյուս առարկաների ուսուցումը: Այս գործում առաջինը հաջողության հասավ Ֆրանսիան, որտեղ 1905 թ. դպրոցն անջատվեց եկեղեցուց, իսկ եկեղեցին՝ պետությունից:

Կրթության զարգացման մյուս ցուցանիշը տարրական պարտադիր կրթության ու համատարած գրագիտության հաստատումն էր: Այս գործում մեծ դեր կատարեցին լուսավորչալ միապետների կրթական բարեփոխումները XVII–XVIII դարերում: Տարրական պարտադիր կրթությունն առաջինը հաստատվեց Պրուսիայում, ապա Ավստրիայում, Շվեդիայում և Շվեյցարիայում: XIX դ. վերջերին տարրական կրթությունը պարտադիր և անվճար դարձավ Եվրոպայի մյուս երկրներում և ԱՄՆ-ում: Այս բոլորի արդյունքում առաջավոր երկրներում բնակչության մեծ մասը դարձավ գրագետ: Օրինակ՝ 1911 թ. դրությամբ Ֆրանսիայում գրագետ մարդիկ կազմում էին բնակչության 89%-ը:

Մեծ զարգացում ապրեց նաև միջնակարգ և տարբեր գիտությունների գծով բարձրագույն կրթությունը: Այդպիսի կրթօջախներում մեծ էր սովորողների թիվը: Արդյունաբերության մեջ նոր տեխնիկայի ներդրումն անհրաժեշտ էր դարձնում մասնագիտական ուսումնարանների և համապատասխան բուհերի ստեղծումը: Հատկապես լայն տարածում գտավ համալսարանական կրթությունը: Բացվեցին հարյուրավոր նոր համալսարաններ: Օրինակ՝ ԱՄՆ-ում XX դ. սկզբին կար հազարից ավելի համալսարան: Դրանցում ուսանում էին նաև հեռավոր երկրներից եկած երիտասարդներ, որը նպաստում էր

մշակութային փոխազդեցությանը: Համալսարաններում առաջին անգամ սկսեցին կրթություն ստանալ նաև կանայք: Համալսարանները միաժամանակ գիտական հետազոտությունների կարևոր կենտրոններ էին:

Կրթության շնորհիվ է, որ բնական գիտությունների մեծ նվաճումները տեղ էին գտնում հասարակական գիտակցության մեջ: Այդ գործում նշանակալից դեր էին խաղում նաև ականավոր գիտնականների հրապարակային դասախոսությունները: Դրանք շատ էին տարածված Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում: Իսկ ԱՄՆ-ի համալսարաններում ստեղծվում էին հատուկ բաժիններ, որոնք զբաղվում էին գիտական նվաճումների հանրամատչելի տարածմամբ: Շատ երկրներում այդ նպատակով ստեղծվում էին ժողովրդական համալսարաններ:

Կարևոր նվաճում էր նաև այն, որ կրթության մասին օրենքների դրույթներն ավրապնդվում էին նոր ընդունված սահմանադրություններում:

Գիտական աշխարհընկալման գարգացումը Եվրոպայում XVII-XVIII դարերում: Վերածննդի դարաշրջանը, որը սկիզբ դրեց աշխարհի նոր գիտական ընկալմանը, նախադրյալ դարձավ XVII դարի գիտական հեղափոխության համար: Բնական և հումանիտար գիտությունների նվաճումները փոխեցին աշխարհի մասին մարդու նախկին պատկերացումները: Դրանում հատկապես մեծ էր իտալացի **Գ. Գալիլեյի** և անգլիացի **Ֆ. Բեկոնի** դերը, որոնք հայտնագործեցին բնության և հասարակության իմացության շատ օրենքներ: Բեկոնին է պատկանում «Գիտելիքն ուժ է» հանրահայտ ասույթը: Նա ստեղծեց գիտական հասարակության մի

իդեալ, որին մարդկությունը հետևում է մինչ օրս:

XVII դարը հաճախ անվանում են մաթեմատիկայի դար: Գալիլեյը պնդում էր, որ բնությունը «գիրք է՝ գրված մաթեմատիկայի լեզվով»: Այս տեսակետը հետագայում խորացրին ֆրանսիացիներ **Պ. Ֆերման** և **Ռ. Դեկարտը**: Իմացության գլխավոր և համընդհանուր հնարը, որի միջոցով միայն կարելի է հասնել ճշմարտության, Դեկարտը համարում էր մաթեմատիկական բանաձևը և դրա ապացուցումը: Նա կոչ էր անում բոլոր ճշմարտությունները կասկածի տակ առնել և գիտականորեն ապացուցել դրանց գոյությունը: Իր իսկ գոյությունը նա ապացուցում էր այսպես. «Ես մտածում եմ, հետևաբար՝ գոյություն ունեմ»:

Դեկարտի հետազոտությունները լայն արձագանք գտան Եվրոպայում: Գիտության նկատմամբ հարգանքը մեծացավ: Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում պետության հովանավորությանը ստեղծվեցին ակադեմիաներ, որտեղ աշխատում էր ժամանակի գիտական ընտրանին: Նրանցից մեկն էլ անգլիացի **Ի. Նյուտոնն** էր, որը եզրափակեց XVII դարի գիտական հեղափոխությունը: Շարժման մասին նրա հայտնագործած երեք օրենքները, տիեզերական ձգողության օրենքը և մյուսները փոխեցին մինչ այդ եղած աշխարհի գիտական ընկալումը: «Աշխարհի նյուտոնյան պատկերի» համաձայն՝ բնության մեջ և տիեզերքում հաստատված կարգը գործում է ոչ թե Աստծո միջամտությամբ, այլ ըստ տիեզերքում գոյություն ունեցող բացարձակ օրենքների:

Աշխարհի նյուտոնյան ընկալումը, որը հիմք դրեց դասական գիտությանը, հեղաշրջում առաջացրեց եվրոպացիների



Ֆրենսիս Բեկոն



Գալիլեո Գալիլեյ



Մայքլ Ֆարադեյ

աշխարհայացքում: Հասարակական գիտություններում այն ամրապնդեց մարդու բնական իրավունքի նոր ձևավորվող դպրոցը, որը մեծ տարածում գտավ Լուսավորության դարում:

Լուսավորության դարը եվրոպական գիտության զարգացման հաջորդ փուլն է: XVIII դարի գիտնականներն առանձնանում էին գիտության ամենատարբեր բնագավառների խոր իմացությամբ: Նրանց բազմապիսի հայտնագործությունները խորացրին աշխարհի ամբողջական գիտական ընկալումը: Աննախադեպ աճեց հետաքրքրությունը բնության երևույթների նկատմամբ: Մեխանիկան, էլեկտրականությունը, ջերմության ուժի ուսումնասիրումը դարձան գիտության առանձին բնագավառներ:

Ֆրանսիայում գիտական նվաճումների յուրահատուկ ամփոփումը դարձավ աշխարհում առաջին «Գիտությունների, արվեստների և արհեստների հանրագիտարանը» (1751–1776): Նրա խմբագիրներն էին իմաստասեր **Դ. Դիդրոն** և նշանավոր մաթեմատիկոս **Ժ. Լ'Ալանբերը**: Գերմանիայում գիտության զարգացման իմաստասիրական հիմնավորումներով

մեծ դեր կատարեց **Ի. Կանտը**: Նրա վաստակը մեծ էր նաև տիեզերագիտության բնագավառում:


Դասական գիտության նվաճումները XIX դարում: XVII–XVIII դարերը եվրոպական դասական գիտության հաստատման, իսկ XIX դարը նրա թռիչքաձև զարգացման ժամանակաշրջաններն են: Գիտությունը՝ որպես մշակույթի առաջատար բնագավառ, մտավ հասարակական կյանք, դարձավ արդիականացման չափանիշ: Հասարակական գիտությունների բնագավառում առաջացան տասնյակ իմաստասիրական, գաղափարաքաղաքական, տնտեսագիտական, գեղագիտական և այլ տեսություններ: Դրանց ընդհանուր հայեցակետը մարդու հասարակական դերի գիտական վերլուծությունն ու հիմնավորումն էր:

XIX դարում գիտական հետազոտությունները մեծ մասամբ կատարվում էին դասական գիտության մեթոդաբանությամբ: Միևնույն ժամանակ գիտության զարգացումն ավելի թեքվեց դեպի գործնական կյանք, դեպի իրականություն:

XIX դարում աշխարհի ֆիզիկական պատկերն ուսումնասիրվում էր երկու



Դիմարի Մենդեղեկ



Չարիզ Դարվին



Ջեյն Մարսովել

փոխկապակցված բնագավառներում: Դրանք են՝ ջերմության մեխանիկական ազդեցությունները և էլեկտրամագնիսական գործընթացները: Գիտության այս ճյուղերում աչքի ընկան ֆրանսիացի *ժ. Ֆուրիեն*, անգլիացիներ *Ջ. Ջոուլը*, *Մ. Ֆարադեյը*, ռուս *Է. Լենցը*, գերմանացի *Գ. Օհմը*, շոտլանդացի *Ջ. Մաքսվելը* և ուրիշներ:

Մեծ էին նվաճումները նաև գիտության մյուս բնագավառներում: Քիմիական գիտությունում հիմք դրվեց ատոմամոլեկուլային տեսությանը: Այդ գործում մեծ էր *Ջ. Դալթոնի*, *ժ. Գեյ-Լյուսակի* և *Ա. Ավոգադրոյի* դերը: 1871 թ. քիմիական բոլոր նյութերի բնույթը մեկ պարբերական աղյուսակում ամփոփեց ռուս գիտնական *Դ. Մենդեղեկը*: Մեծ փառք ձեռք բերեց նաև ֆրանսիացի քիմիկոս *Լ. Պաստյորի* 1888 թ. հիմնած մանրէաբանության կենտրոնը, որն այժմ կրում է նրա անունը:

Այստեղ կարևոր հայտնագործություններ կատարվեցին վարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժման բնագավառում: Նա առաջարկեց մի հնար, որի օգնությամբ երկար ժամանակ կարելի է պահպանել գինին, կաթը և մրգահյութը: Նա համոզված էր, որ «գիտությունը նպաստում է վեհագույն գաղափարների տարածմանը և հաղթանակին»:

XIX դարի գիտական հայտնագործությունների մեջ առանձնանում է անգլիացի կենսաբան *Չ. Դարվինի* էվոլյուցիոն ուսմունքը: Ըստ նրա՝ կենսաբանական տեսակները ծագել են տեսական պայքարի՝ բնական ընտրության ճանապարհով: Հատկապես մեծ վեճերի տեղիք տվեց նրա տեսակետը մարդու կենդանական ծագման մասին: Այս բոլորն արմատապես փոխեց մարդու պատկերացումները բնության և իր աստիճանական զարգացման մասին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նոր դարի սկզբնական շրջանում ինչն էր խոչընդոտում կրթության զարգացմանը: Ո՞ր գործոնները խթանեցին կրթության զարգացումը: Ի՞նչ է նշանակում կրթության աշ-

խարհիկ բովանդակության հաստատում: Երբ և ո՞ր երկրներում առաջինը հաստատվեց պարտադիր տարրական կրթությունը:

2. Վերհանք Ֆ. Բեկոնի և Գ. Գալիլեյի դերը գիտության զարգացման գործում: Ի՞նչ կոչ էր անում Դեկարտը: Համաձայն էք դրա հետ: Ինչո՞ւ: Ո՞վ եզրափակեց XVII դարի գիտական հեղափոխությունը, ինչ օրենքներ է նա հայտնագործել:

3. Ինչո՞վ էին առանձնանում XVIII դարի գիտնականները: Գիտության ի՞նչ նոր բնագավառներ առաջացան: Ո՞ր երկրում և ե՞րբ է հրատարակվել աշխարհում առաջին հանրագիտարանը: Ովքե՞ր էին նրա խմբագիրները: Ի՞նչ բնագավառներում էր հայտնի Ի. Կանտը:

4. Գիտատեխնիկական առաջընթացի ինչ հայտնագործություններով է նշանավոր XIX դարը: Աշխարհի ֆիզիկական պատկերի ուսումնասիրման ինչ նոր բնագավառներ առաջացան, և ովքե՞ր էին գիտության այդ ձյուղերի նշանավոր ներկայացուցիչները:

5. Քիմիայում ինչ նոր տեսություն առաջացավ, և ովքե՞ր էին դրա նշանավոր ներկայացուցիչները: Երբ և ինչ հայտնագործություն կատարեց ռուս գիտնական Դ. Մենդելեևը: Ո՞վ է Էվոլյուցիոն ուսմունքի հիմնադիրը, և ո՞րն է դրա էությունը:

§ 2. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Գիտատեխնիկական հեղաշրջման նախադրյալները: XIX դ. վերջին տասնամյակներին և XX դ. սկզբին Եվրոպայում ու ԱՄՆ-ում տեղի ունեցավ գիտատեխնիկական մեծ թռիչք: Գիտության մեջ դա հաճախ անվանում են հեղաշրջում: Որո՞նք էին այդ հեղաշրջման նախադրյալները:

XIX դարի վերջին ավարտվում է արդյունաբերական հեղաշրջման դարաշրջանը: Ինչպես նշվել է, դրանով ավարտվում է նաև արդյունաբերական հասարակության տնտեսական համակարգի ձևավորումը, որը նույնպես դարձավ գիտատեխնիկական հեղաշրջման նախադրյալ:

Արտադրության վերագինման մեծ պահանջարկը մշտապես խթանում էր գիտությունը և տեխնիկան: Դարաշրջանը միախուսեց փորձարարական գիտությունը և արդյունաբերացումը: Գիտությունը վերջնականապես դարձավ արտադրողական ուժ:

232

Գիտության և տեխնիկայի հետագա արագ զարգացմանը մեծապես նպաստեց նաև համաշխարհային տնտեսության առաջացումը: Այդպիսի աննախադեպ տնտեսության կենսագործունեությունը մշտապես առաջ էր քաշում գիտատեսական և տեխնիկական հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Գիտությունը նույնպես դարձավ համաշխարհային՝ առանց ազգային սահմանափակումների և քաղաքական խոչընդոտների:

Գիտատեխնիկական հեղաշրջման լուրջ նախադրյալ դարձավ նաև արդյունաբերական քաղաքակրթության ձգնաժամը, որում հայտնվեց աշխարհը XX դարի սկզբին: Դա հանգեցրեց այնպիսի համամարդկային ողբերգության, ինչպիսին Առաջին աշխարհամարտն էր: Հասարակության մեջ առաջացել էր «ձգնաժամային գիտակցություն»: Գերմանացի նշանավոր իմաստասեր *Օ. Շպենգլերն* այդ փակուղին անվանեց «Եվրոպայի մայրամուտ»: Բնականաբար, գիտու-



Մեծ Բրիտանիայի թագավորական ինստիտուտը

թյունը փորձում էր մարդկության հետագա զարգացման ուղիներ գտնել և առկա խնդիրներին նոր իրավիճակից բխող լուծումներ տալ:

Տեխնիկայի գլխավոր նվաճումները: Նոր դարերում դասական գիտության նվաճումները դարձան տեխնիկական առաջընթացի հիմքը: Գիտության և տեխնիկայի զարգացմանը նպաստում էին պետությունը, քննչությունները և բարեգործական հիմնադրամները: Օրինակ՝ ԱՄՆ-ում XX դ. սկզբին կար այդպիսի 27 հիմնադրամ: Գիտատեսական հայտնագործությունները ներթափանցում էին կիրառական գիտություններ, նպաստում գյուտերի տարածմանը:

Նոր դարաշրջանը կարելի է անվանել **մետաղի դար:** Մետաղից պատրաստված արտադրանքն աննախադեպ տարածում գտավ տնտեսության մեջ և մարդկանց կենցաղում: Հետևաբար մետաղի ձուլման և մշակման տեխնիկայի հետագա կատարելագործումը դարձավ հրամայական պահանջ:

Դեռևս 1856 թ. անգլիացի **Հ. Քեյլմերի**, 1864 թ. ֆրանսիացի **Պ. Մարտենի**

գյուտերի շնորհիվ հնարավոր դարձավ ստանալ ավելի շատ էժան և որակյալ պողպատ: Դա հանքարդյունաբերության և մետաղամշակության մեջ առաջացրեց իսկական հեղաշրջում: 1878 թ. թուջից պողպատ ստանալու նոր արդյունավետ եղանակ առաջարկեց անգլիացի **Ս. Թոմասը:** Քիչ ուշ մշակվեցին էլեկտրականության կիրառմամբ գունավոր մետաղների ձուլման և մշակման նոր եղանակներ: Մինչև XX դարի սկիզբը կատարելագործվեց գլանման տեխնիկան, որը հնարավորություն տվեց ստանալու երկաթի թերթեր և խողովակներ: Ռետերի գլանման նոր տեխնիկան մեծապես նպաստեց երկաթուղու զարգացմանը:

XIX դ. 70–80–ական թթ. հանքարդյունաբերության մեջ սկսեցին օգտագործել նաև հորատող մեքենաներ, դինամիտ (հայտնագործել է շվեդ **Ա. Նորելը** 1867 թ.), էլեկտրական ամրաբաժիններ, օդափոխիչներ և այլն: Մետաղագործության մեջ կարևոր նշանակություն ունեցավ XIX դ. 80–ական թվականներին ռուս ճարտարագետներ **Ն. Բենարդոսի** և **Ն. Մլավյանովի** մետաղի էլեկտրական ու



Կառլ Բենցի եռանիվ ավտոմեքենան

գազային զողման գյուտերի կիրառումը: Աննախադեպ զարգացում ապրեց հաստոցաշինությունը, որը հնարավորություն տվեց լայն չափերով անցնելու չափաբերված և միօրինակ արդյունաբերական արտադրանքին:

Քիմիայի զարգացումը հնարավորություն տվեց հայտնագործելու հումքի մշակման բազմաթիվ եղանակներ: Երկու դարերի սահմանագծում իսկական հեղաշրջում առաջացրեց արհեստական նյութերի ստացումը, որը լայն կիրառում գտավ տնտեսության և կենցաղի մեջ: Դրանք են՝ պլաստմասսան, արհեստական մանրաթելերը, ներկանյութերը, կաուչուկը և այլն:

Էլեկտրականության բնագավառում գիտության երկարատև հետազոտությունները վերջապես տվեցին մեծ արդյունքներ: Էլեկտրական գեներատորի և մետաղալարերով հոսանքի տեղափոխումը հնարավորություն տվեցին նրա էներգիան ներդնելու արդյունաբերության, փոխադրամիջոցների և կենցաղի մեջ: 1879 թ. գերմանացի Վ. Միսենսը նախագծեց առաջին էլեկտրաքարշը, որը դարի վերջին սկսեց տարածում գտնել երկաթուղում: Միաժամանակ սկսվեց էլեկտրակայանների կառուցումը, որում օգտագործում էին շոգեատուրքիներ և ջրային ստորբիներ:

234

1870–ական թվականներին ռուս գյուտարարներ **Պ. Յարյոկովը** և **Ա. Լոդիգինը** նախագծեցին առանց կարգավորիչի աղեղային և շիկացման առաջին էլեկտրական լամպերը: Իսկ ամերիկացի նշանավոր գյուտարար **Թ. Էդիսոնի** կատարելագործումից հետո էլեկտրական լամպը սկսեց XIX դարի վերջին տարածվել և աստիճանաբար դուրս մղել գազային ու նավթային լամպերը:

Մեծ քանակությամբ տեխնիկական գյուտեր կատարվեցին փոխադրամիջոցների և հաղորդակցության բնագավառներում: 1885 թ. գերմանացի **Կ. Բենցը** ստեղծեց ներքին այրման շարժիչով աշխատող առաջին եռանիվ ավտոմեքենան: 1895 թ. այն կատարելագործեց **Գ. Դայմլերը**: XX դ. սկզբին ավտոմեքենաների ավտոմատացված զանգվածային արտադրությունը կազմակերպեց ամերիկացի գյուտարար և ձեռներեց **Հ. Ֆորդը**:

Կապի միջոցներից կարևոր էր հեռագրի և հեռախոսի տարածումը: 1876 թ. ամերիկացի գյուտարարներ **Ա. Բելլը** և **Ի. Գրեյը** ստեղծեցին առաջին հեռախոսը: Այն մեծ տարածում գտավ 1878 թ. հետո, երբ **Թ. Էդիսոնը** հայտնագործեց բարձրախոսը:

Թ. Էդիսոնի գյուտերն առնչվում են տեխնիկայի բոլոր ճյուղերին: 1872 թ. նա ստեղծեց իր աշխատանոցը, որտեղ յուրաքանչյուր ամիս միջին հաշվով 3–4 գյուտ էր կատարվում: ԱՄՆ–ում նա ստացավ 1098, իսկ աշխարհի 34 երկրներում՝ երեք հազարից ավելի տարբեր գյուտերի արտոնագրեր: Նա սկիզբ դրեց էլեկտրոնիկային, կատարելագործեց հեռագրակապը, հեռախոսը, կինոսարքը, ստեղծեց էլեկտրաքարշեր, մարտկոցներ, գրամեքենա և այլն:

Ոչ դասական գիտական մեթոդաբանության առաջացումը: XIX–XX դարերի սահմանագծում գիտական աշխարհում տեղի ունեցավ աննախադեպ մեծ քեկում: Դասական գիտությունը, որը հիմնված էր բնության կայուն, անփոփոխ օրենքների ճշգրիտ սահմանված պատկերացումների վրա, ճգնաժամի մեջ ընկավ: «Աշխարհի նյութական պատկերը» հակասության մեջ մտավ անհաշիվ գիտական հայտնագործությունների հետ, որն ի վերջո հանգեցրեց ոչ դասական գիտական մեթոդաբանության առաջացմանը: Մյուս կողմից՝ դասական գիտությունը ոչ դասականին փոխանցեց հետազոտման ճշգրտության, մաթեմատիկական բանաձևումների, մասնավորից ընդհանուրին գնալու սկզբունքներ և մեթոդներ:

Գիտական մեթոդը (հունարեն՝ ուսումնասիրման եղանակ, հնար, ուսմունք) մարդու գործունեությունը կարգավորող իմացության միջոցների, ճանաչողական սկզբունքների, տարաբնույթ հնարքների ամբողջությունն է:

Մեթոդաբանությունը մեթոդի մասին իմաստասիրական ուսմունքն է, որը վերաբերում է գիտելիքների ձեռքբերման առանձին փուլերի և եղանակների հետազոտմանը, հիմնավորմանը և արժեւորմանը:

XIX դարի կեսերից գիտության մեջ սուր բանավեճեր սկսվեցին էներգիայի պահպանման և փոխակերպման շուրջ: Ապացուցվեց, որ հակառակ «աշխարհի նյութական պատկերի»՝ ջերմային շարժման մասնիկներն անդառնալի են: Առաջ եկավ հավանականության սկզբունքը՝ որպես գիտական վերլուծության նոր մեթոդաբանություն: Բնության երևույթներն սկսեցին բացատրել ոչ միայն մեխանի-

կական շարժման պատճառներով, այլև հավանականության օրենքներով: Հավանականության տեսությունը հնարավորություն տվեց մեծ հայտնագործություններ կատարելու մաթեմատիկայի և հատկապես ֆիզիկայի բնագավառներում:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ոչ դասական գիտության հայտնագործությունները՝ նյութի զանգվածի, էներգիայի շարժման, ինչպես նաև ժամանակի ու տարածության վերաբերյալ, արմատապես փոխեցին մարդու հայացքները բնության և տիեզերքի մասին: Դրանում մեծ դեր կատարեցին գերմանացիներ **Հ. Հեյցը** (ռադիոակտիվներ), **Մ. Պրանկը** (էներգիայի ճառագայթման քվանտային բնույթը), **Վ. Ռենտգենը** (ռենտգենյան ճառագայթներ), ֆրանսիացի **Պ. Կյուրին**, նրա կինը՝ լեհուհի **Մ. Կյուրին** (ռադիոակտիվ ճառագայթներ), անգլիացի **Է. Ռեզերֆորդը** (ատոմի կառուցվածքի մասին ուսմունքը) և շատ ուրիշներ: Ատոմի՝ որպես նյութի անբաժանելի մասնիկի մասին դարավոր պատկերացումը մնաց անցյալում:


Դարաշրջանի գիտության յուրատեսակ ամփոփումը դարձավ գերմանացի գիտնական **Ա. Այնշթայնի** հարաբերականության տեսությունը (1905–1916 թթ.): Պարզվեց, որ բնության խոր գաղտնիքների մեջ թափանցելու համար զգացվում է մարդու գիտական երևակայության սուր կարիք, կոսմոլոգիական դատողություն, որը հիմնված չէ նախնական ապացույցների տրամաբանության վրա: Հարաբերականության տեսությունը փոխեց ժամանակի և տարածության բացարձակության մասին դասական գիտության պատկերացումները: Ոչ միայն ֆիզիկայի, այլև մաթեմատիկայի, կենսաբանության և քիմիայի բնագավառներում սկիզբ առան գիտական նոր ճյուղեր:



Վիլիելմ Ռենտգեն



Ձեռքի ոսնուզեցյալ առաջին լուսանկարը



Ալբերտ Այնշթայն

Ավելին՝ նրանց միջև սահմանները դարձան պայմանական և միահյուսված: Այդ օրինաչափության արդյունքում առաջացավ ֆիզիկական քիմիան, կենսաքիմիան, աստղաֆիզիկան և այլն:

Ահա այս և մի շարք նոր գիտություններ հող նախապատրաստեցին XX դարի երկրորդ կեսից գիտության զարգացման որակական նոր փուլի համար, որի պայմաններում ապրում ենք մենք:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՞ք XIX դ. վերջի և XX դ. սկզբի գիտատեխնիկական հեղաշրջման նախադրյալները: Ձեր կարծիքով՝ ինչն էր առավել նպաստում գիտության և տեխնիկայի արագ զարգացմանը:
2. Նոր շրջանում ո՞ր նյութն էր ամենից շատ օգտագործվում կենցաղում: Ի՞նչ գյուտեր կատարվեցին նոր դարերում: Քիմիայի զարգացումն ի՞նչ նոր նյութեր ստանալու հնարավորություն ընձևեց: Ի՞նչ առաջընթաց արձանագրվեց էլեկտրականության բնագավառում: Ներկայացրե՞ք փոխադրամիջոցների ու հաղորդակցության բնագավառի նվաճումները:
3. XIX դ. վերջին և XX դ. սկզբին ի՞նչ հայտնագործություններ կատարվեցին ոչ դասական գիտության ասպարեզում: Ո՞վ է հարաբերականության տեսության հեղինակը: Ցոնյց տվե՞ք դրա նշանակությունը:

§ 3. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐՈՒՄ

Բարոկկո ոճի կերպարվեստը: Վերածննդի մշակույթը հզոր նախադրյալ դարձավ XVII դարում գեղարվեստական մշակույթի զարգացման համար: Իր հերթին՝ նոր դարաշրջանում դրան խթանեցին մարդու գիտական աշխարհընկալման խորացումը, մանուֆակտուրային

կապիտալիզմի վերելքը: Հասարակական առաջընթացին համահունչ խորացավ գեղարվեստական մշակույթի աշխարհիկ բնույթը: Մյուս կողմից՝ կաթոլիկ եկեղեցին դեռևս պահպանում էր իր ազդեցությունը:



Բարոկկո ոճի գլուխգործոց Ս. Պետրոսի տաճարը Վատիկանում

XVII դարում առաջացան փոխկապակցված երկու գեղարվեստական ուղղություններ՝ *բարոկկոն* և *կլասիցիզմը*: Դրանք արտացոլում էին այն փոփոխությունները, որոնք տեղ էին գտնում եվրոպացիների հասարակական գիտակցության, իմացության և կենսակերպի մեջ:

Բարոկկո ոճը (արտասովոր, տարօրինակ) ամենից շատ դրսևորվեց կերպարվեստում, ինչպես նաև գրականության և երաժշտության մեջ: Ժամանակի ոգուն համահունչ բարոկկոն ձգտում էր զանազան գեղեցիկ, տպավորիչ հնարներով արտացոլելու կյանքի շարժումը և արագ փոփոխվող աշխարհը: Բարոկկո ոճի կառույցներում ձարտարապետությունը, քանդակագործությունը և գեղանկարչությունը միահյուսված են զարմանահրաշ ներդաշնակությամբ: Շենքերն ունեն հսկայական և վեհաշուք քանդակի տեսք, որոնք կարծես թե շարժվում են դեպի անսահմանություն: Կառույցների ներսը, որոնք զարդարված են միմյանց կապակցված բազմաթիվ մարմարակերտ

քանդակներով, նկարներով, գորելեններով և հայելիներով, նույնպես ստեղծում են անսահմանության պատրանք: Դրանցում գեղեցիկի պատկերումն ու ընկալումը դարձան բազմիմաստ և բազմազան:

Բարոկկոն մեծ ծաղկում ապրեց Իտալիայում, Իսպանիայում, Բելգիայում, Ավստրիայում, Չեխիայում, Լեհաստանում և այլուր: Իհարկե, բոլոր երկրներում բարոկկոն ուներ ազգային յուրահատկություններ:

Հռոմի պապը միջոցներ չէր խնայում աշխարհի կաթոլիկների հոգևոր մայրաքաղաք Հռոմը գեղեցկացնելու համար: Ահա թե ինչու «հավերժական քաղաքը», ինչպես կոչում էին Հռոմը, դարձավ բարոկկո կերպարվեստի կենտրոնը: Այստեղ բարոկկո ոճի գլխավոր կառույցներն են Ս. Պետրոսի տաճարի առջևի ձվաձև սյունազարդ հրապարակը, լայնահուն Իսպանական աստիճանները, Տրևիի շքեղ շատրվանը և բազմաթիվ կաթոլիկ եկեղեցիներ:

Իտալիայում բարոկկո ոճի նշանավոր ճարտարապետներ և քանդակագործներ էին *Լ. Բերնինին* և *Յ. Բորրոմինին*: Բերնինին Ս. Պետրոսի տաճարի (կառուցվել է 1506–1614 թթ.) համալիրի հեղինակն է: Տաճարի ներքը շքեղացրել է բազմաթիվ քանդակներով, զարդանախշերով, որոնք հիշեցնում են անկրկնելի թանգարան:

Անկրկնելի և բացառիկ է նաև բարոկկո ոճի գեղանկարչությունը: Ի տարբերություն ճարտարապետության և քանդակի՝ նրանում ազգային յուրահատկություններն ավելի ընդգծված են: Իտալիայում վաղ բարոկկոյի նշանավոր վարպետ էր *Մ. Կարավաջոն*: Նրա կտավներում լույսը և ստվերը տարանջատված են, որի շնորհիվ առաջանում է սուր հակադրություն: Այդ հնարի օգնությամբ նա կարողացել է մարմնավորել իր ժամանակի անհանգիստ, մշտական շարժման մեջ գտնվող իրական կյանքը:

Ֆլանդրիայում (ներկայիս Բելգիա) բարոկկո ոճի ինքնուրույն գեղանկարչությունն արարեց *Պ. Ռուբենսը*: Նրա կտավների կառուցվածքը բազմազան է, լի լուսաստվերային հակադրություններով և կյանքի լարված պահերը մարմնավորող բովանդակային լուծումներով: Պ. Ռուբենսն իր նկարներում փառաբանում է կյանքի տարերքն իր տարաբնույթ դրսևորումներում: Նա ստեղծեց Եվրոպայի ամենամեծ գեղանկարչական արվեստանոցը, որտեղ ընդունում էր նաև պատվերներ:

Իսպանիայում ևս ստեղծվեց բարոկկո ոճի գեղանկարչության հզոր դպրոց, որի ակունքներում կանգնած էր *Էլ Գրեկոյի* հզոր արվեստը: Այդ դպրոցի բացառիկ տաղանդավոր վարպետներից էր *Գ. Վելասկեսը*, որին հովանավորում էր Իսպանիայի արքան: Նրա արվեստին հատուկ

են իրական կյանքի վառ գույներով բազմաժանր խորքային լուծումները՝ առանց բարոկկոյի արտաքին ճոռոմության և պաճուճանքի:

Հոլանդիայում XVII դարում ստեղծագործել է *Ռեմբրանդտը*, որի արվեստն այսօր էլ համաշխարհային փառք է վայելում: Բարոկկոյին հատուկ լուսաստվերային անսովոր գեղեցիկ և նրբին հնարներով Ռեմբրանդտը մարմնավորել է իր հայրենիքի կենսական ուժերը, իմաստությունը և փորձառությունը:

XVII դարի երաժշտական մշակույթը:

XVII դարում բարոկկո կերպարվեստին զուգահեռ ստեղծվեց ժամանակի ոգուն համահունչ մի նոր՝ անսովոր երաժշտական արվեստ: Նրա ծնունդը նախապատրաստվել էր Վերածննդի դարաշրջանում, երբ սկսվել էր երաժշտության աշխարհիկացումը: XIV–XVI դարերում կրոնական կապանքներից ազատվող երաժշտության աշխարհիկացման այդ հոսանքը կոչվում էր «նոր արվեստ»: XVI դարում հատկապես Իտալիայում սկսվում է մեծ հետաքրքրություն անտիկ երաժշտության նկատմամբ: Դա հաջորդ դարում հանգեցրեց արվեստի այնպիսի հզոր ժանրի առաջացմանը, ինչպիսին օպերան է:

Օպերան (լատ. և իտալ.՝ աշխատանք, ստեղծագործություն) համադրական եզակի արվեստ է, որը մի ամբողջական ստեղծագործության մեջ ներդաշնակում է թատրոնը, գրականությունը, երաժշտությունը, պարը և կերպարվեստը:

Օպերան, որը գեղարվեստական ներգործության անսահման հնարավորություններ ունի, արագորեն տարածվեց արդիականացող Եվրոպայում և դարձավ զանգվածային արվեստ:

Իտալիայի Ֆլորենցիա քաղաքը, ինչպես նշվել է, Վերածննդի մշակույթի խոշոր կենտրոն էր: Հենց Ֆլորենցիայում էլ 1600 թ. մի խումբ արվեստագետներ ստեղծեցին մեզ հասած առաջին օպերան («Էվրիդիկե»): Այն շատ բանով հիշեցնում էր անտիկ ողբերգության ներկայացումը: Վաղ իտալական օպերայի մյուս օջախը դառնում է Հռոմը, ապա՝ Վենետիկը և Նեապոլը:

Նեապոլում ստեղծված օպերային երաժշտությունն արագորեն տարածվում էր ժողովրդի մեջ: Դրանում մեծ դեր խաղաց *Ա. Սկարլատտին*, որը ստեղծեց 125 օպերա (այդ թվում՝ «Միհրդատ Եվպատոր», «Տիգրան» և այլն) և բազմաթիվ երաժշտական երկեր: Նա հիմք դրեց իտալական *հասնազգային սերիա-օպերային*, որը դարավերջին սկսեց տարածվել Եվրոպայում:

XVII դարում ազգային օպերային արվեստի նմուշներ ստեղծվեցին Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում և Անգլիայում: Միևնույն ժամանակ երաժշտությունը դառնում է բազմաբովանդակ, գործիքային կատարումները՝ բազմապիսի: Մեծ տարածում է ստանում բազմաձայն երգեհոնային երաժշտությունը:

Կլասիցիզմի գեղարվեստական ուղղությունը: XVII դարում բարոկկո արվեստի այլընտրանք դարձավ կլասիցիզմը (լատ.՝ օրինակելի): Կլասիցիզմը միահեծանության դարաշրջանի արվեստն է, որը կոչված է ամրապնդելու պետությունը, նրա միասնությունն ու կարգը: Հենց այդ նպատակով էլ պետությունն իր ձեռքն էր վերցնում արվեստի կարգավորումը: Օրինակ՝ 1648 թ. Լուի XIV-ի հովանավորությամբ ստեղծվեց Գեղարվեստի ակադեմիա:



Ալեսանդրո Սկարլատտի

Կլասիցիզմը գեղարվեստական բարձրագույն և անառարկելի արժեքներ է համարում անտիկ արվեստը և գրականությունը: Կլասիցիզմի գեղագիտության հիմքում ընկած են մարդկային ոգու խորության և պարզության պահանջը, սթափ դատողությունը և բանականությունը: Ըստ կլասիցիստների՝ դրա օգնությամբ կարելի է հասնել հասարակության և մարդու կատարելության: Ըստ կլասիցիզմի՝ գեղեցիկն անփոփոխ է և հավիտենական, ինչպես բնությունը:

Կլասիցիզմի սկզբունքների համաձայն՝ ստեղծագործության մեջ պետք է սահմանազատել բարոյական որակները՝ վեհը և նսեմը, հերոսականը և առօրեականը, այսինքն՝ կատարյալը և անկատարը: Անթույլատրելի է համարվում նույն ստեղծագործության մեջ միահյուսել ողբերգականը և երգիծականը: Գրական ժանրերի մի մասը համարվում էր բարձր (ողբերգություն, ներբող), մյուսները՝ ցածր (կատակերգություն, առակ): Թատերագրությունում տիրում էր եռամիասնության կանոնը, համաձայն որի՝ պետք

է լինի տեղի, ժամանակի և գործողության միասնություն:

Կլասիցիզմի արվեստն իր ծաղկման հասավ միահեծանության դասական երկրում՝ Ֆրանսիայում: Այն արտացոլվեց հատկապես ճարտարապետության, թատրոնի և գրականության մեջ:

Ճարտարապետության մեջ ստեղծվեց «Ֆրանսիական ոճը», որին բնորոշ է տարածության մեջ կառույցի հորիզոնական ձգվածության գերակշռումն ուղղահայացի նկատմամբ: Այդպիսի շենքերն ուղղանկյուն են, ունեն նույնպիսի բարձր, վեհաշուք պատուհաններ և սյուներ: Պատերը հարթ են, ամբողջական, հստակ տրոհված համաչափ և ներդաշնակ մասերի: Դրանով իսկ անցում կատարվեց դեպի «կանոնավոր քաղաքաշինություն», որի հիմքը կազմում են փակ ուղղանկյուն հրապարակը, նույնպիսի տները և համաչափ անջատ փողոցները: Պալատական կառույցներին բնորոշ էին բազմազան ճարտարապետական համալիրները: Դրա վառ ապացույցն է Լուի XIV–ի Վերսալի շքեղ արքայական ապարանքը, որին տիրում է կլասիցիզմի ոգին, բարոկկոյի զարդարանքը: Եվ այդ բոլորին ներդաշնակում է մանրակրկիտ կանոնակարգված զբոսայգին՝ իր բազմաթիվ արձաններով, շատրվաններով, ծաղկամաններով ու ծառուղիներով:

Ֆրանսիական դասական գրականությանը մեծ փառք բերեցին երեք տաղանդավոր թատերագիրների՝ **Պ. Կոռնելի**, **Ճ. Ռասինի** ողբերգությունները և **Ճ. Մոլիերի** կատակերգությունները:

Պ. Կոռնելի ստեղծագործությանը բնորոշ է իր հասարակական պարտքը կատարող հերոսի փառաբանումը: Նրանց համար պետական շահը վեր է անձնականից («Սիդ»): Նրա ստեղծագործություններից է նաև «Պոդիկտոսը», որի հերոսը՝ III դարում ապրած համանուն հայ իշխանը, նահատակվում է հանուն քրիստոնեության:

Ճ. Ռասինի հերոսները շատ ավելի տառապում են բարոյական պարտքի և անձնական զգացումների միջև:

Ճ. Մոլիերը համարվում է ֆրանսիական ազգային կատակերգության հիմնադիրը: Նա ստեղծեց մի թատրոն, որը ֆրանսիացիների համար դարձավ բարոյականության ուսուցման մեծ դպրոց: Այդ թատրոնում մարդկանց զվարճանելու միջոցով ծաղրի էին ենթարկվում արատները՝ ստախոսությունը, ժլատությունը, տգիտությունը, նենգությունը և այլն: Այդպիսի հարցեր են արծարծում նաև հեղինակի «ժլատը», «Տարտյուֆ», «Դոն Ժուան» և մյուս ստեղծագործությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XVII դարում գեղարվեստական ինչ նոր ուղղություններ առաջացան: Ինչ գիտեք բարոկկոյի մասին: Ո՞ր երկրներում այն ծաղկում ապրեց, մշակույթի ո՞ր բնագավառներում դրսևորվեց: Ովքե՞ր էին բարոկկոյի նշանավոր ներկայացուցիչները: Թվարկե՞ք տարբեր բնագավառներում այդ ուղղության մի քանի ստեղծագործություններ և պատմե՞ք որևէ ստեղծագործության մասին:
2. Մշակույթի աշխարհիկացումն ինչպե՞ս արտահայտվեց երաժշտության բնագավառում: Այդ բնագավառում ինչ նոր ժանր առաջացավ: Որտե՞ղ է ստեղծվել առաջին օպերան: Ո՞րն է մեզ հասած առաջին օպերան, երբ է այն ստեղծվել: Ո՞ր քաղաքները

դարձան օպերայի կենտրոններ: Ո՞վ է իտալական համազգային սերիա-օպերայի հիմնադիրը:

3. Ներկայացրե՞ք կլասիցիզմը: Ե՞րբ և որտե՞ղ կլասիցիզմի արվեստը հասավ ծաղկման: Մշակույթի ո՞ր բնագավառներում այն դրսևորվեց: Ներկայացրե՞ք ճարտարապետության «Ֆրանսիական ոճը»: Ինչպե՞ս արտահայտվեց կլասիցիզմը գրականության մեջ: ԹՎարկե՞ք ֆրանսիական դասական գրականության ականավոր ներկայացուցիչների և նրանց ստեղծագործությունները:

§ 4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

XVIII դարի գեղարվեստական ոճերը:

XVIII դարում լուսավորական շարժումը, հասարակության արդիականացման գաղափարները դարձան գեղարվեստական մշակույթի զարգացման հզոր ազդակները: Գեղարվեստական ճաշակը և գեղեցիկի ընկալումը բանականության դարում ի վերջո դառնում են գիտություն: Այդպես լուսավորականների շնորհիվ ծնունդ առավ *գեղագիտությունը*, որը մեծապես խթանեց գեղարվեստական մտքի զարգացումը: Գեղագիտությունը դառնում է մարդկային իմացության ինքնուրույն բնագավառ:

Լուսավորականները մեծ հույսեր էին կապում դաստիարակության հետ: Բարոյական և գեղագիտական դաստիարակության միջոցով նրանք փորձում էին մեղմել մարդու բնածին եասսիրությունը, նրան վերածել քաղաքացու: Հենց այդ տեսանկյունից էին նրանք իմաստավորում գեղագիտական գլխավոր հասկացությունները՝ գեղեցիկը, վեհը, ներդաշնակությունը, ճաշակը և այլն: Նույն ոգով նրանք վերլուծում էին արվեստի հասարակական դերը, բնույթը, ճշմարտության գեղարվեստական պատկերումը:

Գեղեցիկի իդեալի փնտրտուքի պայմաններում գեղարվեստական ոճերը դառնում են քազմագան: Դրանք մշտապես փոփոխվում էին և լրացնում միմյանց: Անցյալ դարձավ բարոկկոյի դարաշրջա-

նը: Արվեստի բոլոր ոլորտներում գերակշռում էր աշխարհիկ կյանքի թեման, ճարտարապետության մեջ՝ քաղաքացիական շինարարությունը, կերպարվեստում՝ բնանկարը, նատյուրմորտը, դիմանկարը, կենցաղը, երաժշտության մեջ՝ քնարերգությունն ու հերոսականությունը:

Մարդու՝ որպես բնական և բանական էակի մասին պատկերացումը XVIII դարում արվեստագետների շրջանում հետաքրքրություն առաջացրեց դեպի անհատի անձնական հոգևոր կյանքը: Դրա դրսևորումը դարձավ ռոկոկո ոճի արվեստի առաջացումը, որը տարածված էր իր մայրամուտն ապրող ազնվականության վերնախավում:

Ռոկոկոն (ֆրանս.՝ պաճուճագարդ, քմահաճ), որպես «արքայական ոճերից» մեկը, առաջացել է Ֆրանսիայում և արմատավորվել զարդարվեստում: Այն չուներ բարոկկոյի կոթողային և վեհաշուք առանձնահատկությունները: Քմահաճ, ոլորուն զարդերը շենքերի հատկապես ներքին հարդարանքում բնորոշ են ռոկոկոյին: Դա իսկական մարտահրավեր էր Վերածննդի բնական համաչափությունը մարմնավորող արվեստին: Այդպիսի արվեստագետները հրաժարվում էին գեղեցիկի վեհ իդեալից և առաջնային էին համարում զգայացունց ու թեթևամիտ զգացումները: Ռոկոկոյի գեղեցիկի ընկալումը ծնվել է կենսասիրության և հոռետե-

սության, ուրախության և թախծի, նորին ապավինման և անկման կանխագգացման համադրումից: Ռոկոկոյի նշանաբանը դարձավ մարդու կյանքի «երջանիկ ակնթարթը»:

XVIII դարի կեսից եվրոպական արվեստում առաջատար հոսանք է դառնում լուսավորական կլասիցիզմը: Անտիկ մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը կրկին մեծացավ: Դրան նպաստեցին հնագիտական պեղումների նյութերը, ինչպես նաև մշակույթի գերմանացի տեսաբան **Յ. Վինկելմանի** «Հնագույն արվեստի պատմություն» գիրքը (1764 թ.): Կատարյալ մարդու և գեղեցիկի իդեալն այս ուղղության հետևորդները փնտրում էին Հին Հունաստանում: Անտիկ կերպարները լիովին համընկնում էին լուսավորական քաղաքացիական իդեալներին: Գեղեցիկը համարվում էր մարդուց անկախ, հավերժ կատարելություն: Եվ դա նպաստում էր քանականության վրա հիմնված հասարակական գիտակցության ձևավորմանը:

Կլասիցիզմին փոխկապակցված՝ գոյակցում էր նաև լուսավորական ռեալիզմը: Նրա հետևորդները ձգտում էին արվեստում գործնական կյանքի ճշմարիտ մարմնավորմանը: Դրանով իսկ նրանք ժխտում էին կլասիցիստների կյանքից կտրված արվեստի կանոնակարգումը: Ամբողջական ճշմարտության պատկերման համար այդպիսի արվեստագետները դիմում էին պատկերավորման գանազան հնարների, որով ստեղծագործությունը դառնում էր բացառիկ զգացմունքային:

XVIII դ. երկրորդ կեսին առաջանում է մի նոր գեղագիտական ուղղություն՝ **սենտիմենտալիզմը** (անգլ. և ֆր.՝ զգայուն): Նրանք ևս կողմ էին լուսավորականների երազած քաղաքացու կերպարին: Դրան

հասնելու ուղին համարում էին ոչ թե հասարակության քանական վերափոխումը, այլ մարդու բնական զգացմունքների ազատագրումը: Սովորական մարդու ներաշխարհը կազմող զգացմունքների և հոգեբանության գեղագիտական մարմնավորումը սենտիմենտալիստ գրողների երկերի գլխավոր առանձնահատկությունն է: Դրանով նրանք առաջ են քաշել մարդու կյանքի և երջանկության հիմնախնդիրը, նպաստել նրա սոցիալական ազատագրմանը:

Լուսավորության դարաշրջանի գեղանկարչությունը և երաժշտությունը: XVIII դարը նշանավորվեց կերպարվեստի և երաժշտության բազմազան նոր նվաճումներով: Անգլիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Չեխիայում, գերմանական և իտալական պետություններում, իսկ դարավերջին նաև Իսպանիայում և ԱՄՆ-ում մեծ վերելք ապրեցին գեղարվեստական մշակույթի ազգային դպրոցները: Գեղարվեստական մշակույթի առաջատար դերը պատկանում էր Ֆրանսիային, որը նաև լուսավորական շարժման կենտրոնն էր:

Ֆրանսիայում ռոկոկո գեղանկարչության հիմնադիր է համարվում **Ա. Վատտոն** (1684–1721): Նրա կտավներում («Հասարակությունը զբոսայգում», «Սիրո տոն») հերոսները նուրբ քնարականությամբ օժտված, մշտապես երազող, երբեմն թախծող և շրջապատից ձանձրացող անհատներ են: Այլ է **Ջ. Շարդենի** արվեստը: Նա նկարել է բարեհոգի տնտեսուհիների, ընտանիքի բազմահոգս մայրերի, հասարակ իրերից բաղկացած նառնուրմորտներ և այլն: Դրանով նա մարտահրավեր է նետել ազնվականության ճաշակին և բարքերին:

Մեծ հեղափոխության դարաշրջանի նշանավոր գեղանկարիչ էր **Ճ. Դավիդը:**



Ժան Շարդեն.
«Ինքնանկար», 1771 թ.,
«Լվացարարուհին», 1735 թ.



Նրա արվեստին բնորոշ է հերոսականության ոգին: Հեղափոխական կլասիցիզմի դիրքերից ստեղծել է արվեստի իսկական գլուխգործոցներ՝ «Երդում խաղաղահիճում», «Մարատի մահը» և այլն:

Անգլիայում համանվրոպական նշանակության գեղանկարիչներ հայտնվեցին միայն XVIII դարում: Նրանցից է **Ու. Հոգարտը**, որի արվեստին բնորոշ է լուսավորական ռեալիզմը: Իր նկարներում և փորագրություններում նա ծաղրել է անգլիական հասարակության բարքերը: Նրա փորագրություններից առանձնանում է «Ընտրություններ» նկարաշարը: Այստեղ պատկերված են անգլիական խորհրդարանի ընտրությունների թերությունները: Դրանցից մեկում ցույց է տրված, թե ինչպես նախընտրական խնջույքը, որը կազմակերպվել է ընտրողներ ներգրավելու համար, վերածվել է ընդհանուր հարբեցողության:

XVIII դարն առանձնանում է նաև երաժշտական և թատերական արվեստի մեծ առաջընթացով: Դարաշրջանի խոշոր երաժշտահան և այդ գործում նորարար

եր գերմանացի **Յ. Բախը** (1685–1750): Նրա երաժշտությունը շատ կողմերով գերազանցեց իր ժամանակի մակարդակը, որի համար մնաց չընկալված: Թողել է հարուստ երաժշտական ժառանգություն՝ շուրջ հազար բազմաժանր ստեղծագործություն, որոնց արժևորումը սկսվեց միայն նրա մահից կես դար անց:

XVIII դ. երկրորդ կեսին ձևավորվեց երաժշտության Վիեննայի դասական դպրոցը, որի հիմնադիրն էր **Յ. Հայդնը**: Նրան հաճախ անվանում են «սիմֆոնիայի հայր»: Նրա համախոհն էր «XVIII դարի հրաշքը»՝ **Վ. Մոցարտը** (1756–1791), որն օպերային արվեստը հասցրեց կատարելության: Իր կարճատև կյանքում նա արարեց 20 օպերա, 50 սիմֆոնիա, որոնցում միայնուսկից է տարբեր դարաշրջանների երաժշտական արվեստը:

Լուսավորության դարի և Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի երաժշտությունը եզրափակում է **Լ. Բեթհովենի** (1770–1827) հզոր արվեստը: Նրա երաժշտությունը համակված է անպարտ հերոսականությամբ, պայքարով,



Անտուան Վատտո

վեհ նպատակներ իրագործելու աներեր գաղափարով: Հենց այդպիսին է նրա արվեստի գլուխգործոցը՝ «Իններորդ սիմֆոնիան»:

Լուսավորության դարաշրջանի գեղարվեստական գրականությունը: XVIII դարի գեղարվեստական գրականությունը խնդիր ուներ լուսավորական գաղափարներն արմատավորելու արդիականացող հասարակության մեջ, ստեղծելու նոր ժամանակների մարդու կերպարը: Գրական արվեստում հատկապես մեծ տարածում գտավ *կլասիցիզմի* ոճը: Այդ բովում ձևավորվեց մեծ լուսավորական **Վոլտերի** գրական արվեստը: Նա առաջարկում էր հերոսներին օժտել վեհ գաղափարներով, որը կարող է օգտակար լինել հասարակության բարեփոխմանը: Այդ նպատակով նա հաճախ էր դիմում պատմական թեմաներին: Վոլտերն իր ստեղծագործություններում փառաբանել է ազատությունը, քաղաքացիական արիությունը, դատապարտել ամեն տեսակի բռնապետություն և կրոնական մոլեռանդություն: Այդ ոգով են գրված նրա «Բրուտոս», «Կեսարի մահը», «Մոլեռանդություն կամ Մահմեդ մարգարեն», «Օռլեանի կոյսը» և մյուս երկերը:



Վոլֆգանգ Մոցարտ

Անգլիայում լուսավորական ռեալիզմի մի ամբողջ դարաշրջան է ընդգրկում **Դ. Դեֆոյի** (1660–1731) գրական արվեստը: Նրա «Ռոբինզոն Կրուզո» վեպի գլխավոր հերոսը, որը հայտնվում է անմարդաբնակ կղզում, մարմնավորում է նոր ժամանակի աշխատասեր, հնարամիտ, համառ, կամային հատկանիշներով օժտված գործարարին:

XVIII դ. 70–80–ական թթ. Գերմանիայում գրական արվեստը մեծապես խթանեց «Գրոհ և փոթորիկ» քանաստեղծների խումբը: Այդ խմբին էր պատկանում **Ֆ. Շիլլերը**, որը գերմանական գրականությանը նոր շունչ և եռանդ տվեց: Նրա «Ավագակներ», «Սեր և խարդավանք», «Դոն Կառլոս», «Վիլիելմ Թեյ» դրամաները մեծ բողոք էին ընդդեմ բռնակալության և անարդար իրականության: Կյանքի վերջին շրջանում Ֆ. Շիլլերն իր աշխատություններում փորձում էր հիմնավորել, որ գեղագիտական դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել մարդասեր, արդար և երջանիկ հասարակարգ:

«Գրոհ և փոթորիկ» գրական շարժման մասնակից էր նաև **Յ. Գյոթեն**: Նա համաշ-



Լյուդիկ վան Բեթհովեն



Ֆրիդրիխ Շիլլեր



Յոհան Վոլֆգանգ Գոթե

խարհային գրականության մեծություններից է: Նուրբ հոգու տեր բանաստեղծը կարողացել է ակեկոծել գերմանական ժողովրդի ոգին, նրան մղել սխրանքների: Գրողի գլուխգործոցը «Ֆաուստ» ողբերգությունն է, որը ստեղծվել է 60 տարվա

համառ աշխատանքի շնորհիվ: Գլխավոր հերոս Ֆաուստը գեղեցիկի և կատարյալի որոնման ճանապարհին չի երկնչում ոչ մի դժվարությունից: Ի վերջո նա գտնում է ճշմարիտ ուղին՝ սեփական աշխատանքով ստեղծել գեղեցիկ հայրենիք:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշեք, թե ինչ է Լուսավորության դարը: Ինչպե՞ս արտահայտվեց այն մշակույթի բնագավառում: Ներկայացրե՞ք ռոկոկո ոճի արվեստը:
2. Ի՞նչ է լուսավորական կլասիցիզմը: Ներկայացրե՞ք լուսավորական ռեալիզմը: Գեղագիտական ի՞նչ նոր ուղղություն առաջացավ XVIII դարում:
3. Լուսավորության դարում ո՞ր երկրներում վերելք ապրեց ազգային գեղարվեստական մշակույթը: Ո՞ւմ էր պատկանում առաջատար դերը: Ներկայացրե՞ք ռոկոկո գեղանկարչության ոճը, դրա խոշոր ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունները: XVIII դարի երաժշտական ու թատերական արվեստի ինչ խոշոր գործիչներ գիտեք:
4. Գրականության մեջ XVIII դարում ո՞ր ոճը տարածում գտավ: Ո՞վ էր դրա խոշոր ներկայացուցիչը, ինչի՞ մասին էին նրա ստեղծագործությունները, թվարկե՞ք դրանցից մի քանիսը:
5. Գծապատկերով ներկայացրե՞ք XVIII դ. նոր ուղղությունների տարբեր երկրների գրական գործիչների և նրանց ստեղծագործությունները:

§ 5. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՌՈՄԱՆՏԻՉՍԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռոմանտիզմի գեղագիտությունը: Մեծ հեղափոխությունը Եվրոպայում շրջադարձային եղավ նաև գեղարվեստական մշակույթի բնագավառում, որն ամենից

առաջ իր արտացոլումը գտավ կլասիցիզմի արվեստում: Գրականության և արվեստի մեջ նոր ոգեշնչում ստացավ անտիկ աշխարհը, ուր գովերգվում էին

հերոսականությունն ու անձնագոհությունը: Հերոսությունը մեկնաբանվում էր որպես քաղաքացիական պարտք, աներեր նվիրվածություն երկրին և ազգին: Միևնույն ժամանակ Ֆրանսիական մեծ հեղափոխությունն առաջացրեց հին և նոր աշխարհների գաղափարական սուր բախում, որի արդյունքում առաջացավ ռոմանտիզմը:

Ռոմանտիզմն առաջացավ XVIII դ. վերջին և շարունակեց վերելք ապրել մինչև XIX դ. կեսը: Այն ձևավորվեց նախ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, քիչ ուշ՝ եվրոպական մյուս երկրներում և ԱՄՆ-ում: Ռոմանտիզմն ընդգրկեց հոգևոր մշակույթի բոլոր ոլորտները, միաժամանակ տարբեր երկրներում ստացավ ազգային առանձնահատուկ երանգավորում: Չնայած տարաբնույթ դրսևորումներին և ուղղություններին՝ այն ուներ մի ընդհանուր աշխարհընկալում: Ո՞րն էր ռոմանտիզմի աշխարհայացքի և գեղագիտության էությունը:

Մեծ հեղափոխությունը կոչված էր իրականացնելու լուսավորական գաղափարները, ստեղծելու քանական հասարակարգ՝ հիմնված հավասարության, եղբայրության և ազատության վրա: Դատելի չունեցավ, ուստի վրա հասավ համընդհանուր հիասթափությունը: Շատերի համար լուսավորականության գաղափարների իրագործումը պատրանք էր թվում, հեղափոխություններն՝ անպտուղ և վնասակար: Ուստի սկսվեցին կատարյալին և գեղեցիկին հասնելու նոր որոնումներ: Ամենից առաջ փոխվեց գեղեցիկի իդեալը: Եթե լուսավորականները գեղեցիկ էին համարում քանականությունը, ապա ռոմանտիկները՝ զգացմունքը: Արվեստում նրանք գնահատում էին առաջին հերթին անկրկնելին, անհատակա-

նությունը, որտեղից էլ նրանց բացառիկ հետաքրքրությունը ազգային մշակույթի յուրօրինակության նկատմամբ: Այս ոգով ստեղծվեցին բազմաբնույթ ստեղծագործություններ և պատմախմաստասիրական երկեր:

Ռոմանտիկ արվեստին բնորոշ են նողկանքը և հակակրանքը մարդկային տառապանքների, բռնությունների, պատերազմների, շահագործման ու անարդարության նկատմամբ: Այդ բոլորին նրանք հակադրում էին մտացածին, գեղեցիկ երանգներով յի զգացմունքային աշխարհը, որտեղ տիրում են սերը, բարությունը և շիտակությունը: Ռոմանտիկ ստեղծագործությունը կյանքը վերակերտում էր՝ սրությամբ հակադրելով իրականը և ցանկալին:

Ռոմանտիկ արվեստագետը կյանքը պատկերում էր ոչ թե այնպես, ինչպես կա իրականում, այլ այնպես, ինչպես ցանկալի է: Ըստ ռոմանտիզմի՝ արվեստի նպատակը իրական կյանքի պատկերումը չէ, այլ իդեալական ճշմարտության փնտրտուքը: Նրանցից ոմանք գեղեցիկը փնտրում էին անցյալում, ոմանք, տագնապած արագ փոխվող աշխարհից, կոչ էին անում հասնելու դրան պայքարով: Ռոմանտիկները կերտում էին հերոսներ, որոնք միշտ գործում էին արտասովոր կամ խորհրդավոր իրավիճակներում: Հերոսը կարող է լինել միջնադարյան ասպետ, միայնակ խոովարար կամ այլ անձ, բայց միշտ ազնիվ, արդարամիտ, քաջ և անձնագոհ: Դասական ստեղծագործության հերոսը գործում է բանականությամբ, ռոմանտիկը՝ բարի զգացումներով և սրտի թելադրանքով: Գեղեցիկի այդպիսի ընկալման շնորհիվ ռոմանտիկ հերոսը միշտ հանդես է գալիս հաղթողի դերում:

Ռոմանտիզմի գեղանկարչությունը և երաժշտությունը: Ռոմանտիզմի գեղանկարչությունը և երաժշտությունը եվրոպական երկրներում աչքի էր ընկնում ազգային բազմազանությամբ: Ֆրանսիայում ռոմանտիկական գեղանկարչության ազգային դարոցի հիմնադիրներն էին **Թ. Ժերիկոն** և **Է. Դելակրուան:**

Առանձնակի հուզականությամբ է տոգորված Է. Դելակրուայի արվեստը: Նրան մեծապես հուզել է ազատության թեման: Այդ են վկայում «Քիոսի կոտորածը», «Հունաստանը Միսսոլոնգիի փլատակների վրա» կտավները, որոնք նվիրված են օսմանյան լծից հույն ժողովրդի ազատագրմանը: Իսկ «Ազատությունը բարիկադների վրա» գեղանկարը մինչև այժմ էլ համարվում է ազատության և անկախության խորհրդանիշ:

Ռոմանտիզմի գերմանական գեղանկարչությունն առանձնանում է ոչ այնքան կատարողական նորարարությամբ, որքան մարդկային հոգեբանության նրբազգացությամբ և իմաստասիրական խոհականությամբ: Եվ դա պատահական չէ: Գերմանիան ոչ միայն մեծ իմաստասերների հայրենիքն է, այլև ռոմանտիզմի գեղագիտության: Մինչդեռ ռոմանտիզմի անգլիական դարոցին բնորոշ է կլասիցիզմի և ռեալիզմի կատարողական արվեստի պահպանումը, ինչպես նաև նկարների զգայական ընկալման նոր ձևերի փնտրտուքը: **Ջ. Քոնստեբլը** դարձավ անգլիական ռոմանտիզմի բնանկարի գեղանկարչության հիմնադիրը: Նրա արվեստի մեծ շարունակողը **Ու. Թորներն** էր: Նրա ռոմանտիկ շնչով պարուրված նկարները պատկերում էին վայրի ափեր, ժայռեր, ծովամերձ ավերակներ, փոթորկված ծով, որոնք արտահայտում էին խորհրդավորություն:



Էժեն Դելակրուա. «Քիոսի կոտորածը», 1824 թ.

Ռոմանտիզմի նշանավոր երաժիշտ-երգահաններ էին **Ֆ. Շոպենը** (Ավստրիա), **Ռ. Վագները** (Գերմանիա), **Ն. Պագանինին**, **Ջ. Ռոսսինին** (Իտալիա), **Հ. Բեռլիոզը** (Ֆրանսիա), **Ֆ. Լիստը** (Հունգարիա), **Ֆ. Շուպենը** (Լեհաստան) և այլք:

XIX դարի մեծագույն երգահաններից մեկը **Ռ. Վագներն** է (1813–1883), որը միաժամանակ արվեստի տեսարան էր, գրող և թատերական գործիչ: Նրա «Թոչոլ հուլանդացի», «Տրիստան և Իզոլդա» օպերաները և մյուս ստեղծագործությունները լարված, հուզիչ և կլանող երաժշտական դրամաներ են: Նա հասկացավ, որ ժողովրդական բանահյուսության նյութն օգնում է ստեղծելու ուժեղ կերպարներ և վառ զգացողություններ: Հերոսականության, սիրո, նվիրվածության և ինքնագոհության գաղափարները վագներյան երաժշտության շունչն ու ոգին են:

Երաժշտությունն իտալացիների երկրորդ մայրենի լեզուն է: Մեծ ջութակահար և երգահան **Ն. Պագանինին** (1782–1840) երաժշտությունն իտալական ազգի յուրահատուկ ինքնահաստատումն էր: Նրա

համերգներն Իտալիայի տարբեր մասերում նպաստում էին ազգային ինքնագիտակցության խորացմանը և երկրի միավորման համար պայքարի վերելքին: Նույնպիսի դեր ուներ նաև **Ջ. Ռուսինիի** (1792–1868) օպերային երաժշտությունը: Նրա «Սևիլյան սափրիչ» օպերան այսօր էլ իր քնարականությամբ գերում է երաժշտասերներին:

Գեղարվեստական գրականությունը: Ռոմանտիզմի գրականությունը, որը մեծապես խթանեց մշակույթի զարգացումը, առանձնանում էր իր բացառիկ գեղարվեստական ներգործությամբ և ազգային բազմազանությամբ:

Ֆրանսիական ռոմանտիկական գրականության ծաղկումը կապված էր **Ա. Լամարտինի**, **Ա. Դյումայի**, **Վ. Տյուգոյի**, **Ճ. Սանդի** և այլոց հետ:

Աշխարհում մեծ փառք էին վայելում Ա. Դյումայի երկերը (1802–1885): Նա ստեղծեց պատմառոմանտիկ հատուկ ոճ, որտեղ ինքնագոհողության պատրաստ հերոսը որոշակի իրավիճակում միշտ հաղթում է: «Ակնթարթի գեղագիտության» ոճով են գրված նրա պատմավեպերը և թատերագրությունները («Տենրիխ III–ը և իր արքունիքը», «Երեք հրացանակիրներ», «Կոմս Մոնտե–Քրիստո», «Թագուհի Մարգո» և այլն):

Պատմությանը դիմելը, որն այնքան բնորոշ է ռոմանտիկներին, մեծապես վերաբերում է Վ. Տյուգոյի (1802–1870) գրական արվեստին: Նրա գրական ժառանգությունը հասնում է 79 հատորի: Լավագույն գրական ժանրը նա համարում է պատմական դրաման, որը հնարավորություն է տալիս բացահայտելու դարաշրջանի մարդուն և նրա միջավայրը: Վ. Տյուգոյի լավագույն երկերից են «Փարիզի

Աստվածամոր տաճարը», «Թշվառները», «Մարդը, որ ծիծաղում է» վեպերը:

XIX դ. սկզբին ինչպես Անգլիայում, այնպես էլ ամբողջ աշխարհում մեծ ճանաչում ուներ անգլիացի գրող **Ջ. Բայրոնը** (1788–1824): Հայրենիքի նկատմամբ ռոմանտիկ սիրո արտացոլումն է նրա թեալոր խոսքը. «*Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող*»: Նրան մեծ հռչակ բերեց «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմը:

Ջ. Բայրոնը նաև հայերի լավագույն բարեկամներից էր: Վենետիկի Մխիթարյան միաբանությունում սովորել է հայերեն, հետաքրքրվել հայ մշակույթով, փորձել կատարել թարգմանություններ:

Շոտլանդական ազնվական ընտանիքից սերված անգլիացի մեծ գրող **Վ. Սքոթի** (1771–1832) ստեղծագործությանը բնորոշ է ռոմանտիզմի կապակցումը ռեալիզմին: Համաշխարհային գրականության մեջ նա մտել է որպես պատմավեպի հիմնադիր: Տասնյակ հատորների հասնող նրա պատմավեպերը, որոնք ընդգրկում են Շոտլանդիայի և Անգլիայի բազմադարյան պատմության հիմնական պահերը, մեծ ազդեցություն են ունեցել բազմաթիվ երկրների գրական արվեստի վրա:

Ռոմանտիզմը որոշակի արտացոլում է գտել նաև ռուս մեծ բանաստեղծներ **Ա. Պուշկինի** (1799–1837) և **Մ. Լերմոնտովի** (1814–1841) գրական արվեստում: Ա. Պուշկինի այդպիսի ստեղծագործություններից են «Ռուսլան և Լյուդմիլա», «Գնչուները», «Բախչիսարայի շատրվանը», «Կովկասի գերին» և այլն, չնայած նրա արվեստին ավելի բնորոշ է ռեալիզմը: Ռոմանտիզմն ավելի բնութագրական է Մ. Լերմոնտովի քնարերգությանը:

Ռիսորջիմենտոյի դարաշրջանի իտալական ռոմանտիզմի նշանավոր գրող



Վառտեր Սքոթ

է **Ա. Մանձոնիւ**: Նրա «Նշանվածները» պատմավեպը, որը պատկերում է Իտալիայի XVII դարի կյանքը, թարգմանվել է շատ լեզուներով, այդ թվում՝ հայերեն:

ԱՄՆ-ում այդ շրջանի նշանավոր գրող էր **Ֆ. Կուպերը**, որի անունն իրավացի-



Միխայիլ Լերմոնտով

որեն դրվում է Վ. Սքոթի կողքին: Նրա «Լրտեսը», «Վերջին մոհիկանը» և ռոմանտիզմի ոգով գրված մյուս պատմավեպերը մինչև հիմա էլ ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և որտեղ է ձևավորվել ռոմանտիզմը: Ո՞րն էր դրա աշխարհայացքային և գեղագիտական էությունը: Ինչն է բնորոշ ռոմանտիզմի արվեստին:
2. Ինչո՞վ էին աչքի ընկնում ռոմանտիզմի գեղանկարչությունը և երաժշտությունը: Ովքե՞ր են Ֆրանսիայում ռոմանտիզմի գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիրները:
3. Ո՞ր երկրում է առաջացել ռոմանտիզմի գրականությունը: Ո՞րն էր դրա էությունը: Ինչո՞վ նշանավորվեցին Ա. Դյուման, Վ. Հյուգոն, Ջ. Բայրոնը և Վ. Սքոթը՝ հետևելով գրական այս ուղղությանը: Ներկայացրե՞ք Ռուսաստանի, Իտալիայի և ԱՄՆ-ի այս ուղղության նշանավոր գրողների: Ինչ գիտեք նրանց ստեղծագործությունների մասին:

§ 6. ՌԵԱԼԻԶՄԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐՈՒՄ: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Քննադատական ռեալիզմ: XIX դարի գեղարվեստական մշակույթի մյուս խոշոր ուղղությունը ռեալիզմն էր: **Ռեալիզմը** (ֆրանս.՝ իրական) կյանքի ճշմարտացի պատկերման, գնահատման և մեկնարանման ուղղությունն է: Այն սկիզբ է առնում

Վերածննդի մշակույթից և հաստատվում Լուսավորականության դարում (լուսավորական ռեալիզմ): Արդյունաբերական հեղաշրջման դարաշրջանում ռեալիստական գրականությունը և արվեստը հասան իրենց ծաղկման գագաթնակետին: Այն

սկիզբ առավ XIX դ. 20–ական թվականներին: Առաջին անգամ ռեալիզմը, որպես ռոմանտիզմի այլընտրանք, օգտագործվել է Ֆրանսիայում XIX դարի կեսերին:

Ի տարբերություն ռոմանտիզմի՝ ռեալիզմի արվեստն արտացոլում էր հասարակական գիտակցության ավելի խորքային գործընթացներ: Ռեալիստական արվեստը մերժում էր ռոմանտիկների ընկալումը ժամանակից դուրս բարու և չարի բախման մասին: Եթե ռոմանտիկները մերժում էին արդյունաբերական հասարակությունը, ապա ռեալիստները փորձում էին այն հասկանալ, խորամուխ լինել պատմական ճշմարտության մեջ և գեղարվեստորեն վերարտադրել այն: Արվեստի դերը նրանք համարում էին հասարակական արատների վերհանումը և քննադատությունը, որով փորձում էին ազատվել դրանցից: Ահա թե ինչու ռեալիզմի այդ նոր պոռթկումը հաճախ անվանում են **քննադատական ռեալիզմ**:

Ռեալիստական արվեստը կերտեց նոր տեսակի հերոս, որը չի երազում և տրվում զգացմունքներին, այլ կյանքի դժվարին պայմաններում գտնում է իր «ճշմարտությունը» և պայքարում դրա համար: Այդպիսի հերոսին բնորոշ չեն ներքին ապրումները և հոգեկան իրավիճակը: Բարոյական ընտրությունը հերոսը փնտրում է ոչ թե իր մեջ, այլ իրեն շրջապատող սոցիալական միջավայրում: Նա փորձում է ըմբռնել իր դերն այդ միջավայրում և ձգտում է պայքարով նվաճելու արժանի տեղ: Դրանով է նա դառնում իրական և տարբերվում ռոմանտիկ հերոսից:

Քննադատական ռեալիզմի գեղագիտության հիմքը կազմում է հավատարմությունն իրական կյանքին: Գեղեցիկի գլխավոր բովանդակությունը ազատության

համար պայքարող և ինքնահաստատման ձգտող հերոսի անհատականությունն է:

Գրականությունը և արվեստը: Քննադատական ռեալիզմն ամենից շատ իր արտացոլումը գտավ գրականության և գեղանկարչության մեջ: Ֆրանսիայում այդ ուղղության սկիզբը XIX դ. առաջին կեսին դրեց նշանավոր գրող **Ֆ. Մանտյուսը**: «Խիզախ բանականությունը» գրողը համարում էր ժամանակի գլխավոր առաքինությունը, առանց որի չկա գեղեցկություն: Նրա վեպերի («Կարմիրը և սևը», «Պարմի մենաստանը») հերոսները եռանդուն, կրքոտ և հոգով ուժեղ մարդիկ էին, պատրաստ պայքարելու ընդդեմ անարդարության:

Ֆրանսիական ռեալիզմը փառավորեց **Օ. Բալզակը** (1799–1850): Նրա ստեղծագործության գլխավոր արդյունքը՝ «Մարդկային կատակերգությունը», ընդգրկում է 92 վեպ, վիպակ, պատմվածք և 5 պիես: Մեծ գրողին հաջողվել է պատկերել ֆրանսիական հասարակության պատմական զարգացումը, ժամանակների կապը, սոցիալական անկատար միջավայրը, որոնք մարմնավորված են 2 հազար հերոսների կերպարներում:

Ռեալիստական ոճը բնորոշ է նաև ֆրանսիացի գրող **Պ. Մերիմեի** («Կարմեն», «Կոլումբա» և այլն) գրական արվեստին:

Անգլիական ռեալիստական վեպի առանձնահատկությունը հասարակական հակասությունների ընդգծված գեղարվեստական մարմնավորումն էր: Այդպիսին են նշանավոր գրող **Չ. Դիքենսի** (1812–1870) ստեղծագործությունները: Վաղ գրական գործերում նա ծաղրել է անգլիական հասարակության արատները: Հատկապես արժեքավոր է նրա «Օլիվեր Թվիստի արկածները» վեպը, որտեղ, կապակցելով ռեալիզմը և երգիծանքը,

պատկերել է աշխատանքային տներում առկա դաժանությունները, ինչպես նաև հանցագործ աշխարհը: Այլ վեպերում նա բացառիկ վարպետությամբ ընթերցողին ներկայացրել է շահախնդրության և կեղծ արժեքների ծանր հետևանքները: «Ծանր ժամանակներ» վեպը նվիրված է չարտիստական շարժմանը: «Դիքենսյան մոտեցումները» XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին մեծ տարածում գտան անգլիական գրականության մեջ:

Ռեալիզմի գրականության յուրահատուկ և հզոր ուղղություն ձևավորվեց Ռուսաստանում: Այդպիսի գրական արվեստի մեծ վարպետներ էին **Ֆ. Դոստոևսկին**, **Լ. Տոլստոյը** և **Ա. Չեխովը**:

Ֆ. Դոստոևսկին (1821–1881) ստեղծել է ռուսական անկատար հասարակության մեջ տառապող խոր հոգեբանական կերպարներ: Նրա վեպերը («Ռձիր և պատիժ», «Ապուշը» և այլն) մեծ հռչակ ունեին աշխարհում:

Լ. Տոլստոյի (1828–1910) «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա» և այլ վեպերում գեղարվեստական բացառիկ ուժով պատկերված է ռուսական հասարակության բարդ և հակասական կենսակերպը:

Ա. Չեխովն (1860–1904) իր պատմվածքներում ծաղրել է ռուսական հասարակության արատները, ստեղծել դրանցից տառապող ուժեղ կերպարներ:

Առաջին ռեալիստական վեպերից մեկն ԱՄՆ–ի գրականության մեջ կին գրող **Տ. Բիչեր-Սթոուի** «Բեռի Թոմի խրճիթը» վեպն է (1852): Վեպը, որն աշխարհում մեծ հռչակ բերեց հեղինակին, նվիրված է ստրուկների դաժան կյանքին և ստրկության դեմ պայքարին:

Ռեալիզմի արվեստը հզոր ընթացք ունեցավ կերպարվեստում, հատկապես՝

բնանկարում: Ֆրանսիայում XIX դ. 30–ական թվականներին ձևավորվեց **Բարբիզոնի դպրոցը** (Փարիզի մոտ գտնվող գյուղի անունից, որտեղ սիրում էին ստեղծագործել նկարիչները): Բնության իրական ընկալման համար նրանք առաջինը պատկերեցին լույսի և օդի համադրման և արտացոլման նոր ձևեր: Բնությունը դրանով իսկ ոգեշնչվում էր մարդկային վեհ զգացումներով, բայց չէր կորցնում բնական միջավայրը: Այդ դպրոցի ստեղծողը եղավ **Թ. Ռուսոն**, որի «Բնանկար» երփնագիրը պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում:

XIX դարի ռեալիստական գեղանկարչության սկզբնավորման գործում մեծ է իսպանացի **Ֆ. Գոյայի** (1746–1828) ներդրումը: Նրա կտավներն իր ժամանակի Իսպանիայի պատմության իրական պատկերումն են: Դրանցից են «Կառլոս IV արքայի ընտանիքը», «Ապստամբների գնդակահարումը» և այլն:

Ռեալիզմի գեղագիտությունն իր արտացոլումը գտավ նաև երաժշտաթատերական արվեստում: Բազմաթիվ թատրոնների առաջացումը, նրանց ազատ գործունեությունը XIX դարի վերջին քառորդում հանգեցրեց կլասիցիստական ավանդույթների հաղթահարմանը: Երաժշտության մեջ արմատավորվեցին ժողովրդական մեղեդիները: Տարածվեց «թեթև ժանրը՝ օպերետը, այսինքն՝ փոքրիկ օպերաները: Օպերետի ստեղծողը ֆրանսիացի **ժ. Օֆենբախն** էր: Այն ամրապնդվեց երաժշտության վիեննական դպրոցում, որի ականավոր ներկայացուցիչը **Յ. Շտրաուսն** է:

Իտալիայում ռեալիստական օպերայի հիմնադիրն է **Ջ. Վերդին** (1813–1901): Նա ստեղծեց Իտալիայի ազատագրության օրհներգը և բազմաթիվ օպերաներ



Վինսենթ վան Գոգ.
«Ինքնանկար», 1889 թ.,
«Արևածաղիկներ», 1888 թ.



(«Բիգոլետտո», «Տրուբադուր», «Աիդա», «Օթելլո» և այլն), որոնք հիմա էլ մեծ փառք են վայելում աշխարհում:

Մշակույթի ճգնաժամը XIX դարի վերջին: Արդյունաբերական հասարակության հետագա զարգացման անորոշությունը ճգնաժամ առաջացրեց նաև մշակույթում: Այն սկսվեց ռեալիստական արվեստում ստեղծագործական ինքնարտահայտման նոր ձևեր գտնելու փորձերից: Դրանցից մեկն էր **նատուրալիզմը** (լատ. և ֆր.՝ բնական, բնություն), որում առաջին քայլը կատարեց ֆրանսիացի նկարիչ **Գ. Կուրբեն** XIX դարի կեսերին:

Ֆրանսիայից նատուրալիզմը տարածվեց Եվրոպայի մյուս երկրներում և Ամերիկայում: Հակադրվելով ռոմանտիզմին՝ նատուրալիստները համոզված էին, որ արվեստում ամենագլխավորը փաստն է, բնականը և բնությունը: Ըստ նրանց՝ արվեստը պետք է հիմնված լինի գիտական նվաճումների վրա: Նրանք իրենց խնդիրն էին համարում իրական կյանքի նույնա-

կան, լուսանկարչական ճշգրտության պատկերումը: Նատուրալիստներն արվեստում վերլուծում էին թեմաներ, որոնք նախկինում արգելված էին:

Նատուրալիզմին մոտ էր **իմպրեսիոնիզմը** (ֆրանս.՝ տպավորություն), որի հետևորդների համոզմամբ արվեստագետը պետք է ոչ թե պատճենահանի բնությունը, այլ գույների անսովոր համադրմամբ ցույց տա իր ակնթարթային տպավորության գեղեցկությունը: Այդպիսի գեղանկարիչներ էին ֆրանսիացիներ **Կ. Մոնեն, Է. Դեգան,** հոլանդացի **Վան Գոգը,** ֆրանսիացի քանդակագործ **Օ. Ռոդենը,** երաժիշտ **Կ. Դեբյուսին** և այլք:

Փաստերի և իրականության նկարագրական վերարտադրությունը չէր բավարարում շատ արվեստագետների: Նրանք գտնում էին, որ դա հեռացում է գեղեցիկից և արվեստագետի անհատականությունից: Ահա թե ինչու դարի 80-ական թվականներին առաջացավ գրականության և արվեստի մի նոր ուղղություն՝ **սիմվոլիզ-**

մը, որը շատ բանով նման էր ոռմանտիզմին: Սիմվոլիզմի գեղագիտության համաձայն՝ շրջապատող անարդար աշխարհից բացի, կա մի ավելի գեղեցիկ և կատարյալ իրականություն: Եվ այդ իրականությանը հասնելու միակ միջոցը սիմվոլի (խորհրդանիշի) հնարին դիմելն է՝ բառ, պատկեր, փոխաբերություն և այլն: Սիմվոլիզմի գրական հերոսը փախչում է դաժան կյանքից և տրվում անուրջներին: Սիմվոլիզմը կարողացավ նորովի վերհանել մարդկային հոգեբանության դրսևորումները և զգացմունքների աշխարհը: Բայց քանի որ դա ելք չէ, սիմվոլիզմի արվեստն ի վերջո ապագայի նկատմամբ տոգորվեց հոռետեսությամբ և XX դ. սկզբին սկսեց մարել:

XIX դարի գեղարվեստական մշակույթի յուրահատուկ ամփոփումը դարձավ **մոդեռն** ոճը: Նրա մեջ ներառված էին նատուրալիզմի, սիմվոլիզմի և մյուս գեղարվեստական ուղղությունների գծերը: Մոդեռն ոճն ամենից շատ դրսևորվեց ճարտարապետության մեջ: Այդպիսի ճարտարապետության բնորոշ կողմերից մեկը նոր շինանյութերի՝ մետաղի և ապակու օգտագործումն էր:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին մոդեռն ոճը, որպես տարբեր գեղարվեստական ուղղությունների համադրում, վերոնշյալ

պատճառներով հայտնվեց փակուղում: Արվեստը սկսեցին դիտել ոչ թե որպես մարդկային հանձարի դրսևորում, այլ մշակույթի անկում՝ **դեկադենտություն** (լատ. և ֆր.՝ անկում): Անկման գաղափարը և վատատեսությունը սկսեցին գերիշխել ամենուր: Դեկադենտները XIX դարը համարում էին բոլոր դարերից ամենավատը, իսկ միակ փրկությունը՝ փախուստը նյութականի համար մրցավազքից դեպի գեղեցիկը: Նրանք պահանջում էին «մաքուր արվեստ»՝ գեղեցկության փառաբանում հանուն գեղեցկության: Կասկածի տակ առնվեց հետագա զարգացման հեռանկարը: Շատերը համոզված էին, որ եկել է «Եվրոպայի մայրամուտը»:

XX դարի սկզբին դեկադենտությունը շարունակեց գոյատևել: Մյուս կողմից՝ ոչ միայն պահպանվեցին նախորդ դարի լավագույն ավանդույթները, այլև առաջացան լավատեսական նոր միտումներ: Վախը վաղվա օրվա նկատմամբ ստիպում էր շարունակել որոնումները հանուն մարդու ինքնահաստատման և կատարյալ աշխարհի: Առաջացան արվեստի նոր ոճեր և ուղղություններ, որոնց մի ընդհանուր անունով կոչում են **ապանգարդիզմ** կամ **մոդեռնիզմ**: Այն զանգվածային մշակույթի մի նոր գործընթացի սկիզբը դրեց:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և որտեղ է առաջին անգամ օգտագործվել «ոեալիզմ» հասկացությունը: Ո՞րն էր դրա էությունը: Ի՞նչ է քննադատական ոեալիզմը:
2. Աղյուսակով ներկայացրե՞ք ոեալիզմի գրականության և արվեստի նշանավոր ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործություններն՝ ըստ երկրների:
3. Ո՞ր երկրում է առաջացել նատուրալիզմը, և ո՞վ է առաջին ներկայացուցիչը: Ո՞րն էր դրա էությունը: Ի՞նչ էր բնորոշ իմպրեսիոնիզմին: ԹՎարկե՞ք նշանավոր իմպրեսիոնիստների անուններ: Ո՞ր ուղղությանն էր նման սիմվոլիզմը, ո՞րն էր նրա էությունը: Ո՞րն էր մոդեռն ոճի էությունը, և ո՞ր բնագավառում ամենից շատ այն դրսևորվեց: Ի՞նչ է դեկադենտ արվեստը: Ի՞նչ գիտեք նրա մասին:

ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 226 թ.** Սասանյանների հեղաշրջումը Պարթևստանում
284–305 թթ. Դիոկղետիանոսի գահակալումը
306–337 թթ. Կոստանդիանոս Մեծի գահակալությունը
313 թ. Միլանի հրովարտակի հրապարակումը
325 թ. Առաջին տիեզերական ժողովի գումարումը Նիկեայում
330 թ. Բյուզանդիոնի հռչակումը Հռոմեական կայսրության մայրաքաղաք
IV–VII դարեր Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանը
375 թ. Գոթերի ջախջախումը հունների կողմից
378 թ. Ադրիանուպոլսի ճակատամարտում գոթերի հաղթանակը
380–415 թթ. Գուպտաների պետության հզորացումը Չանդրագուպտա II-ի օրոք
381 թ. Քրիստոնեության հռչակումը Հռոմեական կայսրության պետական կրոն
395 թ. Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի
410 թ. Հռոմի գրավումն ու ավերումը վեստգոթերի կողմից
431 թ. Երրորդ տիեզերական ժողովի գումարումը Եփեսոսում
451 թ. Քաղկեդոնի եկեղեցաժողովի հրավիրումը
451 թ. «ժողովուրդների ճակատամարտը» Կատալանոյան դաշտում
476 թ. Արևմտյան Հռոմեական կայսրության կործանումը
486 թ. Սուաունի ճակատամարտը
500 թ. Ֆրանկների թագավորության առաջացումը
527–565 թթ. Հուստինիանոս I-ի գահակալումը
622 թ. Մուհամեդի փախուստը (հիջրա) Մեքքայից Յաթրիբ (Մեդինա)
636 թ. Բյուզանդացիների պարտությունը արաբներից Յարմուկի ճակատամարտում
717–741 թթ. Լևոն III կայսեր գահակալումը Բյուզանդիայում
726–843 թթ. Պատկերամարտական շարժումը Բյուզանդիայում
732 թ. Արաբների պարտությունը Պուատիեի ճակատամարտում
751 թ. Պիպին Կարճախասակի հռչակումը թագավոր
756 թ. Հռոմի պապի աշխարհիկ պետության ստեղծումը
768–814 թթ. Կարլոս Մեծի գահակալումը
800 թ. Կարլոս Մեծի թագադրումը որպես կայսր
843 թ. Վերդենի բաժանեքը
882 թ. Կիևի գրավումը Օլեգի կողմից՝ Կիևյան Ռուսիա պետության ստեղծումը
911 թ. Կարոլինգյան արքայատոհմի վերացումը Գերմանիայում
919–936 թթ. Հենրիխ I-ի գահակալումը
936–973 թթ. Օտտոն I-ի գահակալումը Գերմանիայում
955 թ. Հունգարների պարտությունը գերմանացիներից Լեխ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
962 թ. Օտտոն I-ի երկրորդ արշավանքը դեպի Իտալիա. Սրբազան հռոմեական կայսրության ստեղծումը
988 թ. Քրիստոնեության ընդունումը Հին Ռուսիայում
1054 թ. Քրիստոնեական եկեղեցու մեծ բաժանումը կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների
1075 թ. Իկոնիայի սուլթանության ստեղծումը
1096–1291 թթ. Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանը
1122 թ. Վորմսի համաձայնագրի (կոնկորդատ) ստորագրումը
1206 թ. Չինգիզ խանի հռչակումը համամոնղոլական տիրակալ
1215 թ. Ազատությունների մեծ հրովարտակի ստորագրումը
1215 թ. Ինկվիզիցիայի ստեղծումը
1299 թ. Օսմանյան պետության հիմնադրումը
XIV–XVI դարեր Վերածնունդը Եվրոպայում
1302 թ. Գլխավոր շտատների հրավիրումը Ֆրանսիայում
1380 թ. Կուլիկովոյի ճակատամարտը
1453 թ. Բյուզանդիայի անկումը
1492 թ. Ամերիկայի հայտնագործումը Կոլումբոսի կողմից
XVI–XVII դարեր Առաջին գիտական հեղափոխությունը
1502 թ. Սեֆյանների պետության հիմնադրումը
1517 թ. Մարտին Լյութերի թեզիսների հրապարակումը՝ Ռեֆորմացիայի սկիզբը
XVI դ. առաջին կես Մայաների, ացտեկների և ինկերի նվաճումը իսպանացիների կողմից
1526 թ. Մեծ մողոլի կայսրության հիմնադրումը Հնդկաստանում
1562–1594 թթ. Հուգենոտյան պատերազմները Ֆրանսիայում
1566–1609 թթ. Նիդերլանդական հեղափոխությունը
1612 թ. Ճապոնիայի ինքնամեկուսացումը արտաքին աշխարհից
1613 թ. Ռոմանովների արքայատան հիմնադրումը Ռուսաստանում
1644 թ. Ցին կայսրության հիմնադրումը Չինաստանում
XVII–XIX դ. առաջին կես Արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլը
1640–1660 թթ. Բուրժուական հեղափոխությունն Անգլիայում
1648 թ. Երեսնամյա պատերազմի ավարտը, Վեստֆալյան հաշտության կնքումը. ուժերի հավասարակշռության միջազգային համակարգի ստեղծումը
XVII դ. երկրորդ կես Բնական իրավունքի տեսության ստեղծումը Ջոն Լոկի կողմից
XVIII դ. Լուսավորության դարը Եվրոպայում և Ամերիկայում
1751–1776 թթ. Աշխարհում առաջին հանրագիտարանի ստեղծումը
1775–1783 թթ. Անկախության պատերազմը և ԱՄՆ-ի առաջացումը

- 1776 թ. հուլիսի 4** Անկախության հռչակագրի ընդունումը Ֆիլադելֆիայում
- 1784 թ.** Շոգեմեքենայի ստեղծումը Ջեյմս Ուաստի կողմից
- 1789 թ. հուլիսի 14** Բաստիլի գրավումը: Ֆրանսիական մեծ հեղափոխության սկիզբը
- 1789 թ. օգոստոսի 26** «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունումը
- 1792–1804 թթ.** Առաջին հանրապետությունը Ֆրանսիայում
- 1793–1794 թթ.** Յակոբինյան դիկտատուրան
- 1799 թ. Նոյեմբերի 9** Կոնսուլության հաստատումը Ֆրանսիայում
- 1804–1814 թթ.** Նապոլեոն I: Առաջին կայսրությունը Ֆրանսիայում
- 1806 թ.** Հռենոսյան միության ստեղծումը, Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության վերացումը
- 1807 թ.** Տիլզիտի պայմանագրի կնքումը Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև
- 1810–1820–ական թթ.** Անկախության պատերազմները Լատինական Ամերիկայում
- 1812 թ.** Նապոլեոն I-ի արշավանքը Ռուսաստան
- 1814–1815 թթ.** Վիեննայի վեհաժողովը, Սրբազան դաշինքի ստեղծումը
- 1821–1830 թթ.** Հույն ժողովրդի ազատագրական պատերազմը և Հունաստանի անկախացումը
- 1825 թ. դեկտեմբեր** Գեկաբրիստների ապստամբությունը Սանկտ Պետերբուրգում
- 1839–1860–ական թթ.** Թանզանիայի դարաշրջանը Օսմանյան տերությունում
- 1843 թ.** Խաղաղապաշտների կողմից Լոնդոնում Խաղաղության առաջին համաժողովի գումարումը
- XIX դ. երկրորդ կես — XX դ. սկիզբ** Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլը
- 1852–1870 թթ.** Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում
- 1853–1856 թթ.** Արևելյան կամ Ղրիմի պատերազմը
- 1859–1861 թթ.** Ռումինական պետության առաջացումը
- 1861 թ.** Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում
- 1863 թ.** Միջազգային կարմիր խաչի ընկերության ստեղծումը
- 1866 թ.** Հյուսիսգերմանական միության ստեղծումը, Ավստրո-պրուսական պատերազմը
- 1867 թ.** Ավստրիայի վերածվելը Ավստրո-Հունգարիա տերության
- 1868 թ.** Կայսերական իշխանության վերականգնումը Ճապոնիայում
- 1870–1871 թթ.** Ֆրանս-պրուսական պատերազմը
- 1870 թ. սեպտեմբեր** Երրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
- 1871 թ. հունվար** Գերմանական տերության հռչակումը
- 1871 թ. մարտ–մայիս** Փարիզի կոմունան՝ նոր տիպի պետություն
- 1875 թ.** Երրորդ հանրապետության Սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում
- 1876–1909 թթ.** Աբդուլ Համիդ II-ը օսմանյան սուլթան: «Զուլյումի տարիները» Օսմանյան տերությունում
- 1877–1878 թթ.** Ռուս-թուրքական պատերազմը: Բուլղարական պետության առաջացումը: Հայկական հարցի միջազգայնացումը
- 1879–1882 թթ.** Եռյակ դաշինքի ստեղծումը
- 1889 և 1907 թթ.** Հաագայի համաժողովները, հակամարտությունների կարգավորման միջազգային սկզբունքների ընդունումը
- 1894 թ.** Միջազգային օլիմպիական կոմիտեի ստեղծումը
- 1899 թ.** ԱՄՆ-ի կողմից Չինաստանում «Բաց դռների և հավասար հնարավորությունների» քաղաքականության հռչակումը
- 1899–1902 թթ.** Անգլո-թուրքական պատերազմը
- 1904 թ.** «Սրտագին համաձայնության» (Անտանտ) կնքումը Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև
- 1904–1905 թթ.** Ռուս-ճապոնական պատերազմը
- 1905–1907 թթ.** Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը
- 1905–1911 թթ.** Հեղափոխությունն Իրանում
- 1905 թ.** Աշխարհում առաջինը Ֆրանսիայում եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց
- 1907 թ.** Ռուսաստանի միանալն Անտանտին
- 1908 թ.** Երիտթուրքական հեղաշրջումը
- 1911–1912 թթ.** Հեղափոխությունը Չինաստանում: Ցին արքայատոհմի անկումը
- 1912 թ. հոկտեմբեր** Օսմանյան կայսրության դեմ Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը
- 1914 թ. օգոստոսի 1** Առաջին աշխարհամարտի սկիզբը
- 1914 թ.** Ճակատամարտ Մառն և Էն գետերի շրջանում
- 1914 թ. դեկտեմբերի 22 — 1915 թ. հունվարի 18** Օսմանյան զորքի ջախջախիչ պարտությունը ռուսներից Սարիղամիշում
- 1914–1916 թթ.** Հայոց Մեծ եղեռնը
- 1916 թ.** Վերդենի ճակատամարտը
- 1917 թ. փետրվարի 27** Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում, միապետության տապալումը
- 1917 թ. ապրիլ** ԱՄՆ-ի՝ պատերազմի մեջ մտնելը
- 1917 թ. նոյեմբերի 7 (հոկտեմբերի 25)** Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում
- 1918 թ. մարտի 3** Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումը
- 1918 թ. հոկտեմբերի 30** Մուդրոսի զինադադարի կնքումը, Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում
- 1918 թ. նոյեմբերի 3** Հանրապետության հռչակումը Գերմանիայում
- 1918 թ. նոյեմբերի 11** Գերմանիայի անձնատվությունը: Առաջին աշխարհամարտի ավարտը

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱԼԵՐԻ ՂԼԵԶՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆ

ՀԱՄԱՇԵՆԱՐ ՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Վերահրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝
Խմբագիր՝
Սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորումը՝
Ճապիկի համակարգչային մշակումը՝
Քարտեզագիր՝

Էմին Մկրտչյան
Հովհաննես Զաքարյան
Լուսինն Դավթյան
Գրիգորի Հարությունյանի
Արևիկ Հակոբյանի
Գրիգոր Բեգլարյան

Ճապիկի օգտագործված նկարներ

Նապոլեոն Բոնապարտ © Andrea Appiani, Ք. Կորուբոնո © Sebastiano del Piombo, Միքելանջելո © Iacopino del Conte, Ռոդեն, «Մուածողը» © iStockphoto.com/majaiva, Նյու Յորքի Մայրերի փողոցը © by Detroit Photograph, Լոնդոնի պալատմանտի շենքերը © Arpingstone

Գրքում օգտագործված նկարներ

Էջ 26՝ Թեոդորիկս ֆոն Պրագ. «Կարլոս IV», էջ 27՝ © iStockphoto.com/Michal Krakowiak, էջ 30՝ Ժան դյու Տին. «Ֆիլիպ IV», էջ 34՝ Ժան Ֆրոսար. «Կրեսիի ձակատամարտը», էջ 35՝ Ժյուլ Էժեն Լընըպլո. «Ժաննա դ'Արկը Օռլանտի պաշարման ժամանակ», էջ 55՝ ©:Ajvol., էջ 57՝ © iStockphoto.com, էջ 61՝ © iStockphoto.com/narvikk, էջ 71՝ © iStockphoto.com/matteus, էջ 79՝ Ջենտիլե Բելլինի. «Մենմեդ II», էջ 81՝ © iStockphoto.com/Grigory Kubatyan, էջ 82՝ Անտոնիո դե Սոլիս. «Սոնթեսունա II», էջ 92՝ Արնստ Կոեյլո. «Ֆիլիպ II», էջ 111՝ © Tamorlan, Կարլ Ֆրեդերիկ ֆոն Բրեդա. «Ջ. Ուատտի դիմանկարը», էջ 113՝ © Harry Shipley, © John T. Daniels, էջ 121՝ Լ. Միրոյալսկի. «Մ. Լոմոնոսովի դիմանկարը», Մատրիսիո Քվենտին դե լա Տուր. «Ժ.-Ժ. Ռուսսի դիմանկարը», Լուիս-Միգել վան Լո. «Դ. Դիդրոյի դիմանկարը», էջ 126՝ Ջոն Քրանչ. «Ռ. Օռենի դիմանկարը», էջ 133՝ Ժան Ալգուստ Դո-մինիկ Ինգրիս. «Նապոլեոնը կայսերական գահին», Ֆրանս Խավիեր Ռիներսերիայեր. «Նապոլեոն III-ի դիմանկարը», էջ 136՝ Ֆրանս ֆոն Լենքախ. «Օտտո ֆոն Բիսմարկ», էջ 139՝ Անտոն ֆոն Մարոն. «Կայսր Յոզեֆ II», էջ 146՝ Ջոզեֆ Կրեյխտեր. «Վուկ Կարաջիչի դիմանկարը», էջ 150՝ Պոլ Դեկատոն. «Պյոտր I Մեծ», Ֆյոդոր Ռոկոտով. «Եկատերինա II», Ֆրանս Կրյուգեր. «Ռուսաստանի կայսր Նիկոլայ I», էջ 151՝ Նիկոլայ Լավրով. «Ալեքսանդր II կայսրը», էջ 155՝ Ռեմբրանդտ Փեյլ. «Ջորջ Վաշինգտոնի դիմանկարը», էջ 159՝ Ֆրենսիս Քարպենտեր. «Ստրկատիրության վերացման նախագծի առաջին ընթերցումը», էջ 166՝ Ռիկարդո Բերնալ. «Մինոն Բոլիվար», Մարտին Տովար-ի-Տովար. «Միրանդայի դիմանկար», էջ 175՝ Ալգուստ Քոդեր. «Մոսամմեդ Ալի», էջ 197՝ Ֆրենսիս Ջեյմս. «Շառլ-Մորիս դը Թալերյան», Ֆրանց Կրյուգեր. «Ալեքսանդր I-ի դիմանկարը», էջ 210՝ © Frank Hurley, էջ 221՝ Իլյա Գալկին. «Նիկոլայ II կայսրը», էջ 230՝ Յուստուս Սուստերմանս. «Գալիլեո Գալիլեյի դիմանկարը», Թոմաս Ֆիլիպս. «Մայքլ Ֆարադեյի դիմանկարը», էջ 231՝ Իլյա Ռեպին. «Դ. Մենդելեևը Էդինբուրգի համալսարանի պրոֆեսորի թիկնոցով», էջ 233՝ Թոմաս Շեպիարդ. «Մեծ Բրիտանիայի թագավորական ինստիտուտը», էջ 236՝ © Oren Jak Turner, էջ 237՝ © Էմին Մկրտչյան, էջ 245՝ Ժոզեֆ Կարլ Ստիլեր. «Լ. Բեթհովենի դիմանկարը», Ջորջ Կրասու. «Վոլֆգանգ Գյոթեի դիմանկարը», էջ 249՝ Պյոտր Ջոբոլոտսկի. «Մ. Լերմոնտովի դիմանկարը», Հենրի Ռաբոլեն. «Վ. Սրբի դիմանկարը»:

ISBN 978-99941-1-788-8

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 16 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ GHEA Mashtots: Տպաքանակը՝ 3093: Պատվեր՝ 03/Հ-17:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28

Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am

Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

